

ՀԱՄՍԱՐ ԱԼԵՏԻՍԱՐ

ԱՇԽԱՋԱՐԱԿԱԿԱՆ

ՅԱՌԱԴՐԵՏԻ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

ԲԱՌԱՎԱՐԱՆ

ԿԱՄՍԱՐ ԱՎԵՏԻՒՅԵԱՆ

1/91 (03)
2/03/91

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԱՆՈՒՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ
ԲԱՌԱՐԱՆ

20347
10276

«ԼՈՒՅՍ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ե Վ Ա Ն — 1 9 6 9



Камсар Мелконович Аветисян
СЛОВАРЬ ГЕОГРАФИЧЕСКИХ НАЗВАНИЙ

(На армянском языке)

ИЗДАТЕЛЬСТВО «ЛУИС»

ЕРЕВАН — 1969

Երե ևս այսօր շատ բաների մասին կարող եմ
խռովի այլ կերպ, քան իմ նախորդները, ապա
դրանով պարտական եմ միայն նրանց, քանզի
նրանք նախապարհ բացեցին դեղի փաստերի
ուսումնասիրությունը:

ՆԻԿՈՂԸ. ԿՈՊԵՌՆԻԿՈՍ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Այս գիրքը նվիրված է աշխարհագրական անուններին,
նրանց առաջացման պատմությանը, ստուգաբանությանը:

Աշխարհագրական անունները մեզ շրջապատում են զեռ
վաղ հասակից և ուղեկցում ամբողջ կյանքում: Ցուրախան-
չուր մարդ իր հիշողության մեջ զգալի քանակությամբ աշ-
խարհագրական անուններ է պահում: Դրանց մի մասը նա
յուրացնում է հենց իր փողոցից կամ քաղցից, զյուղից կամ
քաղաքից և ընդհանրապես այն տեղից, որտեղ ընթանում է
նրա կյանքը: Շատ անունների հետ ծանոքանում ենք դպրո-
ցում, հատկապես աշխարհագրության ու պատմության դա-
սերին: Հետագայում, որքան ընդհանրակվում է մարդու գի-
տակից կյանքը, այնքան էլ շատանում է այդ անունների քա-
նակը և զեղանդ հարստանում աշխարհագրական գիտելիքնե-
րի պաշարը: Նորանոր անուններ ենք սովորում ոչ միայն աշ-
խարհագրությունից ու պատմությունից, այլև գրականությու-
նից, թերերից ու ուսումնականությունից:

Իգուար չի ասված, որ մարդու կապուրական մակարդա-
կը որոշվում է նաև նրա գիտեցած աշխարհագրական անուն-
ների քանակով: Ինարկե, լավ է, եթե այդ անունները իմաս-
տավորված են, եթե տվյալ տեղանվան առնչությամբ մարդու
եւեակայության մեջ ստեղծվում է համապատասխան պատ-
կեր՝ կապված պատմական դեպքի, անձի կամ քնության ա-
ռանձնահատկությունների հետ:

Այս գիրքը ձեզ կօգնի պարզելու, թե որտեղից են գալիս, ինչպես են կազմավորվել, զարգացել ու մեզ հասել աշխարհագրական շատ անուններ: Իսկ դա գիտենալը ոչ միայն հետաքրքրական է, այլև օգտավետ, դա ոչ միայն միս ու արյուն է տալիս անուններին, այլև նպաստում է մեր հիշողության մեջ նրանց ավելի լավ պահպանվելուն:

Աշխարհագրական անունների հետ ամենից շատ առնչվում են աշխարհագրագետները: Դա պայմանավորված է նրանց զբաղմունքի առանձնահատկությամբ: ԶԵ՞ որ աշխարհագրության առարկայի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նա գործ է ունենում շատ անվանումների հետ: Ինքնին հասկանալի է, որ դա ինքնանպատակ չէ, և առարկայի անբաժանելի մասն է կազմում:

Աշխարհագրությունը գրավիչ և մատչելի առարկա է, դրա համար էլ դեռ դպրոցական հասակից նրապուրում է մարդկանց: Բայց արի տես, որ նա էլ ունի իր «փշոտ» կողմերը, այսինքն յուրացնելու որոշ դժվարություններ: Այս դժվարությունները զգալի շափով կապված են աշխարհագրական անունները յուրացնելու, հիշելու և նիշտ արտասանելու հետ:

Աշակերտներին անշուշտ գրավում է ուսուցչի հետաքրքիր և պատկերավոր պատմածը Արկտիկայի, Աֆրիկայի բավուտների, ինչպես նաև Պրմեալյսկու և Մակլայի նաևապարհությունների մասին. բայց ինչպես հիշել անծանոթ և օտար լեզվով հնչվող այդ անունները: Այստեղ ուսուցչին օգնության է գալիս անունների բացատրությունը, նրանց ծագման պատմությունը, որով ավելի է մեծանում աշխարհագրության հմայքը:

Գիտնականները վաղուց են ուշադրություն դարձել աշխարհագրական անուններին: Դեռ հին հույնները հետաքրքրվել են այդ անունների ծագումով և առաջցումով: Աշխարհագրական անունների առաջացման և նշանակության հարցերով զբաղվող գիտությունը կոչվում է տոպոնիմիկա, որի հիմքում ընկած են տոպոն՝ «տեղ» և ոնիմա՝ «անուն» բառերը:

«Տոպոնիմիկա» հասկացությունը օգտագործվում է երկու

իմաստով: Առաջինը վերաբերում է աշխարհագրական անվանումների բացատրությանը և ծագման պատմությանը: Երկրորդը ընդգրկում է տվյալ երկրի աշխարհագրական անվանումների միագումար ամբողջությունը: Մեկը մյուսից տարբերելու համար նպատակահարմար է վերջինս անվանել տոպոնիմիա: Այսպես, օրինակ, երբ ասում ենք Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի, Կովկասի տոպոնիմիա, ապա խոսքը վերաբերում է այդ երկների տեղանունների միագումարին: Այդ տեսակետից էլ հաճախ աշխարհագրական անուն արտահայտությանը փոխարինում է տոպոնիմ բառը:

Այսպիսով, ամեն մի բարեկ ծածկված է բազմարիվ տոպոնիմներով՝ տեղանուններով: Դրանք կամ կապտագույն լեռներ ու ծովեր են, կամ գետեր են՝ ոլորապտույտ գծերով, կամ լեռներ՝ հյուաված ստվերագծիկներով, կամ էլ բնակավայրեր ու բաղադրեր՝ կետերով և փոքր շրջանակներով:

Այսպես, օրինակ, բարեկին նայելիս մտածում ես, թե ինչպես են առաջացել Հռո Եջիր, Բարեհուսո հրվանդան, Զատկի կղզի անունները: Ի՞նչ ընդհանրություն կա Գվիճեայի և նոր Գվիճեայի միջև: Ի՞նչ են պատմում Արգենտինա, Աղդիս-Արեբա կամ Սահարա անունները: Նաև անուններ արտահայտում են օբյեկտի աշխարհագրական առանձնահատկությունները, ինչպես, օրինակ, Ամերիկայում գտնվող Պոպոկատեպետլ լեռան դժվար արտասանվող անունը: Այստեղ օգնության է գալիս տոպոնիմիկան. այդ անունը բառացի նշանակում է «ծխացող լեռ» և արտահայտում է նրա գործող հրաբուխ լինելը: Կան նաև այնպիսի տեղանուններ, որոնք դասական են իրենց հնչյունային (ձայնային) պատկերով: Ինչպես Ֆլորիդա, Նեադա, Մարանիոն անունները: Այս անուններն էլ վերծանվում են «ծաղկավետ», «ծյունապատ», «վիրիխարի» իմաստով: Նման բացատրություններից հետո անունները հիշվում և յուրացվում են հեշտությամբ:

Այս աշխատության նպատակն է ոչ միայն հետաքրքիր դարձնել աշխարհագրական անունները՝ նրանց առաջացման պատմությունը բացահայտելով, այլև հեշտացնել սովորելը, հիշատակելը:

Ամեն մի ժողովուրդ հոգատարությամբ է պահում իր հոգեոր ու նյութական մշակույքի հուշարձանները, իր պատմության երկարակյաց գանձերը, որոնք անցնում են սերունդներին՝ արձանագրությունների, դրամների. ամանների, չենքերի, կորողների և այլ ձևերով: Այդպիսի լավագույն ժառանգություններից են նաև աշխարհագրական անունները, որոնք նույնպես մշակութային-պատմական անգնահատելի գոհարներ են: Այդ անունների ուշադիր ուսումնասիրությունը ոչ պակաս տվյալներ կարող է հաղորդել տվյալ երկրի, ժողովրդի անցյալի պատմությունից, քանի որ աշխարհագրական անուններն ել զարգացել են պատմականորեն: Անցյալում մարդը իրեն շրջապատող աշխարհագրական օբյեկտները կոչել է հասարակ անուններով, գործածելով ուղղակի ջուր, գետ, լիճ, լեռ, անապատ տերմինները, իսկ հատուկ անունները առաջացել և փոփոխություններ են կրել երկրի կյանքին համընթաց: Աշխարհագրական անունների երկարկեցությունը և դիմացկունությունը նրանց դարձնում է հնագույն հուշարձաններ և անցյալի պատմության, մշակույքի և լեզվի խոսուն վկաներ: Ահա թե ինչու աշխարհագրական անվանման նիշտ սառւզարանությունը և բացատրությունը օգնում է պարզելու նրանց ստեղծող ժողովրդի պատմական տարածման սահմանները, նրանց լեզվի ազդեցության ոլորտները և այլ հանգամանները: Յուրաքանչյուր անվան տակ բաքնված է մի ինչ-որ հետաքրքրաշարժ փաստ, որը հաճախ մի տեսակ կախարդական բանալի է դառնում և բացում անցած-զնացած ժամանակի ու նրա հետ կապված հիշողության դրեները: Նշենք թեկուց երեան, Սևան, Անի, Վան անունների ծագման պատմությունը:

Ամեն մի աշխարհագրական անուն ունի իր կոնկրետ բացատրությունը: Անիմաստ աշխարհագրական անուններ գոյություն չունեն: Սակայն մենք դեռևս չենք կարողանում շատ անունների առաջցումը բացատրել, երբեմն նրանք աղեատված և ձևափոխված են այնպես, որ հնարավոր չէ մեկնաբանել: Երկրաբանի կամ հնէաբանի նման, աշխարհագրական անուններն ուսումնասիրողը նույնպես բացահայտում է հիեն

ու հնագույնը, որոնք ձեավորվել են պատմական վաղ անցյալում: Նատ հանախ հարկ է լինում դիմել պատմության քեմից հեռացած հնագույն ժողովրդի լեզվին: Այսպես, օրինակ, Երկար ժամանակ հնարավոր չէր ստուգաբանել Երևանի և Սևանի անունները: Բայց այսօր մեզ հայտնի է, որ Երևանի անվանման ծագումը գալիս է ուրարտական շրջանից և որ նա երեքունի անվան ծեսափոխումն է: Իսկ «Սևանն» էլ՝ ուրարտական «զուր» կամ «ավազան» բառերից է ծագել: Կան անուններ, որոնք դեռևս չեն ստուգաբանված, բայց մենք ավանդաբար շարունակում ենք գործածել:

Ինչպես տեսնում ենք, աշխարհագրական անունների առաջացման պատմությունը մի տեսակ տվյալ Երկրի տարեգրուրյունն է դառնում: Ճշմարիտ է ասված, որ «տոպոնիմիկան»՝ աշխարհագրական անունների առաջացման պատմությունը, Երկրի լեզուն է, իսկ Երկիրը մի գիրք է, ուր մարդկության պատմությունը գրված է աշխարհագրական անվանակարգով (ճումենկլատուրայով): Հանախ տվյալ վայրը կրում է ինչ-որ մի ժամանակ այդտեղ ապրած ժողովրդի, ցեղի անուն, կամ, ինչպես ասում են՝ էրենոնիմ: Ուսեմն տոպոնիմիկան բանալի է տալիս նաև գաղափար կազմելու հեռավոր անցյալի բնակչության ազգային-ցեղային կազմի մասին:

Քանի որ աշխարհագրական անունները սերտորեն կապված են իրենց օբյեկտի հետ, դրանով նրանք պատկանում են աշխարհագրությանը: Սակայն, ինչպես տեսանք, նրանց իմաստավորումը՝ պարտավորեցնում է դիմելու նաև պատմության օգնությանը: Պատմությունը և աշխարհագրությունը դիտվում են որպես հարակից գիտություններ և սերտորեն առնչվում են միմյանց հետ. այդ իսկ տեսակետից կան շատ հարցեր, որոնց նշանումը, ստուգաբանությունը անհրաժեշտ են այդ Երկրի գիտությունների համար էլ: Քանի որ մենք գործ ենք ունենում աշխարհագրական անունների ծագումնաբանության հետ, իսկ անուններն էլ առաջին հերթին լեզվական «մըրեր» են, ապա ինքնին հասկանալի է, որ անհրաժեշտ է դիմել նաև լեզվաբանությանը:

Ինչպես տեսնում ենք, տոպոնիմիկան սերտորեն կապված

է աշխարհագրության, պատմության, ինչպես նաև լեզվի հետ: Սակայն այդ բոլորը չեն խանգարում, որ նա գոյություն ունենա որպես ինքնուրույն գիտություն: Այսպես, օրինակ՝ ո՞վ կարող է ժխտել գեղփիզիկայի, գեղփիմիայի սերտ կապը երկրաբանության հետ. բայց չէ որ միաժամանակ նրանք ինքնուրույն գիտություններ են: Դա իլլուստրացիան է այն բանի, թե ինչպես ժամանակակից գիտությունների զարգացման հետևանքով որոշ նյութեր տրոհվում, մասնագիտանում են և դառնում «նեղ պրոֆիլի» գիտություններ: Իսկ մյուս կողմից հարակից դիսցիլինների շփման կետերում ժամանակի ընթացքում առաջանում են նոր, արդեն ինքնուրույն գիտություններ: Այդպես էլ առաջացակ տոպոնիմիկան:

Գնալով ավելի է զարգանում աշխարհագրական անունների ուսումնասիրության գործը: Շատ երկրներում լույս են տեսնում տեղանկանագիտական հատուկ ամսագրեր, հրավիրվում են միջազգային կոնգրեսներ: Միավորված Ազգերի կազմակերպությունում գործում է հատուկ կենտրոն, որը զբաղվում է աշխարհագրական անունների առաջացման հարցերով:

Երկարամյա մանկավարժական զբաղմունքի բերումով առիթ ենք ունեցել ծանոթանալու բազմաթիվ անունների առաջացմանը, կարդացել ենք բազմապիսի գրականություն և ժամանակի ընթացքում ստեղծել համապատասխան արխիվ: Այդպես է ծնվել այս գիրքը, որը ուղղակի կարելի է անվանել «Տեղանունների բառարան»:

Աշխատելով գրքի վրա, ձգտել ենք հնարավորության սահմաններում հավաստիորեն հաղորդել, թե ե՞րբ, ինչպէ՞ս և ի՞նչ պարագաներում են երևան եկել աշխարհագրական տարբեր անվանումները: Այնուամենայնիվ, գիրքը չունի լիակատարության, ինչպես և ինքնատիպության հավակնություն: Կլինեն անուններ, որոնց մասին կան տարբեր վերսիաներ, և երե ենդինակը նշել է մեկնաբանություններից մեկը կամ երկուսը, ապա բնականաբար մյուսները մնացել են տեսադաշտից դուրս:

ԱԲԱԴԱՆ. — Քաղաք Հարավ-Արևմտյան իրանում։ Անվան հիմքում ընկած է պարսկերեն աբադ բառը, որը նշանակում է «քաղաք», «ավան», «բնակավայր»։ Վերջում կցված ան մասնիկը պարսկերեն է և հաճախ նկատում ենք տեղանունների վերջում։ Ինչպես՝ Թեհրան, Խապահան, Համադան և այլն։

ԱԲԱԿԱՆ. — Քաղաք և գետ Կրասնոյարսկի երկրամասում։ Քաղաքը Խակասական ինքնավար մարզի կենտրոնն է և իր անունն ստացել է համանուն գետից։ Աբական խակասերեն նշանակում է «հեղեղ» կամ «գետ»։

ԱԲԵՐԴԻՆ. — Քաղաք Մեծ Բրիտանիայում։ Գտնվում է Դի գետի գետաբերանի վրա։ Աբերդին նշանակում է «Դի գետի գետաբերան»։

ԱԲԻՋԱՆ. — Քաղաք Արևմտյան Աֆրիկայում։ Փղոսկրի Ափ պետության մայրաքաղաքը։ Գտնվում է համանուն կղզու վրա, որտեղ բնակվում է նեղրական արիջան ցեղը։

ԱԲԻԱԶԻՍ. — Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետություն Վրացական ՍՍՀ-ի կազմում։ Բնիկ ժողովուրդը կոչվում է աբխազներ։ Իրենք իրենց կոչում են ապսուա։

ԱԲՎԻԼ. — Քաղաք Հյուսիսային Ֆրանսիայում։ Այս անունը կազմվել է լատիներեն աբբատիս և վիլլա բառերից։ Աբբատիմ նշանակում է «աբբա» (վանահայր), իսկ վիլլա՝ «քաղաք»։ Այսինքն՝ «Աբբայի քաղաք»։ Այդպես է կոչվել ի պատիվ Ֆրանսիայի քաղաքու և Սուրբ Ռիքի աբբայի (987—996 թթ.), որը համարվում է քաղաքի հիմնադիրը։

ԱԲՐՈՒՅՅՆԵՐ. — Լեռներ Միջին Խտալիայում: Անվանումը՝ ստացել է լատիներեն աբրուպտուս՝ «զարդված» կամ «զառիթափ» բառերից: Այսինքն խոր լեռնանցքներով կտրատված, անդնդախոր լեռներ:

ԱԳԱԴԻՐ. — Քաղաք և նավահանգիստ Մարոկկոյում: Անունը գալիս է փյունիկերենից և նշանակում է «ամրացված բերդ»:

ԱԴԱՄԻ ԿԱՄՈՒԻՐՁ. — Առաջնյա ծանծաղուտների և ոչ մեծ կղզիների շղթա, որն ընկած է Հնդկաստանի ու Ցեյլոնի միջև: Աղամը, ըստ Հին Կտակարանի, եղել է մարդկության նախահայրը և դրախտից հեռացվել է «արգելված պտուղը» ճաշակելու պատճառով: Քանի որ Ցեյլոնը մեր մոլորակի գեղեցիկ և բարեբեր անկյուններից մեկն է, ուստի որոշ ժողովուրդներ իրենց ավանդություններում դրախտը տեղադրել են Ցեյլոնում: Ըստ ավանդության էլ, իբր թե Աղամը, Ցեյլոնում գտնվող դրախտից վտարվելիս, անցել է այդ ծանծաղուտների ու կղզյակների վրայով:

ԱԴԱՄԻ ՍԱՐ. — Լեռ Ցեյլոնում: Այս անունն ևս կապվում է ավանդական դրախտի և մարդկության նախահայր Աղամի անվան հետ: Ինչպես հայտնի է, որոշ ժողովուրդների մոտ լեռները եղել են պաշտամունքի առարկա, ինչպես Ռիմապոսը հույների համար, իսկ Մասիսը՝ հայերի: Ցեյլոնում գտնվող Աղամի անունը կրող լեռը նույնպես համարվում է սրբազն սար: Իբր թե Աղամը այդ լեռան գագաթին քավել է իր մեղքերը:

ԱԴԱՅ-ԽՈԽ. — Կենտրոնական Կովկասի գագաթներից մեկը (4408 մ.): Օսերեն աղայ՝ «պապ» և խոխ՝ «լեռ»: Այսինքն «պապլեռ»:

ԱԴՐԱ. — Գետ Հյուսիսային Խտալիայում: Պո գետի ձախ վտակը: Անունը ստուգաբանվում է լիգուրերեն աղդուարքով, որ նշանակում է «ջուր» կամ «գետ», կամ կելտերեն ադուր՝ «հոսող ջուր»:

ԱԴՐԻՍ-ԱԲԵԲԱ. — Եթովպիայի մայրաքաղաքը: Անվանումը՝ ամհարա լեզվով նշանակում է «նոր ծաղիկ» (աղդիս՝

«նոր» և աբեբա՝ «ծաղիկ»): Քաղաքը հիմնադրվել է 1885 թվականին Մենելիք Հ-րդ կայսեր կողմից: Բժիշկ-ների խորհրդով հիվանդ թագուհուն պետք է տեղափոխեն մի բարձրադիր և զովասուն տեղ: Այդ նպատակով ընտրում են մի վայր, որը գտնվում է ղպտիական հինավուրց վանքի մոտ: Վայրը աշքի էր ընկնում թե՛ իր բուրավետ ծաղիկներով և թե՛ իր առատ բուսականությամբ: Այստեղից էլ նրա «Նոր ծաղիկ» անվանումը: 1895 թվականից Աղդիս-Աբեբան հոչակվեց Եթովպիայի մայրաքաղաք:

ԱԴԵԼԱԻԴԱ.— Քաղաք Ավստրալիայում: Ազգես է կոչվել Անգլիայի թագուհի Աղելաիդայի պատվին, որը Ուիլյամ Գ-րդի կինն էր: Քաղաքը հիմնադրվել է նրա թագավորության օրոք, 1836 թվականին:

ԱԴԵԼԻ ԵՐԿԻՐ.— Անտարկտիդա ցամաքի մի մասը: Հայտնաբերվել է 1840 թվականին ֆրանսիական էքսպեդիցիայի կողմից, որը գլխավորում էր ծովագնաց Պյումոն դ'Ուրվիլը: Առավինյա մասը այդպես է կոչվել նրա կնոջ պատվին:

ԱԴԵՆ.— Քաղաք և նավահանգիստ Հարավային Եմենի ժողովրդական Հանրապետությունում: Անվանումը ծագում է արաբերեն «աղին» բառից, որը նշանակում է «նըստակեցություն», «մշտաբնակություն»: Քաղաքը խորհրդանշում է քոչվորական կյանքի անցումը նստակեցության:

ԱԴԻԳԵՅ.— Աղիգեյական ինքնավար մարդ Կրասնոդարի երկրամասի կազմում: Կոչվել է աղիգեյ ժողովրդի անունով: Իսկ աղիգեանունն էլ ծագում է արխազերեն աղի՝ «ջուր» բառից, գեմանիկով: Այսինքն «ծովափնյա բնակիչներ», «ջրի մոտ ապրող մարդիկ»:

ԱԴԻԶԵ.— Գետ Հյուսիսային հտալիայում: Անվան հիմքում ընկած է հնդեվրոպական աղ բառարմատը, որը նշանակում է «արագ», «շարժվող»:

ԱԴԻԵՐ.— Քաղաք Սև ծովի ափին, Կրասնոդարի երկրամասում: Քաղաքը մտնում է Սոչիի կուրորտային խմբի

մեջ: Անունը ստացել է Արտլար հրվանդանից, իսկ վերջինս էլ այդպես է կոչվել արխազական ցեղերից մեկը՝ անունով:

ԱԴՐԲԵՋԱՆ.— ՍՍՀՄ-ի միութենական հանրապետություններից մեկը Անդրկովկասով: Անունը պարսկերեն ազեր «կրակ» և բայցան՝ «երկիր» բառերի զուգակցումից նշանակում է «կրակի երկիր»: Անվանումը կապված է նավթի հանքերից ժայթքող գազերի բոցավառման երեվույթի հետ: Հնագույն ժամանակներում այստեղ գոյություն են ունեցել հեթանոսների կրոնական պաշտամունքի տաճարներ՝ մեջյաններ: Նույն ստուգաբանությունն ունի նաև Հարավային կամ իրանական Ադրբեջանը (Ատրպատականը):

ԱԴՐԻԱՆԱՊՈԼԻՍ. կամ ԱԴՐԻԱՆՈՊՈԼԻ. — Ներկայումս էդիրներ Քաղաք Եվրոպական Թուրքիայում: Այդպես է կոչվել ի պատիվ Հռոմեական Ադրիան (Հադրիանոս) կայսեր: Հռունարեն պոլիս նշանակում է «քաղաք», այսինքն Ադրիանի քաղաք:

ԱԴՐԻԱՏԻԿ ԾՈՎ.— Միջերկրական ծովի մի մասը: Այդպես է կոչվել իտալական Ադրիա քաղաքի անունով, որը անցյալում գտնվում էր համարյա ծովափին՝ Պոի և Ադրիայի գետաբերանների միջև: Զրաբերուկների կուտակման հետևանքով քաղաքը ժամանակի ընթացքում անջատվեց ծովից և այժմ նրանից 22 կիլոմետր հեռու է:

ԱԶՈՎ.— Ոչ մեծ նավահանգիստ Դոնի գետաբերանում: 10-րդ դարում, երբ գեռ կրում էր հին հունական թանային անունը, ընդգրկվեց Կիևյան պետության մեջ: Իսկ 11-րդ դարում նվաճվեց պղողվցի Ազովը կամ Ազովի իշխանի կողմից, որը տվեց իր անունը այս քաղաքին:

ԱԶՈՎԻ ԾՈՎ.— Դանվում է ՍՍՀՄ-ի Եվրոպական մասի հարավում և Կերչի նեղուցով միանում է Սև ծովին: Այդպես է կոչվում Ազով քաղաքի անունով:

ԱԶՈՐՅԱՆ ԿՂՋԻՆԵՐ.— Արշիպելագ Աստլանտյան օվկիանոսում, Աֆրիկայից դեպի հյուսիս-արևմուտք: Նորման և արաբ ծովագնացներն այս կղզիներն անվանում էին

թոշունների կղզիներ: 15-րդ դարում կղզիները կրկին հայտնաբերվեցին պորտուգալացիների կողմից: Նրանք այստեղ հանդիպեցին բազմաթիվ բազեների, որոնք կղզիների անմարդաբնակության պատճառով չափանց շատ էին: Այս պատճառով արշիպելագն ստացավ «բազեների կղզիներ» (պորտուգալերեն՝ *alos*) անվանումը:

ԱԹԵՆՔ.— Հունաստանի մայրաքաղաքը: Աշխարհի հնագույն քաղաքներից մեկը: Անունը, ըստ հին հունական դիցաբանության, տրվել է քաղաքի հովանավորուհու՝ Աթենաս աստվածուհու պատվին, մի այլ բացատրությամբ՝ ծագել է հունարեն աթենայ բառից, որը նշանակում է «բարձրագիր». այդպես է կոչվել քաղաքի բարձր դիրքի պատճառով:

ԱԺԴԱՀԱԿ.— Լեռնագագաթ Հայկական ՍՍՀ-ում: Գեղամալեռների ամենաբարձր գագաթը: Աժդահակը, ըստ պատմահայր Խորենացու, եղել է Մարաց թագավորներից մեկը:

ԱԼԱԲԱՄԱ.— Նահանգ ԱՄՆ-ի հարավում: Ամերիկյան հնդիկների լեզվով նշանակում է «նրանք, որ կտրում են անտառը»: Նկատի են ունեցել առաջին նվաճողներին, որոնք կտրում էին անտառները՝ հողը մշակելու համար:

ԱԼԳԻՐ.— Քաղաք Հյուսիսային Օսեթիայի ինքնավար հանրապետությունում: Կազմված է օսերեն ուալագ և իր բառերից: Ուալագ նշանակում է «բարձր», իսկ իր-ը օսերի ինքնանվանումն է: Նշանակում է «վերին Օսեթիա»: Սա Օսեթիայի այն մասն է, որը գտնվում է Կովկասյան լեռնաշղթայի բարձրադրդիր լանջերում:

ԱԼԱԶԱՆԻ.— Գետ Վրաստանում: Անվան առաջացումը կապված է գետի ավազանի խոնավության հետ: Ալազանի նշանակում է «խոնավ տեղ»:

ԱԼԱԿՈԼ.— Լիճ Ղազախստանի արևելքում: Ղազախերեն ալա «խայտաբղետ» և կոլ՝ «լիճ» բառերի միացումից:

ԱԼԱՅԱՆ ՀՈՎԻՏ եկ լեռնԱՇԴԹԱ.— Գտնվում է Կիրգիզական

ՍՍՀ-ում: Անունը ծագել է սանսկրիտերեն ալայ՝ «կացարան» բառից: Մի այլ ստուգաբանությամբ՝ թյուրքական լեզուների ալ «պահիր» և այ «ամիս» բառերի միացումից: Այսինքն «պահիր» (շտապելու իմաստով), քանի որ ամառային ամիսները այդ բարձր հովտում կարճատեն:

ԱԼԱՆԴՅԱՆ ԿՂՋԻՆԵՐԻ.— Բալթիկ ծովում: Շվեդերեն ա՝ «ջուր» և լանդ՝ «երկիր» բառերի զուգակցումից: Այլ խոսքով՝ ջրային երկիր կամ կղզի:

ԱԼԱՇԿԵՐԾ.— Բնա-պատմական մարզ Արևմտյան Հայաստանում: Ընկած է Արածանիի վերին հոսանքի արդավանդ, ջրարրի ու գեղեցիկ դաշտում: Ալաշկերտը համընկնում է պատմական Այրարատ նահանգի Բագրեանդ գավառի հետ:

Ալաշկերտ անունը առաջացել է Վաղարշակերտ կոչվող բերդաբաղաքի անվան ձևափոխումից: Վաղարշակերտը հիմնվել էր երկրորդ դարի վերջում, հայոց Վաղարշ թագավորի կողմից (193—213 թթ.) և այդ անունով հայտնի էր մինչև 15-րդ դարը: Ալաշկերտը բաժանվում է երկու մասի՝ արևելյան և արևմտյան: Արևելյան մասում են գտնվում Զիրավի դաշտը և Դիաղին բնակավայրը, իսկ արևմտյան մասում՝ են գտնվում Ղարաբիլիսա և Թոփրագ-Կալե (պատմական Վաղարշակերտ) բնակավայրերը:

Վաղարշակերտ բնակավայրի անունը թուրքերը փոխեցին և կոչեցին Թոփրագ-Կալե (Հողաբերդ), նկատի ունենալով բլրի վրա եղած բերդը: Հետագայում հայերի մոտ Վաղարշակերտը հայտնի էր ուղղակի թերդ անվամբ, որը մինչև 1918 թվականի սկզբները, այսինքն մինչև վերջին գաղթը, հայաբնակ գյուղ էր:

ԱԼԱՊԱԵՎՈՒԿ.— Քաղաք Սվերդլովսկի մարզում: Հիմնվել է այնտեղ, որտեղ Ալապայիսի գետը թափվում է Նեյվուի մեջ: Ալապայիսի գետը իր անունը տվել է քաղաքին, որը հետագայում ձևափոխվել է և ավելացվել «սկ» մասնիկը, որը սովորաբար ունի քաղաքի իմաստ:

ԱԼԱՎԵՐԴԻ. — Քաղաք Հայաստանում։ Անվան առաջացումը հնարավոր է համարվում «ալան» ցեղից և ավելացրած վրացերեն գվերդի՝ «Ճոր» բառը։ Պատմական Հայաստանում եղել է Տաշիր գավառի կենտրոնը։ Հետագա վերաիմաստավորումը՝ իր թուրքերեն «աստվածատուր» բառից է, որը սոսկ զուգադիպում է։

ԱԼԱՏԱՈՒ. — Մի քանի լեռնաշղթաների անուններ Միջին Ասիայում և Հարավային Սիբիրում։ Ալատառ անունը կազմված է երկու բառից, ալա՝ «խայտարդետ» և տառ՝ «լեռ»։ Այդպես են կոչվում, որովհետև ձյունապատ գագաթները, տարբեր գոտիների լանջերն ու մուգ ժայռերը հեռվից երևում են խայտարդետ։

ԱԼԲԱՆԻԱ. — Թետություն Բալկանյան թերակղզում։ Անվան ստուգաբանությունը՝ ալբ կամ ալպ բառից, որը նշանակում է լեռ կամ լեռնային երկիր։ Մյուս մեկնաբանումը լատիներեն ալբիս՝ «սպիտակ» բառից է։ 12—13-րդ դարերում, երբ վենետիկցիները ափ դուրս եկան, այս երկրում բնակիչները նրանց ղիմավորեցին իրենց սպիտակ ազգային տարագով։ Ալբանացիներն իրենց երկիրն անվանում են Շկիպերիա, որը նշանակում է «արծվի երկիր»։

ԱԼԲԵՐՏ. — Լիճ Կենտրոնական Աֆրիկայում, Կոնգոյի և Ուգանդայի սահմանում։ Հայտնաբերվել է 1864 թվականին անգլիացի ճանապարհորդ Ս. Բեյկերի կողմից և կոչվել է Ալբերտ, ի պատիվ Ալբերտի, որը Վիկտորիա թագուհու ամուսինն էր։

ԱԼԻԱՆ. — Գետ և քաղաք Յակուտիայում։ Քաղաքն իր անունը ստացել է Ալդան գետից, անվան հիմքում ընկած է մոնղոլական ալտան՝ «ոսկի» բառը։

ԱԼԵՄՏԵԽՈՂ. — Քաղաք Պորտուգալիայում։ Պորտուգալիերեն ալեմ՝ «անդր», այն կողմ բառից և Տեխո (Տախո) գետի անունից։ Այսինքն Տախոյի մյուս կողմը։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՌԱՋԻՆԻ ԵՐԿԻՐ. — Կղզի Անտարկտիկայում։ Հայտնաբերվել է Բելլինսգաուզենի և Լազարևի կողմից 1821 թվականին և այդպես է կոչվել ի պատիվ ուսաս-

կան կայսր Ալեքսանդր 1-ի, որը թագավորել է 1801—1825 թվականներին:

ԱԼԵՔՍԱՆԴՐԵՍՏԱ. — Քաղաք Կիլիկիայում, Միջերկրական ծովի ափին: Հիմնադրվել է 333 թվականին, մ.թ.ա. և կոչվել է ի պատիվ Ալեքսանդր Մակեդոնացու: Անվան հունական ձևը թուրքերը վերափոխեցին, կոչելով Խսկենդերուն: Մինչև 1939 թվականը քաղաքը գտնվում էր ֆրանսիական տիրապետության ներքո (Սիրիայի կազմում, որը ֆրանսիական մանդատ էր), որից հետո ֆրանսիացիները հանձնեցին թուրքերին: Տեղի և շրջակայքի հայերն էլ, հալածանքների ենթարկվելով, անցան Սիրիա և Լիբանան:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԱՐԾԻՊԵԼԱԳ. — Գտնվում է Հյուսիսային Ամերիկայի Հյուսիս-արևմտյան ափերի մոտ: Այդպես է կոչվել ի պատիվ Ալեքսանդր Զիրիկովի, որի գլխավորած էքսպեդիցիան 1741 թվականին հայտնաբերել է այս արշխապելազը:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ. — Քաղաք ԱՄՀ-ում (Եգիպտոսում), Միջերկրական ծովի ափին: Հիմնադրվել է 331 թվականին մ.թ.ա., Ալեքսանդր Մակեդոնացու կողմից (356—323 թթ. մ.թ.ա.) և կոչվել նրա անունով: Քաղաքը համարվում է Հելլենական մշակույթի խոշոր կենտրոն և փառաբանված էր նավահանգստում գտնվող փարոսով, որը համարվում էր «Աշխարհի յոթ հրաշալիքներից» մեկը:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ. — Անցյալում Գյումրի: Տասնիններորդ դարի սկզբին, 1828 թվականին, Թուրքմենչայի պայմանագրով Գյումրին իրանից անցավ Ռուսաստանին: Իսկ 1829 թվականին, Ադրիանապոլում, Թուրքիայի հետ կնքած հաշտության պայմանագրից հետո, մեծ թվով հայեր Արևմտյան Հայաստանից, հատկապես էրզրումից, Ղարսից, Բայազետից գաղթեցին Գյումրի: Գյումրին 1836 թվականին վերածվեց քաղաքի և նույն թվականին, նիկոլայ 1-ին կայսեր ներկայությամբ, Գյումրիից մի կիլոմետր արևմուտք, դրվեց բերդի հիմքը և

Քաղաքն էլ Նիկոլայ Ի-ի կնոջ՝ Ալեքսանդրա Ֆեոդորով-նայի պատվին կոչվեց Ալեքսանդրապոլ։ Ալեքսանդրա անվանը ավելացվել է Հունական պոլիս (Կրօմատ՝ պոլ) «Քաղաք» բառը։ Սակայն Ալեքսանդրապոլ անունը շիրակցիների մեջ ժողովրդականություն չստացավ. նրանք դրա փոխարեն գործածում էին ուղղակի «Քաղաք» բառը։ Երբ շիրակցիները «Քաղաք» էին ասում, ապա նկատի ունեին Ալեքսանդրապոլ (Գյումրին):

Քաղաքի ճարտարապետական կոթողներից է Ամենափրկչի եկեղեցին, որը կառուցված է Անիի Մայր եկեղեցու օրինակով։ Ժողովուրդը անվանում է Կարմիր ժամ, որովհետև կառուցված է մեծ մասամբ կարմիր գույնի քարերից։ Քաղաքը 1924 թվականին վերանվանվեց Լենինական։

Ալեքսանդրովսկ—ՍԱԽԱԼԻՆԻ.— Քաղաք Սախալին կղզում։ Հիմնադրվել է 1881 թվականին և կոչվել է ի պատիվ Ալեքսանդր II-ի։

Ալե՛ռիշՅԱՆ ԿՂՋԻՆԵՐԸ.— Կղզիների շղթա Ալյասկայի և Կամչատկայի միջև։ Այդպես է կոչվել բնիկների՝ ալեռտների անունով։ Հայտնաբերվել է Բերինգի կողմից 1741 թվականին։

ԱԼԹԱՅ.— Լեռնային երկիր Ասիայում, ՍՍՀՄ-ի, Մոնղոլիայի և Չինաստանի սահմանում։ Անունը ստուգաբանվում է երկու կերպ. մեկը կապվում է մոնղոլերեն ալթան կամ ալթուն բառի հետ, որը նշանակում է «ոսկի» (այս վայրերը հավանաբար միջին դարերում հայտնի են եղել լուկով)։ Իսկ մյուս մեկնաբանությունը կապվում է «ալատառ» բառի հետ, որը նշանակում է «խայտարդետ լեռներ»։ Ալթայը արևմուտքից արևելք՝ Արևմբատասիբիրական դաշտավայրից մինչև Գորի, ձգվում է 2000 կիլոմետր երկարությամբ։ Ամենաբարձր գագաթն է Բելուխան։

ԱԼԹԻՆԳՅՈԼ.— Լիճ Ալթայում, որը գրականության մեջ հայտնի է նաև Տելեցկոյե անվամբ։ Ալթինգյոլ են կոչում Ալթայի բնակիչները։ Անունը կազմված է ալթին-

«ոսկի» և գյու՝ «լիճ» բառերի միացումից՝ ոսկու կամ ոսկյա լիճ:

ԱԼԹԻՆԴԱՂ.— Լեռնաշղթա Արևմտյան Զինաստանում: Թյուրքական ալթին (ալթուն)՝ «ոսկի» և դաղ՝ «լեռ» բառերից:

ԱՃԻՐ.— Պետություն Հյուսիսային Աֆրիկայում, համանուն մայրաքաղաքով: Քաղաքը հիմնադրվել է 10-րդ դարում (935 թ.) փոքրիկ կղզիների վրա: Անունը առաջացել է արարերեն ալ ճեզիրե՝ «կղզի» բառից: Հետագայում կղզիները ցամաքին միացան պատնեշով: Ժամանակի ընթացքում քաղաքի անունը տարածվեց երկրի վրա:

ԱԼԻԿԱՆՏԵ.— Քաղաք Խսպանիայում: Նախկինում կոչվում էր Լուցենտում, որը նշանակում է լուսավորող: Այդպես է կոչվել նավահանգստում եղած փարոսի պատճառով: Հետագայում արարերի արտասանությամբ քաղաքի անունը դարձել է Ալիկանտե:

ԱԼԱՀԱԲԱԴ.— Քաղաք Հնդկաստանում: Այս անունով քաղաքներ կան նաև Պակիստանում և Իրանում: Անունը ծագել է արարերեն ալլահ՝ «աստված» և պարսկերեն՝ արադ՝ «քաղաք» բառերի զուգակցումից: Այսինքն «տիրոջ (Աստծու) քաղաք»:

ԱԼԵԳԱՆՑԱՆ ԼԵՌՆԵՐ.— Գտնվում են Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Տեղական հնդիկների լեզվով նշանակում է «անվերջանալի լեռներ»:

ԱԼԿԱՆՏԱՐԱ.— Քաղաք Խսպանիայում: Սագում է արարերեն ալ-կանտարա, այսինքն «կամուրջ» բառից: Խոսքը Տախո գետի կամրջի մասին է:

ԱԼՄԱ-ԱԹԱ.— Ղաղախական ՍՍՀ-ի մայրաքաղաքը: Ղաղախերեն ալմաթի նշանակում է «խնձորուտ»: Երեխն բառերը մեկնաբանվում են առանձին-առանձին՝ ալմա՝ «խնձոր» և աթա՝ «հայր», որն, իհարկե, նույն իմաստն ունի՝ «խնձորով հարուստ վայր»: Քաղաքը հիմնադրվել է 1854 թվականին: 1864 թվականից մինչև 1921 թվականը կրել է Վեռնի անունը, որը բառացի նշանակում

է «Հավատարիմ»: Այսինքն հավատարիմ կենտրոնական՝ ցարիզմի քաղաքականությանը Միջին Ասիայում: **ԱԼՅԱՍԿԱ.**— Ամերիկայի Միացյալ Նահանգների նահանգներից մեկը, որը կազմավորվեց 1958 թվականին: Անվանումը ալեռուտյան լեզվից է գալիս և նշանակում է «Ամերիկայի պատկանում էր Ռուսաստանին, որից հետո 12.500.000 դոլարով վաճառվեց Ամերիկայի Միացյալ Նահանգներին:

ԱԼՊԵՐ.— Ընդարձակ լեռնաշխարհ Արևմտյան Եվրոպայում: Նվազագույնը, Ֆրանսիայի, Ավստրիայի տերիտորիաներում: Անունը ծագել է կելտերեն ալպ՝ «բարձր լեռ» հասարակ բառից, որը դարձել է աշխարհագրական հատուկ անուն:

ԱԼՈՒԹԿԱ.— Քաղաք Ղրիմի հարավային ափին: Անունը առաջացել է հունարեն ալոպեքս՝ «աղվես» բառից: Իր ժամանակին այս տեղերում եղել են մեծ թվով աղվեսներ:

ԱԽԱԼԻ-ԱՖՈՆԻ.— (Նոր Աֆոն): Քաղաք Արխավիայում: Ներկա քաղաքի տեղում Հունաստանի Աֆոն վանքից եկած միաբանները կառուցել են վանք և կոչել Նոր Աֆոն: Ժամանակի ընթացքում վանքի շուրջը ստեղծվել է բնակավայր, որը կոչվել է վանքի անունով: Ներկա ախալի մասնիկը, որը վրացերենում նշանակում է «նոր», փոխարինեց ռուսերեն «նովի» բառին: Այսպիսով, նովի-Աֆոնը դարձավ Ախալի-Աֆոնի:

ԱԽԱԼՔԱԼԱՔ.— Քաղաք Վրաստանում: Վրացերեն ախալի նշանակում է «նոր» և քալաքի՝ «քաղաք»:

ԱԽԱԼՑԻԱՆ.— Քաղաք Վրաստանում: Վրացերեն ախալի՝ «նոր» և ցիխեն՝ «ամրոց» կամ «բերդ» բառերից:

ԱԽԵՆ.— Քաղաք Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում: Անունն առաջացել է լատիներեն աքվա՝ «ջուր» կամ «ջրեր» բառից: Այստեղ գեռևս հռոմեական տիրապետության ժամանակներից հայտնի էին բաղնիքներ և բուժիչ ջրեր:

ԱԽԾՈՒԹՅԱ. — Ստորին Վոլգայի ձախ բազուկը: Թուրքական ժամանական ախ՝ «սպիտակ» և տերե՞՝ «գագաթ» կամ «բլուր» բառերից:

ԱԿՄԱԼԻՆՍԿ. — Տե՛ս Ցելինոգրադ:

ԱԿՏՅՈՒԹԻՆՍԿ. — Քաղաք Ղազախական ՍՍՀ-ում: Հիմնադրվել է 1869 թվականին որպես բերդ, Ակ-Տյուրե բլրի վրա (ղազախերեն ակ՝ «սպիտակ» և տյուրե՝ «բլուր»): Որպես քաղաք գոյություն ունի 1891 թվականից:

ԱՀՄԱԴԱԲԱԴ. — Քաղաք Արևմտյան Հնդկաստանում: Հիմնադրվել է 1411 թվականին, Մեծ Մողոլների սովորական Ահմեդի կողմից և կոչվել է նրա անվամբ. պարսկերեն արագ մասնիկը ունի քաղաքի իմաստ:

ԱՂՍՈՒ. — Այսպես են կոչվում բազմաթիվ գետեր Միջին Ասիայում, Ղազախստանում, Կովկասում և այլ վայրերում: Թուրքերեն աղ՝ «սպիտակ» և սու՝ «ջուր» բառերից: Տվյալ դեպքում նկատի է ունեցվում ոչ թե ջրի մաքրությունը, այլ այն, որ գետը սնվում է հալլոր ձյուներից:

ԱՂԹԱՄԱՐ կամ **ԱԽԹԱՄԱՐ.** — Կղզի Վանա լճի հարավային մասում: Ավանց գյուղի դիմաց, գյուղից շորմ կիլոմետր հեռավորության վրա:

Ախթամարը ազգային պատմության ու մշակութիւնների գանձարան է: Այս նշանավոր կղզին Գագիկ Արծրունի թագավորի օրոք, X դարում, շենացավ և պայծառացավ: Գագիկ թագավորը, Ախթամարում կառուցեց պարիսպներ, ամբարտակներ, մարտկոցներ, բուրգեր, աշտարակներ, ապարանքներ, որով կղզին դարձավ արքայավայել և անառիկ մի վայր: Այդ շինությունները դարձան Գագիկ Արծրունու մեծագործության կենդանի վկան: Ախթամարը, այդ ժամանակ այնքան փառաբանված կղզի էր, որ նրա անունով էլ Վանա ծովակը կոչվել է Ախթամարա ծով: Գագիկ Արծրունին կառուցեց նաև հրաշագեղ մի տաճար, որը հայտնի է Ս. Խաչ անունով: Տաճարը կառուցվել է 915—921 թվականների ընթացքում:

Ժողովուրդը ունի «Ախթամար» անվան ավանդականը ստուգաբանությունը, ըստ որի ժամանակին մի սիրահար պատանի ամեն գիշեր լողալով հասնում է կղզի, ուր գտնվել է իր սիրելի Թամարը: Տղային դեպի մութու խավար կղզին առաջնորդում է վառած լույսը: Սակայն չար մարդիկ մի գիշեր հանգցնում են Թամարի վառած կրակը: Պատանին մոլորդում է ծովում և խեղդվում է: Պատանու դիակը ալիքները ափ են նետում: Նրա շուրթերին կարծես սառել էին երկու բառ. «Ախ, Թամար»: Այսպիսով, ի հիշատակ սիրային այդ հուզիչ պատմության, կղզին կոչվեց «Ախ-թամար»: Այդ անունը ժամանակի ընթացքում ձևափոխվեց և կոչվեց մի բառով՝ «Ախթամար»:

Սիրային այս գեղեցիկ ավանդությունը դարձավ Հովհաննես Թումանյանի «Ախթամար» լեգենդի սյուժեն:

ԱՂՋԱՄԱՐԻ կամ ԱխթԱՄԱՐԻ ՇՈՎ.— Վանա լճի անվանումներից մեկը: Անունը ստացել է լճում գտնվող Աղջամար կամ Ախթամար կղզուց: Կղզին գտնվում է լճի հարավարենելան ափից ոչ հեռու: Այս անվանումը գործածել է Փավստոս Բյուզանդիք:

ԱՄԱԶՈՆ.— Գետ Հարավային Ամերիկայում: Ամազոնը իրավամբ կարող է համարվել մեր մոլորակի պարծանքը, բնության մեծագույն հրաշալիքներից մեկը: Ամազոնը ծնվում է Պերուական Անդերում, 4300 մետր բարձրության վրա գտնվող Լյաուրիկոչա լճից, Մարանիոն անվան տակ: Հետո միանում է Ուկայալի օժանդակին: Գետի գյուցազնական մեծությունը մարդկանց ստիպում է վերհիշել շատ առասպելներ ու արկածներ, որոնք կապված են նրա անվան առաջացման հետ: Ամազոն անունը շատերին հիշեցնում է դիցաբանական ամազոնուհիներին: Նրա թավուտները իր ժամանակին համարվել են «էլուրադոներից» մեկը: Հաճախ մեծարելով նրան «գետերի գետ» կամ էլ շատ անգամ «հոսող քաղցրահամ ծով» են անվանել: Եվ, իրոք, նա այդպիսին է: Միջին հոսանքում գետն ունի 20 կիլոմետր լայնու-

թյում, բայց Ամազոնի փովածությունը ավելի է մեծանում, երբ նա մոտենում է օվկիանոսին և ճյուղավորվում: Այստեղ նրա լայնությունը համառում է 80 կիլոմետրի: Ահա այս «հոսող ծովի» գետաբերանին էր, որ 16-րդ դարի սկզբին մոտեցան իսպանացիները: Նրանք հանդիպեցին բնության այդ հրաշալիքին, որը գալիս էր ինչ-որ անհայտ երկրից: Ամազոնի հայտնաբերողներից է եղել իսպանացի Օրելիանը, որը հանդիպեց հնդկական մի ցեղի, որոնց կանայք մարտնչում էին այնպես, ինչպես հունական դիցարանությունից հայտնի ամազոնուհիները: Վերադառնալով Ամազոնի թավուտներից, Օրելիանը հավատացրեց իսպանացիներին, որ ինքն ընկել էր դիցարանական ամազոնների երկիրը: Դա, իհարկե, 16-րդ դարում էր: Իսկ միջնադարյան մարդը զարմանալի դյուրահավատ էր և ամեն մի մտացածին բան ընդունում էր որպես իրականություն: Այստեղից էլ գետին տրվեց «Ամազոնների գետ» անվանումը կամ ուղղակի «Ամազոն»: Անվան առաջացման վերաբերյալ կա նաև մի այլ մեկնաբանություն, ըստ որի Ատլանտյան օվկիանոսի կողմից խոշոր աշխաները բարձրանում էին գետի հոսանքն ի վեր ավելի քան 1000 կիլոմետր: Այս երկութը առաջացնում էր մեծ ալիք, որը հենց տեղական հնդիկների լեզվով նշանակում էր «ամազոն»: Սակայն առավել հավանական է առաջին մեկնաբանությունը:

ԱՄԱՆԳԵԼԻՒԻ.— Բնակավայր Կուստանայի մարզում: Այդպես է կոչվել ի պատիվ ղազախ ժողովողի հերոս Ամանգելուի հմանովի (1873—1919թ.):

ԱՄԲԱՐՁԻԿ.— Ծոց Արևելա-Սիբիրական ծովում: 1740 թվականին այդ ծոցի ափին ծովագնաց Դմիտրի Լազտեկի կողմից կառուցվեց մի փոքր պահեստ: Իսկ ոռուերենում հենց ամբարձիկ նշանակում է «փոքր պահեստ»:

ԱՄԵՐԻԿԱ.— Աշխարհամաս Արևմտյան կիսագնդում: Զնայած որ հայտնաբերվել է Կոլումբոսի կողմից 1492 թվականին, բայց աշխարհամասին տրվել է ֆլորենցիացի ծո-

վագնաց և աշխարհագրագետ Ամերիկո Վեսպուչիլու անունը: Այս թե դա ինչպես է կատարվել:

Ամերիկո Վեսպուչին ծնվել է Խտալիայի Ֆլորենցիա, քաղաքում: Նա 38 տարեկան հասակում, այն է՝ 1490-թվականին, տեղափոխվում է Պիրենեյան թերակղզի, որտեղից էլ կատարում է ճանապարհորդություններ գեղի Կոլումբոսի հայտնագործած երկրները: Ամերիկոն ճանապարհորդում է Հարավային Ամերիկայի հյուսիսարևելյան ափերի այն մասերում, որոնք ներկայում մտնում են Բրազիլիայի կազմի մեջ: Վեսպուչին այն միտքն է հայտնում, որ Կոլումբոսի հայտնաբերած երկրը հանդիսանում է մի նոր ցամաք, որը կապ չունի Հնդկաստանի հետ: Այս լուրը ոչ պակաս ցնցող նորություն էր, քան Կոլումբոսի հայտնագործումը: Այսպիսով, Ամերիկո Վեսպուչին հաստատում է, որ Կոլումբոսի հայտնաբերած երկրը Հնդկաստանը չէ, այլ մինչեւ այդ միանգամայն անհայտ մի ցամաք, որը գտնվում է Եվրոպայի և Ասիայի միջև: Հետևապես, ըստ Ամերիկո Վեսպուչիի, դա «Նոր Աշխարհ» է. այդ անունը երկար ժամանակ գործածության մեջ մնաց: Հետագայում՝ 1507 թվականի ապրիլի 25-ին լոթարինգիացի աշխարհագրագետ Մարտին Վալձեմյուլերը լուս է ընծայում աշխարհագրական մի գրքույկ, որտեղ առաջին անգամ նոր Աշխարհն անվանում է «Ամերիկա» ի պատիվ Ամերիկո Վեսպուչիի:

Սակայն «Ամերիկա» անունը քարտեզի վրա երևաց շնորհիվ քարտեզագետ Մերկատորի, որը Վալձեմյուլերից մի քանի տարի հետո կազմում է աշխարհի նոր քարտեզը: Մինչ այդ եղած քարտեզներից ամենահեղինակավորը պտղոմեոսյան քարտեզն էր, որտեղ նոր Աշխարհի մասին խոսք լինել անգամ չէր կարող: Հետևապես, երբ Մերկատորը ձեռնարկեց աշխարհի նոր քարտեզը կազմելու աշխատանքներին, նրա առաջ կանգնած էր մի շատ կարևոր հարց՝ ինչպես անվանել Եվրոպայից արևմուտք գտնվող նոր Աշխարհը: Մերկա-

տորը վարվեց այնպես, ինչպես Վալձեմյուլերը, այս-
ինքն իր կազմած քարտեզի վրա նոր Աշխարհին տվեց
Ամերիկա անունը:

Սակայն Ամերիկոյի անունով սկզբում կոչվում էր
Ներկա Հարավային Ամերիկայի միայն շատ փոքր մա-
սը: Այնպես որ «Ամերիկա» հասկացությունը այսօր
միանգամայն տարբեր բովանդակություն ունի, քան իր
մկրտման օրը՝ 1507 թվականին: Ներկայումս Ամե-
րիկա ասելով նկատի ենք ունենում Ալյասկայից մինչև
Հրո Երկիր ընկած կրկնակի մայր ցամաքը: Ոչ Վալձե-
մյուլերի, ոչ մեծ քարտեզագետ Մերկատորի մըտ-
քովն անգամ չէր անցնում, որ իրենց կողմից տրված
«Ամերիկա» անունը կարող էր տարածվել ամբողջ
Արևմտյան կիսագնդի վրա, որովհետեւ նրանք
Ամերիկա են անվանել սոսկ Բրազիլիայի հյուսիս-
արևելյան ափերը: Անկասկած կոլումբոսին է պատ-
կանում Ամերիկայի գյուտը: Դա մի փաստ է, որը
ոչ մի վիճարկման կարիք չի զգում: Բայց նրան վիճակ-
ված չէր տեսնելու իր գյուտի արդյունքները, վայելելու
նրա պտուղները, իսկ ժամանակակիցներն էլ շնասկա-
ցան նրա գործի մեծությունն ու էությունը: Հենց ինքը
կոլումբոսն էլ մինչև վերջ մնաց այն կարծիքին, որ իր
հայտնաբերած երկրները հեքիաթային Հնդկաստանի
շարունակությունն են կազմում: Ամերիկո Վեսպուչին
կարողացավ իմաստավորել կոլումբոսի գյուտը, դառ-
նալով միաժամանակ կոլումբոսյան անմահության
մասնակից-յուրացնողը:

ԱՄԵՐԻԿԱ.— Ծոց Ճապոնական ծովի այն մասում, որը ողո-
ղում է Պրիմորիե երկրամասի ափերը: Այս ծոցի ան-
վան առաջացման պատմությունը կապված է ուսական
այն ուազմանավի անվան հետ, որը տասնիններորդ դա-
րի վաթսունական թվականներին ուսումնասիրություն-
ներ էր կատարում ասիական ափերի մոտ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ.— Պետություն Հյուսի-
սային Ամերիկայում, որը ձևավորվեց 1776 թվականին

Հյուսիսային Ամերիկայում եղած անգլիական նախկին գաղութներից: Նորաստեղծ պետությունը սկզբում ֆեդերալ հիմունքներով միավորում էր թվով 13 նահանգ (ներկայումս 50 նահանգ): Այստեղից էլ պետության անվանումը: Այսինքն նահանգների միություն (ֆեդերացիա): Իսկ «Միացյալ նահանգներ» անվան գաղափարը փաստորին ընդորինակումն է դեռ 16-րդ դարում բուրժուական հեղափոխության հետևանքով Հոլանդիայում ստեղծված «միացյալ նահանգների»:

ԱՄԻՐԱՆՏՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ.— Մի խումբ կղզիներ Հնդկական օվկիանոսում (Մադագասկարից ոչ հեռու): Հայտնաբերվել են 1502 թվականին ծովակալ Վասկո դա Գամայի կողմից և ի պատիվ նրա կոչվել են «Ծովակալի կղզիներ» (պորտուգալերեն ալմիրանտե՛ աղմիրալ բառից):

ԱՄԻԴԱ.— Տես Տիգրանակերտ:

ԱՄՄԱՆ.— Հորդանանի մայրաքաղաքն է եգիպտական աստված Ամմոնի անունից. իսկ ըստ Աստվածաշնչի Ամմանը Աբրահամի եղբոր թոռն էր և բնակվում էր Մեոյալ ծովից (արևելք:

ԱՄՍԵՐԴԱՄ.— Նիդերլանդիայի (Հոլանդիայի) խոշորագույն նավահանգիստը և երկրորդ մայրաքաղաքը, որը գտնվում է Ամստել գետի գետաբերանում: Քաղաքի անունը առաջացել է այդ գետի անունից, ավելացրած գերմաներեն դամ՝ «ամբարտակ» բառը («Ամստելի ամբարտակ»):

ԱՄՈՒԴԱՐՅԱՆ.— Գետ Միջին Ասիայում: Անունը կապված է նրա ափին գտնվող Ամու քաղաքի հետ, որը ներկայումս անհետացել է: «Ամու» անվանը ավելացվել է պարսկերեն դարյա՝ «գետ» բառը, որը իրանական տերմին է, բայց գարձել է թուրքական շատ լեզուների սեփականություն: Այսպիսով, Ամուդարյան նշանակում է «Ամուի գետ»: Ամուդարյան անտիկ աշխարհագրության մեջ հայտնի էր Օքուս անունով:

ԱՄՈՒԽԴՄԵՆԻ ԾՈՎ. — Խաղաղ օվկիանոսի ծայրամասային ծռավերից է, որը ողողում է Անտարկտիդա մայրցամաքի ափերը: Գտնվում է արևելյան երկայնության 100—115 աստիճանների միջև: Կլոր տարին ծածկված է սառուցցով: Ծովը այդպես է կոչվել ի պատիվ նորվեգիայի անվանի բևեռագետ Ռուալ Ամունդսենի (1872—1928):

ԱՄՈՒԲ. — Գետ Հեռավոր Արևելքում: Աշխարհի խոշորագույն և ջրառատ գետերից մեկը: Ամուր բառը գալիս է տունգում երենից: Դա մամու բառի աղավաղումն է, որը նշանակում է «սև», «անթափանցելի»: Այդ անվանումը համապատասխանում է գետի ջրի գույնին, որն առաջանում է գետի հոսանքում գտնվող ապարների լուծվելուց: Գետը պղտոր է հատկապես ամառային անձրևների շրջանում: Կա նաև երկրորդ ստուգաբանությունը՝ ամուր էվենկերեն նշանակում է «մեծ ջուր»:

ԱՅԱՆ. — Նավահանգիստ Խաբարովսկի երկրամասում: Էվենկերեն այան բառից, որը նշանակում է «ծոց»:

ԱՅԱԶՋՈ. — Քաղաք Կորսիկա կղզու հարավ-արևմտյան մասում: Անոնը ստացել է լատիներեն առ յակում՝ «ափի մոտ» բառերից: Նապոլեոն 1-ի (Բոնապարտի) հայրենիքն է:

ԱՅ-ԹՈԴՐՈՐ. — Հրվանդան Հարավային Ղրիմում: Անվան հիմքում ընկած է թաթարական այ՝ «լուսին» (սրբի խմասետով) բառը և հունական Թեոդորոս անունը դարձել է Թոդոր: Իր ժամանակին այստեղ եղել է Ս. Թեոդորոսի եկեղեցին:

ԱՅՈՎԱ. — Նահանգ ԱՄՆ-ում: Անվանումը առաջացել է հընդկական «այովա» ցեղի անունից:

ԱՅ-ԹԵՏՐԻ. — Լեռ Ղրիմում: Անոնը առաջացել է հունարեն այգիում՝ «սուրբ» բառից, որը թաթարների կողմից աղճատվել է և դարձել այ, ավելացվելով Պետրի (Պետրոս) անունը: Այսինքն «Սուրբ Պետրոս»:

ԱՅՐԱՐԱՏ. — Պատմական Հայաստանի գլխավոր նահանգներից մեկը: Աշխարհագրական դիրքով Հայաստանի մյուս նահանգների նկատմամբ միջին տեղն էր գրա-

վում, որի համար կոչվել է նաև «Միջնաշխարհ Հայոց»։ Այրարատի արևելքում էին Սյունիք և Վասպուրական նահանգները, արևմուտքում՝ Բարձր Հայքը, հարավում՝ Տուրուբերան ու դարձյալ Վասպուրական նահանգները, հյուսիսից՝ Տայք և Գուգարք նահանգները։ Այրարատ նահանգի բոնած տարածությունն էր 40 հազար քառ. կիլոմետր։ Լեռներից նշանավոր էին Արարատը (որից էլ նահանգի անվան մի ստուգաբանությունը), Արագածը, Նպատը և Սուկավետը։ Այրարատը ուներ քսան գավառ. Բասեն, Գաբրելյանք, Հավնունիք, Արշակունիք, Բագրեանդ, Ծաղկոտն, Շիրակ, Վանանդ, Արագածոտն, Ճակատք, Մասլացոտն, Կոգովիտ, Աշոցք, Նիդ, Կոտայք, Մազար, Վարաժնունիք, Ոստան, Արած։ Վերջին Արշակունիների ժամանակ Այրարատ նեղ իմաստով հասկացվում էր Արարատյան դաշտը։

Այրարատ անվան մյուս, այն է, ավանդական ստուգաբանությունը կապվում է Արա Գեղեցիկի անվան հետ (տես Արայի լեռ)։

ԱՅՈՒԹՆԱԳԱՐ.— Քաղաք Արևելյան Պակիստանում։ Ինչպես հայտնի է Պակիստանը բաժանվում է երկու մասի։ Արևմբայան և Արևելյան, որոնք իրարից անջատված են։ Հնդկաստանի տերիտորիայով։ Արևելյանը զբաղեցնում է Բրահմապուտրայի գելտան, որտեղ բնակվում է 58 միլիոն մարդ։ Բնականաբար Արևելյան Պակիստանն էլ իր վարչական կենտրոնը պետք է ունենար, որը դիտվում է որպես Պակիստանի երկրորդ մայրաքաղաքը, հանդիսանալով հանրապետության Ազգային ժողովի նստավայրը¹։

Մինչև վերջերս այդպիսին համարվում էր Պակկաքաղաքը։ Բայց որոշվեց Արևելյան Պակիստանի համար

1 Երկու մայրաքաղաք ունեցող պետություններից կարելի է հիշել Հինդկան, Նիդերլանդիան և Բոլիվիան։ Առաջինի համար Բենգալի և Տրիբութքաղաքներն են։ Երկրորդի համար Համար Հաազան և Ամստերդամը։ Երրորդինը՝ Սուկըն և կապաւար։

էլ նորակառուցյ մայրաքաղաք ստեղծել, որը հիմնվեց Դակայից ոչ հեռու: Քաղաքը կոչվեց Այուբնագար, ի պատիվ Պակիստանի նախկին պրեզիդենտ Այուբ խանի: Այուբ անվանը ավելացվեց հնդկերեն նագար՝ «քաղաք» մասնիկը: [Այսինքն «Այուբի քաղաք»:

ԱՅՈՒ-ԴԱՂ (*Մեդվեդ-Գորա*).— Լեռ և հրվանդան Դրիմի հարավային ափում: Անունը առաջացել է թաթարերեն այսու՝ «արջ» և դաղ՝ «լեռ» բառերի զուգակցումից: Հսկատափակ ժայռ, որը արտաքին տեսքով հիշեցնում է արջի: Լեռը իր անունը տվել է հրվանդանին:

ԱՆԱՊԱ.—Կուրորտային քաղաք Կրասնոդարի երկրամասում, Սև ծովի ափին: Չերքեզերեն անա, անե՝ «սեղան» և ապե՝ «ելուստ» բառերի միացումից («սեղանաձև ելուստ»):

ԱՆԱՏՈԼԻԱ.—Փոքր Ասիայի մյուս անվանումը, որը հունարենից է և նշանակում է «արեելք» (տես նաև «Փոքր Ասիա» անվան բացատրությունը):

ԱՆԳԱՐԱ.—Կամ Վերին Տունգուկա: Գետ Սիրիոս, Ենիսեյի աջ վտակը: Անվան առաջացումը առավել հավանական է համարվում բուրյաթ-մոնղոլական «անգար» բառից, որն ունի թե դուռ և թե երախ (բերան) իմաստը: Նկատի է ունեցվել այն, որ գետն անընդհատ «կլանում» և դուրս է տանում Բայկալի ջրերը: Մյուս ստուգաբանությամբ անգար բառը թարգմանվում է որպես կապան կամ կիրճ:

ԱՆԴԻԱ.—Մեծ Բրիտանիա կղզու միջին և հարավային մասը: Անգլիա անունը առաջացել է գերմանական ծագում ունեցող «անգլ» ցեղից, որն այսակ բնակություն է հաստատել 5-րդ դարում: Անգլիացիներն իրենց երկիրն անվանում են «ինգլանդ», որը հենց նշանակում է «Անգլերի երկիր»: Հաճախ Անգլիա անունը փոխարինում է Մեծ Բրիտանիա անվանը:

ԱՆԳԼՈ-ԱՄՔՍՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ.—Պետությունների խմբավորում է Հյուսիսային Ամերիկայում, որի կազմի մեջ մտնում են Ամերիկայի Միացյալ Նահանգները և Կա-

նադան, որտեղ իշխում է անգլիական լեզուն (Կանադացում նաև ֆրանսերենը): Քանի որ այս երկրներում իշխում է անգլերենը և բնակիչներն էլ հիմնականում Անգլիացից ներգաղթողներն են, իսկ անգլիական ժողովրդի էթնիկական ձևավորման գործում էլ հիմնական դեր խաղացին «անգլերը» և «սարքսերը», այստեղից էլ տրվել է Անգլո-սաքսոնական Ամերիկա անվանումը, ի տարբերություն կատինական Ամերիկացի (տես):

ԱՆԳԿՈՐ. — Քաղաք Կամբոջայում, որտեղ գոյություն ունի տաճարների մի հոյակապ կոմպլեքս: Առավել մասաբանվածը՝ Անգկոր-վատ-ն է: Քաղաքի անունը առաջացել է կիսմերերեն անգկոր՝ «քաղաք» բառից, իսկ «վատ»՝ նշանակում է տաճար:

ԱՆԳՈԼԱ. — Երկիր, պորտուգալական գաղութ Հարավ-Արևմբույան Աֆրիկայում: Անունը առաջացել է նորլա պետության անունից, որը գոյություն ուներ այս վայրերում մինչև 1483 թվականը: Պորտուգալացիները այն ձեռփոխեցին և Անգոլա դարձրին:

ԱՆԴԱԼՈՒԻՁԻԱՅ. — Պատմական մարզ Խապանիայում: Այդպես է կոչվել այստեղ 5-րդ դարից բնակություն հաստատած գերմանական վանդալ ցեղի անունով:

ԱՆԴԱՄԱՆՅԱՆ ԿՂՋԻՆԵՐ. — Արշիպելագ Հնդկական օվկիանոսի հյուսիսային մասում: Անվանումը առաջացել է մաւայան. «Հանդումանա» աստծու անունից: Այստեղ նրան նվիրված տաճարներ կային: Կղղիները հայտնի են դեռևս 13-րդ դարից, որոնց մասին տեղեկություններ հաղորդել է Մարկո Պոլոն:

ԱՆԴԱՄԱՆՅԱՆ ԾՈՎ. — Գտնվում է Բենգալյան ծոցի արևելյան մասում, ողողում է Հնդկաշխն թերակղզու ափերը: Անունը ստացել է համանուն կղղիներից:

ԱՆԴՅԱՆ ԼԵՌՆԵՐ. — Աշխարհի խոշորագույն լեռնային սիստեմը Հարավային Ամերիկայում: Ինկերի լեզվով անտառ՝ «պղինձ» բառից: Այդպես է կոչվել պղնձի հանքերով հարուստ լինելու պատճառով: Պղինձը լայնորեն օգտագործվել է դեռևս ինկերի ժամանակ:

ԱՆԺՈՒԻԻ ԿՂՋԻՆԵՐ.— Գտնվում է Նոր Սիբիրյան կղզիների խմբում: Այդպես է կոչվել ի պատիվ ռուս ծովակալ Պ. Ֆ. Անժուի, որը հետազոտեց Արկտիկան և Սիբիրի հյուսիսային ափերը 1820—1824 թվականների ընթացքում: Անժուի խմբի կղզիներից նշանավոր է Կոտելնին: **ԱՆԻ.**— Բագրատունյաց Հայաստանի նշանավոր մայրաքաղաքը: Ախուրյանի աջ ափին, լենինականից 55 կիլոմետր հեռու ենթադրվում է, որ այս անունը առաջացել է Անահիտ աստվածուհու անունից: Մի այլ մեկնաբանումով Անի անունը ծագել է Հայաստ ժողովրդի Անիա թագավորի անունից: Անի անունով նշանավոր ամրոց է եղել պատմական Հայաստանի Բարձր Հայքի Դարանաղի գավառում: Երգնկայից Ակն տանող ճանապարհի վրա, Եփրատի ձախ ափին: Այնպես որ Անի անունը այստեղից է եկել Շիրակ:

ԱՆԻՎԱ.— Ծոց Հարավային Սախալինում: Անունը առաջացել է այներեն անի՝ «նա» և վա՝ «անցավ» բառերից: Բատավանդության փոթորկի ժամանակ մեկը նավակով անցել է այս ծոցը: Ավանդությունը արտացըլում է այների ծովագնացության արվեստը: Ծոցի անունից են ստացել իրենց անունները նաև Անիվա քաղաքը՝ Սախալինուն և Անիվա թերակղզին, որը հենց ծոցի մոտ է գտնվում:

ԱՆԴՈՐՐԱ.— Փոքր պետություն Պիրենեյան լեռներում, Ֆրանսիայի և Խսպանիայի միջև: Անվան ստուգաբանությունը մոտավոր է և ենթադրվում է, որ առաջացել է բակերեն անդորրիական՝ «անհարթ տեղ» բառից: Անդորրան հանրապետություն է՝ բաղկացած գյուղական վեց համայնքներից: Մայրաքաղաքն է Անդորրա-լա-Վիեխան, որն ունի 700 բնակիչ: Անդորրայի տարածությունն ընդումենը 453 քառակուսի կիլոմետր է, բնակչության թիվը՝ 6 հազար 200 մարդ:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ.— Կովկասյան պարանոցի կամ Կովկասի այն մասը, որն ընկած է Գլխավոր Կովկասյան լեռնաշղթայից հարավ մինչև ՍՍՀՄ-ի պետական սահմանը Իրանի և Թուրքիայի հետ: Հարավային սահմանը համընկնում

է սովետա-իրանական, իսկ Հյուսիս-արևմտյանը՝ սովետա-թուրքական պետական սահմանի հետ։ Արևելքից սահմանը հանդիսանում է Կասպից ծովը, իսկ արևմուտքից՝ Սև ծովը։ Անդրկովկասում են գտնվում Վրացական, Աղրբեջանական և Հայկական՝ միութենական հանրապետությունները։

Անվանումը բառացի նշանակում է «Կովկասից այն կողմը» (նկատի է ունեցվել Գլխավոր Կովկասյան լեռնաշղթան), որը տրվել է ոռուների կողմից։ Քանի որ ոռուները շարժվում էին Հյուսիսից հարավ, ապա նըրանց համար ներկա Անդրկովկասը լեռնաշղթայից «այն կողմն» էր։ Հայ պատմաբան Լեռն Անդրկովկասի փոխարեն գործածել է Այսրկովկաս, որը նշանակում է այս կողմի Կովկաս, այսինքն Կովկասյան լեռնաշղթայից հարավ ընկած։

ԱՆԿԱՐԱ.— Թուրքիայի մայրաքաղաքը 1923 թվականից։ Անունը ծագել է հնդեվրոպական «անկեր» (խարիսխ) բառից, որը տրվում էր կանգառներին, թե ցամաքում և թե ծովում։ Այդպես են կոչվել, որովհետև Անկարան եղել է մեծ ճանապարհների կանգառ։ Մինչև 1930 թվականը հայտնի էր Անգորա անունով։

ԱՆՃՈՒՇ ԲԵՐԴԻ.— Բերդ հին Պարսկաստանի Խուզիստան նահանգում։ Նա փաստորեն եղել է բանտ, աքսորավայր, որտեղ բանտարկված կամ աքսորված մարդուն շպետք է հիշեին։ Այլ խոսքով ասած, մոռանալու բերդ։ Իր ժամանակին, մեր թվարկության շորորդ դարում, պարսից Շապուհ թագավորը խորամանկորեն Պարսկաստան է հրավիրում հայոց Արշակ երկրորդ թագավորին, որին և աքսորում է Անճուշ բերդը։

ԱՆՃՈՅՑ.— Նահանգ Զինաստանում։ Անունը կազմված է նրա կազմի մեջ մտնող երկու խոշոր քաղաքների՝ Անդին և Հոյշժոռու անվանումների առաջին վանկերից։

ԱՆՆԱՄ.— Վիետնամի հին անվանումը։ Առաջացել է չինարեն ան՝ «խաղաղված» և նաև՝ «հարավ» բառերից։ Այսինքն

խաղաղեցրած, հանգիստ հարավ: Այդպես է կոչվել ի հիշատակ 547 թվականի Հինական վերանվաճման: Ան-նամ անունն է կրում նաև Վիետնամի կենտրոնական մասի լեռնաշղթան:

ԱՆՆՈԲՈՆ.—Կղզի Գվինեական ծոցում, Աֆրիկայի արևմտյան ափերից ոչ հեռու: Անվանումը առաջացել է պորտուգալերեն աննո՛ «տարի» և բո՞ն՝ «բարի» բառերի միացումից: Բառացի ստացվում է «բարու կամ հաջողության տարի»: Այդպես է կոչվել, որովհետև կղզին հայտնաբերվել է 1473 թվականի Հունվարի 1-ին: Կղզին հետագայում գրավեցին խստանացիները:

ԱՆՏԱՐԿՏԻԿԱ.—Մայր ցամաք հարավային կիսագնդում, բերվեսի շուրջը: Անտի նախածանցը նշանակում է «գեմ»՝ «հակառակ»: «Իդա» վերջածանցը ունի երկրի իմաստ: Այսպիսով Անտարկտիդա նշանակում է Արկտիկային տրամագծորեն հակառակ երկիր: Անտարկտիդան հարավային մայր ցամաքն է, առանց կղզիների և շրջապատող ծովերի (տես նաև Անտարկտիկա):

ԱՆՏԱՐԿՏԻԿԱ.—Մեր մոլորակի հարավային բևեռային մարզը, որն իր մեջ է առնում Անտարկտիդա ցամաքը, նըրան հարող Ռոսսի, Ռենդելլի, Ամունդսենի, Բելինսգաուզենի ծովերը և այդ ջրերում ցրված կղզիները: Անտարկտիկան գտնվում է Արկտիկայի (տես) հակառակ կողմը: Անտարկտիդան և Անտարկտիկան տարրեր հասկացություններ են, չնայած թե գրականության մեջ, թե առօրյա խոսակցության ժամանակ այս երկու անունները հաճախ նույնացվում են: Դա, իհարկե, ճիշտ չէ: Անտարկտիդան այն լայնածավալ մայր ցամաքն է, որը շրջապատում է Հարավային բևեռը, մինչդեռ Անտարկտիկան, բացի Անտարկտիդա ցամաքից, իր մեջ է առնում նրան հարող ծովերը և այդ ջրերում ցրված կըդգիները: Այսպիսով, Անտարկտիդան միայն հարավային շուրջը և ուռաջը նեռային մայր ցամաքն է, իսկ Անտարկտիկան՝ ամբողջ վեցերորդ աշխարհամասը:

Անտարկտիդան գրավում է մոտ 14 միլիոն քառա-

կուսի կիլոմետր մակերես, իսկ ամբողջ Անտարկտիկան՝
60 միլիոն քառակուսի կիլոմետր:

ԱՆՏԻԼԻԲԱՆԱՆ.—Լեռներ Սիրիայում և Լիբանանում։ Առաջա-
ցել է Հունարեն անտի՛ «գեմ», «Հակառակ» բառից և
«Լիբանան» անունից։ Նկատի են ունեցել լեռների դիր-
քը Միջերկրական ծովի նկատմամբ։ Այս լեռները զու-
գահեռ կերպով ձգվում են Լիբանանյան լեռներից
արևելք։

ԱՆՏԻՑԱՆ ԿՂՋԻՆԵՐ.—Մի խումբ կղզիներ Կարիբյան ծովում։
Բաժանվում են Մեծ և Փոքր Անտիլյան կղզիների։ Ան-
վանումը առաջացել է Հունարեն անտի՛ «գեմ» կամ
«Հակառակ» և իսպաներեն իլլաս՝ «կղզիներ» բառերից։
Իր ժամանակին Կոլումբոսը կարծելով, որ մոտեցել է
Ասիայի ափերին, հայտնաբերած կղզիները անվանել է
այդպես՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ
հայտնաբերած կղզիները գտնվում են Աստվածաշնչի օվ-
կիանոսի հակառակ կողմում։ Այստեղից նաև Անտիլյան
ծով և Անտիլյան հոսանք անվանումները։

ԱՆՏԻՈՔ կամ ԱՆՏԱՔԻԱՆ.—Քաղաք Թուրքիայի հարավ-արե-
վելյան մասում։ Հիմնադրվել է մոտավորապես 260
թվականին մ. թ. ա., սելևկյան Անտիոք I-ի կողմից,
որի անունով էլ կոչվել է։

ԱՆՏԻՊՈԴՆԵՐԻ կամ ՀԱԿՈՏՆՅԱՆ ԿՂՋԻՆԵՐ.—Կղզիների խումբ
Խաղաղ օվկիանոսում, Նոր Գելանդիայի ափերի մոտ։
Հույներն անտիպոդ («Հակոտնյա») անվանում էին եր-
կըրագնդի վրա տրամագծորեն հակադիր կետերում
ապրող բնակիչներին։ Այս կղզիները տրամագծորեն
հակադիր են Գրինլիջին (Լոնդոնի մոտ)։ Եթե, օրինակ,
մենք մտովի մի հոր փորենք Լոնդոնից, որը անցնի երկ-
րի կենտրոնով, ապա մյուս ժայրը դուրս կգա Անտի-
պոդների կղզիների մոտ։ Այնպես որ Լոնդոնի և այդ
կղզիների բնակիչները կլինեն ոտքերով մեկը մյուսին
հակառակ՝ «Հակոտնյա»։

ԱՆՏԻՏԱՎՐՈՒՄ. — Լեռներ՝ թուրքիայում։ Առաջացել է հունարեն անտի՝ «դեմ» և «տավրոս» բառերից։ Այսինքն Տավրոս լեռների դեմ, նրան զուգահեռ գնացող լեռներ։

ԱՆՏՎԵՐՊՈԵՆ. — Քաղաք Բելգիայում, որը հայտնի է եղել իր նավաշինարաններով։ Առաջացել է գերմաներեն «ան», «դեր», «վերֆ» բառերի զուգակցումից, որը նշանակում է «նավաշինարանների մոտ»։

ԱՇԽԱԲԱԴ. — Թուրքմենական ՍՍՀ-ի մայրաքաղաքը։ Անունը առաջացել է թուրքմենական աշխ՝ (էշխ) «սիրո» կամ «հաճելի» և պարսկերեն արակ՝ «քաղաք» բառերի միացումից։ Այդ անունը այժմ էլ շատ սազական է նրան։ Կամբոջ քաղաքը թաղված է կանաչի մեջ։

ԱՇ-ՇԱԱԲ. — Հարավային Եմենի ժողովրդական Հանրապետության մայրաքաղաքը։ Քաղաքը այդպես է կոչվել այդ պետության անդրանիկ պրեզիդենտ և պրեմիերմինիստր Կախտան Մուհամեդ Աշ-Շաաբի պատվին։ Անցյալում այդ բնակավայրը, որը գտնվում է Աղենից քիչ հյուսիս-արևմուտք, հայտնի էր էլ-հթթիհատ անվամբ։

ԱՇՏԱՐԱԿ. — Շրջանային կենտրոն Հայաստանում։ Աշտարակ անունը ծագել է «աշտարակ» բառից, որը տրվում էր քարե այն բարձր կառուցվածքներին, որ հնում շինում էին ամրոցների, պարիսպների անկյուններում՝ թշնամում դիտելու կամ պաշտպանվելու համար։ Հետագայում այս տերմինը դարձել է աշխարհագրական հատուկ անուն։ Աշտարակ անունով մի քանի տեղանուններ կան Հայկական բարձրավանդակում, ինչպես, օրինակ, Բագրեանդի Աշտարակը, Սյունիքի Աշտարակը՝ Կովսական գավառում և վերջապես Արագածոտն գավառի մեր այսօրվա Աշտարակը, որն ամենից նշանավորն ու երկարակյացն եղավ մեր պատմության մեջ։ Անվանի գիտնական Գր. Ղափանցյանը «աշտարակ» բառը ծագած է համարում ասուր-բաբելական «իշտար» աստվածուհու անունից, որի խանանյան արտասածելը «աշտար» է։ Այդ աստծուն նվիրված խորհրդանշող ֆետիշ-

քարերը կրում էին նրա անունը: Ուրեմն աշտարակ բառի արմատն է «իշտար» կամ «աշտար»: Նրան ավելացվել է «ակ» ածանցը:

ԱՇՏԻՇԱՏ կամ **ՀԱՇՏԻՇԱՏ**.— Պատմական Հայաստանի հին և նշանավոր դիցաննվեր ավան (պաշտամունքի վայր): որը գտնվում էր Տուրուբերանի Տարոն գավառում (Մուշի դաշտում): Աշտիշատ կամ Հաշտիշատ անվան պողոքաբանությունը կապված է «հաշտ» և «շատ» բառերի միացումից: Հաշտ բառը, որը հին հայերենում գրվել է «յ»-ով, նշանակել է «զոհ» կամ «մատադ»: Իսկ «շատ» բառը գործածվել է «վայրի» կամ «տեղի» իմաստով: Այսպիսով, Աշտիշատ նշանակում է «զոհավայր» կամ «մատադավայր»: Աշտիշատում կային շատ բագիններ և աստվածներին նվիրված արձաններ: Աշտիշատում էր գտնվում հայ ժողովրդի գեղեցկության դիցունի Աստղիկի մեհյանը: Աշտիշատում էր նշվում նավասարդի տոնը: Ինչպես հայտնի է, հայկական տոմարի առաջին ամիսը կոչվում էր նավասարդ և փոխարինում էր մեր ներկա օգոստոս ամսին: Հայ ժողովուրդը այդ ավանդական տոնին պետք է հաշվետոռ լիներ անցյալ տարվա համար. ինչպես, օրինակ, Վահագնին՝ քաջության համար, Անահիտին՝ արհեստի, իսկ Աստղիկին՝ արվեստի:

Հայաստանում քրիստոնեության տարածման շրջանում Աշտիշատի հեթանոսական տաճարներին, բագիններին և արձաններին փոխարինեցին քրիստոնեական տաճարները: Աշտիշատում հիմնվեց Հայաստանի առաջին մայր եկեղեցին՝ Աշտիշատի վանքը, որը կործանվեց Լենկթեմուրի կողմից: Պատմական Աշտիշատի տեղում մինչև 1915 թվականի եղեռնը գտնվում էր հայաբնակ Դերիկ գյուղը: Պատմական Հայաստանում իրեկ կուլտուրական կենտրոններ առանձին տեղ գրավեցին երկուաը՝ Արարատյան երկիրը և Տարոնը: Ներկա իմաստով Արարատյան դաշտը և Մուշի դաշտը, որտեղ գտնվում էր Աշտիշատը:

Եթե Արարատյան դաշտում աչքի ընկավ էջմիածինը, ապա Մուշի դաշտում այդպիսին էր Ս. Կարապետի կամ Գլակա վանքը: Ի դեպ, Ս. Կարապետի վանքը կոչվել է նաև հնականյա վանք: Այդպես է կոչվել իրար մոտ բխող ինը սառնորակ աղբյուրների պատճառով:

ԱՌՄԻՆ. — Պորտուգալական տիրապետություն Զինաստանի հարավ-արևելյան մասում: Մինչև վերջերս հայտնի էր Մակար անվամբ: Առմին անվանումը գալիս է շինարենից նգառ-մին բառերից և նշանակում է «նեղուցի դռներ»:

ԱՊԱԼՉՅԱՆ ԼԵՌՆԵՐ. — Գտնվում են Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Էթոնիմ է, հնդկական «ապալաչ» ցեղի անունից, որն անցյալում այստեղ էր բնակվում:

ԱՊԵՆԻՆՆԵՐ. — Լեռներ Խտալիայում: Առաջացել է կելտերեն պեն բառից, որը նշանակում է «լեռ» կամ «գագաթ»: Կելտերի համար այս լեռները Ալպյան լեռներից հետո ամենաբարձրն էին:

ԱՊԵՆԻՆՅԱՆ ԹԵՐԱԿՂՋԻ. — Խտալիայի հիմնական մասը: Առունը ստացել է Ապենինյան լեռներից:

ԱՊԵՐՈՒՆ. — Թերակղջի Կասպից ծովում: Առաջացել է պարսկերեն աբ՝ «զուր» և շիրին՝ «անուշ» բառերի միացումից՝ անցյալում Ապշերոն թերակղզում եղած զրհորների ջրի բարեհամ լինելու պատճառով:

ԱԶԱՐՍՏԱՆ. — Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետություն Վրացական ՍՍՀ-ի կազմում: Առունը ստացել է աջար ժողովրդից, որը խոսում է վրացական լեզվի բարբառներից մեկով:

ԱՌԱՊԱՐ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ. — Այսպես է կոչվել Այրարատ նահանգի այն ընդարձակ, անապատային ու քարքարոտ դաշտը, որը ընկած է էջմիածնից հյուսիս-արևելք, Զվարթնոցից մինչև Օշականի սահմանները: Անվան հիմքում ընկած են առապար բառը և Վաղարշապատ անունը: Առապարը հայերեն աշխարհագրական տերմին է և տրվում է այն հարթ տարածությանը, որը անմշակ, անկոխ և քարքարոտ տարածություն է, փաստորեն կի-

սաանապատային դաշտ: Իսկ Առապար Վաղարշապատի
է կոչվել, որովհետև հարել է Վաղարշապատին, նրա
սահմաններում է դանվել:

Հիշենք, որ այդ դաշտի սահմաններում կառուցված
ջվարթնոց տաճարը կոչվել է Առապարի վանք կամ
Առապարի Ս. Գրիգորի տաճար: Տաճարը հետագայում
հայտնի դարձավ Ջվարթնոց (Հրեշտականոց) անվամբ:

Առապար Վաղարշապատի դաշտի մեծ մասը այսօր
կատարյալ բուրաստան է: Երբ անցնում եք Փարաքարը
և մտնում վերոհիշյալ Առապարի սահմանը, ապա տես-
նում եք այդ դաշտում ստեղծված բազմաթիվ բնակա-
վայրերն ու այգիները, որոնց միջով անցնում է բարե-
կարգ խճուղին:

ԱՄԲԵՍՏ.— Քաղաք Սվերդլովսկի մարզում: 1720 թվականին
այս վայրում հայտնաբերվեց ասբեստի հանք՝ առաջինը
Ռուսաստանում: Այդ հանքերի մոտ ստեղծվեց բնակա-
վայր, որը կոչվում էր Կուդելկա, իսկ 1933 թ. վերան-
վանվեց Ասրեստ:

ԱՍՍԱՄ.— Նահանգ Հնդկաստանի հյուսիս-արևելյան մասում:
Անվան առաջացումը կապվում է տափառ ժողովրդի ախում
ցեղի հետ, որն այստեղ ստեղծվեց անկախ պետություն: Շրջակա
ժողովուրդները նրան անվանում էին Ասսամ,
որը բառացի նշանակում է «անհաղթ»: Հնդկաստանի
անկախությունից հետո Ասսամը դարձավ նրա գլխավոր
նահանգներից մեկը:

ԱՍԵՂԻ ՀՐՎԱՆԴԱՆ.— Աֆրիկայի հարավային ծայրակետը:
Անվանումը տվել են պորտուգալացիները: Այստեղ
կողմնացույցի սլաքը (ասեղը) տվեց խոտորում, այ-
սինքն շեղվեց նորմալ վիճակից: Հրվանդանը պորտու-
գալներեն կոչվեց ագույաշ, որը հայերեն թարգմանվում
է «ասեղի»:

ԱՄԻԱ.— Աշխարհամաս: Անվանումը ծագել է սեմիտական
ասու՝ «արևելք» (արևածագի կողմ) բառից, ի հակա-
դրություն էրեք՝ «մայրամուտ» (խավար) բառի: Ասիա
բառը փյունիկեցիների միջոցով անցավ հույներին:

Սկզբնական շրջանում Ասիա անվան տակ թե հույները և թե սեմիտական ժողովուրդները հասկանում էին միայն Միջերկրական ծովի արևելյան ափերը, որովհետեւ նավարկելով ծովի վրա, նրանք արևածագը տեսնում էին այդ կողմից: Հին հույները այն տարածեցին ավելի շատ Փոքր Ասիա թերակղզու վրա: Ժամանակի ընթացքում Ասիա անոնը տարածվեց ամբողջ աշխարհամասի վրա:

Ա.ՍԿԱՆԻԱ-ՆՈՎԱ.— Տափաստանային արգելավայր Խերսոնի մարզում: Արգելավայրը ստեղծվեց Գերմանիայից եկած այն հողատիրոջ կալվածքի վրա, որը նա կոչել էր ի հիշատակ իր հայրենի Ասկանիայի: Ուկրաիներեն «նովա» նշանակում է «նոր»: Ուրեմն՝ «նոր Ասկանիա»: Արգելավայր հայտարարվեց 1921 թվականից:

Ա.ՍՄԱՐԱ.— Քաղաք էրիտրեայում (Եթովպիա): Տիգրե լեզվով նշանակում է «ապրել խաղաղությամբ»:

Ա.ՍՈՐԵՍԱՆ.— Հին Արևելքի զորեղ պետություններից մեկը: Ասորեստանը գտնվել է ներկա իրաք պետության սահմաններում: Նա գոյություն է ունեցել մինչև 7-րդ դարը, մեր թվականությունից առաջ: Ասորեստանի անվան հիմքում ընկել է Ասուր կամ Աշուր անունը, որը ժամանակի ընթացքում որոշ ձևափոխման ենթարկվելով և պարթևական «ստան» մասնիկ ստանալով՝ դարձել է Ասորեստան: Ի դեպ, թե՛ գրականության մեջ, թե՛ առօրյա խոսակցության ժամանակ Ասորեստան և Ասորիք անունները հաճախ շփոթում են, հավասարության նշան դնելով դրանց միջև, որն, իհարկե, ճիշտ չէ: Այն ժողովուրդը, որը ներկայումս հայտնի է ասորի անվան տակ, համարվում է հին ասորեստանցիների հետնորդը:

Ա.ՍՈՐԻՔ.— Բնկած է Պաղեստինի հյուսիսում: Հայերը այդպես են կոչել ներկա Սիրիային: Իսկ Ասորեստանը, ինչպես հայտնի է, այլ անուն է և կապ չունի վերջինիս հետ: Ի դեպ, թե՛ Ասորիք և թե՛ Ասորեստան անունները ունեն սեմիտական արմատ, բայց Ասորեստանի արմա-

տը Ասուր կամ Աշուր անունն է, իսկ Ասորիքը առաջա-
ցել է «Սիրիա» անվան ձևափոխումից:

Գիտնականները կարծում են, որ Սիրիա անունը
ծագել է երրայերեն Ցուր կամ Սուր բառից, որն իր հեր-
թին նշանակում է ժայռ և որի վրա էլ եղել է համանուն
բերդաքաղաքը: Հետագայում ավելացվել է «իա» մաս-
նիկը, որը նույնպես երկրի իմաստ ունի, ինչպես ստա-
նը, և դարձել է Սիրիա:

Երբ հույներն առաջին անգամ ծանոթացան Փոքր
Ասիայի և Եգիպտոսի միջև ընկած երկրին, որտեղ իշ-
խող ժողովուրդը կոչվում էր ցիրի կամ տիրի, այդ ժո-
ղովորդի անունով էլ երկիրը անվանեցին Սիրիա: Սա-
կայն Հետագայում, լսելով Ասորեստանի մասին, նը-
րանք կարծեցին, թե դա նույն անունն է, և դրանից հե-
տո երկու անունները հաճախ նույնացնում էին: Պատ-
մահայր Հերոդոտն էր, որ առաջին անգամ նշեց, թե
Վերին Միջագետքում բնակվող ազգը իր երկիրը կոչում
է Աշուր, որը հետագայում դարձել է Ասորեստան և
հարկ չկա շփոթել Ասորիքի հետ, որը տրվել է ներկա
Սիրիային:

Արաբները Ասորիքին անվանեցին Ալ-Շամ, որն ունի
«ձախակողմյան» (հյուսիսային իմաստով) նշանակու-
թյուն: Մուսուլմանական աշխարհում կողմնորոշվում
էին Մեքքայով, երեսը դարձնելով նրա կողմը, ձախը լի-
նում էր հյուսիս, աջը՝ հարավ: Ժամանակի ընթացքում
Շամ անվանումը ավելի շատ տարածվեց գլխավոր քա-
ղաքի՝ Դամասկոսի վրա:

Ա.ԱՏՂԻԿ.— Լեռ և գետ Արևմտյան Հայաստանի Սեբաստիա
գավառում: Այսպես են կոչվել հայոց գեղեցկության դի-
ցուհու անվամբ: Լեռը ունի 3000 մետր բարձրություն:
Նրանից սկիզբ առնող գետը ևս կրում է լեռան անունը:
Թուրքերը թե գետին և թե լեռանը տվել են Եղլարզ ա-
նունը, որը նույնպես նշանակում է Աստղ:

Ա.ԱՏԲԱԽԱՆ.— Քաղաք Ստորին Պովոլժիեում: Անվանումը ու-
նի թաթարական ծագում: Եղել է Հաջի Թարխան, այ-

սինքը «աղատ Հաջի» անունով անձնավորություն, որը
եղել է քաղաքի իշխողը և քաղաքն էլ աղատ է եղել
տուրքից: Ժամանակի ընթացքում քաղաքի անունը ձե-
վափոխվեց «Հաշթարիսանի», իսկ ուստաներին անցնելուց
հետո, նրանք հարմարեցրին իրենց արտասանման եղա-
նակին և կոչեցին Աստրախան: Մինչև 1557 թվականը,
այսինքն մինչև Ռուսաստանին միանալը, Աստրախանը
թաթարական խանության կենտրոնն էր:

ԱՍՏՈՒԹԻՒՆ. — Պատմական մարդ Հյուսիսային Խաղանիայում:
Այսպես է կոչվում կելտական ժագում ունեցող «աս-
տուր» ժողովրդի անունով:

ԱՍՈՒԱՆ. — Քաղաք ԱՄՀ-ում (Եգիպտոս) Նեղոսի վրա: Եգիպ-
տական «սկիզբ» կամ «դարբաս» բառից: Տվյալ դեպ-
քում նկատի է ունեցվել որպես դարբաս, դուռ՝ Եգիպ-
տոսից նորիա կամ էլ որպես նորիական անապատի
սկիզբ: Ասուանից քիչ հարավ եղել է պատմական Սիենա
քաղաքը, որի անվան հետ է կապված երկրի շրջագծի
առաջին շափումը էրատոսթենեսի կողմից (մ.թ.ա.,
3-րդ դար):

ԱՍՈՒՆՍԻՈՆ. — Պարագվայ պետության մայրաքաղաքը: Հիմ-
նադրվել է իսպանացիների կողմից 1536 թվականի
օգոստոսի կեսերին, Աստվածածնա տոնի օրը, որը
քրիստոնեական եկեղեցու կողմից նվիրագործված մեծ
տոներից մեկն է: Տոնը կոչվում է Վերափոխումն Աստ-
վածածնի, իսպաներեն՝ Ասունսիոն:

ԱՎԱՐԱՅՐ. — Պատմական նշանավոր դաշտ Վասպուրականի
Արտազ գավառում: Դաշտն իր անունն ստացել է հա-
մանուն գյուղից, որի մոտով հոսում է Տղմուտ գետը:
Այստեղ 451 թվականին տեղի ունեցավ ճակատամարտ
Հայերի և պարսիկների միջև, որտեղ ընկավ զորավար
Վարդան Մամիկոնյանը իր 1036 հերոսների հետ: Բայց
և այնպես Հայերը թույլ շտվեցին Հազկերտին Համնելու
իր նպատակին, այսինքն Հայաստանում տարածելու
կրակապաշտությունը:

ԱՎԳՈՒՍՏՈՎ. — Քաղաք Լեհաստանի Հյուսիս-արևելքում:

Այդպես է կոչվել ի պատիվ լեհական թագավոր Ավգուստ I-ի (1548—1572 թթ.), որը 1561 թվականին հիմնեց այս քաղաքը: Եվ երբ 1825 թվականին փորձեց ջրանցք, այն նույնպես կոչվեց քաղաքի անունով:

ԱՎԻՆՅՈՒՆ. — Քաղաք Ֆրանսիայի հարավում: Քաղաքի անվանումը առաջացել է հին հռոմեական Ավենիուս հատուկ անունից, որին ավելացվել է պատկանելիություն ցույց տվող «ոնեմ» վերջածանցը:

ԱՎՏՏԱՐԱԼԻՄ. — Աշխարհամաս Հարավային կիսագնդում, Խաղաղ և Հնդկական օվկիանոսների միջև: Դեռևս հին հույն դիտնական Կղավդիոս Պտղոմեոսը (2-րդ դար, մ. թ. ա.) ենթադրեց Հարավային կիսագնդում Հսկայական ցամաքի գոյության մասին և այն անվանեց «Տերրա Ավստրալիս ինկոգնիտա», այսինքն «Հարավային անծանոթ երկիր»: Այս լեզենդար երկրի գոյության հարցը դարեր շարունակ զբաղեցնում էր աշխարհագրագետներին և ճանապարհորդներին: Իսկ միջին դարերում հաճախ երևում էր Մերկատորի և Օրտելիուսի քարտեզներում: Սակայն 1606 թվականին Ավստրալիան հայտնի դարձավ շնորհիվ հոլանդացի Վ. Յանցի: Նա «Դյուֆկեն» նավով հասավ Քեյփ-Յորք թերակղզու ափը՝ Կարպենտարիի ծոցի կողմից: Վ. Յանցը իր տեսած երկիրը անվանեց Նոր Հոլանդիա: Իսկ մի այլ ճանապարհորդ՝ Աբել Տասմանը 1642 թվականին շրջանցեց Ավստրալիան հարավից և վերանվանեց Վանդիմենի երկիր: Հետագայում պարզվեց, որ դա եղել է Տասմանիա՝ կղզին: Վերջապես, Ավստրալիայի ափերին 1700 թվականին մոտեցավ անգլիացի նշանավոր ճանապարհորդ Ջեմս Կուկը և մայր ցամաքին տվեց Նոր Ուելս անունը: Ավստրալիա աշխարհամասին տրվող այս տարբեր անվանումները պահպանվեցին գրեթե մինչև 18-րդ դարի վերջը:

Վերջապես, անգլիացի ծովագնաց Մ. Ֆլինդերսը, որը 1801—1803 թվականների ընթացքում շրջանցեց մայր ցամաքը և քարտեզի վրա տվեց Ավստրալիայի

ափագիծը, առաջարկեց նրան ոնվանել ուղղակի «Տեր-
րա Առատրալիա», այսինքն «Երկիր Հարավային»:
Հետագայում էլ տերրա բառը ընկալվ և մնաց ուղղակի
Ավստրալիա անվանումը: Եվ քանի որ Ավստրալիա ա-
նունը շատ հաճելի է և բարեհնչում, ապա արագ տա-
րածվեց և քաղաքացիական իրավունք ստացավ:

ԱՎՍՏՐԻԱ. — Պետություն Կենտրոնական Եվրոպայում: Հին
գերմաներեն օստեր՝ «արևելյան» և րիխի՝ (րեյխ) «պե-
տություն» բառերից: Այսպիսով, օստերրայխ (կամ
Ավստրիա լատիներեն ձևով) նշանակում է Արևելյան
պետություն կամ երկիր: Անցյալում երկիրը բնակեցված
էր սլավոններով, բայց 9-րդ դարից այդ սլավոնական
հողերը բռնագրավեցին գերմանական ֆեոդալների
կողմից, որոնք հիմնեցին այստեղ մարկղրաֆություն
կամ սահմանային կոմսություն, Գերմանիայի արևել-
քում հունգարական արշավանքները կասեցնելու համար
(973թ.):

ԱՏԱԲԱՋԱՐ. — (Կամ Աղաբազար): Նիկոմեդիայի կամ Իզմի-
թի գավառի գլխավոր քաղաքը Փոքր Ասիա թերակղզու
հյուսիս-արևմտյան մասում: Քաղաքը իր ժամանակին
հիմնվել է կղզու վրա և ունեցել է շատ աշխույժ շուկա:
Եվ դրա համար էլ թուրքերը տվել են Ատաբազար ան-
վանումը, որը նշանակում է «կղզու շուկա»: Քաղաքի և
նրա շրջակայրում ապրող հայ բնակչության մի մասը
կոտորվեց, իսկ մյուսները տարագրվեցին: Վերապրող
ատաբազարցիներից ներգաղթել են նաև Սովետական
Հայաստան և բնակություն հաստատել Երևանի Բութա-
նիա թաղամասում: Ատաբազարը մտնում էր պատմա-
կան Բութանիայի կաղմի մեջ:

ԱՏԱԿԱՄԱ. — Անապատ Հարավային Ամերիկայում: Հյուսի-
սային Չիլիում: Տեղական հնդկական լեզվով անվանու-
մը նշանակում է «անապատային երկիր»:

ԱՏԼԱՆՏԻԴԱ. — Լեզենդար ցամաք, որը իրը թե գտնվել է Ատ-
լանտյան օվկիանոսում և հաղարամյակներ առաջ
ընկղմվել է ծովի հատակը:

Հին հունական գիտնական և փիլիսոփիա Պլատոնը, որն ապրել է մեր թվարկությունից շորս դար առաջ, զբաղվել է նաև աշխարհագրությամբ: Այդ լեզենդար ցամաքի մասին աշխարհն իմացավ հույն գիտնականի միջոցով: Նրանից սերունդներին անցավ Ատլանտիդայի գոյության ավանդությունը, ըստ որի մեզանից տասներկու հազար տարի առաջ, Միջերկրական ծովից արևմուտք, Հերկուլեսյան սյուներից (ներկա Ջիբրալթարից) այն կողմը գոյություն է ունեցել մի ցամաք, որը կրել է Ատլանտիդա անունը:

Հետագայում պարզվել է, որ հույն գիտնականներին այդ բանը պատմել են եգիպտական քուրմերը: Նրանք հաղորդել են, որ Ատլանտիդան, որն իրականում եղել է ցամաք-կղզի, մեկ ցերեկվա և մեկ գիշերվա ընթացքում իշել է ծովի հատակը: Ատլանտիդայի մասին եղած ավանդությունը աշխարհով մեկ առաջ բերեց զարմանալի հետաքրքրություն: Թերևս ոչ մի գիտական պրոբլեմ այնքան շհրապուրեց ու գերեց մարդկային երևակայությունը, որքան Ատլանտիդայի առեղծվածը: Ատլանտիդայի ողբերգական կործանման մասին եղած զրոյցը ընկավ բազմաթիվ պատմվածքների, պոեմների սյուժեի հիմքում: Նրա մասին լույս է տեսել մեծաթիվ թե՛ գիտական, թե՛ գիտագեղարվեստական գրականություն, որը հաշվում են մինչև քսան հազար հատոր:

Ինչպես Պլատոնից մնացած, այնպես էլ ապագա սերունդների կողմից ավելացրած տվյալները պատմում են, որ բնությունը Ատլանտիդայի նկատմամբ եղել է շատ շուալլ: Նրա բնակիչները առատորեն օգտվել են այդ բարիքներից: Բնակիչները կոչվել են ատլանտիդներ, որոնք կառուցել են մեծ քաղաքներ, վեհասաքանչ շենքեր: Պատահական չէ, որ Ատլանտիդայի հրապուրիչ պրոբլեմը շարունակում է սերունդների համար մնալ որպես մի գրավիչ առեղծված:

Ատլանտիդա անունը մեկնաբանվում է երկու կերպ: Մեկը ատլանտ ժողովրդի անունից, որն իբր բնակվել է

այդ ցամաքում, իսկ մյուսը կապվում է Հունական դիցաբանություններից հայտնի «Ատլանտի» կամ «Ատլասի» անվան հետ: Ըստ Հունական առասպելաբանության, այդ հսկան կանգնած է եղել Հերկուլեսյան սյուների մոտ և իր ուսերին է կրել երկիրը: Ատլանտիդանշանակում է Ատլանտի երկիր:

ԱՏԼԱՆՏՅԱՆ ՕՎԿԻԱՆՈՍ. — Մեծությամբ աշխարհի երկրորդ օվկիանոսը: Անունը ծագում է Ատլանտ կամ Ատլաս Հունական դիցաբանության մեջ հայտնի հսկա-հերոսի անունից, որը Ոլիմպոսի աստվածների դեմ ըմբուռացող տիտաններից էր և դրա համար Զևսի կողմից դատապարտվեց կանգնելու Հերկուլեսյան սյուների մոտ (ներկայիս Ջերալթարի հին անվանումը), երկրագունդը իր ուսին պահելու համար: Սկզբում այս անունը կրում էր այն ծովը, որն ընկած էր Կանարյան կղզիների և Զիբրալթար նեղուցի միջև: Հետագայում այդ անունը տարածվեց ամբողջ օվկիանոսի վրա և արմատացավ 1650 թվականից սկսած:

ԱՏԼԱՍ. — Լեռներ Հյուսիսային Աֆրիկայում: Այս անվանման առաջացումը կապվում է Հունական դիցաբանության հերոս Ատլասի (Ատլանտ) անվան հետ:

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՆԱՊԱՏ. — Աֆրիկայի հյուսիս-արևելյան մասում, կոչվել է Արաբական թերակղզու անվամբ, որի հետ, սակայն, ոչ մի առնչություն չունի: Այդ անունը ժառանգություն է մնացել անցյալից:

Անտիկ աշխարհի պատմահայր Հերոդոտի ժամանականերում լիբիայի և Ասիայի սահմանը համարվում էր նեղոսի հովիտը: Հետեապես այս անապատը մտնում էր Ասիայի սահմանների մեջ և համարվում էր Արաբիայի մասը: Աշխարհագրական այս ուշագրավ սխալի արձագանքն էլ նրա այսօրվա «Արաբական» անունն է:

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՔ. — Մի խումբ երկրների անվանում, որոնք հիմնականում տեղադրված են Հարավ-Արևմայսան Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում: Բնակեցված են արաբներով: «Արաբական Արևելք» հասկացությունը

գալիս է միջին դարերից և գրականության մեջ է մտել արար աշխարհագրագետների կողմից: Նրանք արաբական աշխարհը բաժանել են երկու մասի. արևելյան՝ «մեշրիկ» և արևմտյան՝ «մաղրիբ»: Արաբական Արևելքի մեջ մտնող երկոները, ինչպես ասվեց, հիմնականում բնակեցված են արաբներով և տեղադրված են երկու աշխարհամասում՝ Ասիայում և Աֆրիկայում: Հարավ-Արևմտյան Ասիայում եղած երկրներն են՝ Իրաքը, Սիրիան, Լիբանանը, Հորդանանը, Սաուդյան Արաբիան, Եմենը, Հարավային Եմենի ֆողովրդական Հանրապետությունը, Քուվեյտը և մի շարք իշխանություններ Արաբական թերակղզու հարավ-արևելյան մասում: Իսկ Աֆրիկայում՝ Արաբական Միացյալ Հանրապետությունը (Եգիպտոս), Սուդանը, Լիբիան, Թունիսը, Ալժիրը և Մարոκոն:

ԱՐԱԲԱԿԱՆ ԾՈՎ. — Հնդկական օվկիանոսի մի մասը՝ Արաբիայի և Հնդկաստանի միջև: Արաբներն անցյալում իշխում էին այդ ծովում և իրենց ձեռքում էին պահում Հարավային Ասիայի և, հատկապես, Հնդկաստանի հետ կատարվող առևտուրը:

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԱՄՀ). — Կյա անվանումը աշխարհի քաղաքական քարտեզի վրա երեսվաց 1958 թվականին Եգիպտոսի և Սիրիայի միացումից: Զնայած 1961 թվականին Սիրիան դուրս եկավ այդ միությունից, բայց անվանումը այդպես էլ մնում է և փաստորեն փոխարինում է «Եգիպտոս»-ին:

ԱՐԱԲԻԱ. — Խոշոր թերակղզի Ասիայի հարավ-արևմտյան մասում: Հյուսիսից սահմանակից է Սիրիային և Միջադեմքին, արևմուտքից Եգիպտոսին և Կարմիր ծովին, հարավից Արաբական ծովին, իսկ արևելքից Պարսից ծոցին: Հույն ու Հոռմեացի աշխարհագրագետները թերակղզին բաժանել են երեք մասի:

ա) Անապատային Արաբիա, որը գրավում է ամբողջ թերակղզու կենտրոնը:

բ) Երջանիկ Արարիա, որը գրավում է թերակղզու հարավային մասը, ալսինքն՝ այժմյան եմենը:

գ) Քարքարոտ Արարիա՝ Հյուսիս-արևմուտքում, Հորդանանին սահմանակից:

Անտիկ աշխարհին ավելի շատ հայտնի էին Արարիայի հարավ-արևմտյան (Եմենի) ափերը և դրա համար էլ ընդհանրապես ամբողջ երկիրը համարվում էր բերրի, քան կար իրականում: Բնակիչները՝ արաբները սեմական ծագում ունեն և առևտրի շնորհիվ ծանոթ էին Հնդկաստանին, ապրում էին ցամաքի առափնյա մասերում: Խորքերում բնակվող արաբներին բեղվին էին կոչում:

Արարիա անվան ծագումը բացատրվում է երկու կերպ. առաջինը, որ գալիս է «արար» սեմական ժողովրդի անունից, իսկ մյուսը՝ «արար» բառից, որը նույն լեզվում նշանակում է «տափաստան» (Արարիա՝ «տափաստանի երկիր»): Արար անունը կրող ժողովրդի պատմովթյունը կապվում է երեք աշխարհամասի հետ: Հարավ-Արևմտյան Ասիան նրանց բնօրրանն է: Հյուսիսային Աֆրիկան՝ նրանց տարածման շրջանները: Իսպանիայում ևս արաբները իշխեցին մոտ ութ դար:

ԱՐԱԳԱԾ. — Լեռ Սովետական Հայաստանում: Անվան ավանդական ծագումը կապվում է Արա Գեղեցիկի անվան հետ: Լեռը սկզբում կոչվել է «Արայի գահ»: Բայց հետագայում «գահ» բառը դարձել է «գնծ» և ստացվել է Արագած: Մյուս ավանդական անվանումը կապվում է Հայկապյանց Արմենակ նահապետի անվան հետ: Հայմատենագիրները այդ երկու ստուգաբանությունը վերցրել են պատմահայր Մովսես Խորենացուց: Նա շատ տեղանուններ համադրեց մեր նահապետների անունների հետ: Լեռը հայտնի է նաև Ալագյաղ անունով, որն Արագած անվան աղճատումն է:

ԱՐԱԳՈՆ.— Պատմական մարզ իսպանիայում։ Անունն ստացել է Արագոն գետից, որը իր հերթին նշանակում է «քիչ ջուր», այսինքն «սակավ ջուր ունեցող գետ»։

ԱՐԱԳՈՆ.— Գետ Արևելյան Վրաստանում, Կուրի ձախ վտակներից։ Անունն առաջացել է վրացերեն արագվի՝ «չուռացող» բառից։

ԱՐԱԼՅԱՆ ԾՈՎ.— Ծով Ղազախստանում։ Արալ մոնղոլերեն՝ «կղղի»։ Սկզբնական շրջանում Ամուղարյայի գետաբերանում գտնվող մի կղղու անունն էր, որը ժամանակի ընթացքում տարածվեց ամբողջ ծովի վրա։

ԱՐԱՄՄԵԶԴԻ.— Լեռ Զանգեզուրում, Բարգուշատի շղթայում։ Նա այդպես է կոչվել հեթանոս հայերի Արամազդաստծո անունով։ Արամազդը նույնացվում է Հույների Զեսի, Հոռմեացիների՝ Յուպիտերի հետ։ Արամազդ անունը գալիս է պահլավերենից և նշանակում է «գերագույն իմաստություն»։ Հայոց դիցաբանության պանթեոնում դիտվում էր որպես բարիքների աղբյուր։ Արամազդի մեջանը գտնվում էր Անի-Կամախում, ուր և դրված էր նրա արձանը։ Արամազդ լեռը մինչև վերջերս հայտնի էր Ըրբմբդ անունով, որն աղճատումն ու ձևափոխումն է Արամազդ անվան։ Վերաիմաստավորելով Արամազդը «Ըրբմբդի» միաժամանակ ստուգաբանվել է որպես ըրբմբդ, այսինքն «Հաւալզող»։ Նկատի է ունեցվել ամառվա ընթացքում լեռան վրայի ձյունը Հաւալզելու հանգամանքը։

ԱՐԱՄՅԱՆ ԵՐԿԻՐ.— Հայաստանի պատմական մյուս անուններից մեկը։ Իր ժամանակին գործածվել ու մեղ է հասել Գրիգոր Մագիստրոսի միջոցով։ Բայտ ավանդության այդպես է կոչվել մեր հայրենիքը ի պատիվ Հայկացյանց նահապետ Արամի, որը Հայկի սերունդներից էր։ Համաձայն ավանդական պատմագրության, Արամի անունով օտարները մեղ արմեն են անվանել, իսկ մեր երկիրը՝ Արմենիա։

ԱՐԱՅԻ ԼԵՌԻ.— Նշանավոր և պատմական լեռ, որը գտնվում է Հայաստանում՝ Աշտարակից հյուսիս։ Այս անվան առա-

շացումը կապվում է հայոց Արա Գեղեցիկի անվան հետ: Ըստ առասպեկլի, Ասորեստանի աշխարհակալ թագուհի Շամիրամը սիրահարվում է հայոց թագավոր Արային: Արան մերժում է նրան: Գոռող Շամիրամի ինքնասիրությունը վիրավորվում է, և նա պատերազմ է հայտարարում Հայոց Աշխարհին: Ըստ ավանդության, Արայի և Շամիրամի բանակների հանդիպումը տեղի է ունեցել Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, այն է ներկա Արայի լեռան դիմաց գտնվող հարթությունում՝ Աշտարակից հյուսիս, պատմական Հայաստանի Արագածոտն, Նիգ և Կոտայք գավառների սահմանում: Արան կովի թեժ պահին մահացու վիրավորվում է: Նրան բերում են Շամիրամի մոտ, որը խելակորույս դիմում է Արային, խնդրում բոլոր աստվածների անունից, որ խոսի: Բայց Արան մահանում է: Շամիրամը կարգադրում է Արայի դին հանձնել Վանա լճի մոտ գտնվող Լեզր գյուղից բերված արալեզներին, որոնք լիզելով Արայի վերքերը, իբր թե պետք է կենդանացնեին նրան: Հայ ժողովրդի ցասումը հանգստացնելու համար Շամիրամը լուր է տարածում, թե արալեզ աստվածները կենդանացնելու են Արային: Ահա այս ավանդության հետ է կապվում Արայի լեռան անունը:

Երբ մեր հայրենիքը նվաճում են օտարները, Արայի լեռը Կառնի Յարըն են կոչում: Այն բառացի նշանակում է «Ճեղքված փոր», որովհետև նրա գագաթը հարավային կողմից ճեղքվածք ունի: Տեղացիները անվանում են նաև Սաղկեվանք: Ներկայումս վերականգնված է պատմական անունը:

ԱՐԱՐԱՏ.— Լեռ Հայկական բարձրավանդակում: Անվան մեկնաբանումը մեզ հասցնում է ուրարտական ժամանակաշրջան և կապվում Ուրարտու պետության և ժողովրդի անվան հետ: Հայտնի է, որ Ուրարտուն գոյություն է ունեցել մեզանից մոտ երեք հազար տարի առաջ (9-6-րդ դար, մ.թ.ա.): Մասիս սարն ու նրան հարող ներկա Արարատյան դաշտն էլ կազմել են Ուրար-

տու պետության մասը: Երբ Հրեաները կազմում էին իրենց ավանդական Բիբլիան կամ, ինչպես Հայերն են անվանում՝ Աստվածաշունչը, ապա Ուրարտու անվանումը գրում են իրենց արտահայտությամբ՝ Արարատ: Այսպիսով, ներկայիս Արարատ անունը ձևափոխված Ուրարտուն է: Ի դեպ, Աստվածաշունչը կազմելիս այդ լեռան անունը անհրաժեշտ էր շարադրելու համար շըրհեղեղի ավանդությունը և նոյի տապանի դադարի տեղը, ուր նա կանգ առավ: Հայերն Արարատն անվանում են Մասիս, թուրքերն՝ Աղրի դաղ («ծանր սար»), պարսիկները՝ Կուշի-Նուհ (նոյի սար): Արարատ անունը ունի նաև ավանդական ստուգաբանություն և կապվում է Արայի անվան հետ:

ԱՐԱՐԱՏ.— Լեռ և բնակավայր Ավստրալիական Միության Վիկտորիա նահանգում: Այս անունների առաջացումը կապված է մեր Մասիսի՝ Արարատի անվան հետ: Ինչպես Հայտնի է, Ավստրալիան համեմատաբար նոր աշխարհամաս է: Առաջին բնակավայրը Ավստրալիայում եղավ ներկա Սիդնեյ քաղաքը, որը հիմնադրվեց 1788 թվականին: Դրանից հետո, երբ եվրոպացիները անցան Ավստրալիայի ներքին մասերը, ապա աշխարհամասի հարավ-արևմտյան մասում, ներկա Վիկտորիա նահանգում տեսան մի լեռ, որը նրանք նմանեցրին բիբլիական Արարատին և այդպես էլ կոչեցին: Իսկ Արարատ անունն էլ ու նրա պատկերումը եվրոպացիներին ծանոթ էր ոչ միայն աշխարհագրությունից, այլ ավելի շատ Հին Կտակարանից, որը կապված է քրհեղեղի ավանդության և նոյ նահապետի անվան հետ: Հետագայում Արարատ կոչվեց նաև լեռան մոտ հիմնադրված բնակավայրը: Հայկական Արարատը իր տեսքով եղակի է և նրան կրկնող լեռներ քիչ կան: Իհարկե, շատերն իրենց բարձրությամբ գերազանցում են նրան, բայց հազիվ թե գտնվի մեկ ուրիշը, որը հարթ տարածության վրա, իր ավելի քան չորս կիլոմետր վեր խոյացող ձյունածածկ գագաթով, միանգամից աշքի ընկնի այնպես, ինչ-

պես Արարատն է: Աշխարհի բարձր լեռներից ջումոլունգաման (Հիմալայներում), Կոմունիզմի գագաթը (Պամիրում), Մոնթանը (Ալպերում), օրինակ, գտնվում են բազմաթիվ լեռներով շրջապատված բարձրության վրա կամ էլ հարևան լեռները փակում են նրանց վեհությունն ու համայնապատկերը: Իսկ Արարատը, ընդհակառակը, միանգամից է բարձրանում հարթ տարածության վրա: Այս հանգամանքը նրան պարգևում է հոյակապ և վեհասքանչ տեսք, որն, իրոք, եղակի է:

ԱՐԱԲՈՒ. — Գետ Հայկական բարձրավանդակում: Պատմական Հայաստանի մայր գետը: Անվանման ստուգաբանությունը մեկնաբանվում է մի քանի կերպ: Առաջինը շումերական «քանդող գետ» բառերից: Հույն մատենագիրները կոչել են Արաքսիս, որը «աղմկում եմ» խոսքից է: Ինչպես նաև «արաս» հասարակ անունից, որը Առաջավոր Ասիայի երկրներում փոխարինել է «գետ» բառին:

Արաքսը հայ մատենագրության մեջ հայտնի է նաև Երասխ անունով: Ըստ ավանդության այդպես է կոչվել մեր Արամայիս նահապետի Երաստ թոռան անունով: Արաքսը բիբլիական Գիհոնն է, որը համարվել է դրախտի չորս գետերից մեկը:

ԱՐԱՅՈՒԻՐՅԱՆ ՇՈՎ. — Գտնվում է Ինդոնեզիայի արևելյան մասում: Այս ծովը քիչ է հայտնի: Անվանումը գալիս է մալայան ծագում ունեցող «արաֆուր» կամ «ալֆուր» ցեղի անունից:

ԱՐԳԵՆՏԻՆՈՒՄ. — Գետություն Հարավային Ամերիկայում: Անունը ծագել է լատիներեն արգենտում՝ «արծաթ» բառից և կապված է երկրի նախնական նվաճման հետ: Երբ Կոլումբոսի կողմից նոր Աշխարհի հայտնագործման լուրը Եվրոպա հասավ, ապա շատ մարդիկ շտապեցին գնալ այնտեղ՝ հարստություններ, հատկապես արծաթ ու ոսկի ձեռք բերելու համար, որի պահանջը այն ժամանակվա Եվրոպայում շատ մեծ էր: Երբ իսպանացի առաջին ծովագնացները մոտեցան ներկա Լա-Պլատա-

յի գետաբերանին, տեսան արծաթյա զարդերով
բնիկներին: Հենց դրա համար էլ գիտին Լա-Պլատա
(իսպաներեն արծաթյա) անվանեցին, ենթադրելով, որ
այդ տեղերում արծաթ շատ կա: Հետագայում այդ ա-
նունով անվանեցին նաև այն երկրները, որով հոսում է
Լա-Պլատան: Այսպիսով, Արգենտինա նշանակում է
«արծաթյա»:

ԱՐԳԻՇԻԽԻՆԻԼԻ.— Ուրարտական քաղաք, հիմնվել է 776 թ.
մ.թ.ա.: Այդպես է կոչվել ի պատիվ Արգիշտի թագա-
վորի: Անվան ստուգաբանությունը բառացի նշանակում
է «Արգիշտաշեն» կամ «Արգիշտիի կառուց»: Արգիշ-
տին Մենուայի որդին էր: Նրա օրոք Ուրարտուի մահ-
մանները շատ ընդարձակվեցին շնորհիվ Ասորեստանի
դեմ տարած մեծ հաղթանակների:

Արգիշտիխինիլին հիմնվել է իբրև Վանի թագավո-
րության արևելյան շրջանների կենտրոն: Ավերակներն
այժմ պեղվում են Հոկտեմբերյանի շրջանի Արմավիր
գյուղի մոտերքը: Մ.թ.ա. 4-րդ դարում Արգիշտիխինի-
լիի տեղում հիմնվեց Արմավիր քաղաքը, որը պատմա-
կան Հայաստանի մայրաքաղաքներից է:

ԱՐԳՈՒՆ.— Գետ Անդրբայկալում: Միանալով Շիլկային՝ կազ-
մում է Ամուր գետը: Անվանումը մոնղոլերեն յորգուն
բառից է, որը նշանակում է «լայն»:

ԱՐԴԵՆՆԵՐ.— Սարահարթ Բելգիայում և Հյուսիս-արևելյան
Ֆրանսիայում: Կելտերեն այդ նշանակում է «բարձր»
կամ «բարձունքներ», որոնք անցյալում եղել են անտա-
ռապատ («Արդենյան անտառ»):

ԱՐԴՈՆ.— Գետ Հյուսիսային Կովկասում: Թերեքի ձախ վտա-
կը: Օսերեն արրա «կատաղի» և դոն՝ «գետ» բառե-
րից՝ լեռնային արագընթաց գետ, որը իրականում, այդ-
պիսին է:

ԱՐԵԳՈՒՆԻ լեռնԱՇՂԲԱ. — Գտնվում է Սևանա լճի հյուսիս-
արևելյան մասում: Ակնարկվում է լեռների՝ լճին ուղղղ-
ված լանջերի արևակողմ լինելու հանգամանքը: Անց-

յալում այս լեռնաշղթան հայտնի էր Գյունեց անունով,
որը թուրքերենում նույն «արեգունի» իմաստն ունի:
Արեկելս-ԶինԱկԱն ՇՈՎ.— Խաղաղ օվկիանոսի ծովերից
մեկը Զինաստանի ափերի մոտ: Անվան հիմքում ընկած
է նրա հայերեն թարգմանությունը: Զինարեն կոչվում է
Դունխայ: Դուն՝ «արեկելք» և խայ՝ «ծով» բառերի միա-
ցումից: Այդպես է կոչվել Զինաստանի նկատմամբ ունե-
ցած դիրքի շնորհիվ՝ տարբերելու համար Հարավ-Զի-
նական ծովից:

ԱՐԵԿԵԼՔ.—Երկրների խմբավորում Ասիայում և Աֆրիկայում:
Ինչպես հայտնի է «արեկելք» ասելով նկատի ենք ունե-
նում հորիզոնի այն կողմը, որտեղից ծագում է արեգա-
կը: Սակայն այդ բառի իմաստը փոխվում է, եթե «Արե-
կելք» գրվում է մեծատառ: Դա արդեն ցույց է տալիս
ոչ թե հորիզոնի կամ, ինչպես ասում են առօրյա խո-
սակցության ժամանակ, աշխարհի չորս կողմերից մե-
կը, այլ արեկելքում ընկած երկրները՝ նկատի ունենա-
լով Արևմտյան Եվրոպայի դիրքը: Արեկելք հասկացու-
թյունը մնացել է Հին հռոմեացիներից: Անցյալում
«Արեկելք» անվան տակ՝ նկատի են ունեցել Միջերկրա-
կան ծովի արեկելքան մասսմ ընկած երկրները՝ Սիրիան
և Լիբանանը, որոնց կոչում էին Լևանտ՝ իտալերեն լևան-
տե բառից, արևի ծագման կողմի իմաստով: Սակայն ժա-
մանակի ընթացքում, մանավանդ 16—17-րդ դարերում,
երբ Եվրոպական կապիտալը ավելի խորը թափանցեց
ասիական և աֆրիկական երկրները, «Արեկելք» տերմի-
նը գործածական դարձավ ավելի մեծ խմբի երկրների
համար, ընդարձակվեց նրա շրջանակները և այդ խմբի
մեջ մտցվեցին թե՛ Հարավ-արևմտյան, թե՛ Հարավային
Ասիայի և թե՛ Հյուսիսային Աֆրիկայի երկրները: Ժա-
մանակի ընթացքում Արեկելք հասկացությունը քաղա-
քացիական իրավունք ստացավ ինչպես աշխարհագրու-
թյան, այնպես էլ պատմության ու դիվանագիտության
ասպարեզում: Արեկելք բառը դարձավ աշխարհագրական
բաղադրյալ հատուկ անուններում լրացյալ, որի վրա

ստեղծվեցին նոր հասկացություններ: Օրինակ՝ «Մերձավոր Արևելք», «Միջին Արևելք», «Հեռավոր Արևելք», «Արաբական Արևելք»: Տե՛ս դրանց բացատրությունը:

ԱՐՁՆԻ. — Գյուղ և կուրորտային ավան՝ Աբովյանի շրջանում:

Այս տեղանվան ավանդական հենքով և բանաստեղծական ոգով ստեղծված ստուգաբանությունը կապվում է Արա Գեղեցիկի և Շամիրամի բանակների միջև տեղի ունեցած մարտի վայրի հետ: Ըստ ավանդության, այս վայրերից քիչ հեռու Արա Գեղեցիկի և Շամիրամի բանակների միջև տեղի է ունեցել ճակատամարտ, որտեղ Արան ծանր վիրավորվել է: Վիրավորված Արային մարտի վայրից տարել և հանձնել են Շամիրամին, ասելով «առ զննի», այսինքն ստուգիր, քննիր, Արան ողջ է, թե ոչ: Անունը ստացվել է «առ» և «զննի» բառերի միացումից: Այստեղից էլ տեղանվան անունը՝ Արզնի:

ԱՐԻԱՆԳԵԼՍԿ. — Քաղաք ՌՍՖՍՀ-ում, Սպիտակ ծովի ափին: Հիմնադրվել է 1584 թվականին և սկզբում կրել է Նովոնովոգորի անունը: 1613 թվականից վերանվանվել է Արխանգելսկ՝ քաղաքում գտնվող հրեշտակապետ (ուստի արխանգել) սուրբ Միքայելին նվիրված վանքի անունով: Այսինքն Արխանգելի քաղաք:

ԱՐԿԱԴԻԱ. — Պատմական երկիր հին Հունաստանում: Պելոպոնես թերակղզում: Հունարեն արկադոս՝ «Հովիվ» բառից: Այսինքն Հովիվների երկիր: Արկադիան իրոք որ Հովիվների ու որսորդների երկիր էր: Ժամանակի ընթացքում այս երկիր անունը թեավոր խոսք դարձավ և մարդիկ, «արկադիա» ասելով նկատի էին ունենում մի վայր, որտեղ անդորր ու անգրդով էր անցնում երկրագործների ու Հովիվների կյանքը: Պատկերավոր խոսքի ուժ ստացան «Երանելի Արկադիա», «Արկադյան Հովկերգություն» արտահայտությունները: Բանաստեղծները Արկադիան գովերգել են որպես պարզ մարդկանց երկիր և խաղաղ աշխարհ, մաքրության, հավատի և սիրո վայր: Այն հիանալի է պատկերել ֆրանսիացի անվանի նկարիչ Նիկոլայ Պուստինը, այդ կտավը գտնվում է Փարի-

զում, կուլրի թանգարանում և թանկագին գործերից մեկն է հանդիսանում:

ԱՐԿԱՆԴԱՍ. — Գետ և նահանգ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Ակզեռում այդ անունը տրվել է գետին, որից և անցել է նահանգին: Անվանումը առաջացել է հնդկերեն «ակենզեա» անունից, որի նշանակությունն անհայտ է:

ԱՐԿՏԻԴԱ. — Այս անվանումը նոր է գործածական դառնում, ուստի համեմատաբար քիչ է ծանոթ: Այն աշխարհագրական գրականության մեջ մտել է շնորհիվ օվկիանոսագետ և բևեռային երկրների ուսումնասիրող պրոֆեսոր Յակով Յակովլիկի կողմէ 1820 թվականին: Պրոֆեսոր Յակով կամ Արկտիկայում մեծ դեր խաղաց Լոմոնոսովի անվան ստործովյա լեռնաշղթայի հայտնագործման ուղղությամբ: Ուսումնասիրելով Արկտիկան, հատկապես Սառուցյալ օվկիանոսի հատակը, պրոֆեսոր Յակով կամ համգեց այն եղբակացության, որ ներկայիս Հյուսիսային օվկիանոսի տեղում երկրաբանական վաղ անցյալում գոյություն է ունեցել ցամաք: Նա առաջարկեց այն անվանել Արկտիդա, որը թե՛ իր անունով և թե՛ գոյության վարկածով հիշեցնում է Ատլանտիդան: Ներկայումս Արկտիդա ասելով նկատի են ունենում կորուսյալ այն ցամաքը, որն իր ժամանակին ընկած է եղել Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի տեղում և ընկղմվել է ծովի հատակ, ինչպես Ատլանտիդան: Ենթադրվում է նաև, որ այդ ցամաքի «մնացորդներից» է Լոմոնոսովի անվան ստորջրյա լեռնաշղթան:

ԱՐԿՏԻԿԱ. — Երկրագնդի հյուսիսային բևեռային երկրները: Աշխարհագրական այս հասկացությունը ընդգրկում է Եվրոպայի, Ասիայի և Հյուսիսային Ամերիկայի ծայրամասերը, ինչպես նաև ամբողջ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսը և նրանում եղած կղզիները: Անունն առաջացել է հունարեն արկտոս՝ «հյուսիս» բառից: Արկտոս բառը ունի նաև «արջ» բառի իմաստը: Այսպես էին հունարեն անվանում Մեծ Արջի համաստեղությունը,

որով նրանք որոշում էին հորիզոնի հյուսիսային կողմը: Արկտիկան բաժանվում է չորս սեկտորի՝ սովետական, նորվեգական, դանիական (Գրենլանդիայի հատվածում), ամերիկյան (Ալյասկայի հատվածում) և կանադական:

ԱՐՃԵՇ. — Քաղաք Ռումինիայում: Այս անունը իր ժամանակին բերել են Վանա լճի ափին գտնվող Արճեց քաղաքից գաղթած հայերը, որոնք ի հիշատակ իրենց հայրենիք քաղաքի, Ռումինիայում ստեղծված բնակավայրը կոչել են Արճեց: Ռումինական Արճեց քաղաքի գերբը նույնպես արծիվ է եղել, ինչպես հին Արճեցինը:

ԱՐՃԵՇԻ ԾՈՎ. — Վանա լճի անուններից մեկը: Կոչվել է Արճեց քաղաքի անունով, որն ընկած է նրա հյուսիսարևելքում:

ԱՐՄԱՎԻՐ՝ (Հին). — Պատմական Հայաստանի ավագագույն և հնագույն քաղաք: Հայկացյան առաջին մայրաքաղաքը, իսկ հետագայում Արշակունիների: Արմավիրը մայրաքաղաք էր մինչև մ. թ. 68 թվականը, որից հետո իր դերը զիջում է Երվանդաշտին: Բատ Մովսես Խորենացու մեզ հասած ավանդության, քաղաքը հիմնադրվել է Հայկացյան Արմենակ նահապետի որդի Արամայիսի կողմից, 20-րդ դարում մ. թ. ա.: Խորենացին գրում է «...Արամայիսը իր բնակության համար տուն է շինում գետի ափին մի բլրի վրա և իր անունով էլ Արմավիր կոչում»: Այսպիսով Արամայիս անվանը ավելացվում է զենդերեն վիր մասնիկը, որը նշանակում է «բարձր»: Ստացվում է «Արամայիսի բարձր քաղաք»: Քաղաքի ավերակները գտնվում են ներկայիս Արմավիր անունը կրող բնակավայրից ոչ հեռու, նախկին Թափա-Դիրի, ներկայումս Հայկավան կոչվող գյուղի մոտ:

ԱՐՄԱՎԻՐ (նոր). — Քաղաք Հյուսիսային Կովկասում, Կրասնոդարի երկրամասում, Կուբան գետի ափին: Հիմնադրվել է 1839 թվականին, որին մասնակցել են թե՛ Հյուսիսային Կովկաս վերաբնակվող հայերը և թե՛ շըրջաններից եկող չերքեղախոս հայերը: Անվանումը տըր-

ված է ի հիշատակ Արարատյան դաշտի պատմական
Հայաստանի Արմավիր քաղաքի:

ԱՐՄԵՆԵՐԵՏԱՏ. — Քաղաք Ծումինիայում: Բառացի նշանա-
կում է Հայաքաղաք: Հայտնի է նաև Գերլա անվամբ:

ԱՐՄԵՆԻԱ. — Արմենիա են կոչում օտարները մեր երկիրը:
Անվան ավանդական հենքով հյուսված ստուգաբանու-
թյունը տրվում է մի քանի կերպ: Առաջինը, ծագած է
Համարվում Հնդեվրոպական արմեններ ժողովրդից: Երկ-
րորդը, սանսկրիտերեն արա՝ «արի», «քաջ» և մանա՝
«մարդիկ» բառերի միացումից: Այսինքն «քաջ մար-
դիկ»: Երրորդը, ըստ Մովսես Խորենացու կոչվել է Հայ-
կազյան Արամ նահապետի անունով: Եվ վերջապես՝
Արմենակ Հայկազյան նահապետի անունով, որը Հայկի
որդին էր և նրա անվան կրծատ ձեր եղել է Արմեն,
որից և մեր ժողովրդի ու երկրի անվանումը: Արմեն
ժողովրդի մասին առաջին անգամ հիշատակվում է Դա-
րեհ Ա.-ի (522—486 մ. թ. ա) արձանագրության մեջ:
Ինչպես Հայտնի է, նրա թագավորության ժամանակ,
բացի մի շարք այլ ժողովուրդներից, նրա դեմ ապրու-
տամբել էին նաև արմենները, որոնք ըստ երևույթին,
ցանկանում էին ձեռք բերել անկախություն: Այս ապրու-
տամբությունը մանրամասն նկարագրված է Բիսութու-
նի (ներկա Քիրմանշահի մոտ) բարձր ժայռի վրա քան-
դակած Դարեհ Ա.-ի բևեռագիր արձանագրության մեջ,
որը գրված է երեք լեզվով՝ հին պարսկերեն, էլամերեն
և բաբելոներեն: Արմենների երկիրն այս արձանագրու-
թյան մեջ անվանված է «Արմինա», իսկ ժողովուրդը,
այսինքն արմենները՝ «արմինիա»: Այստեղից էլ առա-
ջացել են Արմենիա և արմեններ բառերը:

Արմենիա անունն էլ ընկալ օտարների կողմից մեր
երկրին տրվող անվան հիմքում: Այսպես, լեհերեն, ուու-
սերեն, լատիներեն և հունարեն՝ Արմենիա, թուրքերեն՝
էրմենիստան, հունգարերեն՝ Օրմենիորշագ, լատիշերեն՝
Արմենիյա, գերմաներեն՝ Արմենիեն, պարսկերեն՝ Ար-
մանիյա, արաբերեն՝ Արմին կամ Արմինիյա, հին հրեե-

րեն՝ Թահողարմա, արամերեն՝ Հարմիննի, հին պարսկերեն՝ Արմինա:

ԱՐՄԵՆԻԱ. — Քաղաք Հարավային Ամերիկայի Կոլումբիա Հանրապետությունում: Քաղաքը փոված է Կենտրոնական Անդերի գեղատեսիլ լանջերին, ծովի մակերևույթից 1500 մետր բարձրության վրա: Արմենիա քաղաքը հիմնադրվել և այդպես անվանակոչվել է տասնիններորդ դարում, մի խոսմբ հայ գաղթականների կողմից: Ներկայումս ունի 70 հազար բնակչություն, ընդ որում գերակշռողը արդեն օտարներն են: Ինչպես հայտնի է, Կոլումբիայում մեծ քանակությամբ սուրճ է մշակվում: Այստեղի սուրճի մի տեսակը կրում է «Արմենիա» անունը, որը լավ համբավ ունի: Բացի այդ, սրանից յոթ տարի առաջ՝ Կոլումբիայի շողենավային ընկերությունը շահագործման հանձնեց մի նավ «Արմենիա» անունով՝ համանուն քաղաքի պատվին:

ԱՐՄՅԱՆՍԿ. — Քաղաք Ղրիմում, Պերեկոպի պարանոցի վրա: Նշանակում է «Հայկական քաղաք»: Հիմնվել է հայերի կողմից 1740-ական թվականներին, սկզբում Արմյանսկի Բազար անվան տակ: Հետագայում բազար բառը ընկել է և մնացել է ուղղակի Արմյանսկ անունը: Իր ժամանակին եղել է վաճառաշահ բնակավայր և Ղրիմի հետ կատարվող քարավանային առևտորի կարևոր կենտրոն: Արմյանսկի Բազարը ճանապարհորդներին հիացմունք է պատճառել իր շուկայով, հյուրընկալ բնակչությամբ և հարմարություններով:

ԱՐՄՈՒՐԻԿԱ. — Բրետան թերակղզու (Ֆրանսիայում) հին անունն է: Կելտերեն ար նշանակում է «վրա», իսկ մոր՝ «ծով»: Այսինքն ծովեղոյա:

ԱՐԵԱԿԱՎԱՆ. — Քաղաք պատմական Հայաստանում, Մասիսի լանջերին, Այրարատ նահանգի Կոգովիտ գավառում: Ավանը հիմնեց Արշակ երկրորդ Արշակունի թագավորը (350—368 թթ.): Արշակը իր թագավորության երրորդ տարում կամեցավ պարսից սահմանի մոտ ունենալ մի

բազմամարդ ավան։ Նորաստեղծ բնակավայրի բնակչության թիվը շատացնելու նպատակով, Արշակ թագավորը հրովարտակ է ուղարկում և կոչ անում Հայոց աշխարհի ժողովրդին։ Արքայական գրությունում ասված էր, որ Նոր ավան եկողները կունենան օթևան, կապրեն առանց հարկի ու տուրքի, կլինեն տերերից ազատ։ Նոր ավանում բնակություն հաստատողը ազատվում էր դատից ու դատաստանից, ինչպես նաև պարտքից ու պարտատիրոջից։ Ազատ և արտոնյալ ապրելու հրովարտակը դայթակղեցրեց շատերին և նպաստեց ավանի արագ աճին։ Այնպես որ Արշակի հիմնած ավանը, որը և նրա անունով կոչվեց Արշակավան, լցվեց մեծ բազմությամբ։ Այս հանգամանքը զայրույթ առաջացրեց Հայոց աշխարհի թե՛ նախարարների և թե՛ կաթողիկոս Ներսիս Մեծի մոտ։ Առանց այն էլ նախարարների մոտ ուժեղանում էր կենտրոնախույս ձգտումը, որի դեմ էլ պայքարում էր Արշակը։ Արշակավանի գոյությունը արագացրեց նախարարների ընդվզումը Արշակի դեմ։ Այդ ժամանակ հույները պարտվելով պարսիկներից ձեռք քաշեցին Հայաստանից, իսկ ապստամք նախարարները լքեցին Արշակին, անցան պարսիկների կողմը։ Այս հանգամանքը արագացրեց Արշակավանի ավերումը, որը վերջնականապես կործանվեց 368 թվականին։ Արշակը պարսիկների կողմից աքսորվեց Անհուշ բերդ, որտեղ և 369 թվականին մահացավ։ Այժմ Արշակավանի ավերակները գտնվում են Օրգովի լեռնանցքի ու Մասիսի միջև և կոչվում են Խարաբա Պաժառ, որը քրդերեն նշանակում է «ավեր քաղաք»։

Ժամանակի ընթացքում Արշակավան անունը ստացավ թևավոր խոսքի ուժ։ Ներկայումս, երբ Արշակավան ենք ասում, ապա նկատի ենք ունենում մի տեղ, որտեղ չկա կարգ ու կանոն, դատ ու դատաստան, ոտնահարվում է արդարությունը։

ԱՐՄԵՆԵՎ. — Քաղաք Հեռավոր Արևելքի Պրիմորիեի երկրամասում։ Հիմնադրվել է 1953 թվականին և կոչվում է ի

պատիվ անվանի ճանապարհորդ-աշխարհագրագետ,
գրող Վ. Կ. Արսենեկ (1872—1939 թթ.):

ԱՐՏԱՇԱՏ. — Պատմական Հայաստանի հոչակալոր և արքա-
յանիստ քաղաք: Գտնվում էր Այրարատ նահանգի Ոստ-
ան գավառում: Պատմական Հայաստանի նվիրական
տեղանուններից է: Բատ Մովսես Խորենացու, քաղաքը
հիմնադրվել է հայկական առաջին թագավոր Արտաշես
I-ի կողմից 170—160 թվականներին, մ.թ.ա., Արաքսի
ձախ ափին: Պարսկերենում շատ բառը ունի «վրանի»
կամ «բնակավայրի» իմաստ: Տվյալ դեպքում Արտա-
շես նշանակում է Արտաշեսի բնակավայր կամ Արտա-
շեսի ավան:

ԱՐՏԱՇԱՏ. — Քաղաք ՀՍՍՀ-ում: Մինչև 1945 թվականի սեպ-
տեմբերի 4-ը կոչվում էր Ղամարլու: Վերանվանվեց
պատմական Արտաշատի անունով: Ի դեպ, նույն անու-
նով գյուղը այդ շրջանում ներկա Արտաշատից տարբե-
րելու համար կոչվեց Վերին Արտաշատ:

ԱՐՏԵԿ. — Համամիութենական պիոներական ճամբար Ղրի-
մում (Գուրզուֆի մոտ): Հիմնվել է 1925 թվականին, Ար-
տեկ կոչվող բնակավայրի մոտ, որի անունը գալիս է
հին հունական Կարդիատրիկոն անվան ձևափոխումից:

ԱՐՏՅՈՒՐՎԱԿ. — Քաղաք Ուկրաինայում (նախկինում՝ Բախ-
մուտ): Այդպես է կոչվել ի պատիվ սովետական պետա-
կան գործիչ Ֆյոդոր Անդրեևիչ Սերգեևի (1883—1921
թթ.), որի կուսակցական մականունը եղել է Արտյոմ:

ԱՐՏԵՄԻԴԱ. — Տե՛ս Էջմիածին:

ԱՌՆՈ. — Գետ Խոտալիայում, որը թափվում է Միջերկրական
ծովը: Անվան հիմքում ընկած են հնդեվրոպական «հու-
զումնալից», «փոթորկալից» բառերը: Առնոյի վրա են
գտնվում Ֆլորենցիա և Պիզա քաղաքները:

ԱՌԻԳՍԲՈՒՐԳ. — Քաղաք Բավարիայում (ԳՖՀ): Քաղաքը այդ-
պես է կոչվել հոռմեական կայսր Օգոստոսի (Առուգու-
տոս) պատվին և ավելացվել է գերմանիաներեն բուրգ՝ «քա-
ղաք» բառը:

ԱՌԻԳՐԱԲԻՍ.— Զրվեծ Հարավ Աֆրիկյան Հանրապետությունում, Օրանժի գետաբերանից 500 կիլոմետր հեռու Բարձրությունը հասնում է 146 մետրի: Նա գահավիժում է թեք բարձունքից: Առաջարիսը համարվում է աշխարհի խոշորագույն ջրվեժներից մեկը, առաջացնում է մեծ աղմուկ, որի պատճառով է ստացել իր անունը: Զրվեծի անունն առաջացել է հոտենտոտների «աւուրեբիս» բառից, որ նշանակում է «մեծ աղմուկների վայր»: Առաջարիսը հայտնաբերվել է 1778 թվականին Հենրիկ Վիկարի կողմից:

ԱՔԱԲՍ.— Ծոց Արաբական և Սինայ թերակղզիների միջև: Ունի 100 կիլոմետր երկարություն և 28 կիլոմետր լայնություն: Առունը արաբերենից է և նշանակում է «զառիթափ» կամ «լանջ»: Ծոցի ափին է գտնվում համանուն քաղաքը:

ԱՅՂԱՆՍՏԱՆ.— Պետություն Ասիայում: «Աֆղան» իրանական լեզվախմբին պատկանող ժողովրդի անունից՝ «աֆղանների երկիր»: Ի դեպ, աֆղանները ըստ ավանդության իրենց անունը վերցրել են նախահայր «Աֆղանից»:

ԱՖՐԻԿԱ.— Աշխարհամաս, որի անվան մասին կա հետևյալ, առավել հավանական մեկնաբանությունը: Հին հույները, հոռմեացիները և հայերը Աֆրիկայի մասին չգիտեին այնպես, ինչպես որ նա կա: Նրանք ծանոթ էին Աֆրիկայի միայն հյուսիսային մասին, որին և տալիս էին կիրիա անունը (առանց եղիպտոսի): Այդպես է հայտնի եղել և Հերոդոտին, և Մ. Խորենացուն: Հետագայում կիրիա անունը, որը «լիբուա ցեղի անունն էր, պահպանվեց ներկա կիրիա պետության համար: Ինչ վերաբերում է Աֆրիկա անվանը, ապա այն եվրոպացիներին հայտնի դարձավ մեր թվականության երրորդ դարում, երբ պատերազմ էր գնում Հռոմի և Կարթագենի միջև: Երբ հոռմեացիները նվաճեցին Կարթագենը, ապա այդտեղ ստեղծեցին հոռմեական մի նահանգ, որը տեղական բերբերական «աֆրիգի» ժողովրդի անունով կոչեցին Աֆրիկա: Աֆրիկա անունը տարածվեց Կարթա-

գենի կործանումից հետո և համապատասխանում էր ներկա թունիսին: Միջին դարերում այն տարածվում էր նաև Ալժիրի և Լիբիայի վրա, իսկ ելքոպացիների հետազոտության և գաղութացման ընթացքում Աֆրիկա անոնը աստիճանաբար տարածվեց ամբողջ աշխարհամասի վրա:

ԱՅՐԻԿԱ ՀՐՎԱՆԴԱՆ.—Գտնվում է Կամչատկա թերակղզու արևելյան մասում և խորը կերպով մտնում է Բերինգի ծովը: Բայց ինչպես է ընկել Հեռավոր Արևելք Աֆրիկա աշխարհամասի անոնը: Անցյալ դարի ութունական թվականներին, Հեռավոր Արևելքում, Կամչատկայի և Կոմանդրյան կղզիների ափերին կատարում էին աշխարհագրական ուսումնասիրություններ այն նավով, որը կրում էր «Աֆրիկա» անունը: Նրա անձնակազմի մարդիկ որոշում են հավերժացնել իրենց նավի անունը և Կամչատկայի արևելյան ափին գտնվող հրվանդանը կոչում են Աֆրիկա:

Բ

ԲԱԱԼԹԵԿ.—Ոչ մեծ քաղաք Լիբանանում: Սկզբում եղել է փյունիկեցիների սրբազան քաղաքը, որը նվիրված էր Բաալ աստծուն: Անվանման հիմքում ընկած է «Բաալ» անունը, որը ունի սեմիտական ծագում և նշանակում է «տեր»: Բաալեկ ստուգաբանվում է որպես «Բեկայի տեր»: Բեկան այն բարեբեր հովիտն է, որտեղ գտնվում են Բաալ աստծուն նվիրված կոթողները: Հոռմի տիրապետության ժամանակ Բաալեկը կոչվել է Հելլոպոլիս (Արևի քաղաք): Բաալեկը աշխարհով մեկ հայտնի դարձավ իր վիթխարի կոթողներով, որոնք այսօր էլ մարդկանց շարունակում են հիացմունք պատճառել: Բաալեկի հրաշալիքներին նայողը ակամայից հիշում է իր ժամանակին տրված բնորոշումը, թե դա հոռմեա-

կան մշակույթի ցուցադրական արտահանումն է Արևելք:

ԲԱԲԱ. — Հրվանդան Փոքր Ասիա թերակղզու հյուսիս-արևմուտքում, էգեյան ծովի ափին: Բաբա հրվանդանը համարվում է Ասիայի արևմտյան ծայրակետը: Անվան առաջացումը կապում են թուրքերեն բարա՝ «հայր» բառի հետ: Բայց առավել հավանականն այն է, որ թուրքերը փոխառնելով ինչ-որ հին տեղանուն կամ աղճատել են, կամ էլ տվել թրքական նշանակություն:

ԲԱԲԵԼՈՆ. — Հին Աշխարհի նշանավոր և փառաբանված քաղաքներից մեկը: Անվանումը խալդերեն է և նշանակում է «Աստծու դուռ»: Այդպես է կոչվել ի պատիվ «արեւ» աստծո: Աշխարհի յոթ հրաշալիքների թվին են դասվել «Բարելոնի կախված պարտեզները»: Քաղաքի ավերակները գտնվում են Բաղդադից քիչ հարավ:

ԲԱԲ-ԷԼ-ՄԱՆԴԵԲ. — Նեղուց Աֆրիկայի և Ասիայի կամ Եթովպիայի և Արարիայի միջև: Կարմիր ծովը միացնում է Հնդկական օվկիանոսին: Լայնությունը ամենանեղ մասում 26 և կես կիլոմետր է: Անվանումը արաբերեն է և նշանակում է «Արցունքի գարպաս» (բար՝ «դուռ» կամ «դարպաս» և մանդեբ՝ «արտասուք»): Բաբ-Էլ-Մանդեբ անունը ծվրոպա անցավ 16-րդ դարում: Միջնադարյան նավերի համար Բաբ-Էլ-Մանդեբով անցնելը և Կարմիր ծով մտնելը եղել է վտանգավոր և դառնություններով լի: Ծովում գտնվող ստորջրյա ժայռերը պատճառ են եղել բազմաթիվ նավաբեկումների: Բացի այդ, շիկացած լերկ ափերը ծովում ստեղծում են անտանելի շոգ, որով այն ժամանակվա նավարկությունը ավելի էր դրժվարանում: Կարմիր ծովը աշխարհի ամենատաք ծովն է:

ԲԱԲՈՒՇԿԻՆ. — Քաղաք Բուրյաթական ինքնավար հանրապետությունում: Այսպես վերանվանվեց նախկին Միսովսկի բնակավայրը ի պատիվ ուսւ հեղափոխական իվան Վասիլիկը Բարուշկինի (1873—1900 թթ.):

ԲԱԳԱՎԱՆ. — Նշանավոր ավան պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Բագրեանդ գավառում, Արածանիի

(Մուրադ) ձախ ափին: Մեծ Հայքի կրոնական նշանավոր կենտրոններից մեկը: Անունը կազմված է Բագ և ավան բառերի միացումից: Բագ՝ պահլավերեն նշանակում է «աստված»՝ իսկ ավան՝ «վայրի» կամ «տեղի» իմաստ ունի: Այն մեր պատմիչների կողմից կոչվել է նաև Դիցավան, որը նույն իմաստն ունի ինչ որ Բագավանը: Բագավանը գտնվում է Նպատ լեռան ստորոտում: Հայերը Նոր Տարին՝ նավասարդը տոնում էին նաև Բագավանում: Այն նշում էին օգոստոս ամսին: Ինչպես Հայկան Հեթանոսական շատ տաճարների, այնպես էլ Բագավանի մեջյանի տեղը կառուցվեց քրիստոնեական եկեղեցի: Մինչև Բագրեանդի գավառի հայաթափ լինելը նրան կից կար հայկական գյուղ, որին Վանքի գյուղ էին անվանում: Թուրքերի կողմից կոչվում էր Ուշ Քիլիսա (Երեք եկեղեցի), նկատի ունենալով եկեղեցու երեք խորանները:

ԲԱԳԱՐԱՆ.— Քաղաք պատմական Հայաստանում, Այրարատ նահանգի Արշարունիք գավառում: Ախուրյան գետի աջ ափին: Քաղաքը հայտնի էր Հեթանոսական տաճարներով՝ բագիններով: Անունն առաջացել է Պահլավերեն բագ՝ «աստված» և արան՝ «դաշտ» բառերի միացումից: Երվանդ II-ը Արմավիրից կուտքերը տեղափոխեց այստեղ և շատ բագիններ (կռատներ) հիմնեց: Բագարանի ավերակները մնում են Ախուրյանի մյուս ափին՝ Արևմբատյան Հայաստանում:

ԲԱԳՐԱՏԻՈՆՈՎԱԿ.— Քաղաք Կալինինգրադի մարզում: Կոչվել է 1812 թվականի հայրենական պատերազմի նշանավոր զորավար Ն. Ի. Բագրատիոնի պատվին (1765—1812 թթ.): Նրա գլխավորությամբ 1807 թվականի փետրվարին այստեղ տեղի ունեցավ մեծ ճակատամարտ:

ԲԱԴԵՆ.— Կուրորտային քաղաք Գերմանիայում: Անունը առաջացել է գերմաներեն Բադեն՝ «բաղնիքներ» բառից: Քաղաքը հայտնի է իր հանքային ջրերով:

ԲԱԶԵԼ.— Քաղաք Հյուսիսային Շվեյցարիայում: Անունը ծագել է հունարեն բաղիլիա բառից, որը նշանակում է

«կայսերական նստավայր»: Այստեղ էր գտնվում
Արևմտյան Հռոմեական կայսրների ապարանքը:

ԲԱԹՈՒՄ.— Նավահանգիստ Սև ծովի ափին, Աջարստանում,
որը մտնում է Վրացական ՍՍՀ-ի կազմի մեջ, Անունը
առաջացել է հունարեն բատիս լիմեն՝ «խորը նավա-
հանգիստ» խոսքից: Նկատի է ունեցվել ծովախորշի
խորությունը:

ԲԱԼԱԿԱՎԱ.— Սևաստոպոլի քաղաքային շրջաններից մեկը:
Անունը առաջացել է թաթարերեն բալըք՝ «ձուկ» և յու-
վա՝ «բույն» բառերից: Այսինքն՝ հարուստ ձկնորսա-
վայր:

ԲԱԼԱՏՈՆ.— Լիճ Հունգարիայում: Թերևս սլավոնական բոլո-
տո բառից, որը նշանակում է «Ճահիճ»:

ԲԱԼԲՈԱ.— Նավահանգիստ Պանամայում: Անվանումը տրվել
է ի պատիվ իսպանական նշանավոր կոնկիստադոր
վասկո Նունիես դե Բալբոայի, որը 1513 թվականին
առաջին անգամ անցավ Պանամայի պարանոցը: Բալ-
բոան միաժամանակ առաջին եվրոպացին է, որը տե-
սավ Խաղաղ օվկիանոսը (այն ժամանակ Հարավային
ծովը):

ԲԱԼԵԱՐՅԱՆ ԿԴՋԻՆԵԲ.— Միջերկրական ծովում Խստանիային
պատկանող կղզիախումբը: Բալեար բառի արմատը
հունարեն բալլո բառն է, որը նշանակում է «նետում
եմ»: Տեղի ժողովուրդը շատ հմուտ էր պարսատիկի օգ-
տագործման մեջ: Նրանք ժառայում էին Հռոմեական
բանակում և համարվում էին պարսատիկով քար նե-
տելու վարպետներ: Այսպիսով բալլո՝ «գցում եմ» կամ
«նետում եմ» բառը դարձավ հատուկ անուն:

ԲԱԼԹԻԿ ԾՈՎ.— Ծով Հյուսիսային Եվրոպայում: Անունը ծա-
գել է լատիշերեն «սպիտակ» բառից: Այդպես է կոչ-
վում, որովհետև ծովը բավական ժամանակ պատաժ է
լինում սպիտակ սառուցով, իսկ սառուցից ազատ ժա-
մանակ ջրերը նույնպես ջինջ են: Մյուս ստուգաթանու-
թյամբ ծովը իր անունը ստացել է Բալթի կղզու անու-
նից:

ԲԱԼԹԻՄՈՐ. — Քաղաք Ամերիկայի Միացյալ Նահանգներում։ Հիմնադրվել է 1632 թվականին։ Այդպես է կոչվել ի պատիվ քաղաքը հիմնադրող Ջորջ Կալվերու լորդ Բալթիմորի (1580—1632 թթ.):

ԲԱԼԹԻՅԱԿ. — Քաղաք Կալիֆորնիայի մարզում, Բալթիկ ծովի ափին, որից և ստացել է իր անունը։ Մինչև 1946 թվականը կոչվում էր Պիլառ։

ԲԱԼԿԱՆՅԱՆ ԹԵՐԱԿՂՋԻ. — Թերակղջի Եվրոպայի հարավում։ Անվան առաջացումը ստուգաբանվում է Բալկանյան լեռների անունով։ Վերջինս էլ ծագել է «անտառոտ լեռներ» բառերի միացումից։ Մյուս ստուգաբանությունը, ըստ ակադեմիկոս Գ. Ղափանցյանի, կապվում է փոքրասիական հին ժողովուրդներից մեկի՝ պելակիննի կամ բելկանիա անվան հետ։

ԲԱԼԿԱՆՆԵՐ. — Լեռնաշղթա Բուլղարիայում։ Անունը նշանակել է «անտառոտ լեռներ»՝ ելնելով բուսականությունից։ Ներկայումս այս լեռները կոչվում են Ստարա-Պլանինա։

ԲԱԼԻԽԱԾ. — Լիճ Ղազախական ՍՍՀ-ում։ Ղազախական բալիխաշ բարից է, որը նշանակում է «ձգված և ճահճոտ» տարածություն։ Իրոք որ լիճը այդպիսին է։ Այն ձգվում է Ղարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք և ծանծաղուաւ է ափերի մոտ։

ԲԱԽԻՉԱՍՏԱՆ. — Հին քաղաք Ղրիմում։ Եղել է Ղրիմի խաների նստելավայրը, որը հռչակված էր իր պարտեզներով և ապարանքներով։ Այն ժամանակին երգվել է Պուշկինի կողմից։ Անվան առաջացումը՝ բախչա՝ «պարտեզ» և սարայ՝ «ապարանք», կամ «պալատ» բառերի զուգակցումից է։ Այսինքն «պարտեզի ապարանք»։

ԲԱՀՐ-ԷԼ-ԱԲՅԱԴԻ. — Սպիտակ Նեղոսի արաբական անունն է։ Արաբերեն բահր՝ «ծով» (տվյալ դեպքում նկատի է ունեցվել գետի մեծությունը) և արյատ՝ «սպիտակ» բառերից է կազմված։ Այդպես է կոչվել Նեղոսի սպիտակ գույնի նստվածքների պատճառով։

ԲԱՀՐ-ԷԼ-ԳԱԶԱԼ.— Այս անունով Աֆրիկայում կա երկու գետ: Դրանցից մեկը Սպիտակ Նեղոսի վտակներից է, իսկ մյուսը թափվում է Զադ լիճը: Անվանումը առաջացել է արաբերեն բահր՝ «ծով», «գետ» և «գաղալ» կամ «գաղել» (վիթ) բառերի զուգակցումից: Այսինքն գաղելների գետ:

ԲԱՀՐ-ԷԼ-ՋԵԲԵԼ.— Նեղոսի անվանումներից մեկը; որը տըրպում է նրան Վերին Սուլանում: Անվանումը կազմված է արաբերեն բահր՝ «ծով», «գետ» և ջեբել՝ «լեռ» բառերի զուգակցումից: Այսինքն «լեռնային գետ»:

ԲԱՀԱՄՅԱՆ ԿՂՋԻՆԵՐ.— Արշիպելագ Աստանտյան օվկիանոսում: Անունը ծագել է հնդկերեն «բահամա» բառից, որի ստուգարանությունը պարզ չէ: Այդ անունը սկզբում տրվում էր Կորայի և Ֆլորիդայի միջև գտնվող նեղուցին: Հետագայում այն անցավ արշիպելագին:

ԲԱՀԻԱ.— Քաղաք Բրազիլիայում: Հիմնադրման ժամանակ նա ստացավ Բահիա-դա-Թոդուշ-դե-լու-Սանտոս անունը, որը նշանակում է «ծոց բոլոր սրբերի»: Ծոցը հայտնաբերվել է 1501 թվականի նոյեմբերի 1-ին պրոտուգալացիների կողմից «բոլոր սրբերի» տոնի օրը: Այս անվանումը, շատ երկար լինելու պատճառով, ժամանակի ընթացքում կրճատվեց և մնաց միայն Բահիա բառը, որը բառացի նշանակում է «ծոց»:

ԲԱՀՐԵՅՆ.— Կղզիախոսմբ Պարսից ծոցում: Այդպես է կոչվում արաբերեն բահր՝ «ծով» կամ «մեծ գետ» բառից: Բահրեյն բառացի նշանակում է «երկու ծով»՝ թերևս կղզիներ, որոնք գտնվում են երկու ծովերի միջև:

ԲԱՂԴԱԴ.— Իրաքի մայրաքաղաքն է: Հիմնադրվել է 762 թվականին: Անվան առաջացումը հին պարսկերեն բագ՝ «աստված» և դադ՝ «տրված» բառերի զուգակցումից: Այսինքն «աստծու տրված», «աստվածատուր»: Քաղաքի աստվածային անվանումը արտացոլում է խալիֆայության թերկրատական (աստվածապետական) բնույթը: Բաղդադը, որպես մայրաքաղաք, հիմնադրվել է

Մանսուր երկրորդ խալիֆի կողմից, որը Աբբասյանների դինաստիայից էր:

ԲԱՅԱԶԵՏ. — Քաղաք Արևմտյան Հայաստանում, Մասիսից 22 կիլոմետր հարավ-արևմուտք, պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Կոգովիտ գավառում, որը հայտնի էր Դարոյնք անունով: Տեղացի հայերը ամրոցի ավերակները կոչում էին Հին Բերդ: Քաղաքը տարածված է բարձրաբերձ լեռների միջև: Միայն մի կողմից է բացվում ընդարձակ տեսարան դեպի Մասիսը: Քաղաքի անվան ստուգաբանությունը պետք է կապել հայերեն պայազատ բառի հետ, որը նշանակում է ժառանգորդ, ցեղի մնացորդ, հաջորդ, գահաժառանգ, ազնվատոհմ: Պահլավերեն պայազատ նշանակում է ազնվականի հաջորդ: Քանի որ Բայազետում էր գտնվում Բագրատունյաց պայազատների հայրենի տունը և արքայական գանձարանը, հետևաբար, բնակավայրը ստացավ նաև Պայազատ անունը, որը դարձել է Բայազետ: Սովորաբար թուրքերը փոխ առնելով հայկական անունները, կամ աղճատել են դրանք, կամ տվել են թրքական նշանակություն: Այդպես էլ վարվեցին Պայազատ անվան հետ: Եվ ժամանակի ընթացքում քաղաքը Բայազետ կոչելով, կապեցին սովորական Բայազիդի անվան հետ: Այստեղից էլ ստեղծվեց համապատասխան վարկած, որ իրը քաղաքը հիմնել է վերոհիշյալ սովորանը: Բայց հայտնի է, որ թուրքերը Բայազետը գրավել են 1548 թվականին, սովորական Սովեյմանի օրոք, այսինքն սովորական Բայազիդի թագավորությունից (1389—1402 թթ.) մոտ մեկակես դար հետո, երբ Բայազետը հայտնի բերդաքաղաք էր: Գրավումն էլ փաստորեն եղավ ձեւական, որովհետեւ քաղաքը թուրքիայի հեռավոր վայրերից մեկն էր, տնտեսապես էլ ոչ մի կերպ կապված չէր Օսմանյան կայսրության հետ, դրա համար էլ այն հանձնեցին քրդական Սլիվանի ցեղի ցեղապետին, որի պատճառով ամբողջ գավառն էլ ստացավ Սլիվան անունը: Հետագայում, հատկապես, երբ ոռուսները ընդ-

Հուայ մոտեցան Հայկական Պար լեռնաշղթային, Բայազ-
դետը դարձավ սահմանամերձ բնակավայր և սկսեց աշ-
քի ընկնել իր շուրջը տեղի ունեցած պատերազմական
նշանավոր դեպքերով, որի պատճառը եղել է քաղաքի
թե՛ սահմանամերձ դիրքը և թե՛ Թավրիզ-Տրապիզոն
տանող՝ տարանցիկ քարավանային ճանապարհին
մոտ գտնվելը: Բայազետը աշքի ընկավ հատկապես
1877—1878 թվականների ուսու-թուրքական պատերազ-
մի ժամանակ, երբ պաշարվելով քրոնիքի անհամար զոր-
քերով, 22 օր հերոսական դիմադրություն ցուցա-
բերեց, մինչև Տեր-Ղուկասյանի օգնությունը: Պաշար-
ման ժամանակ հայերը մեծ դեր խաղացին, հատ-
կապես Սամսոն անունով մի երիտասարդ, որը նկարա-
գրված է Բաֆֆու «Խենթի» մեջ: Բայազետը իր ժամա-
նակին հայշատ և վաճառաշահ քաղաք էր, բայց
ստեղծված անբարենպաստ պայմանների հետևանքով
հայերը տարբեր ժամանակներում՝ (1830, 1854, 1878
թվականներին) Բայազետից գաղթել են: Վերջապես,
1918 թվականի մարտի 26-ին, երբ Բայազետը հայա-
թափ եղավ: Բայազետի հայերը տարբեր ժամանակներ
գաղթել են հգիր, Կաղզվան, Ալեքսանդրապոլ: Մեծ
թվով հայեր գաղթեցին 1830 թվականին և հիմնեցին
Նոր Բայազետ քաղաքը (ներկայումս Կամո):

ԲԱՅԴԱՐՅԱՆ ԴԱՅԲԱՍՈՆԵՐ.—Լեռնանցք Ղրիմում, որը զուրս է
բերում Բայդարյան հովտից Սև ծովի ափի: Գտնվում է
ծովի մակերևույթից 739 մետր բարձրության վրա:
Նրանով է անցնում Սևաստոպոլ—Յալթա ճանապարհը:
Այդպես է կոչվել նրա մոտ գտնվող Բայդար գյուղի ա-
նոնով, որի հիմքում ընկած է թաթարերեն դերե կամ
դարա, այսինքն «Հովիտ», «Լեռնանցք» բառը:

ԲԱՅՆԱԼ.—Լիճ Արևելյան Սիրիոսմ: Անոնք ստուգաբա-
նորեն ծագած են համարում յակուտերեն բայ՝ «հա-
րուստ» և գյոլ կամ կուլ՝ «լիճ» բառերի զուգակցումից:
Այսինքն հարուստ լիճ, գուցե ձկներով հարուստ լինելու
ակնարկությամբ: Ստուգաբանվում է նաև մոնղոլերեն

բայ և գալ «մեծ ջուր» բառերից։ Նորագույն տվյալները պավագուցվում է, որ Բայկալ անունը առաջացել է բուրյաթական «Բայգալ-դալայ» բառերից, որը նշանակում է «քնական ծով»։ Ինչպես տեսնում ենք, Բայկալի տարբեր ստուգաբանությունները վկայում են նրա մեծության և հարստության մասին։ Իրականում նա այդպիսին է։ Բայկալը համարվում է աշխարհի ամենախոր, քաղցրահամ և կենդանական աշխարհով հարուստ ամենախոշոր լիճը։

ԲԱՅԿԱԼ. — Սոց Օխոտի ծովում, Սախալինի հարավ-արևմերային մասում։ Այս ծոցի ուսումնասիրությունները կատարվել են 1864 թվականին այն նավով, որը կրում էր Բայկալ լճի անունը։ Հետագայում որոշեցին նավի անունը հավերժացնել և ծոցն էլ «Բայկալ» կոչեցին։

ԲԱՅՏՈՒԻՇԱՆ. — Լեռ Կորեայի և Չինաստանի սահմանում։ Անվանումը չինարեն նշանակում է «սպիտակ գագաթ»։ Այս լեռան կորեական ձևն է Պեկտուսան։

ԲԱՅՐՈՆ. — Հրվանդան Ավստրալիայի ծայր արևելքում, որը հանդիսանում է մայր ցամաքի ամենաարևելյան կետը։ Հայտնաբերվել է 1770 թվականին ծովագնաց Ջոն Կուկի կողմից և կոչվել է՝ անգլիացի ծովագնաց Ջոն Բայրոնի անունով, որը մեծ բանաստեղծ Բայրոնի պապն էր։ Ջոն Բայրոնը երկու անգամ կատարել է շուրջերկոյա ճանապարհորդություն և արել մի շարք հայտնագործություններ հարավային կիսագնդում։ Ջոն Բայրոնի անվամբ կա նաև կղզի, որը գտնվում է Ջիլբերտա արշիպելագում (Օվկիանիս)։

ԲԱՆԳԿՈԿ. — Տակիլանդի մայրաքաղաքը։ Անվանումը ստուգաբանվում է երկու կերպ։ Առաջինը որպես «վայրի ձիթենիների մացառուտ», իսկ մյուսը՝ «անտառի գյուղ» նշանակությամբ։

ԲԱՆԴԱ. — Միջկղզային ծով Խաղաղ օվկիանոսում։ Անունը ծագել է մալայերեն բանդան բառից, որը նշանակում է «միացյալ»։ Տվյալ դեպքում կղզիները միացնողի իմաստով։

ԲԱՆԿՄ. — Կղզի կանադական Արկտիկական արշիպելագում՝ Հայտնաբերվել է 1820 թվականին ամերիկյան արշավախմբի կողմից, որը գլխավորում էր Ռ. Պարին, Կղզին կոչվել է այդպես ի պատիվ անգլիացի բնագետ Ջովեֆ Բանկսի, որը թագավորական աշխարհագրական ընկերության նախագահն էր և ֆինանսավորեց 1818—1820 թվականներին կազմակերպված արշավախումբը: Բանկսը իր ժամանակին մասնակցել է ջ. Կուկի ճանապարհորդությանը:

ԲԱՆԿՄԻ կղջիներ. — Խաղաղ օվկիանոսում (Մելանեզիայի խմբում): Այդպես են կոչվել ի պատիվ ջ. Բանկսի: Կղզիները ներկայում մտնում են նոր Հերթիոյան կոնդումինիումի կազմի մեջ:

ԲԱՇԿԻՐԻԱ. — Սովետական Ռուսաստանի ինքնավար հանրապետություն: Անվանումը «բաշկիր» ժողովրդի անունից է:

ԲԱՎԱՐԻԱ. — Պատմական մարզ Գերմանիայում: Հին գերմանական «բավար» ցեղի անունից, որը այստեղ հաստատվեց վեցերորդ դարում: Այստեղից են առաջացել նաև Բավարական անտառ (լեռներ) և Բավարական սարահարթ անունները:

ԲԱՍԻՐԴԵՑՄ. — Շրջանային կենտրոն Հայաստանում: Թուրքերն բասար՝ «արշավել», «հարձակվել» և գեղար՝ «անցնել», «գնալ» բառերից: Նկատի է ունեցվել Սկանա լճի ջրերի մերթ առաջխաղացումը և մերթ ետքնալը: Պատմական Հայաստանում Բասարգեղարի տեղում գտնվել է Վասակաշենը, իսկ ավելի վաղ Գեղամաբակը: Ներկա Բասարգեղարը հիմնվել է 1830 թ. Դիագինից գաղթած հայերի կողմից: 1969 թ. վերանվանվեց Վարդենիս:

ԲԱՍՍԻ ՆԵՐՈՒՅ. — Տասմանիա կղզու և Ավստրալիա մայր ցամաքի միջև: Կոչվել է ի պատիվ անգլիացի բժիշկ Բասսի: Նա մասնակցում էր այն էքսպեդիցիային (1798—1799 թվականներին), որը գլխավորում էր

Մ. Ֆլինդերսը: Բասսն առաջինն էր, որ անցավ ալլ վիթխարի նեղուցը (600 կմ երկարությամբ):

ԲԱՍԻՒ. — Քաղաք Հարավային իրաքում, Շատ-էլ-Արարի գետաբերանում: Անվանումը արաքերեն՝ բոսր՝ «բերդ» բառից է:

ԲԱՏԱՎԻԱ. — Ջակարտայի հոլանդական անվանումը, որը տրվեց քաղաքին այն օրվանից, երբ 1616 թվականին հոլանդացիները նվաճեցին Ջակարտա բնակավայրը: Բատավիա էթնոնիմի հիմքում ընկած է հին գերմանական բատավիա ցեղի անունը: Հոլանդացիները իրենց համարում են Բատավի ցեղի հետնորդները: Լատիներեն Բատավիա էին կոչում Հոլանդիային: Բատավիան 1949 թվականին նորից վերանվանվեց Ջակարտա:

ԲԱՏԵՐՈՍ. — Գամբիայի մայրաքաղաքը: Այդպես է կոչվել իպատիվ անգլիական գաղութների մինիստր Բատերոսի Բատերոսը, տասնիններորդ դարի սկզբին է գրավել այդ պոստը, և Բրիտանական կայսրության մեջ բազմաթիվ տեղանուններ կոչվել են նրա անունով: Այսպես օրինակ, նրա անունով կոչվիներ կան Կանադական արշիպելագում, ինչպես նաև Տիմորի ծովում:

ԲԱՐԱԲԱՅԻ ՏԱՓԱՍՏԱՆ. — Արևմտա-Սիրիական դաշտավայրի հարավային մասը: Անվան առաջացման մասին կա երկու բացատրություն, որոնցից մեկն այն է, որ եղել է «բարաբա» անվամբ թաթարական ցեղ, որը իր անունը տվել է տափաստանին: Մյուսը՝ բար բառը թաթարական, կիրգիզական լեզուներում նշանակում է «կա», «գոյություն ունի» և գումարած պարսկերեն ար «զուր» բառը: Անունը շատ լավ է արտացոլում այս տափաստանի բնական առանձնահատկությունները: Ներկայումս լճերն ու ճահիճները զբաղեցնում են նրա մակերեսի մոտ մեկ երրորդը:

ԲԱՐԲԱԴՈՍ ԿՂԶԻ. — Վեստ Ինդյան արշիպելագի Փոքր Անտիլյան խմբի ամենաարևելյան կղզին: Այն պատկանում է Մեծ Բրիտանիային: Առաջին անգամ, երբ 16-րդ դարում կղզուն մոտեցան իսպանացիները, նրանք տես-

սան, թե ինչպիսի երկար մորուք էին կրում բնիկները։
Այստեղից էլ կղզու Բարբադոս, այսինքն «մորուքավոր»
անվանումը։

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԿՂՋԻՆԵՐ.— *Sե՛ս Տոնդա արշիպելագ:*

ԲԱՐԵՀՈՒՍՈ ՀԲՎԱՆԴԱՆ.— Աֆրիկայի հարավային մասում։
Այս անվանման առաջացման պատմությունը մեզ հասց-
նում է աշխարհագրական մեծ հայտնագործումների
ժամանակաշրջանը, երբ պորտուգալացի ծովագնաց
Բ. Դիասը (Դիաչը) 1486 թվականին մոտեցավ այս
հրվանդանին։ Աֆրիկայի այս մասում ծովը համարյա-
միշտ ալենկոծման մեջ է, քամին մոլեգնում է և նավե-
րին վտանգ սպառնում։ Ահա այդ փոթորիկների պատ-
ճառով էլ Դիասը ստիպված հայրենիք վերադարձավ,
իսկ հրվանդանն էլ կոչեց «Փոթորիկների հրվանդան»։
Դիասը այդ մասին պատմեց Պորտուգալիայի ժուան
II թագավորին, որը նպատակահարմար գտավ այդ վա-
նող, վախեցնող անվանումը փոխարինել «Բարի հույսի
հրվանդան» անունով, գտնելով, որ այստեղից այն
կողմը կարող է բացվել այն բարի և հուսալի ճանա-
պարհը, որով պորտուգալացիները կհասնեն երազած
Հնդկաստան։ Իրականում այդ «բարի հույսը» արդա-
րացավ, երբ 1497 թվականին պորտուգալական նավերը
վասկո դա Գամայի գլխավորությամբ անցան այս հըր-
վանդանը և 1498 թվականի մայիսի 20-ին հասան Հընդ-
կաստան։ Պորտուգալական նավերը կանգ առան Մա-
լաբարյան ափին գտնվող Կալիկութ նավահանգստում։
Ի դեպ, այս անունը չպետք է շփոթել Կալկաթայի հետ,
որը այն ժամանակ որպես այդպիսին շկար։

ԲԱՐԵՆՑԻ ԾՈՎ.— Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծայ-
րամասային ծով։ Ողողում է Եվրոպայի ափերը։ Այս
ծովը առաջին անգամ հետազոտել է հոլանդացի ծո-
վագնաց Վ. Բարենցը (1594—1597 թվականներին), որը
նպատակ էր դրել Եվրոպասիայի ափերով, Հյուսիս-արևել-
յան միջանցքով դուրս գալ Խաղաղ օվկիանոս։ Զնայած
նրան այդ Հաջողվեց, բայց ի պատիվ նրա ծովը կոչվեց

Բարենցի, իսկ ինքը զոհվեց Նոր Երկիր կղզու ափերի
մոտ:

ԲԱՐԵՆՑՈՒԼ.— Քաղաք ՌՍՖՍՀ-ում, Ալթայի երկրամասի
կենտրոնը: Անունը ստացել է Բառնաուլ գետից: Իսկ
վերջին անունն էլ ունի ղաղախական ծագում և բա-
ռապացի նշանակում է «լավ կայան»: Իրոք որ այստեղ իր
ժամանակին քոչվոր ղաղախների համար հարմար իշե-
վանավայր էր:

ԲԱՐՍԵԼՈՆԱ.— Նավահանգիստ Իսպանիայում, Միջերկրական
ծովի ափին: Հիմնադրվել է կարթագենցի Գամիլկար
Բարկայի կողմից, 3-րդ դարում, մ. թ. ա.: Սկզբնական
շրջանում հանդիսանում էր կարթագենյան գաղութ՝
Բարկինո անվան տակ:

ԲԱՐԲՈՒԼԻ.— Հրվանդան Ալյասկայի հյուսիսում, որը և հա-
մարվում է նրա ծայրակետը: Այդպես է կոչվել ի պա-
տիվ Զոն Բարրուի, որն անգլիական ծովակալության
քարտուղարն էր և մեծ դեր է խաղացել Արկտիկայի
ուսումնասիրության գործում:

ԲԱՔՈՒ.— Աղբեջանական ՍՍՀ-ի մայրաքաղաքը: Անունը ծա-
գել է պարսկերեն բաղկուրե՝ «քամու հարված» խոսքից,
որը ակնարկում է այստեղ իշխող հյուսիսային քամի-
ները: Այս անվամբ քաղաք գոյություն է ունեցել մահ-
մեդական էրայի սկզբից, բայց հավանական է, որ նա
ավելի վաղ է հիմնված, քանի որ Բաքվի մոտերքում
եղած գաղերի գոյությունը, այսինքն «հավիտենական
կրակները» հայտնի էին կրակապաշտներին հեթանո-
սական շրջանից: Ենթադրվում է, որ այստեղ դեռ վաղ
ժամանակ եղել է մի քաղաք, որին հայերը Բագավան
էին անվանում: Այսինքն՝ բագինների՝ հեթանոսական
զոհասեղանների տեղ:

ԲԱՅՖԻՆԻ ԵՐԿԻՐ.— Բաֆֆինի Երկիր կոչվող կղզին գտնվում է
Հյուսիսային Կանադայում: Այս անվանումը տրված է ի
պատիվ անգլիացի ծովագնաց Վիլլամ Բաֆֆինի
(1584—1622 թթ.): Նա Կանադական Արկտիկայում
կատարել է Երեք բևեռային ծովագնացություն:

ԲԱՅՑԻՆԻ ՍՈՎ (ՍՈՅ). — Գտնվում է Գրենլանդիայի և Բաֆ-
ֆինի օրկիր կոչվող կղզու միջև: Կոչվում է ի պատիվ
Վիլյամ Բաֆֆինի:

ԲԵԳԻՉԵՎԻ ԿՂՋԻ. — Կղջի Լապտևների ծովի հարավում: Բե-
գիչև (1874—1927 թթ.) 1908 թվականին շրջանցեց
Ասիա մայրցամաքի հրվանդաններից մեկը, որը կար-
ծում էին թերակղզի է և ապացուցեց, որ դա կղզի է:
ԲԵԴՆՈԴԵՄՅԱՆՈՎՍԿ. — Քաղաք Պենզայի մարզում: Նախկի-
նում՝ Սպասսկ: Քաղաքը 1925 թվականից այդպես կոչ-
վեց ի պատիվ բանաստեղծ Դեմյան Բեդնու (1883—
1945 թթ.):

ԲԵԼԱՅԱ. — Գետ: Կամայի ձախ վտակը: Անվանումը ոռւսե-
րեն բելայա՝ «սպիտակ» բառից է: Այդպես է կոչվել,
որովհետեւ նրա զառիթափ ափերին կարելի է հանդիպել
սպիտակ կրաքարերի: Ի գեպ, Բելայա անունով կա ևս
երկու գետ: մեկը՝ Կրասնոդարի երկրամասում, իսկ մյու-
սը՝ Իրկուտսկի մարզում:

ԲԵԼԳԻԱՆ. — Պետություն Արևմտյան Եվրոպայում: Անունը
ստացել է կելտական բելի ցեղից, որը բնակվում էր
Բելգիայի և Ֆրանսիայի սահմանային հողերում:

ԲԵԼԳՐՈՌՈԴ. — Քաղաք ՌՍՖՍՀ-ում: Անունը առաջացել է ոռւ-
սերեն բելի՝ «սպիտակ» և գրադ՝ «քաղաք» բառերի
միացումից: Այսինքն «սպիտակ քաղաք»: Այդպես է
կոչվել շրջակայքում սպիտակ կավճային բլրակների
գոյության պատճառով:

ԲԵԼԳՐԱԴ. — Հարավսլավիայի մայրաքաղաքը: Անունը առա-
ջացել է սլավոներեն բելի՝ «սպիտակ» և գորոդ՝ «քա-
ղաք» բառերի գուգակցումից:

ԲԵԼԻՆՍԿ. — Քաղաք Պենզայի մարզում: Նախկինում Զեմբար:
Վերանվանվել է 1948 թվականին ի պատիվ ոռւս մեծ
հեղափոխական, դեմոկրատ, փիլիսոփա և քննադատ
Վիսարիոն Բելինսկու (1811—1948 թթ.), նրա մահվան
հայուրամյակի առթիվ:

ԲԵԼԻՆՍԿԳԱՐԻԶԵՆԻ ՍՈՎ. — Ողողում է Անտարկտիդայի հա-
րավարելլան ափերը: Կոչվել է ի պատիվ ոռւս ծո-

վագնաց Ֆ. Բելինսգաուզենի (1779—1852թթ.): Հայտնաբերվել է 1821 թվականին ոռուս ծովագնացներ Ֆ. Բելինսգաուզենի և Մ. Լազարևի կողմից: Ծովը գտնվում է 80—100 աստիճան արևելյան երկայնության միջև:

Բելինսգաուզենի կղջի. — Խաղաղ օվկիանոսում, Ընկերության կղզիախմբի մեջ: Կոչվել է ի պատիվ ոռուս ծովագնաց Ֆ. Բելինսգաուզենի: Կղզին հայտնաբերվել է 1824 թվականին Օ. Է. Կոցերուի կողմից:

Բելինսգաուզենի Հրվանդան. — Գտնվում է Սախալինի կղզում: Հայտնաբերվել է 1805 թվականին, Կրուզենշտերնի կողմից և կոչվել է ի պատիվ ծովագնաց Ֆ. Բելինսգաուզենի:

Բելու՛՛՛. — Քաղաք Կարելական ԱՍՍՀ-ում, Բելոմորսկ-Բալթիական ջրանցքի մուտքի մոտ: Անունը ստացել է Սպիտակ ծովից (ոռուսերենում Բելոյե մորե) և ավելացրած «սկ» վերջածանցը, որն ունի քաղաքի իմաստ: Այսինքն Սպիտակ ծովի քաղաք:

Բելու՛՛՛ ջրանցքի. — Քաղաք Կրասնոդարի երկրամասում: Անունը ստացել է Բելայա րեկա՝ «սպիտակ գետ»-ից, որի վրա էլ գտնվում է քաղաքը: Այս քաղաքում բնակվում են մեծ թվով հայեր:

Բելու՛՛՛ սին. — Սովիտական Սոցիալիստական Հանրապետություն: Սլավոներեն բելի՝ «սպիտակ» և Ռուսիա՝ «Ռուսաստան» բառերից: Հստ երեսութին նկատի է ունեցվել այն հանգամանքը, որ այստեղ ավելի լավ են պահպանվել սլավոնական տիպը և սլավոնությունը: Իր ժամանակին գոյություն ունեին նաև մալառուս (ուկրաինացի) և վելիկոռուս (բուն ռուսաստանցի) անվանումները:

Բելու՛՛՛ սուկ. — Քաղաք Լեհաստանում: Անունը առաջացել է Բյալա գետից, որը սլավոներեն՝ նշանակում է «սպիտակ» և որի վրա էլ գտնվում է քաղաքը: Ավելացված է ռուսերեն շեքածությունը՝ «հոսել» բայարմատը, կամ շտոկ՝ «հոսք» գոյականը:

ԲԵԼՏ-ՄԵԾ ԵՎ ԲԵԼՏ-ՓՈՔՐ. — Նեղուցներ Դանիական կղզիների միջև: Բելտ կելտերին լեզվում նշանակում է «ջուր» կամ «ծով»: Այսպիսով, հասարակ տերմինը դարձել է հատուկ անուն:

ԲԵԼԻՒԽԱ. — Դագաթ Ալթայում (Կատունյան լեռնաշղթայում): Մածկված է հավերժական ձյունով և սառուցցով, որը և պատճառ է եղել նրա անվանման առաջացմանը: Հիմքում ընկած է ոռւսերին բելի՝ «սպիտակ» բառը:

ԲԵԼԻԶՄԱՆ. — Երկիր Պակիստանում: Իրանական «բելուզ» ժողովրդի անունից: Ավելացրած ստան՝ «երկիր» մասնիկը:

ԲԵԼՑԱՍ. — Քաղաք Հյուսիսային Իոլանդիայում: Ուելսերեն բելֆերտե նշանակում է «ավագութ և ծանծաղութ անցք»:

ԲԵՅՐՈՒԹ. — Լիբանանի մայրաքաղաքը: Անունը առաջացել է Հին փյունիկերեն բերոթ բառից, որը նշանակում է «ջրհոր»:

ԲԵՅՇԱՆ. — Բարձրավանդակ Հյուսիսային Զինաստանում: Զինարեն բեյ՝ «Հյուսիս» և շան՝ «լեռ» բառերի միացումից: Այսինքն՝ «Հյուսիսային լեռ»:

ԲԵՅՏԵՆՉՈՐԳ. — Տե՛ս Բողոր:

ԲԵՆԱՐԵՍ. — Տե՛ս Վարանասի:

ԲԵՆԳԱԶԻ. — Լիբիայի երկրորդ մայրաքաղաքը (պրեզիդենտի ուելիդենցիան): Այսպես է կոչվել մուսուլմանական Հոգևոր առաջնորդ Բեն Ղազիի անունով:

ԲԵՆԳԱԼԱԿԱՆ ԾՈՅ. — Ընկած է Հնդկաստանի և Հնդկաշխնի միջև: Անունը ստացել է «Բենգալիա» երկրից (ներկայումս շտատ Հնդկաստանի կազմում): Տե՛ս նաև Բենգալիա անվան առաջացման բացատրությունը:

ԲԵՆԳԱԼԻԱ. — Պատմական մարզ Հնդկաստանում: Բենգալիան գտնվում է Գանգես և Բրահմապուտրա գետերի գետաբերանի մոտ: Բենգալիան բաժանված է Արևմտյան և Արևելյան մասերի: Առաջինը մտնում է Հնդկաստանի կազմի մեջ, իսկ երկրորդը՝ Պակիստանի: Բենգալիա անունը հնդկական բենգալայա անվան ձևափոխու-

թյունն է, որը նշանակում է «բենգա ցեղի բնակավայր»: Այդ ժողովրդի բնօրրանը եղել է Բենգալիան: ԲԵՆԴԵՐԻ.—Քաղաք Մոլդավական ՍՍՀ-ում: Անունը առաջաւցել է իրանական բենգեր՝ «նավահանգիստ» բառից: ԲԵՆԴԵՐ-ԱԲԲԱՍ.—Նավահանգիստ իրանում: Գտնվում է Պարսից ծոցի ափին: Այդպես է կոչվել ի պատիվ Շահ Արքաս I-ի (1587—1628 թթ.): Կազմված է պարսկերեն բենգեր՝ «նավահանգիստ» և Արքաս անունից:

ԲԵՆԻՑՈՒԹՈՒ.—Այս անվանումը վանկային հապավում է, որը դարձել է աշխարհագրական անուն: Այն կազմված է ԲԵԼԳԻԱ, Նիդերլանդիա և Լյուքսեմբուրգ անունների առաջին վանկերի միացումից:

ԲԵՆԵՏՏԻ ԿՂԶԻ.—Կղզի Դե-Լոնգի արշիպելագում, Արևելա-Սիրիական ծովում: Այդպես է կոչվել ի պատիվ ամերիկացի Բենետտի. Այս հանդերձավորեց Դե-Լոնգի արշավախումբը, որը և կղզին հայտնաբերեց 1881 թվականին:

ԲԵՇՏԱԼԻ.—Լեռ Ստավրապոլյան երկրամասում, Պյատիգորսկից ոչ հեռու: Առաջացել է թուրքերեն բեշ՝ «հինգ» և տառ՝ «լեռ» բառերի միացումից: Իրոք որ հինգ գագաթյա մեկուսացած լեռ է:

ԲԵԶՈՒԱՆԱԼԵՆԴԻ.—Բրիտանական տիրապետություն Հարավային Աֆրիկայում: Բեշուանա, շուանա կամ տսվանա ժողովրդի անունից: Բեշուանա անվանը ավելացվել է անգլիական լենդ՝ «երկիր» բառը և ստացվել է այս «հիբրիդ» տոպոնիմը: 1966 թվից կոչվում է Բոտսվանա:

ԲԵՌԼԻՆ.—Գեմոկրատական Գերմանիայի մայրաքաղաքը: Հիմնադրվել է 13-րդ դարում: Անվան ստուգաբանուածություններից առավել հուսալի է հին սլավոներեն բրլինա կամ բրլին բառից առաջացումը, որը ունի «ճահիճ» կամ «ջուրը ծծված տեղ» իմաստ: Եվ, իրոք, քաղաքը գտնվում է Շպրե և Հաֆել գետերի միացման տեղում, այնպես որ քաղաքի հիմնադրման ժամանակ եղել են ընդարձակ ճահիճներ և անտառապատ տարածություններ:

գերմաներեն բեր՝ «արջ» բառից: Հստ ավանդության, Բաղենի կոմսը՝ Բերթորդ V-ը, ներկա քաղաքի տեղում սպանել է մի արջ, որն իր կոմսի կյանքին վտանգ էր սպառնում: Եվ իր կյանքի փրկության համար, պատահարի վայրում, կառուցել է մի եկեղեցի: Ժամանակի ընթացքում եկեղեցու շուրջը ստեղծվեց բնակավայր, որը գնալով ընդարձակվեց և 12-րդ դարում ստացավ քաղաքի տեսք՝ Բեռն անունով: Քաղաքի գերբը հանդիսանում է արջի պատկերը, որը և իր անունը տվել է Շվեյցարիայի մայրաքաղաքին: Մինչև այսօր էլ քաղաքի կենտրոնական մասում արջեր են պահում:

ԲԵՍԱՐԱԲԻԱ.— Պատմական մարզ Պրուտ և Դնեստր գետերի միջև: Հիմնականում մտնում է Մոլդավական ՍՍՀ-ի կազմում: Անունը առաջացել է այս երկրում գտնվող բեսարաբների ֆեոդալական տիրապետություններից:

ԲԵՏՊԱԿ-ԴԱԼԱ.— Անապատ Ղազախստանում, Արալյան ծովի և Բալխաշ լճի միջև: Անունը առաջացել է ղազախերեն բետպակ՝ «անխիղճ», «չար» և դալա՝ «տափաստան» բառերի միացումից:

ԲԵՐԲԵՐԻԱ.— Այսպես են կոչվում Մարոկկոն, Ալժիրը և Թունիսը միասին, որոնք բնակեցված են բերբերներ անունը կրող ժողովրդով: Նրանց առօրյա խոսակցության ժամանակ արաբներ են անվանում: Բերբերներ անվանումը ստացել են հոռմեացիներից, իրենց ցանկության հակառակ: Բերբեր անունը առաջացել է հունարեն «բարբարոս» բառից: Այսպես էին անվանում հոռմեացիները և հուները այն ժողովուրդներին, որոնք հեռու էին կանգնած հոռմա-հունական քաղաքակրթությունից:

ԲԵՐԳԵՆ.— Քաղաք Նորվեգիայում: Հյուսիսային ծովի ափին: Անունը առաջացել է գերմաներեն բերգ՝ «լեռ» և հին նորվեգերեն վին՝ «արոտավայր» բառերից: Նավահանգըստի մոտ կա մի բարձր լեռ:

ԲԵՐԵԶԻՆ.— Գետ: Դնեսպի աջ վտակը: Անվան ստուգաբանության վերաբերյալ կան հետևյալ բացատրությունները: Առաջինը, լիտվական բերեզի՝ «սպիտակ» բա-

ոից: Երկրորդը, ոռուսերեն բերյոզա՝ «կեշի» ծառի անուշ
նից:

ԲԵՐԻՆԳԻ ՄՈՎ.— Խաղաղ օվկիանոսի Հյուսիսային մասը: Բե-
րինգի նեղուցից հարավ: Այդ ծովը առաջին անգամ
հետազոտել է Սեմյոն Դեժնյովը 1648 թվականին, սա-
կայն նա կրում է Հեռավոր Արևելքի խոշորագույն հե-
տազոտող Վիտուս Բերինգի անունը (1680—1741 թթ.):
Չնայած Բերինգը ծագումով դանիացի էր, բայց Պյոտր
I-ի հրավերով նա ծառայության կանչվեց ոռուսական
նորաստեղծ նավատորմում, որտեղ աշխատեց մոտ 40
տարի և եղավ զեկավար մասնակիցը Հյուսիսային մեծ
էքսպեդիցիայի, վերջինս վիթխարի գործ կատարեց
Արկտիկայի ուսումնասիրության գործում: Բերինգն ար-
ժանացավ մեծ պատվի ու փառքի, իսկ նրա անունը՝
տրվելով մի շարք վայրերի, անմահացավ աշխարհի
քարտեզի վրա:

ԲԵՐԻՆԳԻ ՆԵՐՄՈՒՅՑ.— Միացնում է Խաղաղ և Հյուսիսային
սառուցյալ օվկիանոսները, միաժամանակ բաժանելով
Ասիան Ամերիկայից: Հայտնաբերվել է 1648 թվակա-
նին Սեմյոն Դեժնյովի կողմից, երկրորդ անգամ՝ 1728
թվականին Վ. Բերինգի կողմից, որի անունով էլ կոչ-
վեց:

ԲԵՐԻՆԳԻ ԿՂՋԻ.— Կղջին հայտնաբերվեց 1741 թվականին Բե-
րինգի կողմից և կոչվեց նրա անունով:

ԲԵՐՄՈՒԴՅԱՆ ԿՂՋԻՆԵՐԻ.— Կորալական ծագում ունեցող կըդ-
դիներ, գտնվում են Արևմտյան կիսագնդում՝ Ամերի-
կայից 900 կիլոմետր արևելք: Հայտնաբերվել է 16-րդ
դարում իսպանացի ծովագնաց Խուան Բերմունդեսի
կողմից, որը նավարկելով դեպի Ամերիկայի ափերը,
հանդիպեց այս կղջիներին: Կղջիների ափերով նավար-
կումը կորալական խութերի և ծանծաղուտների պատ-
ճառով շատ դժվար էր և վտանգավոր: Դրա համար էլ
նա կղջիներին տվեց «Դեկի կղջիներ» անունը: Հետազո-
յում, երբ մարդիկ ծանոթացան կղջիներին, պարզվեց
որ հողը շատ բերրի է, կլիման առողջարար և բնավ է:

այդ մուայլ անունը նրան սաղական չէ: Այսպիսով, կը դ-
զիների սկզբնական անվանումը մոռացվեց և պահպան-
վեց առաջին հայտնաբերողի անունը:

ԲԶՆՈՒՅՑԱՅ ԾՈՎ.— Վանա ծովի (լճի) պատմական անուն-
ներից մեկը: Հստ Մովսես Խորենացու թե՛ ծովը և թե՛
գավառը Բղնունյաց են կոչվել ի պատիվ Բազի, որը
Հայկի թոռն էր՝ Մանավազի որդին: Բազից առաջացել
է նաև Բղնունյաց նախարարության անվանումը:

Բղնունյաց գավառը զբաղեցնում է լճի հյուսիս-
արևմտյան մասը: Գավառի գլխավոր քաղաքներից էին՝
Ախլաթը (Խլաթը) և Դաթվանը: Ախլաթը կոչվում էր
նաև քաղաք Բղնունյաց: Ծովը Ախլաթ կամ Խլաթ բնա-
կավայրի անունով էլ կոչվել է նաև Ախլաթի ծով:

ԲԻԱՐԻՅՑ.— Կուրորտային քաղաք Հարավ-արևմտյան Ֆրան-
սիայում, Բիսկայան ծոցի ափին: Անվանումը բասկե-
րեն նշանակում է «երկու կաղնի»:

ԲԻԶԵԲՏԱՅ.— Քաղաք և նավահանգիստ Թունիսում: Փյունի-
կա-Հոռմեական Հիպատնե-Զարիտոս անվան աղավաղ-
ված ձևն է: Այդ անվամբ եղել է բերդ:

ԲԻԼԲԱՈ.— Քաղաք Հյուսիսային Խսպանիայում: Անունը առա-
ջացել է բասկերեն բել՝ «գեղեցիկ» և վառ՝ «անցահուն»
(գետն անցնելու ժանձաղուտ տեղ) բառերից:

ԲԻՀԱՐ.— Նահանգ Հնդկաստանում: Անունը առաջացել է
սանսկրիտերեն «վիհար» բառից, որը տրվում է բուդ-
դյական վանքին:

ԲԻՅԱ.— Գետ Ալթայում: Միանալով Կատունին առաջանում է
օրը: Անունը ալթայցիների մոտ հնչում է «բիյ», որը
նշանակում է «պետ»: Բայց ոռւսների մոտ սովորաբար
գետերը ունեն իգական սեռի վերջավորություն: Այդ
տրադիցիայի համաձայն էլ գետը կոչվեց Բիյա:

ԲԻՅԱԿ.— Քաղաք Ալթայի երկրամասում, Բիյա գետի վրա,
որից և ստացել է իր անունը:

ԲԻՍԿԱՅԱՆ ԾՈՅ.— Ծոյ Ատլանտյան օվկիանոսում, Արևմտ-
յան Եվրոպայի ափերի մոտ: Այդպես է կոչվել բասկե-
րի անունով: Այդ ժողովուրդը բնակվում է ֆրանս-իս-

պանական սահմանում՝ թասկոնիայում։ Մի այլ մեկնաբանումով թասկերեն թիսկար՝ «լեռնաշղթա» թառից։ ԹԻՍՄԱՐԿԻ ԱՐԾԻՊԵԼԱԳ. — Կղզիներ և աղաղաղ օվկիանոսում։ Նոր Գվինեայի հյուսիս-արևելքում։ Կղզիները հայտնաբերվել են 1700 թվականին։ Երբ 1884 թվականին Գերմանիան ձեռք բերեց այս արշիպելագը, կոչվեց կանցլեր Բիսմարկի անվամբ (1815—1898 թթ.):

ԹԻՐԱ. — Գետ Հեռավոր Արևելքում, Ամուրի ձախ վտակը։ Անունը առաջացել է էվենկերեն «գետ» բառից, որը դարձել է աշխարհագրական հատուկ անուն։

ԹԻՐՄԱ. — Պետություն Հարավային Ասիայում։ Եվրոպացիների կողմից տեղական «մրանմա» անվան աղավաղված ձևն է։ Իսկ մրանման բիրմական լեզվում նշանակում է «ուժեղ» կամ «հզոր»։

ԹԻՐՄԻՆԳԵՄ կամ ԹԻՐՄԻՆԳԴԱՄ. — Քաղաք Միջին Անգլիայում։ Թեորմունգ անձնանունից և ավելացրած անգլիական համ մասնիկը, որը ունի «քնակատեղի» նշանակություն։ Թեորմունգը եղել է ֆեոդալ։ Այսինքն Թեորմունգի մարդկանց բնակավայր։

ԹԻՐՈԲԻՃԱՆ. — Քաղաք Հեռավոր Արևելքում։ Հրեական ինքնավար մարզի կենտրոնը։ Առաջացել է Թիրա և Թիջան գետերի անունների զուգակցումից։ Նրանց միախառնըման տեղում գտնվում է քաղաքը։

ԹԱՇԴՈՒԱՏ. — Լեռ Միջին Ուրալում, Սվերդլովսկի մարզում։ Ռուսերեն բլագո՝ «բարի» և դատ՝ «տալ» բառերի միացումից։ Այսինքն «բարետու» «բարեբեր» իմաստով։ Նկատի են ունեցվել երկաթի հարուստ պաշարները, որոնք հայտնաբերվեցին 1735 թվականին։

ԹԱՇԴՈՎԵՇԶԵՆՍԿ. — Քաղաք Հեռավոր Արևելքում՝ Ամուրի մարզում։ Քաղաքի անվանումը կապված է բլագովեշշենիե քրիստոնեական տոնի անվան հետ։ Ավելացրած «սկ» մասնիկը», որը ունի քաղաքի իմաստ։ Այդ անունով եղել է ոռոսական եկեղեցի, որի շուրջը ստեղծվեց

ավան: Հայերեն լեզվում այդ տոնը կոչվում է Ավետիս ման տոն:

ԲԼԱՆԿՈ ՀՐՎԱՆԴԻԱՆ.—Աֆրիկայի հյուսիսում՝ Թունիսում: Հայտնաբերվել է պորտուգալացիների կողմից և անունը ստացել է պորտուգալերեն բրանկով՝ «սպիտակ» բառից: Այդպիս է կոչվել բուսականությունից զորկ սպիտակ գույնի ավազուտների պատճառով: Ներկայումս հրվանդանը կոչվում է էլ-Արիյադ:

ԲՀԱՐԱՏԱ.—Հնդկաստանի դասական անվանումը, որը առօրյա գործածության մեջ քիչ ենք հանդիպում, բայց համարվում է նաև Հնդկաստանի պաշտոնական անունը և գրված է երկրի սահմանադրության մեջ: Այդ անունը գալիս է հնդկական «Մահարաշտրատա» էպոսից և սանսկրիտերեն լեզվից: Բհարատան այդ դիցաբանության մեջ հիշատակված արքայազուններից մեկի անունն է: Ի դեպ, սանսկրիտը հին և միջնադարյան Հնդկաստանի կրոնական, փիլիսոփայական, գեղարվեստական և գիտական գրականության լեզու է: Նա Հընդկաստանի ժողովրդի սրբազնն «գրաբարն է»:

ԲՅՈՒԶԱՆԴԻՌՆ.—Հին հունական քաղաք Բուֆորի ափին: Հիմնադրվել է 658 թվականին մ. թ. ա. հույն Բլուզանդի կողմից: Քաղաքը այս անունը կրեց մինչև մ. թ. 330 թվականը, այսինքն մինչև Կոստանդին թագավորի կողմից Հռոմեական կայսրության մայրաքաղաքը այստեղ տեղափոխելը, որից հետո ստացավ Կոստանդնոպոլիս անունը: Ներկայումս քաղաքը հայտնի է Ստամբուլ կամ Խստանբուլ անվամբ:

ԲՈԲՐՈՒՅՍԿ.—Քաղաք Բելոռուսական ՍՍՀ-ում: Անտառալին այն գոնայում, ուր գտնվում է քաղաքը, անցյալում շատ կուղբեր են եղել: Բոբր ուստերեն «կուղբ» է նշանակում:

ԲՈԳԴՈ-ՕԼԱ կամ ԲՈԳԴՈ-ՌԻԼԱ.—Լեռնային գանգված Արևելյան Տյան-Շանի լինական մասում: Բառացի նշանակում է «Սրբազն լեռ»: Լեռան ստորոտում կան բազգայական վանքեր:

ԲՈՂՈՏԱ. — Կոլումբիայի մայրաքաղաքը: Այն հիմնադրվել է իսպանացիների կողմից, 1538 թվականին: Ալտպես է կոչվել տեղական առաջնորդ Բոգոտայի անունով:

ԲՈԳՈՐ. — Քաղաք ինդոնեզիայում, ձավա կղզում: Սունդա լեզվով «գորգ» բառից է: Հոլանդացիների տիրապետության ժամանակ կոչվում էր Բեյտենզորգ («անհոգ»): Քաղաքը հոշակված է իր բուսաբանական այգով:

ԲՈԴԵՆԻ ԼԻՅ. — Գտնվում է ԳՖՀ-ի, Շվեյցարիայի և Ավստրիայի սահմանում: Անունը ստացել է Բոդման բերդի անունից:

ԲՈԼԻՎԱՐ. — Քաղաք Վենեսուելայում: Կոչվել է ի պատիվ Սիմոն Բոլիվարի (1783—1830 թթ.), որը եղել է Հարավային Ամերիկայի ազատագրական պայքարի առաջնորդներից մեկը:

ԲՈԼԻՎԻԱ. — Պետություն Հարավային Ամերիկայում: Այն սկզբում կոչվել է Վերին-Պերու, ապա վերանվանվել է ի պատիվ իսպանական գաղութարարներից ազատագրող Սիմոն Բոլիվարի (1783—1830 թթ.), որը և եղավ Բոլիվիայի առաջին պրեզիդենտը:

ԲՈԼԵԲՎԻԿ ԿՈԶԻ. — Գտնվում է Հյուսիսային երկիր արշխպելագի հարավային մասում: Իր մեծությամբ համարվում է արշիպելագի երկրորդ կղզին: Բոնում է 11 հազար 500 քառակուսի կիլոմետր տարածություն: Հայտնաբերվել է 1913 թվականին. սկզբում արշիպելագը կոչվել է Նիկոլայ II-ի անվամբ, որից հետո ստացել է Հյուսիսային երկիր անունը: 1932 թվականից կղզին կոչվեց Բոլեբվիկ:

ԲՈԼՈՆՅԱ. — Քաղաք Իտալիայում: Անվան առաջացման վերաբերյալ կան հետևյալ բացարձությունները: Առաջինը ծագած է համարվում «բոյ» ժողովրդի անունից, որն ապրել է այստեղ նախքան Բոհեմիա մեկնելը: Երկրորդը, լատիներեն բոնիս՝ «լավ» բառից: Նկատի է ունեցվել տեղի հարմարավետությունը:

ԲՈՏՆԻԿ կամ ԲՈՏՆԻԿԱԿԱՆ ԾՈՅ.— Այդպես է կոչվում Բալ-
թիկ ծովի հյուսիսային մասը՝ Շվեդիայի պատմական
մարզերից մեկի՝ Բոտնիայի անունով:

ԲՈՔՍԻՏՈԳՈՐՎԿ.— Քաղաք Լենինգրադի մարզում։ Հարուստ
է բոքսիտի հանքերով։ Այստեղից էլ նրա անվանումը՝
որի հիմքում ընկած են բոքսիտ բառը և ուստական գո-
րա «լեռ» մասնիկը, այսինքն Բոքսիտ լեռան բաղաք։

ԲՈՀԵՄԻԱ.— Զեխիայի նախկին անունն է։ Անունը առաջացել
է «բոյ» ժողովրդից, որն այստեղ է եկել հտալիայից
մ. թ. ա. 3-րդ դարում, հոռմեական նվաճումից խուսա-
փելու նպատակով։

ԲՈՄԲԵՅ.— Քաղաք և նավահանգիստ Հնդկաստանում։ Այդ-
պես է կոչվել ի պատիվ տեղական աստվածուհի Բում-
բա կամ Մումբա Դևայի։

ԲՈՆԻՖԱՉՈ.— Նեղուց Կորսիկա և Սարդինիա կղզիների միջև,
անունը ստացել է Բոնիֆաչո քաղաքից, որը գտնվում է
Կորսիկայում։

ԲՈՆՆ.— Ֆեդերալ Գերմանիայի մայրաքաղաքը։ Առաջացել է
կելտերեն բոնա՝ «քաղաք» բառից։

ԲՈՍՆԻԱ.— Պատմական մարզ Հարավսլավիայում։ Կոչվում է
Բոսնա գետի անունով։

ԲՈՍՖՈՐ.— Նեղուց, որը միացնում է Մարմարա և Սև ծովերը։
Հունարեն բոս՝ «եղա» և ֆորոս՝ «անցում» բառերից։ Իր
թե այստեղից իր ժամանակին ավելի հարմար էր եղ-
ներ տեղափոխելը մյուս ափի։ Կարող է լինել նաև փոյտե-
գիականից փոխառնված Բոս-պորոսի («լուսավոր
գետ») աղավաղումը։ Թուրքերը Բոսֆորն անվանում են
«հստանբուլ բողազի» կամ «Կարագենիդ բողազի», որը
գործածական է միայն Թուրքիայում։

ԲՈՍՖՈՐ ԿԻՄՄԵՐԻԱԿԱՆ.— Կերչի նեղուցի պատմական անու-
նը, որը տրվում էր հույների կողմից։ Հույները թե՛
ներկա Բոսֆորի և թե՛ Կերչի նեղուցին ընդհանրապես
«Բոսֆոր» էին անվանում, որը նշանակում էր «եղան
անցում»։ Բայց իրարից տարբերելու համար ներկա
Կերչի նեղուցն անվանում էին Կիմմերիական Բոսֆոր։

Հույները կիմմերացիներ անվան տակ նկատի ունեին սկյութներին: Բոսֆոր անունը կրող քաղաքը գտնվում էր ներկա Կերչ քաղաքի տեղում, որը հայտնի էր նաև Պանտիկապեյ անունով:

ԲՈՐԴՈ. — Քաղաք հարավ-արևմտյան Ֆրանսիայում: Ենթադրում են, որ անունը առաջացել է գաղղիական (կամ գալերի) «բիտուրինգներ» ցեղից: Մի այլ ստուգաբանությամբ, ֆրանսերն բոր՝ «եզր» կամ «ափ» և օ՝ «ջուր» բառերի միացումից, հավանաբար այն պատճառով, որ քաղաքը գտնվում է գետի՝ Գարոնայի ափին:

ԲՈՐՆՀՈԼՄ. — Կղզի Բալթիկ ծովում: Կոչվել է գերմանական բուրգունդ ցեղի անունով և սկանդինավերեն հոլմ՝ «կղզի» բառի ավելացումից: Այսինքն բուրգունդ ցեղի կղզի:

ԲՈՅՈՐԾԻ ԾՈՎ. — Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծայրամասային ծովերից մեկը: Ընկած է Ալյասկայի և Կանադայի միջև: Հայտնաբերվել է 1834 թվականին անգլիացի ծովագնաց Ջորջ Բակի կողմից: Անվանակոչվել է ի պատիվ ծովակալ Ֆրենսիս Բոֆորտի, որը անգլիական ծովակալության հիգրոգրաֆիական դեպարտամենտի պետն էր: Բոֆորտն է հնարել քամու ուժի շահման սանդղակը:

ԲՐԱԶԶԱՎԻԼ. — Կոնգոյի մայրաքաղաքը: Գտնվում է Կոնգո գետի ստորին հոսանքում: Հիմնադրվել է 1880 թվականին ֆրանսիացի գաղութային գործիչ և ճանապարհորդ՝ Պիեր Սավորնյան դե Բրազզայի կողմից (1852—1905 թթ.). «վիլ» մասնիկը ֆրանսերեն նշանակում է քաղղաք:

ԲՐԱԶԻԼԻԱ. — Պետություն Հարավային Ամերիկայում: Այն իններկա անունը ստացել է բրազիլ (պորտուգալերեն պատրիազիլ) կամ կարմիր ծառից: Այս խիստ արժեքավոր ծառը մինչև Ամերիկայի գյուտը ծանոթ էր եվրոպացիներին: Նա ծիրանի գույն ունի և բավական ամուր է: Գործածական է գեղարվեստական փորագրության, դանակի և սրի կոթեր պատրաստելու համար:

Ամերիկան Կոլումբոսի կողմից հայտնաբերվելուց հետո, 1500 թվականին, ներկա Բրազիլիայի ափերին մոտեցավ պորտուգալացի ծովագնաց Պեդրո Կաբրալը, որը այստեղ գտավ բրազիլ ծառով պատաժ տարածություններ: Այստեղից էլ այդ ափը Բրազիլիա անվանեցին: Այդ անունը ժամանակի ընթացքում տարածվեց ամբողջ երկրի վրա: Կար ժամանակ, երբ կարմիր ծառը Բրազիլիայի արտահանման մեջ կարևոր դեր էր խաղում, սակայն անխնա կտրատումը ի վերջո կրճատեց նրա դերը Բրազիլիայի տնտեսությունում:

ՔՐԱԶԻԼԻԱ.— Բրազիլիա պետության ներկա մայրաքաղաքը, որպիսին հռչակվեց 1960 թվականի ապրիլի 20-ից: Նոր մայրաքաղաքը կառուցվեց միանգամայն ազատ տերիտորիայում, որը գտնվում է երկրի միջին մասում, Ռիո-դե-Ժանայրուից հազար կիլոմետր հյուսիս արևմուտքությունում:

Նոր մայրաքաղաքին տրվեց Բրազիլիա անվանումը: Տես Բրազիլիա պետության անվան ստուգաբանությունը:

ՔՐԱՀՄԱՊՈՒՏՐԱ.— Գետ Չինաստանում, Հնդկաստանում և Արևելյան Պակիստանում: Թափվում է Բենգալական ծոցը: Բառացի նշանակում է «Բրահմայի որդի»: Իսկ Բրահման հնդկական եռաստվածության պանթեոնում համարվում է աշխարհի ստեղծողը, պուտրա նշանակում է «որդի»:

ՔՐԱՆԴԵՆԲՈՒԻՐԳ.— Պատմական մարզ Գերմանիայում և քաղաք ԳԴՀ-ում: Անունը մեկնաբանվում է երկու կերպ: Առաջինը, կելտերեն բրենն՝ «առաջնորդ» և գերմաներեն բուրգ՝ «ամրոց» բառերի միացումից: Այսպես է կոչվել ի պատիվ մարկղրաֆ Ալբերտ Առջի (13-րդ դարում): Երկրորդը, բերն՝ «արջ» և բուրգ՝ «ամրոց» բառերից: Նույնպես ի պատիվ Ալբերտ Առջի, ելնելով նրա մականունից: Հնարավորեն համարում նաև գերմաներեն՝ «այրված քաղաք», կելտերեն՝ «վերին քաղաք» ստուգաբանությունները:

ԲՐԱՏԻՍԼԱՎԱ. — Քաղաք Զեխոսլովակիայում: Քաղաքը այդպիսի է կոչվել ի պատիվ Զեխիայի հերցոգ Բրատիսլավ:

I-ի (1034—1055 թթ.), որը և Հիմնել է քաղաքը:

ԲՐԱՏԻՍԼԱՎ. — Քաղաք Սիբիրում, իրկուտսկի մարզում, Անգարա գետի վրա: Բրատսկ բուրյաթիերեն պիրատ բառի ռուսականացված ձևն է: Բուրյաթները պիրատ ասելով նկատի էին ունենում սայանո-ալթայական արևմտյան ցեղերին: Հիմնադրվել է 1631 թվականին: Մյուս ստուգաբանությունը կապվում է ուղղակի բուրյաթ անվանման հետ, որը սուսները ընկալեցին իբրև բրատ («եղբայր»):

ԲՐԱՌԻՆՇՎԵՅՉ. — Քաղաք Գերմանական Ֆեդերատիվ Հանրապետությունում: Անվան առաջացումը՝ սաքսոնական ֆեոդալ Բրոնսի անվան և հին ստորին գերմաներեն վիկ «բնակավայր» բառի միացումից:

ԲՐԵԴՅՈՐԴ, ԲՐԵԴՅՈՐԴ. — Քաղաք Հյուսիսային Անգլիայում: Անգլերեն բրոդ՝ «լայն» և ֆորդ՝ «գետանցք» բառերի զուգակցումից:

ԲՐԵՄԵՆ. — Քաղաք Գերմանական Ֆեդերատիվ Հանրապետությունում: Համանուն «Հողի» կենտրոն, վեցեր գետի վրա: Անվան առաջացումը ծագել է հին վերին-գերմաներեն բրեմ՝ «ճահճային ափ» խոսքից:

ԲՐԵՆՆԵՐ. — Լեռնանցք Արևելյան Ալպերում, իտալիայի և Ավստրալիայի սահմանում: Անունը առաջացել է կելտերեն բրեն՝ «լեռ» բառից:

ԲՐԵՍ. — Քաղաք Բելոռուսիայում: Անվան առաջացումը՝ կապվում է սլավոներեն բրեստ կամ բերեստ՝ «ծփի» կամ «կնձնի» բառի հետ: Քաղաքը, Ֆրանսիայի հյուսիսարևմտյան մասում գտնվող Բրեստից տարրերելու համար կոչում են նաև Բրեստ-Լիտովսկ:

ԲՐԵՏԱՆ. — Թերակղզի և պատմական մարզ Հյուսիս-արևմտյան Ֆրանսիայում: Կելտական «բրիտ» ժողովրդի անհետնից, որը 5—6-րդ դարերում, փախչելով անգլո-սաքսոնական արշավանքներից ապաստան էր գտնում այս թերակղզում:

ՔՐՅԱՆՍԿ. — Քաղաք և համանուն մարզի կենտրոն ՌՄՅԱՀ-
ում: Հին անունն էր Դիբրյանսկ: Ռուսերեն դիբրի բա-
ռից, որը նշանակում է «անտառային թավուտ», «խորը
անտառ», որով իր ժամանակին շրջապատված է եղել
բնակավայրը: Հետագայում «դե» մասնիկը կրնատվել
է և մնացել է ուղղակի Բրյանսկ: Ավելացված «սկ»
մասնիկը ունի քաղաքի նշանակություն:

ՔՐԻՆԴԻԶԻ. — Քաղաք Խտալիայում: Հունարեն բրենտեզիոն
բառից, որը նշանակում է եղջերուի գլուխ: Իրոք որ ծո-
ցը, որի ափին գտնվում է նավահանգիստը, ունի եղջե-
րուի գլխի տեսք:

ՔՐԻՍԹԵՆ. — Քաղաք Ավստրալիայում: Հիմնադրվել է 1824
թվականին և կոչվել է ի պատիվ Թ. Քրիստենի, որը եղել
է նոր Հարավային Ուելսի նահանգապետը:

ՔՐԻՍՈԼ. — Քաղաք Անգլիայում: Անունը առաջացել է
«բրիտա» ժողովրդից, որը նախկինում բնակվել է մո-
տակա կղզիներում:

ՔՐԻՏԱՆԻԱ. — Անգլիայի հնագույն անվանումը: Անունը առա-
ջացել է կելտական «բրիտ» ժողովրդի անունից:

ՔՐՅՈՒՍԵԼ. — Բելգիայի մայրաքաղաքը: Անունը առաջացել է
ֆլամանդերեն բրյուգ՝ «կամուրջ» և լատիներեն սելլա՝
«բնակավայր» բառերից:

ՔՐՈՒԿԼԻՆ. — Նյու-Յորքի վարչական շրջաններից մեկը: Հիմ-
նադրվել է 1625 թվականին, հոլանդացիների կողմից
Լոնդ-Այլենդ կղզու արևմտյան մասում: Հոլանդացիները
տվեցին իրենց հայրենի գյուղի՝ Բրեյկելենի անունը,
որը անգլիացիների կողմից ենթարկվեց որոշ ձևա-
փոխման և դարձավ Բրուկլին:

ՔՈՒԳԵՆՎԻԼ. — Կղզի Խաղաղ օվկիանոսում, Սոլոմոնյան կղզ-
ումների խմբում: Հայտնաբերվել է 1768 թվականին
ֆրանսիացի ծովագնաց կ. Բուգենվիլի կողմից և ի պա-
տիվ նրա էլ կոչվել:

ՔՈՒԴԱՄՊԵՇՏ. — Հունգարիայի մայրաքաղաքը: Քաղաքի ներ-
կա անունը առաջացել է նրա երկու հատվածների՝ Բու-
դա և Պեշտ մասերի միացումից: Բուդան գտնվում է

Դանութի գետի աջափնյա մասում և անունը առաջացել է Բուդահոն առաջնորդի անունից, որը Ատակիայի եղբայրն էր, իսկ Պեշտը գտնվում է ձախափնյա մասում։ Մի այլ մեկնաբանումով՝ Բուդա բառը ունի «խրճիթի» իմաստ, իսկ Պեշտը՝ քարանձավի։

ԲՈՒԻԵՆՈՍ-ԱՅՐԵՍ.— Արգենտինայի մայրաքաղաքը։ Իսպաներեն բուենոս՝ «լավ» և այրես՝ «օդ» բառերի զուգակցումից։ Երբ իսպանացիները Պեղրո Դե Մենդոսի գլխավորությամբ մոտեցան Լա-Պլատայի ափերին, ապա նրանց շատ դուր եկավ թե՛ մաքուր օդը և թե՛ մշտական թեթև քամիները, որոնք փշում էին այս տեղերում։ Եվ համաձայն այն ժամանակվա սովորության, այստեղ հիմնադրած քաղաքը կոչեցին կրոնական անունով՝ «Սուրբ կույս Մարիամի նավահանգիստ», պաշտպան լավ օդի»։ Ժամանակի ընթացքում այս յոթը բառից կազմված ընդարձակ անունից մնացին միայն վերջին երկուսը, այսինքն «լավ օդ» բառերը, որոնք ընկան քաղաքի անվանման հիմքում։

ԲՈՒԻՇՈՒՄԲՈՒԻՐԱ.— Բուրունդի պետության մայրաքաղաքը (Արևելյան Աֆրիկա)։ Գտնվում է Տանգանիկա լճի ափին, առևտրական և տրանսպորտային կարևոր հանգուցակետում, որին և պարտական է իր անվան ծագումով։ Բուժումբուրա տեղական լեզվով նշանակում է «կարտոֆիլի վաճառահանման շուկա», առևտրի վայր։ Այսօր էլ քաղաքը դիտվում է որպես վաճառաշահ բնակավայր՝ հարևան երկրների համար։

ԲՈՒԻՂԱՐԻԱ.— Պետություն Բալկանյան թերակղզում։ Բուղար ժողովրդի անունից, որի մի ճյուղը 6-րդ դարում հաստատվեց Վոլգայի ափերին, իսկ մյուսը՝ 7-րդ դարում անցավ Դանութի այստեղ միահյուսվելով սլավոնական լեզվուն։ Բայց երկրին տրվեց բուղար անունը։

ԲՈՒԽՆԱՐԱ.— Քաղաք Ռւզբեկստանում։ Սանսկրիտերեն վիխարա՝ «վանք» բառից։ Այս անունը կապված է Միջին

Ասիայում բուդդայականության տարածման հետ, մեր թվագրությունից առաջ, առաջին դարերում:

ԲՈՒԻԾՈՆ.—Քաղաք Ֆրանսիայի հյուսիսում: Հիմնել են հռոմեացիները որպես հիշատակ իրենց հարազատ քաղաքի՝ Բոլոնիայի:

ԲՈՒԻՆԱՐԵՍ.—Ռումինիայի մայրաքաղաքը: Բուխարեստի անվանման առաջացման հիմքում ընկած է Բուկուր անձնանունը: Քաղաքը, իրը, կառուցել է Բուկուր անունով մի հովիվ: Մի այլ մեկնարանումով քաղաքը իր անունը ստացել է «բուկուրին» բարից, որը ռումիներեն նշանակում է ուրախություն: Հենց ռումինական Բուկուրեշտ անվանումը՝ նշանակում է «ուրախության քաղաք»:

Այդպես է կոչվել այն պատճառով, որ 16-րդ դարում Վալախիայի իշխանը հաղթանակ է տարել թուրքերի դեմ:

ԲՈՒԻՆՎԱՍԻԴ.—Գյուղ Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունում, Վեյմար քաղաքի մոտ: Անունը առաջացել է գերմաներեն բուխեն՝ «հաճարի» և վալդ՝ «անտառ» բառերի զուգակցումից: Բուխենվալդի զովասուն անտառներում սիրել է հանգստանալ Գյոթեն, իսկ ֆաշիստները այդտեղ ստեղծեցին մահվան ճամբարներ, որոնցում սկսած 1934 թվականից մինչև 1945 թվականը տանջաման արեցին տարբեր ազգերի ազնիվ, նվիրված ու անվեհեր զավակների:

ԲՈՒԿՈՎԻՆԱ.—Պատմական երկիր, որը ներկայումս մըտնում է Ուկրաինայի և Ռումինիայի կազմի մեջ: Անվան առաջացումը գալիս է ռուսերեն բուկ՝ «հաճարենի» բառից:

ԲՈՒՅՆԱԿՍԿ.—Քաղաք Դաղստանում: Նախկինում Թեմիրխան-Շուրա: Քաղաքը 1921 թվականից վերանվանվեց ի պատիվ Դաղստանում սովետական կարգերի համար մարտնչող Ու. Բույնակսկու (1890—1919 թթ.):

ԲՈՒՏԱՆ.—Ֆեոդալական իշխանություն Արևելյան Հիմալայներում, որը 1949 թվականից Հնդկաստանի պրոտեկտորատն է; Անվան առաջացումը սանսկրիտերեն

«բՀու» բառից է, որը տրվել է Տիբեթին և սանտա՞ «վերջ» բառից, որը նշանակում է «Տիբեթի եզրում»։ Այլ խոսքով Տիբեթի սահմանում։

ԲՈՒՏԻԱ. — Թերակղզի Հյուսիսային Կանադայում։ Կոչվել է ի պատիվ Ֆելիքս Բուտի, որը եղել է Զոն Ռոսսի արշավախմբի հանդերձավորողը։ Ռոսսը 1829 թվականին հայտնաբերել է այդ թերակղզին և կոչել նրա անունով։

ԲՈՒՏԻԱ. — Ծոց Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում, Կանադայում։ Անվան ստուգաբանությունը նույնն է, ինչ Բուտիս թերակղզունը։

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱ. — Պատմական մարզ Ֆրանսիայի արևելքում։ Կոչվել է գերմանական բուրգունդական ժողովուրդներից մեկի անունով (5-րդ դար)։

ԲՈՒՐԳԱԹԱԿԱՆ ԻՍՍՀ. — ԻՍՍՀ-ի կազմում։ Անվանումը առաջացել է մոնղոլական ծագում ունեցող բուրյաթ ժողովրդից։ Իսկ բուրյաթ էթնոնիմն էլ նշանակում է «անտառաբնակ»։ Այդպես կոչել են նրանց Գորի տափաստանի բնակիչները։ Մինչև 1958 թվականը հանրապետությունը կոչվում էր Բուրյաթ-Մոնղոլական Հանրապետություն։

ԲՈՒՐՈՒՆԴԻ. — Պետություն Հասարակածային Աֆրիկայում։ Բուրունդի ժողովրդի անունից։ Անկախ պետություն է հոչակվել 1962 թվականին։

ԲՈՒՐՍԱ կամ ՊՐՈՒՍՍ. — Քաղաք Փոքր Ասիա թերակղզու հյուսիս-արևմտյան մասում՝ Թուրքիայում։ Եղել է Բութանիայի մայրաքաղաքներից մեկը։ Պրուսա անվան առաջացումը կապվում է Բութանիայի Պրուսա թագավորի անվան հետ, որը հիմնադրել է քաղաքը մ. թ. ա., 2-րդ դարում։ Թուրքերը Պրուսա անունը գործեցին իրենց եղանակով՝ Բուրսա։ Իր ժամանակին (մինչև եղեռնը) Պրուսայում բնակվում էր տասը հազար հայ, որոնք քաղաքի ծաղկման ու բարգավաճման գործում մեծ դեր են խաղացել։ Ասացվածք էր դարձել հետևյալ արտահայտությունը. «Պատմե տեսնենք Պրուսայի առատությունը»։ Պրուսայի հայերը տարա-

գրվեցին 1915 թվականին։ Կենդանի մնացածները վերադարձան Պրուսա, բայց Քեմալական իշխանությունը նրանց ցիրուցան արեց։ Քչերին հաջողվեց անցնել Բուլղարիա, Հունաստան։

ԹՈՒՅԱԼԻ.— Քաղաք Ամերիկայի Միացյալ Նահանգներում (Նյու-Յորքի շտատում)։ Անգլերեն բուժակո՞ «վայրի գոմեց» (ցուլ) բառից։ Այդպես են անվանում նաև ամերիկյան բիզուններին, որոնք ժամանակին վխտում էին պրերներում։ Զնայած քաղաքը իր անունը ստացել է Բուժալու Ռիվեր գետից, բայց գետի անունն էլ բուժալու (բիզոն) բառից է։

Գ

ԳԱԲՈՆ.— Պետություն Աֆրիկայում, Ատլանտյան օվկիանոսի ափին։ Անկախություն ստացավ 1960 թվականից, իսկ մինչ այդ ֆրանսիական գաղութ էր։ Ներկա Գարոնի ափերին հինգ դար առաջ մոտեցան պորտուգալացիները և օգովի գետաբերանում կանգ առան։ Նրանց զարմանք պատճառեցին գետը շրջապատող փարթամծառերը, որոնք նման էին նավաստու թիկնոցի (պլաշչ), որը պորտուգալերեն կոչվում է գարո։ Գետը կոչեցին Ռիո-դե-Գարո։ Բայց այս անունը ավելի շուտ տարածվեց գետի ավազանում ընկած երկրի վրա և ոչ թե գետի։ Այստեղից էլ առաջ եկավ ներկա Գարոն պետության անվանումը։

ԳԱԲՐՈՎՈ.— Քաղաք Բուլղարիայում, Ստարա-Պլանինա լեռների լանջերում։ Անունը ծագել է բուլղարերեն գարբ՝ «բոխի» (ծառի մի տեսակ) բառից։ Շրջակայքում եղած անտառներում շատ կա բոխի։

ԳԱԳՐԱ.— Քաղաք Սև ծովի ափին, Արխազիայում։ Անվան առաջացումը կապվում է Հունարեն ագրիկ՝ «վայրենի» բառի հետ։ Հուները ագրի ասելով նկատի են ունեցել

այն երկրներին ու ժողովուրդներին, որոնք հեռու էին
կանգնած հունական քաղաքակրթությունից:

ԳԱԶԱ. — Տերիտորիա Արաբական Միացյալ Հանրապետու-
թյունում (Եգիպտոս): Երրայերեն գազա՝ «գանձ» բա-
ռից: Անցյալում իրը եղել է փղշտացիների գանձերի
պահպանման տեղ: Համարվել է նրանց մայրաքաղաքը:

ԳԱԶԼԻ. — Ուզբեկստանում գտնվող գազի արտադրության
կենտրոնը:

ԳԱՂԱՊԱԳՈՍՅԱՆ ԿՂՋԻՆԵՐ. — Խաղաղ օվկիանոսում. պատ-
կանում է էկվադոր պետությանը: Կղզիները եվրոպա-
ցիների կողմից հայտնագործվել են 1535 թվականին: Կղզիների անվանումը խսպաներեն լեզվից է և նշանա-
կում է «Կրիաների կղզիներ»: Այդպես կոչվեցին այն-
տեղ հանդիպող հսկա կրիաների պատճառով: Ի դեպ,
ներկայումս այդ արշիպելագը էկվադորի կողմից պաշ-
տոնապես կոչվում է Կոլոն կղզիներ՝ ի պատիվ Քրիս-
տափոր Կոլումբոսի:

ԳԱՂԻՍԻԱ. — Պատմական մարզ՝ իսպանիայում: Կելտական
գալլ ցեղի անունից, որոնք բնակվում էին այստեղ
դեռ մեր էրայից առաջ: Հետագայում ենթարկվեցին ոռ-
մանիզացիայի:

ԳԱՄԲԻԱ. — Պետություն Արևմտյան Աֆրիկայում: Անունը
առաջացել է տեղական լեզվով գամբու՝ «գետ» բառից:
Հետագայում այն ձևափոխվել է պորտուգալացիների
կողմից և ավելացվել «իա» մասնիկը, որն ունի երկրի
իմաստ:

ԳԱՆԱ. — Պետություն Արևմտյան Աֆրիկայում, որը մինչև
1957 թվականի մարտի 6-ը հայտնի էր Ոսկե Ափ ան-
վան տակ: Այդ անունը նրան տվել էին պորտուգալա-
ցիները, որոնք 15-րդ դարում մոտեցան նրա ափերին:
Միջին դարերում այստեղ եղել է Գանա անունով նեգ-
րական մեծ պետություն: Այդ անունը վերականգնվեց,
երբ անգլիական Ոսկե Ափ գաղութը հոչակվեց անկախ
պետություն:

ԳԱՆԳԵՍ. — Գետ Հնդկաստանում, որը թափվում է Յենգալաշ կան ծոցը: Հնդկերեն գանգա քառից, որը գետի իմաստ ունի: Հնդիկները նրան «Մայր Գանգես» են անվանում:

ԳԱՌԻՆԻ. — Երևանից քսանութ կիլոմետր հարավ-արևելք գտնվում է Գառնի բնակավայրը, որը մտնում է Արովյանի շրջանի մեջ: Գառնին գտնվում է Աղատ գետի աջ ափին, որի անդամախոր ձորի վրա էլ ձգվում են Գառնիի բերդի ավերակները: Ժամանակին Գառնին եղել է անառիկ բերդ և ծառայել հայոց արքաների համար ամառանոցային վայր: Այս բարձրադիր մասում են գտնվում նաև Գառնիի հեթանոսական տաճարի փլատակները: Գառնի անվանման ստուգաբանությունը պատկանում է այն անունների թվին, որոնք մեզ են հասել պատմագիր Մովսես Խորենացու միջոցով: Ինչպես հայտնի է, դեռ վաղ անցյալում շատ ժողովուրդների մոտ, այդ թվում և հայերի, ծագեց տեղանունների առաջացման ավանդական ստուգաբանության եղանակ: Անվանման առաջացումը կապում էին Հայկազյան նահապետների, դյուցազնների կամ որևէ ավանդության հետ: Ճիշտ է, որանք մնում են որպես ավանդական անուններ, բայց չէ՞ որ Խորենացու խոսքերով ասած ավանդություններում էլ «այլաբանորեն ճշմարտություն կա թաքնված»: Ի վերջո, այդ ստուգաբանություններն էլ ժողովրդական ըստ տեղծագործություններ են և հենց դրանով էլ հաճելի ժառանգություն: Գառնի տեղանվան ստուգաբանությունը կապվում է Հայկազյան Գեղամ նահապետի թոռան՝ Գառնիկի անվան հետ: Գեղամը, երբ Արմավիրից գնում է Հյուսիս, դեպի այն գավառը, որը մեր պատմության մեջ, Գեղամի անունով, հայտնի է դարձել Գեղարքունի անվամբ, ճանապարհին կանգ է առնում ներկա Գառնիի տեղում, որը իր գեղատեսիլ բնությամբ գրավում է նահապետին: Հրապուրված այդ բնությամբ, Գեղամը մի դաստակերտ է հիմնում, որը թողնում է իր թոռանը՝ Գառնիկին: Իսկ ինքը շարունակում է ճամփան դեպի Սևանի ավաղանը:

ԳԱՍԿՈՆԻԱՅ.— Ֆրանսիայի պատմական պրովինցիաներից մեկը: Բասկ ժողովրդի անունից: Լատիներենում սկզբում կոչվել է Վասկոնիա, որը ժամանակի ընթացքում դառնել է Գասկոնիա:

ԳԱՏԵՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ.— Լեռներ, որոնք եղերում են Հինդուա-
տան թերակղզին արևելյան կողմից: Բացատրությունը
տես Գատեր Արեմայան:

ԳԱՏԵՐ ԱՐԵՎՄՏՅԱՆ.—Հինդուստան թերակղզու արևմտյան
մասը եղերող լեռներ։ Թէ՛ Արևելյան և թէ՛ Արևմտյան
ֆատերը հեռվից վիթխարի սանդուղքի տեսք ունեն։
Հենց գատ բառը հինդու լեզվով նշանակում է «աստի-
ճան»՝ սովորաբար դեպի ջուրը տանող անկումներով։

ԳԱՐՈՒՆՆԱ. — Դես Ֆրանսիայում: Խսպաներեն գարոննա՝ «լեռ-նալին» կամ «արագոնթագ» գետի իմաստով:

ԳԱՐԻԲԻԴԱՆԿԱՐ.—Հիմալայան լեռների ամենաբարձր գագաթներից մեկը (7150 մ): Սանսկրիտերեն գառուի՝ «գեղեցիկ» կամ «սպիտակ» և սանկար՝ «օրհնյալ», այսինքն «գեղեցիկ» և օրհնյալ լեռա: Հնդիկները Գառուրիզանկարը նույնպես համարում են աստվածների կացարան: Մինչև 1913 թվականը Գառուրիզանկարը սխալ-մամբ նույնացնում էին Էվերեստի (Չոմոլունգամայի) հետ:

ՊԴԱՆՍԿ.—Քաղաք և նավահանգիստ կեհաստանում։ կեհերեն գոդիսի՝ «սպասել» բառից է, նավահանգստի իմաստով։ Մինչև 1945 թվականը պաշտոնապես կոչվում էր Դանցիգ։

ԳԵՂԱՄԱ ԾՈՎ.— Սեանա լճի պատմական անվանումը: Այդպիսի է կոչվել Գեղամ նահապետի անունով: Հայ մատենագիրները այդ ստուգաբանությունը վերցրել են պատմահայր Մովսես Խորենացուց:

Գեղամ նահապետը Ամասիայի որդին էր. նա պար-
թևահասակ էր ու գեղեցիկ: Հստ մեր ավանդական
պատմության Գեղամը գահակալել է 50 տարի, այն է՝
մ.թ.ա., 1908—1858 թթ.: Նա գաղթել է հարավից՝
Արդարացից, գնացել Հյուսիս և բնակություն է հաս-

տատել Սևանա լճի ափին: Նրա անունով ծովը կոչվել է Գեղամա, իսկ լճին շրջապատող գավառը՝ Գեղաքունի: Ավանդությունը Գեղամի անվան հետ է կապում Գեղամաշեն անունները: Ի դեպ, մեր նախնիները Հայկական բարձրավանդակում գտնվող լճերին ծով են կոչել: Հիշենք Վանա ծով, Գալլատվա ծովակ անունները:

ԳԵՂԱՄԱ ԼԵՌՆԵՐԸ.— Այս լեռները գտնվում են Երևանից հյուս սիս-արևելք: Ամենաբարձր գագաթը Աժդահակն է, որի բարձրությունը, եթե ծովի մակերեսուցից հաշվենք, կլինի 3.589 մետր. իսկ Երևանի համեմատությամբ 2.589 մետր: Գեղամա լեռները հայտնի են ոչ միայն բարձր դիրքով, այլև բազմաթիվ հովիտներով, որոնք ամուանը իրենց թափապատ մարդագետիններով ու սառնորակ աղբյուրներով գառնում են հիանալի լայ-լաներ: Գեղամա լեռները ջրային խոշոր շտեմարաններ են թե Սևանա լիճը թափվող մեծ ու փոքր գետերի, թե Երևանին սառնորակ ջուր մատակարարելու համար:

Լեռների անվան ստուգաբանությունը ավանդական է և կապված է Գեղամ նահապետի անվան հետ: Օտար-ները նվաճելով մեր երկիրը այս լեռների անունը աղ-ճատել և դարձրել են Աղմաղան:

ԳԵՂԱՄԱՐԱԿԱԿ.— Գեղամաբակը եղել է Սյունյաց աշխարհի Գեղարքունի գավառի հին քաղաքներից մեկը, որի ան-վան ծագումը կապվում է Գեղամ նահապետի անվան հետ: Սակայն Գեղամաբակը հետագայում վերանվան-վել է Վասակաշեն Սյունյաց նահապետ Գաբուռն Վա-սակ իշխանի անունով, որը ապրել է 9-րդ դարում և նրան շպետք է շփոթել մարզպան Վասակ Սյունիի հետ, որն ապրել է հինգերորդ դարում: Հետագայում Վասա-կաշենն էլ է կործանվել: Շատ ուշ, 19-րդ դարի սկզբին, Արևմտյան Հայաստանից՝ Դիագինից եկող գաղթա-կանները Վասակաշենի տեղում հիմնեցին ներկա Վար-դենիսը (Բասարգելարը):

ԳԵՂԱՄԱՇԵՆ.— Գեղամաշեն է կոչվել Այրարատ նահանգի գավառներից մեկը, որը ընդգրկել է Հրազդան գետի և

Գեղամա լեռների միջև ընկած տարածությունը: Գեղամաշեն գավառը մեր պատմության մեջ հայտնի է նաև Մաղաղ գավառ անունով: Գեղամաշեն է կոչվել Գեղամ նահապետի անունով և ավելացվել «շեն» մասնիկը, որը ունի բնակեցված, մարդաբնակ տեղի իմաստ:

ԳԵՂԱՄԱՎԱՆ. — Անունը ծագել է Գեղամ նահապետի անունից և ավելացվել ավան մասնիկը, որը ունի «բնակավայրի», «տեղի» իմաստ: Գեղամավանը գտնվում է Սեփանի շրջանում, Հրազդանի վերին հոսանքում, Մաղեկունյաց գեղատեսիլ լեռներին հարող մասում: Վաղ անցյալում այս գյուղը, որը գտնվել է պատմական Վարաժնումիք գավառում հայտնի է եղել Շալիս անունով: Հետագայում ձևափոխվել և դարձել է Շահրիզ: Մակվից վերաբնակվող հայերը տասնիններորդ դարի երեսունական թվականներից գյուղը այդպես էլ կոչեցին: Մեկ դար հետո գյուղը վերանվանվեց Գեղամավան:

ԳԵՂԱՄԻ. — Գառնիի պատմական անվանումը Գեղամի է եղել: Գեղամ անվանը ավելացված «ի» տառը ցույց է տալիս պատկանելիությունը, այսինքն Գեղամին պատկանող ավան: Ըստ Մովսես Խորենացու, Հիմնել է Գեղամ նահապետը: Այդ մասին Խորենացին գրում է, որ Գեղամը ներկա Գառնիի տեղում հիմնում է մի դաստակերտ, այսինքն շեն կամ ավան և անունը դնում Գեղամի, որը հետագայում նրա թոռան՝ Գառնիկի անունով կոչվեց Գառնի:

Գառնին ներկայումս դարձել է Հայաստանի տեսարժան վայրերից մեկը: Նա մարդկանց գրավում է ոչ միայն իր հեթանոսական տաճարով (որը ներկայումս վերականգնվում է), այլև իր գեղատեսիլ բնությամբ:

ԳԵՂԱՐՔՈՒԽԻ. — Սյունյաց աշխարհի գավառներից մեկն է, որը շրջապատում է Սևանա լիճը հարավից և հարավարևմուտքից: Ընդգրկում է ներկայիս Կամոյի և Մարտունու շրջանները: Գեղարքունի գավառը իր անունը ստացել է Գեղամ նահապետից: Գեղարքունի գավառը

կոչվել է նաև Աշխարհ Գեղամա կամ Գավառ Գեղա-
մա: Հաճախ Սևանա լիճը Գեղարքունի է կոչվել:

Գեղարքունի է կոչվում նաև կարմրախայտ և համեղ
ձուկը, որը աճում է Սևանա լճում: Հայաստանի մյուս
գավառների նման Գեղարքունին էլ ենթարկվել է ար-
շավանքների և նվաճումների, որի հետևանքով էլ ժա-
մանակին համարյա հայաթափ է եղել: Ներկա բնակիչ-
ները հիմնականում եկել են Արևմտյան Հայաստանի
Հին Բայազետի, Դիաղինի և Ալաշկերտի գավառներից:
ԳԵՂԱՐԴ կամ ԱՅԻ ՎԱՆՔ.—Գտնվում է Երևանից հարավ-
արեելք, նրանից երեսունհինգ կիլոմետր հեռավորության
վրա, Ազատ գետի վերին հոսանքում, նրա աջ ափին,
Գեղարդածոր կոչվող գեղատեսիլ կիրճում: Դա հայ վար-
պետների ու ճարտարապետների հիանալի ստեղծագոր-
ծությունն է՝ միակտուր քարից կերտված մի վանք, որն
ունի երկհարկանի սյունազարդ տաճարներ և դրանց
կից էլ եկեղեցի: Քանի որ տաճարները կերտվել են
լեռան լանջին՝ այրերի մեջ, դրա համար էլ իր ժամա-
նակին ստացել են Այրի վանք կամ Քարալըների վանք
անվանումը, որը հետագայում փոխարինվեց Գեղարդ
անունով: Ինչպես հայտնի է գեղարդը հին ժամանակ-
ների պատերազմական գործիք է եղել՝ բաղկացած
փայտե կոթից, որի գլխին ամրացած էր տափակ, եռա-
նիստ, սրածայր, երկաթյա տեղ: Այն գեղարդը, որով,
ըստ Նոր Կտակարանի, Գողգոթայում խաչված Քրիս-
տոսի կողը խոցեց հարյուրապետը, դարձավ քրիստո-
նիական աշխարհի համար սրբություն: Այդ նվիրական
տեղը՝ գեղարդը, մինչև տասնշորսերորդ դարը պահպատ
էր Ս. Էջմիածնում: Բայց պատմական իրադրություննե-
րի անբարենպաստ պայմանների և հատկապես մոնղոլ-
թաթարական արշավանքների հետևանքով հայ ժողո-
վրորի համար ստեղծվեց մոալլ և անապահով ժամա-
նակաշրջան: Ուստի հարկ եղավ գեղարդը Էջմիածնից
տեղափոխել ավելի ապահով, թշնամու աշքից հեռու մի

անկյուն։ Այդպիսին եղավ Այրի վանքը։ Մոտ հինգ դար այստեղ պահպեց գեղարդը և ժողովուրդը Այրի վանք ուխտ գնալիս, ուղղակի ասում էր. «Գնում ենք Ս. Գեղարդ ուխտի» կամ «Գնում ենք Գեղարդավանք»։ Ժամանակի ընթացքում էլ նվիրագործվեց այս վերջին անունը՝ Այրի վանքը փոխարինվեց Գեղարդավանք անունով։ Գեղարդ անունը ստացավ ոչ միայն վանքը, այլ Գեղամա լեռների մի ճյուղը, որը ձգվում է դեպի Հարավ և կոչվում է Գեղարդասար։ Այստեղ է առաջացել այն կիրճը, որով հոսում է Ազատ գետի վերին հոսանքը։ Զորք նույնպես կոչվեց Գեղարդածոր։

ԳԵԼԵՆՋԻԿ. — Կուրորտային քաղաք Կրասնոդարի երկրամասում։ Անունը թուրքերեն լեզվից է և նշանակում է «Փոքր Հարս»։ Այս անունը, որը տրվում է այս գեղատեսիլ կուրորտին, գալիս է անցյալից և ունի բավական տիտոր պատմություն։ Իր ժամանակին այստեղ կատարվել է գեղեցիկ ստրկու՛իների վաճառք։ Այստեղից այդ «փոքր Հարսերին» տանում էին թուրքիա և Ղրիմ՝ սովորաբանների, խանների և փաշանների հարեմները։

ԳԵՂԻՐԳԻԵՎԿ. — Քաղաք Ստավրոպոլի երկրամասում։ Հիմնադրվել է 1777 թվականին որպես բերդ և այդպես է կոչվել ի պատիվ Գեղրգիևսկայա եկեղեցական տոնի։ Հետագայում, 1786 թվականին, դարձել է քաղաք։

ԳԵՏ-ՎԱՐԴՅԱՆ. — Գետ Արևմտյան Հայաստանում։ Հին թայադեմություն ունենալու վեհական ստուգաբանությունը ավանդական է և կապվում է 5-րդ դարի հայկական հերոսամարտի՝ Վարդանանց պատերազմի հետ։ Ավանդությունը պատմում է, որ Վարդանը իր զորքով պարսիկների դեմ Ավարացրի գաշտ գնալու ժամանակ այս տեղերով անցնելիս, ճանապարհին ջուր չի գտնում։ Ամ-

բողջ զորքը ծարավից ուժասպառ եղած չի կարողանում շարունակել ճանապարհը՝ Վարդանը ծնկաշոք աղոթք է աստծուն՝ զուր խնդրում։ Աստված լսում է նրա աղոթքը և աղբյուրներ են բխում ու հագեցնում զորքի ծարավը։ Այդ աղբյուրներն էլ միախառնվելով կազմում նն գետ, որը հայերը Վարդանի անունով կոչում էին Գետ-Վարդան։ Այդ անունը հայերի կողմից համարվում էր նվիրական անուններից մեկը, իսկ գետի ակունքները՝ ծառացում որպես ուխտատեղի։

ԳԵՐՄԱՆԻԱ.— Պետություն Կենտրոնական Եվրոպայում։ Գերման անունը ըստ Տակիտոսի առաջացել է գերմաներեն վար՝ «ռազմիկ» և ման՝ «մարդ» բառերի միացումից, որը նշանակում է ռազմատենչ մարդ։ Այդ անունը նըրանց տվել են իրենց հարևան գալլերը։ Մի այլ ստուգաբանությամբ, գերման նշանակում է «անտառի մարդիկ»։

ԳԻԶԱ.— Քաղաք Արաբական Միացյալ Հանրապետությունում։ Գտնվում է Կահիրեից ոչ հեռու, փաստորեն դարձել է վերջինիս արվարձանը։ Անունն առաջացել է արաբերեն լեզվից և նշանակում է ավազուտային։ Գիզայի մոտ են գտնվում եգիպտական նշանավոր բուրգերը և սֆինքսը։

ԳԻԼԲԵՐՏ.— Կղզիախոսմբ Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասում, Միկրոնեզիա խմբում։ Այդպես է կոչվել ի պատիվ անգլիական ծովագնաց Ջ. Գիլբերտի, որը 1783 թվականին հետազոտեց այս կղզիները։ Կղզիները հանդիսանում են անգլիական տիրապետություն և հայտնի են «Գիլբերտա և Էլիսա» անվամբ։

ԳԻԼԵԱ.— Խոնավ արևադարձային ընդարձակ անտառային տարածություններ Ամազոնիայում, որը այլ կերպ հայտնի է նաև Սելվաս անունով։ Այս երկու անուններն էլ իրենց արմատում ունեն անտառ բառը։ Առաջինը՝ գիլեան հունարենից է, իսկ սելվասը լատինական ծառում ունի։

ԳԼԱԶԳՈ.—Քաղաք Մեծ Բրիտանիայում։ Անվանումը կելտեցին նշանակում է «կանաչ անտառ»։ Գլազգոն Շոտլանդիայի արդյունաբերական խոշոր կենտրոնն է։

ԳՈԲԻ.—Անապատ Մոնղոլիայում և Հյուսիսային Չինաստանում։ Այդպես է կոչվում այն ընդարձակ անապատը, որը հիմնականում ընկած է Կենտրոնական Ասիայում։ Աշխարհագրական բազմաթիվ քարտեզներում և գրականության մեջ այս անապատը հայտնի է Գոբի կամ Շամու անունով։ Առաջ ավելի գործածական էր Շամու, իսկ ներկայումս Գոբի անունը։ Շամու շինարեն լեզվից է և նշանակում է «ավագուտ անապատ», իսկ գոբի մոնղոլերեն «տափաստան» բառից է։ Չինացիները Շամու կոչեցին այն պատճառով, որովհետև հարավից եկողը իրոք որ հանդիպում է ավելի շատ ավագով պատաժ տարածությունների։ Հյուսիսում գերակշռում է տափաստանը։ Այստեղից էլ այդ անունների առաջացումն ու տարածումը։ Ժամանակակից աշխարհագրական գրականության մեջ ավելի շատ մնաց Գոբի անվանումը որպես ավելի հարմար և սաղական այս ընդարձակ տարածության համար։ Քանի որ նրա հյուսիսային մեծ մասը տափաստան է և ոչ ավագուտ անապատ։ Ուստի գործածական դարձավ մոնղոլերեն տափաստան բառը։ Մոնղոլները «գոբի» բառի տակ հասկանում են հարթավայր, որը ծածկված է նոսր չորադիմացկուն խոտային բուսականությամբ։

ԳՅՈՏԵԲՈՐԳ.—Քաղաք հարավային Շվեդիայում։ Գտնվում է Գոտա-էլֆ գետի Կատտեգատ նեղուցը թափվելու տեղում։ Շվեցերեն նշանակում է «Գոթերի ամրոց» կամ «Գոթերի բերդ»։

ԳՈԹԼԱՆԴ.—Կղզի Բալթիկ ծովում։ Հին գոթերի էթնոնիմից և շվեցերեն լանդ՝ «երկիր» բառից։ Այսինքն գոթերի երկիր։

ԳՈՄԵԼ.—Քաղաք ԲՍՍՀ-ում։ Հիմնադրված է Սոժ գետի բարձրագիր ափին։ Անունը առաջացել է հին ուստերեն գոմոլա բառից, որը նշանակում է բլուր, բարձունք։ Կա նաև

մի այլ բացատրություն։ Հստ ավանդության Սոժ գետում, քաղաքի դիմաց եղել են ծանծաղուաներ։ Երբ նավակները հանդիպում էին գրանց, ապա բնակիչները ձայն էին տալիս Գուգուգո մել՝ «ծանծաղուա»։ Այստեղից էլ քաղաքի Գոմել անունը։

ԳՈԴԱՎԱՐԻ.— Գետ Հնդկաստանում։ Սկիզբ է առնում Արևմբայան Գատերից և թափվում է Բենգալական ծոցը։ Անվան առաջացումը կապվում է տելուգու լեզվի գողերուի հետ, որը նշանակում է «սահման»։ Այսինքն «Սահմանային գետ»։

ԳՈԼՅՈՍԹԻՄ.— Տաք հոսանք Ատլանտյան օվկիանոսում։ Անվան ծագումը անգլերեն լեզվից է և կազմված է գոլֆ՝ «ծոց» և ստրիմ՝ «տաք» բառերի զուգակցումից։ Այս անունը հոսանքը ստացավ 1772 թվականին գիտնական Բենիամին Ֆրանկլինի առաջարկով։ Մինչև այդ կոչվում էր Ֆլորիդիայի հոսանք, որի մոտով էլ նա անցնում է դեպի Նորմանիան Եվրոպա։ Հասնելով 40 աստիճան արևմտյան երկայնության տակ, Գոլֆստրիմը ստանում է Հյուսիս-Ատլանտյան հոսանք անվանումը։

ԳՈՂԳՈԹՅՈՒՆ.— Լեռ երուսաղեմի մոտ։ Գողգոթա երրայերեն լեզվից է և բառացի նշանակում է «գագաթ» կամ «սար»։ Ժամանակի ընթացքում գողգոթա բառը դարձավ հատուկ անուն և կապված է այն ավանդության հետ, ըստ որի նրա գագաթին խաչվել է Քրիստոսը։ Հետագայում Գողգոթա անունը թևավոր խոսքի ուժ ստացավ և խորհրդանշում է գերագույն տառապանքով նահատակում։ Օրինակ, ասում են Դեր-Զորը հանդիսացավ հայ Գողգոթան։

ԳՈՏԽՈԲ.— Բնակավայր Գրենլանդիայի հարավ-արևմտյան ափին։ Հիմնադրվել է դանիացիների կողմից 1721 թվականին և եղել է դանիական առաջին բնակավայրը Գրենլանդիայում։ Գոտխոբը անվանումը դանիերեն գոտխոբ կամ գոտհաաք բառից է, որը նշանակում է «Բարեհույս»։

ԳՈՏՎԱԼԴՈՎ. — Քաղաք Զեխոսլովակիայում։ Ալդակս է կոչվել ի պատիվ Կլիմենտ Գոտվալդի, Զեխոսլովակիայի պրեզիդենտի (1896—1953 թթ.):

ԳՈՐԻ. — Քաղաք Սովետական Վրաստանում։ Վրացերեն գույս «լեռ», «բլուր» բառից, «լեռների մեջ» իմաստով։ Նրա մոտ եղած բարձրանիստ լեռան վրա դեռևս հնում եղել է Գորիս-Ցիխե բերդը։

ԳՈՐԿԻ. — Քաղաք ՌԽՖՍՀ-ում։ Ի պատիվ ոռւս գրող Մաքսիմ Գորկու (1868—1936 թթ.): Մինչև 1932 թվականը կոչվում էր Նիժնի-Նովգորոդ (ոռւսերեն նիժնի՝ ստորին, նովի՝ նոր և գորոդ՝ քաղաք բառերից):

ԳՈՐՆՈ-ԱԼԹԱՅԱԿ. — Լեռնային Ալթայի ինքնավար մարզի կենտրոն։ Բնիկ ժողովուրդը ալթայացիներ են, իսկ երկիրն էլ լեռնոտ։ այստեղից էլ Գորնո-Ալթայսկ անունը։

ԳՎԱՂԱԼԿԻՎԻՐ. — Գետ Խսանիայում։ Հոսում է Անդալուգիայով և թափվում Ատլանտյան օվկիանոս։ Գվաղալկիվիր անունը արաբերեն վաղի-ալ-կերիր անվանման փոքր-ինչ փոփոխված ձևն է, որը նշանակում է «մեծ գետ»։

ԳՎԱՂԵԼՈՒՊԱ. — Կղզի Փոքր Անտիլյան խմբում։ Ֆրանսիական տիրապետություն։ Հայտնաբերվել է 1494 թվականին Քրիստափոր Կոլումբոսի կողմից։ Նա այդպես կոչեց լեռները, որովհետև հիշեցնում էին Խսանիայի Գվաղելուպա անունը կրող լեռները։

ԳՎԱՂԻԱՆԱ. — Գետ Պիրենեյան թերակղզում։ Արաբերենում վաղի՝ «գետ» և անաղի՝ «բաղ» բառերից։ Այսինքն գետ-բաղ։ Ալդակս է կոչվել, որովհետև վերին հոսանքում մերժ կորչում է գետնի տակ, մերժ երևում, ալսինքն բաղի պես սուզվում և դուրս դալիս։ Արաբական վաղի բառը ձևափոխվելով իսպաներենում դարձել է գվաղի, այստեղից էլ Գվաղիանա։

ԳՎԱՏԵՄԱԼԱ. — Պետություն և նրա մայրաքաղաքը Կենտրոնական Ամերիկայում։ Գվատեմալա անվանումը հնդկա-

կան ցեղերից մեկի լեզվից է: Բառացի նշանակում է «փտած ծառ»: Բայտ ավանդության, երբ խսպանացիները նվաճեցին այս երկիրը, ապա այստեղ գտան անանցանելի անտառներ և հաղարավոր փտած ծառեր:

ԳՎԱՐԴԻԱՅՑՈՒՅՑ.— Հրվանդան Սոմալի թերակղզում: Աֆրիկայի ծայրը արևելքում: Անունը ծագում է պորտուգալերեն: աղավաղված գուարդաֆու «զգուշացիր» բառից: Իբր թե հրվանդանը ունեցել է մագնիսի հատկություն, նրա մոտով անցնող նավերի երկաթային մասերը մագնիսը ձգել-հանել է և նավերը խարիսվել ու խորտակվել են:

ԳՎԻԱՆԱ.— Երկիր Հարավային Ամերիկայում: Անունը առաջացել է հնդիկ գուայնարես ցեղից, որը համապատասխանում է խսպաներեն «պատվելիներ» բառին: Գվիանան բաժանվում է երեք մասի՝ Բրիտանական, որը 1966 թվականից անկախ պետություն է, Գվիանա անունով: Ֆրանսիականը և Նիդերլանդականը մնում են որպես տիրապետություն: Նիդերլանդական Գվիանան կոչվում է նաև Սուրինամ:

ԳՎԻՆԵԱ.— Պետություն Արևմտյան Աֆրիկայում, որն անկախություն ստացավ 1858 թվականին: Գվինեա անունը գալիս է վաղ միջնադարից, ֆուլբե ցեղի ջեննե կամ Գուինե մեծ քաղաքից: Գուինե անունը Գվինեա դարձած սկզբնական շրջանում տրվել է այն ափին, որը հարում է Ատլանտյան օվկիանոսին: Ժամանակի ընթացքում այդ անունը տարածվել է նաև ծոցի վրա: Ներկայում Գվինեա անունով հայտնի են նաև պորտուգալական և խսպանական գաղութները:

ԳՎԻՆԵԱԿԱՆ ԾՈՅ.— Ծոյ Ատլանտյան օվկիանոսում, որը ողողում է արևադարձային Աֆրիկայի արևմտյան ափերը: Անունը ստացել է Գվինեական ափից:

ԳՐԱՆ-ԶԱԿՈ.— Դաշտավայր-տափաստան Արգենտինայի և Պարագվայի միջև: Խսպաներեն գրան՝ «մեծ» և հնդիկեն (գվարանի ցեղի) լեզվով շակո՛ «որսորդական դաշտ»:

ԴՐԱՑ.—Քաղաք Ավստրիայում։ Սլավոնական գրադեյ բառի գերմանական ձևն է, որը նշանակում է «փոքր քաղաք»։

ԳՐԵՆԼԱՆԴԻԱՆ.—Սառուցյալ և Ատլանտյան օվկիանոսների սահմաններում գտնվող աշխարհի ամենամեծ կղզին։ Անվանումն ունի նորմանական ծագում, նշանակում է «կանաչ երկիր»։ Գրենլանդիան հայտնաբերվել է 10-րդ դարում ներկա նորվեգացիների նախահայրերի՝ նորմանների կողմից, որոնք համարվում էին լավ ծովագնացներ և մինչև այդ արդեն հայտնաբերել էին Խոլանդիան և այնտեղ բնակություն հաստատել։ Գրենլանդիայի ափերին առաջին անգամ 982 թվականին մոտեցել է երիկ Տորվալդսենը, որը հայտնի է երիկ Շիկահեր մականունով։

Աշխարհագրական օբյեկտների անունները սովորաբար համապատասխանում են տվյալ վայրի կամ բնությանը, կամ պատմությանը։ Սակայն կան նաև բացառություններ։ Տվյալ դեպքում «կանաչ» անունը Գրենլանդիային բոլորովին էլ չի սագում։ Ընդհակառակը, նրան հարմար էր միայն «Սառցե երկիր» անվանումը, որը, ի դեպ, տրվել է նրանից ավելի բարենպաստ պայմաններում գտնվող մեկ ուրիշ կղզու՝ Խոլանդիային։ Գրենլանդիայի «կանաչ երկիր» անվանման բացատրությունը երկու կերպ են տալիս։ Մասնագետների մի մասը այն կարծիքին է, որ երբ 10-րդ դարում առաջին անգամ նորմանները հայտնաբերել են այս կղզին, հեռվից նրա ափերը կանաչ են երևացել, որովհետեւ արեգակի ճառագայթները սառուցցի բյուրեղների մեջ բեկվելու հետևանքով կանաչ էին երևում։ Մյուս տեսակետն էլ ասում է այն մասին, որ այդ անհյուրընկալ երկիրը կանաչ է անվանվել նրա առաջին հայտնաբերողի կողմից, որպեսզի սերունդները հրապուրվեն այդ անունով և ձգտեն գնալու դեպի այդ երկիրը։

ԳՐԵՆՈԲԻ.՝ Քաղաք հարավ-արևելյան Ֆրանսիայում։ Իզեր դեպարտամենտի վարչական կենտրոնը։ Լատիներեն

Գրացիանոպելիսի փոփոխված ձևն է: Առաջացել է արևմտա-հռոմեական Գրացիան կայսրի անունից (345—383 թթ.) և ավելացվել պոլիս մասնիկը, որը հունարենում ունի քաղաքի նշանակություն:

ԳՐԻԳՈՐԻՈՂՈՂ (ԳՐԻԳՈՐԻՈՂՈՂԻՄ).— Քաղաքատիպ ավան Մոլդավական ՍՍՀ-ում: Գտնվում է Քիշինյով քաղաքից հյուսիս-արևելք, Դնեստրի ափին: Քաղաքը հիմնադրվել է 1792 թվականին, Թուրքիայից եկած հայերի կողմից: Այսպես է կոչվել ի պատիվ Գրիգորի Պոտյումկինի, որը Ռուսաստանում բարձր դիրք ունեցող անձերից էր և Եկատերինա Զ-ի ֆավորիտը: Միաժամանակ և գեներալ նահանգապետ էր Հարավային կայսրության տիրապետությունների: Գրիգորի Պոտյումկինը ոռուական այն բարձրաստիճան անձերից էր, որոնք շարունակելով Պյոտր առաջինի ծրագիրը նպաստում էին ոռուական կայսրության սահմանների ընդարձակմանը թե դեպի Սև ծովյան շրջանները և թե դեպի Հյուսիսային Կովկաս: Այդ ընդարձակ և համեմատաբար նոսր քնակեցված տարածությունները յուրացնելու համար ոռուներ՝ ուկրաինացիներ քիչ էին, դրա համար արքունիքը շահագրգուված էր նաև հայերին ներգաղթեցնել որպես քրիստոնյա, հուսալի և ձեռներից տարր: Նոր վայրերում հայերին արլում էին արտոնություններ և նյութական օգնություն: Այդպես է կատարվել Գրիգորիոպոլի, Նոր Նախիջևանի, Արմավիրի, Մողդոկի, Ղղլարի հիմնադրումը: Այդ գաղութների ստեղծումը համընկնում էր ոռուական կայսրության շահերին՝ երկու առումով. թե առևտրական գործի զարգացման և թե նոր նվաճված տերիտորիաներ հուսալի քրիստոնյա տարրով ընակեցնելու տեսակետից: Ինչ վերաբերում է հայ գաղթականներին, ապա նրանք իրենց հերթին նույնպես շահագրգուված էին այդ գաղութները հիմնելու գործում, քանի որ այդ տեղերում նրանք գտնում էին խաղաղ կյանք և աշխատանքի բարենպաստ պայմաններ, որոն-

ցից նրանք զուրկ էին թե օտտոմանյան կայսրության սահմաններում և թե պարսկական տիրապետության տակ:

ԳՐԻՆԵ. — Հրվանդան Հյուսիսային Ֆրանսիայում: Գտնվում է Պա-դե-Կալե նեղուցի ամենանեղ (32 կմ) մասում: Անունը կազմված է ֆրանսերեն գրի՝ «մոխրագույն» (մառախուղի իմաստով) և նե՛ «քիթ» (հրվանդանի իմաստով) բառերից: Մոխրագույն հրվանդան, քանի որ այս մասում մառախլապատ օրերի քանակը շատ է:

ԳՐԻՆՎԻՉ. — Լոնդոնի արվարձաններից մեկը: Անվանումը առաջացել է հին անգլերեն գրին՝ «կանաչ» և բիշ՝ «ծոց» բառերի միացումից: Այսինքն «Կանաչապատ ծոց»: Խոսքը վերաբերում է Թեմզայի գետաբերանում եղած ծոցին: Գրինվիչի վրայով է անցնում միջազգային սկզբնական միջօրեականը, որտեղից և սկսվում է մեր ժամային գոտին կամ, ինչպես ասում ին, զրո ժամը:

ԳՐՅՈՒԻՆՎԱԼԴ. — Քաղաք Գերմանիայում: Գերմաներեն գըրյուն՝ «կանաչ» և վալդ՝ «անտառ» բառերից: Այս վայրում 1409—1411 թվականներին տեղի է ունեցել Գրյունվալդյան ճակատամարտը:

ԳՐՈԴՆՈ. — Քաղաք Բելոռուսիայում: Ռուսերեն գորոդ՝ «քաղաք» բառից: Հին անվանումն է Գորոդին:

ԳՐՈԶՆԻ. — Քաղաք Հյուսիսային Կովկասում: Զեշենո-ինգուշական ինքնավար ՍՍ Հանրապետության մայրաքաղաքը: Ռուսերեն գրոգնի՝ «սպառնացող», «աճեղ» բառից: Այսինքն սպառնացող տեղ հարավի անհանգիստ ցեղերի համար: Որպես պաշտպանողական բերդ հիմնադրվել է 1818 թվականին: Հետագայում կորցնելով իր ստրատեգիական նշանակությունը վերածվեց քաղաքի (1869 թ.):

ԳՈՒԱՄ. — Կղզի Խաղաղ օվկիանոսում: Առաջին անգամ, 1521 թվականին, խապանացիները տեսան այդ կղզին Սուրբ Հովհաննեսի տոնի օրը: Խապանացիները Հովհաննեսին՝ Խուան են անվանում: Ժամանակի ընթացքում կղզու անունը ձևափոխվեց և այսօր հնչում է Գուամ:

ԳՈՒԱՆՉԺՈՈՒԻ. — Քաղաք Հարավ-արևելյան Զինաստանում։ Զինարեն գուան՝ «լայն», «ընդարձակ» բառից և ավելացրած շխում մասնիկը, որը զինական տեղանվանքանությունում նշանակում էր բարձրաստիճան նահանգի կենտրոն։ Ելրոպացիների կողմից քաղաքին երկար ժամանակ արվում էր Կանտոն անունը։

ԳՈՒԳԱՅՔ. — Պատմական Հայաստանի տասնհինգ նահանգներից մեկը։ Հյուսիսից սահմանակից է իվերիային (Վրաստանին)։ Գուգարքը էթնիկական տեղանուն է, որի հիմքում ընկած է «գուգար» տոհմի անունը։ ԱՔ վերջածանցը ունի երկրի իմաստ։ Ուրեմն Գուգարաց աշխարհ կամ երկիր։ Գուգարքի կառավարիչը ուներ բողեշխի տիտղոս և համեմատաբար ավելի շատ անկախություն, քան մյուս նահանգների կառավարիչները։

ԳՈՒՄ-ԽՐՈՒՍԱԿԻՆԻ. — Քաղաք Վլադիմիրի մարզում, Գուս գետի վրա։ Բյուլեղապակյա (խրուստալ) գործարանին կից ստեղծվեց մի բնակավայր, որից և ստացավ իր ներկա անունը՝ ի տարբերություն նույն գետի անունը կրող, մետաղաձուլական գործարանի մոտ եղած Գուս-ֆելեզնի բնակավայրի։

ԳՈՒՐԻԵՎՎ. — Քաղաք Ղաղախստանում։ Կասպից ծովի ափին։ Հիմնադրվել է 1645 թվականին, վաճառական Միխայլի Գուրեկի կողմից։

Դ

ԴԱԼԱՅՆՈՐ. — Լիճ Հյուսիս-արևելյան Զինաստանում։ Մոնղոլերեն դալայ՝ «մեծ» և նոր՝ «լիճ» բառերից։ Մոնղոլերեն դալայը ունի նաև «սրբազն» իմաստ, որի պատճառով լճի անվանումը ստուգաբանվում է նաև իրեւ «Սրբազն լիճ»։

ԴԱԳՈՄԵԱ. — Պետություն Արևմայան Աֆրիկայում։ Մինչեւ Ելրոպացիների գաղութացումը, այս երկրում 17—19-րդ

դարերում եղել է Դագա անունով պետություն: Ենթադրվում է, որ անունը առաջացել է Դագա իշխանի անունից:

ԴԱԼՄԱԹԻԱ. — Պատմական մարդ Հարավսլավիայում: Իլիրական ծագում ունեցող դալմաթ ժողովրդի անունից, որն անցյալում բնակվում էր այստեղ:

ԴԱԿԱԱ. — Քաղաք Արևելյան Պակիստանում: Քաղաքը կոչվել է պտղաբերության աստվածուհու անունով: Բայտ ավանդության, այստեղ հայտնաբերվել է պտղաբերության աստվածուհի Դուրգուի դիմանկարը, որտեղ կառուցվել է տաճարը և նրա շուրջն էլ աճել քաղաքը:

ԴԱԿՈՏԱ. — ԱՄՆ-ի շտատներից (նահանգներից) մեկը: Անունը առաջացել է հնդկական դակոտա ցեղի անունից: Դակոտա նշանակում է «դաշնակից»: Այստեղ գոյություն ուներ յոթ ցեղի դաշնակցություն: Ժամանակի ընթացքում Դակոտայի տերիտորիան բաժանվեց երկու մասի՝ Հյուսիսային և Հարավային Դակոտաների:

ԴԱՂԱՍԱՆ. — Խնճնավար հանրապետություն ՌՍՖՍՀ-ի կազմում: Գտնվում է Հյուսիսային Կովկասում: Թյուրքական դադ՝ «լեռ» և պարսկերեն ստան՝ «երկիր» բառերի գուգակցումից:

ԴԱՄԱՍԿՈՍ. — Սիրիայի մայրաքաղաք: Արաբերեն Դիմեշկ: Սեմիտական լեզվում՝ «գործարար»: Այսինքն գործարար վայր, օգտավիտ տեղ:

ԴԱՄԻԵՏՏԱ. — Քաղաք ԱՄՀ-ում (Եգիպտոս): Արաբերեն լեզվից՝ ջրի մոտ գտնվելու իմաստով:

ԴԱՆԻԱ. — Պետություն Հյուսիսային Եվրոպայում: Անունը առաջացել է դան ցեղից, որն այս երկրում բնակություն էր հաստատել գեռնս 5—6-րդ դարերում: Դանիացիները իրենց երկիրն անվանում են Դանմարք: Դան անվանը ավելացվել է գերմաներեն մարք՝ «երկիր» բառը: Ստացվել է Դանմարք, այսինքն՝ դաների երկիր: Օտարքները դան անվանը ավելացրին լատիներեն «իա» մասնիկը, որը երկրի նշանակությամբ գործածական է դարձել միջազգային մասշտաբով:

ԴԱՆԻԱԿԱՆ ՆԵՂՈՒՅ. — Նեղուց Գրենլանդիայի և հսլանդիայի միջև: Չնայած նեղուցը գտնվում է Դանիայից երկու հազար կիլոմետր հեռավորության վրա, բայց կրում է Դանիայի անունը: Պատճառը այն է, որ իր ժամանակին Դանիան իշխում էր թե՛ հսլանդիայում և թե՛ Գրենլանդիայում: Բնական է, որ զրային տարածությունում նույնպես նա էր իշխում, դրա համար էլ ստացավ դանիական անունը: Ներկայումս հսլանդիան անջատված է Դանիայից:

ԴԱՆՈՒՅ. — Գետ Եվրոպայում: Ակյութերեն դոն՝ «ջուր» բառից: Տվյալ դեպքում՝ «գետ»:

ԴԱՇՔԵՍԱՆ. — Քաղաք Ադրբեյջանական ՍՍՀ-ում: Ադրբեյջաներեն դաշ՝ «քար» և քեսան՝ «կտրող»: Անցյալում այստեղ եղել են քարտաշներ:

ԴԱՎԱԼԱԳԻՐԻ կամ ԴՀԱՈՒԼԱԳԻՐԻ. — Հիմալայների բարձր գագաթներից մեկը նեպալում: Սանսկրիտերեն դհառ՝ «սպիտակ» և գիրի՝ «լեռ» բառերից: Այսինքն «ձյունածածկ» լեռ:

ԴԱՐԴԱՆԵԼ. — Փոքր Ասիայի և Եվրոպայի միջև ընկած նեղուցներից մեկը, որը միացնում է էգեյան և Մարմարա ծովերը: Անվանման ստուգաբանությունը կարվում է տրոյացիների նախահայր Դարդանոսի հետ, որն ըստ ավանդության Հոռնաստանից այստեղ է վերաբնակվել և հիմնել Տրոյա քաղաքը: Այս նեղուցը մինչև Խաչակրաց արշավանքը հայտնի էր Հելեսպոնտոս անունով, որը նույնպես կապվում է հունական դիցաբանության հետ: Թուրքերը նեղուցն անվանում են Զանակլաւրողակ, Զանակլաւե քաղաքի անունով: Վերջին անվանումը ոչ մի երկրում չի ընդունված, բայց Թուրքիայից:

ԴԱՐ-ԷՍ-ՍԱԼԱՄ. — Տանգանիկա պետության մայրաքաղաքը: Անունը արաբերեն դար՝ «նավահանգիստ» և սալամ՝ «խաղաղություն» բառերի միացումից է: Այսինքն «խաղաղության նալահանգիստ»:

ԴԱՐԻԱԼԻ ԿԻՐԾ. — Խորք կիրճ Ռազմա-վիրական ճանապարհի վրա, որով հոսում է Թերեք գետը: Նրա ամենանեղ և

անդնդախոր տեղը: Անվան ստուգաբանությունը կապվում է կովկասյան լեռնեցի ռազմատեսնչ ալանների հետ: Ալան էթնոնիմին ավելացվել է դարիա բառը՝ «դարիա ալանի» պարսկերեն նշանակում է «Ալանաց դուռ»: «Ալանաց դուռ» Կովկասի բովանդակ պատմության ընթացքում եղել է հյուսիսից դեպի Անդրկովկասի հարուստ հովիտները տանող անցուղին: Այդ դոնով էին ալանները հաճախ ներխուժում Վրաստան, Հայաստան, Ատրպատական և հասնում Իրանի սահմանները: Իրանը երեմն Հռոմի հետ դաշնակցում էր այն բանի համար, որպեսզի հնարավորություն ստանակովելու ռազմատեսնչ ալանների դեմ: Դարիալը հնում հայտնի էր նաև «Կովկասյան դարբաս» անունով: Ի դեպ, ներկա օսերը համարվում են ալանների, սկյութների և սարմաթների հետնորդները: Ալանները մեզ ծանոթ են Սաթենիկ թագուհու անվան հետ կապված ավանդությունից: Նա ալանաց թագավորի գուտարն էր, հետո դարձավ Արտաշես Բ-ի կինը: Պատմությունից մեզ հայտնի է պատմվածքների և վիպական երգերի միջոցով:

ԴԱՐԻԼԻՆԳ.— Գետ Ավստրալիայում: Մուրրեյ գետի աջ վտակը: Եվլոպացիներից առաջինը այս գետը տեսավ կապիտան Զ. Ստուարտը, որը գետը կոչեց ի պատիվ Նոր Հարավային Ռևելսի նահանգապետ Ռալֆ Դարլինգի:

ԴԱՐԻՆԱՆ.— Քաղաք Մոնղոլական ժողովրդական Հանրապետությունում: Անունը մոնղոլերեն դարիսան՝ «դարիին», «երկաթագործ» բառի միացումից է:

ԴԱՐՎԻՆԻ Լեմ.— Լեռ Հարավային Զիլիում, Հրո Երկրում: Այդպես է կոչվել ի պատիվ անգլիացի նշանավոր բնագետ Ջարլզ Դարվինի (1809—1883 թթ.):

ԴԱՐՎԻՆ.— Նավահանգիստ Ավստրալիայի հյուսիսում: Հիմնադրվել է 1830 թվականին և կոչվել է ի պատիվ Ջարլզ Դարվինի:

ԴԵԲԵԴ.— Գետ Հայկական ՍՍՀ-ում: Կուրի վտակներից մեկը: Հոսում է կոռվա ձորով: Անվանումը կապվում է

պարթևական դե և բեդ՝ «գետ» բառերի միացման հետ։ Այսինքն «դեերի գետ» խմաստով։ Մեր ավանդությունում էլ կուվա ձորերում են իշխել Դե-Բեդ և Դե-Ալ Հակաները։

ԴԵԺՆՅՈՎԻ ՀՐՎԱՆԴԱՆ.— Ասիա ցամաքի ամենաարևելյան կետը Չուկոտյան թերակղղում։ Այսպես կոչվեց սկսած 1879 թվականից, բևեռագետ Նորդենշելդի առաջարկով, ի պատիվ Սեմյոն Դեժնյովի, որը ճրվանդանը հայտնաբերել էր դեռ 1648 թվականին։

ԴԵԼԱՎԵՐ.— ԱՄՆ-ի շտատներից (նահանգներից) մեկը։ Կոչվել է կոմս Դե լա Վերի անունով, որը Վիրդինիայի նահանգապետներից էր 17-րդ դարի սկզբին։

ԴԵԼԻ.— Հնդկաստանի մայրաքաղաքը։ Անվանման ստուգաբանություններից մեկը կապվում է քաղաքի հիմնադիր Ռաջ Դիլուի անվան հետ (I դ., մ. թ. ա.): Հին Դելին կոչվում է նաև Շահցանաբադ, այսինքն «Շահցանի քաղաք»։

ԴԵ-ԼՈՆԳԻ ԿՂՋԻՆԵՐ.— Կղջիների խումբ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում։ Արևելա-Սիբիրական ծովում։ Այդպես է կոչվել ի պատիվ Դե-Լոնգի, որն այս կղջիներից երեքը՝ ժանետա, Հենրիետա և Բենետտա, հայտնաբերեց 1879—1881 թվականների արշավախմբի ժամանակ։ Դե-Լոնգը եղել է ամերիկյան նշանավոր բևեռային հետազոտող, որը 1879 թվականին գլխավորում էր «Փանետա» նավի էքսպեդիցիան։ Դե-Լոնգի նպատակն էր հասնել Հյուսիսային բևեռ և որոնել Նորդենշելդին։ Զհասնելով լենայի գետաբերանին «Փանետան» ենթարկվում է նավաբեկության։ Էքսպեդիցիայի կենդանի մնացած անդամները Դե-Լոնգի գլխավորությամբ դուրս են գալիս լենայի գետաբերան, սակայն նույնպես զոհվում են 1881 թվականին։

ԴԵԿԱՆ.— Հնդարձակ սարահարթ թերակղղային Հնդկաստանում։ Անունը առաջացել է սանսկրիտերեն դակշինաբառից, որը «հարավ» է նշանակում։

ԴԵՂԻՆ ԾՈՎ.— Ծով Զինաստանի և Կորեայի միջև։ Այսպիսի

անվանում է տրվում ծովին նրա առափնյա մասի ջրերի մուգ-դեղնավուն գույնի պատճառով, որը հետևանք է Խուանխիք գետի կողմից բերված դեղին գույնի տիղմի: Զինական տոպոնիմիստները՝ ընդունելով այս բացարությունը, միաժամանակ ավելացնում են, որ այս անվանումը նաև արտահայտում էր կայսերական իշխանության խորհրդանիշը: Զի՞ որ հին Զինաստանում դեղին գույնը կայսրության սիմվոլն էր:

ԴԵՄԱՎԵՆԴԻ.— Լեռ իրանում: Երկրի ամենաբարձր սարը: Դեմավենդ բառի աղավաղված ձևն է: Պարսկերեն դեմավենդ՝ «պատկանելիություն» կամ «կացարան» բառերից է: Վենդը իրանական բենդ բառի քրդական ձևափոխումն է. այլ խոսքով դեմերի կացարան: Մի այլ բացատրությամբ՝ «ծխացող լեռ»: Ժողովուրդը Դեմավենդ լեռան հետ է կապում շատ առասպելներ և ավանդություններ:

ԴԵՄԵՆԱ.— Դնենարի վտակը: Հին սլավոներեն դեսնա նշանակում է «աջ կողմը»: Երբ սլավոնական ցեղերը տարածվում էին դեպի հյուսիս 6—7-րդ դդ., այս գետը գտնվում էր իրենցից աջ:

ԴԵՎԼԻՍԻ ՆԵՂՈՒՅՑ.— Կանադայի Հյուսիսում: Բաֆֆինի Երկրի և Գրենլանդիայի միջև: Այդպիս է կոչվում անգլիացի ծովագնաց Ջոն Դևիսի անունով (1550—1605 թթ.): Դևիսը 1586 թվականին որոնում էր հյուսիս-արևմտյան միջանցքը և ճեղքելով սառուցները հասավ բևեռային շրջագիծ, բայց ստիպված ետ վերադարձակ: Հետագայում, ի պատիվ Ջոն Դևիսի նեղուցը կոչվեց նրա անվամբ:

ԴԵՏՐՈՅՑ.— Քաղաք ԱՄՆ-ում: Դետրոյտ ֆրանսերեն գետրուա՝ նեղուց բառի անգլիական տառադարձությունն է: Քաղաքը գտնվում է այն նեղուցի վրա, որը միացնում է Հուրոն և էրի լճերը: Հիմնադրվել է 1683 թվականին:

ԴԵՐԲԵՆՏ.— Քաղաք Դաղստանի իՍՍՀ-ում: Կասպից ծովի ափին: Անունը պարսկերեն դեր՝ «դուռ» և բենդ կամ բանդ՝ «արգելակ» բառերի զուգակցումից: Դերբենտը

եղել է Անդրկովկասից Հյուսիսային Կովկաս տանող կարևոր ելքից մեկը, Դարիալի կիրճի նման։ Այդ ճանապարհով էին Հյուսիսից վաշկատուն ցեղերը ներխուժում Անդրկովկաս։ Մուտքը Դերբենտից ավելի մատչելի էր, քան Դարիալից։ Դերբենտի պաշտպանությունը կատարվում էր պարսից զինվորական ուժերով։ Արաբների մոտ Դերբենտը հայտնի էր Բաբ-ուլ-աբվար (գըլխավոր դարբաս), թուրքերի մոտ Դեմիրկափուսի (Երկաթյա դռներ) անուններով։

Դեր-ԶՈՐ.— Բնակավայր Միջագետքի անապատներում։ Անվան հիմքում ընկած են դեր՝ «անտառ» և զոր՝ «գլյակ» բառերը։ Այսինքն «անտառի գլյակ»՝ թերևս օազիսում գտնվելու պատճառով։ Դեր-Զորի շրջակա անապատները եղան 1915 թվականի հայ տարագրյալների աքսորավայրը և դարձան նրանց Գողգոթան։

ԴԻԱՐԲԵՔԻՐ.— Քաղաք Տիգրիս գետի վրա, Հայկական Տավրոսի հարավում։ Թուրքիայի և Իրաքի սահմանում։ Համանուն նահանգի (Վիլայեթի) կենտրոնն է։ Դիարբեքիրը հնում հայտնի է եղել Ամիտա կամ Ամիդա անվան տակ։ Դիարբեքիրը ստրատեգիական և առևտրական կարևոր դիրքի, ինչպես նաև սահմանային քաղաք լինելու շնորհիվ դարեր շարունակ կովախնձոր է դարձել, ձեռքից ձեռք է անցել։ Այսպես, օրինակ, Ամիդ-Դիարբեքիրի վրա իշխել են ասորեստանցիները, հայերը, հռոմեացիները, պարսիկները, հույները, արաբները, սելջուկները և վերջապես թուրքերը, որոնք քաղաքը վերջնականապես նվաճեցին սուլթան Սելիմի օրոք, 1515 թվականին, պարսիկների դեմ տարած հաղթանակից հետո։ Թուրքերը պահեցին քաղաքին տրված արաբական Դիարբեքիր անունը, որը արաբերեն նշանակում է «Բեքիրի ապրելատեղ» կամ «Բեքիրի վայր»։ Օսմանյան կայսրության ժամանակ թուրքիան բաժանված էր վարչական խոշոր միավորումների՝ նահանգների կամ վիլայեթների և Դիարբեքիր քաղաքը համառուն նահանգի կենտրոնն էր։

Հայ գրականության մեջ և քարտեզներում հաճախ կարելի է հանդիպել այն բանին, թե ինչպես Դիարքեքիրին տրվում է Տիգրանակերտ անունը, որը ճիշտ չէ, որովհետև Դիարքեքիրը (Ամիդա) և պատմական Տիգրանակերտը (Ֆարղին) տարբեր քաղաքներ են և գտնվում են իրարից զգալի հեռավորության վրա:

ԴԻԽ-ՏԱՐԻ.—Մեծ Կովկասյան շղթայի գագաթներից: Անունն ստուգաբանվում է «բարձր», «զառիթափ» լեռ:

ԴԻԿՍՈՆ, ԴԻՔՍՈՆ.—Բնակավայր Թայմիրի ազգային օկրուգում, Կրասնոյարսկի երկրամասում, Ենիսեյի ծոցի ափին: Այդպես է կոչվել 1875 թվականին ի պատիվ շվեդացի Օ. Դիկսոնի, որը իր վրա էր վերցրել անվանի ձանապարհորդ Նորդենշելդի արշավախմբի հանդերձավորման ծախսերը:

ԴԻԿՍՈՆ, ԴԻՔՍՈՆ.—Կղզի Ենիսեյի ծոցում: Այդպես է կոչվել ի պատիվ շվեդացի Օ. Դիկսոնի:

ԴԻՌՄԻՒԴԻ ԿՂԶԻՆԵՐ.—Բերինգի նեղուցում: Չնայած կղզիները իր ժամանակին հայտնաբերել էր Սեմյոն Դեժնյովը, բայց երկրորդ անգամ՝ 1728 թվականին, երբ մոտեցավ ծովագնաց Վիտիուս Բերինգը, նրանց կոչեցին Դիոմիդի կղզիներ, որովհետև հայտնաբերած օրը օգոստոսի 16-ն էր՝ «Սուրբ Դիոմիդի» օրը:

ԴՅՈՒՆԿԵՐԿ.—Նավահանգիստ Ֆրանսիայում, Հյուսիսային ծովի ափին: Ֆլամանդկերեն դուն՝ «ավաղաթումբ» և կերկ՝ «եկեղեցի» բառերի միացումից՝ ավաղաթմբերի եկեղեցի:

ԴՅՈՒՆԵԼԴՈՐՖ.—Քաղաք ԳՅՀ-ում: Անունը առաջացել է Դյուսել գետի և գերմաներին դորֆ՝ «գյուղ» բառերի զուգակցումից:

ԴՆԵՊՐ.—Գետ ՍՍՀՄ Եվրոպական մասում: Անունը գալիս է սկյութերեն լեզվից, որը նման է ժամանակակից օսերենին: Արմատը դոն բառն է, որը նշանակում է «ջուր», գետի իմաստով:

ԴՆԵՍՔ.—Գետ Ուկրաինայում և Մոլդավիայում: Նույնպես սկյութերեն դոն՝ «ջուր» կամ «գետ» բառից:

ԴՈՅԲՐՈՒԻՉԱ. — Մարզ Բումինիայում: Բումիներեն դրբու-
շիս՝ զեղեցիկ լանդշաֆտ, սիրուն տեսարան:

ԴՈԴԵԿԱՆԵԶ. — Կղզիախումբ էղեյան ծովում: Հունարեն գո-
գեկա՝ «տասներկու» և ոնհսոս՝ «կղզի»: Արշիպելագը
բաղկացած է տասներկու կղզիներից:

ԴՈՄԻՆԻԿԱ. — Կղզի վեստ ինդիայում, Փոքր Անտիլյան խըմ-
բում: Հայտնաբերվել է Քրիստափոր Կոլումբոսի կող-
մից 1493 թվականին, կիրակի օր: Անունը առաջացել
է հենց դոմինիկա բառից, որը թե՛ խսպաներեն և թե՛
իտալերեն նշանակում է «կիրակի»:

ԴՈՄԻՆԻՌՈՆ. — Բրիտանական Համագործակցության (Բրիտա-
նական կայսրության) կազմի մեջ մտնող ինքնավար
պետություն:

Դոմինիոն տերմինը լատիներեն «տիրապետություն»
կամ «իշխանություն» բառից է: Պետական իրավունքի
ասպարեզում, առաջին անգամ դոմինիոն հասկացու-
թյունը գործածվել է 1867 թվականին՝ Կանադայի
նկատմամբ: Հետո արդեն Ավստրալիայի (1901 թ.),
ապա Հարավ Աֆրիկական Միության (1909 թ.), ներ-
կայիս Հարավ Աֆրիկյան Հանրապետության համար:
Դոմինիոնի իրավունքից սկզբում օգտվում էին այն եր-
կրտները, որոնց բնակիչներն անգլիական ծագում ու-
նեին կամ որտեղ անգլիացիները իշխող էին: Երկրորդ
համաշխարհային պատերազմից հետո որոշ ժամանակի
դոմինիոն գարձան Հնդկաստանը և Պակիստանը:

Ներկայումս դոմինիոն տերմինը աստիճանաբար
դուրս է գալիս՝ պաշտպանական գործածությունից և փո-
խարինվում է «համագործակցության անդամ» տերմի-
նով, բայց դեռ գործածական է Կանադայի, Ավստրա-
լիական Միության և նոր Զելանդիայի նկատմամբ:

Դոմինիոնը ունի ինքնավարություն և պետությանը
համապատասխան այլ հատկանիշներ՝ սեփական պատ-
լամենտ, կառավարություն, բանակ, նավատորմ, դրո-
շակ, դրամ և այլն:

Դումինիոններն անմիջապես գիվանագիտական հարաբերություններ ունեն այլ պետությունների հետ: Նըրանք հանդիսանում են Միավորված Ազգերի կազմակերպության անդամներ:

Բայց դոմինիոնը անվիական թագավորին ճանաչում է որպես իր կայսր: Վերջինիս ներկայացուցիչը դոմինիոնում հանդիսանում է գեներալ-նահանգապետը:

ԴՈՄԻՆԻԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.— Պետություն Վեստ Ինդիայում, Համարի կղզու արևելյան մասում: Անվանման հիմքում ընկած է իսպաներեն դոմինիոն՝ «կիրակի» բառը:

ԴՈՒՆ.— Գետ Ծուսաստանում: Գետի անվանումը սկյութերեն դոն բառից է, որն ունեցել է «ջրի» նշանակություն և գործածվել է գետի իմաստով: Այսպիսով, դոն հասարակ անունը գարձել է աշխարհագրական հատուկ անուն: Քանի որ ներկա օսերը համարվում են սկյութների հետնորդները, ապա դոն բառը պահպանվել է գետերի անուններում: Այսպես, օրինակ, Հյուսիսային Օսեթիայում հայտնի են Արդոն, Դիզելդոն անուններով գետեր:

ԴՈՆԲԱՍ.— Դոնբաս անունը կազմվել է Սեվերսկի Դոնեց գետի անվան երկրորդ մասի առաջին, այսինքն «գոն» վանկից: Ավելացվել ուսւերեն բասեյն «ավագան» բառի առաջին «բաս» վանկը: Ստացվել է Դոնբաս, այսինքն «Դոնեցի ավագան»: Իսկ Դոնեցն էլ Դոն գետի ամենամեծ վտակն է, որը հոսում է Ուկրաինայի ածխալին շրջանով: Անունը առաջացել է Դոն գետից և ավելացվել է ուսւերեն փոքրացուցիչ «եց» մասնիկը: Ստացվել է Դոնեց: Այսինքն փոքրիկ Դոն: Գետը կոչվում է նաև Դոնեց Սեվերսկի: Տես այս անվան ստուգաբանությունը:

ԴՈՆԵՑ ՍԵՎԵՐՍԿԻ.— Տես Սեվերսկի Դոնեց:

ԴՎԻՆԱԼ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ.— Գետ ՍՍՀՄ-ի եվրոպական մասի հյուսիսում: Ֆիններեն վիենա կամ դվիենա՝ «խաղաղ», «հանգիստ» իմաստով:

ԴՐԱԿՈՆՅԱՆ ԼԵՌՆԵՐ.— Հարավ Աֆրիկական Հանրապետությունում: Լեռների անվանումը ստուգաբանվում է երկու

կերպ: Առաջինը կապվում է գաղութարար Դրակենշտեյնի անվան հետ: Իսկ երկրորդը՝ լեռների ուրվագիծը հիշեցնում է ֆանտաստիկական դրակոնի, այսինքն «վիշապի»:

ԴՐԱՎԱ. — Դանուբ գետի աջ վտակներից: Հունարեն դրու «աճապարել», «վազել» բառից: Արագածոս իմաստով: ԴՐԵԶԴԵՆ. — Քաղաք ԳԴՀ-ում: Դրեզդեն անունը ծագել է սլավոներեն դրեժդանք բառից, որը նշանակում է անտառի մարդկանց քաղաք:

ԴՐԵՅԿԻ ՆԵՂՈՒՅ. — Միացնում է Խաղաղ օվկիանոսը Ասլանտյան օվկիանոսի հետ: Միաժամանակ բաժանում է Հարավային Ամերիկան Հարավ-Շետլանդական կղզիներից: Այս նեղուցը կոչվել է ի պատիվ անգլիական ծովագնաց Ֆրենսիս Դրեյկի (1545—1597 թթ.): Ֆերդինանդ Մագելանից հետո, Ֆրենսիս Դրեյկը առաջինն էր, որ կատարեց շուրջերկրյա ճանապարհորդություն: Նա անցավ Հրո Երկրից հարավ և եղավ Ամերիկայի ամենահարավային կետի Հորն հրվանդանի հայտնաբերողը:

ԴՐԻԹԼԻՆ. — Իուլանդիայի մայրաքաղաքը: Անունը մեկնաբանվում է երկու կերպ: Առաջինը, դուրլին կելտերեն լեզվից է և նշանակում է «սև գետի ծոց»: Երկրորդը՝ էթլան կելտական ցեղերից մեկի անունով:

ԴՐԻԵԲՈ. — Գետ Խսպանիայում և Պոլտավակիայում: Անվանումը կելտական լեզվից է, նշանակում է «գետ»:

ԴՐԻՇԱՆԲԵ. — Տաղիկական ՍՍՀ-ի մայրաքաղաքը: Անունը առաջացել է տաղիկերեն դուշանբե, այսինքն «փրկուշաբթի» բառից: Այդ օրը ամենալավ օրն է համարվել տաղիկների մոտ, որովհետև անցյալում այդ օրը ներկա Դրւշանբեի տեղում տեղի էր ունենում աշխույժ տոնավաճառ:

ԴՐԻՒԲԱՆ. — Քաղաք Հարավ-Աֆրիկայն Հանրապետությունում: Նավահանգիստ Հնդկական օվկիանոսի ափին: Հիմնադրվել է 1824 թվականին և կոչվել է ի պատիվ Բ. Պ. Ուրբանի, որը եղել է Կապի գաղութի նահանգա-

պետ: Մյուս անվանումը՝ Նատալ, իսպաներենում նշանակում է «ծննդյան»՝ Քրիստոսի ծննդյան տոնակատարության կապակցությամբ, որի հետ համընկել է այդ ափի հայտնագործումը:

Ե

ԵԳԻՊՏՈՍ.—Երկիր Հյուսիսային Աֆրիկայում՝ Նեղոսի հովտում: Եգիպտոս անունը գալիս է հին հունարեն Այ-գուպտոս (այս կոպտոս՝ «կոպտերի երկիր») բառից. հին եգիպտերեն դա հնչում էր Հետ-կա-պտահ. դա Մեմֆիսի կրոնական անվանումներից մեկն էր: Հետագայում այդուատուսը հույների միջոցով դարձավ Եգիպտոս, որը անցավ հայերին և աշխարհի շատ ժողովուրդներին: Անցյալում եգիպտացիները իրենց երկիրը անվանել են նաև Քեմի, որ նշանակում է «սև հող»: Այդպես են կոչվել ի հակադրություն շրջակա անապատի դեղնավուն հողերի: Այստեղից էլ առաջացել է քիմիա բառը: Ներկայում եգիպտացիները, ավելի ճիշտ արաբները, իրենց երկիրը անվանում են Միսր կամ Մըսր: 1958 թվականից պաշտոնապես կոչվում է Արաբական Միացյալ Հանրապետություն:

ԵՒԵՍԻԱ.—Ներկայումս Ուրֆա: Հինավորց պատմական քաղաք Փոքր Ասիայում: Այժմ Ուրֆայի վիլայեթի կենտրոն: Քաղաքի Եղեսիա անվանումը բացատրվում է Հետելյալ կերպ: Բատ ավանդության, երբ Ալեքսանդր Մակեդոնացին 303 թվականին գրավում է Ուրֆան, ապա քաղաքի գեղեցկությունը, զրերի և մրգերի առատությունը նրան հիացնում են և այն իր աղջկա անունով կոչում է Էտիսի, որը հայերի կողմից դառնում է Եղեսիա:

ԵԹՈՎԹԻԱ.—Հնագույն պետություն Աֆրիկայում: Հին Աշխարհում էլիթիոպիա Աֆրիկայի արևադարձային գոտու

Հունական անվանումն էր: Հետագայում այս երկիրը հայտնի դարձավ ավելի շատ Հաբեշստան անունով, չնայած եթովպիս անունը այս երկրին տրվել է ավելի վաղ, որը ունի հունական ծագում և բառացի նշանակում է «արևակեղ մարդկանց երկիր»: Հին հուները կարծում էին, որ այդ երկրի բնակչության մաշկի թուխ գոյնը պատճառ է արեգակի ճառագայթների վառող հատկության: Իսկ երբ միջնադարում արաբները նվաճեցին Եգիպտոսը, ապա եթովպիսային Հաբեշստան անունը տվեցին: Դա առաջ եկավ եթովպիսայում բնակվող էլ-Հաբեշ կամ Հաբեշ ժողովրդի անունից, որի հետ արաբները մոտ հարաբերությունների մեջ մտան: Երկար ժամանակ գործածական դարձավ արաբական անվանումը՝ Հաբեշստան: Սակայն վերջերս վերականգնվեց նրա հին անունը, և երկիրը պաշտոնապես սկսեց անվանվել եթովպիսա:

ԵՄԵՆ.— Պետություն Արաբական թերակղզու հարավ-արևմըտյան մասում: Երկրի անվանման հիմքում ընկած է արաբներն եամին՝ (եմեն) «Հարավ» բառը: Տվյալ դեպքում նկատի է ունեցվել Մեքքայից դեպի աջ գտնվելը, քանի որ մուսուլմանական աշխարհում կողմնորոշվել են Մեքքայից դեմքերը դեպի արևելք: Այդ դեպքում ձախ կողմը լինում է Հյուսիս, իսկ աջը՝ Հարավ: Այստեղից էլ «Հարավ» բառը դարձել է աշխարհագրական հատուկ անուն:

ԵՅՍԿ.— Քաղաք Կրասնոդարի երկրամասում: Ազովի ծովի ափին, այնտեղ, որտեղ եյտ գետը թափվում է ծովը: Քաղաքը հիմնադրվեց 1848 թվականին և կոչվեց գետի անունով:

ԵՆԻՍԵՅ.— Մեծ գետ Սիբիրում: Նենեցերեն ենասե՝ լայն գետ բառից: Ենիսեյ անվանման առաջացումը ունի այսպիսի պատմություն: Անցյալում, երբ ոռուները մոտենաւ են Տագի խորշին, ապա նրանք տեղացիներից հարցուիրուն անում, թե եթե արևելք դնան, իրենք էլ ինչ գետի կհանդիպեն: Նենեցները (բնիկները) պատասխանում

են, որ կհանդիպեք Ենասսային: Այսինքն լայն կամ մեծ գետի: Առաջին ուստաներն էլ կարծելով, որ դա գետի անունն է, Հաղորդում են Մոսկվա, թե շարժվում ենք դեպի Ենիսեյ: Այսպես է առաջացել Սովետական Միության ամենամեծ գետի՝ Ենիսեյի անունը:

ԵՍԵՆՏՈՒԿԻ. — Կուրորտ Հյուսիսային Կովկասում: Զերքեզերեն եսեն՝ «վարժվել» և տուկու՝ «անկյուն», «տեղ» բառերից, թերևս ապաստանի իմաստով:

ԵՎԱ-ԼԻՎ ԿՂՋԻ. — Այս երկանուն կղզին մտնում է Ֆրանց Իոսիֆ արշխափելագի կազմում: Անվան առաջացումը կապված է անվանի բևեռագետ Ֆրիտիոֆ Նանսենի 1893—1896 թվականներին «Ֆրամ» նավով կատարած նշանավոր ճանապարհորդության հետ: Ինչպես Հայտնի է, «Ֆրամից» բաժանվելով, նա փորձեց բևեռ Հասնել սառուցների վրայով, դրեյֆի օգնությամբ: Բայց այդ նրան չհաջողվեց և ստիպված եղավ ձմեռել Ֆրանց Իոսիֆի արշխափելագում: Այստեղ նա Հայտնաբերեց երկու կղզի, որոնցից մեկը կոչեց իր կնոջ՝ Եվայի անունով, իսկ մյուսը՝ փոքրիկ աղջկա՝ Լիվի անունով: Բայց երբ 1932 թվականին սովետական բևեռագետները ուսումնասիրեցին այդ կղզիները, պարզվեց, որ Եվա և Լիվ կղզիները իրականում մի կղզի են երկու բարձունքներով: Քանի որ այդ ժամանակ Նանսենը կենդանի չէր, ապա որոշվեց կղզուն տալ միացյալ անուն՝ Եվա-Լիվ:

ԵՎՊԱՏՈՒԿԻԱ. — Քաղաք Ղրիմում: Մինչև 6-րդ դարը ներկա քաղաքի տեղում գտնվում էր սկյութական Կերկինտիդա անվամբ բնակավայր: Սակայն այն 2-րդ դարում, մ.թ.ա., գրավեց Պոնտոսի թագավոր Միհրդատ 6-րդ Եվպատորը, որի գորավարներից մեկը բնակավայրը քաղաքի վերածեց և կոչեց թագավորի անվամբ: Ժամանակի ընթացքում այդ անունը մոռացության տրվեց, և միայն 1784 թվականին վերականգնվեց Եվպատորիա անունը:

ԵՎՐԱՍԻԱ. — Երկրի ամենամեծ մայր քամաքը: Այսպես են անվանում Եվրոպան ու Ասիան՝ միասին վերցրած՝ ցամաքները, առանց կղզիների:

ԵՎՐՈՊԱ. — Աշխարհամաս: Եվրասիա մայր ցամաքի արևելյան մասում: Անվանման առաջացման պատմությունը հնում կապում էին Հունական դիցաբանությունում եղած Եվրոպա անվան հետ: Այս սովորական համադրումը դեռ հինգերորդ դարում ժխտել է Հերոդոտը: Ներկայումս ընդունված է այն, որ Եվրոպա անունը սեմական լեզվից է և հուներին է անցել փյունիկեցիների միջոցով և բառացի նշանակում է «արևմուտք»: Փյունիկեցիները իրենցից արևմուտք ընկած երկրները «էրեբ» բառով էին անվանում, ի հակադրություն արևի ծագման կողմի, որը կոչում էին «ասու». այստեղից էլ «Ասիա»: Եվրոպա անունը սկզբում վերաբերում էր Բալկանյան թերակղզու էգեյան ծովին հարող մասին. հետո աստիճանաբար անցավ ամբողջ աշխարհամասի վրա:

ԵՎՐՈՊԱ. — Հրվանդան Պիրենեյան թերակղզու հարավում: Անոնք ստացել է Եվրոպա աշխարհամասից:

ԵՐԳԵՆՆԵՐ. — Բարձրություն ՍՍՀՄ-ի Եվրոպական մասի հարավ-արևելքում: Կալմիկերեն էրգի բառից, որը նշանակում է «բարձրություն»:

ԵՐԵՎԱՆ. — Հայաստանի մայրաքաղաք Երևանը դասվում է աշխարհի հնագույն քաղաքների թվին: 1968 թվականի աշնանը լրացավ նրա հիմնադրման երկու հազար յոթ հարյուր հիսուն տարին: Դարերի ընթացքում Երևանը հասակ է առել ու տարածվել Արարատյան լայնածավալ դաշտի հյուսիս-արևելյան եղրում, ծովի մակերեսություն հազար մետր բարձրության վրա: Երևանի տոպոնիմիկան շատ հետաքրքիր պատմություն ունի, որը մեզ հասցնում է Հին Արեելքի մի նշանավոր պետության ժամանակաշրջանը: Այդ պետությունը Ուրարտուն էր, որը մեր թվականությունից առաջ, 9-6-րդ դարերում, աշքի ընկնող տեղ էր գրավում Առաջավոր Ասիայում: Երևանի հարավային և հարավ-արևելյան մասերում,

Կարմիր-բլուր և Արին-քերդ կոչվող վայրերում, մնացել են պատմական հուշարձաններ, որոնք լուր վկաներ են Ուրարտական պետության անցյալ փառքի: Հայտնի է, որ մեր թվականությունից առաջ, 6-րդ դարում, Ուրարտուն դադարեց գոյությունը ունենալ և համարյա մոռացության մատնվեց: Նրա օրինական ժառանգորդը դարձան Հայերը: Սրանք ժառանգեցին նաև ուրարտական աշխարհագրական շատ անվանումներ, որոնք պահպել ու ավանդվել են սերնդե-սերունդ: Դրանց թվին են պատկանում՝ Արարատ (Ուրարտու), Վան (Բիայնա), Տուշպա (Տոսպ), Երևան (Երեբունի), Սևան (Սուխնիա կամ Ծովինիա) և այլ անվանումներ: Սրանք գեղեցիկ և հաճելի ժառանգություններ են և բնական է՝ շատ բան կարող են մեզ պատմել, եթե հնարավոր լինի նրանց ճիշտ ստուգաբանությունը, որովհետև նրանք կապում են հեռավոր-անցյալը ներկային, այլ կերպ ասած՝ մեզ կապում են ուրարտացիների կամ նախահայերի հետ, որոնք մեծ և տարածված ժողովուրդ էին: Ժամանակին նրանք կարողացան մաքառել, մրցել և հաջողությամբ դիմագրավել տիեզերակալ ասորեստանցիներին: Ուրարտացիները բնակվում էին երեք մեծ լճերի՝ Վանի, Սևանի և Ուրմիայի ավազաններում: Հայկական բարձրավանդակում եղած աշխարհագրական անունների զգալի մասը ունի ուրարտական ծագում: Ուրարտուի սահմանները գրեթե լիովին համընկնում են պատմական Հայաստանի, այլ խոսքով՝ Հայկական բարձրավանդակի սահմանների հետ, ուր ընթացել է հայ ժողովրդի պատմական կյանքը: Ուրարտական ժառանգությունը է նաև Հայաստանի մայրաքաղաք Երևանի անունը: Ճիշտ է, աշխարհագրական այս կամ այն անվան մեկնությունը հետաքրքիր է, բայց այն հաճախ կապված է մեծ դժվարությունների և ժամանակի հետ: Զե՞՞ս որ անունները սերնդե-սերունդ փոխանցվելով ենթարկվում են ձևափոխման, գալիք սերունդներն այն հարմարեցնում են իրենց լեզվին և արտասանում իրենց եղանակով: Եվ

Հաճախ այս կապակցությամբ զանազան ենթադրություններ են հորինվում, կամ է՝ առաջ են քաշվում գիտական հիպոթեզներ, որոնք սակայն կարիք են զգում վերջնական ապացուցման: Այդիս է եղել նաև Երևան անվան հետ, որի առաջացման նախնական ստրւգաբանությունը ավանդական հենքով է հյուսվել: Այն կապվել է բիբլիական առասպելի հետ, ըստ որի Նոյ Նահապետի տապանը կանգ է առել Մասիսի գագաթին, ու երբ Նոյը դուրս է եկել այնտեղից, նրա աշքին առաջին անդամ երևացել է մեր քաղաքի տեղը: Այստեղից էլ նրա անունը կապել են Հայոց «Երևալ» կամ «Երևան» (Երևան գալ) բառերի հետ: Իհարկե, այդ ավանդությունը մնաց որպես ավանդություն: Հետագայում, Երևանի անվան մեկնության մի այլ տեսակետ առաջ քաշվեց: Նրա հեղինակը Մոսկվայի Կայսերական հնագիտական ընկերության անդամ, արևելագետ Մ. Նիկոլսկին էր, որը Արևելյան Հայաստան է այցելում 1893 թվականին և հայտնի եղած արձանագրությունների հիման վրա ուրարտական էրիակինի տեղանվան հետ է կապում մեր քաղաքի անվան առաջացումը: Նա ասում էր, որ եղել է էրիակինի անվամբ երկիր, ուր ապրել է էրի ցեղախումբը և կենտրոնն էլ եղել է էրիավանը: Այստեղից էլ նա ենթադրում էր Երևան քաղաքանվան առաջացումը: Բայց անվանի գիտնական պրոֆեսոր Գր. Ղափանցյանի ուսումնասիրություններից պարզվեց, որ էրի ժողովուրդը ապրել է Շիրակում: Բացի այդ չէր ընկալվում «վ» հնչյունի առկայությունը «Երևան» բառի մեջ: Հետագայում «Երևան» տեղանվան առաջացման պատմության վերաբերյալ որոնումների երանելի արդյունքը եղավ Արին-բերդի ուսումնասիրությունը: Ինչպես Հայտնի է, ժամանակին Արին-բերդի շրջակա հողերը պատկանում էին Նորք գյուղին: Մի նորքեցի ներկա Արին-բերդի ցածրադիր մասերում վար անելիս՝ 1879 թվականին գտնում է ուրարտական ժամանակվանից մնացած, չորս տող պարունակությամբ, սեպագիր արձանա-

գրությամբ մի քար, որը 1894 թվականից պահպամ է Մոսկվայի պատմության թանգարանում։ Գիտնական-ները գնացին այդ արձանագրության հետքերով, հավա-նական համարելով, որ քարը գլորվել է բլրի զագաթից։ Այստեղ հետազոտեցին և հայտնաբերեցին բերդաքա-ղաքի հետքեր։ Զէ՞ որ խոր անցյալը վերականգնելու համար հնագիտական հետազոտությունները ամենահու-սալի աղբյուրն են։ Այնուհետև՝ սովորական գիտնա-կանների պեղումներով այստեղ հայտնաբերված հնու-թյունները, հատկապես սեպագիր արձանագրություն-ները, նոր լույս սփռեցին «Երևան» անվան ծագման վրա։ Պարզվեց, որ Հայաստանի մայրաքաղաք Երևանի անունը մեզ է հասել ուրարտական ժամանակվանից։ Նա էլ Հայկական բարձրավանդակում եղած շատ անոն-ների նման ուրարտական ծագում ունի։ Պարզվեց նաև, որ Երևանի անվանման ստուգաբանության բանալին խնամքով պահպամ է Արին-բերդում գտնված Արգիշտի Առաջինի սեպագիր մի արձանագրության բնագրում։ Արին-բերդը գտնվում է Երևան քաղաքի հարավ-արևել-յան մասում, նոր Արեշ և Վարդաշեն կոչվող արվար-ձանների միջև։ Արին-բերդում պահպանված բերդաքա-ղաքի փլատակները լուս վկա են ուրարտական էրեբու-նի միջնաբերդի երբեմնի հզորության։ Այստեղ 1950 թվականին հայտնաբերած ուրարտական սեպագիր ար-ձանագրությունը, որը դրվագված է բազալտե կարծր քարի վրա, հանդիսանում է Երևանի, ինչպես ասում են «ծննդյան վկայականը»։ Այն գրված է Արգիշտի թա-գավորի ժամանակ և պատմում է, որ այստեղ Մենուայի որդի Արգիշտին հիմնադրել է Երեբունի բերդ-քաղաքը։ Խսկ նույն Արգիշտիի կամ Վանա ժայռի արձանագրու-թյունից պարզ էր, որ Երեբունին հիմնադրվել է Արգիշ-տի թագավորության հինգերորդ տարում, այն է՝ 784—781 թվականներին։ Մասնագետները քարին լեզու են տալիս։ Եվ քարերն էլ «աղատմեցին», որ Երեբունին եղել է ուրարտական երկրի, Արաքսի ձախակողմյան տերի-

տորիայում գտնվող երեք նշանավոր բերդաքաղաքներից
մեկը և հնագույնը, որը, ինչպես ասվեց, կառուցվել է
մ. թ. ա. 782—781 թվականներին: Ուրարտական շրջանի Արարատյան դաշտի բերդաքաղաքներից երկրորդը
Արգիշտիխինիլին է (Արմավիրը), իսկ երրորդը՝ նշանավոր Թեյշեբախինին (Կարմիր-Բլուրը): Այսպիսով,
Արարատյան դաշտը եղել է Ուրարտուի երկրորդ և հիմնական մասը: Արին-բերդի պեղումներից հայտնաբերված սեպագիր արձանագրություններից մեզ հետաքրքրություղ վիմագիրն է 1950 թվականին ճարտարապետ կ. Հովհաննիսյանի հետազոտական աշխատանքների ժամանակ գտնված տասներեք տողից բաղկացած քարը, որն ամբողջական է, դիմացել է ժամանակին ու հիանալի պահպանվել: Արձանագրության վերծանումը կատարեց 1951 թվականին ուրարտագետ Մարգարիտ Խորայելյանը, որը ընթերցեց մեր քաղաքի տեղում մ. թ. ա. 782 թվականին կառուցված ամրոցի անունը՝ էրեբունի: Հայտնի է, որ ուրարտերեն «բ» հնչյունը համապատասխանում է հայերենի «վ»-ին: Այստեղից էլ էրեբունի ուրարտական անունը սերնդե-սերունդ անցնելով ձևափոխվել և հնչել է էրեվան(ի), իսկ այնուհետև՝ էրեան կամ երեան: Արձանագրությունը, ինչպես հայտնի է, խնամքով պահպան է Հայսպատանի պատմության թանգարանում: Արգիշտի թագավորի օրոք Ուրարտուի սահմանները շատ էին ընդարձակվել, Վանա լճի ավաղանից հասել մինչև Սևանա լճի ավաղանը: Այդ ժամանակներում Ուրարտուն մեծ հաղթանակներ էր տարել հզոր Ասորեստանի դեմ: Ինչպես տեսնում ենք, Արին-Երդի շրջակայքում քսանյոթ և կես դար առաջ ծաղկել է մի բերդաքաղաք՝ էրեբունի անունով: Այն գտնվել է Քարավանների ճանապարհի հատման կետում, որը իրանը և Անդրկովկասը կապում էր Փոքր Ասիայի հետ: Հայտնի դարձավ նաև, որ կյանքը էրեբունիում տևել է մինչև 5—4-րդ դարը, մեր թվագրությունից առաջ: Այսինքն, եթե արդեն տեղի էր ունեցել հայ ժողովրդի

կազմավորումն ու պետականության ստեղծումը: Այս
առումով էլ պատահական չէ, որ ուրարտական Արգիշ-
տիխինիլին (Արմավիրը) դարձավ Երվանդյանների թա-
գավորանիստ քաղաքը: Մեր քաղաքում հավերժացան
նաև էրեբունիի և Նրա հիմնադիր Արգիշտիի անունները:
Այսօր էրեբունի փողոցը ընդհուպ մոտենում է Արին-
բերդին, որի վրա կառուցված է երկհարկանի թանգա-
րան: Այստեղ պահպելու են էրեբունիում հայտնաբեր-
ված հնությունները: Թանգարանի շենքի առաջ բացված
է Արգիշտիի անվան հրապարակ: Երևանը 1968 թվակա-
նի հոկտեմբերի 18-ին նշեց իր գոյության 2750 ամ-
յակը:

ԵՐԳԱՆԻԿ ԱՐԱԲԻԱ. — Եմեն պետության պատկերավոր ան-
վանումը, որը ժառանգություն է մնացել Անտիկ աշխար-
հից՝ Հին Հռոմեացիներից: Եմենի «Երջանիկ Արաբիա»
բանաստեղծական անունը վկայությունն է այն բանի,
թե ինչպես հաճախ տեղանքի որևէ հատկանիշը դառ-
նում է մակղիր, ապա մասնակցելով այս կամ այն ան-
վանման առաջացմանը, դառնում է աշխարհագրական
հատուկ անուն: «Երջանիկ» բառը լատիներեն «ֆելիքս»
բառի թարգմանությունն է, որը Ասիայի այս հատվածի
նկատմամբ, գործածվել է «աշ կողմիա իմաստով»: Այս-
տեղից էլ առաջացել է «Երջանիկ Արաբիա» պատկերա-
վոր անվանումը: Այսինքն Աջակողմյան Արաբիա:

ԵՐՈՒԱԾԱՂԵՄ. — Քաղաք Մերձավոր Արևելքում՝ Պաղեստի-
նում: Հրեական լեզվով երուշալահիմ խոսքից, որը նշա-
նակում է «խաղաղության տուն»:

ԵՓՐԱՏ. — Դես Մերձավոր Արևելքում: Ակիզը է առնում Հայ-
կական բարձրավանդակում, որտեղ նա կոշվել է Արա-
ծանի, իսկ այժմ կոշվում է Մուրադ: Միանալով Կա-
րասուխն (Արևմտյան Եփրատին) իջնում է Միջագետք
և միանում Տիգրիսին, որից հետո կոշվում է Շատ-Էլ-
Արաբ: Եփրատի անվանման հիմքում ընկած է ասորե-
րեն ու-ֆրատ բառը, որը նշանակում է «շատ լայն»:
Արաբները անվանում են Էլ-Փուրատ, թուրքերը՝ Փիրատ:

ԶԱԳՈՐԾԿ. — Քաղաք Մոսկվայի մարզում։ Նախկինում Սերգիկ Պոսադ։ 1930 թվականին վերանվանվեց Զագորսկ ի պատիվ կոմունիստական կուսակցության նշանավոր գործիչ Զագորսկ-Լուբոցկիի։ Զագորսկում է գտնվում հին ռուսական փողոր վանքերից մեկը՝ Տրոիցե-Սերգիկյան լավրան։ Զագորսկու ռուսական պատրիարքի նստելավայրն է։

ԶԱԳԹԵԲ. — Քաղաք Հարավսլավիայում։ Զա՝ «անդր» և գրեթ՝ «լեռ» բառերից՝ «լեռներից այն կողմը»։

ԶԱԼՅԲՈՒԻՐԳ. — Քաղաք Ավստրիայում։ Գերմաներեն զալց՝ «աղի» և բուրգ՝ «բերդ» կամ «քաղաք» բառերի գումարից։ Այդպես է կոչվել աղի հանքերի մոտ գտնվելու պատճառով։

ԶԱՄԲԵԶԻ. — Գետ Հարավային Աֆրիկայում։ Տեղական լեզվով ամբեյ բառի ձևափոխումն է, որը նշանակում է «Մեծ գետ»։ Երկարությունը հավասար է 2660 կիլոմետրի։ Զամբեզիի վրա է գտնվում Վիկտորիա ջրվեժը։

ԶԱՄԲԻԱ. — Պետություն Աֆրիկայում։ անկախություն է ձեռքբերել 1958 թվականին, Բրիտանական Հյուսիսային Ռոդեզիայի սահմաններում։ Զամբիա անունը վերցված է Զամբեզի գետից, որը հոսում է երկրի հարավով և այդ կողմից ընդունում է բազմաթիվ վտակներ։

ԶԱՅՍԱՆ կամ ԶԱՅՍԱՆ ՆՈՐ. — Լիճ Ղազախստանում։ Հայերեն ստուգաբանվում է «ընտիր լիճ»։ Այս անվան պատմությունը կապված է կալմիկ ժողովրդի տեղաշարժի հետ։ Երբ նրանք 17-րդ դարում Զոմգարիայից անցնում էին, դեպի ստորին Վոլգայի տափաստանները, ապա ճանապարհին մի մեծ խումբ մոտենում է այս լճին և նրա ափին հանգստյան վայր ընտրում։ Լճում առատ ծովկ են որսում ու լավ սննդում։ Այս հանգամանքը իրավունք է տալիս կալմիկներին լճին անվանել «ընտիր լիճ»։ Ինչպես հայտնի է Զայսան լճից է սկիզբ առնում իրտիշ (Սպիտակ Իրտիշ) գետը, որի վրա լճից ոչ հեռու կա-

ոռուցվում է Բուխտարմայի Հիդրոկայանը և հսկա ջրամբարը, որը կոմենա վեց հարյուր կիլոմետր երկարություն։ Այս ջրամբարը իր մեջ կառնի լիճը, ալյափինքն նրա մեջ «կսուզվի» ջայսանը։

ԶԱՆԳԵՑՈՒԹԻՒՆ— Ջանգեղուրը բնա-պատմական մարզ է Հայկական ՍՍՀ-ում։ Ջանգեղուր անունը ստուգաբանվում է մի քանի կերպ։ Առաջին ստուգաբանությունը ավելի ստույգ է և կապվում է Զագիծոր բերդավանի անվան հետ, որն արդի Գորիս քաղաքի դիմացի Կյորու գյուղն է։ Հաջորդը կապվում է Զագիկ նահապետի անվան հետ և ավանդական է։ Զագիկը Սյունյաց Սիսակ նահապետի սերնդից էր։ Նրա անունով էլ իրը կոչվել է Զագեծոր բերդավանը, որը ժամանակի ընթացքում որոշ փոփոխության ենթարկվելով դարձել է Զանգեղուր։

Մի այլ ստուգաբանությամբ Զանգեղուր անունը առաջացել է Զանգի ձորից։ Իրը թե Գորիսից երկու կիլոմետր հեռավորության վրա գտնվող ձորում գտել են զանգ, այստեղից էլ Զանգիծոր, ապա Զանգեղուր։ Մի այլ ստուգաբանությամբ կապվում է նաև «Սակերի ձոր» անվան հետ։ Այսինքն ձորերում անցքեր, ծակեր, խռովներ, քարայրներ լինելու պատճառով։

Զանգեղուր անունը սկզբում տարածվել է միայն այժմյան Գորիսի շրջակայքի վրա. բայց ժամանակին դառնում է ամբողջ գավառի պաշտոնական անունը և ապա փաստորեն տարածվում Սյունյաց աշխարհի մեծ մասի վրա։ Ներկայումս Զանգեղուր հասկացությունը ընդունվում է Սիսիանի, Գորիսի, Ղափանի, մասամբ և Մեղրու շրջանները։

ԶԱՆԳԻԲԱՐ— Կղզի Աֆրիկայի արևելյան ափերի մոտ. Հընդկական օվկիանոսում։ Թե Զանգիբար կղզին և թե նրա մոտ գտնվող աֆրիկական ափերը միջին դարերում նվաճեցին արաբները։ Նրանք այս ափերին Զանգիբար կղզու հետ միասին տվեցին հավաքական անվանում, այն է՝ Զանցի-էլ-Բարր, այսինքն «սև մարդկանց երկիր»։ Հետադայում այդ հավաքական անվանումը հնդիկ

վաճառականների կողմից ենթարկվեց վերափոխման՝ դառնալով Զանդիբար, որը տարածվեց միայն կղզու վրա: Կղզին ներկայումս գտնվում է Տանզանիա պետության կազմում:

ԶԱՊՈՐՈՋԻԵ. — Քաղաք Ուկրաինայում: Մինչև 1924 թվականը կոչվում էր Ալեքսանդրովսկ: Անունը առաջացել է ուստի պահանջման դաշտում՝ «անդր» և պորոգ՝ «սահանք» բառերի միացումից և «ին» վերջածանցով, որը ունի տեղի նշանակություն:

ԶԱՏԿԻ ԿՂՋԻ.— Կղջի Խաղաղ օվկիանոսի Հարավ-արևելյան մասում: Հայտնաբերվել է 1722 թվականին, հունդացի ծովագնաց Ռոգգեվենի կողմից: Հայտնաբերման օրը եղել է զատկի տոնի օրը և ի պատիվ այդ տոնի էլ կոչվել է կղջին: Զատիկը քրիստոնեական եկեղեցու տոներից է և նշվում է դարնանը: Զատկի կղջին այժմ արժանացել է մեծ ուշադրության՝ իր առեղծվածային քարե հուշարձաններով, հսկա քանդակներով, յուրովի արձանագրություններով և ավանդություններով: Կղջու ուսումնասիրության գործում մեծ ծառայություն է մատուցել նորվեգացի Թ. Հեյերդալը թե իր «Կոն թիկի» և թե «Ակու Ակու» աշխատություններով: 1966 թվականին Յունեսկոն, (որը Միավորված Ազգերի Կազմակերպության հաստատություններից մեկն է, որազ վում է լուսավորության, գիտության և կուլտուրայի հարցերով) և Զիլի պետության ազգադրական և հնէաբանական համատեղ արշավախումբը կազմել են նախադիմ վերականգնելու Զատկի կղջու քարե արձանները և այլ հուշարձաններ: Կղջին նախատեսվում է վերածել պոլիմերային հնագույն մշակույթի յուրովի թանգարանի:

ԶԵԼԱՆԴԻԱՆ.— Նիդեռլանդիա պետության նահանգներից մեկը:
Հոլանդիան զեե՝ «Ճով» և լանդ՝ «երկիր» բառերի զու-
գակցումից: Այս նահանգը իր անունը տվեց Նոր Զելան-
դիային:

ԶԵՅԱ. — Ամուրի վտակներից; էվենէվեռն դեե կամ դեե՝

«ածելի» բառից: Նկատի է ունեցվել այն սուր անկյունը՝ հրվանդանը, որը գտնվում է Զեյայի և Ամուրի միացման տեղում:

ԶԵՅԴԵՐ-ԶԵ կամ **ԶՅՈՒԴԵՐ-ԶԵ**.— Սովածոց Նիդեղանդիացում: Հոլանդերեն բառացի նշանակում է «Հարավային ծով», ի հակադրություն Հյուսիսային ծովի:

ԶԵՐԱՎՇԱՆ.— Ուզբեկերեն Զարաֆշոն: Գետ Միջին Ասիայում: Անվանումը կապում են տաշիկերեն զեր՝ «ոսկի» և բեխտան՝ «շաղ տալ», «ցրել» բառերի հետ: Տվյալ դեպքում նկատի է ունեցվել գետի տնտեսական նշանակությունը, նրա բարեկերությունը, որ նա կյանք է պարպեսում, ուրիմն և կարծես թե ոսկերէր է:

ԶԼԱՏՈՈՒԽՏ.— Քաղաք Հարավային Ուրալում, Զելյարինսկի մարզում: Քաղաքը հիմնադրվել է 1754 թվականին և անունը ստացել է Հովհան Ռոկերեան անունը կրող եկեղեցուց: Զլատոուխտ բառացի նշանակում է «ոսկերերան» (պլատ-զոլոտո «ոսկի» և ուստա՝ «բերան», «շրթունք» բառերից):

ԶՈՆԴՅԱՆ ԿՂՋԻՆԵՐ.— Կղղիների մի խումբ ինդոնեզիայում: Անվանումը առաջցել է միջնադարյան Սունդա պետության անունից, որը զբաղեցրել է Ճավա կղղուարմմայն մասը:

ԶՎԱՐԹՆՈՅ.— Երևանից տասնհինգ կիլոմետր հեռավորության վրա, էջմիածնի մոտ, գտնվում են Զվարթնոց տաճարի ավերակները: Տաճարը կառուցվել է 7-րդ դարում Ներսես Երրորդ կաթողիկոսի կողմից, որը իր շինարարական գործունեության համար ստացել էր «Եփնարար» պատվանունը: Զվարթնոցը մարմնավորել է իր ժամանակի հայ ճարտարապետության նվաճումները և իրավացիորեն համարվում է համաշխարհային ճարտարապետության գլուխ-գործոցներից մեկը: Սկզբում տաճարը անվանում էին Առապարի Ս. Գրիգոր, քանի որ հիմքում ըստ ավանդության ամփոփված էր Գրիգոր Լուսավորչի մասունքը, իսկ վայրի անունն էլ Առապար էր: Սակայն տաճարը ժամանակի ընթացքում ավելի

Հայտնի դարձավ Զվարթնոց անունով։ Այդպես կոչվեց, որովհետև այն նվիրված էր նաև երկնային զվարթուններին, իսկ զվարթուն հայ լեզվում նշանակել է նաև հրեշտակ։ Այնպես որ Զվարթնոց նշանակում է «Հրեշտականոց»։ Նրա ճարտարապետական ոճը և գեղեցկությունն այնքան նշանավոր էր դարձել, որ Գագիկ Ա. թագավորը Անի քաղաքում նույն ոճով Ս. Գրիգոր անունով եկեղեցի կառուցեց։

ԶՎԵՆԻԳՈՐԾ. — Շրջկենտրոն Մոսկովյան մարզում։ Անվան առաջացման հիմքում ընկած է ոռուերեն զվոն՝ «ղողանջ» բառը։ Անցյալում այստեղ գտնվում էր պահակատեղի, ուր կար մի մեծ զանգ։ Զանգի ղողանջով հայտնում էին թշնամու մոտեցման վտանգի մասին։ Եվ դրա համար էլ կոչվել է «Ղողանջի քաղաք»։

ԶՈՒԼՈՒԼԵՆԴ. — Օկրուգ Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում։ Երկիրը այդպես է կոչվել նեղուական բանտու ցեղին պատկանող զուլու ժողովրդի անունով, իսկ լենդ անգլերեն նշանակում է երկիր։ Այսպիսով՝ «Զուլուսների երկիր»։

ԶՈՒՆԴ կամ ԷՐԵՍՈՒՆԴ. — Նեղուց Դանիայի ու Շվեդիայի միջև։ Դանիերեն զունդ՝ «նեղուց» բառից։ Տե՛ս նաև երեսուն։

Է

ԷԲՐՈ. — Գետ իսպանիայում, որը թափվում է Միջերկրական ծովը։ Անոնը մնացել է իբերական ժողովրդից, որը բնակվել է այստեղ մ. թ. ա. 6—5-րդ դարերում։ Պատմական անցյալում հենց իբերիա անվան տակ նաև իսպանիա են հասկացել։

ԷԳԵՅԱՆ ԾՈՎ. — Միջերկրական ծովի մասը։ Էգեյան ծովի անոնը պատկանում է ավանդությամբ անձնավորող տեղանուների թվին։ Կապվում է Աթենքի, թագավոր էգեյոսի անվան հետ, որը ըստ ավանդության ծովը

նետվեց այն պահին, երբ Հորիզոնում տեսնելով Կրետե
կղզուց վերադարձող սև ժապավենով նավերը, ենթա-
գրեց, թե իր որդին զո՞չ է գնացել Կրետեի Մինոտավոս
հրեշին։ Սակայն թեզեռուք (էգեոսի որդին) կենդանի
էր, բայց մոռացել էին պոկել սև ժապավենները։

ԷԴԻՆԵՐԻ Թ. — Քաղաք Շոտլանդիայում։ Հիմնադրվել է 617
թվականին, նորատում բրիտանի թագավոր էդվինի կողմից։
Վերջինիս անվանն ավելացրել են բուրգ՝ «Քաղաք»
բառը։

ԷԼԲԱ. — Կղզի Միջերկրական ծովում, փտալական ավերի
մաս։ Հունարեն եղել է աթալիա «Զինջ», «Ախալուն»,
լատիներեն Հնչում է Իլվա։

ԷԼԲԱ. — Գետ Կենտրոնական Եվրոպայում։ Հին ոլավոնական
պոլաբների ցեղի անունով, որոնք ապրում էին ներկա
Սաքսոնիայում։ Զեխիայում հայտնի է Լարա անվամբ։

ԷԼԲՐՈՒՍ. — Բարձր գագաթ Մեծ Կովկասի հյուսիսային Կողքի
լեռնաշղթայում։ Անվան առաջացումը կապվում է իրա-
նական ալբորս բարի հետ, որը նշանակում է «փայ-
լուն լեռ»։

ԷԼԲՐՈՒՏ. — Լեռնաշղթա իրանում։ Անվանումը բացատրում
էն մի քանի կերպ։ Առաջինը, իրանական ալբորս բա-
ռից, որը նշանակում է «փայլուն լեռ»։ Երկրորդը,
բակտրիական ժողովրդի լեզվով «բարձր լեռ» խսքից։
Երրորդը, պարսկերեն ալ բորգ՝ «բարձրություն» բառից։

ԷԼԻՍԱ. — Կալմիկիայի մայրաքաղաքը։ Անվանումը առաջ-
ցել է կալմիկերեն «ավազուտ» բառից։

ԷԿՎԱԴՈՐ. — Պետություն Հարավային Ամերիկայում։ Անվան
առաջացմամբ պարտական է իր աշխարհագրական դիր-
քին։ Նրա տերիտորիան կտրում է հասարակածք։ Հա-
սարակած տերմինը օտար լեզուներում փոխարինվում
է էկվատոր կամ էկվադոր բառով, որը գալիս է լատի-
ներեն էկվարե «հավասարեցնել» բառից։ Եթե էկվադոր
անունը բառացի թարգմանենք, ապա կստացվի հավա-
սարեցնող, քանի որ հասարակածք անցնում է երկրա-
գնդի երկու բևեռներից հավասար հեռավորության վրա։

էՅԲ.—Աղի լիճ Ավստրալիայում: Հայտնաբերվել է անգլիացի ճանապարհորդ Էյրի կողմից (1815—1901 թթ.) և կոչվել նրա անունով:

ԷՆԳԵԼՍ.—Քաղաք Սարատովի մարզում, Վոլգայի ձախ ափին: Այդպես է կոչվում ի պատիվ Ֆ. Էնգելսի (1820—1895 թթ.): Քաղաքը վերանվանվել է 1931 թվականին, իսկ մինչ այդ կոչվում էր Պոկրովսկ: Երկաթուղային կայարանը այժմ էլ կոչվում է Պոկրովսկ:

ԷՇԻԼ-ԻՐՄԱԿ.—Գետ Թուրքիայում: Թուրքերեն էշիլ՝ «կանաչ» և իրմակ՝ «զետ» բառերից:

ԷՋՄԻԱԾԻՆ.—Քաղաք Հայկական ՍՍՀ-ում: Էջմիածին քաղաքը նախասկզբնական շրջանում հայտնի է եղիլ տարբեր անուններով: Շատ վաղ անցյալում, դեռ մեր թվականությունից առաջ, ըստ մեր պատմահայր Մովսես Խորենացու նա կոչվել է Արտեմիդ քաղաք: Նա այդպես է անվանվել ի պատիվ Արտեմիդա դիցուցու, քանի որ հելլենական մշակությոց «մոռա» առաջացավ հայկական աստվածները համադրել հունական աստվածների հետ: Այսպես, Արամազդը՝ Զեսի հետ, Անահիտը՝ Արտեմիդայի, Աստղիկը՝ Աֆրոդիտեի, Տիրը՝ Ապոլոնի, Միհրը՝ Հեփիստոսի, Նանեն՝ Աթենասի, Վահագնը՝ Հերկուլեսի: Ի դեպ, հայ թաղավորները Հունաստանից Հայաստան բերեցին այդ աստվածներից մի քանիսի արձանները: Այստեղից էլ հայերի մոտ մուտք գործեց նաև կուռքերի պաշտամունքը: Օրինակ, Անի-Կամախում գրվեց Արամազդի (Զեսի) արձանը, Արմավիրում՝ Անահիտի (Արտեմիդայի), արձաններ գրվեցին նաև այլ տեղերում: Սակայն հայ ժողովուրդը ժամանակի ընթացքում մոռացավ հունական անունները և պահպանեց Հայրենականը: Ինքնին հասկանալի է, որ ժամանակի ընթացքում Արտեմիդ քաղաքի անունն էլ պետք է փոխարինվեր հայկականով: Այդպես էլ եղավ: Վարդգես իշխանի կողմից քաղաքը բարեկարգվեց և վերանվանվեց Ավան Վարդգեսի: Խորենացին արդեն Արտեմիդ քաղաքը անվանում է «Հզոր ավան Վարդգեսի», որը

գտնվում էր ներկա Վաղարշապատի տեղում։ Տիգրան
Երկրորդի օրոք Վարդգեսի ավանը արդեն ծաղկած և
վաճառաշահ բնակավայր էր։ Նրա ժամանակ այս
ավանում շատ հրեա գաղթականներ բնակեցվեցին,
որոնք եկել էին երուսաղեմից։ Այստեղ պետք է հիշել,
որ անցյալում ավան էին կոչվում այն բնակավայրերը,
որոնք պարսպապատ չէին։ Վարդգեսի ավանի պարսպ-
պապատումը կատարում է Արշակունի թագավորներից
վաղարշը, որը թագավորեց մեր թվականության 193—
213 թվականներին։ Այդ մասին Մովսես Խորենացին
գրում է. «Այժմ Վաղարշը պատեց պարսպով և սմբռ
պատվարով և կոչեց Վաղարշապատ...» (Բ. գիրք ԿԵ):
Ինչպես հայտնի է, ապատ մասնիկը պահավերեն լեզ-
վից է, ոնի «բնակավայրի» նշանակություն և հոմանիշ
է շեն, քաղաք կամ կերտ մասնիկներին։ Վաղարշապա-
տը եղել է արշակունյաց թագավորանիստ քաղաքը,
որին մեր աղքային մատենագիրները մեծ տեղ են տվել։
Վաղարշապատը եղել է ոչ միայն Հայաստանի հինա-
վուրց աթոռանիստ քաղաքը, այլև արքունի ձմեռանոց,
ինչպես նաև քրիստոնեության օրրան։ Վաղարշապատի
անվան հետ է կապված նաև Գրիգոր Լուսավորչի անու-
նը, որտեղ 257 թվականին ծնվել է նա։ Նրա հորդորան-
քով էլ Տրդատը հիմնում է Հայրապետաց կաթողիկե-
Մայր եկեղեցին, որը կոչվեց Էջմիածին։ Մայր եկեղե-
ցին կառուցվեց 303 թվականին, Ս. Գրիգոր Լուսավորչի
և Տրդատ թագավորի կողմից։ Եկեղեցին հայ ճարտա-
րապետության հնագույն կոթողներից է և հանդիսանում
է քրիստոնեական ամենահին տաճարը Եվրոպայում։
Մայր տաճարի կառուցման, տեղի ընտրության մասին
մեզ է հասել հետիյալ ավանդությունը։ Ս. Գրիգոր Լու-
սավորիչը, երբ ելնում է Խոր-Վիրապից և քրիստոնեու-
թյուն տարածում Հայաստանում, տեսնում է նշանակոր
տեսիլը՝ Միածինը (այսինքն՝ Քրիստոսը) ուկե մուրճը
ձեռքին իշնում է երկնքից և խփում է այնտեղ, որուեղ
գտնվում էր Մանդարամետի գետնափոր մեջանը։ Դրա-

նով նա հաստատեց, որ տաճարը պետք է կառուցվի այդտեղ: Ս. Գրիգոր Լուսավորիչը իր երազը պատմում է Տրդատ թագավորին և Հորդորում, որ այդտեղ, ուր տեսիլքով իշել է Միածինը, տաճարը կառուցվի: Տըրդատը, որ նոր էր վերադարձել Բագրեանդից, ուր նա մկրտվել էր քրիստոնյա, հավանություն է տալիս այդ գաղափարին: Պատմում են, որ Աշխեն թագուհին ու թագավորի քույրը՝ Խոսրովադումարը, նույնպես ոգեշընչված այդ գաղափարով, անմիջական մասնակցություն են ունենում այդ գործի իրականացմանը: Այսպիսով, 303 թվականին կառուցվում է Մայր տաճարը և ի հավերժացումն Ս. Գրիգոր Լուսավորչի տեսած երազի և կոչվում է Էջ Միածին (Էջմիածին): Այսինքն «Էջավ Միածին Որդին Աստծո»: Սովորաբար Էջմիածին անունը տրվել է վանքին, իսկ Վաղարշապատ կոչվել է քաղաքը: Վաղարշապատ և Էջմիածին անունները սերտորեն կապվեցին Հայ ժողովրդի պատմության հետ և եղան նրա անցյալի հիշողությունների և դեպքերի լուս վկաներ, ու մնացին իբրև նվիրական անուններ: Երբ ոուսների տիրապետության ժամանակ ստեղծվեց երեվանյան նահանգ, ապա նրա կազմի մեջ մտնող գավառներից մեկը կոչվում էր Էջմիածնի գավառ, իսկ կենտրոնը՝ Վաղարշապատ: Սովետականացման առաջին տարիներին, երբ ստեղծվեց Հայաստանի բաժանումը ըստ գավառների, ապա Վաղարշապատի անունով կոչվեց և գավառը, և կենտրոնը: Վերջապես, 1945 թվականին պաշտոնապես Վաղարշապատ քաղաքը և շրջանը վերանվանվեցին Էջմիածին:

ԷՍՈՆԻԱ.— Սովետական Հանրապետություններից մեկը: Անունը առաջացել է ֆիննական «Էստ» ժողովրդի անունից:

ԷՎԲԵԱ.— Կղզի էգեյան ծովում, Հունաստանի արևելյան մասում: Հունարեն էվ՝ «լավ» և բիոս՝ «կյանք» բառերից, հավանաբար՝ «կենսաբեր երկիր»:

ԷՎԵՐԵՍ. — Ներկայումս Չոմոլունգմա կամ Ջոմոլունգմա:
Աշխարհի ամենաբարձր լեռը: Էվերեստ անունը այդ
սարին տվել են անգլիացիները 19-րդ դարի կեսերին,
երբ նրանց կողմից ուժեղացավ Հնդկաստանի գեղե-
զիական ուսումնասիրությունը, որը գլխավորում էր գե-
ներալ Ջորջ Էվերեստը: Գեղեզիական աշխատանքները
տարվում էին նաև Հիմալայներում: Ուսումնասիրվում
էին նրա գագաթները: Անգլիացիներն էլ որոշեցին ի
պատիվ Ջորջ Էվերեստի կոչել Հիմալայների ամենա-
բարձր լեռը: Տե՛ս Չոմոլունգմա:

ԷՏՆԱ. — Հրաբուխ Սիցիլիայում: Էտնա գեղեցկուհու անու-
նով, որը հայտնի է հունական դիցաբանությունում:

ԷՐԵԲՈՒԻՆԻ. — Տե՛ս Երևան:

ԷՐԵԲՈՒԻՄ. — Գործող հրաբուխ Անտարկտիկայում, Խոսսի
կղզում: Կերչին անգամ ժայթքել է 1908 թվականին:
Հրաբխային այս լեռը հայտնաբերվել է 1841 թվակա-
նին Բևեռային երկրների ուսումնասիրող Ջոն Խոսսի
կողմից, որը կղզին կոչել է իր նավի՝ «Էրեբուս»-ի
անվամբ:

ԷՐԵՍՈՒԻՆ. — Նեղուց Շվեդիայի և Զելանդիայի միջև: Գերմա-
ներեն սունդ՝ «նեղուց» բառից: Տե՛ս նաև Զունդ:

ԷՐԶՐՈՒԻՄ կամ ԱՐՁՐՈՒԻՄ. — Քաղաք Արևմտյան Հայաստա-
նում: Հայերեն՝ Կարին կամ քաղաք Կարնոյ: Էրզրում
անվան առաջացումը կապվում է Արզն կամ Արծն ան-
գան հետ, որը Կարինին շատ մոտ էր գտնվում: Արծնը
կործանվեց 11-րդ դարում: Նրա բնակիչները տեղա-
փոխվեցին Կարին և այն վերանվանեցին «Արզն» ի հի-
շատակ իրենց Արզն քաղաքի: Արարներն էլ բուն
Արզն-ից տարբերելու համար այս նոր Արզն-ը կոչեցին
Արզն-էր-Ռում: Այսինքն Ռումի (Հոռմեական) Արզն:
Այդպես էլ քաղաքը ստացավ Արզներում անունը, որ
այնուհետև ձևափոխվեց Արզրումի և հետզհետե թուր-
քերենի ձայնական ներդաշնակության ենթարկվելով՝
դարձավ էրզրումի (ինչպես Ակն-ը՝ էդին կամ թե Կա-

մախը՝ Քեմախն և այլն): Ուրիշ խոսքով ա ձայնավորը դարձել է «է»: Ինչ վերաբերում է էրպրումին Թեղորսուպովիս անվանելը, ապա դա այսպիսի պատմությունը ունի:

Երբ շորորդ դարի երկրորդ կեսում Հայաստանը բաժանվում է Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության միջև, առաջին անգամ Թեղորս Կրտսեր կայսրն էր, որ Կարինը ամրացրեց, դեռևս հինգերորդ դարի սկզբում: Դրանից հետո բյուզանդական տարեգրությունների և առօրյա գործածության մեջ Կարին անունը մոռացվեց: Բերդաքաղաքը կայսրի անունով կոչվեց Թեղորսուպովիս:

Բայց Թեղորսի կառուցած ամրությունները այնքան էլ զորավոր չեին, որ կարողանային ուազմական մեծ կարևորություն տալ քաղաքին: Հետագայում, միայն վեցերորդ դարում, Հուստինիանոս կայսրը բերդը անառիկ դարձրեց: Թեղորսուպովիսը այդ ժամանակից հայկական բարձրավանդակի ամենանշանավոր ուազմական դիրքերից մեկը դարձավ: Երկտակ հովհաններից մոտով թշնամական շատ բանակներ են անցել: Այդ թվում պարսկական, արաբական, թաթարական և վերջապես թուրքական: Տարիներ շարունակ բերդաքաղաքը ձեռքից ձեռք էր անցնում: Բյուզանդական կայսրությունը, սելջուկների արշավանքների ժամանակից սկսած, այն է՝ տասնմեկերորդ դարից, թուլանում է և Կարինն էլ վերջնականաբես ընկնում է միջին-ասիական ցեղերի ձեռքը: Սակայն արաբական արշավանքներից հետո էր, որ Կարին-Թեղորսուպովիսը ստացավ իր այսօրվա Արքունիք կամ էրպրում անունը:

ԷՐԻ. — Իի՞ Հյուսիսային Ամերիկայում, Մեծ լճերի սիստեմում՝ Հայտնաբերվել է 1640 թվականին: Այդպես է կոչվել լճի շրջակայքում բնակվող էրի հնդկական ցեղի անունով:

ԷՐԻՏՐԵԱ. — Նախկին խոալական գաղութ, ներկայումս Եթովպիայի կաղմում: Հունարեն էրիտրոս՝ «կարմիր» բա-

ոից: Իտալացիները այս վայրերը գաղութացնելով վերականգնեցին հին հունական էրիտրեա անվանումը: Ի դեպ, հնում Կարմիր ծովը կոչվում էր էրիտրեական ծով: Ենթադրվում է, որ ծովից է անունը անցել երկրին:

Ը

ՉՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՂՋԻՆԵՐ.— Արշիպելագ Խաղաղ օվկիանոսի հարավային մասում: Հայտնաբերվել են անգլիացի Ռուլիսի կողմից: Ներկա անունը տրվել է 1769 թվականին Ջեմս Կուկի կողմից՝ ի պատիվ Արքայական ընկերության (Անգլիայի գիտության ակադեմիա), որը կազմակերպել էր Կուկի արշավախումբը: Վերջինիս մասնակցում էին նաև այդ ընկերության անդամներն ու գիտնականները:

Ժ

ՊԱԴԱՎՈՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ.— Այսպես է կոչվել Հին Արևելքի այն նշանավոր խճուղին, որը կապել է Պարսկաստանի պատմական մայրաքաղաք Սուզան Էգելան ծովից ոչ հեռու գտնվող՝ Սարդի քաղաքին: Այս լայն ու լուդածակ ճանապարհը «Թագավորական» էր կոչվում, նախ իր բարեկարգության շնորհիվ, և բացի այդ նրանով էին ավանում թագավորական սալլակառերը, փոստը և սուրհանդակները: Ճանապարհը գոյություն է ունեցել այն ժամանակ, երբ Պարսկաստանում իշխում էր Պարեհ թագավորը «արքայից արքան», ինչպես որ կոչում էին նրան: Պարեհի օրոք Պարսկաստանը հասավ իր հզորության գագաթնակետին: Այդ ժամանակ նվաճեցին Հյուսիսային Հնդկաստանը, Բարելոնը, Եգիպտոսը, Արդիան և Հոնիան: Մայրաքաղաքն էլ Եկբատանից տե-

ղափոխվեց Սուզա: Պարսից մհծ պետության սահմաններում ստեղծվեցին բարեկարգ ճանապարհներ, որոնք մայրաքաղաքը կապում էին սահմանամերձ քաղաքներին: Դրանց մեջ յուրովի տեղ էր բռնում «Թագավորական ճանապարհը», որը գալիս էր Սարդ քաղաքից դնում Բիսութունի մոտով, ճյուղավորվում դեպի Բաքելոն և վերջապես հասնում Սուզա (կամ Շոշ):

«Թագավորական ճանապարհը» ուներ 2500 կիլոմետր երկարություն: Քարավանները այն կտրում էին երեք ամսում: Ճանապարհի վրա կային թվով 111 կայաններ, ուղևորների համար բարեհարմար օթևաններով: Ամբողջ ճանապարհը պահպանվում էր արքայական զորամասերով: Արքունիքին անհրաժեշտ մթնոքը (Հատկապես թարմ ձուկ) գնում էր էստաֆետային կարգով: Փոստը տարվում էր արագավաղ նժույգներով, մոտ մեկ շաբաթում:

«Թագավորական ճանապարհի» մասին տեղեկություններ են անցել նաև Հույն գիտնականների՝ Դևմոկրիտի և Հերոդոտի միջոցով:

Ինչպես հայտնի է Հույների հայրենիքում ցամաքացին հարմար ճանապարհներ, ընդարձակ խճուղիներ քիչ կային: Նրանց կյանքը հիմնականում կապված էր ծովի հետ: Դրա համար էլ Հույներին զարմանք էր պատճառում այդ ճանապարհը, աշխարհի «ութերորդ հրաշալիքը»:

Երբ պարսկական Հպոր կայսրությունը կործանվեց, դրանից հետո «Թագավորական ճանապարհն» էլ կորցրեց իր նշանակությունը և աստիճանաբար զնաց դեպի անկում: Նրա առանձին հատվածները այսօր էլ պահպանվել են: Ինչ վերաբերում է նրա վրա գտնվող Հին Արեկլքի երեք նշանավոր քաղաքներին՝ Սուս, Բաքելոն և Սարդի, ապա պեղումների շնորհիվ նրանցից միայն փլատակներն են լույս աշխարհ հանվել:

ԹԱՅԹԱՐԱԿԱՆ ՆԵՂՈՒՑ.— Սախալինի և Ասիա ցամաքի միջև Անունը չնայած թաթար էթնոնիմից է, բայց կապ չունի

այդ ժողովրդի անվան հետո: Եվրոպացիները ընդհանրապես թաթար անունով էին կոչում Մոնղոլիայից և Մանչուրիայից Հյուսիս-արևելք բնակվող ժողովրդին:

ԹԱՅԻՐԻԱ. կամ ԹԱՅԱՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.— Սովետական Ռուսաստանի կազմում: Մանղոլական ծագում ունեցող թաթար ժողովրդի անունից: ԹԱՄԱՆՅԱՆ ԹԵՐԱԿՂՋԻ. — Սև և Ազովի ծովերի միջն ընկած թերակղզի: Զերքեզերեն թեմեն՝ «ճահիճ» բառից: Թաման քաղաքն իր անունն ստացել է թերակղզուց:

ԹԱՅՄԻՐ. — Թերակղզի Ասիայում (ՍՍՀՄ), նրա ծայրակետը՝ Զելուսկին Հրվանդանը գտնվում է այս թերակղզու վրա: Անունը առաջացել է էվկենկերեն թայմուրա՝ «առուտ», «հարուստ» բառից: Էվենկները նկատի են ունեցել իրենց եղջերուների համար կերի և ջրի իմաստով առատ, հարուստ ուսուրաները: Թերակղզու վրա են գտնվում թայմիր անունով լիճ և գետ:

ԹԱՎԻՐԻՋ. — Քաղաք իրանում, հին պարսկերեն տերրիս բառից, որը նշանակում է մալարիան վանող: Այլ խոսքով՝ առողջ տեղ: Իրոք որ քաղաքի կլիման առողջարար է: Թավրիջը իրանական Աղրբեջանի գլխավոր քաղաքն է: Նա իր ժամանակին կարեռ դեր էր խաղում Պարսկաստանի կյանքում և երկրի ամենավաճառաշահ քաղաքն էր: Այստեղից էր սկսվում Թավրիջ-Տրապիզոն տրանզիտային ուղին: Թավրիջում էին նստում պարսից թագաժառանգները, որոնցից Աբաս Միրզան մեծ դեր խաղաց XIX դ. սկզբի ուսու-պարսկական հարաբերություններում:

ԹԱՐԻՄ. — Գետ Կենտրոնական Ասիայում՝ Զինաստանում: Թարիմ նշանակում է «գետ». Հետագայում դարձել է Հատուկ անուն: Ստորին հոսանքում հայտնի է Յարքենդ-Դարիխա անունով:

ԹԲԻԼԻՍԻ. — Վրացական ՍՍՀ-ի մայրաքաղաքը: Վրացերեն թբիլի՝ «տաք» բառից: Այդպես է կոչվել Հանքային տաք ջրերի գոյության պատճառով, որպիսիք շատ կան քաղաքում: Քաղաքի անվանման մասին մեզ է հասել

մի գեղեցիկ ավանդություն: Վրաց Վախթանգ Գորգասալի թագավորը Մցխեթից գալիս է այս կողմերը որսի: Նա մի թոշուն է խիռում և նրա հետեւից բաց է թողնում բաղնիք: Սակայն թե՛ բաղն և թե՛ վիրավոր թոշունն անհետանում են: Թագավորը փնտրում է և երկուսին էլ գտնում է տաք ջրում, զրեթե կիսաեկի վիճակում: Թագավորը այս տաք ջրերի մոտ էլ հիմնում է քաղաքը, որը իր անունը ստանում է դրանից:

ԹԵՄԴԱ.— Գետ Անգլիայում: Անունը ստուգաբանվում է երկու կերպ: Առաջինը, կելտերեն թամ՝ «լայնացվող» քառից: Գետը ծովին մոտենալու ժամանակ հետզհետեւ լայնանում է իր էստուարիայում: Մյուսը, թամեսա՝ «մութ», «տղմոտ» բառից:

ԹԵՐԴՈՍԻԱ (ՅԵՐԴՈՍԻԱ).— Քաղաք Ղրիմում: Հիմնադրվել է 6-րդ դարում, մ. թ. ա. Միկեթից եկած հույն վերաբնակիչների կողմից: Անվանումը հունարեն թեոս «աստված» և դոսոս՝ «նվեր» բառերից: Այլ խոսքով «աստծո նվեր» կամ «աստվածատուր»:

ԹԵՐԵԹ.— Գետ Հյուսիսային Կովկասում: Չելեներեն ակտերկ՝ «բարդի» կամ բալկարերեն թերք՝ «արագավազ, ուժեղ» բառերից:

ԹՐԱԿՅԱՆ ԹՈՍՅՈՒՐ.— Նիրկա Բոսֆորի պատմական անվանումը: Այսպիս են կոչել տարբերելու մյուս՝ Կիմերական Բոսֆորից, որը կերպի նեղուցի հին անվանումն էր: Տե՛ս Բոսֆոր:

ԹՈՒՆԻՄ.— Թունիս պետության մայրաքաղաքը: Հին Աշխարհում այստեղ կար Թանիտու տատվածուհուն նվիրված տաճար, որի անունը անցել է քաղաքին և պետությանը:

ԹՈՒՐԻՆ.— Քաղաք Իտալիայում: Թուրին լիգուրական ցեղի անունից:

ԹՈՒՐԻՆԳԻԱ. կամ ԹՅՈՒՐԻՆԳԻԱ.— Պատմական մարզ Գերմանիայում: Գերմանական թուրինգ ցեղի անունից, որ նշանակում է «անվեհեր» կամ «քոշվոր»:

ԹՈՒՐՖԵՍՏԱՆ.— Պատմական մարզ Միջին Ասիայում: Այս անունը իրանական ծագում ունի և տրված է թյուրքա-

կան լեզվական խմբին պատկանող, Սիր-Դարյա գետից հյուսիս բնակվող քոչվորներին: Ժամանակի ընթացքում Թուրքեստան անունը ընդարձակվեց և տարածվեց ոչ միայն Միջին Ասիայի, այլև Սինցյանի վրա (Արևմբոյան Թուրքեստան):

ԹՈՒՐՔԻԱ. — Պետություն Մերձավոր Արևելքում. ժողովրդի անունից, որը իր ժամանակին բնակվել է Թուրքեստանում, Սիր-Դարյա գետի շրջանում: Նվաճելով Փոքր Ասիան, նրանք հայերի կողմից ստացան տաճիկ անունը (տե՛ս Տաճկաստան): Երկար ժամանակ, մինչև 1922 թվականը, Թուրքիան պաշտոնապես կոչվում էր Օսմանյան (Օտտոմանյան) կայսրություն թուրքական սովորական ներից մեկի՝ Օսմանի անունով: 1922 թվականին պաշտոնապես կոչվեց Թուրքիա. «իս» մասնիկը հաղորդում է, «երկրի» իմաստ: Անհրաժեշտ է հիշել, որ այդ ժողովրդի լեզուն պատկանում է մի ընդհանուր լեզվախմբի, որը կոչվում է «թյուրքական», իսկ իրեն՝ ժողովրդին անվանում են թուրքեր:

ԹՈՒՐՔՄԵՆԻԱ. — Միութենական Հանրապետություն Միջին Ասիայում: Անունը գալիս է թուրքմեն ժողովրդի անունից, որը պատկանում է թյուրքական լեզվական խմբին:

Ժ

ԺԱՅՈՒՏԸ ԼԵՌՆԵՐ. — Կորդիլիերների մի ճյուղը Հյուսիսային Ամերիկայում, Կանադայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև: Հայտնի դարձան 1743 թվականին և կոչվեցին Ժայռոտ լեռներ, քանի որ բուսականությամբ աղքատ և իրոք, ժայռոտ են:

ԺԱՆԵՏՏԱՅԻ ԿՂՋԻ. — Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում, Գեղանդի արշիպելագում: Հայտնաբերվել է 1879 թվականին: Կոչվել է ի համերժացում այստեղ խորտակված

«Ժանետտա» նավի: Իսկ նավն էլ այդպես է կոչվել ի պատիվ ամերիկյան կապիտալիստ թեննետի աղջկա:

ԺԴԱՆՈՎ. — Քաղաք ՌԻՍՍՀ-ում, Ազովի ծովի ափին: Նախկինում՝ Մարիուպոլ, որը 1948 թվականին վերանվանվեց ի պատիվ Ա. Ա. Ժդանովի (1896—1948 թթ.):

ԺԵՂԱՆԻԱ ՀՐՎԱՆԴԱՆ. — Հայերեն՝ «ցանկության» կամ «ըղձանքի» հրվանդան: Այդպես է կոչել անվանի ծովագնաց Բարենցը: Տասնվեցերորդ դարի վերջերին Բարենցը երկու անգամ փորձում է Յուգորսկի Շար նեղուցով անցնել Կարայի ծով, բայց նրան այդ չի հաջողվում: Հետագայում Բարենցի մոտ միտք է ծագում Կարայի ծով անցնել նոր երկիր կղզու հյուսիսով: Այդ նրան հաջողվում է 1596 թվականի օգոստոսի 19-ին, որով կատարվում է նրա իղձը՝ այսինքն հասնում է ցանկալի նպատակին:

ԺԵԼԵԶՆՈՎՈԴՍԿ. — Կուրորտ Ստավրոպոլի երկրամասում: Միներալնիե Վոդի («Հանքային ջրեր») խմբում: Ռուսերեն ժելեզով «երկաթ» և վոդա՝ «ջուր» բառերի միացումից: Այդ վայրը հայտնի է երկաթ պարունակող իր բուժիչ ջրերով:

ԺԻՏՈՄԻՐ. — Քաղաք Ռիվրախնայում: Ռուսերեն ժիտ՝ «ապրել» և միր՝ «խաղաղություն»: Խաղաղ կյանքի իմաստով:

ԺԻՐՈՆԴԱ. — Գարոննա գետի գետաբերանի անունն է: Հավանաբար առաջացել է գետի անվան ձևափոխումից: Այդ անոնմով է կոչվել նաև նրան հարող գեպարտամենտը, որի պատգամավորները իր ժամանակին կոչվում էին Ժիրոնդիստներ անունով և հայտնի դարձան ֆրանսիական հեղափոխության ժամանակ:

ԺՆԵՎ. — Քաղաք Շվեյցարիայում: Անունը ծագել է կելտերեն գենեվա բառից, որը նշանակում է «գետաբերան»: Նկատի է ունեցվում Ավր և Ռոն ա գետերի միացման տեղը կամ լճի այն ափը, որտեղից սկիզբ է առնում Ռոն ա գետը և կարծես նմանվում է գետաբերանի:

իթերԱԿԱՆ ԹԵՐԱԿՂՋԻ կամ ԻԹԵՐԻԱ. — Պիրենեյան թերակը՝
զու պատմական անվանումը: Այդպիս են կոչել Հույ-
ները, տեղական իբեր ժողովրդի անունով:

ԻԹԵՐՅԱՆ ԼԵՌՆԵՐ. — Խստանիայում: Վերջինիս վաղեմի իբե-
րիա անունից: Տես Խստանիա:

ԻԳԱԲԻԿԱ. — Քաղաք Կրասնոյարսկի երկրամասում, նավա-
հանգիստ Ենիսեյի վրա: Այստեղ, ներկա քաղաքի տե-
ղում, ավելի քան Հարյուր տարի առաջ բնակվում էր մի
անհայտ ձկնորս, որի անունն էր Եգորկա կամ, ինչպես
տեղացիներն էին անվանում, Իգորկա: Նրա փայտյա-
խրճիթը գտնվում էր Հրվանդանի ծայրում: Երբ նավերը
անցնում էին Կարայի ծովից Ենիսեյ գետն ի վեր, ապա
իրենց քարտեզներում նշում էին և այդ Հրվանդանը՝
Եգորկայի անունով: Այստեղից էլ ձևափոխվեց Եգոր-
կան-Իգարկայի, որպիսին է այսօրվա քաղաք-նավա-
հանգստի անունը:

ԻԶՄԻԹ. — Քաղաք Թուրքիայում, Մարմարա ծովի ափին,
պատմական Բութանիայում: Հիմնադրվել է 246 թվա-
կանին, մ.թ.ա., Բութանիայի թագավոր Նիկոմեդ I-ի
կողմից: Տես Նիկոմեդիա:

ԻԶՄԻԹ. — Քաղաք Թուրքիայում, Փոքր Ասիա թերակղզու հա-
րավարևմտյան մասում: Եղել է անտիկ աշխարհի-
ծաղկած քաղաքներից մեկը: Հիմնադրվել է Հույների
կողմից Սմիրնա անվամբ, ի հիշատակ Հունաստանի
Լիդիա նահանգում եղած Սմիրնա քաղաքի: Ենթադրվում
է, որ քաղաքը կոչվել է ուազմիկ կոնց՝ Սմիրնայի անու-
նով: Հետագայում թուրքերը անվանումը հարմարեցրին
իրենց լեզվական հնչյունային օրենքներին և դարձրին
իզմիր: Հայերը անվանում են Զմյուռնիա: Հայերի թիվը
քաղաքում հասնում էր քսանհինգ հազարի: Իզմիրի հա-
յերը ընդհանուր տարագրման ժամանակ տեղահան չե-
ղան, չնայած այդ օրերին մոտ 150 մտավորականի
թուրքերը անհայտ կորցրեցին: Իզմիրի հայերի վերջնա-

կան տարագրումը տեղի ունեցավ 1922 թվականին, քե-
մալական իշխանության օրոք: Ահավոր ձևով՝ հրով ոռ
սրով ծովը թափեցին Հայերին: Վերապրողները փրկվե-
ցին օտարերկրյա շոգենավերում ապաստանելով: Կեն-
դանի մնացածները անցան գլխավորապես Հունաստան:
Իլիոն.— Տրոյայի մյուս անունը: Այդպես է կոչվել ի պատիվ
Տրոյայի VI թագավոր Իլոսի (1402—1347 թթ.,
մ.թ.ա.):

Իլինուզ.— Գետ Հյուսիսային Ամերիկայում, Միսսիսիպիի
վտակ: Այդպես է կոչվում նաև Ամերիկայի Միացյալ
Նահանգների շտատներից մեկը: Նահանգն իր անունը
ստացել է գետից: Իսկ հիդրոնիմը ծագել է հնդկական
իլլինի կոչվող ցեղի անունից: Իլլինի նշանակում է «իս-
կական մարդիկ» կամ «ռազմիկներ»:

Իլլին.— Իհմ նովգորոդի մարզում: Հին ձեռագրերում հայտ-
նի է Իլմեր անվամբ, որը ծագել է ֆիննական իլմա-
յարվի բառերից: Իլմա՝ «եղանակ» և յարվի՝ «լիճ» բա-
ռերի զուգակցումից: Նշանակում է՝ եղանակ ստեղ-
ծող լիճ: Հին էտոնացիները հավատում էին, որ լիճը
ընդունակ է անձրև ստեղծել երաշտի ժամանակ, իջար-
կե՝ հատուկ ծիսակատարություններից հետո:

Ինդոնեզիա.— Պետություն Հարավ-Արևելյան Ասիայում: Ին-
դոնեզիա բառացի նշանակում է «Կղղիների Հնդկաս-
տան» կամ «Կղղային Հնդկաստան»: Անվանումը գա-
լիս է միջին դարերից, երբ Հնդկաստան անվա-
նումը ավելի լայն հասկացություն էր, քան այժմ՝
Այն ժամանակ Հնդկաստան ասելով նկատի ու-
նեին ոչ միայն բուն Հնդկաստանը, այլև ամբողջ Հա-
րավ-Արևելյան Ասիայի երկրները: Այսպիսով, միջնա-
դարյան աշխարհագրագետների համար կար թե՛ թերա-
կրդային Հնդկաստան և թե՛ կղղային Հնդկաստան, որ-
տեղից էլ Զոնդյան կղղիները ստացել են իրենց երկ-
րորդ՝ ինդոնեզիա անունը (այսինքն Կղղիների Հնդկաս-
տան): Ինդոնեզիա անունը 1860 թվականին առաջին
անգամ գործածեց հոլանդացի գրող Էդուարդ Դեկկերը,

որը հայտնի է Մովսեսով անունով։ Իսկ 1945 թվականին ինդոնեզիա կողմեց անկախություն ձեռք բերած նախկին Նիդեռլանդական Հնդկաստանը։

ՖՈԴՈՍ. — Գետ Հարավային Ասիայում։ Անոնք առաջացել է սանսկրիտերեն սինդհանուր բարից, որը անցավ հին պարսիկներին և ինդուզ, իսկ լատիններին ինդու ձևով։ Ի դեպ, սինդհանուր բառը նման է խեթերեն և խորիտերեն՝ խինտ, խիյանտ, խիյանտա բառին, որը նշանակում է «ջուր» կամ «գետ»։

ՔՈՇԱՆԵՍԲՈՒՐԳ. — Քաղաք Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում։ Նրա անոնք կապված է բուրերի նվաճման ժամանակաշրջանի հետ։ Քաղաքը այդպես է կոչվել Տրանսվալի նշանավոր պաշտոնյաներից մեկի անունով։

ՔՈՇԿԱԲ-ՕԼՅ. — Մարիական ԱՍՍՀ-ի մայրաքաղաքը։ Անունը առաջացել է մարիերեն յոշկար՝ «կարմիր» և օլա՝ «քաղաք» բառերից։ Քաղաքը հիմնադրվել է 1578 թվականին։

ՔՈՄԻԿ-ԿՈՒԻ. — Լիճ Կիրգիզական Հանրապետությունում։ Թյուրքական իսսիկ՝ «տաք» և կուլ կամ գոլ՝ «լիճ» բառերի գումարից։ Լիճը ձմռանը չի սառչում։

ՔՈՎԱՄԱԲԱԴ. — Պակիստանի նորաստեղծ մայրաքաղաքը։ Ինչպես հայտնի է, Պակիստանի անկախության օրվանից, այսինքն 1947 թվականից սկսած, մոտ 42 տարի մայրաքաղաքը Կարաչին էր, որը գտնվում է Արաբական ծովի ափին և ունի ավելի քան 1 միլիոն բնակիչ։ Բայց 1959 թվականի հոկտեմբերին նահանգապետությունուր կոնֆերանսում որոշում ընդունվեց մայրաքաղաքը Կարաչից տեղափոխել։ Պաշտոնական հաղորդագրության մեջ մայրաքաղաքի տեղափոխման անհրաժեշտությունը հիմնավորում էին կլիմայական, աշխարհագրական, սորատեգիական և սոցիալական պայմաններով։ Զնայած այդ որոշումը ժողովրդի կողմից հավանություն չգտավ, քանի որ կապված էր մեծ ծախսերի հետ, բայց և այնպես մայրաքաղաքը Ռավալ-

պինդի տեղափոխվեց: Այս քաղաքը գտնվում է Կարաշիից Հյուսիս-արևելք, Քաշմիրի սահմանի մոտ և ունի 400 հազար բնակիչ:

Բայց վերջինիս էլ վիճակիված չէր մայրաքաղաք դառնալու փառքը: Որոշվեց Ռավալպինդիից էլ մայրաքաղաքը տեղափոխել: Այդ նպատակով ստեղծվեց միանդամայն նոր քաղաք, որը հիմնադրվեց Ռավալպինդիից 10 կիլոմետր հեռավորության վրա: Նորաստեղծ մայրաքաղաքը իմլամաբադ կոչվեց, որը կազմված է իսլամ և արադ բառերի միացումից: Ինչպես հայտնի է «իսլամ» անունը տրվում է մահմեդական կրոնին հետևողներին: Իսկ արադ բառն էլ պարսկերեն լեզվից է և ունի քաղաքի իմաստ: Այսպիսով, Իսլամաբադ նշանակում է «մահմեդական կրոնին հետևողների քաղաք»: Չմոռանանք հիշել, որ Պակիստանը պաշտոնապես կոչվում է Պակիստանի իսլամական Հանրապետություն:

Իսլամաբադը տեղադրված է Հիմալայների նախալեռների մի թեք հարթության վրա: Դեպի Իսլամաբադ են տանում արդեն բարեկարգ խճուղի և երկաթուղի: Քաղաքը կառուցվում է կառավարության կողմից հաստատված 1960 թվականի նախագծով:

ԽՍԼԱՆԴԻԱ. — Կղզի Հյուսիսային Եվրոպայում, որի վրա գտնվում է համանուն պետությունը: Անունը բառացի նշանակում է «Սաոցի երկիր»: Սկանդինավերեն իս՝ «սաոցից» և լանդ՝ «երկիր» բառերի միացումից: Պապատկանում է աշխարհագրական այն անվանումների թվին, որոնք հանդիսանում են այս կամ այն ճանապարհորդի կամ հայտնագործողի սխալը: Իսլանդիան, որը շատ ավելի բարենպատ պայմաններ ունի մարդու բնակության համար և ուր ոչխարաբուծությունն է զարգանում, կոչվել է սաոցի երկիր, իսկ մյուս կղզին, որն, ընդհակառակը, պատաժ է հավերժական ձյունով ու սառուցով, կոչվել է «Գրենլանդիա» (կանաչ երկիր):

Պատմում են, որ երբ նորմաններից Ֆլոկենն առաջինը
մոտեցել է կղզու մոտ գտնվող մի ծովածոցի, այն ամ-
բողջապես ծածկված է եղել սառուցով։ Հետևապես,
սկզբում «հոլանդիա» անունը վերաբերել է այդ ափին,
իսկ հետո տարածվել է ամբողջ կղզու վրա, որին,
ի՞նչարկե, սաղմական չէ։

ԻՍԿԱՆԴԵՐԿՈՒԼԻԼ. — Իիճ Տաշիկստանում, Գիսարյան լեռներում։
Այդպես է կոչվել ի պատիվ Ալեքսանդր Մակեդոնացու,
որի համբավը հասավ ոչ միայն Միջին Ասիա, այլև ան-
ցավ Հնդկաստան։ Հիշենք, որ Արեելքում Ալեքսանդր
անունը հնչում է՝ Իսկենդեր։ Իսկանդերկուլ լճից սկիզբ
առնող գետը նույնպես կոչվում է Ալեքսանդր Մակեդո-
նացու անվամբ՝ Իսկենդեր գարյա։

ԻՍԿԵՆԴԵՐՌԻՆ. — Նավահանգիստ Թուրքիայում։ Միջերկրա-
կան ծովի արևելյան ափին։ Մոտ անցյալում կոչվում
էր Ալեքսանդրետա։ Քաղաքը իր անունը ստացել է ի
պատիվ Ալեքսանդր Մակեդոնացու։

ԻՍՊԱՆԻԱ. — Պետություն Եվրոպայում, Պիրենեյան թերա-
կըզբում։ Իսպանիա անունը առաջացել է փյունիկյան
դարձան բառից, որը նշանակում է «կես դիշեր», «խա-
վար»։ Այդպես է կոչվել, որովհետեւ այն գտնվում էր
փյունիկեցիների հայրենիքից արևմուտք։ Իսպանիայի
մյուս, ավելի հին անունն իրերիա է, որը նույնպես
փյունիկյան լեզվից է և գալիս է «իրեր» կամ «երեր»
բառից և ունի արևմուտքի իմաստ։ Իրեր անունով է
կոչվել նաև երկրի բնակիչ ցեղերից մեկը։

ԻՍՏՐԻԱ. — Թերակղզի Հարավսլավիայում։ Այդպես է կոչվում
սլավոնական ցեղի՝ իստրերի անունից։

ԻՍՊԱՀԱՆ. — Քաղաք Իրանում։ Հին պարսկերեն թարգմանու-
թյամբ նշանակում է «ուսազմական ճամբար»։

ԻՍՐԱՅԵԼ. — Պետություն Մերձավոր Արեելքում։ Աստվածա-
շընչում իսրայել անունով հայտնի է Հակոբ նահապե-
տը։ Սրանից էլ իսրայել կամ իսրայելցի կոչվեց երրա-
յական (Հրեական) ժողովուրդը։ Երբ 1948 թվականին
Բրիտանական մանդատ Պաղեստինը բաժանվեց երկու

մասի, արաբականը կոչվեց Հոլդանան, իսկ հրեականի համար վերականգնվեց ավանդական «իսրայել» անունը: ԻՌԱԼԻԱ.— Պետություն Հարավային Եվրոպայում: Անունը առաջացել է Կալաբրիային տրվող Վիտալիա անվանումից, որը այդպես է կոչվել Վիտալի ցեղի անունով: Հուլիսս Կեսարի ժամանակ Վիտալիա անունը արդեն ձևափոխված «Իտալիա» տարածվեց ամբողջ Երկրի վրա: ԻՐԱՆ.— Պետություն Միջին Արևելքում: Հազարամյակների ընթացքում Առաջավոր Ասիայի նշանավոր բարձրավանդակներից մեկում, որը աշխարհագրությունից հայտնի է Իրանական բարձրավանդակ անվան տակ, բնակություն են հաստատել հնդկութական ընտանիքին պատկանող մի շարք ժողովուրդներ, որոնք պատմությունից հայտնի են պարսիկներ, մեղացիներ և պարթևներ անվամբ: Ժամանակի ընթացքում դրանց միավորումից ձևավորվեց այն ժողովուրդը, որը հայտնի դարձավ նախ արիացիներ, ապա արդեն իրանցիներ անվան տակ: Այստեղից էլ նրանց հայրենիքը կոչվեց «Իրան»: Այսպիսով, սկզբից ի վեր այդ Երկիրը հայտնի է եղել Իրան անվամբ, իսկ բնակիչները կոչվել են իրանցիներ: Սակայն իրերի բերմամբ աշխարհում այս պետությունը ավելի շատ ճանաչվեց մեկ այլ՝ Պարսկաստան անունով, իսկ բնակիչները պարսիկ կոչվեցին: Դա էլ ժառանգություն մնաց Հուններից, որոնք Ֆարս կամ Ֆարսիստան նահանգի անունը տարածեցին Երկրի վրա, որը փոխարինեց Իրան անվանը: Սակայն 1935 թվականին վերականգնվեց Իրան անվանումը: Տե՛ս Պարսկաստան:

ԻՐԱՎԱԴԻ.— Գետ Բիրմայում: Անունն ստուգաբանվում է «մեծ գետ», ենթադրվում է նաև՝ «փղի գետ»:

ԻՐԱՔ.— Պետություն Միջագետքում: Անվան առաջացումը բացարձում է երկու կերպ: Առաջինը այն է, որ իրաք բառը նշանակում է «ցածրություն», որպիսին է տեղի տորիայի հիմնական մասը Միջագետքում: Երկրորդը,

արաբերեն իրաք՝ «սև» բառից, գուցե սևահողի, պա-
րաբրտ հողի իմաստով:

ԻՌԱՆԴԻՒՄ.— Պետություն համանուն կղզու վրա, Արևմտյան-
Եվրոպայում: Իր կամ էյր կելտական ցեղի անունից և
գումարած անդերեն լանդ՝ «Իրկիր» բառը: Իոլանդացի-
ները իրենց կղզին անվանում են Էրին, որը նշանակում
է «արևմտյան»: Պետությունը կոչվում է նաև Էյրե:

ԻՐԿՈՒՏՍՎԿ.— Քաղաք Արևելյան Միջիրուածական է:
1652 թվականին: Անունը ստացել է Իրկուտ գետից, որի
վրա գտնվում է քաղաքը: Խոկ գետի անվան առաջա-
ցումն էլ կապում են էրիխու ժողովրդի անվան հետ, որը
բնակվել է այս տեղերում 8—9-րդ դարերում:

ԻՐՏԻՇ.— Միջիրի խոշոր գետերից մեկը, Օրի ձախ վտակը:
Իրտիշը հայտնաբերվեց ոուս կազակների կողմից՝ Եր-
մակի գլխավորությամբ: Իրտիշ անունը ծագում է մոն-
ղոլերեն էրկիր՝ «գետ» բառից: Կիրդիզները գետին Կա-
րա իրտիշ են անվանում, որը բառացի նշանակում է Մե-
իրտիշ: Մի այլ ստուգաբանությամբ իրտիշ նշանակում
է «հոր փորող»:

ԻՅՆԻ.— Նախկին խսպանական տիրապետություն Հյուսիս-
արևմտյան Աֆրիկայում: 1969 թվականի հունվարի
4-ին հանձնվեց Մարոկկոյին: Իֆնի անունը բերբերերեն
է և նշանակում է «քարքարոտ» (անապատի մի տե-
սակը):

L

ԼԱԲՐԱԴՈՐ.— Թհրակղզի Հյուսիսային Ամերիկայում: Խսպա-
ներեն և պորտուգալերեն լաբրադորս բառից, որը
նշանակում է «հողագործ»: Հայտնաբերվել է 1500 թվա-
կանին պորտուգալացիների կողմից, որոնք կարծում
էին թե այս երկիրը բարերեր է և կարող է դառնալ հո-
ղագործների երկիր: Թհրակղզին լատիներեն անվանե-

յին Տիերա դոս Լաբրանդոս: Ժամանակի ընթացքում
տիերա (երկիր) բառը ընկավ և մնաց միայն Լաբրադոս,
որը վերափոխվեց Լաբրադորի:

ԱԱԳՈ-ՄԱԶՈՐԵ. — (հտալերեն Լագո-Մազիորե): Լիճ հտա-
լիայի և Շվեյցարիայի սահմանագլխում: Անունը առա-
ջացել է իտալերեն լագո՝ «լիճ» և մազիորե՝ «մեծ» բա-
ռերից: Այսինքն «Մեծ լիճ»:

ԱԱԳՈՍ. — Նիգերիայի մայրաքաղաքը: Գվինեական ծոցի
ափին: Անունը առաջացել է պորտուգալերեն լագոս՝
«լիճ» բառից: Անվանման պատմովյունը այսպիսին է,
եթե 1460 թվականին պորտուգալացի ծովագնաց կապի-
տան Լանսելոյտ դա Ֆրեյտասը խարիսխ գցեց ներկա-
յիս Լագոսի ծովածոցի ափին, որպեսզի մթերք վերցնի,
ապա իր ծովային գրքում շտապեց տեղը անվանել ուշ-
դակի «Լագոս», որը ինչպես ասացինք «լիճ» է նշանա-
կում: Հետագայում այդ տեղում հիմնագրված քաղաքը
ստացավ Լագոս անունը: Քաղաքը գտնվում է ծովից
անջատված ծովածոցի ափին, իր ժամանակին այստե-
ղից մեծ քանակությամբ ստրուկներ են արտահանվել
գեպի Ամերիկա: Լագոսը մտնում է Ստրուկների Ափ
անունը կրող տերիտորիայի սահմաններում:

ԱԱԳՈԳԱ. — Լիճ ՄՄՀՄ-ում: Նախկինում կոչվում էր Նևո, որը
նշանակում էր ծով: 13-րդ դարում այս լիճը անվանե-
ցին Լադոգա, այդ անունը կրող քաղաքի և գետի անու-
նով:

ԱԱԶՈՒԻԾ ԱՓ. — Ֆրանսիայի Միջերկրական ծովին հարող հա-
րավարեկլյան մասը, որտեղից ձգվում է բաց կապույտ,
հազվադեպ փոթորկոտ, զրեթե միշտ հանդարտ ու ջինջ
ծովը: Ծովը ափերի մոտ միշտ կապտագույն է: Այստե-
ղից էլ Լազուր ափ (կապտագույն ափ):

ԱԱԿԱՐԴԻԿՅԱՆ ԿՊՃԻՆԵԲ. — Հնդկական օվկիանոսի մաս կազ-
մող Արաբական ծովում: Հնդկաստանից հարավ-արև-
մուտք: Կղզիների ներկա անվանումը առաջացել է
սանսկրիտերեն լակշա-դիվի բառերից: Լակշա՝ «հարյուր
հազար», իսկ դիվի՝ «կղզի»: Կղզիները բաժանվում են

15 խմբի, որոնցից յուրաքանչյուրն էլ կազմված է բաղմաթիվ կղզյակներից:

ԼԱՄԱՆԾ.— Նեղուց Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի միջև Ֆրանսերեն մանշ բառից, որը նշանակում է «հագուստի թև»: Այս նեղուցը իրոք որ ունի թևի տեսք, որի բազուկը դառնում է Պա-դե-Կալե նեղուցը, իսկ ձեռքն էլ Հյուսիսային ծովը:

ԼԱՄԱՆՉԱ. — Պատմական մարզ իսպանիայում: Այդպես է կոչվում արաբերեն «չոր հող» բառերի միացումից:

ԼԱՅՊՑԻԳ. — Քաղաք ԳԴՀ-ում: Սլավոնական լիպա՝ «լորի» բառից: Իր ժամանակին լորենի ծառերի առկայության պատճառով:

ԼԱՆԳԵԴՈԿ. — Ֆրանսիայի հարավի պատմա-աշխարհագրական նահանգներից մեկը: Ֆրանսերեն լանդ՝ «լեզու» և ոկ՝ «այլ» բառերի միացումից: Եեշտվում է տեղական բարբառի առանձնահատկությունը (ֆրանսիայի մյուս մասերում «այլ»-ն հնչում է «ուի»):

ԼԱՆԴԵՐ. — Ավագուտային հարթ տարածություններ Բիսկայան ծոցի ափին, ֆրանսիական մասում: Անվանումը ֆրանսիական է և նշանակում է «անմշակ տերիտորիա», «պարապուտ»:

ԼԱՆԿԱՍՏԵՐ. — Քաղաք Մեծ Բրիտանիայում (Անգլիա): Անունը առաջացել է Լան գետից, որի մոտ է գտնվում քաղաքը, և լատիներեն կաստեր՝ «բնըր», «ամրոց» բառից: Այսինքն ամրոց Լան գետի վրա:

ԼԱՌՈ. — Պետություն հարավ-արևելյան Ասիայում: Անվանման ծագումը գալիս է լառ ժողովրդի անունից: Լառս ձեզ տվեցին պորտուգալացիները, որոնց լեզվում «ս» տառը ունի թե՛ հոգնակի և թե՛ երկրի իմաստ, ինչպես հայերենում «ք» տառը (հիշենք հայ և հայք բառերը):

ԼԱ ՊԱՍ. — Բոլիվիայի մայրաքաղաքը: Իսպաներեն լա Պաս՝ «խաղաղություն» բառից: Հիմնադրվել է 1548 թվականին: Անունը տրվել է ի հավերժացումն այն խաղաղության, որը տեղի ունեցավ կոնկիստադոր Պիգարոյի մահից հետո՝ նրա և Ալմագրոյի հետնորդների միջև:

Քաղաքի սկզբնական անվանումը եղել է շատ երկար. նա կոչվել է «Մեր տիրամոր և խաղաղության նոր քաղաք»:

Խսպանացիները սիրում էին տիրամորը մեծարել դանաղան մակղիրներով: Ժամանակի ընթացքում այդ երկար ու ճոխ անվանումից մնաց մի բառ, այն է՝ լազար, այսինքն «խաղաղություն»:

ԱԱ. ՊԵՐՈՒԻՉ. — Նեղուց, որը բաժանում է Ճապոնիան Սախալին կղզուց: Հայտնաբերվել է 1787 թվականին ֆրանսիացի նշանավոր ծովագնաց Ժան դե Վերուզի կողմից (1741—1788 թթ.), որի անվամբ էլ կոչվել է:

ԱԱ. ՊԼԱՆԴԻԱ. — Մարդ Սկանդինավյան թերակղզում: Անունը առաջացել է ֆիննական ծագում ունեցող լուսար ցեղի անունից:

ԱԱ. ՊԼԱՏԱ. — Պարանայի և Պարագլայի միացումից կազմված ծովային ծոց: Խսպաներն ալատա բարից է, որը նշանակում է «արծաթային»: Հայտնաբերվել է խսպանացի ծովագնաց Սոլիսի կողմից 1515 թվականին: Նա փոթորկից պաշտպանվելու համար խորը կերպով մտնում է մի ընդարձակ ծոց, որը ձգվում էր դեպի արևմուտք: Լա Պլատա կոչեցին այն պատճառով, որ տեղական բնակիչները խսպանացիներին ցուց տվեցին արծաթյա զարդեր, դրանից խսպանացիները ննթագրեցին, թե այստեղի ափերը հարստա են արծաթով: Սակայն, իրականում, դրանք բերվել էին հեռավոր Պերուից և Բոլիվիայից:

ԱԱ. ՊՏԵՎԿՆԵՐԻ ԾՈՎ. — Ծով, որը կազմում է Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի մի մասը: Այդպես է կոչվել ի պատիվ ոռու ծովագնացներ Դմիտրի Լազարևի (1699—1768 թթ.) և Խարիտոն Լազարևի (1698—1772 թթ.), որոնք նավարկեցին այս տեղերով 1730-ական թվականներին:

ԱԱ. ՎԱԼԵՏԱ. — Մալթա կղզու մայրաքաղաքը: Հիմնադրվել է 1566 թվականին Մալթայի Միաբանության Մեծ մագիստրոսի ժամ դե Լա-Վալետայի (1494—1563 թթ.) կողմից:

ԱՍՏԱՔԻԱԾ կամ ԱՄԹԱՔԻԱԾ.— Նավահանգիստ Սիրիայում՝ Հառողիկեա քաղաքի անվան աղավաղված արարական ձևն է: Հիմնադրվել է Սելեկյան թագավոր Սելևկ II-ի կողմից ի պատիվ իր մոր՝ Հառողիկեայի:

ԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱԾ.— Արևմտյան կիսագնդի այն երկրների խմբավորումը, որոնք ընկած են ԱՄՆ-ի սահմաններից հարավ: Լատինական Ամերիկայի մեջ մտնում են Մեքսիկան, Կենտրոնական Ամերիկան, Վեստ Ինդիան և ամբողջ Հարավային Ամերիկան: Քրիստափոր Կոլումբոսի կատարած հայտնագործումից հետո այդ երկրները սկզբնական շրջանում գաղութացվեցին Հիմնականում իսպանացիների և մասամբ (թրագիլիան) պորտուգալացիների կողմից: Նրանք այնտեղ տարածեցին իսպաներենն ու պորտուգալերենը, բացառությամբ Հախտի պետությունից, ուր իշխում է ֆրանսերենը: Քանի որ այդ լեզուները պատկանում են լատինական կամ ռոմանական լիգվական խմբին, այսինքն այն ճյուղին, որի հիմքում ընկած է լատիներենը, որա համար էլ այդ երկրները ստացան լատինական Ամերիկա անվանումը:

ԱՏՎԻԱԾ.— Սովետական Միութենական Հանրապետություն: Այդպիս է կոչվել բալթիկական ժողովուրդ լատվիացիների կամ լատիշների անունով: Էթնոնիմն էլ հավանական է ծագել է լատ բառից, որը նշանակում է «մետաղյա», «պողպատյա հագուստ»: Այս ձևի հագուստը լայնորեն օգտագործվում էր Մերձբալթյան երկրներում (12—13 թթ.) միջնադարում, գերմանական ազրեսիայի ժամանակ:

ԼԵՀԱՍՏԱՆ.— Պետություն Արևելյան Եվրոպայում: Լեհ ժողովրդի անունով, որի նախորդը, ըստ ավանդության, եղել է սլավոնական ժողովուրդները ներկայացնող՝ Լեխ, Զեխ, Ռուս եղբայրներից առաջինը:

ԼԵՆԱԾ.— Գետ Միբիրում: Անվան առաջացումը ստուգաբանվում է մի քանի կերպ: Էվենկները այս գետին (վերին հոսանքին) Ելյույոնե անունն են տալիս, որը ուղղակի «գետ» է նշանակում: Ռուսները այդ անունը հարմարեց-

րել են հին ոռւսերենում լեն բառին, որը նշանակում էր «դանդաղկոտ», «ծուլ», «հանգիստ», «խաղաղ»։ Մի այլ ստուգաբանությամբ՝ առաջին ոռւսերը, որոնք հասել են ինսայի ափերին, եկել են վոլխով գետի շըրջանից և գետին տվել են իրենց ծանոթ փոքրիկ գետակ՝ լենայի անունը, որը վոլխովի վտակն է։

Լենին Պիկ. — Լեռնագագաթ Անդրալայան լեռնաշղթայում, լեռնային թաղախշանում։ Հայտնաբերել է Ա. Պ. Ֆեդչինկոն և կոչել է ի պատիվ Տաշքենդի գեներալ նաշանգապետ՝ Կառլֆմանի անունով՝ Կառլֆմանի Պիկ։ 1928 թվականից վերանվանվել է Վ. Ի. Լենինի անվամբ։

ԼենինԱԲԱԴ. — Քաղաք Տաջիկական ՍՍՀ-ում։ Այդպիս է կոչվել ի պատիվ Վ. Ի. Լենինի և ավելացրած պարսկերեն աբադ «քաղաք» բառը։ Այսինքն Լենինի քաղաք։

ԼենինԱԿԱՆ. — Իր մեծությամբ երկրորդ քաղաքը Հայկական ՍՍՀ-ում։ Վ. Ի. Լենինի անվամբ կոչվել է 1924 թվից. նախկին անունն էր Ալեքսանդրապոլ (տես)։

ԼենինԳՐԱԴ. — Քաղաք ՌԽՖՍՀ-ում։ Այս անունը կրում է սկսած 1924 թվականից։ Քաղաքը հիմնադրվել է 1703 թվականին և կոչվել է Սանկտ-Պետերբուրգ ի պատիվ ոռւսական կայսր Պյոտր 1-ի (1672—1725 թթ.): Հետագայում 1914 թվականին, համաշխարհային պատերազմի ժամանակ, գերմանական անունների վերացման կապակցությամբ, տրվեց Պետրոգրադ ոռւսականացված անունը։ Լենինի մահից հետո, 1924 թվականին, խորհուրդների երկրորդ համագումարում որոշում ընդունվեց քաղաքը վերանվանել Լենինգրադ՝ ի պատիվ Վ. Ի. Լենինի (1870—1924 թթ.):

* ԼենինԳՈՐԾԿ. — Քաղաք Ղազախական ՍՍՀ-ում։ Ի պատիվ Վ. Ի. Լենինի և ավելացրած ոռւսերեն գորա «լեռ» բառը և «սկ» մասնիկը, որն ունի քաղաքի իմաստ։

ԼենՔՈՐԱՆ. — Քաղաք Աղրբեջանական ՍՍՀ-ում։ Երկրի հին քաղաքներից է։ Պարսկերեն լենգիր՝ «խարիսխ» և կունան՝ «գցել» բառերի միացումից, ակնարկելով այն փաստը, որ այդտեղ նավերը խարիսխ են ձգում։

ԼԵՂՊՈՂԴՎԻԼ. — Կոնգոյի մայրաքաղաքը: Այդպես է կոչվել ի պատիվ Թեղիայի թագավոր Լյուպոլդ Հ-ի (1865—1909 թթ.) և գումարած Գրանսերեն վիլ՝ «Քաղաք» բառը: 1966 թվականից վերանվանվել է Կինշասա:

ԼԵՎ ՏՈԼՍՈՅ. — Բնակավայր և երկաթուղային կայարան Լիպեցկի մարզի Հյուսիսային մասում: Կոչվել է ի պատիվ ուստի մեծ գրող Լ. Ն. Տոլսոտյի (1828—1910 թթ.): Կայարանը անցյալում կոչվում էր Աստապովո, այստեղ 1910 թվականին վախճանվեց և Տոլսոտյը:

ԼԻՎԱՆՏ. — Միջնադարյան տերմին, որը գալիս է ֆրանսերենից և բառացի նշանակում է «արևածագ»: Վերաբերում է Միջերկրական ծովի արևելյան ափին ընկած երկրներին՝ Միջերկրային և Լիբանանին: Տե՛ս նաև Արևելք:

ԼԻԲԱՆԱՆ. — Պետություն Մերձավոր Արևելքում: Երրայերեն լաբան՝ «սպիտակ» բառից: Այդպես է կոչվել Լիբանանի լեռների ձյունածածկ կում կրաքարային լինելու պատճառով:

ԼԻԲԵՐԻԱ. — Պետություն Աֆրիկայում: Անունը ծագել է լատիներեն լիբեր «ազատ» բառից, ավելացրած «իա» ձասնիկը, որը երկրի իմաստ ունի: Հիմնվել է 1822 թվականին ԱՄՆ-ից եկած նեղրերի կողմից, որոնք ազատվել էին ստրկատիրական աշխատանքից: Հետագայում նրանք ԱՄՆ-ի հենարանը դարձան Արևմտյան Աֆրիկայում:

ԼԻԲԻԱ. — Պետություն Հյուսիսային Աֆրիկայում: Այս անունը անցել է հուներից: Հին հուները կիբու էին կոչում այն քամուն, որը փշում էր հարավից: Երբ ծանոթացան այն երկրին (Հյուսիսային Աֆրիկային), որտեղից փշում էր այդ քամին, ապա այն կիբիա անվանեցին, որը նշանակում է «Հարավ», նկատի ունենալով երկրի դիրքը Հունաստանի նկատմամբ: Հուների համար կիբիա անվանումը համապատասխանում էր Աֆրիկային և առհասարակ այն ժամանակ հայտնի երկրներին, որոնք գտնվում էին իրենցից հարավ: Հետագայում կիբիա անունը երկար ժամանակ մոռացության տրվեց: Վերա-

կանգնվեց միայն 1912 թվականին իտալացիների կողմից, որոնք այդ թվին Թուրքիայից խլեցին Տրիպոլիտանիան, Կիրենական և միացնելով իրար ստեղծեցին Լիբիա անունով գաղութը։ Ներկայումս Լիբիան ինքնուրույն պետություն է։ Հայկական «Աշխարհացուցում» Լիբիա է կոչվում Աֆրիկան։

Լիբրեգիլ. — Գարոնի մայրաքաղաքը։ Ֆրանսերեն լիբր՝ «աղատ» և վիլ՝ «քաղաք» բառերից։

Լիգուրիան ՍՈՎ. — Միջերկրական ծովի մի մասը, ողողում է Ֆրանսիայի և Իտալիայի ափերը։ Ընկած է Կորսիկա, Էլբա կղզիների միջև։ Ծովի անունը լիգուր ժողովրդի անունից է, որը մեր թվականությունից առաջ բնակվում էր նրա հյուսիսային ափերին։

ԼիգուրիԱ. — Փատմաշխարհագրական մարզ Իտալիայում։ Լիգուրյան ժողովրդի անունից, որը ժամանակին նվաճեց Հյուսիսային Իտալիան, Կորսիկան, Սարդինիան, Հարավային Ֆրանսիան, Իսպանիան և Բալեարյան կղզիները։

Լիեժ. — Քաղաք Բելգիայում։ Գտնվում է Համանուն գետի վրա, որից ստացել է իր անունը։

ԼիեՊԱՅԱ. — Քաղաք Լատվիական ՍՍՀ-ում, լատիշերեն լիեպա՝ լորենի ծառի անունից։ Անցյալում հայտնի էր Լիբավա անունով։

Լիլ. — Քաղաք Ֆրանսիայում. (Նոր դեպարտամենտում)։ Հին ֆրանսերեն լիլ բառից, որը նշանակում է կղզի։ Սկզբում քաղաքը ծնունդ առավ Դյուլ գետի կղզիներից մեկի վրա։

ԼիեՏԵՆԵՏԵՑՆ. — Փոքրիկ պետություն Ալպերում, Ավստրիայի և Շվեյցարիայի միջև։ Անունը առաջացել է Լիխտենշտեյնի իշխող դինաստիայից, որի անունը ծագել է գերմաներեն լիխտ՝ «թեթև» կամ «փայլուն» և շտեյն՝ «քար» բառերից։

ԼիՄԱ. — Պերուի մայրաքաղաքը։ Հիմնադրվել է 1535 թվականին Ռիմակ գետի վրա, որի անվան արավաղումը դարձել է Լիմա։ Ինկերեն որիմակ նշանակում է «նա, որ

խոսում է»՝ Հիշատակ այն ժամանակներից, երբ այս վայրերում եղել է պատգամախոսարան:

ՀիՄՈՒԺ. — Քաղաք Կենտրոնական Ֆրանսիայում: Այդպես է կոչվել գալլական լիմովիցի ցեղի անունով:

ՀիՄՊՈՂՈ. — Գետ Հարավային Աֆրիկայում: Նշանակում է «Կոկորդիլոսի գետ»: Այդպես անվանեցին բուրերը (Հուլանդացի վերաբնակիչները), որովհետև իր ժամանակին գետում կային մեծ թվով կոկորդիլոսներ:

ՀիՌՆ. — Քաղաք Ֆրանսիայում: Նախկին կուգունում անվան ձևափոխումն է: Ստուգաբանվում է երկու կերպ: Առաջինը, կապվում է հոռմեացի պատրիկ կուցիոս Մունատիոս Պլանկայի անվան հետ, որը կալվածներ ուներ այս վայրերում, մ.թ.ա., 2-րդ դարում: Երկրորդը, կերտական լյուդ աստծու անունով: Ավելի ծանրակշիռ է երկրորդ ստուգաբանությունը:

ՀիՌՆԻ ԾՈՅ. — Միջերկրական ծովի ծոցերից, Ֆրանսիայի ափերին: Ֆրանսերեն լիոն՝ «առյուծ» բառից: Այդպես է կոչվել, որովհետև Միստրալը (Հարավային քամին) փշելով, այնպիսի ձայն է հանում, որը հիշեցնում է առյուծի մոնշյունը:

ՀիՊԱՐՑԱՆ ԿԴՋԻՆԵՐ. — Հրաբխային կղզիների խումբ Միջերկրական ծովում: Հին հունարեն լիպերոս նշանակում է «պտղաբեր»: Սկզբում կիպարա է կոչվել ամենամեծ կղզին, իսկ հետադայում անունը տարածվել է արշիպելագի վրա: Կղզիները այլ կերպ կոչվում են նաև էոլի կղզիներ, որը գալիս է հունական առասպելաբանությունից, քամու աստված էոլի անունից:

ՀիՎԵՐՊՈՒԽ. — Քաղաք Անգլիայում: Հին-սկանդինավյան լեզվով՝ «լիթարպոլ՝ «ճահիճ»» բառից:

ՀիՎԵՑԿ. — Քաղաք ՌԱՖԱԼ-ՌԱՄ: Ռուսերեն լիպա՝ լորենի ծառի անունից: Իսկ «եց» կամ «եցկ» մասնիկը սովորական է հին ռուսական տեղանունների կազմության մեջ:

ՀիՍԱԲՈՆ. — Պորտուգալիայի մայրաքաղաքը: Նախկինում օլիսիալու: Անհասկանալի տոպոնիմն ստուգաբանելիս ծաղել է այն տեսակետը, թե քաղաքի անունը կապված է

Հումական էպոսների հերոս Ողիսևսի անվան (լատիներին Ուզիս) հետ, որն իրը թե հիմնադրել է քաղաքը: ԼիվինջՍՌՈՆ.— Գետ Կոնգոյում: Կոչվել է ի պատիվ անգլիացի նշանավոր հետազոտող և ճանապարհորդ Դավիթ Լիվինգտոնի:

ԼԻՏՎԱ.— Մերձբալթյան Սովետական Հանրապետություն: Անունը ստացել է լիտվացի ժողովրդից:

ԼՂԱՍՍ.— Տիբեթի ինքնավար շրջանի կենտրոնը: Լհասա անվանումը Տիբեթերեն լհա՝ «աստված» և սա՝ «երկիր» անունների գումարից է: Այսինքն «Աստծո քաղաք»: Քաղաքը համարվում է սրբազն և ուխտավայր է:

ԼՅԱԽՈՎՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ.— Նոր Միբիրական արշիպելագում: Կապված են Յակուտսկի վաճառական իվան Լյախովի անվան հետ, որը այդ կղզիները հայտնաբերեց 1770—1775 թթ. ընթացքում: Մամոնտի ոսկրի որոնման համար նա 1770 թվականին անցավ նեղուցով և հասավ առաջին կղզուն, ապա հայտնաբերեց երկու այլ կղզիներ: Եկատերինա թագուհու հրամանագրով Լյախովին մենաշնորհվեց այդ կղզիներում արդյունագործությամբ զրադվելը և նրա անունով էլ կոչվեցին կղզիները:

ԼՅԱՌԴՈՒՆ.— Թերակղզի Չինաստանի Հյուսիս-արևելքում: Թերակղզին իր անունը ստացել է լյառին գետից: Ի դեպ, գետի անունը լյառ է, իսկ «խե» մասնիկը նշանակում է «գետ»: Թերակղզու անվան մեջ լյառ անվանն ավելացվել է դրու՝ «արևելք» բառը: Ստացվել է լյառուն, այսինքն «լյառ գետից արևելք»:

ԼՅԱՆՈՍՆԵՐ.— Խսպաներեն լյանոս՝ հարթավայր բառից: Այդպիս են կոչվում սավաննաները Հարավային Ամերիկայի Հյուսիս-արևելյան մասում՝ Օրինոկո գետի ավազանում: Այս տափաստաններում տարվա շոր եղանակին, երբ ջերմությունը հասնում է 50 աստիճանի, բուսականությունը խանձվում է: Անձրևների շրջանում (ապրիլ-հոկտեմբեր) լյանոսները ծածկվում են թավշանման խոտով:

ԼՅՈՒԹՍԵՄԲՈՒԻՐԳ. — Պետություն կենտրոնական Եվրոպայում:
Լուցիոս՝ Հռոմեացի անձնավորության անունից, որի
կալվածքներում ծնունդ առավ մի քաղաք և գերմա-
ներեն բուրգ՝ «բերդ» կամ «ամրոց» բառից: Սկզբում
այդ անունը կրում էր քաղաքը, ապա տարածվեց նաև
դքսության վրա:

ԼՈՅ-ՆՈՅ. — Լոյն Մոնղոլիայում: Առաջացել է տիբեթերեն լոր՝
«տղմոտ» և նուր կամ նոր՝ «լիճ» բառերից: Այսինքն
ճահճոտ լիճ:

ԼՈԴԵՅՆՈՅՑ ՊՈԼԵ. — Քաղաք Լենինգրադի մարզում, Լադոգա
լճի մոտ: Սլավոներեն լոդիա բառից, որը նշանակում է
«նավակ» և պոլե՝ «դաշտ» բառերի միացումից: Սկզբ-
րում այս քաղաքի տեղում գտնվում էր մի բաց տարա-
ծություն, որտեղ նավակներ էին կառուցվում: Հետագա-
յում բանվորների համար ժամանակավոր բնակելի տներ
կառուցեցին, որը և եղավ քաղաքի հիմնադրման սկիզ-
բը:

ԼՈՅԱՐԻՆԳԻՅ. — Պատմա-աշխարհագրական մարդ Ֆրան-
սիայում: Անունը ստացել է ի պատիվ կայսր Լոթար
I-ի (843—855 թթ.) և հին գերմաներեն ոինգե՝ «պե-
տություն» կամ «երկիր» նշանակություն ունեցող բա-
ռից: Այսինքն «Լոթարի երկիր»:

ԼՈՅ. — Քաղաք Լեհաստանում: Անունը ծագել է «նավակ»
բառից, անցյալում այստեղ գոյություն ունեցած նա-
վակների շինարարության պատճառով:

ԼՈՄԲԱՐԴԻՅ. — Պատմական մարդ Հյուսիսային Իտալիայում:
Լանգորարդ գերմանական ցեղի անունից, որոնք նվա-
ճեցին Լոմբարդիան 6-րդ դարում: Էթնոնիմն էլ ստու-
գարանվում է լատիներեն լոնդա՝ «երկար» և բարդա՝
«մորուք» բառերով: Նշանակում է «երկար մորուքվ»
մարդիկ:

ԼՈՄՈՆՈՍՈՎ. — 1) Քաղաք Լենինգրադի մարզում: Նախկին
Օրանիենբաումն է: 2) Լեռնաշղթա Հյուսիսային սա-
ռուցյալ օվկիանոսի հատակում, նոր սիբիրյան կղզինե-

թից մինչև Կանադական Արկտիկական արշիպելագը
3) Հրաբուխ Կուրիլան կղզիներում և 4) Լեռ Նոր Երկ-
րուս: Այս անվանումները տրված են ի պատիվ ռուս
գիտնական, ժամանակակից բնական գիտությունների
հիմնադիրներից մեկի՝ Միխայիլ Վասիլևիչ Լոմոնոսովի
(1711—1765 թթ.):

ԼՈՆԳԻ ՆԵՐՈՒՅՑ. — Վրանգելի կղզու և Ասիա մայրցամաքի
միջև: Այսպես է անվանվել ի պատիվ ամերիկյան ծո-
վագնաց և կետորս թումաս Լոնգի, որը իր ժամանակին
կետորսության նպատակով եղել է այս կողմերում:

ԼՈՆԴՈՆ. — Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքը: Հիմնադրվել է
55 թվականին, մ. թ. ա.: Անվանման առաջացումը գա-
լիս է կելտական լեզվից՝ լին և գուն բառերի զուգակցու-
մից, որն ապա որոշ ձևափոխման է ենթարկվել: Լին բա-
ռը ունի «ճահճի» նշանակություն, իսկ գուն «ամրու-
թյուն, ուրեմն՝ «ամրություն ճահճի վրա»: Վաղ ան-
ցյալում ներկա Լոնդոնի կենտրոնական մասում,
Թեմզայի ափին, եղել է մի ամրություն, որը դարձել է
ապագա քաղաքի կորիզը: Պատմությունը այդ ամրու-
թյան հիմնադրումը կապում է Հուլիոս Կեսարի լեգիոն-
ների հետ, որոնք նվաճեցին այս կողմերը և թողեցին
շատ հնություններ:

ԼՈՊԱՏԿԱ. — Հրվանդան Հարավային Կամչատկայում: Առա-
ջացել է ռուսերեն լուսատկա՝ «թիակ» բառից: Այդպես
է կոչվել թիակաձև լինելու պատճառով:

ԼՈՍ-ԱՆՖԵԼՈՍ. — Քաղաք ԱՄՆ-ում (Կալիֆորնիայի շտատ):
Հիմնադրվել է 16-րդ դարում իսպանացիների կողմից,
1846 թվականին գրավեց ԱՄՆ-ը: Անվանումը իսպանե-
րեն բառացի նշանակում է «Հրեշտակապետ»: Այսինքն
«Ավագ հրեշտակ»: Քրիստոնեական եկեղեցին այս
մակղիրը տալիս է Գաբրիել հրեշտակին:

ԼՈՌԻՐԵՆՍՈՒ-ՄԱՐԿԻԾ. — Քաղաք Հարավ-Արևելյան Աֆրիկա-
յում: Պորտուգալական գաղութ Մոզամբիկում: Քաղաքը
հիմնվել է 1760 թվականին, համանուն ծոցի ափին:

իսկ ծոցը այդպես է կոչվել ավելի վաղ, ի պատիվ պորտուգալացի ծովագնաց Լոռենսուու-Մարկիշի:

ՀՎՈՎ.—Քաղաք Ուկրաինայում: Հիմնադրվել է Գալիցիայի թագավոր Դանիլի Ռոմանովիչի կողմից: Քաղաքը կոչվել է ի պատիվ նրա որդի Լևի և ավելացվել «ով» մասնիկը, որը ցուց է տալիս պատկանելիություն: Լև հետագայում դարձավ Գալիցիայի թագավորը (1264—1290 թթ.): Քաղաքը ավստրիական տիրապետության ժամանակ կրեց նաև Լեոպոլ (Լեո և պոլիս) և Լեմբերգ (Լեո և գերմաներեն բերգ) անունները:

ՀՈՒԱՐԱ.—Գետ Ֆրանսիայում: Հնդկորոպական լիգ բառից, որը նշանակում է «Հոսել», «վազել»: Ժամանակի ընթացքում ձևափոխվելով դարձել է լուարա:

ՀՈՒԱՆԴԱ.—Քաղաք Անգոլայում: Այդպես է կոչվել ի պատիվ Սան-Պաուլու-դի-Լուանդի, որը 1574 թվականին մոտեցավ այս ափերին: Ի դեպ, նա եղել է Բարդուղիմոս Պիասի թոռը:

ՀՈՒԻԶԻԱՆՆԵ.—ԱՄՆ-ի նահանգներից մեկը: Այսպես է կոչվել 1682 թվականին Կավելյե դե Լա Սալի կողմից ի պատիվ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս (Լուի) 14-րդի (1638—1715 թթ.):

ՀՈՒՄՈՒՄԲԱՇԻ.—Քաղաք այն Կոնգոյում, որի մայրաքաղաքն է Կինշասան: Նախկինում էլիզարեթվիլ: Քաղաքը վերանվանվեց ի պատիվ Պատրիս Լումումբայի:

ՀՈՒՍՈՆ.—Կղզի Ֆիլիպիններում: Հայտնաբերվել է 1561 թվականին իսպանացի Լեգասալիայի կողմից: Խսպանացիներին զարմանք էին պատճառում բնիկների տանդուներին դրած խոշոր արկղները, որոնք ունեին տաշտիձեւ: Դա բնիկների մոտ փոխարինում էր սանդին, որոնցում բրինձ էին ծեծում: Դրա համար էլ կղզին անվանեցին «Խսլա դե լոս լոսոնես», որը նշանակում է «Տաշտի կղզի»: Ժամանակի ընթացքում այդ անունը կրճատվեց և կղզին կոչվեց Լուան:

ՀՈՒՔՍՈՐ.—Քաղաք ԱՄՀ-ում (Եգիպտոսում): Արաբական էլ-քուսուր բառի աղավաղված ձևն է, որը էլ-քասրա՝

«Ճամբար» կամ «ամրոց» բառի հոգնակի ձևն է: Թերեւս դիմվորական ճամբարի գոյության մասին է եղել խոսքը: Մյուս մեկնաբանումը ալ-օքսոր, այսինքն «պալատներ» բառի ձևափոխումն է: Այստեղ ալ մասնիկը որոշիչ է:

Խ

ԽԱԲԱՐՈՎԿՍԿ.— Քաղաք Սովետական Հեռավոր Արևելքում: Այսպես է կոչվել ի պատիվ ոռւս ճանապարհորդ հետազոտող, Մերձամուրիայի 17-րդ դարի առաջին նվաճողներից երրորդ խաբարովի:

ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՒՍ.— Այսպես է կոչվում մեր մոլորակի ամենամեծ օվկիանոսը: Նա գրավում է 180 միլիոն քառակուսի կիլոմետր տարածություն, այսինքն համաշխարհային օվկիանոսի կեսը: Առաջին եվրոպացին, որը տեսավ այս օվկիանոսի անծայրածիր ջրերը, իսպանացի Բալբոան էր, որը 1513 թվականին անցավ Պանամայի պարանոցն ու այն անվանեց «Հարավային ծով», ի հակադրություն Հյուսիսային ծովի՝ Ատլանտյան օվկիանոսի: Սակայն այդ անունը երկար շպահպանվեց: 1519 թվականին Մագելանը, մեկնելով իսպանիայից, ուղղություն էր վերցրել Հարավ-արևմուտք և նպատակ ուներ հասնելու այն նեղուցը, որը նրան պետք է դուրս բերեր «Հարավային ծովը»: Հասնելով Հարավային Ամերիկայի ափերին, Մագելանը մոտեցավ այն նեղուցին, որը ներկայում կրում է նրա անունը: Նեղուցով նավարկելով Մագելանի Համար շատ դժվար եղավ: Կատաղի ալիքները մոլեգնորեն այս ու այն կողմն էին շպրտում նրա նավերը: Քսաներկու օր Մագելանի մարդիկ կովի մեջ էին տարերի հետ: Վերջապես նրանց առաջ բացվում է մի լայնատարած, ջինջ ու խաղաղ ջրային ընդարձակություն: Հանգիստ, անդորր եղանակը բարենպաստ եղան նրա նավարկությանը, օգնեց նաև այն հանգամանքը, որ նրանք օվկիանոսն անցել են

Հասարակածին ավելի մոտ տեղերով և այն էլ այն ժամանակ, երբ փոթորիկներ հազվագեղ են լինում: Դա էր պատճառը, որ նրա նավերը ամբողջ ճանապարհորդության ընթացքում չենթարկվեցին փոթորկի: Այդ բանը հիմք տվեց Մագելանին ջրային այդ տարածությունն անվանելու «Խաղաղ ծով»: Այնուհետև Անգլիայում ընդունվեց և տարածվեց «Խաղաղ օվկիանոս» անունը:

Հետագայում ուսումնասիրությունները պարզեցին, որ դա նաև ամենամեծ օվկիանոսն է: Այդ առթիվ էլ 1756 թվականին ֆրանսիացի աշխարհագրագետ Բյուաշը հաշվի առնելով նրա բռնած տարածությունը՝ առաջարկեց այն անվանել Մեծ օվկիանոս: Իրականում «մեծ» մակղիրը ավելի շատ է սազական նրան, քանի որ երբ նրա մի ծայրում կես գիշեր է, ապա մյուս ծայրում՝ արկղենիթում է: Նա միշտ չէ, որ խաղաղ է: Ոչ մի օվկիանոսում փոթորիկն ու մըրիկը այնպիսի ուժի չեն հասնում, ինչպես այս «խաղաղ» օվկիանոսում: Զնայած այդ բոլորին, ժամանակի ընթացքում «մեծ» մակղիրը ընկավ և գործածական մնաց «Խաղաղ օվկիանոս» անվանումը:

ԽԱՅՆԱՆ.—Կղղի Հարավային Զինաստանում: Անվանման հիմքում ընկած են Հինարեն խայ՝ «ծով» և նաև՝ «Հարավ» բառերի զուգակցումը: Այսինքն «ծովից հարավ»:
ԽԱՆՈՑ կամ ՀԱՆՈՑ.—Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության մայրաքաղաքը Խոնգխա գետի ափին: Խանոյ անվանումը քաղաքի համար գործածական դարձավ նոր ժամանակներում: Անցյալում կոչվում էր Կեչու Խանոյ նշանակում է «Չըշապատված գետով» կամ «Միջագետք»:

ԽԱՆ-ՏԵՆԳՐԻ.—Լեռնագագաթ Արևելյան Տյան-Շանում, Սովետական Միության և Զինաստանի սահմանում: Նրա անվան ծագումը մոնղոլական լեզվից է և նշանակում է «Երկնքի արքա» կամ «Երկնքի վեհապետ»: Նրա գագաթը առաջին անգամ, 1931 թվականին, բարձրացան սովետական ալպինիստները:

ԱԱԶԻ կե՛՛նԱՆՑՔ.— Ռազմա-Վիրական ճանապարհի վրա,
Կովկասյան լեռնաշղթայում։ Անունը առաջացել է գրա-
նիտյա այն քարե խաչի համար, որը կանգնեցվեց այս-
տեղ 1824 թվականին որպես լեռնանցքի կետը ցուց
տվող ուղենիշ։ Ճիշտ է, քարը վերականգնվեց Երմոլովի
ժամանակ, բայց նա որպես հուշարձան գոյություն է
ունեցել ավելի վաղ ժամանակից։ Պուշկինը «Ճանա-
պարհորդություն գեպի Արզում» գրքում գրում է, որ
«Հին հուշարձանը վերականգնվել է Երմոլովի կողմից»։
Ներկայումս կոչվում է նաև Գուղառի լեռնանցք։

ԽԱՐԲԵՐԴ. — Քաղաք Փոքր Ասիայում, Արևմտյան Եփրատ
գետի մոտ։ Համարվում էր Խարբերդ նահանգի կենտ-
րոնը։

Խարբերդ անվան ստուգաբանությունը գալիս է
խալդերեն լեզվից։ Խարա «Ճամփա» (որը նույն նշանա-
կությունն է ունեցել նաև փոքր ասիական ժողովուրդ-
ների մոտ) և բերդ՝ «ամրոցի» իմաստով։

Խարբերդի և նրա «ոսկեղեն դաշտի» վրայով է ան-
ցել իր ժամանակին Կապագովկիայից Միջագետք տա-
նող քարավանային բանուկ ճանապարհներից մեկը։
Ինչպես հայտնի է «Խարա» մասնիկը հանդիպում ենք
նաև Խարակոնիս, Խարակապան տեղանուններում։
Խարբերդցիներին ծանոթ են նաև Խարակոկիլ բույր,
որը բուսնում է ճամփաների եղրին, որտեղից էլ նրա
անունը։

Խարբերդ անվան մյուս ստուգաբանությունը կապ-
վում է նաև «քարաբերդ» բառերի զուգակցման հետ, որը
իհարկե քիչ է հավանական։ Չնայած եղել է Քարաբերդ
բնակավայր, բայց այն գտնվել է Մալաթիայի արև-
մետյան կողմում։

Ի հավերժացումն հայրենի Խարբերդի, Խարբերդցի-
ները նրա անունով կոչեցին այն ավանը, որը հիմնադրե-
ցին 1928 թվականին Երևանից հարավ-արևելք, Արտա-
շատ տանող խճուղու ձախ կողմում։ Ավանը ներկա-
յումս գտնվում է Մասիս անունը կրող նորաստեղծ շըր-
ջանի կազմի մեջ։

հԱՐԹՈՒԻՄ. — Սուդանի մայրաքաղաքը: Հիմնադրվել է 1820 թվականին այն թերակղզու վրա, որ գոյացել է Կապույտ և Սպիտակ Նեղոսների միացման անկյունում: Թերակղզին անվանում են Ռաս-էլ-Խարթում, որը արաբերեն նշանակում է կնճիթի ծայր: Այսինքն կնճիթի տեսքով սեղմված է երկու գետերի միջև:

ԽԱՐԿՈՎ. — Քաղաք Ուկրաինայում: Հիմնադրվել է մոտ 1640 թվականին ոմն Խարկովի կամ Խարբոնի կողմից:

ԽԵԲՍՈՆ. — Քաղաք Ուկրաինայում: Հունարեն խերսոն՝ «մայր ցամաք» և օնեսոս՝ «կղզի» (այստեղ թերակղզու իմաստով): Հիմնադրվել է 1748 թվականին Եկատերինա Զ-րդի հրամանով: Այդպես կոչվեց ի պատիվ ժամանակին գոյություն ունեցած Խերսոնես քաղաքի, որը եղել է Հունական սեծովյան գաղութներից մեջը:

ԽԻԲԻՆ. — Լեռներ Կոլա թերակղզում: Սաամերեն խիբին բառից է, որը նշանակում է «բլուր»:

ԽԻՎ. — Քաղաք Ուզբեկստանում: Ուզբեկերեն խավակ՝ նշանակում է «շոր» կամ «դատարկ»:

ԽՆԱՄԱՐԿՅԱԼ ՏԵՐԻՑՈՐԻԱՆԵՐ. — Կախվածության ձև. մի երկրի կախվածությունը մյուսից: Սրանք նախկին մանդատային երկրներն են, որոնք Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության համաձայն հանձնվել են որևէ պետության խնամակալությանը, որպեսզի նպաստեն նրանց տնտեսական զարգացմանը և անկախությանը: Ինչպես հայտնի է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մանդատային երկրները դարձան խնամարկյալ տերիտորիաներ: Մինչև վերջերս խնամարկյալ տերիտորիաներ էին համարվում և գտնվում էին Մեծ Բրիտանիայի կառավարման ներքո Տանգանիկանիկան, Տոգոն, Կամերունի մի մասը, որոնք ներկայումս ինքնուրույն պետություններ են: Որպես խնամարկյալ տերիտորիաներ մնացել են նոր Գվինեա կղզու հյուսիս-արևելյան մասը, Բիսմարկի արշիպելագը:

ԽՆԱՄԱՐԿՅԱԼՆԵՐ են համարվում նաև Մարշալլան, Մարիանյան և Կարոլինյան կղզիները, որոնք ենթարկվում են ԱՄՆ-ին:

ԽՈՂՄՈԴՈՐԻ. — Փոքր քաղաք Արխանգելսկից ոչ հեռու: Ստուգաբանության տեսակետից բավական հետաքրքիր անուն ունի, որովհետեւ քաղաքում ոչ ըլուր կա և ոչ էլեկտր, որոնք հուշեն անվան առաջացումը: Անունը ծագել է նորմանական լեզվից և նշանակում է «կղզային քաղաք»: Այդպես է կոչվել, որովհետեւ ներկա քաղաքի տեղում, մի կղզու վրա է եղել առևտրական այն կայանը, որտեղ կանգ են առել վարյագները (նորմանները) դեպի Սև ծովի ափերը առևտրական գործերով ուղևորվելիս:

ԽՈՂԱՍՍՆ. — Պատմական նահանգ իրանում: Պարսկերեն խոր «արև» և ստան՝ «երկիր» բառերի զուգակցումից, որը նշանակում է «արևի երկիր», «Արևածագի կողմ»>, քանի որ իր ժամանակին եղել է պարսկական պետության արևելյան նահանգը:

ԽՈՂԵԶՄ. — Պատմական մարդ Միջին Ասիայում: Սանսկրիտերեն խոր կամ խվար՝ «արև» և զեմ «երկիր»: Այսինքն «Արևի երկիր»: Բարեբեր երկրի իմաստով:

ԽՈՂՎԱԹԻԱ. — Հանրապետություն Հարավսլավիայի կազմում: Անունը առաջացել է խորվատ կամ կրոբատ սլավոնական ցեղի անունից:

ԽՈՒԱՆ-ԽԵ. — Գետ Չինաստանում: Չինարեն խուան՝ «գեղին» և խե՝ «գետ» բառերից: Խուանին անցնելով լյոսային սարահարթով, իր մեջ է լուծում մեծ քանակությամբ լյոս, որը գեղին գույն է տալիս նրա ջրերին:

Ծ

ԾՆՆԴՅԱՆ ԿՂՋԻ. — Խաղաղ օվկիանոսում: Հայտնաբերվել է 1777 թվականին անգլիացի ծովագնաց Ջեմս Կուկի կողմից, քրիստոնեական եկեղեցու տոնի օրը: Այդպես էլ կոչվել է ի պատիվ Հայտնաբերման օրվա:

ԾՈՎԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՂՋԻՆԵՐ. — Խաղաղ օվկիանոսում, Բիսմարկի արշիպելագում: Կղզիներն այս անունը ստացել

են անզլիական ծովագնացների կողմից, ի պատիվ Բրիտանական ուսկմական նավատորմի գերատեսչության՝ ծովակալությանը:

ԾՈՎԱՍՍՐ.— Լեռ Սասունում, Տալվորիկ գավառի արևելյան մասում: Այդպես է կոչվել գագաթին եղած ծովակի (լճի) պատճառով: Այս դալարագեղ ու ծաղկավետ սարը եղել է «Սասունցի Դավիթ» էպոսի հերոսների «սեհր անելու տեղը» (զբոսավայրը):

Կ

ԿԱԱՏԻՆԳԱ.— Աշխարհագրական մարդ Հյուսիս-արևելյան Բրազիլիայում, որտեղ ընդարձակ տարածությունները պատաժ են արևադարձային չորակայուն նոսր անտառներով: Կատարինգա անվանումը հնդկական տուպի լեզվից է և նշանակում է «սպիտակ անտառ»:

ԿԱԴՈՐ.— Նաև Կառոր: Քաղաք Հարավ-արևմտյան Ֆրանսիայում: Առաջացել է գալլական Կադուրկ ցեղի անունից: Այս քաղաքից է իր անունը ստացել «Կագոր» տեսակի գինին:

ԿԱԴԻՄ.— Քաղաք Խսպանիայում: Անունը մեկնաբանվում է երկու կերպ: Առաջինը, փյունիկերեն գաղես՝ «սուրբ» բառից է, իսկ երկրորդը գաղեր՝ «պատնեշ», «բերդ» բառից:

ԿԱԶԱՆ.— Թաթարական ինքնավար Հանրապետության մայրաքաղաքը: Անունը մեկնաբանվում է երկու կերպ. ա) թաթարերեն զաղան՝ կաթսա բառից՝ խոր հովտի իմաստով (և բ) քաղաքի հիմնադիր Ղազան-խանի անունով: Առավել շատ է տարածված առաջին մեկնաբանությունը:

ԿԱԶԲԵԿ.— Լեռ Կովկասյան լեռնաշղթայի կենտրոնում: Ռուսները այդպես անվանեցին անցյալ դարի սկզբներին, տեղական իշխան Կազբեկի անունով, որը բնակվում էր լեռան լանջերին գտնվող իր համանուն կալվածքում:

Կազբեկը սկզբում պատվավոր տիտղոս էր, բայց ժամանակի ընթացքում դարձավ հատուկ անուն: Քանի որ Կազբեկը գտնվում էր Ռազմա-Վիրական բանուկ ճանապարհի վրա, արագ ժամանակի ընթացքում դիմացի լեռ նույնպես Կազբեկ կոչվեց: Վրացիները լեռը կոչում են Մկինվարի, որը բառացի նշանակում է սառցային, իսկ օսերը անվանում են Ուրս-խոխ, որը բառացի սպիտակ լեռ՝ նշանակում:

ԿԱՂԱՔԲՐԻԱՆ.— Թերակղզի հտալիայում: Ապենինյան թերակղզու հարավային շարունակությունը: Այդպես է կոչվել իր ժամանակին այդտեղ բնակվող կալաբրի ժողովրդի անունից:

ԿԱՂԱՀԱՐԻ.— Անապատ Հարավային Աֆրիկայում: Տեղական լեզվով կարրի-կարրի՝ «տանջող» բառից: Նկատի է ունեցվել երկրի չոր, անպատուղ, անապատային վիճակը:

ԿԱԼԻՄԱՆՏԱՆ.— Ինդոնեզիայի ամենամեծ կղզին, որը անցյալում հայտնի էր Բոռնեո անվանումով: Մինչ կղզու նվաճումը եվրոպացիների կողմից, բնիկները կղզու նկատմամբ գործածում էին երկու անվանում: Հյուսիսային մասի համար՝ «տանջող» Բոռնեյ (որը եվրոպացիների կողմից դարձավ Բոռնեյ), իսկ հարավային մասի համար՝ Կեմանտան (որը դարձավ Կալիմանտան): Բոռնեյ անունն էլ ձևափոխվեց դարձավ Բոռնեյ՝ համանուն իշխանության անունից, որը այսօր էլ այդպես է կոչվում: Իսկ Կալիմանտան անունը ստուգաբանվում է որպես «Սագո երկիր»: Սագոն՝ դա Սագոյում արմավենու պտուղն է, որը շատ կարևոր դեր է խաղում տեղացիների կյանքում:

ԿԱԼԻՆԻՆ.— Քաղաք ՌՍՖՍՀ-ում: Մինչև 1931 թվականը կոչվում էր Տվեր: Նոր անունը տրվեց ի պատիվ Միխայիլ Իվանովիչ Կալինինի՝ ՍՍՀՄ-ի Գերագույն սովետի նախագահության նախագահի (1875—1946 թթ.):

ԿԱԼԻՆԻՆԴՐԱԴՐ.— Քաղաք ՌՍՖՍՀ-ում: Մինչև 1946 թվականը Կյոնիգսբերգ («Արքայական լեռ»): Անվանափոխվել է ի պատիվ Մ. Ի. Կալինինի:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ.— Այսպես է կոչվում թե՛ ԱՄՆ-ի արևմտյան նահանգներից մեկը և թե՛ նրանից հարավ գտնվող և Մեքսիկային պատկանող Կալիֆորնիա թերակղզին։ Կալիֆորնիա նահանգից տարբերելու համար թերակղզին հաճախ անվանում են Ստորին կամ Հին Կալիֆորնիա։ Կալիֆորնիա անունը գալիս է իսպաներեն «կալիենտե ֆորնալա» արտահայտությունից, որը նշանակում է «շիռ կացած հնոց»։ Այսինքն արևից շիռացած հող։ Այն որոշ կրծատման և փոփոխության ենթարկվելով դարձել է Կալիֆորնիա։ Այդ անունը սկզբում տրվել է թերակղզուն, ուր Մեքսիկայի նվաճող Կորտեսը հանդիպեց անտանելի շոգի։ Հետո այն տարածվեց ԱՄՆ-ի արևմտյան շտատներից մեկի վրա, որը մոտ է թերակղզուն և սկզբում պատկանում էր իսպանիային։

ԿԱՂԱԹԱ.— Քաղաք Հնդկաստանում, որի հնդկական անվանումն է Կալիկուտա։ Դա նշանակում է Կալիի բնակավայր, իսկ Կալին հնդկական աստվածուհիներից մեկն է։ Սկզբում այդ անունը կրել է մի գյուղ, որի տեղում 1686 թվականին հիմնադրվեց ներկա Կալկաթա քաղաքը։

ԿԱՂՈՒԳԱ.— Քաղաք ՌՍՖՍՀ-ի Եվրոպական մասում։ Մոնղոլերեն խալգա՝ դարբաս բառից։ Միջնադարում այստեղ գոյություն ուներ թաթարների կողմից սահմանված ուղեկալ։

ԿԱՀԻԹԵ.— Արաբական Միացյալ Հանրապետության (Եգիպտոս) մայրաքաղաքը։ Արաբերեն անվանում են ալ-Կահիրա, որը բառացի նշանակում է «հաղթանակ»։ Քաղաքի անվան առաջացման պատմությունը կապվում է հավաստի իրադարձության՝ մի արշավանքի հաղթական ավարտման հետ։ Այդպես է կոչվել ի հիշտակ արաբների (ֆաթիմյանների) կողմից Եգիպտոսի նվաճմանը։ Քաղաքը հիմնադրվել է 969 թվականին։ Օտարները քաղաքի անունը արտասանեցին առանց «ալ» մասնիկի։ Իտալացիներն էլ կրծատեցին անվանման «հ» տառը և վերջի «ա» տառը փոխարինեցին «օ»-ով։ Իսկ ուստի արտասանեցին առանց «օ»-ի, ուղղակի

Կայք: Հայերն էլ առանց «ալ» մասնիկի, վերջի «ա» տառը «հ» դարձնելով անվանեցին Կահիրե:

ԿԱՄԱ. — Գետ ՍՍՀՄ-ի եվրոպական մասում: Վոլգայի ձախ վտակը: Կամա անվան ծագումը կապում են ուղմուրտական լեզվում եղած «երկար» բառի հետ: Իրականում Կաման այդպիսին է: Նա իր երկարությամբ հավասար է Վոլգայի կեսին (2030 կմ): Երկար է Թոնից և Պեչորայից: Պերմ քաղաքի մոտ Կամայի վրա կառուցված է մի հսկա ջրամբար, որը կոչվում է գետի անունով:

ԿԱՄԲՈՋԱ. — Պետություն Հարավ-Արևելյան Ասիայում: Անվանման ծագումը կապում են լեգենդար հերոս Կամբուի անվան հետ: Կիմերները երկրին Կամբուշիա են անվանում: Կամբոջա ձեզ պորտուգալական արտասանությունից է առաջացել:

ԿԱՄԵՆ. — Քաղաք Ալթայում: Օք գետի վրա: 1670 թվականին ինչ-որ եկվորներ գետի վրա հիմնադրեցին մի փոքրիկ գյուղ և անվանեցին Կամեն, որը ոռուերենում ունի նաև ժայռի կամ լեռան իմաստ, որովհետև մոտակայքում գտնվում էին Սալահրյան լեռնաշղթայի քարքարոտ լանջերը: Քաղաք է համարվում 1915 թվականից:

ԿԱՄԵՐՈՒԻՆ. — Պետություն Արևմտյան Աֆրիկայում, Գվինեական ծոցի ափին: Անկախություն ստացավ 1960 թվականին: Անունը առաջացել է իսպաներեն և պորտուգալերեն «ոփո-դե-կամերոս» բառերից, որը նշանակում է «ծովախոցետնով գետ»: Ժամանակի ընթացքում «ոփո» բառը ընկավ և մնաց կամերոս՝ կրաք (ծովախոցետին) բառը: Ի դեպ, 15-րդ դարում պորտուգալացիները հասան Սանտա գետի գետաբերանին, ուր հանդիպեցին մեծ քանակությամբ կրաքների:

ԿԱՄՉԱՏԿԱ. — Խոշոր թերակղզի Սովետական Հեռավոր Արեվելքում: Անվան ստուգաբանություններից մեկը կորյակերեն կոնչատ՝ «աշխարհի եղրի մարդիկ» խոսքից է: Այսպես էին կորյակները անվանում կամշադալներին՝ թերակղզու բնակիչներին:

Մի այլ վերսիայով, որը պատկանում է Կամչատ-

կայի անվանի ուսումնասիրող Կրաշենիննիկովին, թերակղզու անունը առաջացել է Կոնչատա քաջարի մարտիկի անունից: Հետագայում ուսուները այն ձևափոխել են դարձնելով Կամշատկա:

ԿԱՄՊԱԼԱ.— Ուգանդա պետության մայրաքաղաքը: Անունը առաջացել է իմպալա բառից, որը նշանակում է «անտիլոպ»: Այն բլուրը, որի վրա ներկայումս գտնվում է քաղաքը, անցյալում եղել է որսավայր: Այսօր էլ կամպալա քաղաքի խորհրդանիշը ցատկող անտիլոպն է:

ԿԱՄՊԱՆԻԱ.— Պատմական մարզ Հարավային հտալիայում: Անունը լատիներեն կամպոս՝ «դաշտ» կամ «հարթություն» բառից է: Կամպանիայում է գտնվում նեապոլ քաղաքը:

ԿԱՄՊՈՍ.— Աշխարհագրական մարզ Բրազիլիայում: Պորտուգալերեն կամպոս՝ «հարթավայր» բառից: Ընդհանրապես կամպոս են անվանում բրազիլական սավաննաներին:

ԿԱՆԱԴԱ.— Բրիտանական դոմինիոն Հյուսիսային Ամերիկայում: Տեղական լեզվով, այսինքն Ս. Լավրենտիոս գետի ափին բնակվող ամերիկայի հնդիկների լեզվով, Կանադա նշանակում է «գյուղ»: Կանադա բառը, երբ առաջին հայտնաբերողները լսեցին բնիկներից, ընդունեցին անվան տեղ և այդպես կոչեցին երկրի այն մասը, որը տեղադրված է Ս. Լավրենտիոս գետի շուրջը: Ժամանակի ընթացքում Կանադա անունը տարածվեց ամբողջ երկրի վրա: Այսպիսով, հնդկական կանադա, այսինքն գյուղ բառը, որը եվրոպացիները ընդունեցին իբրև տեղանուն, դարձավ աշխարհի խոշոր երկրներից մեկի անունը:

Կանադա անվանումը առաջին անգամ գործածեց ժակ Կարտիեն, որը տասնվեցերորդ դարի ֆրանսիացի նշանավոր ծովագնաց էր:

ԿԱՆԱԶ ՀՐՎԱՆԴԱՆԻ ԿՂՋԻՆԵՐ.— Կղջիներ Աֆրիկայի արևմըտյան ծայրամասում: Կղջիները գտնվում են Աֆրիկա մայր ցամաքի Կանաչ Հրվանդանից 550 կմ հեռավո-

րության վրա: Կանաչ անոնքն նախ տրվել է հրվանդանին, որը հայտնաբերվել է 15-րդ դարում պորտուգալացի ծովագնացների կողմից: Նրանք այստեղ գտան առատ կանաչ, ինչպես նաև հսկա ծառեր:

ԿԱՆԱՐՅԱՆ ԿՂՋԻՆԵՐ.— Ատլանտյան օվկիանոսում, Աֆրիկայի հյուսիս-արևմտյան ափերի մոտ: Պատկանում են հսպանիային: Անոնք առաջացել է լատիներեն կանիս՝ «շուն» բառից: Իր ժամանակին վայրի շներ այս կղզիներում շատ են եղել, որոնք զարմացրել են ճանապարհորդներին իրենց մեծությամբ: Ենթադրվում է, որ դրանք բերվել են Հին Փյունիկեցիների կողմից, որի մասին մեզ պատմում է Պլինիոսը: 1402 թ., երբ Փրանսիացի ծովագնացները հայտնաբերեցին կղզիները, շները անհետացել էին: Բայց անվանումը այդպես էլ պահպանվեց: Կղզիների անոնով կոչվում է նրանց ափերի մոտով անցնող ցուրտ հոսանքը:

ԿԱՆԲԵՌԱ, ԿԱՆԲԵՐԱ.— Ավստրալիական Միության մայրաքաղաքը: Հիմնադրվել է 1913 թվականին այն վայրում, որը տեղացիների կողմից կրել է Կանբեռա անոնք: Անվան ստուգաբանությունը կապվում է բնիկների «հավաքատեղի» բառի հետ: Կանբեռան մայրաքաղաք հըշշակվեց 1927 թվականից, երբ Մելբուռնից մայրաքաղաքը տեղափոխվեց այստեղ: Ավստրալիական ոչ մի նահանգ չէր ուզում ուրիշին զիջել ամբողջ միության մայրաքաղաք ունենալու պատիվը: Այդ նպատակով որոշեցին մայրաքաղաք Հիմնել շեղոք գոտում, այսինքն ֆեդերալ տերիտորիայում:

ԿԱՆԴԱՀԱՐ, ՂԱՆԴԱՀԱՐ.— Քաղաք Աֆղանստանում: Հիմնադրվել է 329 թվականին և կոչվել է ի պատիվ Ալեքսանդր Մակեդոնացու, որպես ասիական Ալեքսանդրիա: Զեափոխվելով դարձել է Կանդահար:

ԿԱՆՉԱՍ.— Գետ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Կրում է Հնդկական Կանզաս ցեղի անոնք:

ԿԱՆՏԱԲՐՅԱՆ ԼԵՌՆԵՐ.— Լեռներ հսպանիայի հյուսիսում:

Այդպիս են կոչվել իրերական կանտաքրի ցեղի անու-
նով, որը բնակվել է Պիրենեյան թերակղզու հյուսիսում:
ԿԱՆՏՈՆ.—Քաղաք Հարավային Չինաստանում, Կուան-Տուն
կամ Գուան-Դուն Հարավային նահանգի ձևափոխված
անունն է: Ներկայումս կոչվում է Գուանչժոու:
ԿԱՊՐԻ.—Կղզի հտալիայում, Նեապոլիտանական ծոցի հա-
րավոամ: Անունը առաջացել է լատիներեն կապրա՝
«այծ» բառից: Այլ խոսքով «Այծերի կղզի»:
ԿԱՊՈՒՅՏԸ ԼԵՌՆԵՐ.—Ավարալիայում: Այսպիս են կոչվում,
որովհետև հորիզոնի վրա նրանք երևում են կապտա-
վուն տեսքով:
ԿԱՊՈՒՅՏԸ ՆԵՂՈՍ.—Նեղոսի աջ և ամենաջրառատ վտակը:
Արաբները անվանում են Բահր-էլ-Աղրեկ, որը բա-
ռացի նշանակում է «կապույտ գետ»: Այդպիս են ան-
վանել գետի ջրի կապտագույն տեսքի պատճառով:
ԿԱՍԱԲԼԱՆԿԱ.—Քաղաք Մարոկկոյում: Իսպաներեն կասա՝
«տուն» և բլանկա՝ «սպիտակ» բառերի միացումից:
Արաբները անվանում են Դար-էլ-Բեյդա, որը ունի նույն
նշանակությունը՝ «Սպիտակ տուն»:
ԿԱՍԿԱՅՑԱՆ ԼԵՌՆԵՐ.—Ամերիկայի Միացյալ Նահանգնե-
րում: Անվանումը տրված է բազմաթիվ կասկաղների
առկայության պատճառով, որոնք գոյություն ունեն գե-
տի ավաղանում:
ԿԱՍՊԻՅ ՇՈՎ.—Շով ՍՍՀՄ-ում: Ներկա անվանումը կասպի
ցեղից է, որը ապրում էր ծովի արևմտյան ափերին:
Էթնոնիմը պահպանվել է Վրաստանում: Հայտնի է
Կասպի կայսրանը: Հնում կոչվել է նաև Վրկանաց և
Խվալինյան ծով:
ԿԱՍԻԼԻԱ.—Իսպանիայի պատմական մարզ: Անվան հիմ-
քում ընկած է լատիներեն կաստելում՝ «ամրություն»
բառը: Այսինքն «ամրոցների երկիր», որոնք կառուցված
էին թե՛ վեստգոթերից և թե՛ արաբներից պաշտպան-
վելու համար:
ԿԱՏԱԼՈՆԻԱ.—Իսպանիայի պատմական մարզերից: Անվան
առաջացումը բացատրվում է երկու էթնոնիմով: Առա-

զինը, կատալան իրերական ժողովրդի, իսկ մյուսը՝
գոթերի անունով:

ԿԱՏՄԱՆԴՈՒԻ. — Նեպալի մայրաքաղաքը: Անվան առաջացու-
մը կապվում է Կաստամանդապի անունը կրող Հին
վանքի հետ, որ ձևափոխվել, դարձել է Կատմանդու:

ԿԱՏԵԳԱԶ. — Նեղուց Յուտլանդիա և Սկանդինավյան թերա-
կղղիների միջև: Կատեգատը էրեսուն-Սկագերակ նե-
ղուցների սիստեմով Բալթիկ ծովը միացնում է Հյուսի-
սային ծովի հետ: Կատեգատ անունը առաջացել է դա-
նիերեն երկու բառից: Այն է՝ «կատի» մակուցկ կամ նա-
վակ և «գատա» փողոց, այսինքն «նավերի ճանապարհ»:

ԿԱՏՈՒԻՆ. — Գետ Ալթայում: Մոնղոլերեն Խաթուն՝ «թագուհի»,
«տիկին», «տիրուհի» բառից: Խաթուն բառը անցել է
թաթարական լեզվից: Իր ժամանակին Խաթուն անունը
եղել է խազարների թագուհու պատվանունը:

ԿԱՐԱ-ԲՈՂԱԶ ԳՅՈՒ. — Ծոց Կասպից ծովում: Թուրքմեներեն
կարա՝ «սե» և բողազ՝ «կոկորդ» բառերից: Այլ խոսքով
«Աև կոկորդով լիճ» կամ «Աև նեղուցի լիճ»:

ԿԱՐԱԿԱԼՊԱԿԻՍՏԱՆ. — Նախկին անվանումը Կարակալպակ-
յան ԻՍՍՀ: Ուղրեկական ՍՍՀ-ի կազմում: Այսպես է
կոչվում թուրքական կարակալպակ ժողովրդի անունով:
Կարակալպակ նշանակում է «սև գլխարկ»: Այդ ժողո-
վուրդը անցյալում սովորություն ուներ կրելու սև մոր-
թուց գլխարկներ:

ԿԱՐԱԿԱՍ. — Վենեսուելայի մայրաքաղաքը: Հիմնադրվել է
1567 թվականին Հնդկական Կարակաս անունը կրող
ցեղի գյուղերից մեկի տեղում:

ԿԱՐԱԿՈՒՄ. — Անապատ Թուրքմենիայում: Այս անվան ստու-
գարանությունը տրվում է Հաճախ բառացի թարգմա-
նությամբ: Այսինքն թյուրքական լեզուներով կարա՝ «սև»
և կում՝ «ավազ» բառերի միացումից: Տվյալ գեպքում
սև ավազուտների իմաստով: Բայց դա բառացի թարգ-
մանություն է: Ավելի ճիշտ կարակում թուրքմենները
անվանում են բուսականությամբ ամրացված ավազնե-

րին, ի տարբերություն շարժուն քարիսանների՝ «սպի-
տակ ավազների»:

ԿԱՐԱՄԱՅ.— Սինցզյանի քաղաքներից: Ուզգուրական լեզվով
նշանակում է «Աև յուղ»: Դեռևս հին ժամանակներում
ուզգուրները նկատել էին, որ այս շրջանի լեռներից
նավթ էր դուրս գալիս: Նրանք այստեղ էին գալիս իրենց
կանթեղների համար վառելանյութ տանելու:

ԿԱՐԱՅԻ ԾՈՎ.— Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծայ-
րամասային ծովերից: Ծովը իր անունը ստացել է նրա
մեջ թափվող Կարա գետից, որը նենեցերեն լեզվից է և
նշանակում է սառցակույտ:

ԿԱՐԵԼԻԱ.— Կարելական ԽՍՍՀ: Սովետական Միության հյու-
սիսային մասում: Այդպես է կոչվել կարելա-ֆիննական
ժողովրդի անունով:

ԿԱՐԹԱԳԵՆԱ. կամ ԿԱՐԹԱԽԵՆԱ.— Քաղաք Խսպանիայում:
Հիմնադրվել է կարթագենցի զորավար Հաստրուրալի
կողմից 3-րդ դարում մ.թ.ա. (228 թվականին): Այդ-
պես կոչվեց ի հիշատակ հայրենի Կարթագենի: Սկզբում
կոչվում էր նոր Կարթագեն:

ԿԱՐԻԲԱՆ ԱՄԵՐԻԿԱ.— Անցյալում Կարաիրյան Ամերիկա:
Այս անվան տակ նկատի են ունենում Կենտրոնական
Ամերիկան և Վեստ Ինդիան միասին վերցրած: Քանի
որ նրանք գտնվում են Կարիբյան ծովի շրջանում, Ամե-
րիկայի այս մասը ստացել է Կարիբյան Ամերիկա ան-
վանումը՝ հնդկական կարիք ցեղախմբի անունից:

ԿԱՐԻԲԱՆ ԾՈՎ.— (Անցյալում՝ Կարաիրյան) կիսափակ ծով
Ատլանտյան օվկիանոսում՝ Կենտրոնական և Հարավա-
յին Ամերիկաների, մյուս կողմից՝ Անտիլյան կղզիների
միջև: Անվանումը առաջացել է կարիք կամ կարայիք
հնդկական ցեղախմբի անունից, որոնք ապրում էին այս
կղզիներում և Հարավային Ամերիկայի ափերում: Տե-
ղական լեզվով կարիք բառը նշանակում է «մարդիկ»:

ԿԱՐՈՒՎԻ ՎԱՐԻ.— Կուրորտային քաղաք Զեխոսլովակիայում:
Անվանումը առաջացել է Կարլ (Կարլոս) 6-րդ կայսրի
անունից (1711—1740 թթ.) և ավելացրած շեխերեն վա-

րի՝ «ակունքներ» բառը: Ստացվում է՝ Կարլոսի ակունքներ (ազգյուրներ):

ԿԱՐԼՍԿՐՈՒՆԱ (ԿԱՐԼՍԿՐՈՒՆԱ).— Քաղաք Շվեդիայում: Ալդապիս է կոչվել ի պատիվ Շվեդիայի թագավոր Կարլոս 11-րդի (1660—1694 թթ.) և ավելացրած կրոն՝ թագ բարձր: Քաղաքը հիմնադրվել է 1679 թվականին Կարլոսի թագադրության ժամանակ:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՆԵՋՈՒՅՑ.— Հյուսիսային երկիր արշիակելագում, Հոկտեմբերյան հեղափոխության և Կոմսոմոլեցի կղզիների միջև: Այդպես է կոչվել 1931 թվականին Գ. Ա. Ուշակովի կողմից:

ԿԱՐՄԻՐ ԾՈՎ.— Այս անունը գալիս է Հին աշխարհից, Փլունիկեցիներից: Կարմիր ծովի ափերին զուգահեռ մոտ 2800 կիլոմետր երկարությամբ (մանավանդ աֆրիկական մասում) ձգվում է կարմրա-դեղնագույն մի պատնեշ, որը և ծովին տալիս է կարմրագույն տեսք: Ծովի ջրի կարմրագույն տեսքին նպաստում են նաև ջրիմուները, որոնք տարվա որոշ ժամանակ կարմիր գույն ունեն: Քանի որ փյունիկեցիները նավարկելիս ափերից հեռու չեին գնում, ապա ջուրը նշված գործոնների շնորհիվ կարմիր էր թվում, արտացոլելով ափերի և ջրիմուների կարմրությունը: Այստեղից էլ Կարմիր ծով անվանումը: Անտիկ աշխարհում կոչվել է Էրիտրե, որը ունի նույնպես կարմիր նշանակություն:

ԿԱՐՈԼԻՆՅԱՆ ԿՂՋԻՆԵՐԸ.— Արշիակելագ Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասում, Միկրոնեղիայի խմբում: Այս կըզգիները կոչվել են ի պատիվ իսպանական թագավոր Կարլոս 2-րդի (1665—1700 թթ.):

ԿԱՐՊԱՏՆԵՐ.— Լեռնային երկիր Արևելյան Եվրոպայում, որը բաժանվում է ՍՍՀՄ-ի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Ռումինիայի և Հունգարիայի միջև: Անվան առաջացումը կապվում է կարպի էթնոնիմի (ցեղանվան) հետ:

ԿԱՐՊԵՆՏԱՐԻԱՅԻ ԾՈՅՑ.— Մեծ ծոց Հյուսիսային Ավստրալիայում: Այսպես է կոչվել ի պատիվ հոլանդացի ծո-

վագնաց Պիտեր Կարպենտերի, որը գիսավորում էր հուլանդական Օստ-Հնդկական ընկերությունը:

ԿԱՌԻՆԱՄ. — Քաղաք Լիտվայում: Անցյալում կոչվում էր Կովնո: Այսպես է կոչվում ի պատիվ լիտվական դիցաբանական հերոս Կառնասի, որը համարվում էր լիտվացիների սիրո աստվածուհու՝ Միլտափի որդին:

ԿԵՄԵՐՈՎՈ. — Քաղաք Սիրիում: Անվան հիմքում ընկած է թյուրքական լեզուներում գործածվող կեմեր կամ քեմեր բառը, որը նշանակում է «ափ», «գոտի»: Ըստ երևութին նկատի է ունեցվել հարթությունը գոտենորող զառիթափ գոտին, ոռուական «ովո» վերջավորությունը ունի տեղի նշանակություն: Քաղաքը հիմնադրվել է 1863 թվականին:

ԿԵՆՏ. — Մարզ Անգլիայում: Կելտերեն կենտ՝ «զցված» կամ «նետված» բառից: Այսինքն թերակղզին նետված ծովի մեջ:

ԿԵՅԹԹԱՌԻՆ, ՔԵՅԹԹԱՌԻՆ. — Քաղաք Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում: Անգլերեն քեյպ՝ «Հրվանդան» և թառն՝ «քաղաք»: Այսինքն «Հրվանդանի քաղաք»: Նկատի է ունեցվել թարեհուսո հրվանդանը: Հիմնադրվել է հոլանդացիների կողմից 1652 թ. և կոչվել Կապշտադտ, որը ունի նույն նշանակությունը ինչ Կեյպթառնը:

ԿԵՆԳՈՒՐՈՒԻ. — Կղզի Ավստրալիայի հարավային ափերի մոտ: Կղզին այդպես է կոչվել հայտնի պարկավոր կենդանուանումով:

ԿԵՆԻԱ. — Պետություն Արևելյան Աֆրիկայում: Մինչև 1963 թվականը համարվում էր Բրիտանական տիրապետություն: Անվանումը առաջացել է Կենիա լեռան անունից, որի ստուգաբանությունն առաջիմ պարզ չէ:

ԿԵՆՏԵՐԵՐԻ, ՔԵՆՏԵՐԵՐԻ. — Քաղաք Մեծ Բրիտանիայում: Անունը առաջացել է Կենտ կոմսությունից և ավելացրած կելտերեն բյուրի, բյուրո բառը, որը «փոքր քաղաքի» իմաստ ունի: Ժամանակի ընթացքում ձևափոխվելով դարձել է Կենտերերի:

ԿԵՆՏՐՈՆԱ-ԱՖՐԻԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.— Պետություն Աֆրիկայում, որը ստեղծվեց 1960 թվականին ֆրանսիական նախկին գաղութ Ուգանդա-Շարիի սահմաններում։ Կենտրոնա-Աֆրիկական Հանրապետություն է կոչվել Աֆրիկայում գրաված իր կենտրոնական դիրքի պատճառով։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ.— Գրավում է Հյուսիսային Ամերիկայի հարավային մասը։ Այն ձգվում է Մեքսիկայի հարավ-արևելյան սահմանից մինչև Պանամայի պարանոցը ներառյալ։ Կենտրոնական Ամերիկայի երկրների թվին են դասվում՝ Գվատեմալա, Սալվադոր, Հոնդուրաս, Նիկարագուա, Կոստա-Ռիկա և Պանամա պետությունները, ինչպես նաև Բրիտանական Հոնդուրաս գաղութը։ Կենտրոնական Ամերիկա է կոչվում շնորհիվ իր կենտրոնական դիրքի՝ Հյուսիսային և Հարավային Ամերիկաների միջև։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՆ.— Կենտրոնական Ասիա հասկացությունը աշխարհագրական գրականության մեջ գործածական դարձավ 19-րդ դարի երկրորդ կեսից, շնորհիվ Ալեքսանդր Հումբոլդտի դասական աշխատությունների, նվիրված ասիական ցամաքի կենտրոնական մասին։

Կենտրոնական Ասիա ասելով աշխարհագրագետները նկատի ունեն ասիական ցամաքի այն լայնածավալը բարձրագիր ներքին մասը, որը ձգվում է Պամիրից մինչև Մեծ Խինդանի լեռները և Սայաններից մինչև Հիմալայները։ Կենտրոնական Ասիայի մեջ են մտնում Մոնղոլիան, Սինցյանը, Գորի կամ Շամո անապատը և Տիբեթը։ Կենտրոնական Ասիայի բնության առանձնահատկություններից է անապատային լանդշաֆտների առկայությունը։ Կենտրոնական Ասիայի բնությունը խիստ է ու քիչ բարենպաստ տնտեսական կյանքի համար։

Կենտրոնական Ասիայի մանրամասն ուսումնասիրությամբ զբաղվել են Ա. Հումբոլդտը, Ռիտերը, Ռիխտհոֆենը, Օբրուչեվը, Պրժեալեկին և ուրիշներ,

որոնց ծառայությունը այդ գործում անգնահատելի է:
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՖԲԻԿԱ կամ ՀԱՍԱՐԱԿԱԾԱՅԻՆ ԱՖԲԻԿԱ.—
Բնական մարդ Աֆրիկա ցամաքի կենտրոնական մասում: Մոտավորապես 7—8 աստիճան հս. լայնության և 12—13 աստիճան հարավային լայնության միջև: Կենտրոնական Աֆրիկայի սահմաններում են գտնվում հետևյալ երկրները՝ Կամերուն, Կենտրոնական Աֆրիկական Հանրապետություն, Գարուն, Կոնգո (Կինշասա մայրաքաղաքով), Կոնգո (Բրազավիլ մայրաքաղաքով), Զամբիա և Անգոլա, ինչպես նաև խոպանական Գվինեա, Սան-Տոմե և Պրինսիպի:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ցամաքի կենտրոնական մասը: Կենտրոնական Եվրոպա հասկացության սահմանները ավելի քիչ են պարզորոշ, քան Կենտրոնական Ասիայի և Կենտրոնական Աֆրիկայի: Դա պայմանավորված է Եվրոպայի ափերի խորը կրտսվածությամբ և թիրակղղիների առկայությամբ: Հիմնականում ընդունված է Կենտրոնական Եվրոպայի մեջ մտցնել այն պետությունները, որոնց տերիտորիայի մեծ մասը Եվրոպա ցամաքի նկատմամբ ունեն կենտրոնական դիրք՝ Գերմանիա, Լեհաստան, Շվեյցարիա, Ավստրիա, Հունգարիա, Զեխոսլովակիա և Ռումինիա:

ԿԵՍԱՐԻԱ.—Քաղաք Փոքր Ասիայում, պատմական Կապադովկիայում: Կեսարիայի անունը ծագել է կայսր բարից, որը եղել է Հռովիս Կեսարի մականունը և դարձել է Հռոմեական կայսրների տիտղոսը: Այդ տիտղոսը տըրվել է նաև Օգոստոս կայսրին: Ի պատիվ նրա էլ կոչվել է քաղաքը: Քաղաքը այդպես է կոչվել Հռոմեական կայսրության այն ժամանակաշրջանում, երբ Միջերկրածովյան երկրներում շատ բնակավայրեր կոչվում էին Օգոստոս կայսեր անունով: Հռոմեական կայսրության արևելյան մասերում Կայսր անունը արտասանվում էր Կեսարեա ձևով: Այստեղից էլ քաղաքի Կեսարեա կամ Կեսարիա անվանումը, որը ենթարկվելով թուրքական ձայնական ներդաշնակության դարձել է Կայսերի: Այս-

պես աղճատվեց Կոստանդնուպոլիսը, դառնալով Իս-
տանբուլ, Աղրիանապոլիսը՝ էդիրնե, Խարբերդը՝ Խար-
փութ, Ակնը՝ էգին և նման շատ տեղանուններ կարող
են օրինակ ծառայել այն բանի, թե ինչպես թուրքերը
օտարացրել և աղճատել են շատ տեղանուններ:

Հայերենում պահպանվել է Կեսարիա Ճեր: Քաղաքը
իր ժամանակին հայաշատ էր: Մինչև հայերի տարա-
գրումը՝ 1915 թվականը, Կեսարիա քաղաքում բնակվում
էր 20 հազար հայ: Իսկ շրջակա գյուղերում՝ 50 հազար:

Կեսարիայում հայերը ունեին դպրոցներ և եկեղեցի-
ներ: Վեց եկեղեցիներից աշքի էր ընկնում Մայր եկեղե-
ցին, որը հայտնի էր թե իր փառավոր շենքով, թե ներ-
քին հարուստ զարդարանքով: Ամեն մի եկեղեցի ուներ
դպրոց:

Կեսարիան տվել է հայ մշակույթի ականավոր դեմ-
քեր, որոնք աշքի ընկնող դեր խաղացին թե գիտության
և թե գրականության ասպարեզում: Հիշենք Բյուզանդ
Քելլյանին, որը եղել է «Բյուզանդիոն» թերթի խմբագիր,
Կարապետ Բասմաջյանին, որը հայտնի բանասեր էր և
«Բանասերի» խմբագիրը: Բանաստեղծ Վահան Թեքեյա-
նին, Խաչատուր Կեսարացուն, կին գրող Իսկուչի Կեսա-
րացուն, Նահապետ Ռուսինյանին, որը հեղինակն է
«Կիլիկիա» երգի: Նշանավոր դեմքերից է նաև Արշակ
Ալպոյաճյանը, որը գրել է հայագիտական խոշոր գոր-
ծեր, այդ թվում «Պատմություն հայ Կեսարիոյ» գիրքը:
Գրիգոր և Կարապետ Մելքոնյանները հիմնեցին «Մել-
քոնյան հաստատությունը», ինչպես նաև Կիպրոսի վար-
ժարանը: Մելքոնյան ֆոնդը մեծ ծառայություն մատու-
ցեց նաև Հայաստանում հրատարակչական գործին: Շա-
տերին է ծանոթ 1930—1934 թթ. ընթացքում հրատա-
րակված «Ուղեգրություններ» խորագիրը կրող ստվար
հատորները, որոնք հանդիսանում են աղբյուրներ Հա-
յաստանի և Անդրկովկասի պատմության: Կեսարիայի-
հայությունը մեծ վնաս ստացավ 1895 թվականի կոտո-
րածի ժամանակի: Իսկ 1915 թվականին Կեսարիան և
նրա շրջակա գյուղերը հայաթափ եղան:

ի հավերժացումն կեսարիա քաղաքի Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1969 թվականի հունվարի 14-ի հրամանագրով Հոկտեմբերյանի շրջանի եթերայուղային գործարանին կից ավանը վերանվանվել է Նոր Կեսարիա:

ԿԵՐԴԵԼԵՆ.—Արշակելագ Հնդկական օվկիանոսի հարավում: Այն հայտնաբերվել է 1772 թվականի փետրվարի 12-ին ֆրանսիացի ծովագնաց իվ Դե Կերելենի կողմից: Ներկայումս պատկանում է Ֆրանսիային:

ԿԵՐՁԻ ՆԵՐՈՒՑԻՑ.—Ղրիմում: Կերչ անունը դալիս՝ է հին սլավոնական կերչ բառից, որը նշանակում է «կոկորդ», որին նման է նեղուցի (Կերչի) համեմատաբար նեղմասը: Ժամանակի ընթացքում այս անունը տարածվեց թերակղզու և քաղաքի վրա: Պատմական անցյալում նեղուցը կրել է Կիմերյան Բոսֆոր անունը:

ԿԵՐՁԻ ԹԵՐԱԿՂՋԻ.—Ղրիմ թերակղզու արևելյան մասը: Իրանունը ստացել է համանուն նեղուցից (տե՛ս Կերչի նեղուց):

ԿԵՐՁ.—Քաղաք Ղրիմում: Կերչի նեղուցի ափին, որից և ստացել է իր անունը:

ԿԶԾԼԿՈՒՄ.—Անապատ Միջին Ասիայում: Կիզիլ կամ ղըզը՝ «կարմիր» և կում՝ «ավաղ» բառերից: Այսինքն «կարմիր ավաղ»: Այդպես է կոչվում, որովհետև ավաղը տեղատեղ ունի կարմրավուն կամ նարնջագույն տեսք:

ԿԻԼԻԿԻՅ.—Երկիր, որը գտնվում է Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան մասում: Այստեղ 11—14-րդ դարի վերջը գոյություն է ունեցել Հայկական պետականություն՝ Ռուբինյան թագավորությունը: Կիլիկիա անունը առաջացել է հույն դիցաբանական հերոս Կիլիկոսի անունից: Կիլիկիան հայերի մոտ հայտնի է եղել նաև Սիսուան անվամբ: Կիլիկիայի հայությունը նույնպես ապրեց իր գողգոթան: Վերապրող հայերից շատերը եկան Սովետական Հայաստան և Երևանի նորաստեղծ թաղերից մեկը Կիլիկիա անվանեցին:

ԿԻԼԻՄԱՆՃԱՐՈ.—Հրաբխային լեռնային գանգված Արևելյան-

Աֆրիկայում: Բարձրությունը 5895 մետր: Հայտնաբերվել է 1848 թվականին: Անոնը առաջացել է նեղրական Սուախիլի ժողովրդի լեզվից: Կիլիմանյա՝ «փայլող» և նգար՝ «լեռ» բառերի միացումից: Այսինքն «փայլող լեռ»: Իրոք որ ձյունապատ լեռը զարմանալիորեն փայլում է աֆրիկական վառ արևի տակ:

ԿիելԱԴներ կամ ՑիկլԱԴներ.— Արշիպելագ էգեյան ծովի հարավում: Անոնը առաջացել է հունարեն կիկլոս՝ «շրջան» բառից: Իրոք որ կղզիները շրջանաձև դասավորված են Սկյուրոս կղզու շուրջը:

ԿիլՏՈ.— Քաղաք Ճապոնիայում: Անոնը ճապոներեն բառացի նշանակում է «մայրաքաղաք»: Եղել է Ճապոնիայի մայրաքաղաքը, մինչև Տոկիո տեղափոխվելը:

ԿիՊՐՈՍ.— Կղզի, որի վրա համանուն պետություն Միջերկրական ծովի արևելյան մասում: Անոնը առաջացել է լատիներեն կուպրոս՝ «պղինձ» բառից, որով իր ժամանակին հարուստ է եղել կղզին:

ԿիՍԼՈՎՈԴՍԿ.— Կուրորտային քաղաք Հյուսիսային Կովկասում: Ռուսերեն կիսլայա՝ «թթու» և վոդա՝ «ջուր» բառերի միացումից «սկ» մասնիկով, որն ունի քաղաքի իմաստ, այսինքն «թթու ջուր քաղաք»: Այս քաղաքը հայտնի է իր նարզան հանքային ջրով: Ի դեպ, նարզան բառն էլ օսերեն «դյուցազն», ուժեղ մարդ է նշանակում:

ԿիՎԱԶ.— Ջրվեժ Սունա գետի վրա: Կարելական ինքնավար Հանրապետությունում, ֆիններեն կիվալ՝ «փոթորկու» բառից:

ԿիՏՈ.— Էկվադոր պետության մայրաքաղաքը: Անոնը տրվել է քաղաքին 1533 թ. ի հիշատակ կվիտու կամ կիտու ժողովրդի, որն ամերիկյան բնիկներից էր և բնաջնջվեց գաղութացման սկզբնական շրջանում:

ԿիԹԵՆԱԿԻԱ.— Նահանգ կիրիայում: Ծագել է հին հունական կիրենա քաղաքի անունից:

ԿիԹԻԶԻԶԻԱ.— Սովետական Հանրապետություն Միջին Ասիայում: Այդպես է կոչվում կիրգիզ ժողովրդի անունով:

Առաջացել է կիր և գեղ կամ դիզ բառերի միացումից՝ Առաջինը՝ կիր նշանակում է «տափաստան», «անապատ», իսկ գեղ կամ դիզ՝ «թափառող», «քոչվոր»: Այլ խոսքով անապատի քոչվորներ:

ԿիրՈՎ.—Քաղաք ՌՄՖՍՀ-ում: Կոչվել է ի պատիվ Սերգեյ Միրոնովիչ Կիրովի, սովետական պետական գործիչ (1886—1934 թթ.): Մինչև 1934 թվականը կոչվում էր Վլատկա:

ԿիրՈՎԱԲԱԴ.—Քաղաք Ադրբեյջանում: Կոչվել է ի պատիվ Սերգեյ Միրոնովիչ Կիրովի և ավելացված պարսկերեն արագ բառը, որն ունի տեղի իմաստ: Այլ խոսքով Կիրովի քաղաք: Մինչև 1918 թվականը կոչվում էր Ելիզավետպոլ: Տեղական անունն է Գյանջա: Հայերեն Գանձակ:

ԿԼՅՈՒԶԵՎԱԿԱՅԱ ՍՈՊԿԱ.—Գործող հրաբուխ Կամչատկայում: Այդպիս է կոչվում Կլյուչևկոյե գյուղի անունով: Ռուսերեն կլյուչի՝ «աղբյուր» բառից: Այդպիս է կոչվում այստեղ գտնվող տաք աղբյուրների պատճառով:

ԿՅՈՒՅՑՈՒ.—Ճապոնական կղզիներից մեկը. իր մեծությամբ երկրորդ կղզին է: Կյուայու անվանումը ճապոներեն լեզվում նշանակում է նոր երկիր: Կյու՝ «նոր» և սյու՝ «երկիր»:

ԿՅՈՒՐԱՍԱՌ.—Կղզի: Գտնվում է Վենեսուելայի ափերից ոչ շատ հեռու: Կյուրասաո խապաներեն կուրասիոն բառից է, որ նշանակում է «բուժում»: 1499 թվականին խապանացի կոնկիստադոր Ալոնսո դե Օխեդոն նավարկելով դեպի կղզու ափերը, ափ դուրս բերեց և այնտեղ թողեց ճանապարհին ծանր կերպով հիվանդացած նավաստիներին: Մի քանի տարի անց կղզուն մոտեցավ խապանական մի ուրիշ նավ: Մեծ եղավ ծովագնացների զարմանքը, երբ ափին տեղացի բնակիչների ամբոխի մեջ հնդիկների շարքում նրանք տեսան այդտեղ թողած նավաստիներին՝ միանգամայն առողջ վիճակում: Այդ ժամանականից էլ այդ կղզին խապանացիները անվանեցին Կյուրասաո, այսինքն բուժիչ:

ԿՈՂԱ. — Թերակղզի ՌՍՅԱՀ-ի հյուսիսում։ Անունը առաջացել
է Կոլա գետից, որը ծագել է ֆիններեն կուլ՝ «ձուկ»
բառից։

ԿՈՂՈՒԻԵՎ. — Կղզի Բարենցի ծովում։ Անունը առաջացել է
ֆիններեն կուլիկա՝ «անկյուն» և «ծունկ» բառերի
միացումից։

ԿՈՂԻՄԱ. — Գետ Սիբիրում։ Անվան առաջացումը գալիս է յա-
կուտերեն խոլումա բառից, որը տրվում է հողածածկ և
կոնածե տեսք ունեցող բնակարաններին։ Հնում բնակա-
րանների այդ ձեր տարածված էր հյուսիսի ձկնորսների
մոտ։

ԿՈՂԻՒԴԱ. — Պատմական մարզ Արևմտյան Վրաստանում։
Անունը գալիս է կոլխի կովկասյան ցեղի անունից,
«իդա» մասնիկն ունի երկրի իմաստ։

ԿՈՂՈՄԲՈ. — Ցելոնի մայրաքաղաքը։ Սինգալեղերեն կոլոմ-
բո՝ «նավահանգիստ» բառից։ Մի այլ մեկնաբանումով
այս անունն իբր առաջացել է սինգալեղերեն կոլա-ամ-
բա՝ մանգոյի տերև բառից։ Դա պատահական չէ, քանի
որ քաղաքի փողոցները զարդարված են մանգոյի ծա-
ռերով, որոնք ունեն հաճելի բուրմունք։

ԿՈՂՈՄՄԱՆ. — Քաղաք Մոսկվայի մարզում։ Հին ուսերեն կո-
լոմենյե, կոլոմեն բառից, որը նշանակում է «մոտ»,
«հարևան»։ Նկատի է ունեցվել Մոսկվայի հարևանու-
թյունը։

ԿՈՂՈՆ. — Քաղաք Պանամայում։ Ի պատիվ Քրիստափոր Կո-
լոմբոսի, որի ազգանունի իսպանական ձևն է Կոլոն։

ԿՈՂՈՐԱԴՈ. — Գետ ԱՄՆ-ում։ Իսպաներեն ոիո-Կոլորադո,
այսինքն «գույնզգույն գետ»։ Նկատի է ունեցվել գետի
շրերի կարմրագույն երանգը, որի պատճառը կարմիր
կավի նստվածքների լուծումն է շրի մեջ։ Նրա վտակնե-
րից են Գրին-Ռիվեր («Կանաչ գետ») և Բլու-Ռիվեր
(«Կապույտ գետ»)։ Գետը իր անունը տվել է Կոլորա-
դոյի նշանավոր կանյոնին և ԱՄՆ-ի նահանգներից
մեկին։

ԿՈՂՈՒՄԲԻԱ, — Գետ Կանադայում։ Հայտնաբերվել է 1792

թվականին ամերիկացի Ռոբերտ Գրեյի կողմից: Նա գետը անվանեց ի պատիվ «Կոլումբիա» անունը կրող իր նավի:

ԿՈՂՈՒՄԲԻԱ. — Ֆեդերալ օկրուգ ԱՄՆ-ում, որի կազմում է պետության մայրաքաղաք Վաշինգտոնը: Կոլումբիա է կոչվել ի պատիվ Քրիստափոր Կոլումբոսի:

ԿՈՂՈՒՄԲԻԱ. — Պետություն Հարավային Ամերիկայում: Այդպիս է կոչվել ի պատիվ Քրիստափոր Կոլումբոսի (1452—1506 թթ.):

ԿՈՄԱՆԴՈՐՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ. — Գտնվում են Կամչատկայից արևելք, բաց ծովում: Հայտնաբերվել են 1728 թ. Վիտուս Բերինգի կողմից, որը նավարկում էր Խաղաղ օվկիանոսի հյուսիսում: Այս կղզիներից մեկի մոտ էլ նամաճանում է: Հետագա ոռու ծովագնացները այդ կղզին անվանեցին «Բերինգյան», իսկ կղզիների ամբողջ խոմքն էլ Կոմանդորյան, որովհետեւ Բերինգը ուներ կոմանդորի կոչում:

ԿՈՄԻ ԻՍՍՀ. — Ուրալի հյուսիսային մասում: Կոչվում է ֆիննական ծագում ունեցող կոմի ժողովրդի անունով, որը նշանակում է «մարդ»:

ԿՈՄԻ-ՊԵՐՄՅԱԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՕԿՐՈՒԳ. — Ուրալում: Կոմի-Պերմյակներ ֆիննական ծագում ունեցող ժողովրդի անունից:

ԿՈՄՈ. — Քաղաք և լիճ հտալիայում (Ալպերում): Անունը կելտերեն լեզվից է և «Հովիտ» է նշանակում:

ԿՈՄՈՒՆԻՆ. — Հրվանդան Հնդկաստանի ծայր հարավում: Հընդկական Շիվա աստծու կնոջ Կոմարի աստվածուհու անունով, որը ըստ ավանդության համարվում էր այս վայրի հովանավորողը: Կոմորինը պորտուգալական ձեվափոխումն է:

ԿՈՄՈՐՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ. — Կղիախումբ Հնդկական օվկիանոսում, Մադագասկար կղզու և Աֆրիկա ցամաքի միջև: Անվանումը արաբերեն կամար կամ կամր «լուսին» բառից է:

ԿՈՄՍՈՄՈԼԻ ԿՂԶԻ. — Արալան ծովում: Հայտնաբերվել է

1849 թվականին Ա. Ի. Բուտակովի կողմից: Ներկա անվանումը կղզուն տվել են սովետական հիգրոգրաֆները:
ԿՈՄՍՈՄՈԼԿԱ ԱՄՈՒԹԻ ՎՐԱ.—Քաղաք սովետական Հեռավոր Սրբելքում: Այսպես կոչվեց, որովհետեւ քաղաքը հիմնադրվեց Կոմունիստական երիտասարդական Միության ուժերով 1932 թվականին: Քաղաքը ներկայումս դարձել է Հեռավոր Արևելքի արդյունաբերական և կուտուրական խոշոր կենտրոններից մեկը:

ԿՈՄՍՈՄՈԼԿԱՅԱ ՊՐԱՎԴԱ.— Այս անունը կրում են թվով ինը կղզիներ, որոնք ընկած են Լապտևների ծովի հարավ-արևմտյան մասում, Թայմիր թերակղզու ափերի մոտ: Զնայած կղզիները հայտնաբերվել են դեռևս 1736 թվականին և կոչվել Անմուխի կղզիներ, բայց 1935 թվականին վերանվանվեց ի պատիվ Համկեմ-ի օրգան «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի:

ԿՈՆԳՈ.— Այս անունը կրում են Աֆրիկայի խոշորագույն գետերից մեկը և Աֆրիկայում գտնվող երկու պետություն բակոնգո ժողովրդի անունից, որը զբաղեցնում է Կոնգո գետի ավազանը: Ժամանակի ընթացքում բակոնգոների հայրենիքը՝ Կոնգոն բաժանվեց Բելգիայի և Ֆրանսիայի միջև: Երբ անկախացան, երկուսն էլ պահպանեցին Կոնգո անունը, մեկը Կինշասա, մյուսը՝ Բրազզավիլ մայրաքաղաքներով:

ԿՈՆԴՈՄԻՆԻՈՒՄ.— Համատեղ տիրապետություն: Կոնդոմինիում հասկացությունը լատիներեն կոն՝ «միասին» կամ «համատեղ» և դոմինիում՝ «տիրապետություն» կամ «իշխանություն» բառերի զուգակցումից է, այսինքն՝ «համատեղ տիրապետություն»: Դրանք այն տիրապետությունների: Այդպիսին էր անցյալում Անգլո-Եգիպտական Սուլանը, որը ներկայումս ինքնուրույն պետություն է՝ Սուլան անվան տակ: Որպես կոնդոմինիում մնացել են Նոր Հերոիդյան կղզիները, որոնք պատկանում են Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային:

ԿՈՆԻԱ կամ ԻԿՈՆԻԱ.— Քաղաք Թուրքիայում: Հին հունական

իկոնիումն է: Հունարեն իկոնոս՝ «սրբապատկեր» բառից: Այդպես է կոչվել, որովհետև քաղաքի բյուզանդական տաճարը իր ժամանակին ուներ սուրբ Գրիգորի հոյակապ դիմանկարը:

ԿՈՆՅԱԿ.—Քաղաք Արևմտյան Ֆրանսիայում: Կելտերեն Կոնյանձնական անունից և պատկանելիություն ցույց տվող «ակոս» վերջածանցից, եղել է Կոնյակոս, բայց հետագայում ձևափոխվել դարձել է Կոնյակ: Այս քաղաքից է իր անունը ստացել Հայտնի ոգելից խմիչքը:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՒՄ.—Քաղաք Հյուսիսային Ալժիրում: Ի պատիվ Հոռմեական կայսր Կոնստանդին I Մեծի (306—337 թթ.): Նումիդացիների Տիրուան է, որը կործանվեց 4-րդ դարում և երբ վերականգնվեց, ապա արևելահռոմեական կայսրի անունով Կոնստանտինա կոչվեց:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՊՈԼԻՍ.—Քաղաք Թուրքիայում: Հին Բյուզանդիոնն է: Երբ Կոնստանդին I Մեծը 329 թվականին այստեղ տեղափոխեց իր մայրաքաղաքը, քաղաքին տվեց իր անունը, ավելացնելով Հունարեն պոլիս՝ «քաղաք» վերջավորությունը: Թուրքերը այն ձևափոխեցին Ստամբուլի:

ԿՈՆՍՏԱՆՑԱ.—Նավահանգիստ Ռումինիայում. Հին Թումիսն է, վերափոխված Կոնստանդին Մեծի կողմից մոտ 330 թվականին:

ԿՈՆՈՒՐԲԱՑԻԱ.—Իրար մոտ ընկած և տնտեսապես միմյանց կապված քաղաքների միավորում: Կոնուրբացիա հասկացությունը լատիներեն լեզվից է և նշանակում է «քաղաքների միավորում» կամ «քաղաքների ագլոմերացիա»: Կոնուրբացիայի կենտրոնը սովորաբար դառնում է որևէ խոշոր քաղաք: Այդպիսի օրինակներ շատ կարելի է գտնել Մեծ Բրիտանիայում՝ Լոնդոնի, Մանչեստերի, Բիրմինգեմի կոնուրբացիաները: Մեզ մոտ տիպական է Մոսկվայի համար:

ԿՈՂԵՆՀԱԳԵՆ.—Դանիայի մայրաքաղաք և Եվրոպայի նշանավոր նավահանգիստներից: Դանիերեն Կյորենգ՝ «շու-

կա», «առկտրի վայր» և հավն՝ «նավահանգիստ» բառերից, առևտրական նավահանգստի իմաստով:

ԿՈՊԵՏ-ԴԱՂ.— Լեռներ Միջին Ասիայի հարավում: Թուրքմեներեն կոպ՝ «շատ» և դաղ՝ «լեռ» բառերից՝ բազմալեռ, շատ լեռներ:

ԿՈՍՏԱ-ԾԻԿԱ.— Պետություն Կենտրոնական Ամերիկայում: Անունը իսպանական ծագում ունի և առաջացել է կոստա՝ «ծովափ» և որիկա կամ րիկա՝ «հարուստ» բառերից: Երբ Քրիստափոր Կոլումբոսը 1502 թվականին մոտեցավ ներկա Կոստա-Ծիկայի ափերին, նա կարծեց թե հասել է Պտղոմեոսի ավանդական «Ուկյա Խերսոնեսին», որի երկակայական հարստությունների համբավը վաղուց էր տարածվել Եվրոպայում: Այդ կարծիքին լինելով, Կոլումբոսը կղզին անվանեց «Կոստա-Ծիկա», որը իսպաներեն նշանակում է հարուստ ափ: Այս անունը այդ փոքրիկ երկրի համար շատ սազական եղավ: Կոստա-Ծիկայի բնությունը շատ գեղատեսիլ է, լեռներն ու բլուրները ծածկված են արևադարձային անտառներով, իսկ գաշտերը զարդարված են ոսկեզօծ բանանով ու եգիպտացորենի արտերով:

ԿՈՍՅՑՈՒՇԿՈ.— Ամենաբարձր գագաթը (2234 մ) Ավստրալիայում: Հայտնաբերվել է լեռ ճանապարհորդ Պ. Ստշելցկու կողմից (1840 թ.): Այսպես է կոչվել ի պատիվ լեռ մեծ հայրենասեր և ազգային ազատագրական գործիչ Թադեուշ Կոստյուշկոյի (1746—1817 թթ.):

ԿՈՎԿԱՆ.— Մոտ 450 հազար քառակուսի կիլոմետր տարածությամբ մի երկիր, որը ընկած է երեք ծովերի՝ Սև, Ազովի արևմուտքում և Կասպիցի արևելքում: Հյուսիսային սահմանը սկսում է Կումա-Մանիլ ցածրությունից և հասնում ՍՍՀՄ-ի հարավային սահմանը՝ իրանի և Թուրքիայի հետ: Հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք ձգվում են Կովկասյան լեռները, իրենց վեհասարանը և ձյունապատ գագաթներով: Ամենից բարձրն է Գլխավոր շղթան:

Կովկաս անվանման առաջացման մասին կան հետևյալ

վերսիաները: Առաջին, որ կազմված է պարսկերեն կոճ՝ «Լեռներ» և կաֆսապ՝ «կասպից» բառերից և նշանակում է կասպիական լեռներ: Էթնոնիմը կասպի ժողովրդից: Երկրորդը՝ սանսկրիտերեն լեզվից է: Կազմված է գրավան՝ «Ժայռ» և կամ՝ «փայլել» բառերից: Այսինքն փայռ լող ժայռեր: Կովկաս անունը հայտնի է եղել դեռ հին հույներին և առաջին անգամ հիշվում է էսքիլեսի կողմից, «Դամված Պրոմեթեոս» աշխատությունում: Հստ վրացական ավանդության կովկասուը այդ երկրի ժողովուրդների նախնիներից էր, Հայկի և Քարթլոսի (վրաց նահապետի) եղբայրը:

ԿՈՏ-Դ-ՕՐ.— Բարձրավանդակ Արևելյան Ֆրանսիայում: Ֆրանսերեն նշանակում է «Ռոկե բարձունք»: Այդպես է կոչվել խաղողի այգիների պատճառով, որոնք ամենուարեք ծածկում են բարձրավանդակի լանջերը:

ԿՈՏԵԼԻ ԿՂՋԻ.— Նոր Սիբիրյան խմբի ամենախոշոր կղզին կապտեների ծովում: Առաջին անգամ կղզին տեսել է 1773 թվականին Լյախով ազգանունով մի արդյունաշագործ և վաճառական, որը փնտրում էր մամոնտի սկրբ նա իր մարդկանցով այցելում է այդ կղզին: Վերադառնալով Ճակուտսկ, նա պատմում է այդ կղզու մասին: Եվ այդտեղ ուղարկում են մի տեղագիր, որը պետք է կազմեր կղզու հատակագիծը: Նա կղզում գտնում է պղնձամի կաթսա, որ մոռացել էին լյախովի մարդիկ: Այս կաթսան դարձավ տարբերիչ հատկանիշ անմարդաբնակ և աննկատելի կղզու համար և առիթ ծառայեց նրան Կոտելի՝ «Կաթսայի» կղզի կոչելու:

ԿՈՏՈՂԱԼԻ.— Գործող հրաբուխ է կվաղորում (Հարավային Ամերիկա): Հնդկերեն (կեշուա լեզվից) կոտո՝ «վիթիարի» և պաքսի՝ «փայլ» բառերից, փայլող լեռան իմաստով:

ԿՈՐԱԼՅԱՆ ԾՈՎ.— Խաղաղ օվկիանոսի կիսափակ ծովերից Ավստրալիայի հյուսիս-արևելյան մասում: Հայտնաբերվել է ծովագնաց Ֆլինդերսի կողմից: Նա այս ծովում տեսառի կորալական ծագում ունեցող բազմաթիվ կղզիւ-

ներ ու խութեր, որի համար էլ անվանեց Կորալյան ծով՝ Կորալյան ծովը համարվում է աշխարհի ամենամեծ ծովը, որն ունի 4 միլիոն 800 հազար քառակուսի կիլոմետր մակերես:

ԿՈՐԴԻԼԻՒՐՆԵՐ.— Լեռնաշղթա Հյուսիսային Ամերիկայում: Աշխարհի խոշորագույն լեռնային սիստեմներից մեկը, որոնք ձգվում են Ալյասկայից մինչև Հրո Երկիր: Անվանումը իսպաներեն լեզվից է և բառացի նշանակում է «լեռնաշղթա»: Կորդիլիւրները շարունակվում են Հարավային Ամերիկայում, որտեղ հայտնի են Անգեր անունով:

ԿՈՐԴՈՎԱ.— Քաղաք Իսպանիայում: Հիմնադրվել է փյունիկեցիների կողմից մեր թվականությունից առաջ: Անունը՝ կար՝ «քաղաք» և դուրս՝ «մեծ» բառերի միացումից: Հումի տիրապետության ժամանակ կոչվել է Կորդովա:

ԿՈՐԵԱ.— Թերակղզի Արևելյան Ասիայում, որի վրա երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծվել են երկու պետություն: Անունը շինարեն՝ գո՝ «Երկիր», բեկամ լի՝ «առավոտ» և յա՝ «զով» բառերից է, այսինքն «զով առավոտյան երկիր»: Կորեացիները իրենց երկրին անվանում են Չոռյոն, որն ունի նույն իմաստը: Ռուսական գրականության մեջ տարածված է «առավոտյան թարմության երկիր»: Մի այլ մեկնաբանումով այդպես է կոչվել ի պատիվ Կորեո դինաստիայի, որը իշխել է 10—14-րդ դարերում:

ԿՈՐՆԹՈՍ.— Քաղաք Հունաստանում: Կորինթոս դիցարանական հերոսի անունով: Այդ անունով են հայտնի նաև Կորնթոսի պարանոց, Կորնթոսի ծոց և Կորնթոսի ջրանցք աշխարհագրական տեղանունները Հունաստանում:

ԿՈՐՈՄԱՆԴԵԼՅԱՆ ԱՓ.— Հինդուստան թերակղզու Բենգալական ծոցին հարող ափը: Անվանումը առաջացել է Հընդկական ջուամանդալա անունից, որը նշանակում է Ջուլայի տիրապետություն: Ջոլան իր ժամանակին եղել է Հնդկաստանում իշխող դինաստիա: Եվրոպացիներից երեք ժողովուրդ մասնակցել են անվանման ձևափոխ-

մանը: Պորտուգալացիները Զոլամանդալան անվանեցին Զորամանդալա, այսինքն «լ» տառը փոխարինեցին «ր»-ով: Իտալացիները «Հ»-ն փոխարինեցին «Կ»-ով: Իսկ ֆրանսիացիները փոխեցին վերջին վանկը: Ձևափոխվելով Զոլամանդալան դարձավ Կորոմանդել:

ԿՈՐՍԻԿԱ.— Կղզի Միջերկրական ծովում: Պատկանում է Ֆրանսիային: Այդպես է կոչվել կորսի լիգուրական ժողովրդի անունից: Իսկ մյուս բացատրությունը՝ փլուենիկերեն կորսի՝ «անտառ» բառից:

ԿՈՐՖՈՒ.— Կղզի Հոնիական ծովում: Հոնիական կղզիների խմբում: Անունը մեկնաբանվում է երկու կերպ: Առաջինը իբրև կերկիրա բառի ձևափոխում, որը նշանակում է «կաղնի»: Իր ժամանակին հարուստ է եղել անտառներով: Մյուս մեկնաբանումը հունարեն կորիֆե՛ բրար: Ճունք» բառից է:

ԿՐԱԿՈՎ.— Քաղաք Լեհաստանում: Կոչվել է լեհ ավանդական առաջնորդ Կրակի անունով, որը գալիս է 7-րդ դարից: Մյուս ստուգաբանությունը՝ լեհերեն կրուկ՝ «ագուավ» բառից:

ԿՐԱՄԱՏՈՐՍԿ.— Քաղաք Ուկրաինայում: Ուկրաիներեն կրամ՝ «ապրանք» բառից և Տորցե գետանունից: Այսինքն տանավաճառ Տորցե գետի վրա:

ԿՐԱՍՆՈԴԱՐ.— Քաղաք ՌՍՖՍՀ-ում: Ռուսերեն կրասնի՝ «կարմիր» և դար՝ «պարզե» բառերից: Այսինքն կարմիրների (սովետների) պարզե: Մինչև 1920 թվականը կոչվում էր Եկատերինոդար: Նշանակում էր Եկատերինաթագուհու պարզե:

ԿՐԱՍՆՈՅԱՐՍԿ.— Քաղաք Սիբիրում: Քաղաքի անվանումը առաջացել է կրասնի և յար բառերի միացումից: Կրասնի բառը ոռուսերենում և՛ գեղեցիկի իմաստ ունի, և՛ կարմը մըրի: Երկուսն էլ սաղական են քաղաքին: Քաղաքը գեղեցիկ է և ենիսեյի ափին դուրս են գալիս կարմիր թերթաքարերը: Յար բառը թուրքական ծագում ունի և նշանակում է զառիթափ լանջ:

ԿՐԱՍՆՈՎՈԴՈՍԿ.— Քաղաք Կասպից ծովի ափին: Ռուսերեն

կրամնի՝ «կարմիր» և վոդա՝ «ջուր» բառերից: Ջուրը կարմրագույն երևալու պատճառով: Մյուս մեկնաբանությունը՝ շրջապատող ժայռերի կարմրագույն լինելու պատճառով, որոնք արտացոլվում են ջրում:

ԿՐԻՎՈՅ ԱՌԴ.—Քաղաք Աւկրաինայում: Երկաթահանքի խոշոր կենտրոն: Քաղաքը տեղադրված է ինգուլեց և Սասկագան գետերի միախառնման տեղում: Քաղաքի անվան առաջացման մասին կա երկու վարկած: Մեկը բացարում է քաղաքի տերիտորիայի կեռ եղջյուրի տեսքունենալով, մյուսը՝ նրանով, որ երկաթահանքերի վայրը քարտեզի վրա ունի եղջյուրանման գծագրություն:

ԿՐՈՆԵՏԱԳՏ.—Քաղաք Լենինգրադի մարզում, Ֆիննական ծոցում, Կոտլին կղզու վրա: Գերմաներեն կրոնե՝ «թագ» և շտագտ՝ «քաղաք» բառերի միացումից: Այսինքն թագի քաղաք, կայսերական քաղաք: Հիմնադրվել է 1710 թվականին Պյոտր I-ի կողմից:

ԿՐՈՊՈՏԿԻՆ.—Քաղաք Կրասնոդարի երկրամասում: Մինչև 1921 թվականը կոչվում էր Ռոմանովսկի խուտոր, իսկ հետո վերանվանվեց ի պատիվ Պ. Ա. Կրոպոտկինի (1842—1921), որը նշանավոր հեղափոխական էր և տեսաբան, ինչպես նաև գիտնական-աշխարհագրագետ: Քաղաքին կից կայարանի անունը չի փոխվել և մնացել է Կավկազսկայա:

ԿՐՈՒՊԱԿԱՅԱՆ. — Կարայի ծովում, Հյուսիսային երկիր արշիպելագի Պիոներ կղզու վրա: Կղզին հայտնաբերվել է 1932 թվականին և կոչվել ի պատիվ Ն. Կ. Կրուպսկայայի:

ԿՈՒԱԼԱ-ԼՈՒՄՊՈՒԲ. — Մալայզիայի մայրաքաղաքը: Անվանումը առաջացել է մալայերեն կուալա՝ «գետաբերան» և լումպուր՝ «տիղմ» բառերի զուգակցումից: Այսինքն տղմոտ գետաբերան:

ԿՈՒԲԱ. — Պետություն Անտիլան կղզիներում: Կուբա կամ Կուվա քաղաքի անունից: Կղզու բնիկները Կոլումբոսին տեղեկացրին, որ իրը այդ անունով քաղաք գոյություն ունի իրենց երկրի խորքում: Եվ իսպանացիներն էլ այդ-

պես այդ անունով կոչեցին կղզին: Հայտնաբերվել է
1492 թվականին Կոլումբոսի կողմից:

ԿՈՒԶԲԱՆՆ. — ՍՍՀՄ-ի ածխարդյունաբերական խոշորագույն
ավազաններից մեկը: Գտնվում է Հարավային Սիբիրում,
Կուզնեցկի գոգավորությունում: Կուզբաս անունը հա-
պավման միջոցով է առաջացել: Կազմվել է Կուզնեցկ
(նկատի է ունեցվել Կուզնեցկի գոգավորությունը) և
բասեյն (ավազան) բառերի առաջին վանկերի միացու-
մից (Դոնբասի օրինակով):

ԿՈՒԶՆԵՑԿԻ ԱԼԱՏԱՐԻ. — Լեռներ Սիբիրում: Շորիները (շո-
րիացիներ), որոնք բնակվում էին այստեղ, փոքրիկ
վառարաններում ծուլում էին երկաթ և պատրաստում
երկաթյա իրեր: Հենց ոռուերեն կուզնեց նշանակում է
դարբին; Թուրքերեն ալա՝ կապուլտ և տառ՝ լեռ: Կըս-
տացվի «դարբնի կապուլտ լեռներ»:

ԿՈՒՅՑԲԻՇԵՎ. — Քաղաք ՌՍՖՌՀ-ում, Վոլգայի վրա: Նախկի-
նում Սամարա: Վերանվանվեց ի պատիվ սովետական
պետական գործիչ Վալերիան Կույցիշևի (1888—
1935 թթ.):

ԿՈՒԿԻ ԱՐՃԻՊԵԼԱԳ. — Կղզիների խումբ Խաղաղ օվկիանո-
սում (Պոլինեզիայում): Հայտնաբերվել է 1773 թվակա-
նին Զեմս Կուկի կողմից, որի պատվին էլ կոչվել է:

ԿՈՒԿԻ ԼԵՌ. — Նոր Զելանդիայում (Հարավային կղզում):
Կրում է Զեմս Կուկի անունը:

ԿՈՒԿԻ ՆԵՂՈՒՅ. — Բաժանում է Նոր Զելանդիայի Հյուսիսա-
յին և Հարավային կղզիները իրարից: Ուսումնասիրվել
է Զեմս Կուկի կողմից:

Աշխարհի քարտեզի վրա եղած այս անունները
կրում են նոր ժամանակների անվանի ծովագնաց Զեմս
Կուկի անունը: Նա կատարել է երեք շուրջերկրյա ճանա-
պարհորդություն (1768—1771, 1772—1774, 1776—
1778): Վերջին ճանապարհորդության ժամանակ, 1778
թվականին, Հավայան կղզիները ուսումնասիրելիս
սպանվեց բնիկների կողմից:

ԿՈՒԿՈՒԻՆՈՐ. — Լիճ Հյուսիսային Տիբեթում: Մոնղոլերեն կու-

կոռ՝ «կապույտ» և նոր՝ «լիճ» բառերից: Ալսինքն «կապույտ լիճ»: Զինացիները անվանում են Ցինալ, որը նույն իմաստն ունի:

ԿՈՒՆՆՈՒՆ կամ ԿՈՒԵՆ-ԼՈՒՆ.— Լեռներ Կենտրոնական Ասիա-լում: Անվան առաջացումը շինարեն լեզվից է և նշանակում է «սովոր լեռներ»: Նկատի է ունեցվել վայրի սոխի առատությունը այս լեռներում:

ԿՈՒՇԿԱՐ.— Քաղաք Թուրքմենական ՍՍՀ-ում: Անվանումը ծագել է պարսկերեն քյոշկ բառից, որը նշանակում է «փոքր բերդ»:

ԿՈՒՄԿՈՒ.— Քաղաք Պերսում: Անունը առաջացել է հնդկական Կեչուա ցեղի լեզվից: Կուս՝ «աշխարհ» կամ «երկիր» և կո՞ «կենտրոն»՝ աշխարհի կենտրոն:

ԿՈՒԿ-ԱԹԱ.— Խոշոր քարանձավ Կոպետ-Դաղ՝ լեռներում, Թուրքմենական ՍՍՀ-ում: Թուրքմեներեն կուլ՝ «քարանձավ» և աթա՝ «հայր» բառերից. մեծ քարանձավի իմաստով: Աշխարհում միակ քարանձավն է, ուր գտնըվում է հանքային ջրով տաք լիճ: Համարվում է Միջին Ասիայի տեսարժան վայրերից մեկը:

ԿՈՒՎԵՅՏ.— Քաղաք և պետություն Միջին Արևելքում: Արաբերեն էլ-Կուվեյտ նշանակում է ուժեղ, ամրացված բնակավայրի, բերդի իմաստով:

ԿՈՒՐ կամ ՔՈՒՌ.— Գետ Անդրկովկասում: Անվան առաջաման մասին գոյություն ունեն մի քանի ստուգաբանություններ: Առաջինը այն կապում է պարսից թագավոր Կյուրոսի (550—529 թթ., մ. թ. ա.) անվան հետ, երկրորդը՝ ադրբեջաներեն կյուր՝ «քմահան» բառի հետ, նկատի ունենալով գետի վարարումները և հունից դուրս գալը: Մյուսը ստուգաբանվում է արաբերեն կուր՝ «ջուր» բառից: Վրացերեն կուր գետին անվանում են Մտկուարի կամ Մտկվարի, որը բառացի «գետ» է նշանակում: Այսպիսով, գետ (մտկվարի) բառը վրացերեն լեզվում հասարակ անուն է, որովհետև «ջուր» է նշանակում, իսկ միաժամանակ հատուկ է, որովհետև այն գործածվում է միայն այդ գետի՝ Կուրի համար:

ԿԱԻՐԳԱՆ. — Քաղաք Արևմտյան Սիբիրում։ Մարզային կենտրոն Տոբոլ գետի վրա։ Կուրդան՝ բարձր հողային բլուրների իմաստով։ Այն ժառայել է թաթարներից պաշտպանվելու համար։ Հիմնադրվել է 1662 թվականին։

ԿՈՒՐԻՑԱՆ ԿՂԶԻՆԵՐ. — Կղզիախոսմբ սովետական Հեռավոր Արևելքում, Կամչատկա և Հոկայդո կղզիների միջև։ Ստուգաբանվում է մի քանի կերպ։ Առաջինը՝ բնիկների կուր կամ կուրիներ ինքնանվանումով, դա իրենց լեզվում նշանակում է մարդ։ Ժամանակի ընթացքում այդ անունով կոչվեցին կղզիները։ Երկրորդ բացատրությունը կապվում է ոռուերեն կորիտ-ծխել բառի հետ, կղզիներում եղած հրաբուխներից, որոնք պատաժ են ծխով և գոլորշիով։

ԿՈՒՐՈ-ՍԻՎՈ. — Ծովային տաք հոսանք Խաղաղ օվկիանոսում, որը շատ կարևոր գործոն է ճապոնական կղզիների կլիմայական պայմանների համար։ Անվանումը՝ ճապոներեն կուրո՝ «սև» և սիվո՝ (սիո) «հոսանք» բառերի միացումից։ Այսինքն «Սև հոսանք»։ Այդպիսի անվանում կտացել է այն պատճառով, որ հոսանքի ջրերը թվում են քիչ ավելի մուգ, քան նրան շրջապատող ծովը։

ԿՈՒՐՈՒԿ. — Քաղաք ՌՄՖՍՀՀ-ում։ Տուսկար գետի վտակ՝ Կուրով վրա, որից և առաջացել է քաղաքի անունը։ Խսկ Կուր գետն էլ, ենթադրում են, որ իր անունը ստացել է կուրուպատկա (սալամ կաքավ) թոշուններից, որոնք իր ժամանակին շատ են եղել նրա շրջակայքում։

L

ՀԱԱԳԱՆ. — Նիդերլանդիայի մայրաքաղաքը։ Հոլանդերեն գրավեն հագեն բառի կրթատված ձևն է։ Հոլանդերեն գրավեն՝ «կոմս» և հագե՝ «նավահանգիստ» բառերից։ Այսինքն «կոմսի նավահանգիստ»։

ՀԱԲԵԹՅԱՆ ԱՇԽԱԲԱԴ. — Հայաստանի ավանդական անուններից մեկը։ Այս անունը առաջին անգամ գործածել է

Գրիգոր Մագիստրոսը: Հստ Մովսես Խորենացու տոհմագրության Հաբեթը եղել է մեր առաջին նախահոք Հայկի պապերից: Նա նոյի որդիներից մեկն էր:

ՀԱՅԵՇՍԱՆ.— Եթովպիայի մյուս անվանումը: Հաբեշստան անունը հայտնի չէր հին աշխարհում, այն հայտնի դարձավ, երբ արաբները նվաճեցին Հյուսիսային Աֆրիկան: Հաբեշստանը ծագում է հաբեշ ցեղի անունից: Արաբերեն արեշ՝ «խառնված» կամ խաբեշ՝ «խռնված» բառից: Անվանման մեջ դրսենորվում է խայտաբղետ բնակչության կենտրոնացումը հաբեշական բարձրավանդակում: Հաբեշստան անունը երկրում չի գործածվում: Երկրի պաշտոնական անվանումն է Եթովպիա: Իսկ բնակչության ինքնանվանումն է Իտապպիավիա, այսինքն Եթովպիացի:

ՀԱՅԻՑԻ.— Պետություն Վեստ Ինդիայում, Մեծ Անտիլյան կղզիներում: Հնդկական կարիքյան ժողովրդի լեզվից է՝ հաի՝ «լեռնոտ» և տի՝ «երկիր» բառերից: Կղզու անվանումը լրիվ համապատասխանում է նրա բնության առանձնահատկություններին: Մակերեսույթը լեռնոտ է, կլիման արևադարձային: Լեռների միջև կան լայնանիստ հովիտներ, իսկ լեռնալանջերը ծածկված են անտառներով, որոնք հարուստ են տարբեր ծառատեսակներով:

Հախտի կղզու վրա գտնվում են երկու պետություններանցից մեկը զբաղեցնում է արևմտյան մասը և կոչվում է Հախտի: Իսկ մյուսը՝ արևելյան հատվածում է և անվանվում է Դոմինիկյան հանրապետություն (տես վերջինիս անվանման բացատրությունը): Կղզին հայտնաբերվեց 1492 թվականի դեկտեմբերի 8-ին Կոլումբոսի կողմից: Կղզու գեղատեսիլ հովիտները իսպանացիներին հիշեցնում էին իրենց հայրենի Անդալուզիան: Այդ պատճառով էլ նրանք կղզին կոչեցին էսպանյոլա, որը նշանակում է «Փոքրիկ Իսպանիա»: Սակայն պահպանվեց նրա հնդկական Հախտի անվանումը:

ՀԱԼԵԲ, ԱԼԵՊՊՈ.— Քաղաք Սիրիայում: Հնում Հալիբ: Արամեական լեզվով հալիբ նշանակում է «կաթ»: Թերևս

նկատի է ունեցվել երկրի անասնապահական բարձր կաթնատվությունը:

ՀԱԼԻՖԱՔԱՆ. — Քաղաք Կանադայում: Այդպես է կոչվում անգլիական մինիստրի անունով, որը տասնութերրդ դարում ներկա քաղաքի տեղում մի գաղութ հիմնադրեց:

ՀԱՄԱԴԱՆ. — Քաղաք Իրանում: Սանսկրիտերեն հագմա՝ «ժողով» և տան՝ «տեղ», «բնակավայր» բառերից: Այսինքն «ժողովի տեղ»:

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԿՂՋԻ. — Ատլանտյան օվկիանոսում: Հայտնաբերվել է պորտուգալացիների կողմից 1501 թվականին: Կոչվել է ի պատիվ Համբարձման օրվա, որը եկեղեցական տոն է:

ՀԱՄԲՈՒԻՉ. — Քաղաք ԳՅՀ-ում: Անգլո-սաքսերեն համ՝ «ծոց» և գերմաներեն բուրգ՝ «բերդ» կամ «քաղաք» բառերի միացումից: Հիմնադրվել է 811 թվականին:

ՀԱՄՄԵՐՁԵՍ. — Քաղաք Հյուսիսային Նորվեգիայում: Նորվեգերեն համեր՝ «քարափ» և ֆեստե՝ «ամրացնել» բառերի զուգակցումից: Այսինքն «քարափի ամրություն»: Քաղաքը գտնվում է 70 և կես աստիճան հյուսիսային լայնությունում: Համարվում է աշխարհի ամենահյուսիսային քաղաքը:

ՀԱՅԱՍՏԱՆ. — Հայ ժողովրդի հայրենիքի անունը, ուր ընթացել է նրա պատմական կյանքը: Նրա սահմանները համընկնում են Հայկական բարձրավանդակի սահմանների հետ: Այժմյան Սովետական Հայաստանը գրավում է այդ բարձրավանդակի հյուսիս-արևելյան մասը: Հայաստան անվանման առաջացման մասին գոյություն ունեն ավանդական և էթնիկական, այսինքն ժողովրդի անվան հետ կապված ստուգաբանություններ:

Առաջին մեկնակերպումը՝ հայ ժողովրդի ծագման ավանդությունը տալիս է պատմահայր Մովսես Խորենացին: Նա աշխարհագրական շատ անուններ համադրեց կամ զուգակցեց մեր նահապետների անվան հետ: Ավանդական պատմությունից ժառանգած այս փաստը ինքնին շատ կարևոր երևույթ է, որովհետև տոհմի կամ

ցեղի նախահայրը խորհրդանշում է ոչ միայն խմբային
ընդհանրությունը, այլև սիմվոլ է ազգային պատմու-
թյան: Մեր նախահայրն էլ համարվում է Հայկ նահա-
պետը, որի անունից էլ ծագած է համարվում մեր ժո-
ղովրդի և երկրի անվանումը: Դա կապված է այն նշա-
նավոր ավանդավեպի հետ, ըստ որի ասորեստանցի
հսկա Բելի բռնությունից հեռանում են բազմաթիվ ցե-
ղեր, դրանց հետ էլ Միջագետքից հեռացավ նաև մեր
ժողովուրդը, իր նահապետ Հայկի գլխավորությամբ: Նա
գալիս է մի բարձրավանդակ երկիր և այդտեղ հաս-
տատվում: Բելը պատգամ է ուղարկում Հայկի մոտ,
հայտնում, որ նա իգուր է գնացել այդ ցուրտ լեռնաշ-
խարհում բնակություն հաստատել և խորհուրդ է տա-
լիս, որ Հայկը ետ գա Ասորեստան: Հայկը խիստ պա-
տասխանելով պատգամավորին՝ ետ է դարձնում Բա-
բելոն: Բելը զայրացած Հայկի պատասխանից մեծ
զորքով կռվի է գալիս նրա վրա: Բզնունյաց (Վանա)
ծովի ափին, հետագայում Հայոց ձոր կոչված վայրում,
հակառակորդները հանդիպում են, և Հայկը մենամար-
տի է դուրս գալիս Բելի հետ: Նետի մի հարվածով նա
ցած է գլորում հսկային և ցրիվ տալիս Բելի բանակը:
Եվ Հայկն ընդմիշտ բնակվում է այդ բարձրավանդա-
կում: Հայկի անունով կոչվում է ժողովուրդը, իսկ ժողո-
վուրդի անունով՝ երկիրը: Այս ավանդությունը մեղ է
հասել Մովսես Խորենացու միջոցով: Դա հայ ժողովուրդի
և նրա հայրենիքի անվան ավանդական ստուգաբանու-
թյունն է: Ավանդական հենքով հյուսված նման ստուգա-
բանություններ հատուկ են աշխարհի շատ ժողովուրդ-
ներին, որոնք այս կամ այն նահապետի կամ դյուցազնի
անվան հետ են կապում իրենց երկրի անունը: Հայերինն
էլ գալիս է Հայկ նահապետից: Դա իրականում հայերի
անձնավորված անունն է:

«Հայաստան» անվանման հաջորդ մեկնակերպումը
է թնիկականն է և գալիս է հայաստ ժողովուրդի անունից:
Հիմքում ընկած է եղել «հայ» անունը: Հայաստան էլ այդ

անվան ածանցումն է: Այս ստուգաբանության պատիվը պատկանում է Հայագետ Կրեշմերին և ակադեմիկոս Գր. Ղափանցյանին: Գր. Ղափանցյանը գրել է «Հայասան Հայերի օրրան» աշխատությունը: Հայասան գրավել է Բարձր Հայքը (այժմ էրզումի վիլայեթ), Վանա լճից արևմուտք մինչև Եկեղյաց գավառ (Երզնկա) և Փոքր Հայքի մի մասը, ինչպես նաև մինչև Արածանիի (Մուրագի) վերին հոսանքները:

Հայկական բարձրավանդակի ցեղերի մեջ, մ. թ. ա. ութերորդ դարում կարեոր դեր են խաղում Հայասաները և արմենա-Հայասական միությունը, որոնք վաղուց կազմել էին Հայկական ցեղային մեծ միություն:

Մեր թվականությունից առաջ, հիմնականում յոթերորդ դարի երկրորդ կեսին, տեղի է ունենում Հայ ժողովրդի կազմավորման ավարտը, որը նշանավորվում է Հայ պետականության առաջացմամբ: Այն զարգանում է նախկին Ուրարտուի տերիտորիայի վրա, որը պատմական թատերաբեմից հեռանում է յոթերորդ դարի վերջում: Ուրարտական ցեղերը ձուլվում են կազմավորվողով Հայ ժողովրդի մեջ: Հայ ժողովուրդն է դառնում Ուրարտուի օրինական ժառանգորդը: Ուրարտացիներից մեզ Հասան նաև բազմաթիվ աշխարհագրական անուններ, որոնք ենթարկվեցին որոշ ձևափոխման: Դրանց թվին են պատկանում Արարատ (Ուրարտու), Վան (Բիայնա), Տուշպա (Տոսպ), Երևան (Էրեբունի), Սևան (Սուլինիա) և այլ անվանումներ: Մնացին նաև շատ նահապետների և դյուցազների անուններ-այսպես, Արամ (Արամե), Մանավազ (Մենուաշ): Նրանք մեղ կապում են Ուրարտուի հետ: Մեղ են Հասել շատ ավանդավեպեր: Ինչպես Հայտնի է, կազմավորված ժողովուրդը «Հայաս» ցեղի անունով կոչվում է Հայ, իսկ երկիրը՝ Հայաստան: Հայաստան անունը առաջին անգամ օգտագործել է մեր Հինգերորդ դարի պատմիչներից Ագաթանգեղոսը: Զնայած երկար ժամանակ Հայ անվան վերջածանցը եղել է ոչ «ստան», նրան փոխարի-

նել է «ք» տառը, որը ավելացվում էր ժողովրդի անվանք և դառնում էր երկրի անուն: Անցյալում մեր հայրենիքը կոչվել է «Հայք» և ժամանակի ընթացքում «ք» մասնիկը փոխարինվեց «ստան» մասնիկով, որը պահավերեն լեզվից է և նշանակում է երկիր: Այսինքն հայերի երկիր: Ի դեպ, հայ լեզվի մեջ «ստան» մասնիկով կազմված է Այդեստան, Բուրաստան, Ծվատան և այլ անուններ:

Այսպիսով, Հայաստան նշանակում է «հայերի երկիր»:

«Հայք» ձևը, ինչպես ասվեց, ավելի հին է, որի մասին տես այդ անվան բացատրությունը:

Մեր երկրի պատմական և ներկա պետական սահմանները իրար չեն համապատասխանում: Հայ ժողովուրդը երկար դարեր կորցնելով իր պետականությունը չի դադարել իր հայրենիքը համարել Հայաստանը: Հայերը ոչ միայն հայրենիքի գաղափարն են վառ պահել, այլև իրենց ազգային բնակավայրի Հայաստան անունը:

Օտարները մեզ կոչում են արմեն, իսկ երկիրը՝ Արմենիա, արմենների անունով, բացառությամբ վրացիների, որոնք մեր երկիրը կոչում են «Սոմիսեթի»: ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ.—

Առաջավոր Ասիայի թվով երրորդ բարձրավանդակը, որ գտնվում է Իրանական և Անատոլիական բարձրավանդակների միջև: Այստեղ է ընթացել հայ ժողովրդի պատմական կյանքը, որից և նրա անվանումը: Բռնած տարածությունը մոտ 350.000 քառ կմ է:

Նա հայ ժողովրդի բնօրրան է, նրա հետ է կապված հայ ժողովրդի ողջ պատմական անցյալը: Գտնվելով Առաջավոր Ասիայի լեռների հանգույցում, նա միավորում է նրանց և, միաժամանակ, կապում է Առաջավոր Ասիան և ընդհանրապես Արևելքը Արևմուտքի հետ: Աշխարհագրական տեսակետից Հայկական բարձրավանդակի բնական սահմանը արևմուտքից Փոքր Ասիա թերակղզու հետ կազմում է Արևմտյան Եփրատը, անցնե-

լով Ակն (էգին) և Խարբերդ քաղաքներից արևմուտքը Հարավից սահմանն անցնում է Գլխավոր կամ Հայկական Տավրոսով, շարունակվելով մինչև Զագրոշի սիստեմը: Այս սահմաններում ընկած Հայկական բարձրավանդակը գեումորֆոլոգիական և՝ աշխարհագրական տեսակետից նաև իր ուրուցն բնությամբ և պատմական անցյալով մի ամբողջություն է ներկայացնում: «Հայկական բարձրավանդակ» հասկացությունը վաղուց ի վեր գործածական է դիտական աշխարհի կողմից: Բոլոր անվանի աշխարհագրագետներն ու ճանապարհորդները իրենց կլասիկ աշխատություններում պահպանել են այդ տերմինը: Նույնը պիտի ասել նաև հանրագիտական բառարանների և աշխարհագրական ձեռնարկների մասին: Վերջում ասենք, որ բարձրավանդակ տերմինի տակ նկատի է ունեցվում ընդարձակ լեռնային մի մարզ, որն ընդգրկում է առանձին լեռնաշղթաներ, միջեռնային գոգավորություններ և սարահարթային մասեր: Հայկական բարձրավանդակին հաճախ տըրվում է Հայկական լեռնաշխարհ անվանումը: Սակայն ավելի ճիշտ է առաջինը:

ՀԱՅՆԱՆ կամ ԽԱՅՆԱՆ.— Կղզի Հարավային Զինական ծովում: Զինարեն խայ՝ «ծով» և նաև՝ «հարավ» բառերի միացումից: Այսինքն «ծովից հարավ»:

ՀԱՅՈՑ ԾՈՅՑ.— Ներկա Ալեքսանդրետայի ծոցի (Միջերկրական ծովի հյուսիս-արևելքում) միջնադարյան անունն է: Այդպես էր կոչվում ծոցը Կիլիկիայի Ռուբինյան թագավորության ժամանակի:

ՀԱՅՈՑ ԶՈՐ.— Պատմական գավառ Վանա լճի հարավում, որտեղով հոսում է Խոշաք (Հորդում) գետը: Պատմությունից հայտնի է, որ Ռուբատուի մայրաքաղաք Տուշպայտում կամ Վանից ոչ հեռու Խոշաք գետի հովտում բնակվում էին հայ-արմենները: Այստեղից էլ այս ձորը կոչվել է Հայոց ձոր: Պատահական չէ, որ հայ ժողովուրդը իր առաջացման ավանդական պատմությունը

կապում է նաև Հայոց ծորի հետ: Գավառում կան բազմաթիվ վանքեր և պատմական այլ հուշարձաններ:

ՀԱՅՔ.— Հին հայկական հեղինակների մոտ Հայաստան անվան փոխարեն գործածական է եղել Հայք անվանումը: Այս դեպքում «ք» տառը ավելացվում էր ժողովրդի անվանը, և դառնում էր երկրի անունը:

Այսպիսով, Հայք բառը իր մեջ ամփոփում է հայեր և Հայաստան հասկացությունները: Վերջում ավելացվող «ք» մասնիկը ոչ միայն հոգնակի ձևն է նշանակում, այլև ժողովրդի երկրի իմաստն է հաղորդում (ինչպես՝ պարսք-պարսիկներ և Պարսկաստան): Ինչպես հայտնի է, պատմական Հայաստանը քաղաքականապես բաժանվում է երկու մասի՝ Մեծ Հայք, այսինքն Մեծ Հայաստան և Փոքր Հայք, այսինքն Փոքր Հայաստան: Առաջինը համընկնում է Հայկական^{*} բարձրավանդակի հետ, որտեղ ընթացել է ու զարգացել հայ ժողովրդի ամբողջ քաղաքական ու մշակութային կյանքը: Մեծ Հայքը Արշակունիների ժամանակ բաժանվում էր 15 նահանգով կամ «աշխարհ»-ի, որոնցից ամեն մեկը իր հերթին բաժանվում էր գավառների: Մեծ Հայքի նկատմամբ կենտրոնական դիրք ուներ Այրարատը: Փոքր Հայքը տարածվում էր Եփրատից դեպի արևմուտք մինչև Անտիտավրոս լեռնաշղթան: Բյուզանդական տիրապետության ժամանակաշրջանում Փոքր Հայքը բաժանվում էր երեք վարչական մարզերի՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք և Երրորդ Հայք:

ՀԱՅՔ.— Ամրոց Հայոց ձորում՝ վանա լճի ավազանում, Խոշաբ գետի միջին և ստորին հոսանքում, Խեք գյուղի մոտ: Ավանդությունը այս տեղի հետ է կապում Հայկի մենամարտը Բելի հետ, որտեղ Հայկը Բել-սար կամ Բելի սար լեռան վրա հաղթում է Բելին և ցրիվ տալիս նրա բանակը:

ՀԱՐԱԿ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ.— Այս աշխարհագրական հասկացությունը ընդգրկում է Հնդկաշխին թերակղզին և Մալայան արշիպելագը:

ՀԱՐԱՎՀ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՍԻԱ.— Բնական մարզ, որն ընդգրկում է Արևմտյան Ասիայի հարավային մասը (Արաբական թերակղզին և նրան կից տերիտորիաները): Ողողվում է Միջերկրական, Կարմիր և Արաբական ծովերով, ինչպես նաև Պարսիկ ծոցի ջրերով:

ՀԱՆՈՎԵՐ.— Քաղաք ԳՖՀ-ում: Գերմաներեն նշանակում է «Բարձր ափ»: Քաղաքը գտնվում է Լեյնե գետի վրա:

ՀԱՅՖՈՆ.— Նավահանգիստ Հյուսիսային Վիետնամում: Անվանումը վիետնամերեն նշանակում է «Ճովային պաշտպանություն»: Իր ժամանակին այդ անունը սազական է եղել նրան, քանի որ գտնվել է ծովափին: Բայց կարմիր գետի տիղմը նրան այսօր շատ է հեռացրել ծովից:

ՀԱՆՈՅ.— Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության մայրաքաղաքը: Գտնվում է Կարմիր գետի վրա: Անվանումը նշանակում է «գետով շրջապատված»:

ՀԱՍԱՐԱԿԱԾԱՅԻՆ ԳՎԻՆԵԱ.— Պետություն Արևմտյան Աֆրիկայի Գվինեական ծոցի ափին: Հասարակածային Գվինեա պետության անվան ստուգաբանությունը աշխահսին է: Նա Գվինեա է կոչվում, որովհետև գտնվում է համանուն ծոցի ափին: Հասարակածային է, որովհետև գտնվում է հասարակածին մոտ: Անկախություն ստացավ 1968 թվականի նոյեմբերի 12-ին, մինչ այդ իսպանական տիրապետություն էր: Հասարակածային Գվինեան բաղկացած է երկու մասից՝ ցամաքային և կղզային: Մայրաքաղաք Սանտա-Իզարելան գտնվում է Ֆերնանդո-Պո-Կղզու վրա:

ՀԱՎԱՅԱՆ ԿՂՋԻՆԵՐ.— Անցյալում Սանդվիչյան: Խաղաղ օվկիանոսում, Հյուսիսային Պոլինեզիայում: Անունը կը զգիների բնիկների՝ հավայերեն լեզվից է և նշանակում է «աստվածների տեղ»: Արշակելագը բաղկացած է թվով 24 խոշոր և փոքր կղզիներից: 16.700 քառակուսի կիլոմետր ընդհանուր մակերեսով: Սովագնաց Զեմսկուկը իր երկրորդ ճանապարհորդության ընթացքում այցելեց Հավայան կղզիներ, որը, սակայն, կորստարեր եղավ նրա համար: Բնիկների հետ ընդհարման ժա-

մանակ նա սպանվեց: Հավայան կղզիները համարվում
են ԱՄՆ-ի շտատներից՝ (նահանդներից) մեկը:

ՀԱՎԱՆԱ. —Կուրայի մայրաքաղաքը: Կոչվել է այստեղ բնակ-
վող հնդկական ցեղերից մեկի անունով: Հիմնադրվել է
1515 թվականին:

ՀԱՎԻ. —Ֆրանսիական նավահանգիստ Լա-Մանշի վրա: Միջին
ֆրանսերեն լեզվում նշանակում է նավահանգիստ:

ՀԱՐԱՎՈԼԱՎԻՍ. —Պետություն հարավային Եվրոպայում: Հա-
րավալավիան որպես պետություն աշխարհի քաղաքա-
կան քարտեզի վրա երևաց 1919 թվականի դեկտեմբե-
րին: Սկզբում նա կոչվում էր սերբերի, սլավոնների և
խորվաթների պետություն՝ երկրում բնակվող հիմնա-
կան երեք ժողովրդի անունով: 1919 թվականից վերան-
վանվեց Հարավալավիա, կամ, ինչպես իրենք են անվա-
նում, Յուգոսլավիա, որը նշանակում է հարավային սլա-
վոնների երկիր: Սլավոնական լեզվական խմբին են
պատկանում Հարավալավիայի հետևյալ ժողովուրդները՝
սերբերը, խորվաթները, չեռնոգորցիները և բոսնացի-
ները: Այսպիսով, Հարավալավիան ազգային պետու-
թյուն չի հանդիսանում և չի կրում մեկ ժողովրդի
անուն:

ՀԱՐՑ. —Լեռնային դանդված Գերմանիայում: Հին հռոմեա-
ցիների լեզվով՝ «առթ՝ «անտառ» բառից: Լեռները այդ-
պես են կոչվել անտառապատ լինելու պատճառով:

ՀԵԲԻԴՅԱՆ. —Կղջիներ. — Կղզիների խումբ Շոտլանդիայի
հյուսիս-արևմուտքում: Կելտերեն էյ՝ «կղզիներ» բառից
և Բրիդա սրբուհու անունից, որտեղ բնակվել է նա:

ՀԵՂՈԼԱՆԴ. —Փոքր կղզի Հյուսիսային ծովում: Գերմաներեն
հայլիդ՝ «սուրբ» և լանդ՝ «երկիր» բառերի միացումից:
Այդպես է կոչվում այստեղ կառուցված և աստվածնե-
րին նվիրված տաճարների պատճառով: Կղզին իշխում
է էլբայի գետաբերանի վրա և շատ կարևոր է իր ստրա-
տեգիական դիրքով:

ՀԵՂՈՊՈԼԻՄ. —Քաղաք Եգիպտոսում: Փաստորեն կահիրեի
հյուսիս-արևելյան շարունակությունը: Հունարեն հետ-

լիուս՝ «արև» և պոլիս՝ «քաղաք» բառերի միացումից: Այսինքն «Արևի քաղաք»: Հին Հելիոպոլսում եղած տաճարը նվիրված էր արևի աստված Ռախին: Հելիոպոլիս է կոչվել հնում նաև Բաալբեկը (Լիբանանում):

Հելեսթոնսոս — կամ Հելեսթոնս.— Դարդանել նեղուցի պատմական անվանումը: Անվան ստուգաբանության հիմքում ընկած է հունական ավանդությունը, ըստ որի Բեռլիայի (Հունաստանի մի մասի) Աթամաս թագավորի որդիներ Հելեսը և Ֆրիքոսը խորթ մոր հալածանքից ազատվելու համար նստում են ոսկի գեղմով (մորթով) խոյի վրա և փախչում: Անցնելով էցիցան ծովը և մանելով ներկա Դարդանելի նեղուցը, Հելեսը խոյից վայր է ընկնում և խեղդվում: Այստեղից էլ նեղուցը ստանում է Հելեսպոնտոս կամ Հելեսպոնտ անունը: Ֆրիքոսը ոսկեգեղմ խոյի վրա նստած լողում է և հասնում Կոլխիդա: Ավանդությունը հետագայում Կոլխիդա է բերում արգոնավորդներին, որոնք փնտրում էին ոսկեգեղմը: Այս ավանդությունը դառնում է Եվրիպիդեսի «Մեղեա» նշանավոր դրամայի սյուժեն:

Հելսինֆոնիու.— Հելսինկի քաղաքի շվեդական անվանումն է, որը ծագել է հելսինգ ցեղի անունից և ավելացվել շվեդերեն ֆորս՝ «ջրվեժ» բառը:

Հելսինկի.— Ֆինլանդիայի մայրաքաղաքը: Հելսինկի կոչվող ժողովրդի անունից: Քաղաքը սկզբում հիմնադրվել է ջրվեժի մոտ: Մինչև 1919 թվականը կոչվում էր Հելսինգֆորս:

Հեկլս.— Գործող հրաբուխ հոլանդիայում: Անունը դանիերեն լեզվից է և նշանակում է «թիկնոց» (պլաշ): Լեռան գագաթին հաճախ խառնարանից դուրս եկած հրաբխի գուլորշիները ծածկում են գագաթը, կարծես նմանվելով թիկնոցի:

Հեթելթերդ.— Քաղաք ԳՖՀ-ում: Միջին, վերին գերմաներեն հեյդե՝ «անմշակ» և բերգ՝ «լեռ» բառերից:

Հեջաս.— Պատմական մարդ Կարմիր ծովի արարական ափին: Արարերեն հեջաս նշանակում է «սահման»:

ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ.— «Հեռավոր Արևելք» հասկացությունը աշխարհագրական գրականության մեջ գործ է ածվում երկու իմաստով: Մի դեպքում «Հեռավոր Արևելք» ասելով նկատի են ունենում Սովետական Միության ծայր արևելյան հատվածը, որը իրենից ներկայացնում է ՍՍՀՄ-ի խոշոր տնտեսա-աշխարհագրական շրջաններից մեկը և իր մեջ ընդգրկում է Ամուրի, Մագադանի, Կամչատկայի, Սախալինի մարզերը, ինչպես նաև Խաբարովսկի և Պրիմորիեի երկրամասերը: Մյուս դեպքում՝ ավելի լայն առումով «Հեռավոր Արևելքի» մեջ մըտնում են Չինաստանը (արևելյան մասը) և Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասին հարող երկրները՝ Կորեան ու Ճապոնիան (Երբեմն Հեռավոր Արևելքի երկրների շարքին են դասվում նաև Ֆիլիպինները): Հեռավոր Արևելք անվանման հիմքում ընկած է «արևելք» հասկացությունը, որը դարձել է լրացյալ և ավելացվել «հեռավոր» բառը, որը ցույց է տալիս այդ երկրների դիրքը Եվրոպայի նկատմամբ:

ՀԵՐԿՈՒԼԱՆՈՒՄ.— Քաղաք Իտալիայում, որը կործանվեց Վեզպուֆի ժայթքումից 79 թվականին: Այստեղ կար մի տաճար, որը նվիրված էր Հերկուլեսին և որի անունով էլ կոչվում էր քաղաքը:

ՀԻՄԱԼՅԱՆ ԼԵՌՆԵՐ.— Ասիայում, Հնդկաստանի հյուսիսում երկրագնդի ամենաբարձր լեռնաշղթան: Սանսկրիտերեն՝ Հիմա՝ «Ճյուն» և ալայա՝ «բնակատեղի» բառերից: Այսինքն՝ «Ճյուների բնակատեղի». Հիմալայա բառը նշանակում է նաև «Ճյան բնակիչ»: Այս անվան առաջացումը կապված է հին Հնդկական դիցարանության հետ, ըստ որի Հիմալայան եղել է լեռների արքան և դիտվել որպես Ճյան բնակիչ: Հնդկները Գանգեսին համարում են Հիմալայի դուստրը: Հետևապես և համարում են օրբազան գետ: Հիմալայները մարդկանց միշտ էլ դրավել են իրենց վեհությամբ և չգերազանցված բարձրությամբ:

ՀԻՆԴՈՒԿՈՒՄ.— Աշխարհի բարձրադիր լեռնային սիստեմնե-

րից մեկը, որը հիմնականում տարածվում է Աֆղանստանի սահմաններում: Հինդուկուզի հյուսիս-արևելյան շարունակությունը հասնում է մինչև Պամիրի լեռնաշխարհ: Անվան հիմքում ընկած են հինդու՝ «Հնդկական» և կուզ՝ կամ կուխ՝ «լեռ» բառերը: Այսինքն «Հնդկական լեռ»: Այս անունը պարսիկները վերափոխեցին իրենց եղանակով և կոչեցին Հինդուկուզ: Այդ էլ մեկնաբանվում է, որպես թե երբ հյուսիսից եկող օտար նվաճողները ներխուժել են Հնդկաստան, նրանք հազարավոր հնդիկների գերել ու քշել են դեպի հյուսիս՝ դեպի Հինդուկուզի լեռներն ու լեռնանցքները և աշխատեցրել տեղի հանքերի ու ճանապարհների վրա: Հնդիկները լինելով տաք կլիմայի սովոր մարդիկ, չէին դիմանում այնտեղի դաժան ցրտերին և մասսայաբար ոչնչանում էին: Այստեղից էլ իրը առաջացել է այդ լեռների «Հինդուկուզ» անվանումը, որը պարսկական եղանակով մեկնաբանելով նշանակում է «Հնդիկին կործանող» կամ «Հնդիկին սպանող»:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՐԿԻԲ.— Արշիպելագ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում, լապտեների և Կարայի ծովերի սահմանում:

Հյուսիսային երկրի գյուտը Արկտիկական հայտնագործումների պատմության մեջ կարևոր իրադարձություն էր այն տեսակետից, որ դրանով ընդարձակվեց մարդկանց պատկերացումը Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ավազանի մասին: Հյուսիսային երկիր կը դպիների իսկական հայտնաբերումը տեղի ունեցավ 1913 թվականի սեպտեմբերի 3-ին Բ. Վիլկիսկու արշավախմբի կողմից: Սակայն սկզբում մի բան պարզ չէր, թե նոր հայտնաբերած երկիրը կղզի՞ է, թե արշիպելագ: Այդ պարզվեց տասնյոթ տարի հետո միայն: Նոր հայտնաբերած երկիրը կոչվեց Նիկոլայ II թագավորի անունով: Ռուսաստանում սովետական կարգերի հաստատումից հետո՝ 1918 թվականին բենուային այս արշիպելագը Հյուսիսային երկիր անվանվեց, նկատի ունե-

նալով նրա դիրքը Եվրասիա ցամաքի նկատմամբ, 1930 թվականին այս երկիրը եկավ Գ. Ա. Ռւշակովի գլխավորությամբ մի արշավախումբ, այն պարզեց, որ Հյուսիսային երկիրը բաղկացած է չորս մեծ և մի շարք մասն կղզիներից, ունի ավելի մեծ տարածություն, քան Բելգիա պետությունը, կամ Հայկական ՍՍՀ-ն:

Հյուսիսային երկիր արշիպելագի ուսումնասիրությունից հետո, նրա քարտեզի վրա մեկը մյուսի հետևից երևացին Պիոներ, Կոմսոմոլեց, Բոլցանիկ, Հոկտեմբերյան հեղափոխության անունները կրող կղզիներ: Նրանց միջև ընկած նեղուցներն էլ կոչվեցին Կարմիր քանակի և Ծոկալսկու անուններով:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎ.— Ծով Հյուսիսային Եվրոպայում: Այդպես է կոչվել Եվրոպայի նկատմամբ ունեցած իր դիրքի պատճառով: Մյուս կողմից հոլանդացիները այդպես են անվանել ի հակադրություն Ջուլերգելի, որը գտնվում է նրանից հարավ: Կոչվում է նաև Գերմանական ծով:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՈՒՅՑԱԼ ՕՎԿԻԱՆՈՍ.— Երկար ժամանակ այս օվկիանոսի անվանման համար անմիաբանություն գոյություն ուներ: Նրան կոչում էին Հյուսիսային սառուցյալ ծով, Հյուսիսային Բևեռային ծով, Արկտիկական ծով: Վերջապես, 1935 թ. հունիսի 27-ին սովետական կառավարության որոշումով հաստատվեց Հյուսիսային սառուցյալ օվկիանոս անվանումը:

ՀՆԴԿԱԿԱՆ ՕՎԿԻԱՆՈՍ.— Գտնվում է Աֆրիկայի, Ասիայի և Ավստրալիայի միջև: Հնդկական օվկիանոսն իր ներկա անունը ստացել է աշխարհագրական մեծ հայտնագործումների ժամանակ, երբ հայտնի դարձավ, որ նա ողղողում է Հնդկաստանի ափերը: Այլ խոսքով Հնդկաստան անունը տարածվեց նրա ափերը ողղող օվկիանոսի վրա:

ՀՆԴԿԱԶԻՆ.— Թերակղզի Հարավ-Արևելյան Ասիայում: Այս անունը շատ կարծ և դիպուկ կերպով բնորոշում է թերակղզու անվանման առաջացումը: Ընկած լինելով Հնդկաստանի և Չինաստանի միջև, նա մի տեսակ կա-

մուրզ է հանդիսացել հին աշխարհի այս երկու կովտուրական կենտրոնների միջև: Երկար դարեր Հնդկաչինը զարգացել է Հնդկաստանի և Չինաստանի ազդեցության ներքո թե՛ ապրելակերպի, թե՛ կենցաղի և թե՛ կրոնի առումով: Հնդկականը ազդել է երկրի արևմուտքի և հարավի, իսկ չինականը՝ հյուսիսի և արևելքի վրա:

ՀՆԴԿԱՍՏԱՆ.— Պետություն Հարավային Ասիայում: Հնդկաստան անվանման առաջացումը կապված է ինդոս գետի հետ, որի հավաքի վրայով Հնդիկները ցամաքային կապ են պահպանել Առաջավոր Ասիայի երկրների, հատկապես իրենց անմիջական հարևանի՝ Իրանի (Պակիստանի) հետ: Հենց պարսիկներն էլ ամենից շուտ ծանոթանալով՝ իրենց հարևան երկրին ինդոս գետի անունով կոչեցին Հինդուստան, այսինքն «Հինդոս գետի երկիր»: Պարսիկներից այդ անունը անցավ այլ ժողովուրդների, այդ թվում նաև Հայերին՝ արդեն որոշ վերափոխումներով դառնալով Հնդկաստան:

Սկզբնական շրջանում Հնդկաստան կամ Հինդուստան ասելով հասկանում էին միայն այն երկիրը, որը տարածվում էր ինդոս գետի ստորին հոսանքում: Սակայն աստիճանաբար այդ անունը անցավ նաև ինդոսից արևելք գտնվող Գանգեսի ավազանի վրա և ապա թերակղզու այն մասի վրա, որին այդ ժամանակներում Հնդիկները Դեկան էին անվանում, որը «Հարավ» կամ «աջ կողմ ընկած երկիր» է նշանակում (երբ դեմքդ ուղղում ես գեպի արևելք): Ժամանակի ընթացքում Հընդկաստան անունը տարածվեց ամբողջ երկրի վրա:

1947 թվականին Հնդկաստանի տերիտորիան բաժանվեց երկու պետությունների միջև և ինդոս գետն էլ, որը տվել է իր անունը երկրին, մնաց ամբողջապես Պակիստանի սահմաններում: Այդ կապակցությամբ Հընդկաստանը վերականգնեց իր հնագույն ավանդական Բհարատա անունը, որը և հաստատված է երկրի սահմանադրության մեջ: Բհարատա ավանդական անունը գալիս է Հնդկական «Մահարհարատա» էպոսից: Բհա-

րատան համարվում է ճին Հնդկական դիցաբանության
մեջ հիշատակված արքայազուններից մեկը։ Զնայած
երկրի ավանդական անունն է վերականգնված, բայց թե
խոսակցական լեզվում և թե գրականության մեջ գոր-
ծածական է մնացել Հնդկաստան անունը։

Միջին դարերում, մասնավորապես Աշխարհագրա-
կան Մեծ հայտնագործումների դարաշրջանում, Հնդ-
կաստան էին կոչվում ընդհանրապես Արարիայից արե-
վելք ընկած, այսպես կոչված, մուսսոնային Ասիայի
շատ երկրներ։ Այսօր էլ այդ մասի աշխարհագրական
շատ անվանումներ կազմված են «Հնդկաստան» կամ
«Հնդկական» բառերից, ինչպես օրինակ, Հնդկաստա-
նից արևելք ընկած թերակղզին կոչվում է Հնդկալին,
իսկ նրանից հարավ-արևելք ցրված կղզիների խումբը՝
հնդոնեղիա («Կղզային Հնդկաստան»)։

ՀՈՂԱՆԴԻԱ. — Նիդերլանդների մյուս գործածական անունը:
Առաջին բացատրությամբ այն առաջացել է Հոլանդե-
րին հոլ՝ «Հարթ» և լանդ՝ «Երկիր» բառերից։ Մյուսը,
գերմաներին հոլց՝ «փայտ», այսինքն անտառի իմաս-
տով և լանդ՝ «Երկիր» բառերից։ Այդ անտառները ներ-
կայումս գոյություն չունեն։

ՀՈՂԱՅԴԻԱ. — Կղզի ճապոնիայում։ Ճապոնական արշիպելա-
գում նա իր մեծությամբ երկրորդ կղզին է։ Հոկայդո
ճապոներին նշանակում է «Ճանապարհ դեպի Հյուսի-
սային ծով», այսինքն դեպի Օխոտի ծով, քանի որ բուն
ճապոնիայից՝ Հոնսյուից դեպի Հյուսիսային ծով գնա-
լիս պետք է անցնել Հոկայդո կղզով։

ՀՈՂՏԵՄԲԵՐ. — Երկաթուղային կայարան Հայկական ՍՍՀ-ում։
Նախկինում Սարդարաբագ։ Շատ հաճախ շփոթում են-
կ Հավասարության նշան դնում Հոկտեմբեր (կայարա-
նի) և Հոկտեմբերյան (քաղաքի) անվանումների միջև։
Դա ճիշտ չէ, որովհետև Հոկտեմբեր կայարանը և Հա-
մանուն դյուղը նախկին Սարդարաբագն են։ Զնայած
ներկայումս Հոկտեմբեր կայարանը փաստորեն միացել
է Հոկտեմբերյան քաղաքին, բայց Հոկտեմբեր կայարա-

նը (նախկին Սարդարաբաղը) ավելի հին է (նույնը և գյուղը), իսկ Հոկտեմբերյան քաղաքը ստեղծվել է նորերս:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ.— Շրջանային կենտրոն Հայկական ՍՍՀ-ում: Այդպես է կոչվել ի պատիվ 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխության: Հոկտեմբերյանը հիմնվել է միանգամայն ամայի տեղում, նախկին Սարդարաբադ (Հոկտեմբեր) կայարանից ոչ հեռու:

ՀՈՆԴՈՒՐԱՍ.— Պետություն Կենտրոնական Ամերիկայում: Անվանումը իսպաներեն օնդուրա «Խորություններ» բառից: Երկի Աստվածայան օվկիանոսում բազմաթիվ խորությունների առկայության շնորհիվ:

Այս անվանումը տվեց Քրիստափոր Կոլումբոսը, որը իր շորրորդ ճանապարհորդության ժամանակ, 1502 թվականին մոտենալով ներկա Հոնդուրասի ափերին՝ խորության և ջրապատույտի պատճառով չկարողացավ խարիսխ գցել:

ՀՈՆԻԱ.— Պատմական երկիր անտիկ աշխարհում, որը տըրպում է Փոքր Ասիայի հարավ-արևմտյան ափերին և կից կղզիներին: Դրանք բնակեցված էին հոնիացի անուն կրող, բայց հունական ցեղախմբին պատկանող ժողովրդով: Տե՛ս նաև Հունաստան անվանման ստուգաբանությունը:

ՀՈՆԻԱԿԱՆ ԾՈՎ.— Միջերկրական ծովի մի մասը, իտալիացից հարավ, հունական հոնիացի կոչվող ցեղախմբի անունով:

ՀՈՆԿՈՆԳ.— Անգլիական գաղութ Չինաստանում: Չինարեն՝ «Հաճելի» կամ «սիրելի նավահանգիստ»: Ներկայումս հայտնի է Սյանգան անունով:

ՀՈՆՈԼՈՒԼՈՒ.— Քաղաք Հավայան կղզիներում: Կղզիները ներկայումս կազմում են ԱՄՆ-ի նահանգներից մեկը: Հոնոլուր անվանումը արաջացել է հավայերեն հոն՝ «նավահանգիստ» և լուլու՝ «խաղաղ» բառերից:

ՀՈՆՍՅՈՒԻ կամ ՀՈՆԴՈ.—Ճապոներեն հոն՝ «գլխավոր», սյու՝ «երկիր» բառերից՝ գլխավոր կղզի: Ի տարբերություն

մյուս երեք կղզիների Հռնսյուն ճապոնիայի հիմնական
մասն է, նրա կորիզը:

ՀՈՐԴԱՆԱՆ.— Արաբական պետություն Մերձավոր Արևելքում
Կոչվում է Հորդանան գետի անունով: Իսկ գետի անունն
էլ նշանակում է հոսք: Այսինքն դեպի ծով հոսող, քանի
որ գետը թափվում է Մեռյալ ծովը:

ՀՈՐԾ ՀԻՎԱՆԴԱՆ.— Հարավային Ամերիկայի ծայր հարավա-
յին կետը: Հայտնաբերվել է 1616 թվականին, կեմերի
և Սխոռուտենի գլխավորած արշավախմբի կողմից: Հըր-
վանդանը այսպես կոչվեց ի պատիվ Սխոռուտենի հայ-
րենի Հորն քաղաքի:

ՀՈՒԵՆՈՍ.— Գետ Եվրոպայում, սկիզբ է առնում Շվեյցարա-
կան Ալպերից: Անվան ծագումը կելտերեն «ջուր» բա-
ռից է: Այսպիսով, հասարակ անունը դարձել է աշխար-
հագրական հատուկ անուն:

ՀՈՈԴՈՍ.— Կղզի էգեյան ծովում. Փոքր Ասիայի ափերից մոտ
30 կմ հեռավորության վրա: Հունարեն ոռղուս՝ «վարդ»
բառից: Կղզու պահապանը համարվում էր Հելիոս (Արև)
աստվածը, որին նվիրված կոթողը դասվել է «աշխարհի
յոթ հրաշալիքների» շարքին:

ՀՈՈՈՄ.— Խտալիայի մայրաքաղաքը: Հոռմի անվանման մա-
սին հայտնի է դասական այն միջը (պատմազրուցք),
ըստ որի «Հոռմ» անվանումը բինեցնում է Ռոմով
(Ռոմովս) անունից, որն իբր այդ քաղաքի հիմնա-
դիրն էր: Ավանդությունը այդ մասին ասում է հետևյա-
լը, որ երկու եղբայրներ՝ Ռոմովն ու Ռեմը Տիբր գետի
ափին, Պալատինյան բլուրի ստորոտում գտնվող մի
այրում, կերակրվում են գայլի կողմից: Երբ Ռոմովը
մհծանում է, հիմնադրում է քաղաքը, որի անունով էլ
կոչվում է Հոռմ: Խտալերեն Ռոմա: Ահա թե ինչու Հոռմի
խորհրդանիշը համարվում է մանուկներին կերակրող
գայլը: Հոռմի համար ժամանակի ընթացքում գործա-
ծական է դարձել և թեավոր խոսքի ուժ ստացել «Հա-
վերժական քաղաք» պատկերավոր անվանումը: Դրանով
ուղղում են շեշտել Հոռմի «մշտնչենականությունը»,
«հավերժությունը»:

ՀՐՈ ԵՐԿԻՐ.— Արշիպելագ Հարավային Ամերիկայի հարավում, որից բաժանվում է Մագելանի նեղուցով։ Հրո Երկրին այդ անունը տվել է անվանի ծովագնաց Ֆերդինանդ Մագելանը։ Երբ նրա էքսպեդիցիան 1520 թվականին անցնում էր այժմ նրա անունը կրող նեղուցով, նրանք նկատում են, որ հարավում գտնվող կղզում կրակ է վառվում։ Պարզվում է, որ դա բնիկների խարուցկների լույսն է։ Նրանք այդ խարուցկների շուրջը տաքանում էին կամ էլ տեղատվության ժամանակ հավաքում ձրկներ։ Այդ անվերջ երևացող կրակները հիմք տվեցին Մագելանին կղզուն անվանել «Տիերա դել ֆուեգո», որը իսպաներեն բառացի նշանակում է «Կրակի» կամ «Հրո Երկիր»։

ՀՈՒԴՈՒՆ.— Գետ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որը թափվում է Ատլանտյան օվկիանոս։ Հայտնաբերվել է 1610 թվականին անգլիացի արկտիկական ծովագնաց Հենրի Հուդզոնի կողմից։

ՀՈՒԴՈՒՆԻ ԾՈՅՑ.— Ծոյց Կանադայում։ Հայտնաբերվել է 1610^o թվականին անգլիացի արկտիկական ծովագնաց Հենրի Հուդզոնի կողմից, որի պատվին և կոչվել է։

ՀՈՒՄԲՈԼԴՏ.— Աշխարհի քարտեզի վրա այս անունով բազմաթիվ տեղանուններ կան։ Նրանք կրում են Ալիքսանդր Հումբոլդտի անունը (1769—1859 թթ.): Հումբոլդտը համարվում է տասնիններորդ դարի մեծ լուսավորիչներից մեկը։ Նա ոչ միայն եղել է անվանի աշխարհագրագետ և ճանապարհորդ, այլև մեծ բնակչույզ։ Նրա անվամբ կա քաղաք, լիճ, ծոց և գետ ԱՄՆ-ում։ Լեռներ՝ Կենտրոնական Ասիայում, Ավստրալիայում, Նոր Զելանդիայում և Նոր Գվինեայում։

ՀՈՒՆԱՍՏԱՆ.— Պետություն Հարավային Եվրոպայում։ Այս երկրի հայերեն անվան առաջացման հիմքում ընկած է Հոնիա երկրի անունը, որը եղել է հունական ցեղախրմբերից մեկի հայրենիքը։ Հույն ժողովրդի ձևավորման գործում մեծ դեր խաղացին հետևյալ գլխավոր ցեղախմբերը՝ աքայացիները, դորիացիները և հոնիացիները։

Վերջիններս բնակվում էին Փոքր Ասիա թերակղզու հարավ-արևմտյան մասում և կից կղզիներում, որը հայտնի էր Հոնիա անվան տակ: Այդ ափերին, ինչպես նրանց հարող կղզիներում, բարձր ժաղկման հասան և հոնական մշակութի լուսապսակ դարձան հոնիական տասներկու քաղաքներ, որոնցից առավել նշանավորներն էին՝ Միկետը, Հալիկառնասը, Հեփեսոսը:

Ինչպես հայտնի է, հայերը տերիտորիալ տեսակետից ավելի մոտ էին Հոնիային, և հելլենական աշխարհի հետ էլ կապվում էին նրա միջոցով, ժամանակի ընթացքում «Հոնիա» անվան տակ նկատի ունեին հելլենական (հոնական) աշխարհը ընդհանրապես: Երբ այս երեք ժողովուրդներից, այսինքն աքայացիներից, դորիացիներից և հոնիացիներից ձևավորվեց հույն ժողովուրդը, հայերը շարունակեցին Հոնիա անունը տարածել ողջ հելլենական աշխարհի վրա՝ Հոնիա բառին ավելացնելով պահապերին «ստան» մասնիկը» և ի վերջո դարձրին «Հոնաստան»:

ՀՈՒՆԴԱՐԻԱ. — Պետություն Կենտրոնական Եվրոպայում, հունգար ուգրոֆիննական ժողովրդի անունից, որոնք երևան եկան Եվրոպայում 9—10-րդ դարերում: Հետագայում ձուլեցին աեղական ժողովուրդների հետ:

ՀՈՒՐՈՆ ԼԻԾ. — Հյուսիսային Ամերիկայի Մեծ լճերից 3-րդն է: Հուում լճի շրջակայքում բնակվում էր մի ցեղ, որոնք գլխի մազերը միշտ ցցված վիճակում էին պահում, որով և տարբերվում էին մյուսներից: Այստեղից էլ Հուրոն անունը, որը բառացի նշանակում է «փողի բաշ»:

Չ

ՉԻԹԵՆՅԱՅ ԼԵՌ. — Աշխարձու լեռ Երուսաղեմի մոտ: Այդպես է կոչվել լեռը նրա շուրջը ձիթենիների առատության պատճառով: Ըստ ավանդության այս լեռան վրա Քրիստոսը նախքան խաչվելը աղոթել է: Դրա համար էլ քրիս-

տոնեական աշխարհում համարվում է սրբազն լեռ:
Լեռան ստորոտում է գտնվում Գեթսեմանի պազտեղը,
որը նույնպես նվիրական վայր է քրիստոնեական աշխարհում:

Ղ

ԴԱԶԱԽՍՏԱՆ.— Սովետական Միութենական Հանրապետություն: Այդպես է կոչվում ղաղախ ժողովրդի անունով և ավելացրած ստան՝ «Երկիր» մասնիկը: Ինչ վերաբերում է ղաղախ էթնոնիմի առաջացմանը, ապա այն կապվում է «ազատ», «ազատ մարդ» բառերի հետ:

ԴՀԶԲՀ-ԻՐՄԱԿ.— Գետ Թուրքիայում: Թուրքերեն զըզըլ՝ «կարմիր» և իրմակ՝ «գետ» բառերի միացումից:

ԴՐԻՄ.— Թերակղզի Սև ծովում: Անվան առաջացումը մեկնաբանվում է երկու կերպ: Առաջինը՝ Կրիմ քաղաքի անունից, որը գտնվում էր Կաֆայից 22 կմ արևմուտք: Երկրորդը՝ մոնղոլերեն կերիմ՝ «գոտի», «պատնեշ» բառից: Այդպես է կոչվել կամ բերդերի ավերակների պատճառով, որը մոնղոլները գտան ներկա Ղրիմում, կամ էլ լեռների գոտու տեսքի համար, որոնք Ղրիմը մեկուսացնում են ծովից: Ղրիմի պատմական անունն է Տավրիդա:

Ճ

ՃԱՊՈՆԻԱ.— Պետություն Արևելյան Ասիայում: Ճապոներեն նիփոն: Անվանման հիմքում ընկած է նի՝ «արև» և պոն՝ «երկիր»՝ «արևի երկիր»: Բայց տարածվեց չինական Զիգանդո աղավաղված ձևը, որը նշանակում է «ժամադրող արևի երկիր»: Ըստ հին պատկերացման Ճապոնիայից է սկսում արևը իր շուրջերկրյա ճանապարհորդությունը: Այդ բանը արտահայտված է Ճապոնիայի պետական

դրոշի վրա: Այն տրված է կարմիր շրջանակի ձևով սպիտակ կտորի վրա:

Սակայն «ծագող արևի երկիր» անունը կրող աշխարհում արևը այնքան էլ առատ չի: Շրջապատող ջրային ընդարձակությունները և ծովային հոսանքները տարվա մեկ երրորդը դարձնում են մառախլապատ՝ անձրևային: ՃԱՎԱ. — Ինդունեղիայի կղզիներից մեկը: Սանսկրիտերեն (հին հնդկերեն) ջավա՝ «գարի» բառից է: Կրճատված ձևն է տեղական ճավադվիվա անվանման, որը նշանակում է «Գարու կղզի»:

ՃԵՆՈՎԱ, ՋԵՆՈՎԱ. — Քաղաք և նավահանգիստ Իտալիայում: Ստուգաբանությունը ենթադրվում է երկու կերպ: ա) Գենուատ լիգուրական ցեղի անունից, բ) Կելտերեն գենո՝ «գետաբերան» բառից:

Մ

ՄԱԱԱ. — Գետ Ֆրանսիայում և Բելգիայում: Գերմաներեն մուս՝ «ճահիճ» բառից: Այդպես է կոչվել, որովհետեւ գետը իր ստորին հոսանքում հոսում է ճահճոտ դաշտերով:

ՄԱԱՍՏՐԻԽ. — Քաղաք Նիդերլանդիայում: Անունը ստացել է Մասս գետից, որի մոտ գտնվում է քաղաքը և հոլանդերեն տրիխում՝ «գետանցք» կամ լատիներեն տրայեկտում՝ «ճանապարհ, ուղի» բառերի միացումից:

ՄԱԴԱՐԱՆ. — Քաղաք Հեռավոր Արևելքում, Օխոտի ծովի ափին: Անունը առաջացել է էվենկերեն մոնղողան՝ «ծովային նատվածքներ» բառից:

ՄԱԳԴԵԲՈՒԹ. — Քաղաք ԳԴՀ-ում: Քաղաքը անել է Սուրբ Մագդալենային նվիրված եկեղեցու շուրջը, իսկ բուրգ գերմաներեն նշանակում է «ամրոց» կամ «բերդ»:

ՄԱԳԵԼԱՆԻ ՆԵՂՈՒՅ. — Նեղուց Հարավային Ամերիկայի հարավում: Հայտնաբերվել է 1520 թվականին Իսպանիայում ծառայության մեջ գտնվող պորտուգալացի ծովա-

գնաց Ֆ. Մագելանի կողմից (1480—1521 թթ.):

ՄԱԳՆԻՏՈՒՅՆԱՅԱ.— Լեռ Ռւրալում: Այդպիս է կոչվել մագնիտական երկաթաքարի մեծ պաշարների պատճառով:

ՄԱԳՆԻՏՈՒՅՆՈՐՍԿ.— Քաղաք Ռւրալում: Ռուսերեն մագնիտ «մագնիտական» և գորա՝ «լեռ» բառերի միացումից: Այդպիս է կոչվել Մագնիտնայա լեռան մոտ գտնվելու պատճառով:

ՄԱԴԱԳԱՍԿԱՐ.— Կղզի Աֆրիկայի արևելյան ափերի մոտ: Հայտնաբերվել է 1500 թվականին Դիեգո Դիազի կողմից: Բայց եվրոպացիները առաջին անգամ այս կղզու մասին իմացել էին Մարկո Պոլոյից (XIV դարում) որը իր հերթին լսել էր արաբ վաճառականներից Մադեյրասկար անվան տակ: Այն մեկնաբանվեց իրու մաղեգասների կամ մարգաշների երկիր և ձեափոխվելով Մադագասկար դարձավ: Բնիկ ժողովուրդը իրեն մագնիտակամ մալգասի է անվանում: Նա հանդիսանում է մալայացիների հետնորդ, բայց տեղական բնակիչների հետ խառնված:

ՄԱԴԵՅՐԱ.— Կղզիների խումբ Ասլանտյան օվկիանոսում, Աֆրիկայի ափերից հյուսիս-արևմուտք, գլխավոր կղզին է Մադեյրա: Պորտուգալերեն մագեյրա նշանակում է «անտառային»: Մադեյրան հայտնաբերվել է և այդպիս է կոչվել 1420 թվականին պորտուգալացիների կողմից: Իր ժամանակին իրոք որ եղել է անտառապատ:

ՄԱԴՐԱՍ.— Քաղաք Հնդկաստանում: Անունը սանսկրիտերեն Մանդարաշ բառից է, որը նշանակում է «Մանդայի արքայություն»: Խսկ Մանդան, Հնդկական դիցարանությունում, ստորերկրյա աստվածներից է: Մանդային ավելացվել է բաշ՝ թագավորություն բառը և ստացվել է Մանդարաշ: Այն էլ ձեափոխվելով Մադրաս է դարձել: Հնդկահայ գաղթօջախի նշանակուր կենտրոն էր: Մադրասում 1794 թ. լուս է տեսնում հայերեն առաջին պարբերականը՝ «Ազգարարը»:

ՄԱԴՐԻԴ.— Խսպանիայի մայրաքաղաքն է: Առաջացել է մագրիտանական Մագելանի բնակավայրից, որի անվանումը

նշանակում է «մարգագետին»: Ստուգաբանությունը
վերջնական չի համարվում:

ՄԱԼԱԲԱՐՅԱՆ ԱՓ.— Այսպես են կոչվում Հնդկաստանի հա-
րավարեամյան ափերը, հին հնդկերեն մալահավարա՝
«լեռնային երկիր» բառից: Այդ անունը արաբները ար-
տասանում էին Մալիբար կամ Մալաբար: Եվ այդ ձևով
էլ անցավ եվրոպացիներին:

ՄԱԼԱԳԱ.՝— Նավահանգիստ հսպանիայում: Փյունիկերեն մա-
լարա՝ թագուհի բառից, ծովերի թագուհու իմաստով:

ՄԱԼԱԳԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.՝ Պետություն Մադագաս-
կար կղզու վրա, Աֆրիկայի հարավարեալյան ափերի
մոտ: Նախկին ֆրանսիական գաղութ, որը անկախու-
թյուն ձեռք բերեց 1960 թվականին և մինչև 1965 թվա-
կանը կոչվում էր Մալգաշի հանրապետություն:

ՄԱԼԱԴԵՍՏ.՝ Լեռնային զանգված Պիրենեյներում: Իսպա-
ներեն մալադետա՝ «անիծված» բառից: Իր ժամանա-
կին այն դիտվել է որպես անմատչելի և ամայի վայր:
Գագաթները ծածկված են մշտնչենական ձյունով:

ՄԱԼԱՅԱՆ ԱՐՇԻՊԵԼԱԳ.՝ Կղզիների այս աշխարհը ընկած է
Ասիայի և Ավստրալիայի միջև: Նրանց վրա հիմնակա-
նում գտնվում է ինդոնեզիա պետությունը: Մալայան
արշիպելագը իր անունը ստացել է մալայան ժողովր-
դից, որն իշխող է այդ կղզիներում: Նրա լեզուն էլ դար-
ձել է ինդոնեզիայի պետական լեզուն:

ՄԱԼԱՅԱԶԻԱ.՝ Ֆեդերատիվ Հանրապետություն Հարավարեալ-
յան Ասիայում, որը միավորում է Մալայան ֆեդերա-
ցիան, Սարավակը և Սաբահը (Հս. Կալիմանտան):
Սինդապուրը դուրս է եկել ֆեդերացիայից:

Մալայզիա անվան առաջացումը մալայան ցեղա-
խմբի էթնոնիմից է և եվրոպական լեզուներում
հատկապես անգլիական, ընկալվում է որպես մալե: «Իա»
վերջավորությունը լատիներեն ունի երկրի նշա-
նակություն: Ինչ վերաբերում է «զ» տառի գոյությանը
այդ անվան մեջ, ապա այն էլ ունի հետեւալ մեկնարա-
նումը: «Զ» տառը եվրոպական լեզուներում դրվում է

մալե բառի վերջում իբրև «ս» (Մալակս) և ըստ քերականական օրենքի, երկու ձայնավորների միջև կարդացվում է «զ»: Այստեղից էլ «Մալայզիա»:

ՄԱԼԱԿԵՆ.— Հնդկաշխն թերակղզու հարավային վերջավորությունը: Անվան ստուգաբանությունը տրվում է երկու կերպ, առաջինը՝ մելակա ծառի անունից, իսկ մյուսը, Հնդկերեն մախա՝ «մեծ» և լանկա՝ «կղզի» բառերի միացումից: Լանկա անունը հաճախ տրվել է Ցելլոնին:

ՄԱԼԱՎԻ.— Պետություն Աֆրիկայում: Նախկինում Նյասալենդ: Նյասա լճի շուրջը գտնվելու պատճառով: Անկախություն ստացավ 1966 թ. և կոչվեց Մալավի համանուն ժողովրդի անունով, որն այս երկրում թվով ամենամեծն է:

ՄԱԼԻՎԻՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ.— Հնդկական օվկիանոսում: Մալարայան ափից ոչ հեռու: Անունը առաջացել է Հնդկերեն մալայա վարա բառից, որն այս երկրում թվով ամենամեծն է:

Մինչև 1966 թվականի սեպտեմբերը Մալիվյան կղզիները հանդիսանում էին Թրիտանական խնամակալություն, որից հետո ստացան անկախություն:

ՄԱԼԹԱ.— Պետություն, որը գրավում է մի քանի կղզիներ Միջերկրական ծովի կենտրոնում: Ամենամեծ կղզին կոչվում է Մալթա: Մալթա անունը մեկնաբանվում է երկու կերպ: Առաջինը հունարեն մելտիս՝ «մեղր» բառից: Այսինքն մեղր արտադրող կղզի: Երկրորդը, փյունիկերեն Մելիտա՝ գեղեցկության աստվածուհու անունով: 1964 թվականից դարձավ ինքնուրուցն պետություն, մնալով Թրիտանական համագործակցության շրջանակներում:

ՄԱԼԻ.— Պետություն Արևմտյան Աֆրիկայի կենտրոնում, որը մինչև վերջերս հայտնի էր ֆրանսիական Սուլան անվան տակ: Մալի անունը գալիս է նեգրական բամբարաժողովրդի լեզվից և բառացի «գետաձի» է նշանակում, որն իր ժամանակին իշխանության ուժն էր մարմնավորում: Մինչև եվրոպացիների գալը, միջին դարերում,

Մալին եղել է աֆրիկյան լայնածավալ նեգրական պետություն։ Անկախություն ստացավ 1960 թվականին։
ՄԱԼԻԳԻՆԻ ՆԵՂՈՒՑ. — Կարայի ծովում։ Այդպես է կոչվել իպատիվ Հյուսիսային Մեծ արշավախմբի մասնակից Ս. Գ. Մալիգինի, որը 1737 թվականին անցավ այդ նեղուցով և հետազոտեց Պելորայից մինչև Օբ գետը ձեղվող ափը։

ՄԱԼՄՅՈ. — Նավահանգիստ Շվեդիայում։ Շվեդերեն մալմ՝ «ավազոտ դաշտ» և օ՝ «կղզի» բառերից։ Այսինքն ավազոտ, հարթ կղզի։

ՄԱԼՈՅԱՐՈՍԼԱՎԵՅ. — Քաղաք Կալուգայի մարզում։ Հիմնադրությունը է 14-րդ դարում, իշխան Վլադիմիր Անդրեևիչ Սերպուխովսկու կողմից և կոչվել է ի պատիվ նրա սրդու՝ Յարոսլավի։ Իսկ «մալո» մասնիկը, որն ունի փոքրի խմաստ, ավելացվել է, որպեսզի տարբերվի արդեն գոյություն ունեցող Վոլգայի վրա գտնվող Յարոսլավի քաղաքից։ 1812 թվականին Հայրենական պատերազմում այստեղ տեղի ունեցան կատաղի մարտեր, որոնք ավարտվեցին ուստաների հաղթանակով։

ՄԱԽԱՉԿԱԼԻ. — Դաղստանի ինքնավար հանրապետության մայրաքաղաքը։ Կարևոր նավահանգիստ և ամբոց Կասպից ծովի ափին, հիմնադրվել է 1722 թվականին, Պյոտր I-ի կողմից, և նրա պատվին էլ կոչվել է Պետրովսկոյե։ 1857 թվականին դարձավ քաղաք և վերանվանվեց Պորտ-Պետրովսկ։ Իսկ 1919 թվականին անվանվեց Մախաչ-Կալա՝ Դաղստանում սովետական կարգերի հաստատման շրջանի հերոսներից մեկի՝ Մախաչի անունով։ Կալա կամ Կալե նշանակում է «բերդ»։

ՄԱԿԵՆԶԻԱ. — Գետ Կանադայում։ Հայտնաբերվել և հետադրությունը է 1789 թվականին շոտլանդացի ճանապարհորդ Ա. Մակենզիի կողմից։

ՄԱԿԱՅԻ Ա.Փ. — Նոր Գվինեա կղզու հյուսիս-արևելյան ափը։ Այդպես է կոչվել ի պատիվ ոսւածապարհորդ Նիկոլայ Միկլուխո-Մակայի, որը 1871 թվականին, եվրոպացիներից առաջինը, ուսք դրեց այս ափը։ Նա հաս-

տատեց բարեկամական հարաբերություններ տեղական բնակիչների՝ պապուասների հետ: Մոտ երկու տարի ապրեց Նոր Գվինեայում և կատարեց ազգագրական ու աշխարհագրական ուսումնասիրություններ:

ՄԱՀՎԱՆ ՀՈՎԻԾ. — Լեռնային հովիտ Ամերիկայի Միացյալ Նահանգների Կալիֆորնիա նահանգում, որի երկարությունը հասնում է 250 կիլոմետրի: Դիբքը ծովի մակարդակից 85 մետր ցածր է: Աշքի է ընկնում որպես աշխարհի ամենատաք և ամենաջրազուրկ անապատներից մեկը: 1849 թվականին, երբ մի խումբ մարդիկ այս հովտում ոսկի փնտրելիս զոհվեցին, ապա դրանից հետո հովիտը ստացավ «Մահվան հովիտ» անվանումը:

ՄԱԴՐԻԲ. — Ընդհանուր անվանում, որը տրվում է Աֆրիկայի Հյուսիսային երկրներին, որոնք բնակեցված են արաբներով: Այդ թվում կիրիա, Թունիս, Ալժիր և Մարոկկո: Մադրիբ անվանումը արաբերեն լեզվից է և բառացի նշանակում է «արևմուտք»: Այս հասկացությունը գրականության մեջ մտցրին միջնադարյան արաբ աշխարհագրագետները, որով արաբական աշխարհը բաժանում էին արևելյան՝ մեշրիկ և արևմտյան՝ մադրիբ մասերի, Եգիպտոսը թողնելով արևելյան հատվածի մեջ:

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ. — Բնակավայր Վրաստանում: Այդպես է կոչվել ի պատիվ Վ. Վ. Մայակովսկու (1893—1930) նախկին Բաղդադի ավանը, որտեղ ծնվել է բանաստեղծը:

ՄԱՅԿՈՊ. — Քաղաք Հյուսիսային Կովկասում: Աղիգեյական ինքնավար մարզի կենտրոն: Զերքեղերեն մեջ՝ «խնձորենի» և կուապե՝ «անկյուն» բառերից: Այսինքն խնձորենիների անկյուն: Ժամանակի ընթացքում դարձել է Մայկոպ:

ՄԱՅՆ. — Գետ ԳՅՆ-ում: Հոհենոսի աջ վտակը: Անվան ստուգաբանություններից մեկը ունի կելտական ծագում և նշանակում է «դանդաղ ջուր»:

ՄԱՅՈՐԻ. — Կուրորտ Ռիգայի մոտ: Այդպես է կոչվել նախկինում ինչ-որ ուստական «մայորի» այսինքն զինվորա-

կան աստիճան ունեցող կալվածատիրոջ հողում գտնը՝ վելու պատճառով:

ՄԱՅՈՐԿԱ Կղջի.— Բալեարյան կղզիներից ամենամեծը: Անվանումը ծագել է լատիներեն մայոր՝ «մեծ» բառից: **ՄԱՆԴԻՇԼԱԿ** կամ **ՄԱՆԴԻՇԼԱԿ**.— Թերակղզի Կասպից ծովի արևելյան ափին, Ղաղախստանում: Անունը թարգմանվում է որպես «հազար ձմեռանոց»՝ ձմեռելու վայր: Մյուս ստուգաբանությունն է մենք և կրշակ բառերի դուգակցումը, այսինքն՝ Մենքի ձմեռանոց: Մենք անունը ստացել է նոգայացիների մի ցեղից:

ՄԱՆԻԼԱ.— Ֆիլիպինների փաստացի մայրաքաղաքը: 1949 թվականից պաշտոնապես համարվում է Կեսոն-Սիտին: Մանիլա անունը մալայական բառ է, որը նշանակում է «կանաչազարդ»: Երկրորդ ստուգաբանությունը՝ մալայերեն մա և նիլա բառերի միացումից: Մա նշանակում է «աճել կամ բանել» իսկ նիլա ինդիգո ծառի անունն է, որը շատ է տարածված եղել այս վայրերում: Քաղաքը հիմնադրվել է 1521 թվականին իսպանացիների կողմից:

ՄԱՆՉՈՒԻՇԻԱ.— Չինաստանի Հյուսիս-արևելյան մասի՝ Գունդի պատմական անվանումը: Վերանվանվել է մանջուր ժողովրդի անունով:

ՄԱԶԻՈՒԵ.— Լիճ Հյուսիսային հտալիայում: հտալերեն մաշիուե՝ «մեծ» բառից (Հարավային Ալպերի ամենամեծ լիճն է):

ՄԱՍԻՍ.— Հայկական բարձրավանդակի ամենաբարձր սարը, որը հայտնի է նաև Արարատ անունով: Մասիս անվան ստուգաբանությունը տրվում է երկու կերպ: Առաջինը, Մասիս անվան հիմքում ընկած են մա՝ «մայր» և սիս՝ «սար» բառերի միացումը: Այսինքն «Մայր սար»: Ժողովուրդը փոքր գագաթին անվանում է Սիս (լեռ), ի տարբերություն Մայր լեռան: Այս ստուգաբանության հիմքում ընկած է փոքրասիական հին ժողովուրդների այն ավանդությունը, ըստ որի աստվածների մեծ մոր՝ Մա-ի ընակատեղին բարձր լեռների գագաթներն էին:

Մյուս ստուգաբանությունը գալիս է Մովսես Խորենացուց, որը, շատ տեղանունների առաջացման թվում, աշխանունը նույնպես կապեց Հայկազանց նահապետների անվան հետ: Ըստ Մ. Խորենացու Մասիսը իր անունը ստացել է Ամասիա նահապետից, որը Գեղամ նահապետի հայրն էր և բնակվում էր Արմավիրում: Կեռը մեր պատմության մեջ կոչվել է նաև «Ազատ Մասիս», որովհետև նա համարվում էր դյուցազների և աստվածների, ընդհանրապես ազատների, ընտրյալների բնակավայր: Ըստ ավանդության նոյնի տապանը ջրհեղեղի ժամանակ կանգ առավ այս լեռան վրա:

ՄԱՍԿԱՐԵՆՑԱՆ ԿՂՋԻՆԵՐ.— Հնդկական օվկիանոսում: Հայտնաբերվել են 1502 թվականին պորտուգալացի Պետրո Մասկարենյասի կողմից:

ՄԱՍՍԱԶՈՒՍԵՏՍ.— ԱՄՆ-ի նահանգներից մեկը: Այդպես է կոչվել հնդկական Մասսաշուսետե ցեղի անունից: Ցեղի անունն էլ իր հերթին նշանակում է Մեծ բլուրների բնակիչ:

ՄԱՍՍԱԶՈՒՍԵՏՍԻ ԾՈՅ.— ԱՄՆ-ի արևելյան ափին: Այդպես է կոչվում հնդկական Մասսաշուսետե ցեղի անունից:

ՄԱՎԻԿԻԱՆ.— Կղզի Հնդկական օվկիանոսի արևմտյան մասում: Մասկարենյան խմբում, որը 1968 թվականի մարտի 12-ից անկախություն ստացավ: Այդպես է կոչվել 1598 թվականին ի պատիվ նիդերլանդների կուսակալ Մավրիկիա Օրանցու:

ՄԱՎԻՏԱՆԻԱ.— Պետություն Հյուսիս-արևմտյան Աֆրիկայում: Մինչև 1960 թվականը ֆրանսիական գաղութ էր: Մավրիտանիա անվան հիմքում ընկած է «մավր» հունա-լատինական բառը, որը նշանակում է «սև» կամ «թուփ»: Այսպես էին անվանում հոռմեացիները բերբերներին, հատկապես նույնիդացիներին տոհմակից ցեղերին, որոնք ժամանակի ընթացքում խառնվեցին արաբներին և հաստատվեցին Հյուսիսային և Հյուսիս-արևմտյան Աֆրիկայի երկրներում: Քանի որ արաբները իրականում իսպանիան նվաճեցին մավրերի ձեռքով,

դրա համար էլ իսպանացիները մավր անունով կոչեցին
արաբներին: Մավրիտանիա անունը, որը լատիներեն
լեզվից է, նշանակում է «մավրերի երկիր»:

ՄԱՏՅՈՒՇԿԻՆԻ ՀՐՎԱՆԴԱՆ.— Գտնվում է Արևելա-Սիրիա-
կան ծովում, Զառնյան ծոցում: Այդպես է կոչվել ի
պատիվ ծովագնաց Ֆյոդր Ֆյոդորովիչ Մատյուշկինի
(1799—1872 թթ.), որը մասնակցել է Ֆ. Ն. Վրանգելի
արկտիկական արշավանքներին: Ֆ. Մատյուշկինը եղել
է Ա. Պուշկինի լիցեյական ընկերը:

ՄԱՏՈՂԿԻՆ ՇԱԲ.— Նեղուց, որը բաժանում է Նոր երկրի
Հյուսիսային և Հարավային կղզիները իրարից: Ռուս
պոմորները, այսինքն Սպիտակ ծովի և Սառուցյալ օվ-
կիանոսի ափերի բնակիչները, նոր երկրին տալիս էին
մատկա անունը, որը հին սլավոներենում նշանակում է
«մայր», այսինքն սնունդ տվող, որովհետև նրա ափերին
շատ կենդանիներ ու ձկներ էին որսում: Իսկ «շաբ» բա-
ռը կոմի լեզվից է և նշանակում է նեղուց: Այդ բառերի
գուգակցումն էլ տվեց Մատոշկին Շաբ անունը:

ՄԱՐԱԿԱԻԲՈ.— Քաղաք, ծոց, լիճ Վենետիկայում: Այդպես
են կոչվել ի պատիվ Մարակաիբոյի, որը իսպանական
նվաճումների ժամանակ հայտնի կացիկ էր, այսինքն
հնդիկների իշխան:

ՄԱՐԱՆԻՈՆ.— Ամազոն գետի վերին ակունքներից մեկը: Իս-
պաներեն մարանա՝ «խիտ թփուտ» բառից: Մարանիոն
գետը իրոք որ հոսում է խիտ անտառների միջով:

ՄԱՐԻ.— Քաղաք Թուրքմենական ԽՍՀ-ում: Անունը առաջա-
ցել է սանսկրիտերեն մարու՝ անապատ բառից կամ
զենդերեն մարու բառից, որ նշանակում է թոշուններով
հարուստ վայր:

ՄԱՐԻԱ ԹԵՐԵԶԱ ԿՈԶԻ.— Օվկիանիայի ամենահեռավոր և
մենավոր կղզին, որը գտնվում է Հարավային 37 աստի-
ճան լայնությունում: Հայտնաբերվել է 1843 թվականին
և կոչվել է ի պատիվ Մարիա Թերեզա թագուհու: Կղզին
այս անունով հայտնի է ֆրանսիացիներին, իսկ անգ-
լիացիները կղզուն Տաբոր են անվանում: Այս կղզին

նկարագրված է Ժյուլ Վեռնի «Նավապետ Գրանտի որդիները» գրքում։ Պագանելլը ծանոթ էր կղզու ֆրանսիական անվանմանը։ Երբ պարզվեց, որ նա ունի երկրորդ՝ Տարոր անունը, Պագանելլը իրեն չէր ներում, որ այդ բանին տեղյակ չի եղել։

ՄԱՐԻԱԿԱՆ Ա.ՍՍՀ. — Ռ.ՍՖՄՀ-ի կազմում։ Այդպես է կոչվում մարի ժողովրդի անունով, որի լեզվով «մարի» նշանակում է տղամարդ։

ՄԱՐԻԱՆՑԱՆ ԿՂՋԻՆԵԲ. — Օվկիանիայի Միկրոնեզիա խմբում։ Կղզիները հայտնաբերել է Մագելանը 1522 թվականին։ Երբ Մագելանը 1522 թվականին մոտեցավ այդ կղզիներին, բնիկները գտնվում էին նախնադարյան համայնական հասարակարդի աստիճանի վրա։ Նրանց հասկանալի չէր մասնավոր սեփականության գաղափարը։ Նրանք իսպանացիներին տալիս էին այն, ինչ որ վերջիններիս անհրաժեշտ էր, իսկ նավերից վերցնում էին այն ամենը, ինչ որ իրենց էր պետք։ Այդ պատճառով Մագելանը բնիկներին խիստ պատիժներ էր տալիս։ Նա կղզիներին տվեց «Գողերի կղզիներ» անվանումը (իսպաններն՝ «լադրոնես»)։ Մոտ մեկնկես դար պահպանվեց այդ անունը։ 1668 թվականին ի պատիվ իսպանական Ֆիլիպ IV թագավորի կնոջ՝ Մարիա-Աննայի կղզիները կոչվեցին Մարիանյան։

ՄԱՐԿԻԶԱՆ ԿՂՋԻՆԵԲ. — Խաղաղ օվկիանոսի կենտրոնական մասում, Պոլինեզիա խմբում։ Հայտնաբերվել են 1596 թվականին։ Այդպես է կոչվել ի պատիվ Պերուի իսպանական փոխարքա մարկիզ Մենդոզայի։

ՄԱՐՄԱՐԱ ԾՈՎ. — Գտնվում է Միջերկրական և Աև ծովերի միջև։ Դարդանելի նեղուցով միանում է Էգեյան ծովին, իսկ Բոսֆորի նեղուցով՝ Աև ծովին։ Հույների Պրոպուտիդան է, պոնտ՝ «ծով» իսկ այրո՝ «առաջ» (այսինքն Աև ծովից առաջ, նկատի ունենալով Հունաստանի դիրքը)։ Ծովը Մարմարա անունը ստացել է համանուն կղզուց։ Վերջինս հարուստ է մարմարով, որով կառուցվել են Ստամբուլի շատ մզկիթներ ու պալատներ։

ՄԱՐԴԱԼՅԱՆ ԿՂՋԻՆԵՐ. — Գտնվում են Խաղաղ օվկիանոսում, Հասարակածից հյուսիս, Միկրոնեզիա խմբում: Հայտնաբերվել են 1529 թվականին խսպանացիների կողմից: Հետագայում, 1788 թվականին, կղզիները մանրամասն հետագուտվեցին անգլիացի ծովագնաց Ջ. Մարշալի կողմից և նրա անունով էլ կոչվեցին:

ՄԱՐՈԿՈ. — Պետություն Հյուսիսային Աֆրիկայում: Երկրի անունը առաջացել է Մարրակեշ քաղաքի անվանումից (տես):

ՄԱՐՏԻՆԻԿԱ. — Կղզի Վեստ Ինդիայում, Անտիլյան խմբում: Հայտնաբերվել է Քրիստափոր Կոլումբոսի կողմից 1502 թվականին, Սուրբ Մարտինի տոնի օրը և ի պատիվ նրա այդանք է կոչվել:

ՄԱՐՐԱԿԵՇ. — Մարոկոյի գլխավոր քաղաքներից մեկը: Անունը առաջացել է արաբերեն՝ «մարրակուշ»՝ «սիրուն, զարդարված» բառից: Մարրակեշը, իրոք որ, աչքի է ընկնում և տեղի գեղեցկությամբ և թե հուշարձաններով: Այս քաղաքից էլ՝ Մարոկո անվանումը:

ՄԱՐՍԵԼ. — Նավահանգիստ Ֆրանսիայում: Հիմնադրվել է 599 թվականին, մ.թ.ա., ֆոկեացիների կողմից: Անվանումը փյունիկերեն՝ «նավահանգիստ» և էլ՝ «անտված» բառերից: Այսինքն նավահանգիստ նվիրված Բաալ աստծուն: Երկրորդ բացատրություն, մասս՝ «բերդ» և ալաա՝ «բարձրանալ» բառերի միացումից, Բարձր բերդի իմաստով: Հին հունական անունն է Մասալիա:

ՄԱՐՔՍԻ ԳԱԳԱԹ. — Այդպես է կոչվում Պամիրի բարձր գագաթներից մեկը ի պատիվ Կարլ Մարքսի (1818—1883 թթ.):

ՄԱՐՔՍ. — Քաղաք Վոլգայի վրա, Սարատովի մարզում: Քաղաքը հիմնադրվել է 1765 թվականին և մինչև 1805 թվականը կոչվում էր Եկատերինենշտադտ, որից հետո մինչև 1918 թվականը կոչվում էր Բարոնսկ, իսկ 1918 թվականից մինչև 1942 թվականը՝ Մարքսշտադտ: 1942

թվականից հետո վերանվանվեց և կոչվեց ուղղակի
Մարքս:

ՄԵԳԱԼՈՊՈԼԻՍ.— Բնակավայրերի ագլոմերատիվ խմբավո-
րում: Այսինքն, իրար մոտ ընկած քաղաքների միաձու-
լում: Մեգալոպոլիս հասկացությունը հունարեն լեզվից
է և բառացի նշանակում է «Մեծ քաղաք»: Անվանումը
ծագել է Արկադիայի Մեգալոպոլիս քաղաքից, որը իր
մեջ էր համախմբում մի շարք բնակավայրեր: Մեգալո-
պոլիսի առավել տիպիկ օրինակներ են Վերին Սիլե-
զիայի և Ռուրի արդյունաբերական հանգույցները՝ մե-
գալոպոլիսները: Առաջինը գտնվում է Լեհաստանում, և
կոչվում է Սիլեզյան մեգալոպոլիս. կենտրոնն է Կատո-
վիցե քաղաքը: Իսկ երկրորդը՝ Ռուրինը, ընկած է Ռուր
գետի շուրջը (Դուիսբուրգից մինչև Դյորտմունդ), արևել-
քից արևմուտք ձգված է համատարած քաղաքների մի
շարան, որոնց մեջ աշքի է ընկնում էսսենը:

ՄԵԴԻՆԱ.— Քաղաք Սաուդյան Արաբիայում: Արաբերեն մե-
դինեհ՝ քաղաք բառից: Արաբերեն լրիվ անվանումն է
Մեդինատ-ան-Նաբի, այսինքն «Մարդարեի քաղաք»:
Նկատի է ունեցվել Մահմեդ մարգարեն: Մահմեդա-
կան աշխարհի սրբազն քաղաքներից երկրորդը՝ Մեկ-
կայից հետո: Այս քաղաքում է գտնվում Մահմեդի դամ-
բարանը, որը դիտվում է որպես սրբավայր:

ՄԵՍԵՏԱ. (Կամ ՄԵԶԵՏԱ).— Սարահարթ: Ջբաղցնում է Պի-
րենեյան թերակղու կենտրոնական և արևմտյան մասը:
Անոնը ծագել է իսպաներեն մեսա՝ «սեղան» բառից:
Այդպես է կոչվել սեղանաձև տեսքի պատճառով:

ՄԵԼԱՆՁԻԱ.— Օվկիանիայի խոշոր կղզիախմբերից մեկը
Խաղաղ օվկիանոսի հարավ-արևմտյան մասում: Մելա-
նձիայի մեջ մտնում են Նոր Գվինեան, Սողոմոնյան
(Սոլոմոնյան) կղզիները, Նոր Հերիոյան կղզիները և
Նոր Կալեդոնիան: Մելանձիա անվանումը հունարեն
լեզվից է և նշանակում է «Սև կղզիներ»՝ մելաս՝ «սև» և

նեսոս՝ «կղզի» բառերից: Ավելացրած «իա» մասնիկը՝ որը ունի երկրի իմաստ: Այսինքն, «Սև կղզիների երկիր»: Այդ անվանումը տրվեց կղզիներին՝ բնիկների ու ցեղին պատկանելու պատճառով: Այս խմբի ամենամեծ և աշխարհի երկրորդ կղզին է Նոր Գվինեան, որի բնակիչները ու ցեղին պատկանող գանգրահեր պապուասներ են: Նրանց կյանքը ուսումնասիրեց ճանապարհորդ Միկլուխո Մակլայը:

ՄԵԼԲՈՒԹՅՈՒՆ.— Նավահանգիստ Ավստրալիայում: Հիմնադրվել է 1837 թվականին: Այդպես է կոչվել ի պատիվ Վիլյամ Մելբուրնի, որը Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստրն էր 1835—1841 թվականների ընթացքում:

ՄԵԼԻՇՈՊՈԼ.— Քաղաք Ուկրաինայում: Հունարեն մելիտոս՝ «մեղր» և պոլիս՝ «քաղաք» բառերի միացումից: Այսինքն «Մեղրաքաղաք»:

ՄԵԾ ԱՂԻ ԼԻԾ.— ԱՄՆ-ում: Այդպես է կոչվել շատ աղի և մեծ լինելու պատճառով: Լճի ջուրը 10 անգամ ավելի աղի է, քան ծովի ջուրը: Մակերեսն է 600 քառակուսի կիլոմետր:

ՄԵԾԱՄՈՐ.— Արաքսի վտակներից մեկը, որը սկիզբ է առնում Այդր լճից և ընթանալով ընդունում է մեծ թվով աղբյուրներ ու դառնում ջրառատ:

Մեծամոր անունը նշանակում է «Մեծ ճահիճ»: Իրոք որ գետը հոսելով եղեգնածածկ հարթ տարածությունով նմանվում է ճահճուտի: Մեծամորը կոչվում է նաև Սև ջուր:

ՄԵԾ ԱՐՁԻ ԼԻԾ.— Հյուսիսային Կանադայում: Հայտնաբերվել է 1787 թվականին անգլիացի ճանապարհորդ Մակենզիի կողմից: Լիճը այդպես կոչվեց այս վայրում գտնվող արշերի պատճառով:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ.— Պետություն Արևմտյան Եվրոպայում, համանուն կղզու վրա, որից և ստացել է իր անունը: Սկզբում կղզին հայտնի է եղել Բրիտանիա անվան տակ, որն առաջացել է կելտական բրիտ ցեղի անունից: Իսկ այդ անունը, որը «հայտաբղետ» է նշանակում, նրանց տըր-

վել է այն բանի համար, որ մարդիկ իրենց՝ մարմինը դաշտում էին, այսինքն տատուիրովվկա էին անում: Հինգերորդ և վեցերորդ դարերից սկսած, անգլո-սաքսերի ներխուժման հետևանքով, բրիտները մասսայաբար փախչում էին դեպի ֆրանսիա և բնակություն հաստատում Արմորիկա թերակղզում, որը և այդ ժողովրդի անունով էլ կոչվեց Բրետան կամ Բրիտան: Այսպիսով, ստեղծվեց երկու Բրիտանիա, որոնք իրարից տարբերելու համար հինգ կոչվեց Մեծ Բրիտանիա, իսկ նորը մնաց ուղղակի Բրետան անվան տակ:

ՄԵԾ ԼՃԵՐ.— Թվով հինգ լիճ Հյուսիսային Ամերիկայում: Դրանք են Վերին, Հուրոն, Միչիգան, Էրի և Օնտարիո: Ալգաս են կոչվել որպես աշխարհի ամենախոշոր լճային սիստեմ, որոնք կապված են իրար հետ:

ՄԵԿՈՒԳ.— Գետ Հնդկաշխնում, որը թափվում է Սիամի ծոցը: Անվանումը թե՛ վիետնամերեն և՛ թե Հնդկաշխնյան լեզուներում նշանակում է «մայր գետ» կամ «զետերի մայր»: Նման ստուգաբանությունը կարիք է զգում մի փոքր լրացման: Մայր բառը այստեղ նկատի է ունեցված նաև որպես գլխավոր, որպես մեծ գետ, որովհետև մայրիշխանության պայմաններում մայրը եղել է և տան գլխավորը, և մեծը:

ՄԵՄՖԻՍ.— Հին եգիպտական քաղաք. Կահիրեից ոչ հեռու: Մեմֆիս անունը հունական ձևն է եգիպտական «Մենեֆեր» անվանման, որը նշանակել է Մենեֆերի բնակավայր: Նկատի է ունեցվել փարավոնի դամբարանը: Եղբայրական ժողովուրդներին անցավ հունարեն Մեմֆիս ձևը:

Մեմֆիս անվամբ քաղաք կա նաև ԱՄՆ-ում, որը կրկնում է եգիպտական անունը:

ՄԵԽԻԿՈ.— Մեքսիկայի մայրաքաղաքը: Քաղաքը կոչվել է պետության անունով: Քաղաքի և պետության անվանման մեկնաբանումը նույնն է: Տե՛ս Մեքսիկա:

ՄԵՆԱՄ.— Գետ Հնդկաշխնում, թափվում է Սիամի ծոցը: Անվանման հիմքում ընկած են մե և նամ բառերը, որոնք

* ստուգաբանվում են «Մեծ գետ» կամ «Մեծ ջուր» իմաստով: Մեր բառը ունի նաև «գլխավոր» իմաստը: Այսպիսով, մենամ նշանակում է գլխավոր կամ մեծ գետ:

ՄԵՆՈՒԾԽԻՆԻԼԻ.— Ուրարտական թագավորության կարևոր բնակավայրերից, որը գտնվել է Մասիս լեռան հյուսիսային փեշերին, ներկայիս Դաշբուռուն դյուղի մոտ: Այն հիմնվել է ուրարտական Մենուա թագավորի կողմից (810—786 մ. թ. ա.): Անվանումը նշանակում է «Մենուաշեն» կամ «Մենուայի կառուցյաց»: Մենուախինիլին հիմնվել է ութերորդ դարի սկզբին: Եղել է Մենուա թագավորի նոր նստելավայրը (ոեզիդենցիան): Մենուախինիլիում գտնվել են ուրարտական սեպագիր շատ արժեքավոր արձանագրություններ:

ՄԵՇԽԵԴԻ.— Քաղաք Իրանում: Թարգմանվում է «Սրբի գերեզման»: Այդպես է կոչվել, որովհետեւ այստեղ գտնվում է «սուրբ» հմամ Ծեղայի գերեզմանը:

ՄԵՌՅԱԼ ԾՈՎ.— Անհոսք և աղի լիճ, որը գտնվում է Իսրայելի և Հորդանանի սահմանում: Ավելի շատ հայտնի է ծով անվան տակ: Նրա ջրի աղիությունը բարձր է ծովի ջրի աղիությունից լոթ և կես անգամ, որի հետևանքով օրգանական կյանք չկա ծովում (բացի բակտերիաներից): Այդ պատճառով էլ ստացել է «Մեռյալ (անկենդան) անվանումը»:

ՄԵՍՍԻՆԱ.— Նավահանգիստ Սիցիլիայում: Հիմնադրվել է 8-րդ դարում մեր թվականությունից առաջ, Պելոպոնեսից վտարված մեսափացիների կողմից:

ՄԵՏԱ.— Գետ Վենեսուելայում: Իսպաներեն մետա՝ «նպատակ» բառից: Իսպանացի Օրդասը նպատակ էր որել գտնել Էլդորադո ֆանտաստիկ երկիրը: Նա ճանապարհին հանդիսեց այն գետին, որով և տարավ իր նավերը: Ճիշտ է, անունը մնաց Մետա՝ «նպատակ», բայց Օրդասը իր նպատակին չհասավ, որովհետեւ Էլդորադո անվամբ երկիր իսպանացիները այնպես էլ չգտան:

ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՀ.— Թե՛ վաղ անցյալում և թե՛ հատկապես միջին դարերում աշխարհին մետաքս մատակա-

բարողը Զինաստանն էր: Այս երկրից այնքան շատ մետաքս էր արտահանվում, որ գրա անունով էլ իրանի և պատմական Հայաստանի վրայով անցնող ճանապարհը, որը հասնում էր Սև ծովի ափերը, ստացել էր «Մետաքսի ճանապարհ» անունը: Այդ ճանապարհը գալով Միջին Զինաստանի ամենից շատ մետաքս մշակող նահանգներից, անցնում էր Մեծ պարսպի տակով, որը ճանապարհի ապահովման գործում նույնպես մեծ դեր էր խաղում: Հասնելով Արևմտյան Զինաստանի Սինցյանի նահանգը, «Մետաքսի ճանապարհը» ճյուղավորվում էր, մեկը գնում էր գեղպի Միջին Ասիա, իսկ մյուսը, Թարիմ գետի հովտով՝ Իրան և Հայաստան: Հայաստանում այդ ճանապարհը անցնում էր թե՛ Վանա լճի ափերով և՛ թե Արարատյան դաշտով՝ Արտաշատ ու Դվին քաղաքներով: Ճանապարհի մի ճյուղն անցել է Անի քաղաքով, որը նրան դարձրել է աշխարհի վաճառաշահ քաղաքներից մեկը: Այսօր էլ կանգուն են Ախուրյանի վրայով ձգվող Անիի փառքը հանդիսացած կամուրջի պատերը, որով անցել է «Մետաքսի ճանապարհի» մի ճյուղը: Երբ 15-րդ դարի վերջին հայտնի դարձավ Հնդկաստան տանող ծովացին ուղին, ապա Մետաքսի ճանապարհը կորցրեց իր նշանակությունը: Լքվեցին նրա վրա եղած իջևանները, անկում ապրեցին ճանապարհին եղած քաղաքները:

Մերի թերդի երկիր. — Անտարկտիդա ցամաքի մի մասը, որը ձգվում է Բելինսգաուզենի ծովից մինչև Ռոսսի ծով: Անունը 1929 թվականին տվել է ամերիկացի քենաչխույզը Ռ. Բերդը ի պատիվ իր կնոջ՝ Մերի թերդի:

Մերիլենդ. — ԱՄՆ-ի նահանգներից մեկը: Այդպես է կոչվել ի պատիվ Մերիի՝ Անգլիայի թագավոր Կարլոս I-ի աղջկա: Իսկ լենդ կամ լանդ անգլերեն նշանակում է երկիր:

Մերջավոր Արեգելք. — Երկրների խմբավորում: Անվանման հիմքում ընկած են «Արևելք», «Մերձավոր» բառերը, որոնք ցույց են տալիս այդ երկրների դիրքը Եվրոպայի

Նկատմամբ: Դրանք ընկած են Ասիա աշխարհամասի հարավ-արևմտյան մասում և Աֆրիկայի Հյուսիս-արեւելյան անկյունում: Դրանք են՝ Թուրքիան, Սիրիան, Լիբանանը, Իրաքը, Հորդանանը, Իսրայելը, Սաուդյան Արաբիան, Եմենը, Հարավային Եմենի ժողովրդական Հանրապետությունը, Աղեն-պրոտեկտորատը, Պայմանագրական Օմանը, Օմանի իմամությունը, Կատարը, Քուվեյտը, Բահրեյն կղզիները, Կիպրոսը, իսկ Հյուսիսարևելյան Աֆրիկայում՝ Արաբական Միացյալ Հանրապետությունը և Սուդանը:

ՄԵՔՍԻԿԱ. — Գետություն Հյուսիսային Ամերիկայում: Մեքսիկա անվանումը առաջացել է ացտեկների պատերազմի աստծո՝ Մեխիկոյի անունից: Այս անվամբ հայտնի դարձավ մայրաքաղաքը, երկրի անվանումը դարձավ Մեքսիկա:

ՄԵՔԱՐԱ, ՄԵԿԱՐԱ. — Սրբազան քաղաք Սաուդյան Արաբիայում: Քաղաքի անունը ստուգաբանվում է երկու կերպ: 1) Արաբերեն նշանակում է «Հին տեղ»: Այդպես է կոչվել ի հակագրություն Զիդայի՝ նոր տեղի: 2) Մակորաբանությունը ուղղված է «սրբավայր»: Գեռ մինչ իսլամը եղել է պաշտամունքի վայր: Մահմետականության տարածումից հետո նվիրագործվել է վերստին:

ՄԻԱՆ. — Քաղաք հտալիայում: Խտալական որոշ քաղաքների անուններ դիպուկ կերպով բնորոշում են գրանց նշանակությունը: «Միլան» անունը (իտալերեն Միլան) ծագել է լատիներեն «Մեղիոլանում» բառից, որ նշանակում է «հովտի կենտրոնում գտնվող տեղ»: Եվ իրոք, Միլանը գտնվում է Պաղանյան (Պաղուայի) հովտի կենտրոնում, Աղջա և Տիշինո գետերի միջև, 21 երկաթուղային և բազմաթիվ խճուղային ճանապարհների խաչմերուկում:

ՄԻԱՆ ՑԽԱԿԱՅԱՅԱ. — Քաղաք Վրաստանում: Մինչև 1935 թիվը՝ Սենակի: Վերանվանվեց ի պատիվ Անդրկովկասի հեղափոխական նշանավոր գործիչներից մեկի՝ Միխայլայայի:

ՄԻԿՈՅԱՆԻ ԾՈՅ. — Լապտեների ծովում, Թոլշեիկ կղզու ափերի մոտ, որը գտնվում է Հյուսիսային Երկիր արշիպելագում։ Ուսումնասիրվել է 1932 թվականին և կոչվել ի պատիվ Ա. Ի. Միկոյանի։

ՄԻԿՐՈՍԵԶԻԱ. — Կղզիների խումբ Օվկիանիայում, Խաղաղօվկիանոսի հյուսիս-արևմտյան մասում, Հասարակածից հյուսիս։ Անունը առաջացել է հունարեն միկրոս՝ «փոքր» և նևոս՝ «կղզի» բառերի միացումից («Մանր կղզիների երկիր»)։ Իրոք որ Միկրոնեզիան մանր կղզիների աշխարհ է, որոնց թիվը հասնում է մոտ 1500-ի։ Կղզիները բաժանված են երեք մեծ խմբերի, այն է՝ Մարշալյան, Կարոլինյան և Մարիանյան։ Բացի դրանից, Միկրոնեզիայի կազմում են հաշվում Գիլբերտա, Նաուրու և Օշին կղզիները։

ՄԻՆԳԵԶԱՌՈՒՐ. — Արհեստական «ծով» Ադրբեյջանական ՍՍՀ-ում։ Ադրբեյջաներեն բառացի նշանակում է «Ետ դարձիր, առջևում ճանապարհ չկա»։ Այս անունը անցյալում կրում էր միայն մի փոքր գյուղ, որը գտնվում էր Կուր գետի ստորին հոսանքում։ Իսկ երբ այդ մասում կառուցվեց խոշոր ջրամբար և հիդրոկայան, ապա այդտեղ ստեղծվեց նաև քաղաք՝ նրանց վրա էլ տարածվեց Մինգեշառը անունը։

ՄԻՆԳԵԼԻԱ. — Աշխարհագրական մարզ Վրաստանում։ Այդպիս է կոչվել ի պատիվ Էգրոսի, որը ըստ ավանդության եղել է Քարթլոսի՝ վրացիների նախահոր եղբայրը։
ՄԻՆԴԱՆԱՌ. — Կղզի Ֆիլիպիններում։ Մալայերեն նշանակում է «ծովափնյա երկիր»։

ՄԻՆԵՍՈՒՏԱ. — ԱՄՆ-ի նահանգներից մեկը։ Հնդկերեն լեզվից է և նշանակում է «երկնագույն կապույտ ջուր»։ Այդպիս է կոչվել, որովհետև նահանգը գտնվում է Միսսիսիպի գետի ակունքներում։ որտեղ ջուրը մաքուր է, կապույտ երանգավորումով։

ՄԻՆՈՐԿԱ. — Բալեարյան կղզիներից մեկը (Միջերկրական ծովում)։ Լատիներեն մինոր՝ «փոքր» բառից։ Այդպիս է

կոչվել փոքրության պատճառով (Հարեւան Մայորկա կղզու համեմատությամբ):

Մինչև. — Բելոռուսական ՍՍՀ-ի մայրաքաղաքը: Տարեգրերում նա անվանվում է Մենսկ: Անունը առաջացել է ուստերեն մենքու «փոխանակել» բառից: Հետեւապես, Մինսկ նշանակում է փոխանակային, առևտրական քաղաք: Դա պայմանավորված էր քաղաքի դիրքով: Նրա վրայով էր անցնում «Վարյագներից Հունաստան» տանող ճանապարհը:

ՄիջիդԱՆ. — Լիճ Հյուսիսային Ամերիկայում, Մեծ լճերի սիստեմում: Անվանումը հնդկերեն լեզվից է, միշտու՝ «մեծ» և գան՝ «լիճ»: Հայտնաբերվել է 1634 թվականին Յան Նիկոլեի կողմից:

ՄիջԱԳԵՏՔ. — Իրաքի դասական անունն է: Այդպես է կոչվել երկու՝ Եփրատ և Տիգրիս գետերի միջև գտնվելու պատճառով: Հայերեն միջագետք բառը հունարեն «մեսոպոտամիայի» թարգմանությունն է, որը և ընդունված է եվրոպական բոլոր լեզուներում: Հնում, 3—4-րդ դարերում մեր թվականությունից առաջ, Միջագետքում է գտնվել Շումերական պետությունը:

ՄիջԱԳԵՏՔ ՀԱՅՈՅ. — Երկիր պատմական Հայաստանում: Այսպես է կոչվում Միջագետքի Հյուսիսային հատվածը: Մինչև մ. թ. 37 թվականը կազմում էր Մեծ Հայքի մի մասը: Գլխավոր քաղաքներից էր Ամիդը (այժմ Դիարբեքիր): 37 թվականից անջատվեց Մեծ Հայքից, դառնալով կովախնձոր Հոռմի և Իրանի միջև:

ՄիջԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ. — Բնկած է Հարավային Եվրոպայի և Հյուսիսային Աֆրիկայի միջև. Ջիբրալթարի նեղուցից մինչև պատմական Լևանտի ափերը: Նա մեր մոլորակի խոշորագույն ծովերից մեկն է: Նրա շուրջը ծաղկեցին Անտիկ աշխարհի քաղաքակրթության կենտրոնները՝ Հոռմը և Հունաստանը: Զնայած այդ ժամանակվա մեծ մտածողները գիտեին, որ Երկիրը գնդաձև է, բայց Հին Հույնների հայտնի աշխարհը, կազմում էր մեր մոլորակի

Համեմատաբար փոքր մասը: Նրանց թվում էր, թե այն տարածությունը, որն ի վիճակի է ընդգրկել իրենց մտահորիզոնը, հանդիսանուած է ամբողջ աշխարհը: Հոմերոսի աշխարհը սահմանափակված էր Հովնաստանի և Փոքր Ասիայի Միջերկրական ծովին հարող մասերով: Հետագայում միայն այդ սահմանները մեծացան և հասան Հերկովեսյան սյուներ, ներկայիս Ջիբրալթար նեղուցին: Բավական է նշել, որ նրանք գիտեին միայն երեք աշխարհամաս, այն է՝ Եվրոպա, Ասիա և Կիրիա (այսպես էին անվանում այն ժամանակ Աֆրիկային): Բնական է, որ դա պետք է առիթ տար աշխարհագրական գգալի սխալների և արձագանքեր այսօրվա անվանումներում: Այդպիսին եղավ նաև ներկա Միջերկրական ծովի անվանումը, որը կապված է հին Հույների աշխարհագրական պատկերացման հետ, հույների ճանաչած աշխարհի՝ «երկրի» կենտրոնում գտնվելու հետ: Նրան «Միջերկրական ծով» կոչելը արդարանում է նրա կենտրոնական դիրքով՝ Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի միջև:

Միջին ԱՄԻՍ.— Աշխարհագրական հասկացություն: Ընդգրրկում է ՍՍՀՄ-ի ասիական տերիտորիայի մի մասը՝ Կասպից ծովից մինչև Չինաստան, և Արալո-իրտիշական բարձրություններից մինչև Աֆղանստանի ու Իրանի սահմանները: Միջին Ասիան իր մեջ է ընդգրկում Թուրքմենական, Ուզբեկական, Տաջիկական և Կիրգիզական հանրապետությունները և Ղազախստանի հարավային մասը:

Միջին ԱՐԵՎԵԼՔ.— Երկրների խմբավորում, որի կազմում մտնում են իրանը և Աֆղանստանը: «Միջին» բառը ցույց է տալիս այդ երկրների դիրքը Եվրոպայի նկատմամբ: Անգլիական և ամերիկյան գրականության մեջ «Մերձավոր և Միջին Արևելք» հասկացությունները միացվում են մեկ ընդհանուր «Միջին Արևելք» հասկացության մեջ: Ահա դա է պատճառը, որ հաճախ երբ մեր մամուլում տպագրվում են նշված երկրներից

ստացված հաղորդումներ կամ հրապարակվում են այդ երկրների պետական ու հասարակական գործիչների ելույթները, այնտեղ Մերձավոր և Միջին Արևելք հասկացությունները խառնված են լինում: Այնինչ սովետական աշխարհագրության ու դիվանագիտության մեջ որոշակիորեն միմյանցից առանձնացվում են «Մերձավոր Արևելքի» և «Միջին Արևելքի» երկրների խմբավորումները:

ՄԻՍՍԻՍԻՊԻ. — Գետ ԱՄՆ-ում: Հայտնաբերվել է 1519 թվականին իսպանացի Ա. Պինեդայի կողմից: Միսսիսիպի անունը ունի հնդկական ծագում: Ալգոնկի ցեղի լեզվով միսսիսիպի նշանակում է «Մեծ գետ» կամ «Ջրերի հայր»: Երկու դեպքում էլ Ամերիկայի հնդիկները ցանկացել են ընդգծել գետի հզորությունը, մեծությունը. հայր բառը այստեղ օգտագործվել է «ամենամեծ», «ամենագլխավոր» իմաստով:

ՄԻՍՍՈՒԻԹԻ. — Գետ ԱՄՆ-ում: Միսսիսիպիի աջ վտակը: Անունը գալիս է հնդկերեն լեզվից և նշանակում է «տղմոտ գետ»: Եվրոպացիներին զարմանք պատճառեց, երբ առաջին անգամ տեսան Միսսուրի գետը, որը հիմնականում հոսելով արգավանդ դաշտերով բերում է մեծ քանակությամբ տիղմ: Միսսիսիպին տղմաբերությամբ նմանվում է Նեղոսին:

ՄԻՏՏԱՆԻ. — Հնում պետություն Մերձավոր Արևելքում: Անունը առաջացել է խալերեն միտան՝ «երկիր» բառից:

ՄԻՐՆԻ. — Սովետական գիտահետազոտական բազա Անտարկտիդայում: Այս բնակավայրի տեղը հայտնաբերված է 1958 թվականի փետրվարին, երբ Անտարկտիդայում Միջազգային գեոֆիզիկական տարվա կապակցությամբ կատարվում են հետազոտություններ: «Միրնի» անունը տալով «սովետական գիտահետազոտական բազային» հավերժացրին այն երկրորդ նավի անունը, որով Բելինսգաուզենը և Մ. Պ. Լազարեվ 1821 թվականին հայտնագործեցին Անտարկտիդա մայրցամաքը:

- ՄՅՈՒՆՆԵՐՆ.—** Քաղաք ԳՖՀՀ-ում: Անունը առաջացել է լատիներեն մոնակուս բառից, որը նշանակում է «վանք»: Քաղաքը հիմնադրվել է 962 թվականին:
- ՄՈԳԱԴԻՇՈՒ.**— Սոմալի հանրապետության մայրաքաղաքը: Սոգագիշու անունը արաբական բառակցություն է, որը նշանակում է «շահի նստավայր» («արքայական ոեղիգենցիա»):
- ՄՈԴ ԹԱԳՈՒՀՈՒ.**— Երկիր.— Անտարկտիդա ցամաքի մաս: Հայտնաբերվեց 1930 թվականին նորվեգացիների կողմից և կոչվեց ի պատիվ նորվեգիայի թւղթուն՝ Մոդի:
- ՄՈԶԱՄԲԻԿ.**— Պրոտուգալական գաղութ Արևելյան Աֆրիկայում: Ենթադրվում է, որ անունը առաջացել է Մոզամբիկ (Մոզիմբուա) ծոցի ափին գտնվող բնակավայրից, որը նշանակում է «Հիանալի ապաստան»: Այդպես է կոչվել իր հարմար տեղադրված նավահանգստի համար: Հետագայում այդ բնակավայրի անունը տարածվեց երկրի վրա:
- ՄՈԶԴՈՒԿ.**— Քաղաք Հյուսիսային Կովկասում: Զերքեղերեն մես՝ «անտառ» և դոկ՝ «խուզ»: Անանցանելի անտառի իմաստով: Քաղաքը հիմնադրվել է 1763 թվականին: Իր ժամանակին Հյուսիսային Կովկասի հայաշատ քաղաքներից մեկն էր:
- ՄՈԶԵԼ.**— Հոենոսի վտակ: Անունը առաջացել է Մյող (Մասս) գետի անվան փոքրացրած՝ Մոզել ձևից և նշանակում է Փոքր Մյող:
- ՄՈՂԴԱՎԻԱՆ.**— Սովետական հանրապետություն: Անունը առաջացել է Մողավա գետից: Իսկ գետը այդպես է կոչվել գակերի մոլովեն ցեղի անունով:
- ՄՈՂՈՒՔՅԱՆ ԿՂՋԻՆԵՐԸ.**— Ինգոնեղիայում (Մալայան արշիպելագում): Գտնվում են Սուլավեսիի և Արևմտյան Խրիանի միջև: Անվանումը մալայական մոլու բառից է, որը նշանակում է «ամենագլխավոր»: Կղջիները հայտնի էին նաև «Համեմունքի կղջիներ» անվան տակ:
- ՄՈՆԱԿՈՒ.**— Փոքր պետություն Միջերկրական ծովի ափին, որը երեք կողմից շրջապատված է ցամաքով, իսկ մի

կողմը Միջերկրական ծովով։ Մեր թվականությունից
մոտ 9 դար առաջ փյունիկյան վաճառականները Մո-
նակոյի տեղում հիմնել են ամրություն։ Քրիստոնեա-
կան շրջանում այդ տեղում կառուցվել է վանք, որը և
իր անունն է տվել քաղաք-պետությանը։ Լատիներենում
էլ մոնակուա նշանակում է «վանք»։ Հետագայում՝ իտա-
լական ձև ստանալով գարձել է Մոնակո։

Մոնակոն շատ կապված է Ֆրանսիայի հետ. օրի-
նակ, Փինանսական, արտաքին քաղաքականության
հարցերում և այլն։

Պետությունը բաղկացած է երեք թաղամասերից,
Մոնակո անունը փաստորեն կրում է զլխավոր թաղա-
մասը, ուր գտնվում են իշխանի պալատը, թանգարանը,
Մոնտե-Կարլոն (Կաղինո) և Կոնդամինը։ Մոնտե-Կար-
լոյում է գտնվում Եվրոպայի ամենահզոր ռազիոկա-
յանը։

ՄՈՆԲԼԱՆ.— Լեռնային զանգված Սավոյան Ալպերում։ Ամե-
նաբարձր գագաթն Ալպերում և Արևմտյան Եվրոպայում
(4810 մ)։ Ֆրանսերեն մոտ՝ «լեռ» և բլան՝ «սպիտակ»։
Այդպես է կոչվում գագաթի հավերժական ձյան ծած-
կույթի և սառուցի պատճառով։

ՄՈՆԴՈԼԻԱ (ՄԺՀ).— Պետություն Կենտրոնական Ասիայում։
Այդպես է կոչվում մոնղոլ ժողովրդի անունից։ Մոնղո-
լերեն մոնգ՝ «քաջ» կամ «կտրիճ» բարից։ Էթնոնիմը
ծագել է միջին դարերում մոնղոլների կողմից ընդար-
ձակ կայսրություն ստեղծելու, նրանց տիրապետության
ընդարձակման կապակցությամբ։

ՄՈՆՉԵ-ՏՈՒՆԴՐԱ.— Լեռնային զանգված Կոլա թերակղզում։
Անունը սաամերեն նշանակում է «գեղեցիկ տունդրա»։

ՄՈՆՏԵՎԻԴԵՈ.— Ուրուգվայի մայրաքաղաքը։ Ստուգաբանու-
թյունը իսպաներեն մոնտե՝ «լեռ» և վիդեո՝ «տեսնում
եմ» բառերից։ Մոնտեվիդեոյի անվան առաջացումը
վերագրում են Մագելանին։ Եթե 1520 թվականին նա
խաբիսին է ձգում ներկա Լա-Պլատայի ափերի մոտ,
ապա նրա առաջ բացվում է մի ընդարձակ տարածու-

թյուն՝ որի վրա իշխում էր մի սար: Եվ ասում է. «մոն-
տե վիդեո» այսինքն «տեսնում եմ լեռ»: Տասնութիւնորդ
դարի սկզբին այստեղ քաղաք հիմնեցին, որի շրջակա
հարթության վրա, իրոք, իշխում է Մագելանի տեսած
սարը: Եվ ծովագնացի ավանդական արտահայտու-
թյունն էլ դարձավ քաղաքի անունը:

ՄՈՆԹՈՎԻԱ. — Լիբերիայի մայրաքաղաքը: Այդպես է կոչվել
ի պատիվ ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջեմս Մոնրոյի (1816—
1824 թթ.): Քաղաքը հիմնադրվել է 1824 թվականին:

ՄՈՆԹԵԱԼ. — Քաղաք Կանադայում: Գտնվում է զրային կարե-
վոր հանգուցակետում՝ այնտեղ, որտեղ Օտտավա գետը
թափում է Սուրբ Լավրենտիոս գետի մեջ և Հուդզոնի
միջոցով կապված է Նյու-Յորքի հետ: Մոնթեալը հիմ-
նադրվել է 1535 թվականին ֆրանսիացիների կողմից,
իսկ անվանումը նշանակում է «Արքայական սար»
(Մոն` լեռ) և ույալ՝ «արքայական»): Նկատի է ունեց-
վել քաղաքի կենտրոնում եղած ոչ մեծ լեռը:

ՄՈՍԿՎԱ. — ՍՍՀՄ-ի մայրաքաղաքը: Այս անվան առաջաց-
ման կապակցությամբ կան մի շարք տեսակետներ,
որոնցից առավել ընդունվածը հետևյալն է. Մոսկվա
անունը կազմված է մոսկ և կով բառերի միացումից:
Հին սլավոներում «մոսկ» մասնիկը ունեցել է քարի
խմաստ, իսկ «կով» մասնիկը պատսպարվելու, բերդի
իմաստով: Այսինքն «քարե բերդ»: Ենթադրվում է նաև,
որ «մոսկով» անունը, ինչպես որ հնչել է սկզբում, տըր-
վել է քարով հարուստ տեղի: Հետագայում այդպես է
կոչվել այդտեղ հիմնադրված քաղաքը: Մտուցաբանու-
թյուններից մեկն էլ կապվում է հին ֆիննական երկու
բառերի զուգակցման հետ: Դրանք են մոսկ և վա,
որը նշանակում է «եղան անցում»: Ի վերջո քաղաքը իր
անունը ստացել է գետից, այնպես որ ստուգաբանու-
թյան փորձերը վերաբերում են ավելի շատ գետին:

ՄՈՍԿՎԱ. — Լեռնաշղթա Տիբեթում, որը հայտնաբերել է ան-
վանի ոուս ճանապարհորդ Ն. Մ. Պրժեալովին: Լեռնա-
շղթայի գագաթներից մեկն էլ կոչել է Կրեմլ:

ՄՈՍՈՒԻՆ. — Քաղաք իրաքում: Անունը առաջացել է արաբերեն՝
մոսուլ՝ այսինքն «կապ» բառից: Նկատի է ունեցվել
Տիգրիսի վրա եղած կամուրջը, որը կապել է միմյանց
Տիգրիսի երկու ափերը:

ՄՈՐԱՎԻԱՆ. — Պատմական մարդ Զեխոսլովակիայում: Անունը
ստացել է Մորավա գետից: Իսկ վերջինիս ստուգա-
բանությունն էլ կապված է սլավոնական «մորե» բառի
հետ, որը նշանակում է «ծով» կամ «ջուր»:

ՄՈՐԴՈՎԻԱՆ. — Մորդովական ինքնավար հանրապետություն
ՌՄՖՍՀ-ի սահմաններում: Այդպես է կոչվել մորդվա՝
ֆիննո-ուգրական լեզվախմբին պատկանող ժողովրդի
անունով:

ՄՈՐԵԱՆ. — Լեռնային զանգված Կենտրոնական Փրանսիական
զանգվածի հյուսիսում: Կելտերեն նշանակում է «Աև
լեռ»: Այսպես է կոչվել այն խիտ անտառների պատճա-
ռվ, որոնք ծածկում են նրան:

ՄՈՏԱՆ. — Գետ, որը թափվում է Իլմեն լիճը: Անունը ֆիննե-
րին մուստա բառից է, որը նշանակում է «սև»: Այդպես է
կոչվում մութ թվացող գույնի պատճառով:

ՄՑԽԵԹԱՆ. — Պատմական իբերիայի (Վրաստան) մայրաքա-
ղաքը: Այդպես է կոչվել մեսիս կամ մուշի ցեղի անու-
նից կամ ձիետա՝ «բերդ» բառից:

ՄՈՒԶԱԳ-ԱԹԱՆ. — Լեռնային զանգված Արևմտյան Չինաստա-
նում (Պամիրի արևելյան ծայրամասում): Անունը նշա-
նակում է «Սաոցալեռնային հայր»: Ամենադժվարա-
մատչելի գագաթը ունի 7546 մետր բարձրություն: Չնա-
յած այս լեռը չի համարվում ամենաբարձրը՝ աշխար-
հում, բայց նրա գագաթի նվաճումը այնքան էլ հեշտ չի
եղել:

ՄՈՒՋ. — Քաղաք Արևմտյան Հայաստանի պատմական Տարոն
գավառում: Տարոնը մտնում էր Տուրուբերան նահանգի
կաղմում և մեր պատմության մեջ դրա համար էլ Տու-

ըուբերանը ավելի ծանոթ էր Տարոն անունով, որի կենտրոնն էր Մուշը: Վերջինս եղել է մեր բանահյուսության և գիցաբանության օրրաններից մեկը: Մուշի անվան առաջացման մասին հայ ժողովուրդն ունի ավանդական հենքով և բանաստեղծական ոգով ստեղծված գեղեցիկ ստուգաբանություն: Հստ ավանդության երր Աստղիկը՝ հայոց գեղեցկության դիցուհին, դուրս է եկել Մեղրագետում լողանալու, ապա երիտասարդները բլուրների վրա թաքնված կամեցել են հիանալ նրանով: Բայց ամոթխած դիցուհին, պարկեշտության տիպարը՝ Աստղիկը, հրաշքով ինքն իրեն պատում է մշուշով: Այստեղից էլ Մուշի անվանման ստուգաբանությունը:

Տարոնի մշուշապատ լեռների կապակցությամբ ժողովրդական բանահյուսությունում կա հետևյալը՝

«Մշուշապատ անուշ է,
իր սարն ու ձոր մշուշ է»:

Ավանդությունը պատմում է, որ Աստղիկը լողանալու էր դուրս գալիս Նավասարդին, այսինքն օգոստոս ամսին, որը զուգադիպում էր իրեն նվիրված տոնին: Այդ ժամանակ քրմերը տաճարներում աղոթում և զուր էին ցանում ժողովրդի վրա: Այստեղից էլ ավանդաբար մեզ է հասել Վարդավառի տոնին իրար վրա զուր շաղ տալու սովորությունը:

ՄՈՒՐԱԴ. — Գետ Արևմտյան Հայաստանում: Պատմական Հայաստանում հայտնի էր Արածանի անունով, որը թուրքերը փոխեցին և կոչեցին ի պատիվ թուրքական սովթան Մուրադ I-ի (թագավորել է 1360—1389 թթ.):

ՄՈՒՐՄԱՆՍԿ. — Նավահանգիստ Բարենցի ծովի ափին: Համանուն մարզի կենտրոն: Անվանման առաջացումը բացատրվում է մի քանի կերպ: Առաջինը համարում են նորման բառի ձևափոխումը, նկատի ունենալով նորման ծովահեններին: Երկրորդ մեկնաբանումը ֆիններեն մուր՝ «ծով» և մա՝ «ցամաք» բառերից: Ծովափնյա երկիր իմաստով:

ՄՈՒԻՐՈՄ. — Քաղաք ՌՍՖՍՀ-ում, Վլադիմիրի մարզում։ Անունը առաջացել է ուգրոֆիննական ժողովրդի անունից, որը իր ժամանակին բնակվել է այս վայրում։
ՄՈՒԻՐԵՅ. — Գետ Ավստրալիայում։ Այդպիս է կոչվում ի պատճիվ անգլիական գաղութների մինհստր Զորջ Մուրրեյի գետը հայտնաբերվել է 1829 թվականին։

3

ՑԱԲԼՈՆՈՎՅԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱՆ. — Անդրբայկալում, Չիտայի մարզում։ Բուրյաթերեն յաբալգանի դաբա կամ յաբլենի դաբա՝ «լեռնանցք» խոսքից։ Հնչումով մոտ է ոռոսական «յաբլոնյա» այսինքն, խնձորենի բառին։ Դրա համար էլ արտասանվել է ոռոսական եղանակով։ Այստեղից էլ լեռնաշղթայի անվան առաջացումը։

ՑԱԼԹԱՆ. — Ամառանոցային քաղաք Ղրիմում։ Հունարեն յալիթա բառից, որը նշանակում է «ափ» կամ «ծովափ» ցամաք։

ՑԱԿՈՒՏԻՒՆ. — Խնքնավար սովետական հանրապետություն ՌՍՖՍՀ-ի կազմում։ Անունը ոռոսներին է անցել էվենկների լեզվից։ Էվենկերեն եկո, եկոտ, բառից, որը նշանակում է «օտար» կամ «եկվոր»։ Այս մականունն էլ ժամանակի ընթացքում դարձավ նաև ժողովրդի անուն։ Այդպիս էլ անվանեցին ոռոսները յակուտներին սկսած 1632 թվականից։ Այսինքն նրանց Արևելյան Սիրիրում հանդես գալու ժամանակաշրջանից։

ՑԱԿՈՒՏԻՍԿ. — Ցակուտիայի մայրաքաղաքը։ Ծագում է յակուտ ժողովրդի անունից, ավելացրած ոռոսներեն «սկ» վերջածանցը, որը տարածված է ոռոսական տեղանունների ձևավորման մեջ և ունի «քաղաքի» իմաստ։

ՑԱՄԱԼ. — Խոշոր թերակղզի Կարայի ծովում։ Նենեցերեն յա «երկիր» և մալ՝ «վերջ» բառերի միացումից։ Այսինքն

«Երկրի վերջը»: Նենեցների պատկերացմամբ Յամալով
էլ վերջանում էր աշխարհը:

ՅԱՄԱՅԿԱ. — Կղզի Վեստ Խնդիայում, Մեծ անտիլյան խըմ-
բում: Կարիբերեն «աղբյուրների կղզի» բառից՝ լավ
աղբյուրների գոյության պատճառով:

ՅԱՅԼԱ. — Հարթ կատարներով լեռներ Դրիմում: Թաթարնե-
րից մնացած տեղանուն, որը նշանակում է զովասուն
լեռնային արտատեղի:

ՅԱՆ-ՄԱՅԵՆ. — Կղզի Ատլանտյան օվկիանոսի հյուսիսում,
Խոլանդիայի և Գրենլանդիայի միջև: Այդպես է կոչվել
ի պատիվ հոլանդացի ծովագնաց Յան Մայենի, որը
1611 թվականին հայտնաբերեց կղզին: Զնայած դրանից
չորս տարի առաջ նրա ափերին մոտեցավ անգլիացի
ծովագնաց Հենրի Հուդզոնը, բայց դա մոռացության
տրվեց:

ՅԱՆՑՋԻ. — Խոշոր գետ Չինաստանում: Անվանման հիմքում
ընկած է Յանչժոու քաղաքի անունը, որը ձևափոխվել
է Յանցզիի: Հայտնի է նաև Յանցզիցզյան անունով:
Յզյանը չինարեն հարավային բարբառով նշանակում է
«գետ»: Յանցզի անունով նա հայտնի է միայն իր ստո-
րին հոսանքում, իսկ ամբողջապես կոչվում է նաև
Չանցզյան, որը նշանակում է «Մեծ գետ»: Եվրոպական
գրականության մեջ հայտնի է Կապույտ գետ անվան
տակ, որը Չինաստանում տարածված անուն չի:

ՅԱՍՍԻ. — Քաղաք Ռումինիայում: Կոչվում է Յասի ցեղի
անունով:

ՅԱՐՔԵՆԴ. — Քաղաք Արևմտյան Չինաստանում: Անվանումը
իրանական լեզվից է և նշանակում է «խաղաղ քաղաք»
կամ «սիրած անձի բնակավայր»:

ՅԱՐՈՍԼԱՎԻ. — Քաղաք ՌՄՖՍՀ-ում, Վոլգայի վրա: Հիմնա-
գըրվել է Կիևի մեծ իշխան Յարոսլավ I-ի կողմից 978
թվականին:

ՅԱՌԻՆԴԵ. — Կամերուն պետության մայրաքաղաքը: Կոչվել է
էվոնդե կամ յառնդե ցեղի անունով, որը բնակվել է
նրա շրջակայքում, նիոնդե գետի միջին հոսանքում:

ՅԱՅՖԱՍ. — Քաղաք իսրայելում: Եբրայերեն «փայլող», «երեւացող» բառից: Յաֆֆան 1950 թվականին մտցված է Տեղ-Ավիվի կազմի մեջ:

ՅԵՆԵ. — Քաղաք ԳԴՀ-ում: Հիմնադրվել է այն եկեղեցու շուրջը, որը նվիրված է սուրբ Յոհանին կամ Հովհաննեսին:

ՅԵԼՈՈՒԻՍՈՒՆ. — Գետ և արգելավայր ԱՄՆ-ում: Գետը հանդիսանում է Միսսուրիի աջ վտակը: Անվանումը առաջացել է անգլերեն լեռու «գեղին» և ստուն «քար» բառերի զուգակցումից: Այսինքն «գեղնաքար»: Գետը իր վերին հոսանքում անցնում է մուգ-դեղնավուն ապարների շրջանով և այդտեղից էլ՝ նրա անունը: Այդ մասում ստեղծված ազգային արգելավայրը կոչվել է գետի անունով:

ՅՈՒԹ. — Թերակղզի Ավստրալիայում: Հայտնաբերվել է 1802 թվականին: Այդպես կոչվեց ի պատիվ լորդ Յորքի: Նա ծովակալության նախագահ էր և համարվում էր ծովային արշավախմբի հովանավորողը (1764—1820 թթ.):

ՅՈՒԹՈՒՍԿԻ ՇԱՐ. — Նեղուց Վայգաչ կղզու և Եվրոպիա ցամաքի միջև: Միացնում է Բարենցի և Կարայի ծովերը: Անունը առաջացել է «Յուգրա» բառից, որը ոռւսների կողմից անցյալում տրվում էր Պելորայի ստորին մասի ցածրություններին, մինչև Օբի հարթավայրը: Յուգրա բառը կոմի լեզվից է և նշանակում է «անմշակ», «վայրի»: Այդպես էին կոչում կոմիները իրենցից արեվելք բնակվող մանսի (վոգով), խանտի (օստյակ), նենց (սամոնդ) հյուսիսային ժողովուրդներին: Այս մականունը ոռւսների կողմից ընկալվեց իրենց այդ ժողովուրդներին տրվող հատուկ անուն՝ և տարածվեց նրանց երկրի վրա: Հետո այն տարածվեց նեղուցի վրա, որը ողողում է Յուգրայի ափերը:

ՅՈՒԿԱՏԱՆ. — Թերակղզի Կենտրոնական Ամերիկայի արևելյան ափին, որը բաժանում է Մեքսիկական ծոցի և Կա-

րիբյան ծովի ջրերը: Յուկատանի մեծ մասը պատկաւ նում է Մեքսիկային, մի փոքր մասը՝ Գվատեմալաւ պետությանը, իսկ արևելյան հատվածը համարյա աժ-բողջապես Բրիտանական տիրապետություն է: Այդ թերակղզու անունը ունի բավականին հետաքրքիր ծագում: Երբ 1517 թվականին իսպանացիները առաջին անգամ մոտենում են այդ թերակղզու ափերին, նրանք իրենց հանդիպած բնիկներին հարցնում են այդ երկրի անունը: Վերջիններս շասկանալով իսպանացիների լեզուն, պատասխանում են «Յուկատան» կամ «տեկտատան», որը բառացի նշանակում է, «Ճեղ չեմ հասկանում»: Եվ, որովհետեւ իսպանացիներն էլ բնիկների լեզուն չէին հասկանում, նրանց թվաց թե դա էլ հենց այդ երկրի անվանումն է: Այդտեղից էլ առաջացավ թերակղզու Յուկատան անունը:

ՅՈՒԿՈՆ.— Գետ Կանադայում և Ալյասկայում: Հնդկական ատարասկացեղի յուխան՝ «մեծ գետ» բառի ձևափոխումն է:

ՅՈՒԽՖՐԱՌՈՒԻ.— Լեռ Շվեյցարիայում, Բեռնյան Ալպերում (4167 մ): Գերմաներեն յունգ՝ «երիտասարդ» և ֆրառ՝ «կին» բառերից, թերևս սպիտակ հագնված ջահել կնոջ նմանվելու պատճառով:

ՅՈՒՏԱՆԴԻԱԼ.— Թերակղզի Դանիայում: Յուտ գոթական ցեղի անունից է, ավելացրած լանգ՝ «երկրի» բառը:

ՅՈՒՐԱԼ.— Լեռներ Ֆրանսիայում, կելտերեն յուրիս՝ «անտառ» բառից:

ՅՈՒՐԻԵՎ-ՊՈԼՍԿԻ.— Քաղաք ՌՄՖՍՌ-ում, Վլադիմիրի մարզում: Հիմնադրվել է սուլդալյան իշխան Յուրի Դոլգորուկիի կողմից: Քանի որ իր ժամանակին Ռուսաստանում Յուրիկ կոչվում էր նաև ներկա Տարտու քաղաքը, ասկա վերջինից տարբերելու համար ավելացվեց «ալուկի» մասնիկը: Այսինքն «Դաշտային Յուրիկ»:

ՆԱԳԱՍԱԿԻ.— Նավահանգիստ ճապոնիայում: Ճապոներեն
նշանակում է «երկար հրվանդան»:

ՆԱԳՈՒԻՐ.— Քաղաք Հնդկաստանում: Անվան առաջացումը
սանսկրիտերեն լեզվից է և նշանակում է «Օձի քաղաք»:

ՆԱԻՐԻ.— Երկիր Հայկական բարձրավանդակում, Ուրմիա և
Վանա լճի ավազանում, վերջինիս հյուսիս և հյուսիս-
արևմտյան մասում: Հատկապես Արածանիի և Տիգրիսի
ավազաններին հարող մասերում: Նաիրի անվան սառու-
գաբանության աղբյուրը ասորական արձանագրու-
թյուններն են, ըստ որոնց նաիրի բառացի նշանակում
է «գետերի երկիր»: Այդ անունով նրանք կոչում էին
իրենց հայրենիքից՝ Միջագետքից ընդհանրապես հյու-
սիս ընկած երկրին, որտեղից սկիզբ էին առնում իրենց
կյանք տվող եփրատն ու Տիգրիսը: Նաիրի անունով կո-
չում էին նաև Հայկական բարձրավանդակի երկու խո-
շոր լճերը: Վանա լիճը կոչվում էր «Նաիրիի վերին
ծով» իսկ Ուրմիա լիճը կոչվում էր «Նաիրիի ներքին
ծով»: Դա հենց ապացույցն է Նաիրիի ընդարձակու-
թյան: Նաիրիին հաջորդել է Ուրարտուն: Նաիրյան ցե-
ղերի միավորումը կատարվել է մեր թվականությունից
տասնմեկ դար առաջ:

ՆԱՅՐՈՒԲԻ.— Կենիայի մայրաքաղաքը: Գտնվում է համանուն
գետի ափին: Նեգրական սուախելի լեզվով նայրոբի
նշանակում է «մաքուր աղբյուր»:

ՆԱԼԶԻԿ.— Կաբարդինա-Բալկարական ինքնավար հանրապե-
տության մայրաքաղաքը: Անվան բացատրությունը
կապվում է չերքեզերեն «Անալչիջ» բառի հետ: Մի գեպ-
քում բացատրվում է «պայտ պոկող» (ցեխոտ ճանա-
պարհով անցնելու պատճառով), իսկ մյուս դեպքում՝
ակնարկում է քաղաքի հարավում ընկած պայտաձև
բարձունքները:

ՆԱԽԻԶԵՎԱՆ.—Քաղաք Ադրբեջանական ՍՍՀ-ում: Նախիզեւան
անվան ստուգաբանությունը (թերևս ավելի աներկրա)՝
կապվում է Տիգրան մեծ արքայազնի հետ, որը մեր
թվարկությունից վեց դար առաջ կռվելով Մարաց
Աժգահակ թագավորի հետ, հաղթում է նրան: Մարաց
տանից բերած գաղթականությունը բնակեցնում է ներ-
կա Նախիզեւանի տեղում: Հին քաղաքի փլատակները
տարածվում են ներկա քաղաքի հարավային մասում:
Եվ քաղաքի սկզբնական անվանումն էլ եղել է Նախճա-
վան. իսկ «Ճավան» կամ «Ճավան» բառը մարական
ծագում ունի և գործածվում է մի քանի իմաստով՝ աշ-
քի, դրախտի, գեղեցկության, հրաշալիքի իմաստով:
Այդ անունը տրվեց Տիգրանի օրոք՝ ընդգծելով քաղաքի
գեղեցկադիր դիրքը, որը գտնվում է Արաքսից ոչ հե-
ռու, մի գեղատեսիլ վայրում:

Ինչ վերաբերում է «Նախ» մակղիրին, ապա այն
սկզբում նշանակել է «Ճիշտ», «արդարեւ»: Այսպիսով,
Նախճավան նշանակել է արդարեւ դրախտ, արդարեւ ակն
(աշք), արդարեւ գեղեցկություն:

Եվ իսկապես, Նախիզեւանի աշխարհագրական գեղա-
տեսիլ դիրքը, այգիների ու բուրաստանների առատու-
թյունը արդարացնում են ժամանակին նրան այդ անու-
նը տալը:

Անցյալում նա հայտնի էր միայն Նախճավան-Նախ-
ճավան անունով: Ռուսները անվանեցին «Նախիչեւան»: Այդ անունով էլ նա ավելի շատ հայտնի դարձավ: Հա-
յերը գործածում էին ավելի շատ Նախիչեւան ձևը, որի
ստուգաբանությունը կապում էին զրհեղեղի առասպելի
հետ: Երբ նոյ նահապետը դուրս է գալիս տապա-
նից և Մասիսից իջնում է Արարատյան դաշտ, կանգ է
առնում ներկա քաղաքի տեղում՝ այն դարձնելով
իրեն համար «առաջին իջևան», որտեղից և Նախի-
չեւան անվանումը:

Մի այլ մեկնաբանումով Նախիչեւան անունը առա-
ջացել է «նակսուանա» անվանումից, որպիսի անունով

բնակավայր է եղել նաև Վանա լճից հարավ: Այդ անունը, ենթադրվում է, որ Արարատյան դաշտ է անցել այդ կողմից եկող ժողովուրդների միջոցով:

ՆԱԽՈԴԿԱՆ.— Մովախորշ Պրիմորիեի երկրամասում, որտեղ այժմ գտնվում է Համանուն նավահանգիստը և քաղաքը: Անվան առաջացումը ունի հետևյալ պատմությունը: Երբ 1859 թվականին ուստական «Ամերիկա» ռազմանավը ընկնում է ծովային փոթորկի և ալեկոծության մեջ, հենց այդ պահին քամին նավին դուրս է բերում մի շատ հարմար ծովածոց, որին նավաստիները անվանեցին Նախոդկա, այսինքն «գյուտ», «գտած բան»:

ՆԱԽԻՆ.— Քաղաք Հարավային Չինաստանում: Չինարեն նաև «Հարավ» և կին՝ «մայրաքաղաք» բառերից: Այսինքն «Հարավային մայրաքաղաք»: Հյուսիսային մայրաքաղաքը համարվում է Պեկինը:

ՆԱՆՇԱՆ.— Լեռներ Կենտրոնական Չինաստանում: Անունը կապված է չինարեն նաև՝ «Հարավ» և շան՝ «լեռ» բառերից: Լեռները հայտնի են նաև Յելլանշան անունով:

ՆԱՆՏ.— Նավահանգիստ Արևմտյան Ֆրանսիայում: Այդպես է կոչվել գալլական նամետե ցեղի անունից:

ՆԱՏԱԼ.— Մարզ Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում: Լատիներեն նատալին՝ «ծնունդ» բառից: Այդպես կոչվեց ծովափը, որը հայտնաբերվեց Վասկո դա Գամայի կողմից 1497 թ. դեկտեմբերի 25-ին: Այդ օրը կաթոլիկ եկեղեցին նշում է Քրիստոսի ծննդյան տոնակատարությունը:

ՆԱՐԻՄ.— Լեռնաշղթա Տոմսկի մարզում: Խանտերեն՝ ներիմ. նարիմ նշանակում է «ճաճային երկիր»: Ի դեպ, Արևմտյան Սիբիրում նարիմ անունով հայտնի է նաև մի ընդարձակ անտառապատ և ճաճճապատ տարածություն:

ՆԱՐՅԱՆ-ՄԱՐ.— Նենեցյան ազգային օկրուգի վարչական կենտրոն: Նենեցերեն նարյան՝ «կարմիր» և մար՝ «քաղաք» բառերի զուգակցումից:

ՆԱՐՈԴՆԱՅԱՑԱ. — Ուրալյան լեռների ամենաբարձր գագաթը՝ (1894 մ): Իր անունը ստացել է Նարոդ գետից, որը սկիզբ է առնում լեռան մոտերփից:

ՆԱՐՎԱՅ. — Քաղաք Էստոնիայում: Անունը ստացել է Նարվա գետից. վեպսի լեզվով նարվախնե նշանակում է «սահանք», «ջրվեժ»:

ՆԵՐՊՈԼ. — Քաղաք Իտալիայում: Անունը հունարեն լեզվից է և կազմված է երկու բառի միացումից: Նեռ՝ «նոր» և պոլիս՝ «քաղաք» բառերի զուգակցումից: Այսինքն՝ «Նոր քաղաք»: Այս անունը մեզ հասցնում է պատմական այն ժամանակաշրջանը, երբ հույները գաղութացրին Հարավային Իտալիան և հիմնեցին այս քաղաքը: Իտալացիները քաղաքին անվանում են Նապոլի:

ՆԵԲՐԱՍԿԱ. — ԱՄՆ-ի նահանգներից մեկը: Նա իր անունը ստացել է համանուն գետից. իսկ ներրասկա նշանակում է «Հարթ ջուր»:

ՆԵԼՍՈՆ. — Գետ Կանադայում: Հայտնաբերվել է 1612 թվականին անգլիացի ծովագնաց Թոմմաս Բուտտանի կողմից և այդպես է անվանվել ի պատիվ նրա ուղեկից նավապետ Նելսոնի:

ՆԵՂՈՍ. — Գետ Աֆրիկայում: Հին եգիպտերեն նահալ՝ «ջուր» գետի իմաստով: Հույները այն ընկալեցին Նիլ: Այդ բառին էլ ավելացրել են «ոս» մասնիկը և դարձրել Նիլոս: Հունարեն «լ» տառը հայերենում փոխվում է «ղ»-ի, «ի» տառը՝ «հ»-ի՝ ստացվում է Նեղոս: Ներկայումս Եգիպտոսում նա հայտնի է էլ-բահր կամ ուղղակի Նիլ անունով:

ՆԵՄԱՆ. — Գետ Մերձբալթիկայում: Լիտվերեն Նեմուն՝ «տուն» բառից: Այսինքն սեփական գետ իմաստով. ընդգծվում է լիտվական գետ լինելու հանգամանքը: Ստուգաբանվում է նաև «Խաղաղ գետ»՝ հետօն-համբ, խաղաղ բառից:

ՆԵՊԱԼ. — Պետություն Ասիայում: Նեպալի անվան ստուգաբանությունը լավ հասկանալու համար հիշենք Հիմալայ անվան բացատրությունը, որտեղ ալայ բառը սանսկրի-

տերեն նշանակում է կացարան («Ճյուների կացարան»):
Իսկ նիպ-ալայ (Նեպալ) նշանակում է կացարան լեռ-
ների ստորոտում: Նկատի են ունեցել Հիմալայները.

ՆԵՐԴԻ. — Մարդ Սառույան Արաբիայում: Արաբերեն Նեղդ
բառից, որը նշանակում է «բարձր երկիր»: Համարվում
է Արաբիայի ամենաբնակեցված մասը, որտեղ գտնը-
վում է մայրաքաղաքը՝ Էր-Ռիադը:

ՆԻԱԳԱՐԱ. — Նշանավոր ջրվեժ Հյուսիսային Ամերիկայում՝
էրի և Օնտարիո լճերի միջև: Հնդկական իրոկեզ ցեղի
լեզվից. նշանակում է «ուրոտացող ջուր»: Ջրվեժը
հայտնաբերվել է 1648 թ. ֆրանսիացի Ժ. Բրեքիֆի կող-
մից:

ՆԻԱՄԵՅ. — Նիգեր պետության մայրաքաղաքը: Տեղական
լեզվով նշանակում է ծառը ափին կամ «ափի ծառ»:

ՆԻԳԵՐ. — Գետ Արևմտյան Աֆրիկայում: Իր մեծությամբ Աֆ-
րիկայի երրորդ գետն է: Հոսում է Մալի, Նիգեր և Նիգե-
րիա հանրապետություններով: Անունը ստուգաբանվում
է երկու կերպ: Առաջինը, լատիներեն նիգեր՝ «սև» բա-
ռից, նկատի ունենալով, որ հոսում է սևամորթների
երկրով: Երկրորդը, բերբերական լեզվով ուղղակի «գետ»
բառից: Ավելի հուսալի է երկրորդ մեկնաբանումը:

ՆԻԳԵՐԻԱ. — Պետություն Արևմտյան Աֆրիկայում: Կոչվում է
Նիգեր գետի անունով: Երկար ժամանակ Բրիտանական
տիրապետություն էր: Եվ անգլիացիներն էլ գետի ա-
նունով կոչեցին երկիրը, որի պատմական անունն էր
Սոնգայ: Հաճախ է լսվում Նիգերիայի ժողովրդի ձայնը,
որպեսզի իրենց երկրին վերադարձի իր իսկական՝
Սոնգայ անվանումը:

ՆԻԴԵՌԱՆԴԻԱ. — Պետություն Արևմտյան Եվրոպայում: Այս
երկրի անունը պատմում է նրա բնական պայմանների
մասին: Նիդեռլանդիա անվանումը եթե թարգմանենք
հայերեն, կստացվի «ցածր երկիր»: Իրոք որ տերիտո-
րիայի մեկ երրորդը գտնվում է ծովի մակերեսուցից
ցածր և նրանից պատպանվում է բնակչության կառու-
ցած վիթխարի պատնեշներով: Հիշենք հոլանդական

ասացվածքը «աստված ծովն է ստեղծել, իսկ հոլանդացիները՝ նրա ափերը»։ Երկրի մյուս անունը՝ Հոլանդիա գալիս է երկրի երկու նահանգների՝ Հյուսիսային Հոլանդիա և Հարավային Հոլանդիա անուններից, որոնք մեծ դեր են խաղացել երկրի կյանքում։

ՆԻԿԱՐԱԳՈՒԱ. — Պետություն Կենտրոնական Ամերիկայում։ Տեղական մայա ժողովրդի առաջնորդ՝ Նիկարագուայի անունով։

ՆԻԿՈՍԻԱ. — ՆիկոծիԱ. — Կիպրոս հանրապետության մայրաքաղաքը։ Անվան հիմքում ընկած է հին հունական հաղթանակի աստված «Նիկո»-ի անունը։

ՆԻԿՈԼԱԵՎ. — Քաղաք ՈՒՍՍՀ-ում։ Հիմնադրվել է 1784 թվականին։ Այդպես կոչվեց ի պատիվ «Սուրբ Նիկոլայ» անունը կրող նավի, որը առաջին անգամ այստեղ կառուցվեց և ծով դուրս բերվեց։

ՆԻՆԳԵ. — Քաղաք Միջազգեաքում։ Ասորեստանի մայրաքաղաքը։ Այսպես է կոչվել ի պատիվ Ասորեստանի լեգենդար արքա՝ Նինոսի, որն ըստ ավանդության Շամիրամի ամուսինն էր։ Քաղաքը կործանվել է մեր թվականությունից 7 դար առաջ, Բաբելոնի նարուուղոնոսոր արքայի կողմից։ Ավերակները գտնվում են Տիգրիսի ձախ ափին (*իրաքում*)։

ՆԻՇԱՂՈՒԻԹ. — Քաղաք Պարսկաստանում։ Պարսկերեն նի՛ «շաքարեղեգ» բառից և Շապուհ անունից։ Քաղաքը այսպես է կոչվել ի պատիվ պարսկական արքա Շապուհ, I-ի (241—272 թթ.): Նա այս քաղաքը կառուցել է մի ուրիշ քաղաքի ավերակների վրա, որոնք ծածկված են եղել շաքարեղեգով։

ՆԻՎԱ. — Գետ Մուլմանսկի մարզում։ Թափվում է Սպիտակ ծովը։ Անունը ծագել է ֆիններեն նիվա՝ «արագահոս» բառից։

ՆԻՅՑԱ. — Քաղաք Ֆրանսիայում։ Հունարեն նիկե՝ «հաղթանակ» բառից։ Այդպես է կոչվել ի հիշատակ մասիլիացիների տարած հաղթանակի՝ լիգուրների հանդեպ։

ՆՅԱՍԱ կամ ՆՅԱՆՅԱ. — Լիճ Աֆրիկայում։ Տնդական լեզվով

նյասա նշանակում է լիճ: Հաճախ նյասա բառը կցվում է աֆրիկական մի քանի լճերի անվանը:

ՆՅԱՍԱԼԵՆԴ. — Բրիտանական նախկին գաղութ՝ Աֆրիկայում: Անունը ստացել է Նյասա լճից և անգլերեն լենդ՝ «երկիր» բառից: 1964 թվականի հունիսի 6-ից դարձավ անկախ պետություն՝ Մալավի անունով:

ՆՅՈՒԿԱՍԼI, ՆՅՈՒԹԱՍԼI. — Քաղաք Անգլիայում: Անգլերեն նյու՝ «նոր» և կամ՝ «դղյակ» կամ «ամրոց» բառերի միացումից: Քաղաքը հիմնադրվել է մոտ 1073 թվականին:

ՆՅՈՒԻՐՆԵՑԻԳ. — Քաղաք ԳՖՀ-ում: Հին գերմաներեն նոր՝ «ժայռ» և բերդ՝ «լեռ» բառերից:

ՆՅՈՒԻ-ՅՈՒՐՔ. — Խոշորագույն քաղաք ԱՄՆ-ում: Նյու-Յորքը հիմնադրվել է 1626 թվականին: Նրա կորիզը հանդիսացել է Մանհետան կղզին, որն իր ժամանակին հուանդացիները չնշին գնով գնել էին տեղական հնդիկներից: Հոլանդացիները այդ կղզու վրա հիմնադրեցին մի բնակավայր, անվանելով այն նոր Ամստերդամ: Երեսունութ տարի անց այդ կղզին զավթեցին անգլիացիները: Անգլիայի այն ժամանակվա Կարլոս II թագավորը նոր գաղութը նվիրեց իր եղբօրք՝ Յորքի հերցոգին, ի պատիվ որի քաղաքը վերանվանվեց «Նյու-Յորք» (Նոր Յորք):

ՆՅՈՒՖԱՍԻՆԴԼԵՆԴ. — Կղզի Աստվածայան օվկիանոսում, Կանադայի ափերի մոտ: Նրա անունը անգլերեն լեզվից է, նշանակում է «Նոր գտնված, հայտնաբերված երկիր»: Առաջին անգամ հայտնաբերվել է 10-րդ դարում, նորմանների կողմից: Նյուֆասինդլենդը երկրորդ անգամ հայտնաբերվել է անգլիական ծառայության մեջ գտնվող ճհնովացի Զոն Կաբոտի կողմից 1497 թվականին: 1538 թվականին կղզին միացվեց Անգլիային, որով դարձավ Հյուսիսային Ամերիկայում անգլիական առաջին գաղութը: 1835 թվականին Նյուֆասինդլենդը դարձավ Բրիտանական կայսրության դոմինիոն, սակայն 1933 թվականից սկսած փաստորեն կորցրեց դոմինիո-

նի իր իրավունքը և կառավարվում է անմիջականորեն Մեծ Բրիտանիայի կողմից: Դրա պատճառն այն էր, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով Նյուֆառնդենդը ֆինանսական հակայական դժվարություններ ունենալով ստիպված եղավ դիմելու մետրոպոլիայի օգնությանը: 1949 թվականին անցկացված հանրաքվեի հետևանքով Նյուֆառնդենդը միացվեց Կանադային որպես նրա 10-րդ պրովինցիան:

ՆՈՒ. — Հրվանդան Աֆրիկայի արևմտյան ափին, Հյուսիսային լայնության 26° -ի տակ, Կանարյան կղզիների դիմաց: Հրվանդանը երկար ժամանակ ելքոպացիների կողմից համարվել է աշխարհի հարավային ծայրակետը: Եթե նոր անունը թարգմանենք հայերեն, կստացվի բավական տարօրինակ անուն՝ «չկա» կամ «ոչ»: Այն ժամանակ առանձին ասացվածք կար՝ «Ով որ որոնի հրվանդանը Ոչ, գուցե ետ դառնա կամ գուցե ոչ»:

Հին աշխարհից եկած այս ոչ ճիշտ տեղեկությունները երկար ժամանակ արգելք էին հանդիսանում պորտուգալացիների հարավ գնալուն և խանդարում Աֆրիկայի ափերը հարավից շրջանցելու և Հնդկաստան հասնելու գործին:

ՆՈՎՈՍԻԲԻՐՍԿ. — Քաղաք Սիբիրում: Հիմնադրվել է 1893 թվականին որպես Նովոնիկոլաևսկ, 1925 թվականին վերանվանվեց Նովոսիբիրսկ: Ուսւերեն նովո՝ «նոր» բառի և Սիբիր անվան միացումից: Այսինքն «Սիբիրի նոր քաղաք»:

ՆՈՎՈՐՈՍԻՅԱԿ, ՆՈՎՈՌՈՍԻՅԱԿ. — Քաղաք Հյուսիսային Կովկասում: Հիմնադրվել է 1838 թվականին: Հիմքում ընկած է «Նովորոսսիա» անվանումը: Ուսւները մինչև 18-րդ դարի վերջերը այդպես էին կոչում Ուկրաինային և Կուբանին հարող Սև ծովի մասերը: Նորաստեղծ քաղաքը կոչեցին Նովորոսսիյակ: Այսինքն քաղաք Նովորոսսիայում:

ՆՈՐ ԱՆԳԼԻԱ. — Մի խումբ շտատների միավորում ԱՄՆ-ի Հյուսիս-արևելյան մասում: Ընդգրկում է Մեն, Նյու-

Հեմպշիր, Վերմոնտ, Մասսաչուսետս, Ռոդ-Այլենդ և
Կոնեկտিকուտ նահանգները: Նոր Անգլիա անվանեցին
անգլիացի վերաբնակիչները ի հիշատակ իրենց հայ-
րենիքի՝ Անգլիայի:

ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ.— Ներկայիս Կամո քաղաքը: Հիմնադրվել է
1830 թվականին, երբ 1828—1829 թվականների ռուս-
թուրքական պատերազմից հետո, 1830 թվականին,
կոմս Պասկեիչի հրավերով, Մկրտիչ Արծրունու գլխա-
վորությամբ, մոտ վեց հարյուր հայ ընտանիք Արևմտ-
յան Հայաստանի Բայազետ քաղաքից գաղթեցին այս-
տեղ և նոր բնակավայր հիմնեցին, որը սկզբում կոչում
էին Գավառ կամ Քյավառ: Այս անունով կոչվել է գե-
տը, որի ափին էլ հիմնվեց քաղաքը: Բայց հիդրոնիմը
Գեղարքունի գավառից է: Ժողովուրդը Գեղարքունի Գա-
վառից վերցրեց միայն գավառ բառը, որը ձևափոխվե-
լով Քյավառ դարձավ:

Երբ կազմվեց Երևան նահանգը, ապա Գավառ բնա-
կավայրը դարձավ նրա գավառներից մեկի կենտրոնը և
վերանվանվեց ու կոչվեց Նոր Բայազետ ի հավերժա-
ցումն հայրենի Բայազետի (Հին Բայազետի): Նոր քա-
ղաքը դանդաղ էր աճում: Շատերը աշխատանքի էին
գնում Թիֆլիս, Երևան, Բաքու, Դիլիջան և այլ վայրեր:
1896 թվականի հունվարի 1-ին Նոր Բայազետը ունե-
ցել է 8734 բնակիչ, որից 8551 հայ, 46 քուրդ, 41 հրեա
և 44 ռուս: Նոր Բայազետ պաշտոնական անվան զուգ-
ընթաց հասարակ խոսակցական լեզվում գործածական
էր նաև Քյավառ անունը:

ՆՈՐ-ԳՎԻՆԵԱ.— Կղզի Խաղաղ օվկիանոսում, Օվկիանիայի
Մելանեզիա խմբում: Հայտնաբերվել է տասնվեցերորդ
դարի առաջին կեսին ծովագնաց Օրտիս Ռետեսի կող-
մից, Կղզուն Նոր Գվինեա անունը տրվեց, որովհետեւ
հայտնաբերողները նրա ափերով նավարկելով տեսան
արևադարձին անտառներ ու սեամորթ բնիկներ, որոնք
նրանց հիշեցրեցին Աֆրիկայի արևմտյան ափերը,

որոնք հայտնի են Գվինեա անվամբ։ Դրա համար կը դւզին կոչեցին նոր Գվինեա։

Նոր Գվինեա կղզու արևմտյան մասը, որը կոչվում է Արևմտյան իրիան, մտնում է ինդոնեզիա հանրապետության կազմի մեջ, իսկ արևելյան հատվածը բաժանվում է երկու մասի։ Հարավ-արևելյանը հայտնի է Պապուա ամունով, որը հանդիսանում է Ավստրալիական Միության գաղութը, իսկ Հյուսիս-արևելյան մասը առանձին տերիտորիա է և հանդիսանում է Ավստրալիական Միության խնամակալությունը։

ՆՈՐԴԿԱՊ.— Հրվանդան Մագերյո կղզում է Եվրոպայի ամենահյուսիսային կետը։ Նորվեգերեն նորդ՝ «Հյուսիս» և կապ՝ «Հրվանդան» բառերի միացումից։

ՆՈՐ ԵՐԿԻՐ-ՆՈՎԱՅԱ ԶԵՄԼՅԱ.— Կղզիախումբ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում։ Հիմնականում բաղկացած է երկու խոշոր կղզիներից՝ Հյուսիսային և Հարավային։ Ռուսերեն նովայա՝ «նոր» և գեմլյա՝ «հող», «երկիր» բառերի զուգակցումից։ Այսինքն «նոր հայտնաբերած երկիր»։

ՆՈՎԳՈՐԾՈՒ.— Քաղաք ՌՍՖՌ-ում։ Ռուսերեն նովի՝ «նոր» և գորոդ՝ «քաղաք» բառերի միացումից։ Այսինքն նոր քաղաք։ Զնայած Ռուսաստանի հնագույն քաղաքներից է։ Հիմնադրվել է իններորդ դարում։

ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ.— Խաղաղ օվկիանոսի հարավ-արևմտյան մասում ընկած երկու խոշոր կղզի։ Միմյանցից բաժանվում են Կուկի նեղուցով։ Հանդիսանում են Բրիտանական դոմինիոն։ Կղզիները առաջին անգամ, 1642 թվականին, տեսավ հոլանդացի Աբել Տասմանը։ Նա սկզբում կղզիները կոչեց «Նահանգների երկիր» (նկատի ունենալով հոլանդական նահանգները), իսկ հետագայում կոչվեց միայն հոլանդական մի նահանգի՝ Զելանդիայի անունով, սկզբում դնելով «նոր» մակդիրը։

ՆՈՐԻԼՍԿ.— Քաղաք Սիբիրում։ Կրասնոյարսկի երկրամասի հյուսիսում։ Անվան հիմքում ընկած է մոնղոլերեն նոր՝ «լիճ» բառը։

ՆՈՐ ԿԱԼԵԴՈՆԻԱՄ. — Կղզի Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասում: Անվանումը տրված է 1774 թվականին անգլիացի նշանավոր ծովագնաց Ջեմս Կուկի կողմից, ի հավերժացումն Շոտլանդիայի հին անվանմանը՝ Կալեդոնիացի: Այնպես որ աշխարհի քարտեզի վրա չկա «Հին Կալեդոնիա» կամ թեկուղ «Կալեդոնիա» անունը:

ՆՈՐ ՀԱՅՃՆ. — Քաղաքատիպ ավան: Գտնվում է Արգնիից ոչ հեռու, այն վայրում, ուր իր ժամանակին ստեղծվեց Արգնի-Շամիրամ ջրանցքի և Արգնիի հիդրոկայանի շինարարության բանվորական ավանը: Հետագայում ավանը կոչվեց Նոր Հաճըն, ի հիշատակ այն Հաճընի, որ գտնվել է Կիլիկիայում: Հաճըն անվան ստուգաբանության մեջ կա երկու հետաքրքիր մեկնաբանություն: Առաջինը, որ Կիլիկիայի Հայկական թագավորության կործանումից հետո մի խումբ հայեր, թշնամիների ասպատակությունից հեռու մնալու համար, ընտրում են Անդրտավրոսյան լեռնաշղթայի խորքերում մի անառիկ վայր, իրենց հետ տանելով համաժողովրդական մաղթանք՝ «այդ անառիկ տեղում հայերը թող աճեն»: Աճեն բառն էլ որոշ փոփոխության ենթարկվելով դարձել է Հաճըն:

Մյուս մեկնաբանումով, հայ փախստականները հիացած տեղի գեղատեսիլ համայնապատկերով և առնառիկ դիրքով ասում են. «Տերն հաճեցավ» մեզ պարգևելու այս գողտրիկ վայրը: Ժամանակի ընթացքում էլ «Հաճեցավ» բառը դառնում է Հաճըն: Իրոք, որ Կիլիկիան Հաճընը գտնվում է շատ հաճելի վայրում՝ Տավրոսյան շղթայի երկու գետակների միջև: Նա եղել է գողտրիկ բնակավայր, որը մինչև հայերի տարագրումը ուներ մոտ քսանհինգ հազար բնակչություն: Հաճընցիները աշխատասեր, ուսումնատենչ մարդիկ էին: Պատահական չէ, որ Կիլիկիացիները Հաճընն անվանում էին «Փոքրիկ Փարիզ»: Բայց թուրք յաթաղանից շազատվեց և շրեղ Հաճընը: Հաճընցի վերապրողները, երբ ներգաղթեցին Հայաստան, ապա իրենց ծննդավայրի անունն էլ

Հայրենիք տեղափոխեցին և դրին նորաստեղծ բանապահնի վրա:

ՆՈՐ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՈՒԵԼՍ.— Նահանգ Ավստրալիայում: Այսպէս կոչվեց Կուկի կողմից 1770 թվականին ի նմանություն Մեծ Բրիտանիայում գտնվող Ուելսի:

ՆՈՐ ՀԵՅՐԻԴՅԱՆ ԿՂՋԻՆԵՐ.— Գտնվում են Խաղաղ օվկիանոսում, Մելանեզիա խմբում: Կղջիները հայտնաբերվել են 1606 թվականին իսպանացիների կողմից: Այդպես է կոչվել Զեմս Կուկի կողմից 1774 թվականին որպես հիշատակ Մեծ Բրիտանիայի հյուսիսում գտնվող Հեյրիդյան կղջիների:

ՆՈՐՄԱՆԴԻԱ.— Պատմական մարզ Հյուսիսային Ֆրանսիայում: Այդպես է կոչվել տասներորդ դարում նորմանների գրավումից հետո: Ինչ վերաբերում է նորմանների անվանմանը, ապա գերմաներեն՝ դա նշանակում է հյուսիսի մարդիկ (նորդ՝ «հյուսիս» և ման՝ «մարդիկ»):

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ.— Նախկինում քաղաք Ռուսութիւնում, Գոնդեսի աջ ափին: Հիմնադրվել է 1780-ական թվականներին Ղրիմ գաղթած հայերի կողմից, որոնք Ղրիմում բնակություն հաստատեցին տասներեքերորդ դարում, գաղթելով Մեծ Հայքից: Սակայն այս նոր բնակավայրում էլ, այսինքն Ղրիմում էլ, ընկնելով թուրքական տիրապետության տակ, հայերի համար կրկին անբարենպաստ պայմաններ ստեղծվեցին: Հետեւ ղրիմի հույների օրինակին, հայերը 1779 թ. խնդրեցին ռուս կառավարությանը իրենց հնարավորություն տալ բնակվելու Ռուսաստանի սահմաններում: Բարձրագույն հրամանով հայերին հողեր տվեցին թե՛Շարիուպովի շրջանում և Ազովի ծովի, ներկա Դոնի Ռուսութիւն շրջակավայրում՝ Զալթը գետակի ուղղությամբ:

Հայերը իրենց հիմնած բնակավայրը կոչեցին Նոր Նախիջևան՝ Երևանի նահանգի Հին Նախիջևանից տարբերելու համար: 1782 թվականին նոր Նախիջևանը մտավ Նախկին Տագանրոգի գավառի մեջ: Իսկ 1834 թվականին մտավ նորաստեղծ Հայկական շրջանի կազ-

մում և դարձավ շրջանային քաղաք, որը Ռոստովի գավառի հետ միասին գտնվում էր Եկատերինոսոլավի (Դնեպրոպետրովսկ) նահանգի կազմում։ Իսկ 1888 թվականի հունվարի 1-ից՝ արդեն Դոնի զորքի օկրուզի կազմի մեջ։ Ժամանակի ընթացքում նոր Նախիչևնոր այնքան մոտեցավ Ռոստովին, որ այդ երկու քաղաքների սահմանները որոշում էին միմիայն 1811 թվի մայիսի 11-ի հաստատված նախագծով։

Նոր Նախիչևնոր իր ժամանակին վաճառաշահ, արհեստավորական կենտրոն էր։ Առևտրի հիմնական ապրանքներն էին՝ մետաքսը, հյուսվածքները, կաշվեղենը, շորացրած մրգերը և այլն։

Ավելի քան հարյուր հիսուն տարի Նոր Նախիչևնոր որպես այդպիսին մնաց։ Սակայն հետզհետե ընդարձակվելով նա ձուլվեց Ռոստովին։ Վերջին տարիներում անունն էլ փոխվեց և դարձավ Ռոստովի շրջաններից մեկը և կոչվեց Պրոլետարսկի ուայոն (շրջան)։

ՆՈՐ ՇԲՏԱՆԴԻԱԼ.— Նահանգ Կանադայում, Ատլանտյան ափին։ Այս անունը ստացավ տասնյոթերորդ դարի սկզբին Անգլիայից, Շոտլանդիայից եկած վերաբնակիչների կողմից։

ՆՈՐ ՍԻԲԻՐՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ.— Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում։ Հայտնաբերվել են 1809 թվականին բևեռախուզակ Գեղենշտրեմի կողմից։ Սկզբում նոր Սիբիր կոչվեց կղզիներից մեկը։ Հետագայում ամբողջ արշիպելագը հայտնի դարձավ «Նոր Սիբիրյան» կղզիներ անունով։

ՆՈՐՎԵԴԻԱԼ.— Պետություն Հյուսիսային Եվրոպայում։ Անունը ծագել է նորմանների լեզվից նորդ՝ «Հյուսիս» և վեցե՝ «ուղի» բառերի միացումից։ Նորմանները՝ Սկանդինավյան թերակղզու բնակիչները, լինելով հմուտ ծովագնացներ, իրենց հայրենիքից նավարկում էին թեղեպի արևելք՝ Բալթիկ ծով, թեղեպի արևմուտք՝ Ատլանտյան օվկիանոս, և թեղեպի հյուսիս, Սկանդինավյան թերակղզու ափերով։ Աշխարհի կողմերով էլ կոչում

էին այդ ուղիները՝ Առատրվեգ-արևելյան ուղի, վեստը լվեց-արևմտյան ուղի և վերջապիս նորվեգ, այսինքն «Հյուսիսային ուղի», նկատի ունենալով Սկանդինավյան թերակղզու արևմտյան ափերով դեպի հյուսիս անցնող ծովային ճանապարհը: Սկզբում անունը տարածվում էր թերակղզու միայն արևմտյան ափերի վրա: Իսկ ինչ ներորդ դարից դարձավ պետովթյան անուն: Անվան վերջում «իա» մասնիկը ունի երկրի նշանակություն: ՆՈՐ ՕՐԼԵԱՆ.— Քաղաք ԱՄՆ-ում. հիմնադրվել է 1718 թվականին ֆրանսիացիների կողմից: Այդպես է կոչվել Օրլեանի գքսի պատվին:

ՆՈՒԻԲԻԱՆ.— Պատմական մարզ Արաբական Միացյալ Հանրապետությունում (Եգիպտոս) և Սուդանի միջև: Նուրա «ոսկի» բառից է առաջացել անվանումը: Այդպես էին անվանում հին եգիպտացիները այս երկիրը, որտեղից բերում էին ոսկի:

ՆԵՎԱ.— Գետ: Սկիզբ է առնում Լադոգա լճից և թափվում Ֆիննական ծոցը, որի ափին գտնվում է Լենինգրադը: Հին ֆիններն «նեա» բառից, որը նշանակում է ճահճիճ: Գետին տրվել է նրա դելտայի ճահճոտության պատճառով: Մի այլ բացատրությամբ «նեա» անունը ծագել է Լադոգա լճից, ինչպես անցյալում կոչվել էր նա:

ՆԵՎԱԴԱՆ.— Ամերիկայի Միացյալ Նահանգներից մեկը: Իսպաներեն նեադա՝ «ձյուն» բառից: Անունը ստացել է Միերա-Նեադա «ձյունապատ» լեռներից, չնայած նրանք անմիջապես շեն գտնվում նահանգի սահմաններում:

Ծ

ՇԱՄԻՐԱՄ.— Հին Արևելքի լեգենդար թագուհու անունով են կոչվում Հայկական բարձրավանդակի բազմաթիվ տեղանուններ: Դրանցից ամենահինը Շամիրամակերտն է՝ վանի ավանդական անունը: Արա Գեղեցիկի և Շա-

միրամի ավանդությունը ընկավ մեր շատ տեղանունների հիմքում: Այդ ավանդության հիման վրա ստեղծված անուններից է նաև Շամիրամ գյուղի անունը: Գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանում, Ներքովթկամ Նեմրութ լեռան հարավային ստորոտում: Գյուղի մոտ կա մեծ աղբյուր, որը նույնպես էրում է Շամիրամ անունը: Իսկ գյուղի դիմաց, դեպի Նեմրութ լեռը գտնվում են երեք բլուրներ, որոնցից միջինի վրա գտնվում է Շամիրամ բերդը:

ՇԱՄԻՐԱՄ.— Գյուղ, ջրանցք և լեռ Սովետական Հայաստանում: Արայի և Շամիրամի մարտի վայրում կա Շամիրամ անունով գյուղ Աշտարակի շրջանում: Նույն շրջանում է գտնվում Արգնի-Շամիրամ ջրանցքը: Բացի այդ, Արայի լեռան դիմաց (այժմյան Աբովյան շրջանում) գտնվող մի սար կոչվել է Շամիրամի անունով. ժամանակին այդ անունը փոխվել է և սարը այժմ Հաղիս է կոչվում:

ՇԱՄԻՐԱՄԱԿԵՐՏ.— Մեր ավանդական պատմագրության մեջ Վան քաղաքը կոչվել է Շամիրամակերտ. որպես ձեռակերտ ավանդական Շամիրամ թագուհու: Արայի մահվանից հետո Շամիրամը մեկնում է Հարավային Հայաստան՝ Ասորեստան գնալու համար: Ճանապարհին կանգ է առնում Վանա լճի ափին, ներկա Վան քաղաքի մոտեքրում: Բնությունը հրապուրում է նրան: Շամիրամը տեսնելով Հայաստանի սառնորակ աղբյուրները և օդի բարեխառնությունը, Բզնույցաց ծովի արեվելյան ափին հիմնում է Շամիրամակերտ քաղաքը, ամառն այստեղ անցկացնելու համար: Դրա համար էլ մեր ավանդական պատմության մեջ հաճախ Վանը կոչվում է «Շամիրամի ամառանց»: Շամիրամը այնտեղ կատարում է հիանալի շինարարություն: Քաղաքի համար կառուցում է մի հոյակապ ջրանցք, որն անցնելով Հայոց Զորով և Խոշաբ գետի վրա կառուցված ջրատարունք, գալիս է Վան: Այդ ջրանցքը մինչև այժմ էլ պահպանում է, և ժողովուրդը այն Շամիրամի առու է ան-

վանում: Այդ բոլորի մասին մեզ հիանալի ավանդություն թողեց Մովսես Խորենացին, որը շիմանալով ուրարտացիների մասին, երբեմնի նրանց կատարած շինարարությունը վերագրեց Շամիրամին:

ՇԱՄՇԱԴԻՆ.— Երջան Հայկական ՍՍՀ-ում: Անվան հիմքում՝ ընկած է արաբերեն շամս-ադ-դին խոսքը, որը նշանակում է «արեգակն հավատո»:

ՇԱՄՊԱՆ.— Պատմական մարզ Հյուսիս-արևելյան ֆրանսիայում: Անվան հիմքում՝ ընկած է լատիներեն կամպանուս բառը, որը ունի «դաշտ» կամ «հարթություն» նշանակությունը: Շամպան նշանակում է «դաշտային մարզ»:

ՇԱՆԴՈՒԻՆ.— Թերակղզի և նահանգ Զինաստանում: Զինարեն շան՝ «լեռ» և դուն՝ «արևելք» բառերից: Այսինքն «լեռն ներից արևելք»:

ՇԱՆԽԱՅ. — Քաղաք Զինաստանում: Կազմված է չինարեն շան՝ «սար» և խայ՝ «ծով» բառերի միացումից: Զինարեն լեզվով նշանակում է «սարից դեպի ծով»:

ՇԱՏ-ԷԼ-ԱՐԱԲ.— Եփրատ և Տիգրիս գետերի միացումը Միջագետքի հարավում, մի ընդհանուր հունի մեջ ստանում է Շատ-Էլ-Արաբ անունը: Բառացի նշանակում է «արաբական գետ»:

ՇԵԿԼՍՈՒԻ ՍԱՌՅԱԴՐԱՑ. — Խոշոր սառցադաշտ Անտարկտիդայում: Ունի 420 կիլոմետր երկարություն: Հայտնաբերվել է 1840 թ. ամերիկյան էքսպեդիցիայի կողմից: Սառցադաշտը կոչվել է անգլիացի նշանավոր բևեռախուզ էպոս Շեկլտոնի անունով (1874—1922 թթ.):

ՇԻԼԿԱ. — Գետ Անդրբայկալում: Ամուրի վերին հոսանքներից մեկը: Անունն առաջացել է բուրյաթերեն «գետ» բառից: Երկրորդ մեկնաբանությունը՝ էվենկերեն շիլկա և նշանակում է «նեղ հովիտ»:

ՇԻՊԿԱ. — Լեռնանցք Բուլղարիայում, Ստարա-Պլանինա լեռնաշղթայում 1200 մետր բարձրության վրա: Ունի ստրատեգիական կարևոր նշանակություն. նրա վրայով է անցնում Կաղանլիկ-Գաբրովո ճանապարհը, կապելով Հյուսիսային Բուլղարիան Հարավայինին: Այս լեռ-

նանցքում 1877—78 թթ. մեծ մարտեր են տեղի ունեցել
ուսական և թուրքական բանակների միջև։ Խուսները
կովում էին թուրքարիան թուրքիայից ազատագրելու հա-
մար։ Շիպկա անունը առաջացել է շիպովնիկ բառից,
որը նշանակում է «մասրենի»։ Այս թփուտը տարածված
է Շիպկայի շուրջը։ Նրա բուրավետ ծաղիկները լեռ-
նանցքին տալիս են առանձին գեղեցկություն։

ՇիրԱԿ. — Պատմական Հայաստանի Այրարատ նահանգի գա-
վառներից մեկը։ Գրավում է Ախուրյան գետի միջին և
ստորին հոսանքի հովիտը։ Անվան մի ստուգաբանու-
թյունը կապվում է շիրակ կամ սիրակ ցեղի անվան
հետ։ Իսկ երկրորդ ստուգաբանությունը մեզ է հասել
պատմահայր Մ. Խորենացու միջոցով, կապվելով Հայ-
կազանց նահապետներից Արամայիս նահապետի որդի՝
Շարայի անվան հետ։ Ըստ ավանդության Շարան-
հայտնի էր շատակերությամբ։ Հայրն էլ նրան ուղար-
կում է մի ընդարձակ և բերրի գավառ, որպեսզի նա կա-
րողանա կուշտ ուտել և կերակրել իր բազմամարդ գեր-
դաստանը։ Այդ գավառն էլ Շարայի անունով Շիրակ
կոչվեց։ Շարայի որկրամոլությունը հին հայերի մուռ
առակ էր դարձել։ Ասում էին. «Եթե քո որկորը Շարա-
յինն է, մեր ամբարները Շիրակինը չեն»։ Այս ավան-
դությունը իր մեջ այլաբանորեն ճշմարտություն է
թաքցնում։ Իրականում Շիրակը հոչակված էր հացա-
ռատությամբ, իսկ Բագրատունիների օրոք հայ ժողո-
վը պատմության մեջ քաղաքական ու կուլտուրա-
կան տեսակետից առաջնակարգ դեր խաղաց։ Շիրակի
նշանավոր քաղաքներից ու բնակավայրերից էին Անին,
Բագրատանը, Կոմայրին։

ՇիրՎԱՆ. — Պատմական մարզ Աղրբեջանական ՍՍՀ-ում։
Պարսիկ սասանյան Խոսրով I-ի Անուշիրվան մակա-
նունից (531—579)։ Այս երկրի անունից էլ գրող Շիր-
վանզագեհի գրական անունը, որը նշանակում է շիրվա-
նեցի, Շիրվանի գավակ։

ՇՈԿԱԼՍԿՈՒԻ. — Նեղուց, կղզի: Առաջինը գտնվում է Հյուսիսային երկիր արշիպելագում, Բոլցևիկ և Հոկտեմբերյան հեղափոխություն կոչվող կղզիների միջև: Իսկ երկրորդը՝ կղզի է Կարայի ծովում: Այդպես է կոչվել ի պատիվ անվանի աշխարհագրագետ և օվկիանոսագետ Յու. Մ. Շոկալսկու (1856—1940 թթ.):

ՇՈՏԼԱՆԴԻԱԼ. — Պատմական մարզ, որը գրավում է Մեծ Բրիտանիայի հյուսիսային մասը: Անգլերեն կոչվում է Սկոտլանդ: Անվան առաջացումը կապված է կելտական սկոտ ցեղի հետ: Կելտերեն սկոտ բառը նշանակում է քոչվոր. իսկ լանդ անգլերեն նշանակում է «երկիր»: Շոտլանդիա ուստահան ձևն է: Ի դեպ, հնում Շոտլանդիան հայտնի էր Կալեդոնիա անվան տակ:

ՇՈՒՑԲԵՐԳԵՆ. — Արշիպելագ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում: Հայտնաբերվել է 1596 թվականին Վ. Բարենցի կողմից, որը և տվեց ներկա անունը: Հոլանդերեն շափուց՝ «սուր, սրածայր» և բերգեն «լեռներ» բառից: Նորվեգիայում Շպիցբերգենը հայտնի է Սվալբարդ անվան տակ, որը նշանակում է «ջուրտ երկիր»:

ՇՎԵՅՑԱԼԻՒԹ. — Լեռներ ԳՖՀ-ում: Անվանումը կազմված է գերմաներեն շվարց՝ «սև» և վալդ՝ «անտառ» բառերից: Այդպես են կոչվում, որովհետև լեռները ծածկված են մութ և անանցանելի անտառներով:

ՇՎԵԴԻԱԼ. — Պետություն Հյուսիսային Եվրոպայում: Անունը առաջացել է սկանդինավյան սլեն ցեղի էթնոնիմից: Ռուսերենում ավելացվել է «իա» երկիր նշանակությունը ունեցող մասնիկը:

ՇՎԵՅՑԱՐԻԱԼ. — Պետություն Կենտրոնական Եվրոպայում: Շվից կամտոնի անունից, որը առաջինը թոթափեց ավստրիական լուծը (1298 թ.): Շվից կանտոնը Ուրի և Ինտերլակեն կանտոնների հետ միասին կազմեց ներկա Շվեյցարիա պետության կորիզը:

ՈԼԻՄՊԻԱ կամ **ՕԼԻՄՊԻԱ**.— Քաղաք պատմական Հունաստանում, Պելոպոնես թերակղզում։ Հին հույնների սրբազն քաղաքը, որտեղ գտնվում էր Զևսին նվիրված տաճար, այդ աստծու հոյակապ արձանով։ Քաղաքը իր անունը ստացել է Օլիմպոս սարից, որտեղ բնակվում էին հունական աստվածները և նրանց վեհապետ Զևսը։ Ի դեպ, Օլիմպիա քաղաքից էլ առաջ է եկել օլիմպիադա անվանումը, քանի որ մրցումները տեղի էին ունենում Զևսի տաճարի շուրջը։

ՈԼԻՄՊՈՍ.— Լեռ Հունաստանում։ Հունական դիցաբանության մեջ աստվածների բնակատեղին։ Անվան առաջին ստուգաբանությունը կապվում է «Օլիմպ» անունով երգչի հետ, մյուսները՝ հին հունարենի «փայլուն», «պսպղուն» բառից կամ նախահունական ինչ-որ լեզվից, որտեղ այն նշանակել է «լեռ»։

Չ

ԶԱԴ.— Լիճ և պետություն Կենտրոնական Աֆրիկայում։ Տեղական լեզվով նշանակում է «Մեծ լիճ»։ Զադ լիճն էլ իր անունը տվեց այն պետությանը, որը ստեղծվեց 1960 թվականին։

ԶԱՆԱԳԿԱԼԵ.— Դարդանելի թուրքական անվանումը։ Կաղմած է շանագ և կալե բառերից։ Զանագ նշանակում է «լայնաբերան, տափակ կալե աման» իսկ կալե՝ «բերդ»։ Այլ խոսքով շանագ ամանը հիշեցնող բերդ։ Նման ամրոցներ իր ժամանակին շատ են կառուցվել Դարդանելի նեղուցի ափին, որից և նեղուցը ստացել է իր թուրքական անունը։

ԶԱՐԵՆՑԱՎԱՆ.— Նոր քաղաք Հայկական ՍՍՀ-ում։ Նախկինում կուսավան։ 1967 թվականին վերանվանվեց Զա-

բենցավան ի պատիվ անվանի բանաստեղծ Եղիշե Զարենցի:

ՉԱՐԼՈՍՊՆ.—Քաղաք Ամերիկայի Միացյալ Նահանգներում։ Այդպես է կոչվել ի պատիվ անգլիական թագավոր Չարլզ (Կարլ) II-ի (1660—1685 թթ.) և ավելացրած թուն կամ թառն «քաղաք» բառը։

ՉԱՐՁՈՒԻ.—Քաղաք, մարզային կենտրոն Թուրքմենական ՍՍՀ-ում։ Մինչև 1940 թվականը կոչվում էր Չարջու։ Անվանման հիմքում ընկած են չար՝ «չորս» և զուռ՝ «ջրանցք» բառերը, որոնք վերաբերում են Ամու-Դարյա գետից սկզբնավորվող չորս առուներին։

ՉԵԲՈՔԱՐԻ.—Չոպաշական ինքնավար Հանրապետության մայրաքաղաքը։ Առաջացել է չուփաշերեն չուկար՝ «քաղաք» կամ «ամրություն» բառից։

ՉԵՂԱԲԻՆԱԿԻ.—Քաղաք Ուրալում։ Բաշկիրերեն չելյաթ՝ «դույլ», «թաս» բառից։ Այդպես է կոչվել, որովհետև քաղաքը կառուցված է գոգավորության մեջ։ Ուրեմն՝ «դույլ-քաղաք» կամ «թաս-քաղաք»։

ՉԵՂՑՈՒՍԿԻՆ.—Հրվանդան Թայմիր թերակղզու հյուսիսում։ Ասիա մայր ցամաքի ամենահյուսիսային ծայրակետը։ Հայտնաբերվել է 1742 թվականին և կոչվել ի պատիվ շտուրման Ս. Չելյուկինի (1689—1754 թթ.):

ՉԵԽՈՍԽՈՎԱԿԻՄ.—Պետություն կենտրոնական Եվրոպայում։ Չեխոսլովակիա անունը հանդիս եկավ 1918 թվականին, երբ Ավստրո-Հունգարիայի ֆլատակների վրա կազմվեցին մի շարք պետություններ, այդ թվում և Չեխոսլովակիան։ Չեխ և սլովակ սլավոնական ժողովուրդների միավորումից էլ նորաստեղծ պետությունը կոչվեց ներանց անունով։ Չեխ անունը, որը դարձել է ժողովրդի անուն, գալիս է սլավոնական ավանդական առաջնորդ Չեխից, իսկ սլովակ՝ սլավոն անվան տարբերակներից է։

ՉԵՐՆՈԳՈՐԻԱ.—Հարավսլավիայի ֆեդերացիայի կազմի մեջ մտնող հանրապետություն։ Կազմված է սլավոներեն չյունի՝ «սև» և գորա՝ «լեռ» բառերի միացումից, այ-

սինքն «Սև լեռների երկիր»: Դա Հարավսլավիայի ամենալեռնու հանրապետությունն է, որի մասին վկայում է նրա անվանումը:

ԶԵՐՍԿՈՒԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ. — Լեռնաշղթա Սիրիոս: Զգվում է լենայից արևելք Կոլիմայից մինչև Յանա գետը: Այսպես է կոչվել ի պատիվ ոռւս հայտնի ճանապարհորդ և գիտնական ի. Դ. Չերսկու, որը 1891—1892 թվականների ընթացքում ուսումնասիրեց այս լեռնաշղթան: 1926 թվին Վ. Ա. Օբրուկով առաջարկեց լեռնաշղթան կոչել Չերսկու անվամբ որպես անվեհեր ճանապարհորդի հիշատակին նվիրված հուշարձան:

ՉԻԼԻ. — Պետություն Հարավային Ամերիկայում: Այս անվան առաջացումը ունի այսպիսի պատմություն: Եթե առաջին անգամ իսպանացիները անցան Լա-Պլատան և տափաստաններով մոտեցան Անդերին, ապա նրանք դիմելով տեղացի հնդիկներին՝ հարցուիրձ արեցին, թե ինչ կա լեռներից այն կողմ: Տեղացիները պատասխանեցին՝ «այնտեղ չիլի», որը նշանակում էր՝ այնտեղ ցուրտ է: Իսպանացիներն էլ չհասկանալով հնդիկների լեզուն, կարծեցին, թե դա սարերից այն կողմ գտնվող երկրի անունն է: Սակայն իսպանացիները սկզբում այսպես կոչեցին ներկա Չիլիի միջին մասը, որտեղ գտնվում են Սանտ-Ֆագոյի սարահարթն ու նույնանուն քաղաքը. իսկ ժամանակի ընթացքում «Չիլի» անունը տարածվեց ամբողջ երկրի վրա: Չիլին հիմնականում գտնվում է բարեխառն ու տաք գոտիներում և նրան տրված «չիլի» ցուրտ անունն էլ սազական չէ, բայց սխալմամբ տրված այդ անունը ժամանակի ընթացքում քաղաքացիական իրավունք ստացավ ու այդպես էլ մնաց:

ՉԻԿԱԳՈ. — Քաղաք Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Հիմնադրվել է 1779 թ.: Անվան բացատրությունը տըրվում է մի քանի կերպ, որոնցից առավել տարածվածը հետևյալն է: Առաջացել է հնդկական «շե-կանդ-օնդ» խոսքից, որը նշանակում է «վայրի սոխ»: Այդպես է

կոչվել իր ժամանակին այնտեղ տարածված վերոհիշյալ բույսի պատճառով:

ԶԻՄԲՈՐԱՍՈ. — Հանգած հրաբուխ Անդերում: (Էկվադորում):
Տեղական լեզվում նշանակում է «Չյունոտ լեռ»:

ԶԻՆԱՍԱՆ. — Պետություն Ասիայում: Այդպես է կոչվել Ցին դինաստիայի անունով, որն իշխել է երրորդ դարում; մեր թվականությունից առաջ: Հայերենում ավելացվել է «ստան» (երկիր) վերջածանցը և «ց» տառը փոխարինվել է «չ»-ով: Ցին Հայաստանում Զինաստանը կոչվել է Ճենք: Վերջի «ք» տառը ոչ թե հոգնակի ձևն է ցուց տալիս, այլ նշանակում է չին ժողովրդի երկիր: Ժողովրդական լեզվով Զինաստանը կոչվել է Զին ու Մաշին:

ՉՈՄՈԼՈՒՆԳՄԱ (ՉՈՄՈԼՈՒՆԳՄԱ), ԷՎԵՐԵՍՏ. — Լեռ Հիմալայ-ներում: Մեր մոլորակի ամենաբարձր կետը, որն ունի 8848 մետր բարձրություն: Գտնվում է Զինաստանի (Տիբեթի) և Նեպալի սահմանում: Անունը Հիմալայներում բնակվող շերպ ժողովրդի լեզվից է, նշանակում է «Աստվածների մայր» կամ «Աստվածների երկրացին օթևան»: Իր ժամանակին անգլիացիները անվանեցին էվերեստ: Ներկայումս վերականգնված է նրա վաղեմի անունը, բայց քանի որ մոտ մեկ դար Չոմոլունգման աշխարհին հայտնի էր էվերեստ անունով, դրա համար էլ հաճախ Չոմոլունգմայի հետ գրվում է նաև էվերեստ, բայց վերջինս առնվում է փակագծի մեջ: Ներկայումս ընդունված է Չոմոլունգմա անվանումը: Մարդիկ Չոմոլունգման վերջնականացես նվաճեցին 1953 թ. մայիսի 20-ին: Նրա գագաթը բարձրացան երեք հոգի՝ անգլիացի Ջոն Խանտը, շերպ Տենսինգ Նորգեյը և նորպելանդացի Հիլարի էդմունդը:

ՉՈՒԴ. — Լիճ էստոնիայում և ՌՍՖՍՀ-ի սահմանում: Ռուսական «չուդ» անունից: Անցյալում այդպես էին անվանում ոռուները ուղրո-ֆիններին:

ՊԱ-ԴԵ-ԿԱԼԵ. — Նեղուց Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև: Անվանման առաջին «պա» մասը պասաժ բառի կրծատ ձևն է, որը նշանակում է «անցք», «նեղուց», երկրորդ մասը կալե քաղաքի անունն է, իսկ «դե»-ն հատկացուցիչ մասնիկ է: Ստացվում է «անցք կամ նեղուց Կալեի մոտ»: Կոչվում է նաև Դուվրի նեղուց, Մեծ Բրիտանիայի Դուվր քաղաքի անունով:

ՊԱԼԵԽ. — Բանավան ՌՍՖՌՀ-ում, իվանովյի մարզում: 16-րդ դարից հայտնի էր արդեն իբրև մանրանկարչության կենտրոն: Անվանումը սլավոնական «պոլեխ» բառից, որը նշանակում է «անտառաբնակ»:

ՊԱՂԵՍՏԻՆ. — Իսրայել պետության դասական անվանումը: Այսպես է կոչվել քանանացիների երկիրը Հին Կտակարանում, որը ընկած է Հորդանանի և Միջերկրական ծովի միջև: Պաղեստին անունը գալիս է ֆիլիստիմիլյան «պելիշտիմ» անունից: Ֆիլիստիմիլյան ժողովուրդը հայերենում հայտնի է եղել փղշտացիներ անունով: Մինչև 1947 թվականը Պաղեստին անունը պահպանվում էր անգլիական համանուն մանդատի վրա: Հետագալում Պաղեստինի տերիտորիայի վրա ստեղծվեցին իսրայել և Հորդանան պետությունները:

ՊԱԼԵՐՄՈ. — Սիցիլիայի գլխավոր քաղաքը: Հունարեն՝ պանորմոս՝ «գեղեցիկ ծոցի», «լավ նավահանգստի» իմաստով:

ՊԱԼՄԻՐԱ. — Պատմական քաղաք Սիրիայում: Անվան հիմքում ընկած է լատիներեն «պալմա»՝ արմավենի բառը. ուրեմն՝ «Արմավենիների քաղաք»: Պալմիրան եղել է հին աշխարհի փառաբանված քաղաքներից մեկը, որը ըստ

ավանդության հիմնադրվել է Սողոմոն թագավորի կողմից: Պալմիրան գտնվել է կարևոր առևտրական այն ճանապարհի միջնակետում, որով Հռոմը կապվել է Պարսկաստանի և Հնդկաստանի հետ: Հետագայում Պալմիրա անունը դարձավ գեղեցիկ և հոյակապ քաղաքի հոմանիշ, որը ստեղծվում է անապատում:

«Հյուսիսային Պալմիրա»՝ այսպես հայտնի գարձակ Պետերբուրգը բանաստեղծական խոսքում և թեավոր խոսքի ուժ ստացավ: Պետերբուրգը ծաղկեց Նևայի ճահիճներում այնպես, ինչպես Պալմիրան Սիրիական անապատում:

ՊԱԿԻՍՏԱՆ.— Պետություն Հարավային Ասիայում: Առաջացել է 1947 թվականին Բրիտանական Հնդկաստանի բաժանման հետևանքով: Պակիստանը բաղկացած է երկու մասից՝ Արևմտյան և Արևելյան, որոնք միմյանցից հեռու են 1600 կիլոմետրով և բաժանվում են Հնդկաստանի տերիտորիայով:

Պակիստանի անունը առաջացել է հապավման եղանակով: Կազմվել է Հնդկաստանի Հյուսիս-արևմտյան մասում գտնվող և Պակիստանի կազմի մեջ մտնող մի քանի նահանգների և ժողովուրդների անվանման սկզբնատարից, իսկ մի նահանգի էլ (Բելուջստանի) վերջին վանկից: Դրանք են՝ Պենջար, աֆղաններ կամ պատաններ (որոնք բնակվում են Աֆղանստանի սահմանի մոտ), կաշմիր, Բելուջստան: Առաջին երեք բառերը տվեցին իրենց սկզբնատառերը, իսկ Բելուջըստանն էլ իր վերջին վանկը և ստացվեց Պակիստան կամ Պակիստան:

Պակիստան կամ Պակստան անվանումը ստուգաբարենելիս, հաճախ անունը բաժանում են երկու մասի, որտեղ վանկերից առաջինը՝ փակ բառը նշանակում է «մաքուր» (լավի իմաստով), իսկ երկրորդը, ստան՝ «երկիր»: Դրա համար էլ Պակիստան անվանումը բացատրելիս վանկային ձևն էլ են հիշատակում և ստուգաբարանում որպես «Մաքուրների երկիր»:

ՊԱՄԻՐ.— Բարձրավանդակ կենտրոնական Ասիայում։ Պամիր անվան ստուգաբանությունը տրվում է մի քանի կերպ։ Ստուգաբանություններից մեկն էլ այն է, որ այս անունը առաջացել է սանսկրիտերեն «պա», այսինքն «ստորոտ» և «Միհր» աստծու անունից։ Այլ խոսքով «Միհրուտն»։ Մեր տեղանուններից հիշենք Արագածոտն, Մասյացոտն։ Տաշիկերեն անունն է Բում-ի-դունյե, որը նշանակում է «աշխարհի տանիք»։ Այս էլ հիմք է ծառայել Պամիրի թևավոր բնորոշմանը։

ՊԱՄՊԱ.— Տափաստան Հարավյային Ամերիկայի մերձարևադարձային գոնայում։ Անունը ստացել է այն խոտից, որը իր ժամանակին համատարած կերպով ծածկում էր Արգենտինայի տափաստանային տարածությունները։ Ներկայումս Պամպան ավելի շատ ծածկված է ցորենի և եղիպտացորենի արտերով։ Խսպաներեն այդ խոտի հոգնակի ձևը պամպաս է, որը նույնպես գործածական է, բայց ճիշտը Պամպա ձևն է։

ՊԱՆԱՄԱ.— Քաղաք և պետություն Կենտրոնական Ամերիկայում։ Իր անունն ստացել է բնիկների «պանամա» բառից, որով նրանք կոչել են լայնասաղարթ և մշտադար ծառերը։ Այսպես է «պանամա» բառի առաջացման մի մեկնաբանությունը։ Մյուսը՝ ենթադրում են, թե ծագել է «թիթեռնիկ» բառից։

ՊԱՆՖԻԼՈՎ.— Քաղաք Ղազախստանում։ Այդպես է կոչվել ի պատիվ Մոսկվայի պաշտպանության մասնակից Հերոս Ի. Վ. Փանֆիլովի (1893—1941 թթ.)։ Հին անունն է Զարքենդ։

ՊԱՐՈՒԻԱ.— Այդպես է կոչվում Նոր Գվինեայի, հարավ-արեվելյան մասը։ Այդ կղզու բնիկների՝ պապուաների անունից։ Մալայերեն «պապուա» նշանակում է «գանգուր» կամ «գանգրահեր»։

ՊԱՐՆԱՍ.— Լեռ Հունաստանում։ Հունական առասպելաբանության մեջ նվիրական լեռ արևի և արվեստի աստված Ապոլոնի բնակատեղին, որը միաժամանակ համարվում էր մուսաների բնակատեղին։ Անվան ստուգաբա-

նությունը կապում են փոքրասիական ժողովուրդների պարնա «տուն» բառի հետ:

ՊԱՏԱԳՈՒՆԻԱ. — Արգենտինա պետության Հարավային մասը: Այս երկրի տարօրինակ անունն ունի բարձականին Հետաքրքիր պատմություն, որը գալիս է Մագելանի ժամանակվանից: Եթե 1520 թվականին Մագելանի նավերը մոտենում են ներկա Արգենտինայի Հարավային ափերին, նրանք այստեղ հանդիպում են խիստ բնություն ունեցող մի երկրի, որը սկզբում նրանց անմարգացնակ է թվում: Այս ափերում երկու ամիս անցկացնելուց հետո միայն նրանք հանդիպում են բնիկների, որոնց ոտները առաջին հայացքից շատ մեծ են թվում, որովհետև նրանք մուշտակյա կոշիկներ ունեն հագած: Բացի դրանից, խպանացիներից մի երկուսը Մագելանին պատմում են նաև, որ իրը իրենք ձյան վրա հսկա ուտների հետքեր են տեսել: Այսպես առաջ եկավ «Պատագոնիա» անունը: «Մեծ ոտներ ունեցող մարդկանց երկրի» մասին ավանդությունը, իհարկե, հետևանք էր Մագելանի մարդկանց, հատկապես Պիգաֆետայի ֆանտազիայի, որի օրագրերից է մեզ հասել այդ անունը:

ՊԱՐԱ. — Քաղաք և նավահանգիստ Բրազիլիայում: Տեղական ժողովրդի լեզվով «պարա» նշանակում է «չուր» կամ «ծով»:

ՊԱՐԱԳՎԱՅ. — Պետություն և գետ Հարավային Ամերիկայում: Գետը իր անունը տվել է պետությանը: «Պարագվայ» բառը հնդկական գուարանի ժողովրդի լեզվում նշանակում է «Պարագուա» ժողովրդը: Այդ ժողովուրդը բնակվում էր գետի շուրջը: Մի այլ ստուգաբանությամբ Պարագվայ անունը տեղացիների լեզվով նշանակում է «ծովի ակունք»:

ՊԱՐԱՄԱՐԻԲՈ. — Նիդեռանդական Գվիանայի (Հարավային Ամերիկայում) գլխավոր քաղաքը: Անունը գալիս է տեղական պարա՝ «ծով», մարիբո՝ «բնակիչներ» բառից: Այսպես էին անվանում կարիքները հոլանդացիներին:

ՊԱՐԱՆԱ. — Գետ Հարավային Ամերիկայում: Անվանման հիմ-

քում ընկած է հնդկերեն պարա բառը, որը նշանակում
է «ջուր», իսկ պարանա նշանակում է «Մեծ ջուր», այ-
սինքն՝ գետ: Երկրորդ ստուգաբանությունը՝ «Ճուղի
մայր» տեղական հնդիկների լեզվից:

ՊԱՐՈՊԱՄԻՋ (ՊԱՐԱՊԱՄԻՋ).— Լեռնաշղթա Աֆղանստա-
նում: Անվան ստուգաբանությունը պարզ չէ: Ենթադր-
վում է, որ «պար» սկզբնամասնիկը ունի «կողմի»
իմաստ: Նկատի են ունեցել «Պամիրի կողմը»:

ՊԱՐՍԻՑ ԾՈՅՑ.— Հնդկական օվկիանոսի մաս կազմող ծոց,
իրանի և Ապարիայի միջև: Անվանումը գալիս է Պարս-
կաստան անունից: Իսկ վերջինս էլ այդպես է կոչվել
իրանի հարավային նահանգի Ֆարս կամ Ֆարսիստանի
անունով: Տե՛ս Պարսկաստան:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.— Իրան պետության անվանումը մինչև 1935
թվականը: Ինչպես հայտնի է, Պարս կամ Ֆարս կոչ-
վելիս է եղել իրանի, անցյալում այդ մեծ կայսրության
հարավային նահանգներից մեկը, կենտրոն ունենալով
Շիրազ քաղաքը: Երկրի այդ մասը իրանի կյանքում մեծ
դեր է խաղացել և երկար ժամանակ եղել է իրանական
թագավորների գահավայրը: Այստեղ էր գտնվում Պեր-
սեպոլիսը, իրանի հնագույն մայրաքաղաքը: Արտաքին
աշխարհում ևս Ֆարս նահանգը շատ աշքի ընկավ:
Հայտնի է, որ անմահ Թումանյանը Ֆիրդուսուն անվա-
նել է Ֆարսի բլրուկ: Ֆարս նահանգի անունով էլ ժա-
մանակի ընթացքում հայտնի դարձավ ամբողջ Երկիրը:
Իսկ պարս կամ ֆարս անվանմանը ավելացնելով
«ստան» մասնիկը, որն ունի Երկրի նշանակություն,
ստացվեց Պարսկաստան: Այսպես առաջացավ իրան
պետության անունը, որը Երկրի պաշտոնական անունն
էր դարեր շարունակ:

Բայց ժամանակի ընթացքում, հատկապես 7-րդ դա-
րից, երբ Երկրի կենտրոնը տեղափոխվեց Հյուսիս, աս-
տիճանաբար Թեհրանն ու Թավրիզն են սկսում դեր խա-
ղալ Երկրի կյանքում, իսկ Ֆարսիստանն էլ կորցնում է
իր դեկավար նշանակությունը: Աստիճանաբար պար-

սիկների մոտ զարթնում է ազգային ինքնաճանաշումը:
Վերջապես, պարսկական կառավարությունը 1935 թվա-
կանի մարտի 22-ի շրջաբերականով հայտնում է աշ-
խարհի բոլոր պետություններին, որ չեղյալ է հայտա-
բարվում հույներից և մյուս ժողովուրդներից ժառան-
գություն մնացած երկրին «Պարսկաստան» և նրա բնա-
կիչներին՝ «պարսիկ» տրվող ոչ ճիշտ անունները: Հայտ-
նըվեց, որ Պարսկաստանն այսուհետև հայտնի է լի-
նելու իրան անվան տակ, իսկ պարսիկները՝ իրանցի-
ներ: Այդ ժամանակվանից սկսած թե՛ պաշտոնական
գրականության մեջ, թե՛ դիվանագիտական աշխարհում
պահպանվում է «Իրան» անունը:

Սակայն Իրանի լեզուն և գրականությունը տրադի-
ցիոն կերպով շարունակվում է կոչվել պարսկերեն:
Պարսկաստանը մնում է այդ երկրի համար որպես
պատմական անուն:

ՊԱՐԻՒ. — Արշիպելագ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում,
Կանադական կղզիախմբում: Այսպես է կոչվել ի պատիվ
անգլիացի ծովագնաց Վիլյամ Պարրի (1790—
1855 թթ.): Նա ուսումնասիրեց այս կղզիները և միա-
ժամանակ հայտնաբերեց Բարրոու հրվանդանը:

ՊԵՂՈՊՈՆԵՍ. — Թերակղզի Հունաստանում: Գտնվում է Բալ-
կանյան թերակղզու ծայր հարավում: Այդպես է կոչվել
հունական գիցարանական հերոս Պելոպսի անունով և
ավելացվեց նեսոս՝ «կղզի» բառը: Հույները Պելոպո-
նեն անվանում են Պելոպսի կղզի, որը իրականում չնա-
յած թերակղզի է, բայց այնքան նեղ պարանոցով է
միացած մայր ցամաքին, որ ավելի շատ կղզու է նման:

ՊԵԿԻՆ. — Չինաստանի մայրաքաղաքը: Ինչպես հայտնի է,
չինական բազմաթիվ քաղաքների անվանումները առա-
ջացել են աշխարհի կողմերի անուններից: Այդպես էլ
Պեկինը. Չինարեն անվանումն է Բեյցզին: Կազմված է
Բեյ՝ «Հյուսիսային» և ցղին՝ «մայրաքաղաք» բառերի
միացումից: Այսինքն «Հյուսիսային մայրաքաղաք»:
Եվրոպական ձևափոխումն է Պեկին:

ՊԵՆԻՆՅԱՆ ԼԵՌՈՒԵԲՐ. — Լեռներ Մեծ Բրիտանիայի հլուսիսում:
Անվանումը առաջացել է կելտերեն պեն՝ «լեռ» բառից:
Ի դեպ, կելտական «պեն» բառը ընկավ ելքոպական
շատ անվանումների հիմքում: Կելտերը դեռ մեր թվա-
կանությունից առաջ բնակվել են Արևմտյան Եվրոպա-
յում: Հետագայում նրանք տեղափոխվեցին Բրիտանա-
կան կղզիներ, որը տարան և իրենց «պեն» բառը:

ՊԵՆՍԻԼՎԱՆԻԱ. — Ամերիկայի Միացյալ Նահանգներից մեկը:
Կոչվում է ի պատիվ Վիլյամ Պենի, որը կվարկերների
աղանդի ղեկավարն էր (1644—1818 թթ.): Պեն անվանը
առկելացվեց լատիներեն «սիլվա», այսինքն «անտառ»
բառը, ստացվեց «Պենի անտառոտ երկիր»:

ՊԵՆՉԱԲ, ՓԵՆՉԱԲ. — Մարզ Պակիստանում: Սանսկրիտերեն
պենջ՝ (փյանջ) «Հինգ» և ար՝ «ջուր»: Այսինքն «Հինգ
ջուր»: Նկատի է ունեցվել ինդոս գետը և նրա շորս
վտակները: Դրանք են՝ Ջելամ, Ջինար, Ռավի, Սալեզ:

ՊԵԶԵՆԳԱ. — Նավահանգիստ Մուրմանսկի մարզում: Ֆիննա-
կան ձևն է Պետսամո: Անունը ստացել է Պեչենգա գե-
տից, որը գալիս է ուգրոֆիննական լեզվից: Պել՝ «սոճի»
և ենգա՝ «գետ» բառերի միացումից:

ՊԵԶՈՐԱ. — Գետ Եվրոպական Ռուսաստանում: Անունը ունի
մի քանի ստուգաբանություն: Առաջինը ժագած է հա-
մարվում շոր՝ «գետ» բառից: Երկրորդը, ուստի պեշ-
շերա՝ «քարանձավ» բառից, կամ՝ կոմի պեչորա ցեղի
անունից:

ՊԵՏՐՈԶԱՎՈԴՍԿ. — Կարելական ինքնավար Սովետական
Հանրապետության մայրաքաղաքը: Բառացի նշանակում
է «Պյոտրի գործարան»: Պյոտր առաջինը 1703 թվա-
կանին այս վայրում հիմնեց թնդանոթի ձուլարան: Եր-
կար ժամանակ կրում էր Պետրովսկայա սլոբոդա անու-
նը, իսկ 1777 թվականից արդեն դարձավ քաղաք և կոչ-
վեց Պետրովավորսկ:

ՊԵՏՐՈՊԱՎՈԼՎՈՎԿ. — Քաղաք Ղաղախստանում: Հիմնվել է
1752 թվականին: Այդպես է կոչվել Պետրոս և Պողոս
առաքյալների պատվին (ուստի են՝ Պյոտր և Պավել):

ՊԵՏՐՈՂԱՎԱԼՎԱԿ ԿԱՄՉԱՏԿԱՅԻ.— Քաղաք Կամչատկա թերակղով, համանուն մարզի կենտրոնը: Այսպէս է կոչվել ի պատիվ Բերինգի երկու նավերի՝ «Սուրբ Պետրոս» և «Սուրբ Պողոս» (ռուսերեն Պյոտր և Պավել), որոնք ձմեռեցին այստեղ 1740—1741 թվականներին: Դրանով էլ հիմք դրվեց բնակավայրի ստեղծմանը; որը աստիճանաբար աճեց և դարձավ Հեռավոր Արևելքի կարևոր նավահանգիստներից մեկը: Քանի որ Պետրոպավլովսկ անունով քաղաք գոյություն ուներ նաև Ղաղախստանում, որը իր ստուգաբանությամբ կապված է արդեն Պետրոս և Պողոս առաքյալների անվան հետ, ուստի ավելացրին Կամչատկա մասնիկը:

ՊԵՏՐՈՍ I-ի ԿՂԶԻ (ՊՅՈՒՏՐ I-ի ԿՂԶԻ).— Անտարկտիդայի ափերի մոտ: Հայտնաբերվել է 1821 թվականին ուստովագնացներ Ֆ. Ֆ., Բելլինսգաուզենի և Մ. Պ. Լազարեկի կողմից: Այսպէս է կոչվել ի պատիվ ուստական կայսր Պյոտր I-ի:

ՊԵՐԵԿՈՓ.— Քաղաք Ղրիմում, Պերեկոպի պարանոցում: Ուռուսերեն պերեկոպատ՝ «նորից փորել» բառից: Նկատի ունենալով տեղի կարևոր ստրատեգիական նշանակությունը, այստեղ իր ժամանակին փոսեր (խրամատներ) էին փորում: Հետագայում քաղաքը իր անունը տվեց պարանոցին:

ՊԻՐԼ ՀԱՐԲՈՐ.— Ծովախորշ և ամերիկյան ոազմա-ծովային բաղա Հավայան կղզիներում: Անգլերեն պիրլ՝ «մարգարիտ» և հարբոր՝ «նավահանգիստ» բառերի միացումից: Այսինքն «Մարգարիտա նավահանգիստ»: Անցյալում այստեղ ծովից մեծ շափով մարգարիտ է հանվել:

ՊԵՐՍԵՊՈԼԻՍ.— Աքեմենյան Պարսկաստանի հին մայրաքաղաքն էր: Անվանումը հունական Պերս՝ «պարսից» և պոլիս՝ «քաղաք» զուգակցումից՝ «Պարսկական քաղաք»: Պերսեպոլիսը իր ժամանակվա հոյակապ և փառաբանված քաղաքներից է եղել, բայց 331 թվականին մեր

թվականությունից առաջ այն գրավեց Ալեքսանդր Մակեդոնացին և կործանեց:

ՊԵՐՈՒ. — Պետություն Հարավային Ամերիկայում: Պերու անունը իսպանացիներն են տվել այդ երկրին, երբ 1524 թվականին կոնկիստադորներից Պիզարոն հասավ ինկերի երկրի սահմաններին, ապա այն կոչեց Պերու՝ հաղաղ օվկիանոս թափվող Պիրու կամ Բիրու ոչ մեծ գետի անվամբ:

ՊԻՉԱ. — Քաղաք Իտալիայում: Էտրուսկերն լեզվում պիզա՝ «գետաբերան» բառից: Գետաբերանն ունի կիսալուսնի ձև և իր ժամանակին մոտ է գտնվել քաղաքին: Պիզան հայտնի է իր թեք աշտարակով:

ՊԻՆԴՈՍ. — Լեռներ Հունաստանում: Հունարեն պինդոս՝ «ջրային» բառից: Լեռներից ծնունդ են առնում բազմաթիվ գետեր:

ՊԻՆՍԿ. — Քաղաք Բելուպուսիայում: Անունը ստացել է Պինա գետից, որը Պրիպյատ գետի վտակն է:

ՊԻՌՆԵՐ ԿՂՋԻ. — Հյուսիսային երկիր արշիպելագի Հյուսիսարևելյան մասում: Այդ անունը կղզուն տվել է Արկտիկայի ուսումնասիրող Գ. Ա. Ուշակովը 1932 թվականին:

ՊԻՏՍՖՐԻԹ. — Քաղաք Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Հիմնադրվել է 1760 թվականին ի պատիվ բրիտանական պրեմիեր-մինիստր Վիլյամ Պիտտի (1708—1778 թթ.): Բուրգ գերմաներեն՝ «բերդ» կամ «քաղաք»:

ՊԻՐԵՅ. — Քաղաք Հունաստանում, Աթենքի համար ծառայում է նավահանգիստ: Անունը հունարեն պերեյոս բառից է, որը նշանակում է «այն կողմ»: Նկատի է ունեցվել նրա դիրքը Աթենքի նկատմամբ:

ՊԻՐԵՆԵՅԱՆ ԹԵՐԱԿՂՋԻ. — Եվրոպայում: Անունը ստացել է համանուն լեռներից, իսկ լեռների անունն էլ առաջացել է բասկերեն՝ «լեռ» հասարակ անունից:

ՊԻՐԵՆԵՅԱՆ ԼԵՌՆԵՐ. — Ֆրանսիայի և Իսպանիայի միջև: Անվանման առաջացումը գալիս է բասկերեն լեզվից, պիրեն բառից, որը ունի «լեռան» իմաստ:

ՊԼԻՄՈՒԹ. — Նավահանգիստ Անգլիայում: Պլի գետի անունից և գումարած մասով՝ «գետաբերան» բառը: Այսինքն՝ «Պլիի գետաբերան»: Հիմնադրվել է 17-րդ դարում:

ՊԼՈԵՏՏԻ. — Քաղաք Ռումինիայում: Անունը ծագած են համարում ոռոմիներեն «անձրևների քաղաք» խոսքից, բայց ավելի հավանական է առաջացած լինի որևէ անձնանունից:

ՊԽԵՆՅԱՆ ԿԱՄ ՓԽԵՆՅԱՆ. — Հյուսիսային Կորեայի մայրաքաղաքը: Կորեական լեզվում պիսեն՝ «Հարթ», «Հավասար» և յան՝ «Ճոր» բառերի միացումից:

ՊՂՊԵՂԻ ԱՓ. — Արևմտյան Աֆրիկայի ծովեղոյա մի հատված, որը մտնում է Լիբերիա պետության մեջ, որտեղ և գտնվում է Մոնրովիա քաղաքը: Ժամանակին այդ ափերից մեծ քանակությամբ պղպեղ են արտահանել ելքոպա:

ՊՅԱՏԻԳՈՐՍԿ. — Կուրորտային քաղաք Հյուսիսային Կովկասում: Ռուսերեն պյատ՝ «Հինգ» և գորա՝ «լեռ» բառերի միացումից: Անունը ծագել է նրա մոտ գտնվող հինգ գագաթներից, որոնք տեղում հայտնի են թեշտառ անունով, որը թուրքական լեզվում նշանակում է «Հինգ լեռ»:

ՊՅԱՏԻԽԱՏԿԱՆ. — Քաղաք Ռւկրաինայի Դնեպրոպետրովսկի մարզում: Ռուսերեն պյատ՝ «Հինգ» և խատա՝ «խրճիթ» բառերի միացումից: Եթե 18-րդ դարի վերջում չումակները (առևտրականները) անցնում էին այդ տեղով Նիկոլաև գնալու համար, կար միայն հինգ խրճիթ, որը և պատճառ դարձավ բնակավայրի անվանմանը:

ՊՆՈՄ ՊԵՆ. — Կամքոջայի մայրաքաղաքը: Կիմերերեն պնոմ՝ «բլուր» և Պեն՝ ավանդական հերոսուհու անունից, որը բնակվել է այդտեղ: Այսպիսով, Պնոմ Պեն նշանակում է «Պենի բլուր»: 12-րդ դարում այդտեղ կառուցվեց մի տաճար, որը դարձավ ներկա քաղաքի կորիպը:

ՊՅՈՒՀԵՏ ՍԱՌԻՆԴ. — Խաղաղ օվկիանոսի ծոցերից մեկը Հյուսիսային Ամերիկայի ափերի մոտ: Աշխարհի բնական լավագույն նավակայաններից է: Այդպես է կոչվել ի պա-

տիվ Վանկուվերի էքսպեդիցիայի մասնակից վ. Պյու-
չետի և գումարած սառնդ բառը, որը անգլերն լեզվում
նշանակում է «նեղուց»:

ՊՈ.— Գետ հտալիայում: Անվան ստուգաբանությունը տրվում
է երկու կերպ: Առաջինը՝ կելտերեն պադի՝ «սոճի» բա-
ռից է: Իսկ երկրորդը՝ լատիներեն պադուա՝ «խորը»,
«անհատակ» բառից:

ՊՈԲԵԴԱՅԻ ՊԻԿ.— Սովետական Միության ամենաբարձր գա-
գաթը, որը գտնվում է Տյան-Շանում: Ռուսերեն՝ «Հաղ-
թանակի գագաթ». Նկատի է ունեցվել ֆաշիստական
Գերմանիայի հանդեպ սովետական ժողովրդի տարած
հաղթանակը: Գագաթի բարձրությունը հասնում է 7439
մետրի: Մինչև Պորեգայի Պիկ գագաթի բարձրության
որոշումը, Խան-Շենգրին էր համարվում Տյան-Շանի
ամենաբարձր գագաթը (6995 մ):

ՊՈԴԿԱՄԵԵՆՆԱՅԱ.— Ենիսեյի աջ վտակը: Ռու-
սերեն լեզվում պոդ կամեն՝ «քարի տակից», «քարից
ներքե» բառերից է և տունդրա (էվենկ) ժողովրդի անու-
նից: Գետը միանում է Ենիսեյին Օսինովսկի սահանք-
ներից ներքե (տակ), հենց դա էլ անվան առաջին մասի
հիմնավորումն է:

ՊՈԴՈԼԻԱ.— Պատմական մարզ Ուկրաինայում: Սլավոներեն
դոլ՝ «ներքե», «ցած» բառերից: Այսինքն ներքին երկիր՝
հարևան Կարպատյան լանջերի նկատմամբ:

ՊՈԴՄՈՍԿՈՎԻԵ.— Մոսկվայի շուրջ եղած տերիտորիաները:
Այս գեպքում «պոդ» նախածանցը ունի «շուրջ» բառի
իմաստ: Այսպիսով, ավելի ճիշտ է «Շուրջմոսկովյան»
անվանումը, քան «Մերձմոսկովյան»:

ՊՈԼԵՍԻԵ.— Աշխարհագրական մարզ Բելոռուսիայի և Ուկ-
րաինայի սահմանում: Անվան հիմքում ընկած է ուսե-
րեն «անտառ» բառը: «Պո» նախածանցը ունի «երկու-
կողմի» նշանակություն: Այսինքն տարածություն, որն
ընկած է անտառի երկու կողմը, անտառապատ տերի-
տորիա:

ՊՈՂԻՆԵԶԻԱ. — Կղզիախոսմբ Օվկիանիայում: Ընկած հս. լայն՝ 23 և հարվ. լայն. 28 աստիճանների միջև: Անունը՝ առաջացել է Հունարեն պոլի՝ «բազմաթիվ» և նեսոս՝ «կղզի» բառերի զուգակցումից: Այսինքն «շատ կամ բազմաթիվ կղզիների երկիր»: Պոլինեզիայի մեջ են մտնում՝ Հավայան կղզիները, Էլիս, Ֆենիքս, Տակելաու, Կենտրոնական Սպորադներ, Տոնդա, Սամոա, Կուկի, Տուբուայ և այլ կղզիներ:

ՊՈՂԻՄՎԱ. — Քաղաք Ուկրաինայում: Անունը ստացել է Օլտավա գետից: Հետագայում քաղաքի անվան համարավելացվեց «պ» տառը, որն ավելի բարեհնչյուն է դարձրել այն:

ՊՈՊՈԿԱՏԵՊԵՏԼ. — Գործող հրաբուխ հարավային Մեքսիկայում, որի բարձրությունը հասնում է հինգ և կես կիլոմետրի: Նա անվերջ ծխում է, որից և ստացել է Պոպոկատեպետլ անունը, որը և Մեքսիկայի հին բնակիչների՝ ացտեկների լեզվից է և նշանակում է «ծխացող լեռ»: Անվանումը կազմված է ացտեկերեն պոպականի «ծխացող» և տեպետլ՝ «լեռ» բառերի զուգակցումից, որոնց միացման ժամանակ «նի» տառերը սեղմվել են: Պոպոկատեպետլի վերջին ժայթքումը եղել է 1947 թվականին:

ՊՈՎՈՂԻԽԵ. — Այս անվան կազմավորմանը մասնակցել են նախ «Վոլգա» անունը, ապա և «աղո» նախածանցը և «իե» վերջածանցը: «Պո» նախածանցը ունի երկու կողմի իմաստ: Իսկ «իե» վերջածանցը ունի տերիտորիայի իմաստ՝ «Վոլգայի շուրջը ընկած տերիտորիա»:

ՊՈՏՈՍԻ. — Քաղաք Հարավային Ամերիկայի Բոլիվիա պետությունում: Իր ժամանակին մեծ համբավ ձեռք բերեց որպես արծաթի խոշոր հանքավայրի կենտրոն: Պոտոսի բառը հնդկական այմարա ժողովրդի լեզվում նշանակում է «ձայն», որը առաջ է բերում հուզմունք կամ անհանգստություն: Ըստ ավանդության, իր ժամանակին, երբ այս տեղերում առաջին արծաթ որոնողները մոտենում են Պոտոսի մոտ գտնվող արծաթով հարուստ

լեռանը և հարվածում մուրճով, մի խոլ և հուզիչ ձայն է լսվում, որը և ընկած է անվան ավանդական ստուգաբանության հիմքում։ Պոտոսի անունը ժամանակի ընթացքում թևավոր խոսքի ուժ ստացավ և համարվում է գանձերով հարուստ երկրի հոմանիշ։

ՊՈՐՏ-ՍԱՅԻԴԻ. — Նավահանգիստ Մուեզի ջրանցքի վրա, Միջերկրական ծովի կողմից։ Սայիդը եղել է Եգիպտոսի փոխարքան և իշխել է 1848—1854 թթ.։ Նրա օրոք Ֆերդինանդ Լեսեպսը իրավունք ստացավ կառուցելու Մուեզի ջրանցքը։ Ջրանցքի մոտ հիմնադրված քաղաքն էլ կոչեցին Սայիդի պատվին՝ Պորտ Սայիդ։ Այսինքն «Սայիդի նավահանգիստ»։

ՊՈՐՏՍՄՈՒԻՏ. — Նավահանգիստ Մեծ Բրիտանիայում, Լամանշի ափին։ Անգլերեն պորտ՝ «նավահանգիստ» և մատոթ՝ «գետաբերան» բառերից։ Այլ խոսքով «նավահանգիստ գետաբերանում»։

ՊՈՐՏՈՒ կամ ՕՊՈՐՏՈ (ՊՈՐՏՈ). — Քաղաք Պորտուգալիայում։ Լատիներեն պորտու՝ «նավահանգիստ» բառից։ Տե՛ս Պորտուգալիա։

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ, ՓՈՐԹՈՒԳԱԼԻԱ. — Պետություն Պիրենեյան թերակղզում։ Ներկա Պորտուգալիան անկախ իշխանություն դարձավ 1094 թվականին, մայրաքաղաք Հուշակավեց Պորտու-գալե նավահանգիստը, որը ներկայումս հայտնի է Պորտո կամ Օպորտո անունով։

Պորտո կամ Պորտու անվանումը լատիներեն լեզվից է և նշանակում է նավահանգիստ, իսկ գալե մասնիկը նշանակում է «տաք»։ Այսպիսով, Պորտու-գալե նշանակում է «տաք նավահանգիստ» (այսինքն՝ չսառչող), որն, ինչպես ասվեց, դարձավ մայրաքաղաք։ Նա էլ հենց իր անունը տվեց պետությանը։ Հետո եվրոպական շատ լեզուներում Պորտուգալ անվանմանը տարբեր ժողովուրդներ ավելացրին «իա» մասնիկը, որը երկրի իմաստ ունի, ինչպես «տան»-ը շատ անվանումներում։ Դրա համար էլ Պորտուգալ անունը շատ լեզուներում դարձավ Պորտուգալիա։ Ինչ վերաբերում է Պորտու քա-

դաքին, ապա նա հայտնի դարձավ առանց «գալե» մաս-
նիկի և ուղղակի կոչվեց Պորտու կամ Օպորտո անունով:

12-րդ դարում մայրաքաղաքը տեղափոխվեց Լիսաբոն:

ՊՈՐՏ-ՕՖ-ՍՊԵՅՆ,— Քաղաք Փոքր Անտիլյան կղզիներում:
Տրինիդադ և Տորագո պետության մայրաքաղաքը: Անգ-
լերեն լեզվում բառացի նշանակում է «հսպանական նա-
վահանգիստ»:

ՊՈՐՏ-Օ-ՊՐԵՆՈՒ.— Հայիտի պետության մայրաքաղաքը:
Ֆրանսերեն պորտ՝ «նավահանգիստ» և պրենս՝ «արքա-
յազն» բառերից: Կոչվեց այն նավի անունով, որը
1706 թ. քաղաքի հիմնադրման ժամանակ այստեղ բե-
րեց առաջին բնակիչներին:

ՊՐԱԳԱ. — Զեխոսլովակիայի մայրաքաղաքը: Անվան ստու-
դաբանությունը պարզ չէ: Ենթադրվում է, որ առաջա-
ցել է չեխերեն պրագ բառից, որը նշանակում է «սա-
հանք»: Բայց գետը՝ Վլտավան այստեղ սահանք չունի:
Առաջարկվել է նաև պրաժիտի՝ «չորացած» կամ «այր-
ված» (անտառ) մեկնաբանումով:

ՊՐԵՏՈՐԻԱ. — Հարավ-Աֆրիկյան Հանրապետության մայրա-
քաղաքը: Հիմնադրվել է 1855-թվականին և կոչվել է
բուրերի քաղաքական գործիշ և նրանց դեպի հյուսիս,
այսինքն երկրի խորքերը առաջնորդող Անդրիս Պրետո-
րիուսի պատվին:

ՊՐԵԲՆԵՐ. — Տափաստաններ Ամերիկայի Միացյալ Նահանգ-
ների կենտրոնական և Կորդիլիերներին հարող մասում:
Ֆրանսերեն պրերի նշանակում է «ոչ մեծ դաշտ»:

ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏ. — Հովհանավորյալ երկրի: Կախվածության
ձեւ, մի երկրի կախվածությունը մյուսից: Պրոտեկտո-
րատ հասկացությունը՝ լատիներենից է, որի հիմքում
ընկած է պրոտեկտոր՝ «հովհանավորող», «պաշտպան»
բառը: Միշագգային իրավունքի ասպարեզում պրոտեկ-
տորատ են կոչվում այն երկրները, որոնց նկատմամբ
մեկ ուրիշ պետություն հովհանավորի քաղաքականու-

թյուն է վարում: Զնայած պրոտեկտորատները կառավարվում են տեղական իշխանների կամ՝ ֆեոդալների միջոցներ, քայլ ենթարկվում են իրենց «Հովանավորող» պետությանը, հատկապես միջադաշտին քաղաքական հարցերում:

Պրոտեկտորատներ են համարվում Արարական թերակղզու հարավ-արևելյան մասի մանր իշխանությունները: Դրանք են՝ Օմանը, Պայմանագրական Օմանը, Բահրեյն կղզիները (որը վեճարկվում է իրանի հետ), և Բրունեյը՝ Կալիմանտան կղզու հյուսիս-արևմտյան մասում:

Ի դեպ, դասական պրոտեկտորատներ են համարվում Եվրոպայի մի քանի փոքր պետություններ՝ Սան-Մարինոն (իտալական), Մոնակոն (ֆրանսիական), Լիխտենշտեյնը (շվեյցարական):

ՊՐԺԵՎԱԼՍԿ.—Քաղաք Կիրգիզական ՍՍՀ-ում: Կոչվել է ի պատիվ ռուս ճանապարհորդ, Կենտրոնական Ասիխայի նշանավոր հետազոտող Նիկոլայ Միխայլովիչ Պրժեկալսկու: Քաղաքը մինչև 1889 թ. և 1921—1939 թթ. կոչվել է Կարակոլ:

ՊՐԻԲԻԼՈՎՅԱՆ ԿՂՋԻՆԵՐ.—Կղզիներ Բերինգի ծովում: Պատկանում է Ամերիկայի Միացյալ Նահանգներին: Հայտնաբերվել է 1787 թվականին ռուս ծովագնաց Գ. Լ. Պրիբիլովի կողմից (1754—96 թթ.):

ՊՐԻՄՈՒՐԻԵ.—Ալյստեղ ռուսերեն «պրի» նախածանցը ունի թերնդանրապես «մոտ», «կից» իմաստ, և թե «մինչև», «այս կողմ» նշանակությունը: Տվյալ դեպքում Պրիմորիե նշանակում է «ծովամերձ» կամ «ծովից այս կողմը» լնկած տերիտորիա:

ՊՐՈՊՈՆՏԻԴԱ.—Մարմարա ծովի հին հունական անունը:

ՊՐՈՎԱՆՍ.—Պատմական մարզ Հարավային Ֆրանսիայում: Առաջացել է լատիներեն պրովինսիա՝ «պրովինցիա» բառից: Իսկ հին Հռոմում՝ պրովինցիա կոչվում էին

Հոռմեացիների նվաճած մարզերը կամ երկրները: Ժամանակի ընթացքում պրովինցիա անունը ստացավ նաև ծայրամասի կամ գավառի իմաստ:

ՊՐՈՒՍԻԱ.— Երբեմնի պետություն Գերմանիայում, նրա արեւիլլան մասում: Կոչվել է Բալթիական պրուս ժողովրդի անունով:

ՊՈՒԵԲԼԱ, ՊՈՒԵԲԼՈ.— Քաղաք Մեքսիկայում: Խսպաներեն պուեբլո՝ «գյուղ» բառից: Քաղաքը հիմնադրվել է 1535 թվականին:

ՊՈՒԵԲՏՈ-ՌԻԿՈ.— Կղզի Վեստ-Ինդիայում: Մեծ Անտիլյան խմբում: Անունը խսպաներեն պորտո՝ «նավահանգիստ» և ոիկո՝ «Հարուստ» բառերի միացումից: Հայտնաբերվել է 1493 թվականին Քրիստափոր Կոլումբոսի կողմից:

ՊՈՒԵՇԱ.— Տափաստան Հունգարիայում: Ստորին Դանուբյան Հարթավայրում, Դանուբ և Տիսա գետերի միջև: Հունգարերեն բառ է, որը նշանակում է «տափաստան»:

Զ

ԶԱԿԱՐՏԱ.— Ինդոնեզիայի մայրաքաղաքը: Քաղաքը հիմնադրվել է 16-րդ դարում Զայակերտա անվամբ, որը սանսկրիտերեն լեզվում մոտավորապես նշանակում է «փառավոր բերդ»՝ Հաղթանակի իմաստով: Զայակերտա անունը հոլանդացիք ձևափոխեցին Զակարտայի, իսկ երկիրը վերջնականապես նվաճելուց հետո՝ փոխարինեցին Բատավիայով: Այդպես նա կոչվեց ավելի քան երեք հարյուր տարի: Ինդոնեզիայի անկախությունից հետո վերականգնվեց Զակարտա անվանումը:

ԶԱՄԲՈՒԼԻ.— Քաղաք Ղազախական ՍՍՀ-ում: Կոչվել է ի պատիվ ղազախ ազգային բանաստեղծ Զամբուլի

(1846—1945 թթ.): Մինչև 1938 թվականը կոչվում էր Առվիշ-Աթա:

ԶԱՅՊՈՒԻԹ. — Քաղաք Հյուսիս-արևմտյան Հնդկաստանում: Խաջաստանի գլխավոր քաղաքը: Քաղաքի անունը սանսկրիտերեն ջայա՝ «Հաղթող» և պուր՝ «քաղաք» բառերի դուգակցումից:

ԶԵԶԿԱԶԳԱՆ. — Քաղաք Ղազախական ՍՍՀ-ում: Ղազախերեն բառացի նշանակում է «որտեղ պղինձ է արդյունահանվում»: Անվանումը շատ սազական է տեղին:

ԶԻԲՐԱԼԹԱՐ. — Հրվանդան, գաղութ և նեղուց: Անունը արաբերեն ջերել՝ «լեռ» բառից և արաք զորավար Թարիկի անունից: Միջին դարերում, երբ արաբները դուրս եկան Արաբական թերակղզուց և շարժվեցին դեպի Հյուսիսային Աֆրիկա, իսկ այնտեղից էլ անցան Պիրենեյան թերակղզի, արաբական զորավար Թարիկը այդ թերակղզու Հարավային ծայրում, ժայռի վրա, կառուցել տվեց մի բերդ, որն այժմ էլ կանգուն է և կոչվում է «Մավրիտանական ամրոց»: Այդ օրվանից սկսած արաբները ժայռը կոչեցին «Զերել-Թարիկ», այսինքն «Թարիկի սար»:

Արաբները մոտ 800 տարի շարունակ տիրեցին իսապանիան, բայց նրանց նահանջից հետո էլ ժայռի անունը մնաց նույնը, սակայն քիչ ձևափոխված, արդեն որպես «Զիբրալթար»:

Ներկայումս այդ անունը կրում են Եվրոպան Աֆրիկայից բաժանող նեղուցը և Պիրենեյան թերակղզու ծայր Հարավում ընկած ժայռը, որի լանջերին էլ գտնում է անգլիական Զիբրալթար գաղութը, որը իսպանիայից զավթվել է 1704 թ.:

ԶԻԴԱ. — Նավահանգիստ Սառույան Արաբիայում: Արաբերեն նշանակում է «Վերին ափ»:

ԶՈՐԶԻԱ. — ԱՄՆ-ի նահանգներից մեկը: Կոչվել է ի պատիվ անգլիական թագավոր Գևորգ III-ի (անգլերեն Ջորջ) (1760—1820 թթ.):

ԶՈՒԳՀԱՔԻՐԻ լեմնաշղթա.— Լեռնաշղթա Հեռավոր Արևել-
քում: Անունը գալիս է յակուտերեն դիուզդիուր՝ «լեռ-
նաշղթա» բառից:

ԶՈՒԳԱԲԻՍ.— Աշխարհագրական մարդ Հյուսիս-Արևմտյան
Զինաստանում: Ախնցյանի հյուսիսային մասը: Անվան
հիմքում ընկած է մոնղոլերեն ձու՝ «Ճախ» և գա՝ «Ճեռք»
բառերի միացումը: Այսինքն «Ճախ կողմը գտնվող»
(Տիբեթի նկատմամբ):

ԶՈՒԳԼԻ.— Սանսկրիտերեն ջանգալա բառից, որը նշանա-
կում է թավուտ, մացառուտ: Օգտագործվում է ընդար-
ձակ, անմշակ, խոնավ տարածությունների համար,
որոնք ծածկված են ծառերով և թփերով, լիանաների ոռ-
խոտի խիտ զանգվածներով: Զունգլի են կոչվում հատ-
կապես խիտ արևեադարձային անտառները, որոնք տա-
րածված են Հնդկաստանում, Աֆրիկայում, Հարավային
Ամերիկայում:

Ո

ՌԱԲԱՏ.— Մարոկկո պետության մայրաքաղաքը: Արաբերեն
ոիրատ՝ «ռազմական ճամբար» բառից: Այսպես էին
անվանում արաբները նվաճված վայրերում հիմնած
նոր քնակավայրերը:

ՌԱՆԳՈՒՆ.— Բիրմայի մայրաքաղաքը: Աղավաղված ձևն է
բիրմական «վերջ» և «պառակտում» բառերի: Այսինքն՝
«վերջ պառակտման»: Այսպես է կոչվել 1755 թվակա-
նին ի հիշտակ Բիրմայի վերամիավորման և ներքին
պատերազմների ավարտման:

ՌԵԳԵՆԵՐՈՒԹ.— Քաղաք ԳՅՀ-ում: Լատիներեն ուղիս՝ «թա-
գավոր» և բուրգ՝ «բերդ» բառերից:

ՌԵԴ-ՌԻՎԵՐ.— Այդպես են կոչվում մի քանի գետեր Հյուսիսային Ամերիկայում: Առավել նշանավոր են երկուսը, որոնցից մեկը գտնվում է Կանադայում և թափվում է Վիխնիապետ լիճը, իսկ մյուսը հանդիսանում է Միսսիսիպիի աջ վտակը: ՌԵԴ-ՌԻՎԵՐ անունը անգլերեն լեզվից է և բառացի նշանակում է «Կարմիր գետ»:

ՌԵՅՔԱՎԻԿ.— Իսլանդիայի մայրաքաղաքը: Նորվեգիան ու կամ՝ «ծխացող» և վիկ՝ «ծոց» բառերի միացումից: Այսինքն «ծխացող ծոց»: ՌԵՅՔԱՎԻԿԻ շուրջն են գտնվում Իսլանդիայի նշանավոր գեյզերներից շատերը, որոնցից գուրս ժայթթող տաք ջրի գոլորշիները ծխելու կույտ են հիշեցնում: Եվ պատահական չէ, որ երբ նորմաններն առաջին անգամ տեսան քաղաքը, այն կոչեցին «ՌԵՅՔԱՎԻԿ»:

ՌԵՅՄՍ.— Քաղաք Ֆրանսիայում: Գալերի ռեմի ցեղի անունից:

ՌԵՅՈՒՆԻՒՆ.— Կղզի Հնդկական օվկիանոսում: Մասկարենյան կղզիների խմբում: Ֆրանսերեն ույունիոն նշանակում է «միավորում»: Նկատի է ունեցվում անդրծովյան գաղութների վերամիավորումը ֆրանսիայի շուրջը:

ՌԻԳԱ.— Լատվիայի մայրաքաղաքը: Հիմնադրվել է 1201 թվականին: Անվան բացատրությունը տրվում է երկու կերպ: Առաջինը, հին լատվիերեն ոինգ՝ «շրջան», «ոլորտ», «շրջադարձ» բառերից: Իսկ մյուսը, որը ավելի հավանական է, այն է, որ իր ժամանակին Արևմտյան Դվինայի ճյուղերից մեկը կրում էր Վիգե անունը:

ՌԵԶԱՅԵ (ՌԻՋԱՅԵ).— Լիճ Հյուսիս-արևմտյան հրանում: Պատմական Կապուտան լիճն է, որը հայտնի դարձավ Ուրմիա անվան տակ: Հետագայում վերանվանվել է ի պատիվ պարսից Ռիզա շահի:

ՌԻՈ-ԳՐԱՆԳԵ-ԳԵԼ-ՆՈՐՏԵ.— Սահմանային գետ Մեքսիկայի և ԱՄՆ-ի միջև: Անվանումը իսպաներեն ոիո՞ «գետ», գրանդ՝ «մեծ» և նորտե՝ «հյուսիսային» բառերի միա-

ցումից է: Այսինքն «Հյուսիսային մեծ գետ»: Այսպես է կոչվել 16-րդ դարում, նկատի ունենալով նրա հյուսիսային դիրքը իսպանական տիրապետությունների նկատմամբ և լատինական Ամերիկայում: Ծիռ-գրանդե անվամբ կան նաև ուրիշ գետեր:

Ծիռ-Դե-ԺԱՆԵՅՐՈ.— Քաղաք Բրազիլիայում և պետության մայրաքաղաքը մինչև 1960 թ. ապրիլի 20-ը: Քաղաքի ներկա տեղը հայտնաբերվել է 1502 թվականի հունվարի 1-ին: Անվանման առաջացումը գալիս է պրոտուգալերեն որո՞՝ «գետ» և ժանեյրո՝ «Հունվար» բառերից: Սյուխնքն «Հունվարյան գետ»: Իսկ «դե»-ն հատկացուցիչ մասնիկ է:

Քրիստոնեակողման կողմից Ամերիկան հայտնաբերելուց մոտ տասը տարի հետո, եվրոպական ծովագնացները 1502 թվականի հունվարի 1-ին Ատլանտյան օվկիանոսի կողմից մոտեցան այն ծոցին, որի ափին այժմ գտնվում է Ծիռ-դե-Ժանեյրո քաղաքը: Մոցի հովվերգական գեղեցկությունը գայթակղիչ էր և թերևս ոչ պակաս, քան այժմ նրա ափին ստեղծված արհեստական շքեղությունը: Իսպանացիներին թվաց, թե ծովում գտնվող բազմաթիվ կղզիներից այն կողմը թափնակած են կարծեցյալ գետի ակունքները, որը և հիմք տվեց ծոցը որո՞՝ «գետ» անվանելուն: Բայց բանի որ այն հայտնաբերել էին հունվարի մեկին, առա կոչեցին սուրբ Յանոսի անունով, որի անունն էլ կրում է հենց հունվար ամիսը (իսպաներեն ժանեյրո): Զնայած հետագայում պարզվեց, որ Գուանքարան, որը հայտնաբերել էին իսպանացիները, ամենակին էլ գետ չէ, այլ ծոց է, բայց անվանումը պահպանվեց արդեն ոչ թե ծոցի, այլ ափին հիմնադրված և ներկայումս էլ աշխարհի մեծ ու գեղեցիկ քաղաքներից մեկի վրա:

Ծիռ-Դե-ՕՐՈ.— Իսպանական գաղութ Արևմտյան Աֆրիկայում: Իսպաներեն որո՞՝ «գետ» և օրո՞՝ «ոսկի»: Առաջին պրոտուգալացիները (1438 թ.) այս ափերին, գետի նմանվող ջրային մի երկար շերտի ափին, բնիկների

մոտ գտան ոսկերեր ավազ: Դրա համար էլ «Ոսկի գետ» անվանեցին: Ներկայումս գաղութի պաշտոնական անվանումն է Խսպանական Սահարա:

ՌԻՌ-ՆԵԳՐՈ.— Գետ Արգենտինայում: Խսպաներեն ոկո՞ «գետ» և նեգրո՝ «սև» բառերի միացումից:

ՌԻՌՆԻ.— Գետ Վրաստանում: Անվանման ստուգաբանությունը տրվում է երկու կերպ: Առաջին՝ հունարեն ոկո՞ «Հոսել» բառից, իսկ երկրորդը՝ սվանեթերեն որան «մեծ գետ» բառերից:

ՌԻՑԱ.— Լիճ Արխազական ԽՍՍՀ-ում, գեղատեսիլ վայրում: Գտնվում է ծովի մակերեսութից 950 մետր բարձրության վրա: Լիճը առաջացել է այն մեծ փլվածքի հետևանքով, որը իր ժամանակին փակեց գետի հունը և պատճառ դարձավ արհավիրքի: Լիճի անունն էլ արխազերեն «առիցա» բառից է, որը նշանակում է արհավիրք: Ժամանակի ընթացքում սկզբնատառը (ա-ն) ընկալ և մնաց միցա:

ՌԻՌՆ-ՆԵԳՐՈՒԻ.— Գետ Բրազիլիայում, Ամազոնի վտակներից է: Անվան հիմքում ընկած է պորտուգալերեն ոկո՞ «գետ» և նեգրո՝ «սև» բառերի զուգակցումը: Այսինքն «Սև գետ»:

ՌՈՌԵԶԻԱ.— Անգլիական երկու գաղութների անվանումը: Այզպես է կոչվել անգլիացի կապիտալիստ Սեսիլ Ռոդեզի (Ռոդայի) անունով (1853—1902 թթ.): Գաղութներից մեկը գտնվում է Հյուսիսում և կոչվում էր Հյուսիսային Ռոդեզիա, իսկ մյուսը՝ Հարավում և կոչվում է Հարավային Ռոդեզիա: Հյուսիսային Ռոդեզիան 1964 թվականին անկախացվել և ստացավ Զամբիա անունը: Իսկ Հարավային Ռոդեզիան դեռ մնում է՝ որպես գաղութ, ուղղակի Ռոդեզիա անունով:

ՌՈՌՈՊՅԱՆ ԼԵՌՆԵՐ.— Լեռներ Բուլղարիայում: Հունարեն ոռո՞ն՝ «վարդ» բառից:

ՌՈՒԿԱ ՀՐՎԱՆԴԱՆ.— Հրվանդան Պորտուգալիայում: Համարվում է եվրոպայի արևմտյան ծայրակետը: Պորտուգալերեն ոռկա՞ «ժայռ» բառից:

ՌՈՒԱՅ. — Գետ Ֆրանսիայում: Անվան ստուգաբանությունը տրվում է երկու կերպ: Առաջինը, Հունարեն ոռդոն՝ «վարդ» բառից: Վարդերի գետ իմաստով: Երկրորդը, կելտերեն ոճո՞ւ «գետ» և դան՝ «արագ» բառերից: Այսինքն «Արագահոս գետ»:

ՌՈՍՍԻ ԾՈՎ. — Ծով Անտարկտիկայում: Հայտնաբերվել է 1841 թվականին անգլիացի ծովագնաց Ջեյմս Ռոսսի կողմից և կոչվել է նրա անունով:

ՌՈՍՏՈՎ. — Քաղաք Դոնի գետաբերանում: Հիմնադրվել է 1761 թվականին Յարուլավլի Ռոստովի եպիսկոպոսի պատվին: Հետագայում Յարուլավլը Ռոստովից տարբերելու համար անվանեցին Դոնի-Ռոստով կամ Ռոստով-Դոնի վրա:

ՌՈՏՏԵՐԴԱՄ. — Քաղաք Նիդեռլանդներում: Անունը առաջացել է Ռոտտեն գետի անունից, որը թափվում է Մաասի մեջ և գումարած հոլանդերեն դամ՝ «ամբարտակ» բառը: Այսինքն «Ռոտտենի ամբարտակ»:

ՌՈՒԱՆԴԱ. — Պետություն Աֆրիկայում: Այդպես է կոչվում «վանյառուանդա» ցեղի անունից:

ՌՈՒԴՈԼՖ. — Անհոսք և աղի լիճ Արևելյան Աֆրիկայում, Կենիա պետության սահմաններում: Լիճը այդ անունը ստացավ 1888 թվականին ի պատիվ ավստրիական թագաժառանգ Ռուդոլֆի: Այդպես կոչեց նրան հունգարացի ճանապարհորդ Ֆ. Շ. Տոլեկինը: Բնիկները լճին տալիս են Բասսո-Նարոկ անվանումը; որը նշանակում է «Մեծ ջուր»:

ՌՈՒՄիՆԻԱ. — Պետություն Արևելյան Եվրոպայում: Ռումանիա անվան ձևափոխությունն է, որը նշանակում է Հռոմեացիների երկիր: Անցյալում նա եղել է Հռոմեական գաղութ:

ՌՈՒԹՈՎԱԿԻ. — Քաղաք Վրաստանում: Հիմնադրվել է 1948 թվականին: Վրացերեն ոռւ՝ «ջրանցք» և թավի՝ «գլուխ» կամ «սկիզբ» բառերից: Այսինքն բնակավայր ջրանցքի սկզբում: Այստեղ անցյալում եղած բնակավայրը այդ-

պես է կոչվել, որովհետև գտնվում էր Կուր գետից բա-
ժանվող ջրանցքի սկզբում:

ԱՌԻՎԵՆԶՈՐԻ.— Լեռնային զանգված Արևելյան Աֆրիկայում:
Կոնգոյի և Ուգանդայի սահմանում: Անվանման առա-
ջացումը բանտու լեզվից է և նշանակում է «ամպերի
վեհապետ»:

Ս

ՍԱԱՐ.— Մարդ ԳՅՀ-ում: Անունը ստացել է Սաար գետից:

ՍԱԱՐԲՐՅՈՒԿԵՆ.— Սաարի մարզի գլխավոր քաղաքը: Անու-
նը ստացել է Սաար գետից, իսկ բրյուկե՞ գերմաներեն
նշանակում է «կամուրջ»: Այսինքն «Սաարի կամուրջ»:

ՍԱԼԵԽԱՐԴԻ.— Քաղաք: Յամալո—Նենեցական ազգային օկ-
րուգի կենտրոնը: Անվան ստուգաբանությունը կապվում
է նենեցերեն սալլա՞ «Հրվանդան» և խարդ՝ «բնակա-
վայրի» իմաստով, այսինքն «Հրվանդանի ավան»:
Նկատի է ունեցվում Օբի Հրվանդաներից մեկի վրա
գտնվելլը: Մինչև 1933 թ. կոչվում էր Օբդորսկ:

ՍԱԼՅԱՆԻ.— Քաղաք Ադրբեյջանում: Ավարերեն սալ, սալի՞
«ավաղ» բառից: Ավաղոտ տեղում գտնվելու պատճա-
ռով:

ՍԱԼՎԱԴՈՐ.— Պետություն Կենտրոնական Ամերիկայում: Ա-
նունը ստացել է մայրաքաղաք Սան-Սալվադորից:
«Սալվադոր» իսպաներեն նշանակում է «փրկիչ»: Այդ-
պես անվանեցին իսպանացիները այն քաղաքը, որը
ներկայումս հանրապետության մայրաքաղաքն է: Հե-
տադայում քաղաքը իր անունը տվեց երկրին, իսկ ինքը
ստացավ «սան» մասնիկը, որը սուրբ է նշանակում:
Հետեւապես, Սան-Սալվադոր բառացի նշանակում է
«Սուրբ-փրկիչ»:

ՍԱԼՈՒԵՆ.— Գետ Տիբեթում և Բիրմայում: Տիբեթերեն բա-
ռացի նշանակում է «Կապույտ գետ»:

ՍԱԽԱԼԻՆ.— Կղզի սովետական Հեռավոր Արևելքում։ Մանցուրական սախալին-ուլա բարից, որը նշանակում է «սև գետ»։ Այդպես էին անվանում մանջուրները Ամուրին, որը անունը տարածեց կղզու վրա։ Ճապոնացիք կոչում էին Կարաֆուտո։

ՍԱՀԱՐԱ.— Մեր մոլորակի արևադարձային ամենախոշոր անապատը, որը գտնվում է Աֆրիկայում և բոնում է 7 միլիոն քառակուսի կիլոմետր տարածություն։ Սահարա անունը արաբական «սահրա» բառից է, որը հենց «անապատ» է նշանակում։

ՍԱՄՈԱ.— Արշիպելագ Պոլինեզիայում։ Պոլինեզիական Սամոա առաջնորդի անունից, որի ղեկավարությամբ բնակեցվեց ամբողջ Պոլինեզիան։ Առաջին անգամ հայտնաբերվել է 1722 թվականին հոլանդացիների կողմից։

ՍԱՄՈՍ.— Կղզի էգեյան ծովում։ Փյունիկերեն սամ՝ «բարձունք» բառից։ Նկատի է ունեցվել կղզու լեռնոտ մակերեսը։

ՍԱՄՏԵՇԻԱՆ.— Քաղաք Վրաստանում։ Վրացերեն մարեղի՝ «աղավնի» բառից։ Այսինքն «Աղավնիների տեղ»։

ՍԱՄՈՒՄ.— Զոր և շատ տաք քամի, որը մեծ ուժով փշում է արարական անապատներում և Հյուսիսային Աֆրիկայում։ Սամումը բերում է շիկացած ավագ ու փոշի և փակում է արևը. երկինքը ստանում է սև կապարի գույն։ Սամումը շատ ահեղ հետևանքներ է ունենում մարդու և կենդանիների համար։ Մարդիկ սամումից պաշտպանվելու համար գեմքերը ծածկում են շորով, իսկ ուղտերը գլուխները թաքցնում են ավաղի մեջ։ Անունը արաբերեն լեզվից է և նշանակում է «տոթակեղ քամի»։

ՍԱՅԱՆՅԱՆ ԼԵՌՆԵՐ.— Լեռներ Արևելյան Սիբիրում։ Անվան ստուգաբանությունը տրվում է երկու կերպ։ Առաջինը, Արևելյան Սիբիրում բնակվող սայան կամ սոյոն ցեղի անունից, որը բնակվել է Ենիսեյի և Բայկալի միջև։

Մյուս մեկնաբանումով՝ մոնղոլերէն սագան՝ «սպիտակ» բառից:

ԱԱ.ՑԳՈՒՆ. — Հարավային Վիետնամի գլխավոր քաղաքը և նավահանգիստը: Անվանման ստուգաբանությունը բացատրվում է երկու կերպ: Մեկը կապվում է գոնչ՝ «գետ» բառի և «սայ» մասնիկի հետ, որը արևմտյան է նշանակում: Այսինքն «Արևմտյան գետ»: Երկրորդ մեկնաբանությունը՝ «թեք ափի լպատվար»:

ԱԱՆ-ԽՈՍԵ. — Կոստա-Ռիկայի մայրաքաղաքը: Հիմնադրվել է իսպանացիների կողմից 1780 թվականին, այն եկեղեցու շուրջը, որը նվիրված էր «Սուրբ Հովսեփին»: Սան-Խոսեն իսպաներեն հենց «Սուրբ Հովսեփ» է նշանակում:

ԱԱՆ-ԽՈԽԱՆ. — Պուերտօ-Ռիկոյի մայրաքաղաքը: Հիմնադրվել է մի եկեղեցու շուրջը, որը նվիրված էր Սուրբ Հովսեփին: Իսպաներեն Սան-Խուանին:

ԱԱՆԿԸ-ՊԵՏԵՐԲՈՂԻԹԳ. — Լենինգրադի նախկին անունը: Հիմնադրվել է 1703 թվականին Ռուսաստանի կայսր Պյոտր I-ի կողմից (1682—1725 թթ.): Գերմաներեն տառադարձությամբ Պյոտրը՝ Պետեր է, իսկ բուրգ նշանակում է «քաղաք» կամ «բերդ»: Անվան սկզբի սանկտ բառը նշանակում է «սուրբ»: Ուրեմն՝ «Սուրբ Պետրոսի քաղաք»: 1915 թվականին, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ Ռուսաստանը կովում էր Գերմանիայի դեմ, պահանջ զգացվեց քաղաքին տալ ուսուական անվանում և կոչվեց Պետրոգրադ, այսինքն «Պյոտրի քաղաք»: Իսկ 1924 թվականին քաղաքը կոչվեց Լենինգրադ:

ԱԱՆ-ՄԱՐԻՆՈ. — Պետություն հարավային Եվրոպայում, Ապենինյան թերակղզում: Աան Մարինոն Եվրոպայի ամենահաջին հանրապետությունն է, որը հիմնադրվել է մեր թվականության 4-րդ դարում: Անվանման առաջացումը կապված է քարտաշ Մարինուսի անվան հետ: Ակզբի «սան» մասնիկն իտալերեն սանտո՝ «սուրբ» բառի կըրճատումն է: Հայերեն կլինի «Սուրբ Մարինո»: Մարինուաք կամ Մարինոն բնակվել է Ադրիատիկ ծովի կըդ-

գիներից մեկում։ Նա հաճախակի դուրս էր գալիս տեղական ֆեռազների դեմ և նրանց հետապնդումից փրկվելու համար անցավ Աղրիատիկ ծովը և 308 թվականին ապաստանեց Մոնտե Տիտանո լեռան վրա։ Այստեղ նա իր շուրջը համախմբեց իր կողմնակիցներից շատերին, մեծ մասամբ արհեստով քարտաշներ, և հիմնեց մի ամրոց։ Ժամանակի ընթացքում Տիտանո սարի գլխին, ամրոցի շուրջը, նոր բնակավայրեր են կառուցում և մի համայնք է ստեղծվում։ Մարինոյի մահից հետո բնակիչները համայնքը նրա անունով են կոչում և անվան սկզբին ավելացնում սան (սուրբ) բառը, քանի որ հետագայում Մարինոյին դասեցին սրբերի շարքը։ Սան-Մարինո է կոչվում նաև հանրապետության մայրաքաղաքը, որը գտնվում է Մոնտե Տիտանո սարի վրա։ Սարի լանջին էլ փոված է ամբողջ պետությունը։ Սան-Մարինոն հանդիսանում է իտալիայի պրոտեկտորատ (հովանավորյալ երկիր)։

ՍԱՆԻԿՈՎԻ ԵՐԿԻՐ.— Երևակայական ցամաք, որը պատկերացվել է Սառուցյալ օվկիանոսում, Նոր-Սիբիրյան կըզգիներից հյուսիս:

Սաննիկովի երկիր անունը պատկանում է այն տեղանունների թվին, որոնք տրվել են գոյություն չունեցող օբյեկտներին։ Այս առասպելական երկիրը (կղզին), որը մեկնես դար զբաղեցնում էր աշխարհագրագետներին և ճանապարհորդներին, արդյունագործ Յակով Սաննիկովի երևակայության արդյունքն էր։ Սաննիկովը ներկա կոտելնի կղզու արևմտյան մասում, հեռավոր հորիզոնում նկատել էր ինչ-որ կապտություն, և նրան թվացել էր, թե տեսել է ցամաք (կղզի)։ Այս երևույթը նրան քերեց այն համոզման, որ Նոր-Սիբիրական կղզիներից հյուսիս գոյություն ունի ընդարձակ ցամաք։ Այս կարծեցյալ ցամաքը ստացավ Սաննիկովի երկիր անունը։ Հետագայում Սաննիկովի նշմարած երկիրը շատ փընտրեցին, մոտ մեկ դար տևեց որոնումը, բայց այդպես էլ չգտան, որովհետև չկար։ Վերջապես, 1937—38 թվա-

կանների ուսումնասիրությունները վերջնականապես ապացուցեցին, որ «Սաննիկովի երկիր» ցամաքը սոսկ երևակայական է: Ծովագնացը երկրի (կղզու) տեղ էր ընդունել սովորական սառցադաշտերը:

Սաննիկովի այդ երևակայական «երկիրը» ընկավ գիտա-գեղարվեստական շատ գործերի սյուժեի հիմքում: Հանրահայտ է Վ. Ա. Օբրուեկի «Սաննիկովի երկիր» գիտա-ֆանտաստիկ վեպը:

ՍԱՆՆԻԿՈՎԻ ՆԵՂՈՒՅՑ.— Գտնվում է Կոտենի և Լյախովի կղզիների միջև (Նոր Սիրիոյան կղզիներում): Այդպես է կոչվել ի պատիվ Յակով Սաննիկովի:

ՍԱՆ-ՊԱՌԻԿՈՒԻ.— Քաղաք Բրագիլիայում: Հիմնադրվել է 1554 թվականին: Կոչվել է Սուրբ Պողոս առաքյալի անունով:

ՍԱՆ-ՍԱԼՎԱԴՈՐ.— Սալվադոր պետության մայրաքաղաքը կենտրոնական Ամերիկայում: Հիմնադրվել է 1532 թվականին: Կոչվել է Քրիստոսի անվամբ: Խստաներեն սան՝ «սուրբ» և սալվադոր՝ «փրկիչ», այսինքն «Սուրբ փրկիչ»: Այդպես է մեծարում քրիստոնեական եկեղեցին Քրիստոսին:

ՍԱՆ-ՍԱԼՎԱԴՈՐ.— Կղզի Բահամյան արշիպելագում: Հայտնաբերվել է 1492 թվականին Քրիստափոր Կոլումբոսի կողմից: Այդպես կոչեցին ի նշանավորումն իրենց ցամաք հասնելուն: Նկատի ունեին Սուրբ փրկչին՝ Քրիստոսին, որի օգնությամբ հասան ցամաք:

ՍԱՆՏԱ-ԿՐՈՒՍ.— Մի շարք քաղաքների անուն Արգենտինայում, Բոլիվիայում, Մեքսիկայում, Բրազիլիայում, Խստանիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Ֆիլիպիններում: Կղզի Նոր-Հերրիոդյան խմբում և այլն:

Ամերիկայի նախնական նվաճողները՝ խստանացիները, սիրում էին նոր հայտնաբերած վայրերին տալ կրոնական անվանումներ: Այդպիսիներից է Սանտա-Կրուս անվանումը, որը խստաներեն նշանակում է «Սուրբ խաչ»:

ՍԱՆՏՅԱԳՈ.— Չիլի պետության մայրաքաղաքը: Հիմնվել է խստանացիների կողմից 1541 թվականին: Քաղաքը կոչ-

վեց Սուրբ Հակոբի անունով։ Խսղաներենում սանտ կամ սան նշանակում է «սուրբ», իսկ Հակոբն էլ արտասանվում է Յագու:

ՄԱՆՏՈ-ԴՈՄԻՆԳՈ. — Դոմինիկյան Հանրապետության մայրաքաղաքը։ Հիմնադրվել է Ամերիկայի հայտնագործումից չորս տարի հետո 1496 թվականին և կոչվել է «Սուրբ Կիրակի»։ Քաղաքը 1936—1961 թթ. ընթացքում կոչվում էր Դոմինիկյան Հանրապետության նախկին պրեզիդենտ արյունաբրու դիկտատոր Տրուխիլյոյի անունով՝ Սյուդադ-Տրուխիլյո (սյուդադ-«քաղաք»):

ՄԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՈ. — Քաղաք և նավահանգիստ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Խաղաղ օվկիանոսի ափին։ Անունը առաջացել է Սուրբ Փրանցիսկյան միաբանություններից, որոնք իր ժամանակին այստեղ հաստատվեցին։

ՄԱՍԿՈՉԵՎԱՆ. — Նահանգ և գետ Կանադայում։ Տեղական հնդիկների լեզվում քեսիսկազիվան՝ «արագ հոսող գետ»։ Եվրոպացիների կողմից դարձել է Սասկաչեան։ Նկատի է ունեցվել գետի արագահոսությունը։ Ժամանակի ընթացքում գետն էլ իր անունը տվել է նահանգին։

ՄԱՎԱՆՆԱՆՅՈ. — Ընդարձակ տափաստանային տարածություններ արեալարձային գոտում, ամառային անձրևներով։ Սավաննա բառը իսպաներեն նշանակում է «Հարթություն առանց ծառերի»։ Սավաննաներն ունեն իրենց հատուկ կլիմայական տիպը և բնական լանդշաֆտային առանձնահատկությունները։

ՄԱՐՍԵՎՈ. — Քաղաք Հարավսլավիայում։ Անունը ծագել է Սարայ բարից, որը թյուրքական լեզուներում ունի «պալատի» իմաստ։ Իսկ սարակու նշանակում է «պալատական»։ Սարակոյում 1914 թվականի հունիսի 28-ին սերբիացի Պրինցիպի ձեռքով սպանվեցին ավստրո-Հունգարական թագաժառանգ Ֆրանց-Ֆերդինանդը և իր կինը։ Սարակոյում կատարված սպանությունը դարձավ «կազու բելի» (դրդապատճառ)՝ առաջին համաշխար-

Հային պատերազմի համար, որին վաղօրոք նախապատրաստվում էին կապիտալիստական պետությունները:

ՍԱՐԱՏՎՎ. — Քաղաք ՌՄՖՍՀ-ում, Վոլգայի վրա: Անունը ծագել է թաթարերեն սարի՝ «գեղին» և առու՝ «լեռ» բառերի միացումից: Այսինքն «Դեղին լեռ»: Քաղաքը հիմնադրվել է 1590 թվականին: Անվան համար հիմք են ծառայիշ Վոլգայի աջափնյա մասում դեղնագույն կավաճողերից կազմված բարձրադիր քարափները:

ՍԱՐԳԱՍՅԱՆ ԾՈՎ. — Ատլանտյան օվկիանոսի մի հատվածը: Ընկած է Հյուսիսային Ամերիկայից դեպի արևելք: Հայտնաբերվեց 1492 թվականին, Քրիստափոր Կոլումբոսի կողմից: Ջրային այս ընդարձակությունը պատաժ է ջրիմուներով, որոնց պղպջակները խսպանացիներին հիշեցրին պորտուգալական սարգա խաղողի տեսակը: Այստեղից էլ Սարգասյան ծով անունը, այն, որը հաճախ հանելուկային ձեռվ բնորոշվում է իրեն «անափ ծով»: Սարգասյան ծովի սահմանները հանդիսանում են Գոլֆստրիմ, Կանարյան, Հյուսիս-Հասարակածային օվկիանոսային հոսանքների շրջապտույտը, որն ընթանում է ժամացուցի սլաքի ուղղությամբ: Ծովը աշքի է ընկնում բարձր ջերմությամբ՝ ձմեռը 18—23 աստիճան, ամառը՝ 26—28 աստիճան: Ջերմության և լույսի առատությունը նպաստում է լողացող ջրիմուների գոյցությանը:

ՍԱՐԴԻՆԻԱ. — Խտալիային պատկանող կղզի, գտնվում է Միջերկրական ծովում: Անվան ստուգաբանությունը տղրվում է երկու կերպ: Առաջինը՝ լիգուրական սարդ ցեղի անունից, մյուսը՝ փյունիկերեն սարդո բառից, որը նշանակում է «սանդալածե»: Նկատի է ունեցել կղզու տեսքը:

ՍԱՐԻՍՈՒ. — Գետ Ղազախստանում: Թյուրքական լեզվից սարի՝ «գեղին» և սու՝ «ջուր» բառերից: Անցնելով տափաստաններով, գետը լուծում է տեղի դեղնավուն տիղմը և ջրերը սահմանում են նրա գույնը:

ՍԱՐԻԴՅԱՆ ԱՐՎԵՒՆ. — Պետություն արևմտյան Ասիայում,

Արաբական թերակղզում: Սառույանների դինաստիայի թագավոր՝ իր Սառույի անունից: Նա 1929 թվականին միացրեց արաբական նեղդ և Հեջաս իշխանությունները և ստեղծեց մի պետություն, որը 1932 թվականից կոչվում է Սառույան Արաբիա:

ՄԱՔՍՈՒՆԻԱ. — Պատմական մարդ Գերմանիայում: Գերմանական սաքսոնական ցեղերի անունից, որը ծագել է սաքս «դանակ» կամ «սուր» բառից: Նրանք շատ ճարպկությամբ էին օգտագործում այդ զենքերը:

ՄԵԼԿԱՍ. — Տե՛ս զիլեա:

ՄԵՄԻՊԱԼԱՏԻՆՈՅԿ. — Քաղաք Ղազախստանում: Իրտիշի ափին 18-րդ դարում հիմնադրվել է որպես բերդ, որը ստացել է «Մեմիպալատնոյկ» անունը, որը բառացի «յոթ վրան» է նշանակում: Հետագայում բերդի շուրջը ստեղծված քաղաքը ստացավ այդ անունը:

ՄԵՅՏԵԼՅԱՆ ԿԴՋԻՆԵՐ. — Արշիաբելագ Հնդկական օվկիանոսում: Այսպես է կոչվել ի պատիվ Ֆրանսիայի ֆինանսների մինիստր Մորո դե Մեյտելի. նա հանդերձավորեց այն նավերը, որոնք 1756 թվականին գաղութացրին կղզիները (Հայանաբերված պորտուգալացիների կողմից դեռևս 1506 թվականին): 1506—1756 թվականներին կը եմ են Ասետլիմանս անունը, այսինքն «Յոթ քույրեր»:

ՄԵՆԱ. — Գետ Ֆրանսիայում: Կելտերեն սեգուանա բառից, որը նշանակում է «խաղաղ գետ»:

ՄԵՆ-ԳՈԹԱՐԴ. — Լեռնանցք Շվեյցարիայում: Անունը ստացել է գերմանացի եպիսկոպոս՝ Սուրբ Գոթարդի անունից, որն ապրել է 12-րդ դարում: Նրա սրբավանդները լեռան գագաթին կառուցեցին մատուռ և անվանեցին Մեն-Գոթարդ: Այդ անունն էլ տարածվեց լեռնանցքի վրա:

ՄԵՆԵԳԱԼ. — Պետություն արևմտյան Աֆրիկայում, որը անկախություն ստացավ 1960 թվականին: Մինչ այդ մտնում էր ֆրանսիական Արևմտյան Աֆրիկա կոչվող ընդարձակ գաղութային տիրապետության կազմում: Այդ տիրապե-

տության սահմաններում ստեղծվեցին թվով ինը պետություն։ Դրանցից մեկն էլ հանդիսանում է Սենեգալը։ Անունը ստացել է այն գետից, որը հոսում է նրա հյուսաշրջին սահմանով և բաժանում նրան Մավրիտանական պետությունից։ Սենեգալ անվանումը գալիս է միջին դարերից։ Այն ժամանակաշրջանից, երբ պորտուգալացիները առաջին անգամ մոտեցան ներկա գետին, որն անվանեցին նրա ափին բնակվող բերբերական սենեգալ ցեղի անունով։

ՍԵՆԵԿՈՒԻԾ.— Քաղաք Ամերիկայի Միացյալ Նահանգներում։ Միսսորիի նահանգում։ Հիմնադրվել է ֆրանսիացիների կողմից 1764 թականին և կոչվել է ի պատիվ Լյուդովիկոս XV թագավորի։ Ֆրանսերենում կոմի (լյուդովիկոս) թագավորի անվանը ավելացրած սենտ՝ «սուրբ» բառը։

ՍԵՎԸՆԻԿԱԾ.— Ընկած է Եվրոպայի և Փոքր Ասիայի միջև։ Սև ծովի անվան առաջացման պատմությունը մեզ հասցրնում է հին Հունաստան։ Հույները ներկայիս Սև ծովին անվանում էին Աքսինյան պոնտ, այսինքն «անհյուրընկալ ծով», «վտանգավոր ծով», կամ, դառնությունների հետ կապված՝ Պոնտոս մելաս՝ «Սև ծով»։ Դա հասկանալի է, քանի որ այդ անհյուրընկալ ծովը գտնվում էր իրենց երկրից թե՛ հեռու, և թե՛ հյուսիս։ Եվ այն ժամանակվա նավարկության պայմաններում էլ, համեմատած իրենց հայրենի եղեյան ծովի հետ, անհաղթահարելի էր։ Նրանք Սև ծովում հաճախ հանդիպում էին փոթորիկների, տեղի էին ունենում նավարեկումներ։ Բայց այս պատկերացրումը Սև ծովի մասին հավերժական չեղավ, որովհետեւ ճիշտ չէր։ Եվ երբ հույն առևտրականները կատարելագործեցին իրենց նավերը և անցան Թրակյան Բոսֆորը, այսինքն ներկայիս Բոսֆորի նեղուցը և անգամ գաղութներ հիմնեցին Սև ծովի ափին, ապա նրանց պատկերացրումը փոխվեց Աքսինյան պոնտի (Անհյուրընկալ ծովի) նկատմամբ։ Նա դարձավ արդեն «էվքսինյան պոնտ», այսինքն «հյուրընկալ»,

«սիրալիր» ծով, որը միանգամայն հակառակ էր նախկին պատկերացմանը, բայց և այնպես արդեն ճիշտ գնահատված:

Բայց դրանով «սև» մակդիրը չվերացավ և այդպես էլ մնաց որպես վկա հին հունական ծովագնացների անձիշտ պատկերացմանը, որը հիմք էր ծառայել այդ կախարդիշ ու հրապուրիշ ծովին անարդար կերպով Սև ծով անվանելուն:

ՍԵՎԱՆ.— Իիճ Հայկական ՍՍՀ-ում: Սևան անվան առաջացումը երկար ժամանակ կապել են կղզում՝ գտնվող վանքի՝ «Սև վանքի» հետ, որը կառուցված է սև տուֆից: Այս մեկնաբանումն էլ ընկավ գրականության մեջ և երկար ժամանակ պահպանվեց որպես լճի անվան ստուգաբանություն: Բայց դա ճիշտ լինել չէր կարող, քանի որ Սեվան անունը շատ ավելի հին է, քան թե ինքը վանքը: Վերջապես, Սևանի անվան առաջացման պատմության վրա լույս սփոռեց Օձաբերդի սեպագիր արձանագրությունը, որը թողել էր ուրարտական թագավոր Ռուսա Զ-րդը (730—714 թթ. մեր թվականությունից առաջ): Այս երանելի հայտնագործումը, պատկերացվոր ասած, տվեց լճի «ծննդյան վկայականը», որտեղ հիշատակվում է Սևանի անունը «Սուինիա» կամ «Ծուինիա» ձևով: Այսպիսով, Սևան անվան ստուգաբանությունն էլ Երևանի անվանման նման մեզ տանում է ավելի վաղ ժամանակներ, երբ մարդը իրեն շրջապատող աշխարհագրական օբյեկտները շատ հաճախ կոչել է հասարակ անուններով, գործածելով ուղղակի ջուր, գետ, լիճ, լեռ, անապատ: Պարզվում է, որ Սևան անունը ուրարտական «Սուինիա» կամ «Ծուինիա» անվան ձևափոխությունն է, որը նրանց լեզվում նշանակել է «լիճ» կամ «ավաղան»: Այսպիսով, Սևան անունը ևս օրինակ է այն բանի, թե ինչպես հասարակ տերմինը կարող է դառնալ աշխարհագրական հատուկ անուն: Այսպիսով, «Սուինիա» բառը ուրարտական լեզվում հասարակ անուն է, նա ընդհանրապես լիճ է նշանակել, բայց դարձել է հատուկ անուն,

որովհետև գործածվում է միայն այդ լճի՝ Սևանի նկատմամբ¹:

Աշխարհագրական շատ անունների առաջացումը մոռացվում է սերունդների կողմից, կամ էլ գալիս են նվաճողներ, որոնք անունը կամ աղճատում են, կամ էլ արտասանում իրենց ձևով: Վերոհիշյալների համար լավ օրինակ կարող է ծառայել Երևանի և Սևանի անունների հայտնագործման պատմությունը:

Այսպիսով, Սևան անունը մեզ է հասել որպես Հաճելի ժառանգություն Ուրարտուից, այսինքն այն պետությունից; որը հիմնականում գրավում էր Հայկական բարձրավանդակը և մեծ դեր խաղաց առաջավոր Ասիայի պատմության մեջ: Սակայն մեր թագավորությունից վեց դար առաջ Ուրարտուն դադարեց գոյություն ունենալուց: Հայկական բարձրավանդակում ձևավորվեց Հայ ժողովուրդը՝ դառնալով Ուրարտուի օրինական ժառանգորդը: Հայերը ժառանգեցին նաև ուրարտական աշխարհագրական շատ անուններ: Սևանա լիճը օտարների մոտ հայտնի է եղել տարբեր անվանումներով. այսպես, օրինակ, Անտիկ աշխարհի մեծ աշխարհագրական Պաղոմեոսի քարտեզում հայտնի է Լուխնիտես անունով: Պարսիկները նրան Դարիա Շիրին՝ «Անուշահամ լիճ կամ դեմ» են անվանել: Այս դեպքում նկատի են ունեցել լճի

1 Այդպես են առաջացել Դոն, Դանուր, Գանգես գետերի անունները, որոնք տարբեր լեզուներում նշանակում են «չուր»: Նման օրինակներով շատ է հարուստ աշխարհագրական անունների պատմությունը: Խնձորես, օրինակ, այսօրվա Նեղոս անունը, որը հին եղիպտացիների՝ ՚Նիլ քառից է, որ նշանակել է «չուր»: Իսկ Սահարան արաբերեն սահրա՝ «անապատ» բառն է, Գորին՝ մոնղոլների «տափաստան»: Կամ նման շատ օրինակներ: Այս հասարակ անունները՝ այսօր հնչում են որպես աշխարհագրական հատուկ անուններ: Այս բոլորը վկայում են այն մասին, որ շնայած տարբեր են եղել քառերը, քայլ ամենուրեք վերաբերմունքը նույնն է աշխարհի կամ բնության երևույթների նկատմամբ: Եթե այդպես լիներ, ապա դժվար կլիներ գիտնականների գործը: Ինձոքս տեսնում ենք, տարբեր երկնքի տակ ապրող մարդիկ տարբեր ծովերի և լճերի մոտ բնակվողները մտածում են զգում են միատեսակ:

շրի բարեհամ հատկությունը. թուրքերը Սևանին տվել են Գյոկչայ անունը գեռկ՝ «կապուտակ» և չայ՝ «ջուր» բառերից: Այս անունով էլ անցյալում Սևանը հայտնի էր աշխարհագրական գրականության մեջ:

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ. — Քաղաք Ղրիմում: Հիմնադրվել է 1783 թվականին: Հունական սեբեստոս՝ «փառահեղ», «արքայական» բառերից և գումարած պոլիս՝ «քաղաք» բառը, որը ոռւսերենում սովորաբար տրված է կրծատ ձևով «պոլ»: Հիշենք Կոնստանդնուպոլիս և այլն:

ՍԵՎԻԼԻԱ. — Քաղաք Իսպանիայում: Փյունիկերեն սեպնելա՝ «ցածր» բառի ձևափոխումն է:

ՍԵՎԵՐՍԿԻ ԴՐԱՅՎ կամ ԴՐԱՅՎ ՍԵՎԵՐՍԿԻ. — Դռն գետի աջ վտակը: Այս անվանման ճիշտ ստուգաբանությունը պարզելու համար նախ անջատենք Դոնեց անվան «եց» մասնիկը, որը հին սլավոնական լեզվից է և ունի «փոքրացուցիչ», «փաղաքշական» իմաստ: Այսինքն «փոքրիկ դոն»: Ինչ վերաբերեամ է սեվերսկի անվանը, ապա դա ծնվել է սլավոնական այն ցեղի անունից, որը կոչվում էր սեվերյան: Այնպիս որ գետը կոչվում է սեվերյանե ժողովրդի անունով և ոչ մի կապ չունի ոռւսերեն սեվերնի, այսինքն «Հյուսիսային» բառի հետ: Մանավանդ որ, գոյություն չունի Հարավային Դոնեց: Այդ սխալը, այսինքն Հյուսիսային Դոնեց անվանումը, ուղղվում է: Դասագրքերում գրվում է Սեվերսկի Դոնեց, բայց քարտեզների վրա տեղ շահելու համար Սեվերսկի բառը կրծատվում և գրվում է «Սեվ.-Դոնեց» ձևով, որը և հաճախ պատճառ է դառնում գետը կոչելու հին, ոչ ճիշտ անվանումով:

ՍԵԲԲԻԱ. — Հանրապետություն Հարավսլավիայի կազմում: Սլավոնական սերբ ժողովրդի անունից և գումարած լատիներեն լեզվից, բայց միջազգային դարձած «իս» վերջածանցը, որն ունի երկրի իմաստ:

ՍԵՐԲՎ. — Քաղաք Սվերդլովսկի մարզում: Մինչև 1939 թվականը կոչվում էր Նադեժդինսկ: Վերանվանվեց ի պատիվ սովորական ուսումնական օդաշու Ա. Կ. Սերովի:

ՍԵՐԻԼ. — Քաղաք Հարավային Կորեայում: Բառացի նշանակում է «Մեծ քաղաք»:

ՍԵՐԻՏԱ. — Քաղաք Մարոկկոյում: Ջիբրալթարի Աֆրիկական ափին: Լատիներեն սեպտեմ' «յոթ» բառից: Նկատի են անեցվում այն յոթ բլուրները, որոնք ձգվում են քաղաքի մոտ:

ՍԻԲԻՐ. — Սովետական Միության Ասիական տերիտորիայի մասը: Անվան առաջացումը ստուգաբանվում է մի քանի կերպ՝ մոնղոլերեն շիբիր՝ «Ճաճիճ», «Ճաճճու» բառի, ապա «սաբիրներ» կամ «սիվլիրներ» էթնոնիմի (ցեղային անվան) հետ, որը ոռուների կողմէց ձևափոխվեց դառնալով Սիբիր: Մի այլ մեկնաբանումով, Սիբիր անունը սլավոնական «սեվիր» կամ «սիվեր» բառից է, որը հյուսիսային է նշանակում, սա լավ արտացոլում է երկրի աշխարհագրական դիրքը: Սիբիրը բռնում է մոտ 10 միլիոն քառակուսի կիլոմետր տարածություն:

ՍԻԲԻՐՅԱԿԱՐՎԻ Կ.Ջ.հ. — Կարայի ծովում: Կոչվել է ի պատիվ ոսկի արդյունաբերող Ա. Մ. Սիբիրյակովի: սա ֆինանսավորել էր նորդենշելդի արշավախումբը, որը 1878—1879 թվականների ընթացքում նկարագրեց կղզին:

ՍԻԴՆԵՅ. — Քաղաք և նավահանգիստ Ավստրալիայում: Եվրոպական առաջին բնակավայրը այս աշխարհամասում: Հիմնադրվել է 1788 թվականին և անվանվել ի պատիվ անգլիացի մինիստր լորդ Սիդնեյի: Նախնական անվանումն է Պորտ-Ջեկսոն: Եղել է Ավստրալիայի մայրաքաղաքը մինչև վերջինիս Կանբերա տեղափոխվելը:

ՍԻԴՐԱ ՄԵԾ կամ ՍԻՐՏ. — Ծոց Միջերկրական ծովում: Աֆրիկայի (Լիբերիայի) ափերին: Հունարեն սիրդիս՝ «ծանծաղուտ» բառից:

ՍԻԵՏԼ. — Քաղաք Ամերիկայի, Միացյալ Նահանգներում: Այդպիսի է կոչվել Հնդկացի Ստել առաջնորդի անունից:

ՍԻԵՌԱ-ԼԵՌՈՒԵ. — Պետություն Աֆրիկայում: Խաղաներեն սիեռու՝ «լեռնաշղթա» և լեռնե՝ «առյուծ» բառից: Այսինքն «Առյուծային լեռներ»: Հայտնաբերվել է պորտուգալացիների կողմից 15-րդ դարում: Լեռներում սուրող քա-

մու ձայնը նրանց հիշեցնում էր առյուծի մոնղումը: Այստեղից էլ անվան առաջացումը: Անկախ պետություն 1961 թվականից:

Սիե՛՛Ա-ՄՈՐԵՆԱ.— Լեռնաշղթա հսպանիայում: Իսպաներեն սիեռա՝ «լեռնաշղթա» և մորենա՝ «մուգ» բառերից: Անցյալում այս լեռների հարավային լանջերը պատաժ են եղել կաղնու մուգ անտառներով:

Սիե՛՛Ա-ՆԵՎԱԴԻԱ.— Լեռներ Ամերիկայի Միացյալ նահանգներում և Իսպանիայում: Իսպաներեն սիեռա՝ «լեռնաշղթա» և նեվադա՝ «ձյուն»: Այսինքն «Զյունապատ լեռներ»:

Սիե՛՛ՋԻԱ.— Պատմական մարզ Լեհաստանում: Օգեր (Օդրա) գետի վտակը: Սլենդա (սլավոնական անվանումը) գետի անունից, որը նշանակում է «թաց», «խոնավ»:

Սիե՛՛ՏԵ-ԱԼԻՆ.— Լեռնաշղթա Հեռավոր Արևելքում: Անվան առաջացումը մեկնաբանվում է երկու կերպ: Առաջինը, որ անունը մանջուրական լեզվից է և նշանակում է «Առափնյա գետ»: Երկրորդը, որ չինարենից է և կազմված է սի՝ «արևմուտքի, խե՝ «գետ», տա՝ «մեծ» և մանջուրեն ալին՝ «լեռնաշղթա» բառերից: Ստացվում է «Արևմտյան գետի մեծ լեռնաշղթա»:

Սիկոնի.— Կղզի Ճապոնիայում: Իր մեծությամբ չորրորդն է ճապոնական արշիպելագում: Անվանումը ճապոներեն նշանակում է սի՝ «չորս», կոկու՝ «նահանգ», քանի որ կղզին հնուց ի վեր բաժանված է եղել չորս նահանգի:

Սիկտիվկար.— Կոմի հնքնավար ՍՍՀ-ի մայրաքաղաքը: Կոմի լեզվով Սիկտավ էր կոչվում Սիսոլա գետը: Սիկտավ անվանը գումարած կար՝ «քաղաք» բառը՝ ստացվել է «քաղաք Սիկտավի վրա»:

ՍիՄՊԼՈՆ.— Լեռնանցք Ալպերում, Խոտալիայի և Շվեյցարիայի միջև: Այդպես է կոչվել շվեյցարական «Սիմպելին» հյուրանոցի անունով, որտեղից բարձրանում էին գեպի Ալպեր:

ՍիՄՅԵՐՈՊՈՂԻ.— Քաղաք Ղրիմում: Հիմնադրվել է 1784 թվականին: Հունարեն սիմֆերո՛ «օդտակար լինել», «օդնել»

և պոլիս՝ «քաղաք» բառերից: Ինչպես շատ անվանումներում, այստեղ նույնպես պոլիս բառը ռուսերենում կրծառվել է և դարձել «պոլ»:

ՍինգԱՊՈՒԹ.— Քաղաք, նավահանգիստ, պետություն Մալակա թերակղզու հարավում: Քաղաքը հիմնադրվել է 11-րդ դարում: 1965 թվականի օգոստոսի 9-ին Սինգապուրը դուրս եկավ Մալայզիայի ֆեդերացիայից և դարձավ ինքնուրուցն պետություն: Ունի 600 քառակուսի կիլոմետր տարածություն և մոտ երկու միլիոն բնակչություն:

Սինգապուր անվանումը սանսկրիտերեն (Հին հընդկերեն) լեզվից է՝ սինգա-պուրա բառերից, որը նշանակում է «Այլուծի քաղաք»: Այլուծի պատկերումը տըրպած է քաղաքի աշտարակի վրա, առյուծը նաև քաղաքի խորհրդանիշն է:

ՍիվԱԾ.— Ազգվի ծովի ծոցերից մեկը Ղրիմում: Անունը մեկնաբանվում է տարրեր եղանակներով: Դրանցից մեկը այն է, որ ջրում եղած օրդանական նյութերի քայլքայման պատճառով ջուրը ունի տհաճ հոտ: Ուստի կոչվում է Սիվաշ կամ Սըվաշ՝ «Նեխած լիճ»:

ՍիվԱԶ (ՍըվԱԶ).— Քաղաք Թրակիայում: Բյուզանդական Սեբեստիա անվան թուրքերկան աղճատումն է: Սեբեստոս բառից, որը նշանակում է «փառահեղ», «մեծ»: Սեբեստոս անվանումը հասմեական Օգոստոս կայսրի (30 թ. մ. թ. ա.- 14 թ. մ. թ.) տիտղոսներից մեկն էր: Քաղաքը կոչվել է նեան Մեծապոլիս: Հունարեն մեծա «մեծ» և պոլիս՝ «քաղաք» բառերից: Կոչվել է նաև Դիոսպոլիս, այսինքն «աստծո քաղաք»: Ավելի հին անվանումն է Կարին:

Սիր-ԴԱՅԱՅ.— Գետ Միջին Ասիայում: Տաջիկական սկզբ՝ «առոտ» և դարիու՝ «գետ» բառերից՝ բարեբեր գետի իմաստով:

ՍիրԻԼ.— Պետություն Մերձավոր Արևելքում: Թէ գրականության մեջ, թէ առօրյա խոսակցության ժամանակ Ասորեստան և Ասորիք անունները հաճախ շփոթում են:

Հավասարության նշան դնելով սրանց միջև, որն, ի՞հարկե, ճիշտ չէ: Այդ սխալը հետեւյալ պատճառն ունի: Եթզ հույները առաջին անգամ ծանոթացան Փռքը Ասիայի և Եգիպտոսի միջև քնկած երկրին, տեղի իշխող ժողովորդը կոչվում էր ցիրի կամ տիրի. այդ ժողովորդի անունով էլ երկիրն անվանեցին Սիրիա: Սակայն հետագայում լսելով Ասորեստանի մասին, նրանք կարծեցին, թե դա նույն անունն է, և դրանից հետո երկու անունները հաճախ նույնացնում էին: Պատմահայր Հերոդոտն էր, որ առաջին անգամ նշեց, թե Վերին Միջագետքում բնակվող ազգը իր երկիրը կոչում է Աշուր, որը հետագայում դարձել է Ասորեստան և հարկ չկա շփոթելու Ասորիքի հետ, որը տրվել է ներկա Սիրիային: Սիրիացիները իրենց երկիրը հաճախ Շամ էին անվանում: Այն ընդորինակեցին արաբները, որոնք նկատի ունեին, ոչ այնքան երկիրը, որքան գլխավոր քաղաք Դամասկոսը:

Գիտնականները կարծում են, որ Սիրիա անունը ծագել է երրայերեն ցուր կամ սուր բառից, որն իր հերթին նշանակում է «ժայռ» և որի վրա էլ եղել է համանուն բերդաքաղաքը:

Սիրոկո.— Չոր և տաք քամի: Սահարայից փշում է գեղի Սիցիլիա կղզին և Ապենինյան թերակղզին: Սիրոկիոն վնասակար է բուսական աշխարհի համար: Սիրոկիոն անունը արաբերեն շարկ՝ «արևելք» բառից է:

ՄիջջԱՆ.— Գետ Զինաստանում: Բառացի նշանակում է «Արևմտյան գետ»: Սի՝ «արևմուտք» և հարավային բարբառով ցվան՝ «գետ» բառերից:

ՄիջիԱԼ.— Կղզի Միջերկրական ծովում: Պատկանում է Իտալիային: Անվան առաջացումը կապվում է սիկովի ժողովորդի հետ, որը հին ժամանակներում բնակվել է այստեղ: Կղզու մյուս անվանումը եղել է Տրինակրիա՝ «եռանկյունի»: Ենթադրվում է, որ այդպես է կոչվել երեք հրվանդանների կամ երեք գագաթների պատճառով:

ՍԼՈՎԱԿԻԱ. — Զեխոսովակիայի արևելյան հատվածը: Սլովական «սլովակ» ժողովրդի անունից: Այսինքն «Սլովակների երկիր»:

ՍԼՈՎԵՆԻԱ. — Հանրապետություն Հարավսլավիայի կազմում: Սլավոնական «սլովեն» ժողովրդի անունից՝ «Սլովենների երկիր»:

ՍԿԱԳԵՐԱԿ. — Նեղուց Սկանդինավիայի և Յուտլանդիայի միջև: Դանիերեն բառացի նշանակում է «ծանծաղուտ»:

ՍԿԱՆԴԻՆԱՎԻԱ. — Թերակղզի հյուսիսային եվրոպայում: Անունը ստացել է իր հարավային հատվածում գտնվող «Սկանի» կամ «Սկոնե» երկրից:

ՄՄՈԼԵՆՍԿ. — Քաղաք ՌՄՖՍՀ-ում: Հայտնի է դարձել արդեն 9-րդ դարից: Բուսերեն սմոլա՝ «կուպր» բառից: Այդպիսի կոչվել բնակիչների անտառային կուպրի արդյունագործությամբ զբաղվելու պատճառով կամ սմոլյանեցեղի անունից:

ՄՈԼԻԿԱՄՄՍԿ. — Քաղաք Պերմի մարզում: Անունը առաջացել է Կամացի մոտ գտնվող աղահանքերից: Հիմնադրվել է 1430 թ. սկզբում, կոչվել է Սոլի Կամսկին, ապա ձևափոխվել և դարձել ուղղակի Սոլիկամսկ:

ՄՈԼՍԲԵՐԻ. — Հարավային Ռոդեզիական մայրաքաղաքը: Հիմնադրվել է 1890 թվականին և կոչվել է ի պատիվ անդիմական պրեմիեր մինիստր Սոլսբերիի:

ՄՈԼՏ-ԼԵՅԿ-ՍԻՏԻ. — Քաղաք Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Անգլերեն սոլտ՝ «աղի», լեյկ՝ «լիճ», սիտի՝ «քաղաք» բառերից: Այսինքն «Քաղաք աղի լճի ափին»: Խոսքը Մեծ Աղի լճի մասին է:

ՄՈԿՈՏԻՐԱ. — Կղզի Հնդկական օվկիանոսում: Հնդկերեն սուհատարա՝ «երջանիկ» բառից: Լրիվ անունն է Թվիպա-Մուհատարա, այսինքն «Երջանիկ կղզի»:

ՄՈՂՈՄՈՆՅԱՆ (կամ ՄՈՂՈՄՈՆՅԱՆ) ԿԴՋԻՆԵՐ. — Արշիպելագ Խաղաղ օվկիանոսի Մելանեզիա խմբում: 1968 թվականին, իսպանացի ծովագնաց Մենդանիան որոնելով լեգենդար Օֆիր երկիրը, հայտնաբերեց այս կղզիները:

Կղզիները անվանեց Խսրայելի արքա բիբլիական Սողոմոն թագավորի անունով (1016—976 թթ. մեր թվականությունից առաջ): Մենդանիան այս կղզիները կարծեց թե այդ անհայտ ու խորհրդավոր Օֆիր երկիրն է, որտեղից ըստ ավանդության Սողոմոն թագավորը իր ժամանակին երաւաղեմի տաճարի համար ոսկի է բերել տվել: Ի դեպ, լեզենդար Օֆիր երկիրը այդպես էլ գիտության համար մնաց անհայտ: Ժամանակի ընթացքում անհայտ «Օֆիր երկիր» թևավոր խոսքի ուժ ստացավ և Օֆիր երկիր ասելով հասկանում են նույնը, ինչ որ «Էլդրիդո» երկիրն է: Այսինքն հարուստ ու երազ երկիր, որը այդպես էլ չգտնվեց:

ՍՈՒՄԱԼԻ. — Պետություն Աֆրիկայում: Սոմալի ժողովրդի անունից: Տեղական լեզվով այս բառը նշանակում է «սև», «թուփ»: Ի նշան բնակչության թիսանորթ լինելու:

ՍՈՍՅԱՅ ԱՆՏԱՌ. — Այսպես է կոչվել պատմական Հայաստանում Արմավիրի մոտ գտնվող անտառը: Այս անտառը պատմության մեջ հայտնի է նաև Արմենակ նահապետի անունով: Հստ ավանդության անտառը տնկել է Արմենակ նահապետը:

Այդ անտառում աճել են սոսիներ: Հռոմեացիները այս ծառն անվանել են «Հայկական սոսի»: Սոսի ծառը հայ ժողովրդի մոտ հայտնի է նաև շինար անունով: Ի դեպ, թե մեկը, թե մյուսը ժամանակի ընթացքում դարձել են անձնանուններ: Առաջինը՝ արական (Սոսձեռով), երկրորդը՝ իգական (Զինար ձեռով):

Սոսին հայերի մոտ հեթանոսական շրջանում համարվել է նվիրական և պաշտելի ծառ: Այս անտառում հմայություն էին անում, ունկնդրելով ծառերի սոսափյունը: Սոսյաց անտառի նվիրյալը զյուցազն էր համարվում: Այսպես, օրինակ, մեր նահապետներից մեկը՝ Անուշավանը կրում էր Սոսանվեր մակդիրը: Հստավանդության նա եղել է Արա Գեղեցիկի թոռը և իր պարթե հասակի ու գեղեցկության պատճառով կրել Սոսմականունը:

Մեր հայրենիքը նվաճողները կտրատել և ոչնչացրել են այդ հոյակապ պուրակը, այնպես, որ Սոսյաց անտառից լոկ անունն է մնացել:

ՍՊԻՏԱԿ ԾՈՎ.— Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի մասը կազմող ծով: Այդպես է կոչվել, որովհետև տարվա մեծ մասը ծածկված է ձյունով ու սառուցյով: Ինչպես ասում են, տարվա կեսը սպիտակ է սառուցյոց ու ձյունից: Իսկ մյուս մասն էլ քուքն ու ձյունն են իշխում, երկնքի սպիտակ գույնն էլ արտացոլվում է ջրերում և ավելի ամրապնդում ծովի անունը:

ՍՊԻՏԱԿ ՆԵՂՈՍ.— Նեղոսի անվանումը Սուդանում: Այսպես է կոչվում, որովհետև նա նեղոսի առավել ջինջ ու մաքուր հատվածն է: Հայտնի է, որ նեղոսի վարարումը ավելի շատ կապված է Կապույտ Նեղոսի հետ, որը գալիս է Հարեշական բարձրավանդակից և միանում Սպիտակ Նեղոսին, Խարթում քաղաքի մոտ, որից հետո նեղոսը գառնում է տղմարեր:

ՍՈՆԱ.— Գետ Ֆրանսիայում: Ռոնայի վտակ: Կելտերեն սեգուանա բառից, որը նշանակում է «խաղաղ գետ»:

ՍՈԶԻ.— Քաղաք կուրորտ Սև ծովի ափին, Կրասնոդարի երկրամասում: Հիմնվել է 1837 թվականին ռուսների կողմից որպես ամրություն և կոչվել է «Նավագինսկ պոստ»: Հետագայում, 1864 թվականին «Դաշնուվուկի պոստ»: Վերջապես, 1896 թվականին ընդունվել է ժողովրդական «Սոչի» անվանումը, որը գալիս է շերքեզական «սոսացի» անունը կրող ցեղից:

ՍՈՅԻԱ.— Բուլղարիայի մայրաքաղաքը: Այդպես կոչվեց Ս. Սոֆյային նվիրված տաճարի անունով: Իսկ Սոֆիա բարը Բյուզանդիայում նշանակում էր «իմաստություն» և դարձել էր կրոնական տերմին:

ՄՊԱՐՏԱ.— Քաղաք հին Հունաստանում, Պելոպոնես թերակղզում: Սպարտա անվան ստուգաբանությունը տղրմում է երկու կերպ: Առաջինը կապվում է քաղաքի հիմնադիր Սպարտոնի անվան հետ, մոտ 1880 թվականին, մեր թվականությունից առաջ: Մյուս ստուգաբա-

նությամբ՝ առաջացել է Սպարտայի անունից, որը կա-
կեդեմոնի կինն էր:

ՍՊՈՐԱԴՆԵՐ.—Հյուսիսային Սպորտներ և Հարավային Սպո-
րադներ: Կղզիների խումբ է գեյան ծովում: Հին հունա-
րեն սպորտներ՝ «սփոված» բառից: Ի հակադրություն
կիկլադների, որոնց անվանումը հունարեն լեզվում նշա-
նակում է «շուրջ»: Այսինքն խմբված կղզիներ:

ՍՎԱԶԻԼԵՆԴ.—Բրիտանական նախկին տիրապետություն
(պրոտեկտորատ) Հարավային Աֆրիկայում: Անոնց
առաջացել է նեգրական «սվազի» ժողովրդի անունից
և ավելացրած անգլերեն լենդ՝ «երկիր» բառը: Սվազի-
լենդը 1968 թ. ստացավ անկախություն:

ՍՎԱՆԵԹԻԱՆ.—Պատմական մարզ Վրացական ՍՍՀ-ում, Գըլ-
իավոր Կովկասյան լեռնաշղթայի լանջին: Կոչվում է
մրացական «սվան» ժողովրդի անունով: Այսինքն
«Սվանների երկիր»:

ՍՎԵՐԴՈՎՍԿԱԿ.—Քաղաք Ռւբալում: Հիմնագրվել է 1721 թվա-
կանին, Պյոտր 1-ի կողմից և ի պատիվ նրա կնոջ՝ Եկա-
տերինայի կոչվել է Եկատերինբուրգ: 1924 թվականից
կոչվել է Սվերդլովսկ ի հիշատակ սովետական անվանի-
պետական գործիշ Յակով Սվերդլովի (1885—1919 թթ.):

ՄՏԱՆԲՈՒԼ (կամ ԻՄՏԱՆԲՈՒԼ).—Կոնստանդնուպոլիսի թուր-
քական անվանումը: Քաղաքը պատմության մեջ անց-
յալում հայտնի է եղել նախ Բյուզանդիոն անունով:
Ծուսների մոտ՝ Յարդրադ: Կոստանդին թագավորի
անունով կոչվել է Կոստանդնուպոլիս, որը վերջա-
պես թուրքերի կողմից աղճատվելով կոչվեց Ստանբուլ
կամ Խստանբուլ: Դա կատարվեց այսպես: XV դարում
սուլթան Մեհմեդ 2-րդի գորքերը պաշարեցին քաղա-
քը: Պարիսպներից դուրս գտնվող անօգնական հույները
ձգտում էին անցնել թուրքական կորդոնը: Երբ նրանց
հարցնում էին, թե ուր եք գնում, նրանք էլ հունարեն
պատասխանում էին «իս տին պոլիս» այսինքն գնում
ենք քաղաք, ցույց տալով հոյակապ քաղաքը: Թուրքերը
ծանոթ չեին հունարեն լեզվին և որովհետեւ անընդհատ

նույն իս տին պոլիս բառերի զուգակցումն էին լսում,
այդպես էլ կոչեցին քաղաքը, սակայն իրենց եղանա-
կով դարձնելով իստանբուլ (Ստանբուլ):

ԱՏԱՆՈՎՅԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱՆ.— Լեռնաշղթա Արևելյան Սիրի-
ոսմ: Անոնք կապված է Սիրիոի նվաճման հետ: Եթե
ուս կազմի «զեմլեպրոխողեցները» Սիրիոսմ մոտե-
ցան մի վիթխարի լեռնաշղթայի, այն համարեցին
ստանովոյ՝ «զլխավոր» շղթա: Այստեղից էլ լեռնաշղ-
թայի ներկա անունը:

ԱՏԱՎՐՈՅՈՈԼ.— Քաղաք Հյուսիսային Կովկասում: Հիմնվել է
1777 թվականին, երբ պետության կողմից խրախու-
փում էր քաղաքներին հունական անվանումներ տալը:
Հունարեն ստավրոս՝ «խաչ» և պոլիս՝ «քաղաք»: Ռուս-
ներն էլ «պոլիս» բարը կրծատելով «պոլ» են դարձնում:
Այսինքն «խաչի քաղաք»:

ԱՏԱՐԱ-ՊԼԱՆԻՆԱ.— Լեռներ Բալկանյան թերակղզում, որը
հատում է Բուլղարիան արևմուտքից-արևելքը: Անոնք
կապված է բուլղարիեն ստարա՝ «Հին» և պլանինա՝
«Լեռ» բառերից: Այսինքն «Հին լեռներ»: Անցյալում
Բալկաններ:

ԱՏԱՐԱՅՅԱ-ՌՈՒՍԱՅ.— Ամենահին սլավոնական բնակավայ-
րերից մեկը Ռուսաստանում, նովգորոդյան մարզում:
Անվան հիմքում ընկած է ուսւ էթնոնիմը, այսինքն
«Հին Ռուսիա»:

ԱՏԵՆԻ.— Ջրվեժ Կոնգո գետի վրա: Կոչվել է ի սկառիվ ան-
վանի ճանապարհորդ Հենրի Մորտոն Ստենլի (1841—
1904 թթ.):

ԱՏԵՆԻԼԻՎԻԼ.— Քաղաք Կոնգոյում: Անոնք ստացել է ի սկ-
առիվ անվանի ճանապարհորդ Հենրի Մորտոն Ստենլի
(1841—1904 թթ.): Քաղաքը 1966 թվականին վերան-
վանվել է Կիսանգանի:

ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏ.— Լեռնային Դարարաղի կենտրոնը: Այսպես
է կոչվել ի պատիվ Ստեփան Շահումյանի: Անվան երկ-
րարդ մասը՝ «կերտ» ածանցը մասնակցել է շատ տե-
ղանունների կազմվելուն: Նշանակում է «կառուցված»

կամ «շինված»: Մինչև 1923 թ. կոչվում էր Խանքենդի: ԱՏԵՓԱՆԱՎԱՆ.—Քաղաք Հայաստանում: Կոչվել է ի պատիվ Ստեփան Շահումյանի (1878—1918 թթ.): Անվան երկրորդ մասնիկը՝ «ավան» բառը հաճախ է մասնակցում տեղանունների: Ճևավորման մեջ և ունի «գյուղի» կամ «շենի» իմաստ: Այդպես են կազմվել Գեղամավան, Հայկավան և այլ տեղանուններ: Ստեփանավանը անցյալում կոչվում էր Զալալ-օղլի:

ԱՏՈԿՀՈԼՄ.—Շվեդիայի մայրաքաղաքը: Շվեդերեն ստոկ՝ «Ժոց» և Հոլմ՝ «կղղի» բառերից: Այսինքն «Շոցի կղղի»:

ԱՏԲԱՍԹՈՒՐԳ.—Քաղաք Ֆրանսիայում: Գերմանիերեն շտրասե՝ «փողոց» և բուրգ՝ «բերդ» կամ «քաղաք» բառերից: Դեռ մեր թվականությունից առաջին դարում այս քաղաքը հայտնի էր իր մաքուր և սալապատ փողոցներով, և նրանով անցնում էր բանուկ մի ճանապարհ: Այստեղից էլ նրա անունը «Ստրասբուրգ» (շտրասբուրգ), այսինքն «փողոց քաղաք» կամ «ճանապարհ» (վրա գրտնրվող) քաղաք»:

ԱՏԲՈՍԹՈՒԼԻ.—Կղղի և Հրաբուխ լիպարյան կղղիների խըմբում, հտալիայի մոտ: Հունարեն ստրոնգիլիս՝ «կլոր» բառից:

ԱՏԲՈՒԻԿՆԵՐԻ Ա.Փ.—Ընդարձակ տարածություն Գվինեյան ծոցի ափին, որը ներկայում մտնում է Նիգերիա, Գագոմեա և Տոգո պետությունների սահմանները: Այդպես է կոչվել անցյալում, երբ Աֆրիկան դարձել էր «ակամորթների որսի արգելավայր»: Այսինքն, երբ այդ ափերից արտահանում էին անօգնական նեղրերին և իրեն ստրուկ վաճառում գլխավորապես Արևմտյան կիսագընդում:

ԱՏԲՈՒԻԿՆԵՐԻ ՄԵԾ ԼԻԾ.—Կանադայի Հյուսիսում: Անունը թարգմանված է Հնդկական լեզվից: Նրանք լիճը կոչել են Հնդկական մի ցեղի անունով, որին ճնշում և դեպի Հյուսիս էին քշում: Դրա համար էլ նրանց ստրուկներ անվանեցին և լիճն էլ նրանց անունով կոչեցին: Կանադայում կա նաև Ստրուկների Փոքր լիճ:

ԱՐԻՆԱԳԱՐ. — Քաշմիրի մայրաքաղաքը: Հնդկերեն սիրի՝ «հրանկություն» և նագար՝ «քաղաք»: Այսինքն «հրզանկության քաղաք»: Այդպես է կոչվել շնորհիվ շատ հաճելի կլիմայի և տեղանքի:

ԱՌԻԴԱՆ. — Աշխարհագրական մարզ: որը լայն գոտով տարածված է Սահարայից հարավ, Ատլանտյան օվկիանոսից մինչև Եթովպիայի սահմանները: Այս երկրում էր, որ իր ժամանակին արաբները շփվում էին նեգրական ժողովրդի հետ և երկիրն էլ կոչեցին Բիլիադ-էս-Սուդան, այսինքն «Սևերի երկիր»:

ԱՌԻԴԱՆ. — Ինքնուրույն պետություն է (Խարթում մայրաքաղաքով), որը ընկած է Եգիպտոսից հարավ և անցյալում (մինչև 1956 թ.) հայտնի էր Անգլո-Եգիպտական Սուդան անունով:

ԱՌԻԴԱՆ. — Համընկնում է Մալի պետության սահմաններին, որը նախկինում հայտնի էր «ֆրանսիական Սուդան» անունով:

ԱՌԻԿՐԵ. — Բոլիվիայի մայրաքաղաքը: Ի պատիվ Բոլիվիայի առաջին պրեզիդենտ և Ս. Բոլիվարի զինակից Ա. Սուկրեի (1796—1830 թթ.):

ԱՌԻՄԱՏՐԱ. — Կղզի ինդոնեզիայում: Անվանումը սանսկրիտերեն «ծով» բառից է: Սումատրա էր կոչվում կղզու հյուսիսում գտնվող թագավորությունը (13—16-րդ դար), որը հետագայում տարածվեց ամբողջ կղզու վրա: Ներկայումս կղզին հայտնի է Սուլավեսի անվամբ:

ԱՌԻՆԳԱՐԻ. — Գետ: Ամուլի աջ վտակը: Մանջուրերեն «կաթնային» բառից: Գետի մեջ լուծվող լոսային տիղմը ջրին տալիս է պղուր երանգ:

ԱՐԻՆԴ (ԶՈՒՆԴ կամ ԷՐԵՍՈՒՆ). — Դանիական նեղուցներից մեկը, որը միացնում է Կատտեգատը Բալթիկ ծովի հետ: Դանիերեն, շվեդերեն սունդ բառից, որը նշանակում է «նեղուց»:

ԱՌԻՐԱՄԻ. — Լեռնանցք և լեռներ Վրաստանում: Վրացերեն սուլա՝ «կավե կճում» է կոչվել իր այդ մասերում

Հնում զարգացած բրուտագործության ու կճռճների
արտադրանքի պատճառով:

ՍՈՒՐԵ-ՀԵՂԻՆԵ.— Կղզի Ատլանտյան օվկիանոսում: Հայտ-
նաբերվել է պորտուգալացիների կողմից 1502 թվակա-
նի մայիսի 22-ին, Սուրբ Հեղինեի տոնի օրը: Ներկա-
յումս կղզին պատկանում է Մեծ Բրիտանիային: Հայտ-
նի է որպես նապոլեոնի աքսորավայրը, որտեղ և նա-
մահացավ:

Վ

ՎԱԱԼ.— Օրանժ գետի ամենամեծ վտակը, Հարավ-Աֆրիկ-
յան Հանրապետությունում: Անունը տրված է Հոլան-
դիայից եկած գաղթականների՝ բուրերի կողմից: Վաալ
բառը բնիկների լեզվով նշանակում է «աղտոր»: Իրա-
կանում գետն այդպիսին է:

ՎԱԴՈՒՅՑ.— Լիխտենշտեյնի հշխանության մայրաքաղաքը: Ան-
վանումը լատիներեն՝ վալիս դորլցիս՝ «Հաճելի ձոր»
բառերի զուգակցումից:

ՎԱԼԱԽԻԱ.— Ռումինիայի հիմնական մարզերից մեկը: Վա-
լախ ցեղերի անունից, որոնք մտան ռումին ժողո-
վըրդի կազմի մեջ:

ՎԱԼԴՈՅՑ.— Բարձրություն ՍՍՀՄ-ի Եվրոպական մասում:
Ֆիննական վալդա՝ «լուսավոր» կամ «սպիտակ» բառից:
«Սպիտակ լեռների» իմաստով:

ՎԱԼԵՆՍԻԱ.— Քաղաք Իսպանիայում: Հիմնադրվել է հռոմեա-
կան կայսր, Վալենտենիանոս I-ի կողմից (364—
375 թթ.) և ի պատիվ նրա էլ կոչվել է:

ՎԱԼՊԱՐԱՅԻՍՈ.— Քաղաք Զիլիում: Անունը ծագել է իսպա-
ներեն վալ՝ «հովիտ» և պարփառ՝ «դրախտ» բառերի
միացումից: Այսինքն «դրախտային հովիտ»: Այդպես է
կոչվել հրաշալի կլիմայի պատճառով:

ՎԱԽԾ.— Գետ Տաջիկական ՍՍՀ-ում։ Անվանումը առաջացել է վախշ բառից, որը նշանակում է «կատաղի», «վայրի»։ Արագ հոսող լեռնային գետ է իր վերին հոսանքում։

ՎԱՂԱՐՃԱՊԱՏ.— Տե՛ս էջմիածին։

ՎԱՅԳԱԶ.— Կղզի Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում։ Նենցական աղբային կազմում։ Անվան առաջացումը մեկնարանվում է երկու կերպ։ Առաջինը, որ հայտնաբերվել է 16-րդ դարում ուստի արդյունաբերող իվան Վայգաչի կողմից և նրա անունով էլ կոչվել։ Մյուս մեկնարանումվվ, առաջացել է Հյուսիս ուստական «վայգաչ» բառից, որը նշանակում է «ցածրություն»։

ՎԱՅՔ կամ **ՎԱՅՈՑ ՋՈՐ**.— Պատմական մարդ Հայկական ՍՍՀ-ում, Արփա գետի հովտում։ որոշ ժամանակ կոչվել է Թարալագյազ։ Պատմական անցյալում եղել է բիա ցեղախմբի բնակատեղին։ Ժամանակի ընթացքում «բիա» անվանումը ձևափոխվել է վայի և ավելացվել «ք» հնչյունը, որը երկրի իմաստ ունի։ Այստեղից էլ նաև Վայոց սար լեռան անունը։

ՎԱՆ.— Քաղաք Արևմտյան Հայաստանում։ Քաղաքը գտնվում է Վանա լճի ափին, պտղաբեր դաշտում, խաղողի այգիներով ու պարտեզներով շրջապատված։ Ենթադրյալ դրախտի մաս կազմող այդ ցեղատեսիլ քաղաքը իր անվանումը ստացել է Բիայնա կամ Բիախնի անունից, որը նշանակել է «Բիա ցեղի երկիր»։ Ուրարտուի արձանագիր թագավորները, գրեթե բոլորն էլ իրենց կոչում էին «թագավոր Բիայնայի» և «Տիրակալը Տուշպա քաղաքի»։ Ուրարտական Բիայնա կամ Բիախնի ցեղն էլ բնակվել է Վանա լճի արևելյան մասում, ուր գտնվում է ներկայիս Վան քաղաքը՝ հին Տոսպը-Տուշպան։ Վանի արձանագրություններում եղած Բիայնա անունը համապատասխանում է ներկա Վանա լճի ավագանին։ Ժամանակի ընթացքում «բիայնա» կամ «բիանա» անվանումը ձևափոխվել և դարձել է Վան։ Ուրարտագիտությունից հայտնի է, որ ուրարտերն «ք» հնչյունը հայե-

բենում հնչում է «վ»: Այդպես է առաջացել նաև Վայոց ձորի անունը: Բիա ցեղանունը նույն սկզբունքով ձևափոխվեց «վայրի», վերջում ավելացվեց «ք» տառը, դառնալով երկրի անուն: Վան քաղաքը իր անունը տվեց նաև պետությանը և լճին: Ի դեպ, Հետաքրքրական է այն, որ Վան քաղաքի հին անունը Տուշպա (Տոսպ) անցել է գավառին, իսկ երկրինը՝ (Բիահինա) քաղաքին:

ՎԱՆԸ. — Արևմտյան Հայաստանում: Անունը ստացել է Վան քաղաքից, որը գտնվում է լճի ափին: Անվանման առաջացումը նույնն է, ինչ Վան քաղաքի անվան ստուգարանությունը:

Պատմական անցյալում Վանա լիճը կոչվել է ծով և Հայտնի է եղել տարբեր անուններով: Այսպես, օրինակ, «Նախրի Վերին ծով» (Նախրի երկրի անունով), «Տոսպա ծով» (Համանուն գավառի անունով), «Բղնունյաց ծով» (Համանուն նախարարության անունով), «Մշտունյաց ծով» (Մշտունյաց տոհմի անունով), «Արծրունիների տոհմի անունով), «Վասպուրականի ծով» (Վասպուրական նահանգի անունով), «Արճեշի ծով» (Արճեշ քաղաքի անունով), «Ախլաթի ծով» (Ախլաթ կամ Խլաթ քաղաքի անունով), «Աղթամարի կամ Ախթամարի ծով» (Ախթամար կղզու անունով), «Աղի ծով» (Չրի աղիության պատճառով):

ՎԱՆԿՈՒԽԵՐ. — Կղզի Կանադայի արևմտյան ափերի մոտ: Հայտնաբերվել է 1792 թվականին, անգլիացի ծովագնացի՝ Զորջ Վանկուվերի կողմից (1757—1798 թթ.), որի անունով էլ կոչվել է կղզին:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. — Ամերիկայի Միացյալ Նահանգների մայրաքաղաքը: Ի պատիվ Ջ. Վաշինգտոնի, որը եղել է Ամերիկայի Միացյալ Նահանգների ազատագրական պայքարի առաջնորդը և առաջին պրեզիդենտը (1732—1799 թթ.):

ՎԱՇԻՆԳՏՈՆ. — Նահանգ: Ամերիկայի Միացյալ Նահանգների հյուսիս-արևմտյան մասում: Տես Վաշինգտոն քաղաքի անվան ստուգարանությունը:

ՎԱՍԱԿԱՇԵՆ.— Գեղարքունի գավառի պատմական հին քաղաքներից մեկը, Սևանա լճի հարավ-արևելյան ափին՝ Ներկա Վարդենիս շրջանային կենտրոնի տեղում՝ Վասակաշենը վաղ անցյալում կոչվել է Գեղամաբակ, որը ծագած է համարվում Գեղամ նահապետի անունից: Հետագայում վերանվանվել է Վասակաշեն ի պատիվ գեղարքունյաց իշխան Գաբուռն Վասակի, որն ապրել է իններորդ դարում: Գաբուռն Վասակը չպետք է շփոթել Վասակ Մյունիի հետ, որը եղավ Հայաստանի մարզպանը (441—451թ.):

ՎԱՍՊՈՒԻԹԱԿԱՆ.— Պատմական մարզ Արևմտյան Հայաստանում: Պաշլավերեն վասպուր՝ «ազնվական», «իշխան» բառից և ական վերջավորությունից, որը պատկանելիություն է ցույց տալիս: Այսինքն՝ «Վասպուրին պատկանող»: Վասպուրականները հանդիսանում էին բարձր վերնախավ: Վասպուրականը պատմական Հայաստանի Մեծ Հայքի ամենաընդարձակ նահանգն էր: Փաստորեն առանձին թագավորություն էր և ուներ կաթողիկոսություն: Եղել է Արծրունիների սեփականությունը և դրա համար էլ կոչվել է նաև աշխարհ կամ երկիր Արծրունյաց: Զգվում էր Պարսկահայաստանի արևմտյան կողմից մինչև Կորճայքի սահմանները:

ՎԱՏԻԿԱՆ.— Պապական պետություն Հռոմ քաղաքի տերիտորիայում: Կաթոլիկ եկեղեցու այս նստավայրը գտնվում է Հռոմի յոթ բլուրներից մեկի վրա: Այստեղ, հեթանոսության ժամանակ, քուրմերը զանազան կանխագուշակություններ էին անում: Գուշակությունների տեղն էլ կոչվեց Մոնտե Վատիկանո: Անվան հիմքում ընկած է լատիներեն վատիկանում՝ «կանխագուշակում» բառը: Քրիստոնեության ժամանակ այստեղ կառուցվեց կրոնական շենքեր, իսկ 16-րդ դարից էլ Ս. Պետրոսի տաճարը: Ներկայում Վատիկանի կազմում մտնում են Հռոմի պապի նստավայրը, Ս. Պետրոսի տաճարը և թանգարանը:

ԱԱՐԱԺՆՈՒԻՆԻՔ. — Պատմական Հայաստանի Այրարատ նահանգի գավառներից մեկը, որը հետագայում հայտնի դարձավ Գարաշիշագ անունով: Ի դեպ, Գարաշիշագ անունը տրվեց նոր բնակավայրերից մեկին՝ ներկա Սաղկաձորին: Ըստ մեր պատմահայր Մովսես Խորենացու Վարաժնունիք է կոչվել ի պատիվ Վարաժի: Նա Գեղամ նահապետի սերնդից էր: Այս կտրիճ երիտասարդը շատ ուժեղ և դիպուկ նետաձիգ էր, որը գլխավորում էր արքունական որսը: Նրան Արտաշես թագավորը նշանակում է արքունական որսի ղեկավար և շենքը է պարզեվում Հրազդան կոչված գետի ափերին: «Սրանից, ասում են, առաջ է եկել Վարաժնունյաց տունը», — գրում է Խորենացին:

Վարաժնունիք գավառը գրավում էր Հրազդանի վերին հոսանքները, Սաղկունյաց լեռներին հարող լանջերը և Հրազդանի ձախափնյա մասը: Մարմարիկի հովիտը մինչև ներկա Սաղկաձոր բնակավայրը ներառյալ:

ԱԱՐԱՆԱՍԻ. — Քաղաք Հնդկաստանում, որը ավելի շատ հայտնի է Բենարես անվան տակ: Վարանասի անունը կապում են Վարանա և Ասի գետերի անունների գուգակցման հետ: Դրանց միացման տեղում գտնվում է քաղաքը: Մի այլ ստուգաբանությամբ, որպես թե ծագել է սանսկրիտերեն Վարանասի բառից, որը նշանակում է «լավ ջրով վայր»: Վերջինս սոսկ Գանգեսի մեծարումն է՝ կապված Բենարեսի հետ:

ԱԱՐԱՆԳԵՐ ՖԻՌԴ. — Ֆիրդ Հյուսիսային նորմեգիայում: Մեկնաբանվում է երկու կերպ: Առաջինը, վայրագների անունից, որոնք այստեղ բաղա ունեին 12—13-րդ դարերում: Դրա համար էլ կոչվում է նաև Վարյագների ծոց: Երկրորդը, նորվեգերեն վեր՝ «որս» և անգը՝ «ֆիրդ» բառերից: Ի դեպ, այս Ֆիրդում շատ ձուկ են որսում: Ավելի հուսալի է առաջին մեկնաբանումը:

ԱԱՐԶԻԱ. — Փայտակերտ ամրոցների կոմպլեքս Վրաստանում, Ասպինձայի շրջանում: Հանդիսանում է 12-րդ դարի վրացական ճարտարապետության գլուխ-գործոցներից.

Թամարա թագուհու օրոք կերտված կոթողներից է:
Վարձիա վրացերեն նշանակում է «Վարդերի ամբոց»:

ՎԱՐԾԱՎԱԼ. — Լեհաստանի մայրաքաղաքը: Անվանումը ունի
մի քանի բացատրություն: Առաջինը, Վարչա անունից
և «վա» վերջածանցից: Գյուղի իմաստով՝ այսինքն
«Վարչի գյուղ»: Երկրորդը, հունգարերեն վարոշ՝ «ամ-
րացված քաղաք» բառից:

ՎԵԶՈՒԻԿ. — Գործող հրաբուխ Հարավային Իտալիայում: Վե-
զուվ անվան ստուգաբանությունը տրվում է երկու կերպ՝
«Ծխացող լեռ», իսկ մյուսը, ուղղակի «գոլորշի»:

ՎԵԼԻԿԻԵ-ԼՈՒԿԻ. — Քաղաք Պակովի մարզում: Ռուսերեն վելի-
կիե՝ «մեծ» և լուկա՝ որ հին ռուսերենում նշանակում է
«գետի ոլորան» բառերի միացումից: Իրոք որ լովատ
գետը այստեղ ունի մեծ ոլորան:

ՎԵԼԻԿԻՆԳՏՈՆ. — Նոր Ջելանդիայի մայրաքաղաքը, որը գտնը-
վում է Կուկի նեղուցի ափին: Հիմնադրվել է 1840
թվականին: Այդպես է կոչվել ի պատիվ Արթուր Վել-
լինգտոնի (1769—1852 թթ.), որը իր ժամանակին անգ-
լիական ռազմական ու քաղաքական նշանավոր գործիչ
էր, իսկ նոր Ջելանդիան այդ ժամանակ հանդիսանում
էր անզլիական գաղութ:

ՎԵԼԻՉԿԱ. — Քաղաք Լեհաստանում: Աղի արդյունահանման
կենտրոն: Քաղաքի անվան առաջացումը բացատրվում
է երկու կերպ: Առաջինը, կապվում է հովիվ Վելիչկիի
անվան հետ, որը 1233 թվականին այստեղ հայտնաբե-
րել է աղի հանքավայր: Մյուս մեկնաբանումը լեհերեն
Վիելկա սոլ բառերից, որը նշանակում է «աղի մշակ-
ման մեծ տեղ»՝ ի տարբերություն մյուս ավելի փոքր
աղի մշակման վայրերից:

ՎԵՆԵՍՈՒԵԼԱ. — Պետություն Հարավային Ամերիկայում: Ամե-
րիկայի գյուտից յոթ տարի հետո իսպանական նավերը
Ամերիկո Վեսպուչիի գլխավորությամբ մոտեցան ներ-
կա Վենեսուելայի ափերին: Իսպանացիները ներկա Մա-
րակաիրո ծոցի ափին տեսան բնիկների խրճիթները,
կառուցված հենասյուների վրա, որոնք իրար հետ կապ-

Եին պահպանում նավակներով: Այս բանը նրանց հիշեցրեց հտալիայի Վենետիկի քաղաքը, որը կառուցված է բազմաթիվ կղզիների վրա և փողոցների մի մասին փոխարինում են ջրանցքները: Այսպիսով, իսպանացիները նոր գտած երկրի ափերը նմանեցնելով Վենետիկին, անվանեցին Վենետուելա՝ «փոքրիկ Վենետիկ»: Հետագայում այդ անունը տարածվեց երկրի ներքին մասերի և ապա այն ընդարձակ պետության վրա, որը ստեղծվեց 1830 թվականին և հայտնի է Վենետուելա անունով:

ՎԵՆԵՏԻԿ.— Քաղաք հտալիայում: Անվան ծագումը իլլիրիական վենետ ցեղի անունից է, որն այս կողմերում հաստատվել էր դեռևս մեր էրայից հինգ դար առաջ: Քաղաքը հիմնվեց 451 թ.: Մինչ այդ նա մի ձկնորսական ավան էր: Վենետիկը յուրովի քաղաք է. նա փոված է հիմնականում տասնութ կղզիների վրա, որոնք իրար են միացած 387 կամուրջներով: Վենետիկը աշխարհում թերևս միակ քաղաքն է, որտեղ ոչ միայն մետրո չկա, այլև տրոլեյբուս, ավտոբուս և անգամ տաքսի: Քաղաքի «փողոցները» ջրանցքներ են, որտեղ երթևեկում են մակույկներով (գոնդոլներ): Վենետիկ ժամանող մեքենաները մնում են ցամաքում: Վենետիկ անունը թևավոր նշանակություն է ստացել և նշանակում է այնպիսի քաղաք, որը կղզիների վրա է գտնվում: Օրինակ, երբ ասում ենք «Հյուսիսային Վենետիկ» նկատի ենք ունենում Ամստերդամը:

ՎԵՍՏԸ ինդիկ.— Կղզիներ, որոնք ընկած են Կենտրոնական Ամերիկայի արևելյան ափի երկարությամբ, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների միջև: Կղզիների Վեստ Ինդիա անվանումը հետևանք է անվանի ծովագնաց Քրիստափոր Կոլումբոսի պատմական սխալի: Այդ է պատճառը, որ չնայած կղզիները ոչ մի առնչություն չունեն բուն Հնդկաստանի հետ, բայց կրում են «Արևմտյան Հնդկաստան» կամ, ինչպես պաշտոնապես ընդունված է Վեստ Ինդիա անունը:

ինդիա (Հնդկաստան) անվանմանը «վեստ» նախածանցը ավելի ուշ ավելացվեց, երբ պարզվեց, որ Կոլումբոսը սխալվել է և այդ արշիպելագը ոչ մի կապ չունի Ասիայի հարավում գտնվող Հնդկաստանի հետ: Ուստի, որպեսպիսի մարդիկ շշփոթեն այդ, այսպես կոչված «Կոլումբոսյան Հնդկաստանը» իսկական Հնդկաստանի հետ, նրա ինդիա անվանմանն ավելացրին «Վեստ» (Արևմտյան) մասնիկը, նկատի ունենալով, որ Կոլումբոսը այդ կղզիներին էր հասել արևմտյան ուղղությամբ նավարկելիս:

ՎԵՏՏԵԲՆ.— Լիճ Շվեդիայում: Անվանումը շվեդերեն վատեն՝ «ջուր» բառից է:

ՎԵՐԱ-ԿՐՈՒԽ.— Քաղաք Մեքսիկայում: Իսպաներեն վերա «Ճշմարիտ» և կրուս՝ «խաչ» բառերի միացումից: Քաղաքը հիմնադրվել է 1519 թվականին Մեքսիկայի նվաճող Կորտեսի կողմից: Ամերիկայի նախնական գաղութարաները՝ իսպանացիները և պորտուգալացիները, նոր հայտնաբերած վայրերին սովորաբար տալիս էին պերճ և տիրադալին (ճառալին) բնույթի անուններ: Այս քաղաքն էլ սկզբում կոչվում էր «Ճշմարիտ խաչի հարուստ քաղաք», բայց ժամանակի ընթացքում պահպանվեցին միայն առաջին բառերը, այսինքն «Ճշմարիտ խաչ»:

ՎԵՐԻՆ ԼԻՃ.— Հյուսիսային • Ամերիկայում: Հյուսիսային Ամերիկայի հինգ մեծ լճերից՝ Օնտարիո, էրի, Միչիգան և Հուրոն, ամենահյուսիսայինը, այսինքն նրանց նկատմամբ ամենավերինը: Հայտնաբերվել է 1627 թվականին:

ՎԵՐԻՆ ՎՈԼՏԱ.— Պետություն Աֆրիկայում: Անկախություն է ձեռք բերել 1960 թվականին: Անոնք ստացել է համանուն գետից, որը կազմվում է Սև Վոլտա և Սպիտակ Վոլտա գետերի խառնվելուց: Վոլտա անոնք տվել են պորտուգալացիները, որը նրանց լեզվում նշանակում է «վերադարձ»: Դա այն գետային ճանապարհն էր, որով իրենք վերադառնում էին Աֆրիկայի խորքերից:

ՎԵՐԻՈՅԱՆՍԿ. — Քաղաք Յակուտական իՍՀ-ում: Հիմնադրվել է 1638 թվականին, Յանա գետի վերին հոսանքում: Այստեղից էլ անվանման առաջացումը:

ՎԻԲՈՐԴ. — Քաղաք Լենինգրադի մարզում: Հին սկանդինավերեն վի՝ «սրբազան» և բորդ՝ «բերդ» բառերի միացումից: Այսինքն սրբազան բերդ:

ՎԻԵՆՆԱ. — Ավստրիայի մայրաքաղաքը: Անվանման ստուգաբանությունը այսպիսին է: Քաղաքը գտնվում է Գանուրի այն տեղում, որտեղ Վիեննա վտակը միանում է նրան: Ի դեպ, սլովակների մոտ Դանուբը կոչվում էր Վիեննա (Վենա):

ՎԻԵՏՆԱՄ. — Թետություն Հարավ-Արևելյան Ասիայում, Հընդկաշին թերակղղում: Անվանումը վիետնամերեն վիետ՝ «երկիր» և նամ՝ «Հարավ» բառերի միացումից է: Այսինքն «Հարավային երկիր»: Վիետնամ անունը աշխարհագրական քարտեզների վրա երևաց 1945 թվականի սեպտեմբերի 2-ից: Դա նրա պատմական անունն է, որը ֆրանսիացիները վերացրել էին, երբ գաղութացրին Վիետնամի տերիտորիան: Կիրառելով Հին Հռոմեական աշխարհակալների և արդի իմպերիալիստների «բաժանիր որ տիրես» սկզբունքը, նրանք Վիետնամը բաժանել էին երեք մասի՝ Տոնկին, Աննամ և Կոխինխինա անուններով:

ՎԻԼԿԻՑԻՒԹ. — Միացնում է Կարայի և Լապտևների ծովերը: Անունը սատել է ի պատիվ Բ. Ա. Վիլկիցկու նա մասնակից էր հիդրոլոգիական այն էքսպերտիցիային, որը 1914 թվականին հայտնաբերեց նեղուցը:

ՎԻԼՅՈՒՅ. — Լենայի վտակ: Զուկչերեն վիլ բառից, որն ունի «տեղի» նշանակություն, ուր կատարվում էր ձկան որսը և փոխանակությունը:

ՎԻՆՅՈՒՄ. — Լիտվական ՍՍՀ-ի մայրաքաղաքը: Լիտվերեն վինիս բառից, որը նշանակում է «ալիք»: Նկատի է ունեցվել տեղանքի ալիքածակինելը:

ՎԻԿՏՈՐԻԱ. — Աշխարհի քարտեզի տարբեր մասերում կան բազմաթիվ տեղանուններ, որոնք կոչվել են ի պատիվ

անգլիական Վիկտորյա թագուհու Այս երկարակյաց
թագուհին ապրեց 82 տարի, որից 64 տարի թագավո-
րեց: Նրա գահակալության ժամանակաշրջանը եղավ
անգլիական բուրժուազիայի «ոսկեդարը»: Նրա օրոք
չզորացավ և ընդարձակվեց Բրիտանական կայսրու-
թյունը: Այդ ժամանակ անգլիական նավերը ակոսում
էին Համաշխարհային օվկիանոսի ջրերը, անգլիացի
ճանապարհորդները թափանցում էին աշխարհամասերի
թագուաները: Նրանք Հայտնաբերում էին աշխարհա-
գրական նորանոր օբյեկտներ կամ ուրիշի կողմից Հայտ-
նաբերածը զավթում և դրանք առատորեն կոչում էին
Վիկտորյա թագուհու անվամբ: Այդ է պատճառը, որ
աշխարհի քարտեզի վրա կատնեք Վիկտորիա անունը
կրող ջրվեժ, լիճ, երկիր, կղզի, նահանգ և աշխարհա-
գրական բազմաթիվ այլ տեղանուններ: Դրանցից առա-
վել նշանավորներն են՝ Վիկտորիա, Ջրվեժի, որը Հա-
մարվում է աշխարհի խոշորագույն ջրվեժներից մեկը,
բնության վեհանքանչ մի ստեղծագործություն: Ջրվեժը
գտնվում է Աֆրիկայում, Զամբեզի գետի վրա: Հայտ-
նաբերել է անվանի ճանապարհորդ Դավիթ Լիվինգտո-
նը 1855 թվականին: Ջրվեժի բարձրությունը հասնում է
120 մետրի, իսկ լայնությունը 1800 մետր է: Վիկտորիա
լիճը նույնպես գտնվում է Աֆրիկայում, Հայտնաբեր-
վել է անգլիացի ճանապարհորդներ Սպիկի և Գրանտի
կողմից, 1857—1858 թթ.: Վիկտորիա երկիր, գտնվում
է Անտարկտիդայում և Հանդիսանում է Ռոսսի ծովին
հարող ցամաքի մի մասը: Հայտնաբերվել է 1841 թվա-
կանին Զ. Ռոսսի կողմից: Վիկտորիա, Կղջի և Վիկտո-
րիա նեղութ, որոնք գտնվում են Հյուսիսային Կանա-
դայում: Վիկտորիա, ԳԵՏ՝ Ավստրալիայում: Վիկտորիա
ՆԱՀԱՆԴԻ. այսպես է կոչվում Ավստրալիական Միության
նահանգներից մեկը: Վիկտորիա, անվամբ քաղաքներ
կան Հոնկոնգում (Մյանմանում), Մալթայում, Սեյշելյան
կղզիներում, Տեխաս նահանգում (ԱՄՆ) և Հարավային
Ռուգեղիայում:

Վիննիղեգ.— Լիճ և քաղաք Կանադայում: Տեղական հնդիկ-
ների լեզվով վի՝ «տիղմ» և նիպի՝ «ջուր» բառերից: Այ-
սինքն տղմոտ ջուր:

ՎիՇնի ՎՈՂՋՈՒԿ.— Երջանային կենտրոն Կալինինի մարզում:
Անվանման բաղկացուցիչ մասն է վոլոկ բառը, որը
նշանակում է «քարշավայր»: Իսկ վիշնի՝ «վերին»: Այ-
սինքն «Վերին քարշավայր», որը գտնվում է Տվերցա և
Մստա գետերի միջև: Անցյալում այստեղ մի գետից դե-
պի մյուսը նավակները (մակուկները) քառշ տալով
էին տանում:

ՎԻՍՈԿԱՅԱ.— Լեռ Միջին Ուրալի արևելյան մասում, Նիժնի
Տագիլ քաղաքի մոտ: Անունը ստացել է ոչ թե բարձրու-
թյան համար, որը ընդամենը 380 մետր է, այլ երկա-
թահանքի բարձր որակի համար: Ռուսերեն վիսոկի՝
«բարձր» բառից, տվյալ դեպքում երկաթի որակին է վե-
րաբերում:

ՎԻՐԳԻՆԻԱ.— Ամերիկայի Միացյալ Նահանգների շտատնե-
րից մեկը: Այս անունը տրվել է՝ 1584 թվականին,
առաջին վերաբնակիչների կողմից, ի պատիվ Անգլիայի
թագուհի Ելիզավետա I-ի, որը ամուսնացած շեր և
կույս էլ մնաց: Վիրգինիա բառն էլ լատիներեն նշանա-
կում է՝ «կուսական» կամ «կույսի»:

ՎԻՐԳԻՆՅԱՑԱՆ ԿՋՋԻՆԵՐ.— Վեստ հնդիկում, Փոքր Անտիլյան
խմբում: Լատիներեն վիրգինիա՝ «կուսական» բառից:
Անվան առաջացումը կապվում է «սուրբ կույսերի» տո-
նի հետ, որը զուգադիպել է կղզիների հայտնագործման
օրվա հետ: Մի այլ մեկնաբանումով, այսպիս է կոչվել
ի պատիվ անգլիական Ելիզավետա I թագուհու: Սա-
կայն առաջին բացատրությունը ավելի հուսալի է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Քաղաք ՌՍՖՍՀ-ում: Հիմնադրվել է Կիևան
մեծ իշխան Վլադիմիր II Մոնոմախի կողմից (1113—
1125 թթ.):

ՎԼԱԴԻՎՈՍՈԿ.— Քաղաք և նավահանգիստ սովետական
Հեռավոր Արևելքում: Ռուսերեն վլադիշ՝ «տիրել» և
վլուտոկ՝ «արևելք» բառերի միացումից: Այսինքն «տի-

բել արևելքին»։ Հիմնադրվել է 1860 թվականին, այն ժամանակներում, երբ ոռուները ամրանում էին Հեռավոր Արևելքում։

ՎՈԼԳԱ. — Գետ Սովետական Միության Եվրոպական մասում։ Մի շարք ստուգաբանություններ կան այս գետի անվանման առաջացման մասին, որոնք առաջմ չեն համարվում վերջնական։ Նրանցից առավել հուսալին համարվում է սլավոնական վլագա՝ «խոնավ» բառը։ Այս գեպքում ջրի իմաստով։ Մյուսը, փիննա-ուգրական վլագե՝ «սպիտակ», «պայծառ» բառերի ձևափոխումն է։ Վերջապես, բուզարների անունից, որոնք իր ժամանակին բնակվում էին նրա ափերին։

ՎՈԼԳՈԳՐԱԴ. — Քաղաք ՌՍՖՍՀ-ում։ Անվանման հիմքում ընկած է Վոլգա գետի անունը և ավելացրած սլավոներեն գրադ բառը, որը «քաղաք» է նշանակում։ Այսինքն «Վոլգայի քաղաք»։

ՎՈԼԻՆԻԱ. — Պատմական մարզ Արևմտյան Ռւկրաինայում։ Սլավոնական վոլին ցեղի անունից։

ՎՈԼԽՈՎ. — Գետ ՍՍՀՄ-ի Եվրոպական մասում։ Անվան առաջացումը կապվում է ոռուներին օվասա բառի հետ, որը «լաստենի» է նշանակում։ Թերևս ժամանակին գետի ափերը պատաժ են եղել լաստենու ծառերով։

ՎՈՍՏՈԿ. — Գիտական կայան Անտարկտիդայում։ Հիմնվել է 1957 թվականին Միջազգային գեոֆիզիկական տարբակապահությամբ։ Կոչվել է ի հավերժացումն Ֆ. Ֆ. Բելինսգաուզենի և Մ. Լազարևի այն նավերից մեկի անվան, որով 1821 թվականին առաջին անգամ այդ ծովագնացները մոտեցան Անտարկտիդա մայր ցամաքի ափերին։

ՎՈՐԿՈՒՏԱ. — Քաղաք Կոմիական ԻՍՍՀ-ում։ Կոչվել է այն գետի անունով, որի վրա գտնվում է քաղաքը։ Գետի անվան հիմքում ընկած է նենեցերեն վարկ՝ «արջ» բառը։ Այսինքն «Արջերի տեղ»։

ՎՐԱՆԳԵԼԻ ԿՂՋԻ. — Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում։ Կոչվել է ի պատիվ ոռու ծովակալ և Արկտիկայի ուսում-

Նասիրող Ֆ. Պ. Վրանգելի (1796—1870 թթ.): Նա չորս
տարի ուսումնասիրեց Սիբիրի Հյուսիսային ափերը,
որը նրան համաշխարհային համբավ քերեց:

ՎՈՐՈՒՆԵԺ.—Քաղաք ՌՄՖԱՀ-ի Ելքոպական մասում: Անու-
նը ստացել է Վորոնեժ գետից, որը իր հերթին գալիս
է ուսերեն վորոն՝ «ագռավ» բառից: Կամ թե հին ուռ-
սերենում վորոն՝ «սև» բառից՝ գուցե ու հողի իմաս-
տով:

ՎՐԱՍՏԱՆ.—Սովետական Հանրապետություն Անդրկովկա-
սում: Հին իվերիա կամ իբերիա անվանման հայկական
ծեափոխությունն է: Հին Հայերենում կոչվել է Վիրք,
որը հետագայում դարձել է Վրաստան, որին հույները
իբերիա էին անվանում: Ենթադրվում է, որ ծագել է
«վեր» նախադրությունից:

ՎՐԿԱՆԱՑ ԾՈՎ.—Կասպից ծովի պատմական անվանումնե-
րից մեկը: Անունը առաջացել է Վրկանաց աշխարհից,
որը գտնվել է Կասպից ծովի հարավային մասում:
Ներկայիս Գիլանի նահանգի տեղում:

ՎՈՒԻԿԱՆՈ ԿԴՋԻ.—Կղզի Տիրենյան ծովում: Կողել է հին
հումեացիների կուակի աստված «Վուկանուսի» անու-
նով:

S

ՏԱԲՈՐ.—Մարդիա-Թերեզա կղզու ֆրանսիական անվանումը:
Տե՛ս Մարդիա-Թերեզա կղզի:

ՏԱԹԵՎ.—Հայաստանի նշանավոր վանքային կոմպլեքսնե-
րից մեկը, որը գտնվում է Գորիսի շրջանում, Որոտա-
նի անդնդախոր ձորի եղրին:

Տաթեվ ստուգաբանությունը մեր մատենագրության
մեջ տրվում է երկու կերպ: Երկուսն էլ նվիրագործված
են հայոց ավանդություններով:

Առաջինը կապվում է Ս. Թագեսոս առաջալի աշա-
կերտ Ելքոտաթի կամ Սթաթևսի անվան հետ, որը ժա-

մանակին Սյունիքում տարածել է քրիստոնեություն և
այստեղ էլ նահատակվել: Ժամանակի ընթացքում Սթա-
թևու անունն էլ ձևափոխվելով՝ Տաթև է դարձել:

Բայց ժողովուրդն ունի իր ավանդական հենքով և
բանաստեղծական ոգով ստեղծված մի այլ ստուգաբա-
նություն:

Հստ այդ ավանդության, Տաթևի ճարտարապետը՝
երբ ավարտում է հրաշալի տաճարը, ներկա Պողոս-
Պետրոս եկեղեցին՝ իր վայելուզ կաթողիկեով և գեղեցիկ
զանգակատնով, բարձրանում է «երկնաճեմ եկեղեցու»
գմբեթի վրա, որպեսզի զետեղի խաչը: Այդ պահին մի
հայացք է զցում անդնդախոր Հալիձորին և ոլորա-
պտույտ Որոտանին և սարսափահար 22նշում:— Այս
երանի թև առնեի ու թոշեի:

Հստ ավանդության, հանկարծ լսվում է մի խուլ
ձայն, որը ասում է. «Տա թե, տա թե»: Եվ ճարտարա-
պետը անմիջապես թև է առնում ու թոշում: Այստեղից
էլ, ըստ այդ բանաստեղծական ավանդության, «Տաթև»
անվանումը, որը դասվում է Սյունյաց աշխարհի նվի-
րական անունների շարքին:

Ի դեպ, Պողոս-Պետրոս եկեղեցին կառուցվել է 895—
906 թթ. ընթացքում, որից հետո դառնում է Սյունյաց
աշխարհի եպիսկոպոսական աթոռանիստը և մեծ դեր
խաղում հայ ժողովրդի կրօնական ու կրթական գոր-
ծում: Տաթևում շուրջ քսան տարի լուսավորչական աշ-
խատանք է ծավալել Գրիգոր Տաթևացին:

Մինչև 1931 թվականը Տաթևի երկու կաթողիկեները
կանգուն էին: Բայց տեղի ունեցած երկրաշրջ մեծ
վնաս պատճառեց: Տուժեցին Պողոս-Պետրոս եկեղեցին
և նրա գմբեթը:

ՏԱԻԼԱՆԴ.— Պետություն Հարավ-Արևելյան Ասիայում: Անց-
յալում հայտնի էր Սիամ անունով: Անվանման առաջա-
ցումը գալիս է Մուանգ տայ «ազատների երկիր» հա-
տուկ անունից և դումարած անգլերենի լանդ՝ «երկիր»
քառը:

ՏԱԼԻՆ.— Էստոնիայի մայրաքաղաքն է: Էստոներեն տապանի՝ «դանիական» և լիննա՝ «բերդ» բառերի միացումից Քաղաքը հիմնագրվել է 1154 թվականին: Անունն էլ գալիս է միջնադարից, երբ էստոնիան նվաճել էին դանիական ֆեոդալները:

ՏԱԽՈ.— Գետ Պիրենեյան թերակղզում (իսպանիայում) և Պորտուգալիայում): Անունը առաջացել է իսպաներեն տախո՝ «ձորափ», «զառիթափ» բառից:

ՏԱԿԱՆ-ՄԱԿԱՆ.— Անապատ Արևմտյան Չինաստանում, Սինցյան — Ռյագուրյան ինքնավար մարզում: Աշխարհի ամենադժվարամատչելի վայրերից մեկը: Բռնած տարածությունը 300 հազար քառ. կիլոմետր է: Բելգիայից մեծ է տասն անգամ: Քչերին է վիճակվել անցնել նրա խորքերը: Այստեղից էլ նրա անվանման ստուգաբանությունը, որը մնացել է անցյալից: Մարդկանց թվացել է, որ ով գնա նրա խորքերը, այլևս չի վերադառնա: Անվանումն էլ այդպես է մեկնաբանվում. «կգնաս, չես վերադառնա»:

ՏԱԾԿԱՍՏԱՆ.— Հայերի կողմից Թուրքիային տրվող մյուս անվանումը: Անվան հիմքում ընկած է տաճիկ էթնոնիմը (ժողովրդի անվանումը): Հայերը տաճիկ ասելով, հատկապես միջին դարերում, նկատի ունեին Միջագետքում և Սիրիայում բնակվող արաբներին: Մահմեդականությունը տարածվելուց հետո սկսեցին տաճիկ անվանել ընդհանրապես մահմեդականներին: Ժամանակի ընթացքում, երբ թուրքերը հանդես եկան Սիրիայում, անցան Փոքր Ասիա և Հայկական բարձրավանդակ, ապա տաճիկ անունը տարածվեց ավելի շուտ օսմանյան թուրքերի վրա, այն էլ 16—17-րդ դարերից: Երբ ուժեղացավ պանիսլամիզմը և քրիստոնեաների նկատմամբ հալածանքը, ապա տաճիկ ասելով նկատի էին ունենում ընդհանրապես ճնշող, դաժան անձ կամ ժողովրդ: Օրինակ, երբ մեկը դաժանություն էր անում, ասում էին «ինչ ես տաճիկ կտրել» կամ «ինչու ես տաճկաբար վարվում»: Ժամանակի ընթացքում տաճիկ անունը գար-

ձավ հավաքական անվանում և այդպես էին կոչում մահմեղականներին, բայց հիմնականում սուննի դավանանքին հետեւղներին, իսկ շիա դավանանքին հետեւղներին սովորաբար պարսիկ էին անվանում, որոնք հիմնականում Պարսկաստանի բնակիչներն էին: Ժամանակի ընթացքում Օսմանյան թուրքերին տաճիկ անվանեցին, իսկ Թուրքիան էլ Տաճկաստան:

ՏԱՄԲՈՎ. — Մարզային կենտրոն Սովետական Միության Եվրոպական մասում: Անունը ստացել է Տամբով գետից: Իսկ գետը իր անունը ստացել է մորդվերեն տամբաւլեց բառից, որը նշանակում է «խորացած տեղ»: Քաղաքի անունը համապատասխանում է ներկա դիրքին՝ Ցնա գետի գոգավոր հովտում:

ՏԱՅՎԱՆ. — Կղզի Չինաստանի արևելյան ափերի մոտ: Ֆորմոզա կղզու նախկին անվանումը: Անունը առաջացել է Հինարեն տայ՝ «ափ» և վան՝ «դարավանդ» բառերից՝ ակնարկելով ափերի դարավանդային ձևերը, որոնք աստիճանաբար՝ իշնում են դեպի ծով: Ի դեպ, 1516 թվականին, երբ պորտուգալացիները մոտեցան կղզու գեղատեսիլ ափին, նրան անվանեցին ֆորմոզա, որը պորտուգալերեն նշանակում է «Հիանալի»:

ՏԱՆԱՆԱՐԻԿԵ. — Մալզասի հանրապետության մայրաքաղաքը: Մալզասի լեզվով անտանարիվո՝ «Հազար զյուլ» խոսքից է: Իրոք, քաղաքը ստեղծվեց բազմաթիվ գյուղերի միաձուլումից:

ՏԱՆԳԱՆԻԿԱ. — Լիճ Կենտրոնական Աֆրիկայում: Տեղական սուլանելի լեզվով տանգա նշանակում է «առագաստ», իսկ նիկա՝ «սալաննա»: Այսինքն առագաստը սալաննայում:

ՏԱՆԶԱՆԻԱ. — Պետություն Արևելյան Աֆրիկայում: Տանգանիա անունը պատկանում է այն տեղանունների թվին, որոնք առաջացել են վանկային հապավումից: Անունը առաջացել է Տանգանիկա և Զանգիբար անունների՝ առաջին վանկերից: Տանգանիա Միացյալ հանրապետությունն առաջացել է 1964 թվականի ապրիլի 24-ից:

Այդ օրվանից Տանգանիկա և Ջանղիբար Հանրապետությունները համաձայնվեցին միավորվել և ստեղծեցին միասնական պետություն Տանգանիա անունով:

ՏԱՆԺԵՐ. — Քաղաք Մարոկկոյում: Զիբրալթար նեղուցի ափին: Անունը առաջացել է բերբերական անչի՝ «գետ» կամ փյունիկերեն տանգիս՝ «նավահանգիստ» բարից:

ՏԱՇԱՌԻՋ. — Քաղաք Թուրքմենական ՍՍՀ-ում: Թուրքմեներեն տաշ՝ «քար» և հառով՝ «ջրավազան» բառերից: Այսինքն քարի ջրավազան:

ՏԱՇՔԵՆԴ. — Ուզբեկստանի մայրաքաղաքը: Անվան առաջացման տարածված ստուգաբանությունը հետևյալն է: Առաջացել է թյուրքերեն տաշ՝ «քար» և քենդ՝ «բնակավայր», «գյուղ» բառերից: Գոյություն ունի նաև մի այլ բացատրություն, ըստ որի անվան առաջացման հիմքը համարվում են «շաշ» և «քանդ» բառերը: Շաշը եղել է այն մարզը, որը ընդգրկել է Զիբժիկ գետի հովիտը: Շաշի գյուղը հետագայում ձևափոխվել և դարձել է Տաշքենդ: Մի քանի դիտնականներ այն տեսակետին են, որ «տաշ» է դառել «տաճ» բառը, որ տաճիկ անվան սկզբնավանին է: Իսկ մենք գիտենք, որ Արևելքում տաճիկ անունը տրվում էր արաբներին, հատկապես նրանց նվաճումների շրջանում և հետո արդեն ընդհանրապես մահմեդականներին: Այսինքն Տաշքենդ ասելով պետք է հասկանալ արաբների, մուսուլմանների քաղաք, որպիսին, իրոք, նա էր Միջին Ասիայում: Այս կապակցությամբ տես նաև Տաճկաստան անվանման մեկնարանությունը:

ՏԱՋԻԿՍՏԱՆ. — Սովետական Հանրապետություն Միջին Ասիայում: «Տաջիկ» ժողովրդի անունից և պարսկերեն «տաճան» վերջածանցից, որն ունի երկրի նշանակություն:

ՏԱՄՄԱՆԻԱ. — Կղզի Ավստրալիայից հարավ: Հայտնաբերվել է 1642 թվականին Աբել Տասմանի կողմից: Նա կղզին անվանեց Վան-Դիմենի երկիր, որը եղել է հոլանդական գաղութների կառավարիչը: Տասմանը կարծում էր,

որ կղզին կազմում է Ավստրալիայի մասը: Միայն 1798 թվականին Բասը ապացուցեց, որ դա առանձին կղզի է: Վերջինս Տասմանիա անունը կրում է 19-րդ դարի կեսերից: Տասմանը (1603—1659 թթ.) հոլանդացի ծովագնաց էր, որը 1642 թվականին հայտնաբերեց ոչ միայն Տասմանիան, այլև նոր Զելանդիան և մի քանի այլ կղզիներ Խաղաղ օվկիանոսում:

ՏԱՐԱԾՈՒ. — Լեռներ Թուրքիայում: Անունը առաջացել է հունարեն տավրիս՝ «եզ» բառից և գալիս է եզների պաշտամունքից: Եզը համարվել է սրբազն կենդանի, իսկ Փոքր Ասիայի հին ժողովուրդների մոտ՝ համարվել է փոթորիկների աստված: Պաշտամունքի համար այս լեռներում գոյություն ունեին բազմաթիվ տաճարներ: Անվանման երկրորդ մեկնաբանմամբ, տավրիս արամեական լեզվում՝ նշանակել է լեռնային զանգված: Թուրքերը անվանում են Տորոս:

ՏԱՐԱՍԿՈՆ. — Քաղաք Հարավային Ֆրանսիայում: Այսպես է կոչվել առասպելական Տարասկայի անունով, որը շատը է հիշատակվում հարավ-ֆրանսիական հեքիաթներում: Քաղաքի անունը անմահացած է Ալֆոնս Դողեի «Տարասկոնցի Տարտարեն» նշանավոր վեպով:

ՏԵԼ-ԱՎԻՎ (ԹԵԼ-ԱՎԻՎ). — Իսրայել պետության մայրաքաղաքը: Հիմնադրվել է 1909 թվականին, Յաֆա քաղաքի մոտ, որը ներկայումս (փաստորեն ծովվել է ՏԵԼ-ԱՎԻՎ) հետ: Քաղաքն այդպես է կոչվել ի հիշատակ հին բարելական ՏԵԼ-ԱԲԻԲի, որը հայտնի էր որպես հրեա տարագրյալների բնակավայր: Բարելոներեն տել՝ «բլուր» և արիբի կամ ավիլ՝ «գարուն» բառերից: Այսինքն գարնան բլուր: ՏԵԼ-ԱՎԻՎը 1948—1950 թթ. իսրայելի մայրաքաղաքն էր: Դրանից հետո վերջինս փաստորեն տեղափոխվել է Երուսաղեմ:

ՏԵԽԱԾՈՒ. — Ամերիկայի Միացյալ Նահանգներից մեկը: Բնիկների լեզվով տեխսիս՝ «բարի ընկեր»: Այդպես էին պատասխանում հնդիկները, երբ եվրոպացիները հարցնում էին, թե ինչպես է նրանց ցեղի անունը:

ՏԵՐՈՌ.—Հանգած հրաբուխ Անտարկտիկայում, Ծոսսի կըղղում 3277 մետր բարձրությամբ, Վիկտորիա երկրի ափերի մոտ։ Հայտնաբերվել է 1841 թվականին Զոն Ծոսսի կողմից և այդպես է կոչվել ի հավերժացումն իրենց «Տերոր» նավի անվան, այն նավի, որով հետագայում անգլիացի ծովագնաց Զոն Ֆրանկլինի արշավախումբը զնաց դեպի Կանադական արշիպելագ, նպատակ ունենալով այդ մասով անցնել Խաղաղ օվկիանոս, բայց ողբերգական վախճան ունեցավ, կորավսառուցների մեջ։ «Տերորի» հետ Ֆրանկլինի էքսպեդիցիային մասնակցում էր նաև «Էրեբուս» նավը, որը նույն վախճանն ունեցավ։

ՏԻԲԵԹ.—Բարձրավանդակ և ինքնավար մարդ Զինաստանում։ Տիբեթ բառը տիբեթական ստոդ-բոդ բառի արաբական ձևափոխությունն է։ Ստոդ-բոդ նշանակում է «Բոդերի բարձրություն»։ Նկատի է ունեցվել բոդերի ցեղի բնակավայրի բարձր բնույթը։

ՏԻԲԻ. — Գետ հտալիայում։ Մեկնաբանվում է երկու կերպ, մեկը կելտերեն դուքր՝ «ջուր» բառից, մյուաը լատիներեն տիբիրիս՝ «սև գետ» բառից։

ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏ. — Պատմական Հայաստանի նշանավոր և արքայանիստ քաղաք, որը գտնվել է Աղձնիք նահանգում։ Քաղաքը ըստ ավանդության հիմնադրվել է 77 թվականին, մեր թվականությունից առաջ, Տիգրան Ա-ի կողմից (95—55 թթ.): Տիգրանակերտ անունը կազմված է Տիգրան հատուկ անունից և պահլավերեն «կերտ» բայրմատից։ Այսինքն Տիգրանի կառուցած, շինած քաղաք։ Ի դեպ, Հայերենում «կերտ» բայարմատից կազմված թե տեղանունները և թե բարդ բառերը նշանակում են «շինվածք» կամ «կերտվածք»։

Քաղաքը Տիգրան Մեծի օրոք հասավ իր հզորության գագաթնակետին։ Դարձավ հելենիստական մշակութիւնը բաղադրակարգության զլիսավոր օջախներից մեկը՝

պատմական Հայաստանում։ Քաղաքում բնակություն հաստատեցին իր ժամանակի գիտության և արվեստի անվանի ներկայացուցիչները, դարձացավ արհեստն ու առևտուրը։

Չատ հաճախ Տիգրանակերտ և Դիարբեքիր անունները շփոթում են և հավասարության նշան դնում ալդերկու քաղաքների միջև։ Դա, իհարկե, ճիշտ չէ։

Քաղաքներից մեկը պատմական Տիգրանակերտն է, որի ավերակների տեղում, Դիարբեքիրից հյուսիս-արեւակալիք, գտնվում է Ֆարղին գյուղը, իսկ մյուսը՝ Դիարբեքիրն է, որը Փոքր Ասիայի նշանավոր քաղաքներից է և համանուն նահանգի կենտրոնը։ Այս երկու քաղաքները շշփոթելու համար հաճախ գրում են Տիգրանակերտ և փակագծերի մեջ թողնում ֆարղին անունը. կամ ուղղակի անվանում Տիգրանակերտ-Ֆարղին։ Իսկ Դիարբեքիրի համար էլ գրում Դիարբեքիր-Ամիդա (Ամիտա)։ Հնում Ամիդա կամ Ամիտա է կոչվել Դիարբեքիրը։ Ի հավերժացումն Տիգրանակերտի, Երևանի այլ գեշտ հատվածներից մեկը՝ Դալման, վերանվանվել է Նոր Տիգրանակերտ։

Տիգրիս.— Գետ առաջավոր Ասիայում։ Անունը երևի ածանցված է հայերեն «տեկ» բառից։ Գետը սկզբնավորվում է Հայկական բարձրավանդակի հարավում։ Տիգրիսը ալդ մասում նեղ հունի միջով հոսում է արագ և աղմկալից։ Հաճախ ժայռերը ավելի են սեղմում նրան ու կազմում սահանքներ։ Նա ընդունում է նաև արագընթաց վտակներ։ Այստեղից էլ իրրե նրան նմանեցրել են «տեկի հետ»։

ՏիկիՏ, ներկայումս ՍՈՎԵՏԱԿ. — Քաղաք Կալինինգրադի մարզում։ Անունը ստացել է Տիկլա գետից, որը նեմանի վտակն է։ Այս քաղաքը պատմության մեջ հայտնի դարձավ այն բանով, որ նրա մոտ 1807 թ. Նիկոլայ I կայսրը և նապոլեոնը հանդիպեցին իրար և համաձայնություն կնքեցին, որը հայտնի է Տիկլիտի հաշտություն անունով։ Սակայն դա շխանգարեց նապոլեոնին հինգ

տարի հետո խախտելու հաշտության պայմանագիրը և
արշավելու Ռուսաստան:

Տիե՛ռԵՑԿ.— Քաղաք Կրասնոդարի երկրամասում: Երկաթու-
ղային խոշոր հանգույց: Անվանման հիմքում ընկած է
առիխայա բեկա»՝ խաղաղ գետ խոսքը և «Եց» կամ
«Եցկ» փոքրացնող կամ փաղաքշական վերջածանցը:
Նման հրապուրիչ տեղանուններ շատ ստեղծվեցին Հյու-
սիսային Կովկասում, 18-րդ դարի վերջերին, երբ հիմ-
նադրվեցին կողակների ստանցիաներ, ինչպես, օրինակ,
Օտրա Դակուբանսկայա, Պրոխլադնայա բնակավայ-
րերը:

ՏիԵՐԾ.— Կղզի ինդոնեզիայում: Գտնվում է Ավստրալիայի
և Ինդոնեզիայի միջև: Այդպես է կոչվում մալայերեն
տիմոր՝ «արևելք» բառից:

ՏիՏԻԿԱԿ.— Լիճ Հարավային Ամերիկայում: Պերու և Բոլի-
վիա պետությունների սահմանում: Լիճը իր անունն
ստացել է նրա մեջ գտնվող կղզուց: Տիտիկական ինկե-
րի լեզվում նշանակում է «արճճյա լիո»: Իր ժամանա-
կին կղզում կապար էր Հայտնաբերվել: Տիտիկական
աշխարհի ամենախոշոր բարձրալեռնային լիճն է:
Բարձրությունը 3812 մետր է, մակերեսը՝ 8300 քառա-
կուսի կիլոմետր, իսկ խորությունը մինչև 304 մետր:

ՏիՏՈՒՐԱԴ.— Քաղաք Հարավսլավիայում, Զեռնոգորիայի
մայրաքաղաքը: Քաղաքը այդպես է կոչվել 1952 թվա-
կանից ի պատիվ Բորգ Տիտոյի: Մինչ այդ կոչվում էր
Պոդգորիցե:

ՏիՐԵՆՅԱՆ ԾՈՎ.— Միջերկրական ծովի մի մասը: Այս ան-
վանումը առաջացել է տիրենա էթնոնիմից (ժողովրդի
անունից): Այդպես էին կոչում հին հույնները էտրուսկ-
ներին, Ապենինյան թերակղզու երբեմնի բնակիչներին:

ՏիՐՈԼ.— Փատմական մարզ Ավստրիայում: Այդպես է կոչվել
միջնադարում գոյություն ունեցող «Տերիոլիս» անունը
կրող՝ ամրությունից:

ՏՅԱՆ-ՇԱՆ.— Սահայի խոշորագույն լեռնային սիստեմներից
մեկը: Գտնվում է Սովետական Միության և Չինաստա-

նի սահմանում: Տյան-Շան անունը շինարեն է և նշանակում է «երկնային լեռներ»: Այսպես են կոչել նրանց բարձրությունը շեշտած համար: Տյան-Շանը կենտրոնական Ասիայի ամենալայնածավալ և բարձրադիր լեռնային սիստեմն է, որն ունի 2600 կիլոմետր ձգվածություն և 600 կիլոմետր լայնություն: Տյան-Շանի կենտրոնական մասում իշխում է նրա բարձրագիր զանգվածը՝ Խան-Տենգրին («Ամպերի վեհապետը»): Պ. Պ. Սեմյոնով-Տյան-Շանսկին առաջինն էր, որ անցավ Տյան-Շանի խորքով և հայտնաբերեց վեհապանծ Խան-Տենգրին:

ՏՅԱՆՑՁԻՆ.— Քաղաք Զինաստանի արևելքում: Զինարեն այսան՝ «երկինք» և ցդին՝ «դարրաս» բառերի միացումից: Այսինքն «երկնային դարրաս»:

ՏՅՈՒՄԵՆ.— Քաղաք Արևմտյան Սիբիրում: Մոնղոլերեն տյումեն նշանակում է «տասը հազար»: Բայտ ավանդության, իբր թե այդ կողմերում եղել է մի թաթար խան, որը ունեցել է անհամար զորք:

ՏՈԴՈ.— Պետություն Արևմտյան Աֆրիկայում: Տոգո նեգրական ցեղը (էվե) իր ժամանակին ապրում էր Նիգեր գետի հովտում: Նրանք վեց դար առաջ բնակություն հաստատեցին Ատլանտյան օվկիանոսի ափերին, մեծ ճահճութ լների մոտ: Այն գյուղը, որտեղ բնակություն հաստատեց այդ ցեղը, կոչվեց Տոգո, որը նշանակում է «Ճահճից այն կողմ»: Հետագայում Տոգո անվանումը տարածվեց թե՛ երկրի և թե՛ նորաստեղծ պետության վրա:

ՏՈԿԻՈ.— Ճապոնիայի մայրաքաղաքը: Քաղաքի անվանումը ճապոներեն լեզվում նշանակում է «Արևելյան մայրաքաղաք» ի տարբերություն կայսերական շրջանի Կիոտո մայրաքաղաքի: Դեռ 15-րդ դարում ներկա Տոկիոյի տեղում գոյություն ուներ մի ամրոց, որը կոչվում էր էդո (իեդո): Երբ 1869 թվականին մայրաքաղաքը Կիոտոյից, այսինքն «Արևմտյան մայրաքաղաքից» տեղափոխվեց էդո, որը իր դիրքով գտնվում է Կիոտոյից

արևելք, ապա ի տարբերություն հնի էդոն վերանվանվեց Տոկիո, այսինքն «Արևելյան մայրաքաղաք»։

ՏՈՄՄԿ.—Քաղաք Սիբիրում: Հիմնադրվել է 1604 թվականին։ Անվանումը Տոմ գետից է։

ՏՈՆԳԱ.—Արշիպելագ Խաղաղ օվկիանոսի հարավում։ Տեղացիների մոտ հայտնի է Տոնգատարառ անվան տակ, որը նշանակում է «սրբազն»։ Սյդիկիսի անուն կրել է արշիպելագի գլխավոր կղզին, որը հետագայում տարածվել է արշիպելագի վրա։ Կղզիները 1693 թվականին հայտնաբերել է Տասմանը, իսկ 1773—1777 թվականների ընթացքում հետազոտել է Ջեմս Կուկը, որը արշիպելագը անվանեց «բարեկամության կղզիներ»՝ բնիկների սիրալիր և բարեկամական ընդունելության համար։

ՏՈՆԿԻՆԻ ԾՈՅՑ.—Հարավ-Զինական ծովում։ Ֆրանսիացիների կողմից Դոնգ-Կին բանի աղավաղված ձևը, որը նշանակում էր «Արևելյան մայրաքաղաք»։ Ներկայումս ծոցը կոչվում է՝ Բակոր։

ՏՈՍԿԱՆԱ.—Պատմական մարդ հտալիայում։ Էտրուսկ կամ տուսկ ժողովրդի անունից, որը մեր թվականությունից առաջ բնակվել է Ապենինյան թերակղզում։

ՏՈՐՈՆՏՈ.—Քաղաք Կանադայի արևելքում։ Իրոքեզերեն առրոնտո՝ «Հավաքատեղի» բառից։

ՏՈՐԵՍԻ ՆԵՂՈՒՅՑ.—Նեղուց Ավստրալիայի և Նոր Գվինեայի միջև։ 1606 թվականին իսպանացի Տորեսը առաջինն էր, որ անցավ այս նեղուցով։ Սակայն քաղաքական նկատառումով իսպանիան այս գյուտը Հրապարակեց, Նեղուցը հետագայում կրկին «Հայտնաբերեց» Ջեմս Կուկը. 1769 թվականին այն կոչվեց Տորեսի անվամբ։

ՏՐԱԲԶՈՆ (ՏՐԱՊԻԶՈՆ).—Քաղաք Թուրքիայում։ Անվան առաջացումը հունական է և ստուգաբաննվում է երկու կերպ։ Առաջինը, հունարեն տրաքեզոս՝ «սեղան» բառից։ Տրարդոնի մոտ լեռներն ունեն սեղանաձև տեսք։ Երկրորդը, ենթադրվում է, որ այս անվանումը տվել են

այն հույները, որոնք եկել են Հունաստանի Արկադիա և
նահանգի Տրապիզոն քաղաքից:

ՏՐԱՆՍԻԿԱՆԻԱ. — Նահանգ Ռումինիայում: Լատիներեն
տրանս՝ «այն կողմ» կամ «անդր» իմաստով է և սիլ-
վա՝ «անտառ» բառերի միացումից: Այսինքն անտառ-
ներից այն կողմ ընկած երկիր: Նկատի է ունեցվել
Հունգարիայի դիրքը:

ՏՐԱՆՍՎԱՍԻ. — Ներկայումս նահանգ (արովինցիա) Հարավ-
Աֆրիկյան հանրապետության կազմում: Նախկինում Բու-
րական հանրապետություն, որ անցյալ դարում վաալ
գետից հյուսիս հիմնեցին հոլանդացի վերաբնակիչնե-
րը: Տրանսվասալ նշանակում է Վաալից այն կողմ կամ
«Անգր Վաալ»:

ՏՐԻՆԻԴԱԴ. — Կողի Վեստ Ինդիայում, Փոքր Անտիլյան խօս-
քում: Անունը իսպաներեն տրինիդադ՝ «Երրորդություն»
բառից է: Հայտնաբերվել է 1498 թվականին Քրիստո-
փոր Կոլումբոսի կողմից: Նա կղզում նկատել է երեք
բլուր: Դրա համար էլ կղզին կոչել է «Երրորդություն»:
Հետագայում այս անունը համադրեցին քրիստոնեական
երրորդություն ուսմունքի հետ, որը ընդունում է Հոր,
Որդու և Ս. Հոգու միավորությունը իբրև միաստվածու-
թյուն: Տրինիդադը ներկայումս Տորագո կղզու հետ
կազմում է «Տրինիդադ և Տորագո» անվամբ պետու-
թյուն:

ՏՐԻՊՈԼԻ. — Լիբիայի երկու մայրաքաղաքներից մեկը: Մյուսը
Բենգազին է: Տրիպոլիում է գտնվում կառավարությու-
նը: Այս անունը առաջացել է Հունարեն տրիպոլիս
«երեք քաղաք» բառից: Նկատի են ունեցվել Սուբրա-
տա, Օսա և Լեպտիս քաղաքները, որոնք իր ժամանա-
կին գտնվում էին Տրիպոլիտանիա նահանգում: Այսինքն
երեք քաղաքների երկիր:

ՏՐԻՍՏԱՆ-ԴԱ-ԿՈՒՅՑ. — Կղղիներ Ատլանտյան օվկիանո-
սում: Հայտնաբերվել են 1506 թվականին պորտուգա-
լացի ծովագնաց Տրիստան-դա-Կույյայի կողմից: Կըզ-
զիները գտնվում են Հրա երկրի և Թարեհուսոս հրվան-

դանի կիսաճանապարհին: Այս կղզիներում է «եղել» ժյուվ Վեռնի հերոսներից մեկը՝ ժակ Պագանելլը, որի մասին խոսվում է «Նավապիտ Գրանտի որդիները» գրքում:

ՏՈՒՄՈՒՏՈՒԻ.— Արշիպելագ Պոլինեզիայում: Տեղական լեզվով նշանակում է «կղզիների ամպ», այդպիսի տպավորություն ստացվում է կղզիների բազմաթիվ լինելուց:

ՏՈՒԿԱՐ.— Ինքնավար հանրապետություն ԽՍՀՄՀՀ-ի կազմում, Ասիայի կենտրոնում: Կոչվել է մոնղոլական ծագումունեցող տումացիների անունով:

Յ

ՅԱՅԴԱԾ.— Ընդարձակ կիսաճանապատային իջվածք Զինաստանում, Տիբեթից Հյուսիս-արևելք: Յայդամ անունը տիբեթական ծագում ունի, բայց ամուր կերպով մտել է մոնղոլական լեզվում և նշանակում է «աղի ցեխ» կամ ուղղակի «աղուտ»:

ՅԱՆՆԵՐ.— Կովկասի ամենահետաքրքիր լեռնանցքներից և խոշոր սառցադաշտերից մեկը: Սվաներեն ցաներ բանից, որը նշանակում է «երկնքի տակ»:

ՅԵԼԲԵՍ.— Կղզի հնդոնեղիայում, սուլաբոս ցեղի անունով: Մալայերեն Սուլավեսի անվանման պորտուգալական աղավաղված ձևն է: Ներկայումս վերականգնվել է Սուլավեսի անվանումը:

ՅԵԼԻՆՈԳՐԱԴ.— Քաղաք Ղաղախական ՍՍՀ-ում, Իշխմ դետի վրա: Հիմնադրվել է 1830 թվականին և մինչև 1960 թվականը կռվում էր Ակմոլինսկ: Դրանից հետո ստացավ Յելինոգրադ անվանումը, որը կազմված է ռուսերեն ցելինա՝ «խոսպան» և գրադ՝ «քաղաք» բառերի զուգակցումից: Այսինքն «քաղաք խոսպանում»:

ՑԵՅԼՈՆ. — Կղզի Հնդկական օվկիանոսում: Անվանումը բացատրվում է երկու կերպ. առաջինը, սանսկրիտերեն սինդալա դվիպա՝ «առյուծների կղզի» խոսքի աղճատումն է; Երկրորդը՝ սինխալա արիական ցեղից, որի տուամբ առյուծն էր: Ի դեպ, ցելլոնցիները իրենց կըղղուն անվանում են նաև կանկա: 1948 թվականից ՑԵՅԼՈՆը համարվում է ինքնուրուց պետություն, մնալով Բրիտանական համագործակցության կազմում:

ՑՈՒԻԹԻԽ. — Քաղաք Շվեյցարիայում: Անվանման հիմքում ընկած է {կելտերեն տուր՝ «ջուր» բառը:

ՑՈՒՍԻՄԱ. — Կղզիներ Կորեական նեղուցում, որոնք պատկանում են Ճապոնիային: Անվանումը ճապոներեն ցու՝ «ծոց» և սիմա՝ «կղզի» բառերի միացումից՝ «ծոցի կղզիներ» իմաստով:

ՈՒ

ՈՒԱՅՏ. — Անգլիական կղզի Լամանշում: Անգլերեն ուայթ՝ «սպիտակ» բարից: Այդպես է կոչվել կավճյա ափերի պատճառով:

ՈՒԳԱՆԴԱ. — Պետություն Արկելյան Աֆրիկայում: Անկախություն ստացավ 1963 թվականից: Անվանման հիմքում ընկած է Գանդա էթնոնիմը (ժողովրդի անունը) և ավելացրած «բու» մասնիկը: Իսկ թու կոչվում էր ներկա Ուգանդայի մասերից մեկը: Այսպես ձևավորվեց թուգանդա անվանումը, որից հետագայում սկզբի «բ» տառի սղվելու պատճառով մնաց Ուգանդա:

ՈՒԺՈՒԻՐՏԻԱ. — Ինքնավար հանրապետություն ՈՒԺՈՒՀ-ի կազմում: Ֆիննո-ուգրական ուղմուրտ ժողովրդի անունից: Յարական Մուսաստանում ուղմուրտ ժողովուրդը հայտնի էր Վույակներ անունով:

ՈՒԶԲԵԿՍՏԱՆ.— Սովետական Հանրապետություն Միջին Ասիայում: Կոչվել է ուղբեկ ժողովրդի անունով: Ուղբեկ անունն էլ, ըստ ավանդության, գալիս է Ուղբեկ խան անձնավորությունից, որը 14-րդ դարում հիմնադրեց այս պետությունը: Չնայած դրան, ուղբեկները ավելի հին ժողովուրդ են և անցյալում կոչվում էին սարթ, որը պարսկերեն լեզվից է և նշանակում է «իշխանություն» կամ «թագավորություն»:

ՈՒՂԱՆ-ԲԱՏՈՐ.— Մոնղոլիայի մայրաքաղաքը: Մոնղոլերեն ուշան՝ «կարմիր» և բատոր՝ «դյուցազն» բառերից: Այսինքն «Կարմիր դյուցազն» քաղաք: Այդպես է կոչվել ի պատիվ Սուխին Բատորի, որը եղավ մոնղոլական ժողովրդա-հեղափոխական կուսակցության և Մոնղոլական ժողովրդական Հանրապետության հիմնադիրը: Մինչև 1924 թվականը կոչվել է Ուրգա:

ՈՒՂԱՆ-ՈՒԴԵ.— Բուրյաթական ԽՍՀ-ի մայրաքաղաքը: Բուրյաթերեն ուշան՝ «կարմիր» և Ուդա գետի անունից: Հիմնադրվել է 1666 թվականին որպես Վերխնեուդինսկ: Այս անունը կրել է մինչև 1934 թվականը:

ՈՒՂՅԱՆՈՎՍԿ.— Քաղաք Վոլգայի վրա: Մինչև 1924 թվականը կոչվում էր՝ Սիմբիրսկ: Վերանվանվել է ի պատիվ Վ. Ի. Ուլյանով-Լենինի (1870—1924 թթ.):

ՈՒԽԱՆ.— Քաղաք Չինաստանում: Առաջացել է Ուշան, Խանկոռ և Խանյան քաղաքների միացումից: Անունը կազմվել է դրանց անունների սկզբի վանկերից՝ Ուխան:

ՈՒԿՐԱԻՆԱ.— Սովետական Հանրապետություն: Սլավոներեն օկրաինա՝ «ծայրամաս» բառից: Նկատի է ունեցվել նրա սահմանամերձ, ծայրամասային դիրքը Ռուսաստանի նկատմամբ:

ՈՒՍՏ-ՈՒՐՏ.— (Ռւսացուրտ): Ընդարձակ սարավանդ (պլատո) ընկած կասպից և Արալյան ծովերի միջև: Ռւսացուրտ անվանումը սովորական աշխարհագրական տերմին է: Ղաղախական լեզվում նշանակում է «տափարակ բարձրություն» (պլատո), որը ժամանակի ընթացքում դարձավ հատուկ անուն:

ԱԻՐԱԼ.— Աեռնային գոտի Եվրոպայի և Ասիայի սահմանումն Անվանման ստուգաբանությունը տրվում է մի քանի կերպ: Մանսի ժողովրդի լեզվում Ուրալ նշանակում է «Լեռնաշղթա»: Կապվում է նաև Բաշկիրական ավանդական Ուրալ Բատիր Հերոսի անվան, ինչպես նաև թաթարական Արալ Տառ անվան հետ, որը կրում է Ուրալի հարավային ճյուղերից մեկը: Հին ուսուերենում Ուրալը հայտնի է Կամեննի պոյաս՝ «քարե գոտի» կամ Յուգուսկի կամեն անունով: Այն ժամանակ կամեն բառն ուներ նաև «լեռան» իմաստ: Առավել հուսալի է առաջին մեկնաբանությունը:

ԱԻՐԱԼ.— Գետ, որը թափվում է Կասպից ծով: Անունը ստացել է համանուն լեռներից: Մինչև 1785 թվականը կոշվում էր Յախկ: Բայց քանի որ Յախկ գետի անվան հետ էր կապված ե. Պուգաչովի նշանավոր ապստամբությունը, դրա համար Եկատերինա II կայսրութին հրամայեց փոխել Յախկ անունը և անվանել Ուրալ, ցանկանալով չնշել նշանավոր ապստամբությունը հիշեցնող աշխարհագրական անունը:

ԱԻՐԱՐՏՈՒ.— Հնագույն պետություն, որը գրավել է Հայկական բարձրավանդակի մեծ մասը, այդ թվում նաև Հայկական ՍՍՀ-ի տերիտորիայի զգալի մասը: Նախրի պետությանը հաջորդում է Ուրարտուն, որի առաջին թագավորը եղավ Սարգուր առաջինը (835—820 թթ., մ.թ.ա.): Դա Ուրարտական պետության Վանյան շրջանն էր:

Ասորեստանյան արձանագրության մեջ հիշված Ուրարտու երկիրը ընկնում է Նախրիի հյուսիսային կողմը: Հին կտակարանի «Այրարատ» կամ «Արարատ» լեռը այդ արձանագրության մեջ կրում է «Ուրարտու» անունը: Ուշուու կամ Ուրաշտու ձևը հատուկ էր բարելունացիներին, իսկ Ուրտու կամ Ուրարտու՝ ասորեստանցիներին:

Բատ ասորական և Վանի արձանագրությունների բավականին հաստատուն կերպով հիմնավորվում է Ուրարտու և Հին կտակարանի Արարատ անվանումների

նմանությունը, որոնք համապատասխանում են նաև Ալ-
րարատ նահանգի անվանմանը:

Ինչ վերաբերում է Ուրարտու անվան ստուգաբանու-
թյանը, ապա այն տրվում է մի քանի կերպ: Առաջինը:
Հնդեվրոպական ուր՝ «լեռ» և արտա՝ «բարձրություն»
բառերից: Երկրորդը, զին հայերեն Ալրարատ՝ «Արայի-
արատ» խոսքից, որը կապված էր ավանդական Արա-
գեղեցիկի հետ: Ուրարտացիները պատմության թատե-
րաբեմից հեռացան Երդ դարում:

ՈՒՐԹԱՆԻՋԱՑԻԱ.— Քաղաքային բնակչության աճը: Ուրբա-
նիդացիայի հետևանքով երկրի տնտեսական ու քաղա-
քական կյանքը կենտրոնանում է քաղաքներում: Ուր-
բանիդացիա հասկացությունը ծագել է լատիներեն լեզ-
վից: Հիմքում ընկած է լատիներեն ուրբանում՝ «քա-
ղաք» բառը: Ուրբանիդացիան հետևանք է երկրի ին-
դուստրացման և ստեղծում է նախադրյալներ կոնուր-
բացիայի և քաղաքային բնակավայրերի աճման համար:

ՈՒՐՈՒԴՎԱՅ. — Պետություն Հարավային Ամերիկայում: Ու-
րուգվայը իր անունը՝ ստացել է այն գետից, որը հո-
սում է նրա արևմտյան սահմանով: Ուրուգվայ բառը
հնդկական ծագում ունի և բառացի «թուշնապոշ» է նշա-
նակում: Ուրուգվայի պաշտոնական անվանումն է
Ուրուգվայի Արևելյան հանրապետություն: Այդ անվա-
նումն ունի իր պատմական պատճառը: Անցյալներում
բուենոս-այրեսցիները Ուրուգվայի ներկա տերիտորիան
անվանել են Արևելյան մարզ: Դա ցույց է տալիս, որ
Ուրուգվայի և Արգենտինայի միջև եղել է պատմական
կապ: Ուրուգվայը նույնպես եղել է խսպանական տիրա-
պետություն: Դա է պատճառը, որ այստեղ պետական
լեզուն իսպաներենն է:

ՈՒՅԱ. — Բաշկիրիայի մայրաքաղաքը: Անունը ստացել է
Ուֆա գետից: Հիմնադրվել է 1574 թվականին: Ստուգա-
բանությունը առաջիմ պարզ լէ:

ՓԱՐԻԶ. — Ֆրանսիայի մայրաքաղաքը: Կոչվել է գալերի (գաղղիական) «պարիզի» ցեղի անունով, որը բնակվում էր Սենա գետի կղզիներից մեկի վրա: Այդ վայրը Հռւլիսու Կեսարի ժամանակվա հոռմեացիները անվանում էին Լուտեցիա, որը նշանակում է «ջրի մեջ գտնվող բնակավայր»: Ավելի լրիվ կոչում էին Լուտեցիա Պարիզիորում: Միայն 6-րդ դարում Խլոդվիգ թագավորը, որը մերովինաների դինաստիայից էր, այդ բնակավայրը դարձրեց իրեն նստելավայր՝ թողնելով Փարիզ կամ Պարիս անվանումը: Ֆրանսիրեն արտասանության մեջ վերջին բաղաձայնը ընկավ և մնաց ուղղակի Պարիս Սակայն շատ ժողովուրդներ պահպանում են վերջին բաղաձայնը (տարբեր հնչյուններով): Այսպես, օրինակ, հայերենում մնաց Փարիզ ձևը: Ինչպես տեսնում ենք, Փարիզ անվանման միջոցով դարերի ընթացքում մեզ է հասել գաղղիական պարիզի ցեղի անունը: Այդ ցեղը ժամանակի ընթացքում ձուլվեց ֆրանսիական ժողովրդի հետ:

ՓԱՐՈՍ. — Այսպես կոչեցին հին հույները Ալեքսանդրիայի դիմաց գտնվող ոչ մեծ կղզին: Իսկ հունարենում այդ անունը նշանակում է «առագաստ»: Իրականում կղզին ունի առագաստի տեսք: Երբ մեր թվականությունից առաջ կղզու վրա կառուցեցին լուսատու աշտարակ՝ հեռվից եկող նավերին ուղղություն ցույց տալու համար, ապա աշտարակը կղզու անունով Ֆարոս կոչեցին: Եվ քանի որ հին հայերենում «ֆ» տառը գործածական չի եղել, այն փոխարինվել է «փ»-ով, դրա համար էլ ֆարոսն էլ դարձել է «փարոս»:

ՓԵՆԵՎԻ. — Նավահանգիստ Հյուսիսային Իրանում, Կասպից ծովի ափին: Մինչև 1925 թվականը կոչվում էր Էնզելի. հետո վերանվանվեց Փենեվի ի պատիվ Իրանում իշխող Փենեվի դինաստիայի, որը հիմնեց Ռիզա շահը քսա-

նական թվականներին: Մինչև քսանական թվականները
իրանում իշխում էր Ղաջարների դինաստիան:

ՓեՇԱՎԱՐ.— Քաղաք Պակիստանում: Անվանումը ուրդու լեզ-
վով նշանակում է «արհեստավոր», «տնայնագործ»:
Քաղաքն իրականում հայտնի է որպես արհեստավորա-
կան մեծ կենտրոն: Մի այլ մեկնաբանումով, առաջա-
ցել է սանսկրիտերեն պուրաշ-պուրա՝ «սահմանամերծ
քաղաք»՝խոսքից:

ՓԻԵՆՑԱՆ կամ ՊԻԵՆՑԱՆ.— Կորեայի ժողովրդական Դե-
մոկրատական Հանրապետության մայրաքաղաքը: Կո-
րեական լեզվով պիսեն նշանակում է «Հարթավայր»:

ՓՂՈՍԿՐԻ Ա.Փ.— Պետություն Արևմտյան Աֆրիկայում: Այս
պետության անվանումը սերտորեն կապված է փողոսկրի
արտահանման հետ, որը իր ժամանակին կատարվում
էր Գվինեական ծոցի ափերից: Փղոսկրը (փղի կնճիթի
երկու կողմում գտնվող խոշոր ու հաստ ժանիքները)
իր ժամանակին Եվրոպայում շատ թանկ էր, պահանջը՝
մեծ: Նրանից պատրաստում էին դաշնամուրի ստեղ-
ներ, բիլիարդի գնդակներ, գանակի և սրի կոթեր և այլ
զարդարանդակներ: Փղոսկրը Եվրոպական վաճառա-
կանների համար հարստության միջոց էր: Եվրոպացի-
ները սկզբնական շրջանում փղոսկր կարող էին գնել
ծովափնյա նեղութերից, որտեղ ի վերջո այն սպառվեց,
ուստի հետզհետե անցան երկրի խորքերը: Այսպիսով,
այդ հսկա կենդանուն որսում էին սոսկ ժանիքի համար:
Դա պատճառ եղավ փղերի անխնա ոչնչացման: Կենդա-
նի մնացած փղերն էլ փախան հեռավոր անտառների
խորքերը:

Զնայած ներկայումս Գվինեական ափերից փղոսկր
քիչ են արտահանում, բայց երկրի անունը մնաց
«Փղոսկրի Ա.Փ.», որը և տարածվեց նորաստեղծ պետու-
թյան վրա:

ՓՅՈՒՆԻԿԻԱ.— Ներկա Լիբանան պետության պատմական ա-
նունը, որով նա հայտնի էր հին աշխարհում: Փյունի-
կիա նշանակում է «արմավենիների երկիր»:

ՓՈՔՔ ԱՍԻԱ. — Թերակղզի Ասիա աշխարհամասի հարավա-
արևմտյան մասում: Ընկած է ՄԱ, Մարմարա, էգեյան
և Միջերկրական ծովերի միջև: Փոքք Ասիա անունը ալս
թերակղզու նկատմամբ գործածության մեջ մտավ հին-
գերորդ դարից: Մինչ այդ, ներկա Փոքք Ասիա թերա-
կղզին, ավելի շուտ էգեյան ծովին հարող մասը անվա-
նում էին ուղղակի Ասիա:

Առաջին անգամ «փոքր» մակղիրը այս անվանը
ավելացվում է վեցերորդ դարից, տարբերելու համար
Ասիա ցամաքի մնացած ընդարձակ մասերից, որոնք
ընդհանուր անունով կոչվում էին Մեծ կամ Վերին
Ասիա: Դրան զուգընթաց պահպանվեց նաև հունական
Անատոլիա անվանումը:

Երբ թուրքերը նվաճեցին Փոքք Ասիան, ապա հեշ-
տությամբ ընկալեցին Փոքք Ասիային տրվող բյուզան-
դական Անատոլիա անվանումը: Եվ այն արտասանեցին
իրենց եղանակով՝ Անադոլու: Անատոլիա անունը ևս
ունի հունական ծագում և նշանակում է «արևելք»:

Քեմալական շարժումից հետո, երբ երկրում ուժե-
ղացավ պանթյուրքիզմը, ապա թուրքական աշխարհա-
գրության մեջ ավելի ընդունելի դարձավ Անադոլու ան-
վանումը և այն տարածեցին ամբողջ ասիական թուր-
քիայի վրա, հավասարության նշան դնելով Անատոլիա-
յի և Ասիական Թուրքիայի միջև: Անատոլիայի սահմա-
նը հասցնում էին մինչև Արաքսի ափը, որով նրա հետ
են միացնում Հայկական բարձրավանդակը (Հայաստա-
նը): Սակայն վերջինս թե՛ աշխարհագրական և թե՛
պատմական տեսակետից ոչ մի ընդհանուր բան չունի
Անատոլիայի հետ: Դա նպատակ է հետապնդում վե-
րացնելու Արևմտյան Հայաստան անունը, որի փոխա-
րեն գործածվում է Արևելյան Անատոլիա (Դոգու Անա-
դոլու) հասկացությունը, ձգտելով երկրում ոչ մի հայ-
կական հետք չթողնել:

Ցավոք սրտի պանթլուրքիստական այդ անվանումը՝
երբեմն տեղ է գտնում և մեր սովորական աշխարհա-
գրական գրականության մեջ:

Փ

ՔԱԲՈՒԼ.— Աֆղանստանի մայրաքաղաքը։ Անվան ստու-
գաբանությունը կապում են պարսկերեն «ապրանքնե-
րի պահեստ» խոսքի հետ։ Քաղաքը գտնվում է Իրան-
Հնդկաստան տանող առևտրական ճանապարհների վրա։
Դրա համար էլ այդտեղ ստեղծված բնակավայրը մի
տեսակ ապրանքահանձնման կետ էր հանդիսանում։

ՔԱՇՄԻՐ.— Շտատ Հյուսիսային Հնդկաստանում։ Քաշմիր-
անունը գալիս է սանսկրիտերեն Կաշիապա միրա խոս-
քից, որը նշանակում է «Կաշիապայի ծով»։ Կաշիապան
սանսկրիտերեն առասպելաբանության մեջ համարվում
է զյուցազնական անձնավորություն։

ՔԵՆԻԱ կամ ԿԵՆԻԱ. — Լեռ Աֆրիկայում։ Տեղական լեզվով
նշանակում է «Լեռ»։ 1963 թ. ստեղծված պետությունը
իր անունն ստացավ այդ սարից։

ՔԵՄՐԻՋ.— Քաղաք Անգլիայում։ Անունը ստացել է Քեմ գե-
տից և ավելացվել անգլերեն բրիչ՝ «կամուրջ» բառը։
Այսինքն «Քեմի կամուրջ»։

ՔԻԼ.— Քաղաք և ջրանցք ԳՅՀ-ում։ Գերմաներեն քիլ՝ «սեպ»
բառից։ Այդպես է կոչվել նախ ծովախորշը, որն ունի
սեպի ձև։ Անունը հետագայում տարածվել է քաղաքի և
ջրանցքի վրա։

ՔԻՄԲԵՐԼԻ.— Քաղաք Հարավ-Աֆրիկան Հանրապետությու-
նում։ Ալմաստի արդյունահանման խոշոր կենտրոնը։
Այդպես է կոչվել ի պատիվ Վիկտորյա թագուհու ժա-
մանակաշրջանի նշանավոր դիվանագետներից մեկի՝
Քիմբերլիի։

Քիշինեվ, ՔիշինՅՈՎ.— Մոլդավերեն Քիշինեու: Մոլդավական ՍՍՀ-ի մայրաքաղաքը: Թուրքերեն կիշակ` (Ղըշ-Ղաղ) «Ճմեռատեղ» և մոլդավերեն նոու՝ «Նոր» բառերից: Կիշլանոու «Նոր ճմեռանոց»: Զեափիսիվել դարձել է Կիշինյով կամ Քիշինյով: Վերջերս առաջ է քաշվել նոր ստուգաբանություն, ըստ որի քաղաքի անունը մոլդավերեն նշանակում է «զրհոր»:

ՔՅՈՒՆ.— Քաղաք ԳՅՀ-ում: Նշանավոր նավահանգիստ Հոենոս գետի վրա: Քյոլն անունը լատիներեն կոլոնիա՝ «գաղութ» բառից է: Հիմնադրվել է Հռոմեացիների ժամանակ և ներոնի մոր՝ Կոլոնիա Ագրիպինայի պատվին էլ կոչվել է «Գաղութ Ագրիպինայի»: Գաղութը հիմնադրվել է, որպեսզի այս մարզերը բնակեցվեն և պահպանվի Հոենոսի սահմանը: Գերմանացիների մոտ կոլոնիա հասարակ անունը դարձավ հատուկ անուն, իսկ անվանման երկրորդ մասը ժամանակի ընթացքում ընկալ և մնաց միայն կոլոնիա՝ «գաղութ» մասը, որը և դարձավ հատուկ անուն: Ի դեպ, Քյոլն քաղաքը իր անունը տվեց օդեկոլոն բուրավետ հեղուկին: Օդեկոլոն ֆրանսերենում նշանակում է «քյոլնի ջուր»:

ՔՎԵԲԵԿ.— Քաղաք Կանադայում: Հիմնադրվել է 1608 թվականին, սուրբ Լավրենտիոս գետի գետաբերանում: Քաղաքի անունը ծագել է Հնդկերեն «անցում» բառից:

ՔՎԻՆՍԼԵՆԴ.— Նահանգ Ավստրալիական Միությունում: Անգլերեն քվին՝ «թագուհի» և լենդ՝ «երկիր» բառերի զուգակցումից, որը նշանակում է «թագուհու երկիր»: Նահանգը այդպես է կոչվել 1859 թվականին ի պատիվ Վիկտորյա թագուհու:

ՔՈՒՐԴՍՏԱՆ.— Պատմական և աշխարհագրական մարզ, որը տեղադրված է Իրաքի, Թուրքիայի և Իրանի կցվանքում: Քուրդստան բառացի նշանակում է «քրդերի երկիր»: Անվան մեկնաբանումը տրվում է մի քանի կերպ: Առաջինը, պարսկերեն կուրդ՝ «ուժեղ», «քաջ», «ուազմատենչ» բառից: Երկրորդը, կարդա՝ «քաջություն», «ուազմատենչ» ոգի» իմաստով: Երրորդը, կորդ՝ «պահապան»

բառից: Կորդերը ֆեոդալական շերտավորում էին իրանում: Պատմական իրադարձությունների ժամանակ նրանք ներկայացրին որոշ ուժ և նրանց անունը տարածվեց իրենց ենթակա մյուս ցեղերի վրա:

O

ՕԱԶԻՍ.— Կանաչ և բնակելի վայր անապատում, շնորհիվ ջրի առկայության: Օազիս բառը հույները վերցրին դպտիների լեզվից, որը զուգակցում է «կյանք և խմել» բառերը: Անունը հիմնավորում է արկելյան այն ասացվածքը, թե որտեղ ջուր կա, այնտեղ էլ՝ կյանք:

ՕԲ.— Գետ Արևմտյան Սիրիոսմ: Անունը ստուգաբանվում է երկու կերպ: Առաջինը ծագած է համարվում իրանական ար՝ «ջուր» բառից, որը ձևափոխվել է «օք»-ի: Երկրորդը կոմի ժողովրդի լեզվից է և ունի «մորաքույր» կամ «տատիկ» նշանակություն, որը գործածվում է փաղաքշական առումով, ինչպես, օրինակ, ողբաշական «Մայր Վոլգա» կամ թե հայկական «Մայր Արար» անունները:

ՕԲՇԶԻ ՍԻՐՏ.— Բարձրություն վոլգա և Ուրալ գետերի միջև: Թուրքական սիրտ՝ (սըրտ) «բարձրություն» բառից, որը զարձել է հատուկ անուն: Ավելացվել է սկզբում «օքշչի» մասնիկը, որովհետև այստեղ արոտավայրերը երկար ժամանակ օգտագործվում էին թե՛ ոռւսների և թե՛ բաշկիրների կողմից:

ՕԴԵՍՍ.— Քաղաք և կարևոր նավահանգիստ Սև ծովի ափին: Ծուսական կայսրության սահմանների ընդարձակումը և ամրապնդումը «տաք ծովի» ափին, ինչպես հաճախ առօրյա խոսակցության ժամանակ անվանում էին Սև ծովին, անհրաժեշտություն զգացվեց նրա ափերին ստեղծել նավահանգիստներ: Այդպիսիներից մեկը ընտ-

բեցին ներկա Օդեսայի տեղը: Դա 1797 թվականին էր, երբ Ռուսաստանում թագավորում էր Եկատերինա II-ը: Նոր Հիմնավորված քաղաքին «Օդեսա» անվանումը կայս սըրուհուն առաջարկեցին նրա խորհրդատու-գիտնականները: Նրանք պատմությունից գիտեին, որ իր ժամանակին այդ տեղերում եղել է Օդեսա անունով հունական մի գաղութ: Միաժամանակ այդ շրջանում էլ «մողա» էր նորաստեղծ բնակավայրերին հունական անվանում տալը: Մեծ ժողովրդականություն էին վայելում հունական ազգային ազատագրական շարժումները, որոնց կապակցությամբ հետաքրքրություն էր առաջացել գեղի Անտիկ աշխարհը: Բայց նոր բնակավայրին (նավահանգստին) Օդեսա անուն առաջարկողները միաժամանակ գտան, որ նպատակահարմար է փոխել նրա հունական քերականական ձևը և տալ ոռւսերեն լեզվում ընդունված իդական սեռի «ա» վերջավորությունը: Իսկ դա էլ Եկատերինային սիրաշահելու մի ձև էր: Այսպես ստեղծվեց մեզ համար այսօր շատ հարազատ դարձած հերոս քաղաքի «Օդեսա» անունը:

ՕԼԱՆԴ.— Շվեդական կղզի Բալթիկ ծովում: Շվեդերեն օյն՝ «խոտ» և լանդ՝ «երկիր» բառերից: Այսինքն խոտհարքի երկիր (տեղ):

ՕՂԴԵՆԲՈՒԻՐԳ.— Քաղաք ԳՖՀ-ում: Ստորին գերմանական ձևով օլդեն՝ «Հին» և բուրգ՝ «բերդ» կամ «քաղաք» բառերից: Հին քաղաքի իմաստով:

ՕՂԽՈՆ.— Բայկալի քսանյոթ կղզիներից ամենամեծը: Բուրյաթերեն «չոր» բառից: Ջրի պակասության պատճառով:

ՕԽՈՏԻ ՍՈՎ.— Խաղաղ օվկիանոսի մաս կազմող ծով: Ողողուած է ՍՍՀՄ-ի Հեռավոր Արևելքի ափերը: Ծովը ներկա անունը ստացել է «Օկոտա» գետից, որի անունը ուստի կազակները փոփոխելով իրենց արտասանությամբ վերածեցին Օխոտի, մոռանալով, որ այդ անունը բնիկների՝ էվենկների լեզվով ուղղակի «գետ» է նշանակում: Այսպիսով, տեղական լեզվով գետ բառը դարձավ հա-

տուկ անուն։ Գետի անունը տարածվեց ոչ միայն ծովի,
այլև նրա ափին հիմնված Օխոտսկ քաղաքի վրա։

ԾԿԱ. — Վոլգայի ամենամեծ աջ վտակը։ Անվանման ստուգա-
բանության հիպոթեզներից առավել հուսալին անվանի
լեզվաբան ն. Մառինն է։ Նա գտնում է, որ Օկա բառը
ծագել է հարեթական հին լեզուներից և նշանակում է
«գետ»։

ԾԿԱՀՈՄԱ. — Ամերիկայի Միացյալ Նահանգների շտատնե-
րից մեկը։ Հնդկական լեզվով նշանակում է «Կարմիր
ժողովուրդ»։

ԾՀԱՅՈ. — Գետ Ամերիկայի Միացյալ Նահանգներում։ Տեղա-
կան հնդկական օ՞ր՝ «սիրուն գետ» բառից։

ԾՄԱՆ. — Պատմական մարզ Արարիայի հարավ-արևելյան մա-
սսում։ Անունը ստուգաբանվում է հետեւյալ կերպ։ Առա-
ջինը, արաբերեն ման՝ «սուրբ» բառից, որովհետև երկ-
րի արքան Մահմեդի հետնորդներից էր։ Մյուսը, արա-
բական օմանիտ ցեղի անունից։

ԾՄՍԿ. — Քաղաք Սիբիրում։ Քաղաքը կոչվել է Օմ գետի ա-
նունով։ Հիմնադրվել է 1716 թվականին։

ԾՅԿՈՒՄԵՆԱ. — Մեր մոլորակի բնակելի մասը։ Օյկումենա
անվանումը հունարեն լեզվից է և բառացի նշանակում
է «կացարան» կամ «ընակարան»։ Հին հույների Օյկու-
մենան կազմում էր մեր մոլորակի համեմատաբար
փոքր մասը։ Նկատի ունեին իրենց հայտնի աշխարհը,
կենտրոնը ունենալով էլլադան (Հունաստանը)։ Ժամա-
նակի ընթացքում Օյկումենա կամ էյկումենա հաս-
կացությունը ընդարձակվեց և այն ներկայումս կազ-
մում է 132 միլիոն քառակուսի կիլոմետր։

ԾՆԵԳԱ. — Լիճ ՌՍՖՍՀ-ի Հյուսիս-արևմտյան մասում։ Կոչվել
է Օնեգա գետի անունով։ Մի այլ ստուգաբանությամբ
անվան ծագումը կապվում է հին ֆիննական «ծխա-
ցող լիճ» խոսքի հետ։ Նկատի է ունեցվել լճի վրա
հաճախակի թանձր մառախուղի կուտակումը։

ԾՆՏԱՐԻՈ. — Լիճ Հյուսիսային Ամերիկայում։ Իրոքեղերեն
օնտարիո՝ «գեղեցիկ» բառից։

ՕՊՈՐՏՈՒՄ. — Քաղաք Պորտուգալիայում։ Լատիներեն պորտուգալական գիտությունների Պորտուգալիա նավահանգիստում բառից։ Օպորտոն հին հոռմեացիների Պորտուգալիա նավահանգիստն է, որը նշանակում է «տաք նավահանգիստ» (պորտուգալական գիտությունների՝ «տաք»)։ Այս անվանումից էլ առաջ եկավ Պորտուգալիա պետության անունը։

ՕՍԵԹԻԱ. — Երկիր Մեծ կովկասյան լեռնաշղթայի երկու կողմում։ Կոչվում է օսեթների կամ օսերի անունով, որոնք համարվում են սկյութացիների հետնորդներ։

ՕՍԽՈ. — Նորվեգիայի մայրաքաղաքը։ Նորվեգերեն օսխոտարերան» բառից և կոտտի անունից՝ այսինքն «կոտտարերան», որտեղ և հիմնադրվել է քաղաքը։ Ակըբում նա կոչվում էր Քրիստիանիա։

ՕՍՏԻԱ. — Նավահանգիստ իտալիայում։ Լատիներեն օստիում՝ «գետաբերան» բառից։ Խոսքը Տիբր գետի մասին է։

ՕՎԿԻԱՆԻԱ. — Այսպես են կոչվում հաղաղ օվկիանոսի ավազանում գտնվող բոլոր կղզիները միասին վերցրած։ Ընկած են Ճապոնիայից, Ֆիլիպիններից, Խնդոնեղիայից և Ավստրալիայից արևելք, ինչպես նաև զույգ Ամերիկաներից արևմուտք։ Օվկիանիա անունը գործածության մեջ մտավ 1810 թվականից։ Անվան հիմքում ընկած է «օդիան» կամ «օվկիան» բառը և «իս» մասնիկը, որն ունի «երկրի» իմաստ։ Այսինքն օվկիանոսի երկիր՝ կղզիների աշխարհ։ Մի շաբք աշխարհագրագետներ Օվկիանիան համարում են առանձին աշխարհամաս։ Հաշվի առնելով Օվկիանիայի կղզիների բնական պայմանների տվյալները և բնակչության կազմը, Օվկիանիայի կղզիները բաժանում են չորս խմբի։ Օվկիանիայի կղզիներին ընդունված է տալ այսպիսի խմբավորում՝ ա) Մելանեզիա (Սև կղզիներ), բ) Միկրոնեզիա (Մանր կղզիներ), գ) Պոլինեզիա (Շատ կղզիներ, դ). Նոր Զելանդիա։ Այս անունների ստուգաբանությունը տրված է համապատասխան անունների կապակցությամբ։ Օվկիանիայի ընդհանուր տարածությունը կազմում է մեկ միլիոն 260 հազար քառակուսի կիլոմետր։

Բնակչությունը՝ 6 միլիոն։ Օվկիանիայի կղզիների
հայտնագործման սկիզբը դրեց Ֆ. Մագելանը։

ՕՎԿԻԱՆՈՒ. — Զրային ընդարձակ տարածություն ընկած
մայր ցամաքների միջև։ Օվկիանոս բառը հին ծագում
ունի և անցել է հույներին փյունիկեցիներից, որից հետո
արդեն մյուս ժողովուրդներին։ Այն առաջացել է
«օգիան» բառից, որն ունի «անեղո», «անծայրածիր»
իմաստը։ Իսկ հունարենում ավելացել է «ոս» վերջա-
վորությունը և դարձել է օվկիանոս։ Այդ ձևով էլ այն
անցել է հայերին։ Շատ լեզուներում «ոս» մասնիկը չի
գործածվում, ինչպես ուստերենում։ Հունական դիցարա-
նության մեջ օվկիանոս անունը դարձավ ծովերի աստ-
վածը, տիտաններից ավագը, Ուրանոսի և Գիայի (Եր-
կրնքի և Երկրի) որդին, որը մարմնավորում էր ծովի
գաղափարը։ Ըստ հին հույների պատկերացման ծով-
օվկիանոսը ընկած էր Հերկուլեսյան սյուներից (Զիբ-
րալթարից) արևմտաք և նման էր մի մեծ գետի, որը
հոսում էր աշխարհի շուրջը։ Ասում էին, որ նրանից
են սկիզբ առնում ծովային հոսանքները, գետերը և աղ-
բյուրները։

Հին հույն մտածողների մոտ օվկիանոս գաղափարը
համընկնում էր ներկա Ատլանտյան օվկիանոսի հետ՝
այն էլ Հերկուլեսյան սյուներին հարող մասի։ Դրա
համար էլ օվկիանոս բառը գրում էին մեծատառով,
կարծելով, որ այդ օվկիանոսը միակն է աշխարհում։
Երկար ժամանակ օվկիանոսը դիտվում էր որպես խա-
վար, նավագնացության համար վտանգավոր և անգամ
անանցանելի։ Կոլումբոսը եղավ առաջինը, որ խախչ
տեց այդ պատկերացումը։

Համաշխարհային օվկիանոս կոչվում է Երկրի ջրա-
յին ընդարձակ թաղանթը։ Նրա բոնած տարածությունն
է 361 մլն. քառակուսի կիլոմետր, մեր մոլորակի 71
տոկոսը։ Համաշխարհային օվկիանոսի մանրամասն ու-
սումնասիրությունը գիտնականներին հիմք տվեց այն
բաժանելու առանձին մասերի, այն է՝ չորս օվկիանոսի։

Դրանք են՝ Խաղաղ, Ատլանտյան, Հնդկական և Հյուսիսային սառուցյալ օվկիանոսները:

ՕՏՏԱՎԱՆ. — Կանադայի մայրաքաղաքը: Հիմնադրվել է 1827 թվականին: Անունը ստացել է Հնդկական օտտավաց ցեղից, որի էթնոնիմը նշանակում է «առևտրական մարդիկ» կամ «փոխանակողներ»:

ՕՐԱՆԺ. — Գետ Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում: Բուրերի, այսինքն Հոլանդական վերաբնակիչների կողմից տրված անուն: Այդպես է կոչվել 1777 թվականին Հոլանդացի կապիտան Գորդոնի կողմից ի պատիվ Նիդերլանդիայում իշխող ընտանիքի, որ Հարավային Ֆրանսիայի Օրանժ քաղաքից էր: Իշխանական այդ գերդաստանը 15-րդ դարից տեղափոխվել է Հոլանդիա: Օրանժ ֆրանսերեն նշանակում է նարինչ: Քաղաքն այդպես էր կոչվել նարինչի պարտեզների առկայության համար:

ՕՐԴՈՒԲԱԴ. — Քաղաք Նախիջևանի ԱՍՍՀ-ում, համանուն երկաթուղային կայարանից 4 կիլոմետր հեռու: Անվան հիմքում ընկած է «օրդու» և «աբադ» բառերի զուգակցումը: Օրդու՝ «զորամաս» կամ «քանակ» և աբադ՝ «քաղաք» կամ «բնակավայր»: Այսինքն բանակի կամ զորամասի բնակավայր:

ՕՐԵՆԲՈՒՐԳ. — Մարզային քաղաք ՌՍՖՍՀ-ում: Անունը ստացել է Օր գետից, ավելացրած գերմանական բուրգ՝ «քաղաք» բառը: Այսինքն քաղաք Օրի վրա: Հիմնադրվել է 1743 թվականին: Այն ժամանակներում ուստական տեղանունները կոչվում էին նաև գերմանական եղանակով: 1938-ից մինչև 1957 թ. կոչվել է Զկալով:

ՕՐԻՆՈԿՈ. — Գետ Հարավային Ամերիկայում: Հայտնաբերվել է 1499 թվականին: Առաջին իսպանացիները հնդիկներից լսելով «օրինոկ» բառը, կարծեցին թե այդ է գետի անունը: Զնայած հետագայում պարզվեց, որ դա նրանց լեզվում առօսասարակ «գետ» է նշանակում, բայց տվյալ գետի անունը այդպես էլ Օրինոկո մնաց:

ՕՐԵԱՆ.— Քաղաք Ֆրանսիայում (Լուարայի դեպարտամենտում): Հիմնագրվել է Հռոմեացիների կողմից և ի պատիվ Ավրելիոս կայսրի կոչվել է Ավրելիանում: Ժամանակի ընթացքում ձևափոխվել է Օրլեանի: Այս քաղաքի հիշատակին Ամերիկայում ֆրանսիացիների կողմից հիմնագրված քաղաքը կոչեցին նոր Օրլեան:

ՕՐԿՆԵՅԱՆ ԿՊՃԻՆԵՐ.— Գտնվում են Մեծ Բրիտանիայից հյուսիս: Անվանման ներկա ձևը հետևանք է միջնադարյան վերաիմաստավորման, որը համընկնում է անգլո-սաքսոնների օրկն՝ «գելֆին» և եռ՝ «կղզի» բառերին: Նշանակում է «գելֆինի կղզի»:

ՕՐՄՈՒԻՉ.— Նեղուց, որը միացնում է Պարսից ծոցը Արարական ծովի հետ: Անունը ստացել է համանուն քաղաքից, որը գտնվել է Օրմուզ կղզու վրա: Օրմուզ անունն էլ դալիս է պարսկերեն Որմիզ՝ «լույսի աստված» անունից: Սկզբում այդպես էր կոչվում միայն քաղաքը, որը շնորհիվ իր աշխարհագրական հարմար դիրքի, շատ արագ ծաղկեց ու զարգացավ: Իզուր չէր արարական դարձվածքը, որն ասում էր «աշխարհը մի մատանի է, իսկ Օրմուզը նրա վրայի մարգարիտը»: Օրմուզ անունը քաղաքից անցավ նեղուցին:

ՕՐՅՈՒԼ.— Քաղաք ՌՄՖՄՀ-ի Եվրոպական մասում: Անունը ստուգաբանվում է ոռուերեն՝ օրյուլ «արծիվ» բառից կամ Օրլիկ գետի անունից: Ենթադրվում է նաև, որ Օրլիկ անունը առաջացել է հին ոռուական օրեկ՝ «ածուխ» բառից:

ՕՐՃՈՒԻԿԻՁԵ.— Քաղաք Հյուսիսային Կովկասում: Հիմնադրվել է 1784 թվականին, Կապկայ գյուղի տեղում: 1860 թվականից մինչև 1931 թվականը կրում էր Վլադիկավկագագ. անունը: 1931—1944 թվականների ընթացքում կոչվում էր Օրջոնիկիձե: Իսկ 1944—1954 թվականներին Զառչիկառը: 1954 թվականից կրկին վերանվանվեց Օրջոնիկիձե, ի պատիվ սովետական պետական գործիչ Սերգո Օրջոնիկիձեի (1886—1937 թթ.):

ՕՔՍՖՈՐԴ.—Քաղաք Անգլիայում։ Անգլերն օքս՝ «եզ» և ֆորդ՝ «անցածուն» բառերից։ Իր ժամանակին գետի այս ծանծաղ մասերով քշում էին անասունները։

ֆ

ՖԱՐԵՐՅԱՆ ԿՂՋԻՆԵՐ. — Արշիպելագ Ատլանտյան օվկիանոսի հյուսիս-արևելյան մասում։ Պատկանում է Գանիային։ Բառացի նշանակում է «ոչխարի կղզի»։ Իր ժամանակին նորմանները, ցանկանալով ապահովված լինել հեռավոր արշավանքների ժամանակ, այս կղզիներում կռւտակում էին սննդամթերքի պաշար, միաժամանակ և ոչխարներ էին պահում։ Այստեղից էլ կղզիների անվանումը։

ՖԵԴԵՆԿՈՅԻ ՍԱՌՑԱԴԱՇՏ. — Սովետական Միության ամենամեծ սառցադաշտը (72 կիլոմետր երկարությամբ)։ Հայտնաբերվել է 19-րդ դարի կեսերին Վ. Ֆ. Օշանինի կողմից, որը եղել է Ալեքսեյ Պավլովիչ Ֆեդչենկոյի բարեկամը և ուղեկիցը, և ի պատիվ Ֆեդչենկոյի էլ կոչվեց սառցադաշտը։

ՖԵԹԱՆԱ. — Քաղաք Ռուբեկստանում։ Անունը առաջացել է պարզանա բառից, որը նշանակում է «միջլեռնային հովիտ»։ Ժամանակի ընթացքում «պ» տառը փոխարինվել է «ֆ»-ով և դարձել Ֆերգանա։ Սկզբում այդպես է կոչվել հովիտը, որտեղ գտնվում է ներկայիս քաղաքը։ Ապա Ֆերգանա անունը տարածվել է քաղաքի վրա։

ՖԵՐՆԱՆԴՈ-ՊՈ. — Հրաբխային կղզի Գվինեական ծոցում։ Հայտնաբերվել է 1471 թվականին, պորտուգալացի ծովագնաց Ֆերնանդո-Պոյի կողմից (1412—1474 թթ.)։ Կղզին մինչև 1968 թվականի հոկտեմբերի 12-ը պատկանում էր Իսպանիային։ Ներկայումս մտնում է Հասարակածային Գվինեա նորաստեղծ պետության կազմում։ Ֆերնանդո-Պո կղզու վրա գտնվում է Սանտա-Իսաբել մայրաքաղաքը։

ՖԵՄ. — (կամ Ֆաս): Մարոկկոյի նախկին մայրաքաղաքը: Արաբերեն ֆաս՝ «կացին» բառից: Անվան առաջացման մասին ստեղծվել է սովորական տեղանվանաբանական ավանդություն, որ իրը թե 808 թվականին, երբ քաղաքը հիմնեցին, ապա իդրիս 2-րդը կացինով փորեց քաղաքի պարիսպների հիմքը: Մյուս վարկածն այն է, որ իրը հիմնագրման ժամանակ քաղաքի տեղում կացին են գտել: Ֆես քաղաքից է ծագում նաև գլխարկի այն տեսակը, որը կոչվում է ֆաս:

ՖԻԼԱԴԵԼՖԻԱ. — Քաղաք Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Հունարեն ֆիլոս՝ «սիրող» և աղելոս՝ «եղբայր» բառերից: Նշանակում է «եղբայրական սիրո քաղաք»: Քաղաքը հիմնվել է 1682 թվականի Կվակյորական աղանդի կողմից և այդպես է կոչվել այն հույսով, որ իրը բոլոր վերաբնակիչների միջև, անկախ դավանաքից, լինի համախոհություն, ապրեն այդտեղ որպես եղբայրներ:

ՖԻԼԻՊՈՒՆԵՐ. — Արշիպելագ Խաղաղ օվկիանոսում և համանուն պետություն նրա վրա: Արշիպելագը բաղկացած է 7.100 կղզուց: Առավել խոշորներն են՝ Լուսոն, Մինդանաո, Սամար, Նեգրոո, Պալավան կղզիները:

Արշիպելագը հայտնաբերվել է 1521 թվականին Ֆերդինանդ Մագելանի կողմից: Սկզբում կրում էր Ս. Լազարի անունը. ի պատիվ կաթոլիկական եկեղեցու կողմից սրբացած Ս. Լազարի: Հետագայում, 1543 թվականին, երբ արշիպելագը իսպանական գաղութ հայտարարվեց, անվանափոխվեց ի պատիվ թագաժառանգ Ֆիլիպի, որը հետագայում դարձավ իսպանական թագավոր Ֆիլիպ II անունով: Կղզիները իրենց անունը տվեցին պետությանը:

ՖԻՆԼԱՆԴԻԱ. — Պետություն Հյուսիսային Եվրոպայում: Ուգր- ո-ֆիննական ֆինն ժողովրդի անունից և ավելացրած լանդ բառը, որն ունի երկրի իմաստ: Իսկ «ֆինն» էթ- նոնիմը սկանդինավյան լեզվից է և նշանակում է «լիճ»: Ստացվում է ֆինների կամ լենրի երկիր: Իրենք իրենց

անվանում են Սուոմի, իսկ երկիրը - սուոմեն տասլալտա, որը նշանակում է «հազար լճերի երկիր»: Վերջինս ավելի շուտ նրա բանաստեղծական անվանումն է:

ՖԻՆԱԿԱՆ ԾՈՅ. — Բալթիկ ծովի արևելյան մասը: Անունը ստացել է ֆինն ժողովրդից:

ՖԻԶԻ. — Կղզիներ և աղաղ օվկիանոսի հարավ-արևմտյան մասում: Հայտնաբերվել են 1643 թվականին Տասմանի կողմից: Տեղական լեզվով նշանակում է «մեծ երկիր»: Այդպիս է կոչվել կղզիներից ամենամեծը, որի անունը հետագայում տարածվել է արշիպելագի վրա:

ՖԻԶԻ աշխարհագրական հասկացության մեջ մտնում են թվով 500 կղզիներ, որոնցից բնակելի են ընդամենը հարյուրը: Բնակչության թիվը հասնում է կես միլիոնի: Գլխավոր քաղաքն է Սուվա, որը գտնվում է Վիտի-Լեվու կղզու վրա: Ֆիզին համարվում է անգլիական գաղութ:

ՖԻԶԻ ԾՈՎ. — Ընկած է Ֆիզի, նոր Կալեդոնիա, Նորֆոլկ և նոր Ջելանդիա կղզիների միջև: Անվանումը ստացել է Ֆիզի կղզիներից:

ՖԻՐՎԱԼԴԵՏԵՏԻ ԼԻԾ. — Շվեյցարիայում: Բառացի նշանակում է «շորս անտառապետությունների լիճ»: Նկատի են ունեցվել լճի շուրջն ընկած Շվից, Ուրի, Ումտերվալդեն և Լյուցեռն կանտոնները, որոնք եղան Շվեյցարիայի ազատության և անկախության օրրանք: Այս շորս կանտոնների միությունից էլ 1300 թվականին հիմք դրվեց Շվեյցարական միությանը: Ֆիրվալդետի լիճը կոչվում է նաև Լյուցեռնի լիճ՝ նրա ափին գտնվող քաղաքի անունով:

ՖԼՈՐԵՆՑԻԱԼ. — Քաղաք Իտալիայում: Քաղաքի անվանման հիմքում ընկած է «Փլորիա» բառը, որը լատիներեն «ծաղիկ» է նշանակում: Նրան հաճախ նաև «ծաղկած քաղաք» են անվանում: Քաղաքի գերբը հնուց ի վեր եղել է իրիս կոչվող ծաղիկը: Ֆլորենցիան Դանթեի ծննդավայրն է:

ՖԼՈՐԻԴԱ. — Թերակղզի և նահանգ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Խսպաներեն ֆլորիդա՝ «ծաղիկներ» բառից: Թերակղզին հայտնաբերվել է 1513 թվականին խսպանացիների կողմից կաթոլիկական զատկի տոնին, որը խսպաներեն կոչվում է պատրուա ֆլորիդա: Այսինքն «ծաղիկների զատիկ»: Դրանից էլ ստացել է ֆլորիդա անվանումը:

ՖՈԼԿԼԵՆԴՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ. — Արգենտինայի ափերի մոտ: Զնայած հայտնաբերվել է 1592 թվականին, բայց այդպես կոչվել է ավելի ուշ, ի պատիվ լորդ Ֆոլկլենդի, որը հովանավորել էր մի շարք արշավախմբեր: Կղզիները Արգենտինայում հայտնի են Մալվինյան անունով:

ՖՈՐՄՈԶԱ. — Կղզի Չինաստանի ափերի մոտ: Տայվանի եվրոպական անունը, որ տվել են պորտուգալացիները և նշանակում է «գեղեցիկ կղզի»: Երբ 1508 թվականին պորտուգալացիները մոտեցան կղզու ափերին և հիացան նրա բնությամբ, նրան անվանեցին Ֆորմոզա: Ներկայումս կղզին կոչվում է շինական, այսինքն Տայվան անունով:

ՖՈՐՏ-ԼԱՄԻ. — Չագ հանրապետության մայրաքաղաքը: Այդպես է կոչվել ֆրանսիական բանակի հրամանատար՝ Լամիի անունով, որը գոհվել է այս տեղերում, գաղութացման շրջանում: Լամի անվանն էլ ավելացվել է ֆորտ՝ «ամրոց» բառը: Այսինքն «Լամիի ամրոց»:

ՖՐԱՆԿԼԻՆի ՆԵՂՈՒՑ. — Կանադական արկտիկական արշիպելագում: Կոչվել է ի պատիվ անգլիացի նշանավոր բնեպետ և ծովագնաց Ջոն Ֆրանկլինի (1786—1847 թթ.), որը և զոհվեց կանադական Արկտիկայում: Նրա անվամբ Կանադայում կա լեռ, լիճ, կղզի, ծոց և հրվանդան, իսկ Անտարկտիկայում, Ռոսսի ծովում՝ կղզի:

ՖՐԱՆԿՈՒԻԹ. — Քաղաք ԳՖՀ-ում: Մայնի գետի վրա: Անունը առաջացել է լատիներեն ֆրանկուա՝ «աղատ» և գերմաներեն ֆուրտ՝ «գետանցք» բառերից: Այսինքն ձրի կամ աղատ գետանցքը: Այդպես է կոչվել, որովհետեւ այս-

տեղ գետը անցնելիս մաքս չէին վճարում: Ֆրանկֆուրտ
քաղաքի անվան համար կա նաև մի այլ մեկնաբանում։
այն է՝ ֆրանկ ժողովրդի անունով՝ «ֆրանկների գե-
տանցք»: Հետագայում Ֆրանկֆուրտ անունով քաղաք
հիմնվեց նաև Օդեր (Օդրա) գետի վրա, որը կոչվում է
Ֆրանկֆուրտ Օդերի վրա:

ՖՐԱՆՍԻԼ.— Պետություն Արևմտյան Եվրոպայում: Անունը
ստացել է գերմանական ֆրանկ ցեղից, որն այստեղ
ներխուժեց 5-րդ դարում, գերմանական մի շարք ցեղե-
րի հետ: Պետության այդ անունը լատիներեն «ֆրան-
կուա» բառից է, որը նշանակում է «ազատ», «անկաշ-
կանոց»: Այս հասարակ անունն էլ տարածվեց ժողովրդի
և երկրի վրա: Չնայած ֆրանկները ծովզեցին տեղական
ժողովուրդների հետ, սակայն որպես ժառանգություն
երկրին թողեցին Ֆրանսիա անունը: Հնում, Ֆրանսիան
կոչվել է նաև Գալիա, իսկ մեզ մոտ՝ Գաղղիա, որը եր-
կար ժամանակ պահպանվեց արևմտահայ դասական
գրականության մեջ Ֆրանսիա անվանման փոխարեն:
Տասներորդ դարի վերջերին (987 թվականին), երկրի
համար պաշտոնապես ընդունվեց Ֆրանսիա անունը:

ՖՐԱՆՑ-ԻՈՍԻՖԻ ԵՐԿԻԲ.— Արշիպելագ Հյուսիսային սառուց-
յալ օվկիանոսում: Հայտնաբերվել է 1873 թվականին
ավստրո-հունգարական արշավախմբի կողմից, որը
գլխավորում էին Վայպերեխտը և Պայերը: Կղզիները կո-
չեցին ի պատիվ Ավստրո-հունգարական կայսր Ֆրանց-
Իոսիֆի (1830—1916 թթ.): Այս արշիպելագում գտնվող
Ռուդոլֆ կղզում է գտնվում Սովետական Միության
ամենահյուսիսային կղզային կետը:

ՖՐԻՏԱՌԻՆ, ՖՐԻԹԱՌԻՆ.— Սիեռա-Լեոնե պետության մայրա-
քաղաքը: Հիմնադրվել է 1792 թվականին: Անգլերեն
ֆրի՝ «աղատ» և թառն՝ «քաղաք» բառերի զուգակցու-
մից: Այսինքն «Աղատների քաղաք»: Քաղաքը հիմնա-
գրվել է Ալեանտյան օվկիանոսի ալն մասում, որտեղ
ափ հանեցին ստրկական աշխատանքից ազատագրված
նեղը երին:

ՖՐՈՒԻՆՉԵ.—Կիրգիզական ՍՍՀ-ի մայրաքաղաքը։ Այդպես է կոչվել (1926 թվից) ի պատիվ սովետական ուղմական գործիչ Միխայիլ Ֆրունզեի (1885—1925 թթ.): Քաղաքը հիմնադրվել է տասնիններորդ դարի կեսերին, սկզբում որպես ամրոց Պիշպեկ անվամբ։ 1878 թվականից դարձել է քաղաք։

ՅՈՒԶԻՑԱՄԱՆ կամ ՅՈՒԶԻՑԱՆ.—Գործող հրաբուխ Հոնսյու կղզում։ Ճապոնիայի ամենաբարձր լեռը։ Անվանման հիմքում ընկած են ֆուծի և յամա բառերը։ Ֆուծի բառը ճապոնիայի հին բնակիչների այնու ժողովրդի լեզվից է և նշանակում է «կրակ»։ Նկատի ունեին առասպելական կրակի աստվածը։ Իսկ յամա բառը ճապոներեն սար» է նշանակում։ Այդ երկու բառերի միացումից ստացվել է «Ֆուծիյամա» անվանումը։ Երբ ճապոնիայում տարածվեցին հիերոգլիֆները, ապա այն հիերոգլիֆը, որով գրվեց Ֆուծիյամա անունը, խորհրդանշում էր նաև մեծ սարի հասկացողությունը։ Փամանակի ընթացքում ճապոնացիների համար ֆուծիյամա անվանումը համագրվեց ամեծ սարն գաղափարի հետ։


ՖՈՒԾԻՅԱՄԱՆ ճապոնացիների նվիրական սարն է, այնպես, ինչպես Մասիսը հայերի կամ էլ Յունդֆրաուն շվեյցարացիների համար։ Ֆուծիյաման նրանց երկրի բնության ամենագեղատեսիլ հրաշալիքներից մեկն է։ Այն գովերգված է ճապոնացի բանաստեղծների կողմից, պատկերված նկարիչների գրքերում։ Ճապոնացիների բնակարանները առանց Ֆուծիյամայի նկարի դժվար է պատկերացնել։

ՑԱՆԿ

Առաջաբանի փոխարեն	3
Ա	9
Բ	61
Գ	92
Դ	108
Ե	119
Զ	128
Է	132
Ը	139
Թ	139
Ժ	143
Ի	145
Լ	151
Խ	164
Ծ	168
Կ	169
Հ	197
Զ	216
Ղ	217
Ճ	217
Մ	218
Յ	244
Ւ	248
Շ	261
Ո	266
Չ	266
Պ	270
Ջ	285
Ռ	287
Ս	292
Վ	315
Շ	327
Ց	339
ՇԸ	340
Փ	344
Ք	347
Օ	349
Ց	356

Աշխարհագրական անունների բացատրական
բառարան

Խմբագիր՝ Ա. Ա. Խոլանյան
Հրատ. խմբագիր՝ Ա. Թ. Ավետիսյան
Գեղ. խմբագիր՝ Բ. Վ. Մազմանյան
Տէխ. խմբագիր՝ Մ. Ն. Դավթյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ֆ. Ի. Մարգարյան



Հանձնված է արտադրության 19/II 1969 թ.,
Ստորագրված է տպագրության 10/II 1970 թ.,
Թուղթ՝ № 2, 84×108^{1/32}, տպագր. 23 մամ.,
Հրատ. 16,2 մամ., պայմանական 19,2 մամ.

Վ. 07608

Պատուիր 3711

Տպաքանակ 20 000

Գինը՝ 62 կուալ.

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի
պոլիտիկաֆարմանաբերության գլխավոր վարչության № 6 տպարան,
Երևան, Թումանյան փ., № 23/1,

10276